ՀԻՆԳՇԱԲԹԻ
ՕԳՈՍՏՈՍ 1
JEUDI
1er AOUT
1996

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

LE NUMERO : 5,00 F.

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1925-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE-FONDE EN 1925
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 47. 70. 86. 60 — TELEX : HARATCH 280 868 F
— FAX : 48. 00. 06. 70 —
C.C.P. PARIS 15069-82 E

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 1.100 Ֆ. — Վեցամսեայ : 560 Ֆ.
Արտասահման : Տար. 1.400 Ֆ. (ամէնօրեայ առաքում)
1.250 Ֆ. (շաբաթական առաքում) — Հատը : 5,00 Ֆ.

71ՐԴ ՏԱՐԻ -- ԹԻՒ 18.909

Fondateur SCHAVARCH MISSAKIAN

71e ANNEE — N° 18.909

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ԺԷ -- 7

ԱՀԱԲԵԿՉՈՒԹԵԱՆ ԴԷՄ ՊԱՅՔԱՐԸ

Փարիզ հաւաքուած ԺԷ -- 7-ի Արտաքին եւ Ներքին նախարարները, որոնց միացած էր 8-րդ մը՝ Ռուսաստանի Արտաքին նախարարը, 25 միջոցներ ձեռք առած ահաբեկչութեան դէմ պայքարելու համար: Գլխաւորները կը վերաբերին հիմնադրամներու միջազգային շարժումներուն, ահաբեկիչներու տեղափոխութիւններու եւ ինթէրնէթի տիպի հաղորդակցութեան ցանցերու ստուգման բարելաւման: Ժողովը կոչ ալ ըրած է որպէսզի համայն աշխարհ միանայ այն պայքարին որ կը տարուի «ահաբեկչական վիրուս»ին դէմ ինչպէս զայն որակած է Մեծն - Բրիտանիոյ Արտաքին նախարարը: Ութ երկիրներ, այսինքն ԺԷ - 7-ի անդամներն ու Ռուսաստան, յայտարարած են որ նոյեմբերին աշխատանքի խումբ մը միջազգային պայմանագիր մը պիտի պատրաստէ պայթուցիկով ոճրագործութիւն վերաբերող եւ միջոցներ առաջարկէ ամրապնդելու համար հանրային փոխադրութեանց ապահովութիւնը: Գլինթընի պահանջը որ պատժամիջոցներ ձեռք առնուի Իրանի, Իրաքի, Սուտանի եւ Լիբիոյ դէմ չէ արձանագրուած ժողովին եզրափակիչ բնագրին մէջ: Ծանօթ է որ այս մարզին մէջ խոր տարակարծութիւն կայ Միացեալ - Նահանգներու եւ Եւրոպայի (մանաւանդ՝ Ֆրանսայի) միջեւ: Այն որ ձեռք առնուած գլխաւոր միջոցն ալ, գլխաւորաբար ստուգումի, ամէնէն աւելի Ամերիկացիք պիտի դժուարանան գործադրելու, քանի, օրինակ՝ Ն.Ռ.Ա.-ը (Նէշընըլ, Ռըֆըլ Էսոսիէշըն) որ զէնքի մոլիներու լոպին է եւ շատ զօրաւոր է քաղաքական դետնի վրայ պիտի ընդդիմանայ բոլոր միջոցներով սահմանափակումներու, զորս Գլինթըն պիտի փորձենայ վաւերացնել տալ Գոնկրէսին կողմէ: Վերոնշեալ կազմակերպութիւնը, այսօր աւելի քան 3 միլիոն անդամ ունի եւ 250 միլիոնի հասնող բնակիչներու համար շուրջ 300 միլիոն զէնք կայ:

***

Եօթներու այս ժողովին «ութերորդը»՝ Ռուսաստան կը գտնէ որ Չեչէնիա տարած իր պայքարը ահաբեկչութեան դէմ պայքար է, մինչ չէչէն անկախապաշտները Ռուսաստանեն Մոսկուան որ մահապարտ մը կազմակերպած է իրենց ղեկավարութեան պետին դէմ:

***

Ֆրանսայի սպառնացող վտանգներ կան եւ անոնք բազմատեսակ բնոյթ ունին, ինչ որ շատ աւելի մտահոգիչ է ապահովութեան մասնագէտ սպասարկութեանց համար: Ներկայ վիճակով, հետեւեալ սպառնալիքները նկատի կ'առնուին:

Իսլամական բրտութիւնը: Հոս, կ'ըսուի թէ Ֆրանսա նուազ կը վախնայ Միջին եւ Մերձաւոր - Արեւելքէն, որովհետեւ, կ'ըսէ մասնագէտ մը. - «Հաւասարակշռուած քաղաքականութիւն մը ունինք այդ աշխարհի եւ պաղեստինեան ծայրայեղ խմբակները - Համաս կամ Իսլամական Ջիհատ - երբեք չեն հարուած արտասահմանի մէջ»:

Տարբեր է, սակայն, Մաղրէպի նկատմամբ եղած վերլուծումը: Կայ նաեւ արտաքին կնճիռներու արտածումը դէպի ֆրանսական հողամաս: Ասիկա կը վերաբերի, օրինակ, թուրք եւ քիւրտ բախումներու: Յետոյ կան նաեւ ներքին անկայունացման դէպքերը, ինչպէս Գորսիքայի եւ Պասք շրջանի ցնցումները, որոնք, անշուշտ, նոր չեն:

Ք Ա Ն Ի Մ Ը Տ Ո Ղ Ո Վ

ԷԼԷՆԱ ՊՈՆԷՐ, Սախարովի այրին, որ նաեւ զաւակն էր Հայաստանի նախկին պատասխանատու՝ գնդակահարուած Ալիխանեանի, հիւանդանոց փոխադրուած է սրտի տագնապի հետեւանքով: Էլէնա Պոնէր 73 տարեկան է եւ տարիներ առաջ սրտի գործողութեան ենթարկուած էր Միացեալ - Նահանգներու մէջ: Միշտ ջատագով եղած է արդար դատերու, ի շարս որոնց՝ Արցախի:

ԹՈՒՐՔԻՈՅ Ազգային ժողովը հինգ ամսուան համար երկարաձգած է Իրաքի Քիւրտերու պաշտպանութեան կոչուած բազմազգեան ուժերու ներկայութեան արտօնագիրը: Այդ ուժերը կը բաղկանան ամերիկեան, բրիտանական եւ ֆրանսական օդանաւերէ:

ՓԱՐԻԶԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ երկու պաշտօնեաներ կը խոստովանին որ «վերէն» եկած հրահանգներու անսալով փրճացուցած են շարք մը փաստաթուղթեր, կանխելու համար դատաւոր Հալֆէնի հաւանական մէկ խուզարկութիւնը: Այս պաշտօնեաները ինքնաբերաբար ներկայացած են դատաւորին եւ այս ծանրակշիռ յայտարարութիւնները կատարած: Այդ թուղթերը կը վերաբերէին քանի մը հարիւր շինծու պաշտօնատարներու որոնք աշխատավարձքեր կը ստանային, երբ անոնցմէ շատեր իրենց ոտքն իսկ չէին կոխեր քաղաքապետարան: Այս յայտնութիւնները կ'ընէր «Քանար Անշէնէ» Յուլիս 31-ին, չեշտելով թէ այս «յուացքը» կը ձգտէր ոչ այնքան պաշտպանելու համար ներկայ քաղաքապետը, այլ՝ նախկինը, այսինքն՝ Շիրաք:

ՖՐԱՆՍԱՅԻ արտաքին առեւտուրը Մայիսին ալ մեծ յաւելում մը արձանագրած է, այս անգամ հասնելով 11,592 միլիառ ֆրանքի: Այս շահերը ապահովուած են գլխաւորաբար ելլիւսներ: Որքան ալ խրախուսիչ տպաւորութիւն թողու այս երեւոյթը, միայն արտածումներու յաւելումով չի բացատրուիր, այլեւ անով որ ներածումները նուազած են երկրին ձեռնարկներուն տնտեսական տագնապին հետեւանքով:

ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ սնանկութիւններու թիւը զգալի յաւելում կրած է Փետրուարին: Անոնց թիւը 4499-ի հասած է, մինչ նախորդ ամիսը 4.145 եղած էր:

ԻՐԱՆԵԱՆ ԲԱՆԱԿը սկսած է քաշուիլ Իրաքէն ուր ներխուժած էր հալածելու համար քիւրտ զաղթականները: Ցարձակումը պատճառ եղած էր բազմաթիւ մեռեալներու եւ վիրաւորներու գաղթականներուն մէջ: Ներկայիս որոշ հանդարտութիւն կը տիրէ:

ՓԱԼԱՏԻՐ եւ Շիրաք դլուխ գլխի պիտի ճաշեն Ուրբաթ, Օգոստոս 1-ին, Էլիզէ: Այս հանդիպումին նախաձեռնութիւնը ստանձնած է նախագահութեան նախկին թեկնածուն: Երկու մրցակիցներու վերջին խօսակցութիւնը տեղի ունեցած էր 1995 Մայիս 6-ին, նախագահական ընտրութեան Բ. շրջանի նախօրեակին:

ԻՍՐԱՅԷԼԻ նոր նախարարը՝ Արիէլ Շարոն, որու համար ստեղծուեցաւ ենթակառոյցներու յատուկ նախարարութիւն մը, մտահոգիչ ծրագրեր կը մշակէ Այսրյորդանանի համար, որոնց կարգին երկու կառուցլիներու շինութիւնը: Այս եւ այլ սեղմումներու առընչութեամբ, Արդարութեան պաղեստինեան նախարարը ըսած է. - «Երբ կը գրաւեն հողս, ջուրս եւ ապագաս, ատիկա կը նշանակէ պատերազմական յայտարարութիւն մը ընել»:

ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ Օրէնսդիր Խորհուրդին նախագահը՝ Ահմէտ Քորէյ յայտարարած է թէ կը հրաժարի իր պաշտօնէն, որովհետեւ վերջին նիստի մը ընթացքին վէճ մը ունեցած է Արաֆաթի հետ: Այս վերջինը մերժած է որ երեսփոխանները խօսին պաղեստինեան Սահմանադրութեան ծրագրի մը մասին:

ԻՍՐԱՅԷԼԻ վարչապետը՝ Բենիամին Նեթանիահու, Օգոստոս 5-ին, պաշտօնական այցելութիւն մը պիտի կատարէ Յորդանան եւ տեսնուի Հիւսէյն Թագաւորին հետ:

ՕԼԻՄՊԻԱԿԱՆ 100

ՀԵՌԱՑԱՏՔԻ ԱՐՔԱՆ՝ ԳԱՐԼ ԼԷՈՒԻՍ

Ողիմպիականներու պատմութիւնը վերակերտողներու ցանկը մուտք գործեց նաեւ ամերիկացի արդէն հռչակաւոր մարզիկ Գարլ Լէուիս 35 տարեկանին: Արգարեւ ան, որ հազիւ ձեռք ձգած էր այս ողիմպիականներուն մասնակցելու իրաւունքը՝ որակման ամերիկեան մրցումներուն, Յուլիս 29-ին փառաւոր յաղթանակ մը տարաւ հեռացատքի մէջ 8,50 մեթր ոստումով մը, միանգամայն անընդմէջ չորրորդ անգամ ըլլալով խլելով ողիմպիական ախոյեանութիւնը այդ մարզաձեւին մէջ: Ասիկա Լէուիսի 9-րդ ողիմպիական մետալն է սակայն, քանի որ ան մետալներ նուաճած է նաեւ 100, 200 եւ 4×100 մեթր վազքարշաւներու մէջ:

Հեռացատքի այս ճակատումին Բ. տեղը գրաւած է Ժամայիքացի Պէքֆորտ 8,29 մեթրով, իսկ երրորդ հանդիսացած է այլ Ամերիկացի մը՝ Կրին, 8,24 մեթրով:

***

Մետալներու տեսակէտէն, բաւական հանդարտ օր մըն էր Յուլիս 30-ը Ֆրանսայի համար: Միակ մետալը եղաւ պրոնզէ, զոր ապահովեց Միքէլ Մարթինէզ վթթ-ի մէջ (լեռնային հեծանիւ):

Դասաւորումը կը գլխաւորեն միշտ ԱՄՆ ընդհանուր 63 մետալներով (24 ոսկի, 28 արծաթ, 11 պրոնզ), երկրորդ է Ռուսաստան 41 մետալով (18 ոսկի, 13 արծաթ եւ 10 պրոնզ), իսկ Ֆրանսա կը պահպանէ իր երրորդ դիրքը 32 մետալով (13 ոսկի, 6 արծաթ եւ 13 պրոնզ):

Հայաստան, շատ բնականօրէն, հետըզհետէ կը զիջի դասաւորման լաւագոյն աստիճանները, քանի որ նոր մետալներ չեն գար ամրապնդելու իր դիրքը: Այսուհանդերձ համեմատաբար աշխարհի շատ մը մեծագոյն երկիրներու կը գրաւէ լաւ տեղ. 36-րդ է:

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐՈՒՆ ՀԵՏ

ՅՈՐԴԱՆԱՆՑԻ՞ ԹԷ ՊԱՂԵՍՏԻՆՑԻ

Յորդանանի մէջ մեծ է համեմատութիւնը ծագումով Պաղեստինցիներու: Կան Պաղեստինցիներ որոնք Յորդանանի բնակիչ են, եւ կան միւսները որոնք յորդանանեան անձնագրի տէր են ու կ'աշխատին Պաղեստինցիներուն համար: Քննիչ յանձնախումբեր տեղեկագիրներ պատրաստած են այդ զանգուածներուն օրինավիճակներուն մասին, քանի որ պաղեստինեան պետութեան մը հիմնումի հեռանկարը աւելի շօշափելի դարձած է:

Յորդանան շատ տրամադիր չի թուիր զոյգ քաղաքացիութեան իրաւունք ընդունելու: Այս մասին վէճեր ալ կ'ըլլան արդէն: Լրագրողներ, քաղաքական դէմքեր կարծիք կը յայտնեն մինչեւ իսկ որ ծագումով պաղեստինցի Յորդանանցիներու քաղաքացիական իրաւունքները պէտք է ջնջել որպէս կանխազգուշացումի միջոց որուն պիտի հետեւի զոյգ քաղաքացիութեան իրաւունքին ջնջումը:

Մինչեւ այսօր կառավարութիւնը հեռու կը մնայ վէճերէն որոնք օրէ օր աւելի ծաւալ կը ստանան Յորդանանի եւ Պաղեստինեան պետութեան մը յառաջիկայ կարելի դաշնակցութեան հեռանկարով: Միայն թեթեւցած են ծագումով պաղեստինցի Յորդանանցիներու դէմ կիրարկուած միջոցները: Իշխանութիւնը օրինակ հրաժարած է իր այս քաղաքացիներուն հինգ տարուան անցագիրները 2 տարուաններով փոխանակելու որոշումէն: Այսուհանդերձ, որոշումը անփոփոխ կը մնայ պաղեստինցի պատասխանատուներու եւ պաղեստինեան անցագրի տէր անձերուն համար, նոյնիսկ երբ պաղեստինեան անցագիրը միջազգային ճանաչում չունի, ընդունուած է միայն արաբական երկիրներէն: Քաղաքական այս ճկուն քայլը հետեւած է Հիւսէյն Թագաւորի քննադատութեան որ ուղղուած է կնդապետ Քատաֆիի Պաղեստինցիները Լիբիայէն վտարելու արարքին, 1995 Սեպտեմբերին: Այսուհանդերձ, Յորդանանի ընդդիմութեան որոշ անուններ ըսած են որ Հիւսէյն Թագաւորը պէտք է հրահանգէր որ ընդունուին ծագումով պաղեստինցի Յորդանանցիներու անցագիր նորոգելու դիմումները:

Առ այժմ իշխանութիւնները ազատ ընտրութեան իրաւունք տուած են ընտրելու որպէս միակ քաղաքացիութիւն յորդանանեանը կամ պաղեստինեանը: Քննութիւններու տեղեկագիրները կը նախատեսեն կեդրոնական շրջանի բնակչութեան նոր վերաձեւաւորում մը. այն շրջանին որուն քաղաքներուն մէջ կ'ապրին ծագումով Պաղեստինցիները եւ ուր կը գտնուին ապաստանեալներու կայանները: Նպատակն է Միջին - Արեւելքի վաղուան իրականութեան հեռանկարով կարեւոր դեր կատարելու զօրութեան տէր նոր կեդրոն մը ստեղծել: Կը նախատեսուի պաղեստինեան կայաններուն ջնջումը եւ բնակիչներուն բաշխումը Յորդանանի եւ ապագայ Պաղեստինի:

***

Յորդանանի 3.5 միլիոն բնակչութեան 2 միլիոնէն աւելին Պաղեստինցի կամ պաղեստինեան ծագումի տէր են: 1.7 միլիոնը կը կազմեն ապաստանեալները որոնց կէսը կ'ապրի տակաւին գաղթակայաններու մէջ: Առաջին ապաստանեալները հասած են 1948-ի խարայէլեարաբ Ա. պատերազմին ընթացքին: Յորդանան միշտ զգուշութեամբ վերաբերած է այդ զանգուածին, միշտ կրկնելով որ իրենց երկիրը պիտի ըրկուին երբ պաղեստինեան պետութիւն մը հռչակուի:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

Դարավերջին աշխարհասասան յեղափոխութիւնն եղանակը համակարգիչներն են. գիտութիւն, տեղեկութիւնները կեդրոնացնող ու բաշխող համակարգը որուն հզօրութեան, կարողութիւններուն դաշտը մէկն օր կ'ընդլայնի: Նորերը որոնք [illegible] «համակարգիչի սերունդ»: Ան արագօրէն կը թափանցէ բոլոր մարզերէն ներս. դրամատուն, աշխատանոց, դպրոց, տուն եւայլն: Այսօր նոյնիսկ նորութիւն ըլլալէ դադրած են ամենուրեք, փոխադրական անձնական համակարգիչները:

Ի՞նչ են Հայաստանի հեռաքրքրութիւնները, կարելիութիւնները այս մարզին մէջ ու ի՞նչ է հոն ներկայ կացութիւնը: Այս կարգի հեռաքրքրութեանց մասին «Ազգ»ի աշխատակից Եւգէն Սահակեան զրոյցի հրաւիրած է Հայաստանի հեռահաղորդակցութեան կեդրոնի տնօրէն Գրիգոր Վահանեանը:

Ան կ'ըսէ թէ Հայաստանի մէջ մօտաւորապէս հազար հոգիի համար մէկ անհատական համակարգիչ կայ: Զարգացած մէջ այս համեմատութիւնը հարիւրին 12, Միացեալ-Նահանգներու մէջ 29·7 է: Տնօրէնը հայաստանեան ցուցանիշին բարելաւման յոյս ունի, հիմնուած այն տուեալին վրայ որ երկրին մէջ մօտ հազար արտասահմանեան ընկերութիւններ կան ու անոնց մեծ մասը մօտ ժամանակին կը գնէ նաեւ համակարգիչներ, իրենց գործերը օգտուելու համար ընծայելու: Համար: Ան ուզած կ'ըսէ թէ անոր մտադրութիւնն է կառավարական կեդրոններուն մէջ ալ համակարգիչներ մուտք գործեն: Այսուհանդերձ, ուրախալի է վերջին մէկ տարուան ընթացքին պատահածը: Օրինակ, Ինֆօ Ակտի ազդային մասնաւոր ընկերութիւնը համակարգիչներ ու ծառայութիւններ կը մատուցանէ:

Ինչ կը վերաբերի դպրոցներու, որպէսզի անոնք համակարգիչի դասաւանդութիւն ունենան անհրաժեշտ հինգ հազար համակարգիչ պէտք է: Կարելի է Միացեալ-Նահանգներէն, կամ եւրոպական երկիրներէն գործածուած, կամ ոչ անպայման վերջին նորաձեւութեան յարմար գործիքներ գնել համեմատաբար յարմար գինով: Կառավարական հաստատութիւններու համար, առաջին փուլի մը համար անհրաժեշտ է մօտ մէկ միլիոն տոլար դրամ մը: Եթէ տարիք խրախուսելու կարելի ըլլայ, Բ. փուլին կը ստեղծուին ելեկտրոնային համակարգչային ցանցեր, [illegible] կապակցուած ըլլալ միջազգային հաղորդացանցին (Էնթէրնէթ) անցքը: Անոր միջոցով օրինակ Հայաստան - Սփիւռք կապին համար ալ անհրաժեշտ կ'ըլլայ 1·5 - 2 միլիոն տոլար:

Այս նպատակներուն համար եթէ նիւթական օժանդակութեան աղբիւրներ չգտնուին, ինչպէս կ'ըսէ Գրիգոր Վահանեան «մենք պէտք է ստեղծենք էլեկտրոնային մի նոր «Մեսրոպ Մաշտոց» որպէսզի պահպանենք հայալեզու տեղեկութիւնների դաշտը, պաշտպանենք գիտութիւնը, արուեստը, մշակոյթը, արդիւնաբերութիւնը», Հակառակ պարագային անկարելի պիտի ըլլայ թումբ կանգնել օտար լեզուներով տուեալներու ներխուժումին առջեւ: Այդ տուեալները պիտի վերաբերին բոլոր մարզերուն. գիտելիքներ, թէքնոլոժիներ, մշակոյթ, եւայլն: Տնօրէնը հետաքրքրական զուգահեռով մը ներկայ կը նմանցնէ հայկական գիրերու գիւտին նախորդած շրջանին: Ինչպէս որ օտար լեզուներով գրուած Աստուածաշունչը տարածում չէր գտներ Հայաստանի մէջ եւ հայկական այբուբենին յօրինումով լուծուեցաւ հարցը, այսօր ալ ելեկտրոնային «Աստուածաշունչ» մը գոյութիւն ունի, նոյնպէս օտար լեզուներով: Մեր խնդիրն է զայն հայացընել ու անոր տեղ տալ դպրոցներու մէջ:

Համապատասխան կարելիութիւններու եւ կառոյցներու բացակայութիւնը չնչտելով Գ. Վահանեան կ'ափսոսայ որ ներկայիս համակարգիչով աշխատող մարդերու - մամուլ, տնտեսական, քաղաքական, մշակութային - տեղեկութիւնները, նիւթերը չեն պահպանուիր, յառաջիկային կրկին գործածուելու առիթ տալու համար, այլ կը ջնջուին, կը փճանան: Այս կորուստը ան կը կոչէ «տեղեկագիտութեան ցեղասպանութիւն»: Ու անգամ մը գործածուած ժապաւէններու ոչնչացումը կը նմանցնէ հին ժամանակներու առաջին քրիստոնեաներու հեթանոսական գիրքերը այրելու արարքին: Մինչդեռ, ինչպէս կ'ըսէ, օրինակ «Հայկական հանրագիտարան»ը կարելի է արձանագրել լազերային 2 - 3 սկաւառակի վրայ, կամ Մատենադարանի ամբողջ հարստութիւնը փոխադրել 100 սկաւառակի վրայ:

Ասկէ զատ Գ. Վահանեան մտահոգութիւն կը յայտնէ հեռանկարներու մասին. ի՞նչ պիտի ըլլայ երբ Հայաստան ամբողջական անդամ դառնայ ՄԱԿ-ին ու չունենայ համակարգիչի լման ծրագիր: Այս նշումին կը հետեւի համեմատութիւն մը որ բաւական դառն քմծիծաղ կը պատճառէ ընթերցողին. «այս բնագաւառում նոյնիսկ Թուրքիան շատ է առաջ անցել» կ'ըսէ Գ. Վահանեան: Քմծիծաղ, ոչ թէ Հայաստանի չունեցածին պատճառած դառնութեան, այլ այն քիչ մը միամիտ մօտեցումին որ ի տես Թուրքիոյ իրականութեան, ամբողջական անգիտացում մը կը մատնէ:

Ան կը դանդատի նաեւ հայկական ճակատին վրայ տիրող անկանոնութենէն. կ'ըսէ թէ տառատեսակներու մշակումի ու յարակից այլ բնագաւառներու մէջ կատարեալ անկարգութիւն կը տիրէ: Կան անջատ ջանքեր Հայաստանի թէ Սփիւռքի մէջ, բայց ոչինչ կ'ըլլայ համակարգումի, կանոնաւորելու, համադրումի նպատակով:

Հայաստանի ներկային մէջ շատ բաներու պէտք կայ զանազան ազդակներու պատճառած յապաղումները, անկարելիութիւնները դարմանելու համար: Կայ անշուշտ նաեւ առաջնահերթութեան ստիճանաւորում մը: Բայց ամբողջ աշխարհը ենթակայութեան տակ առած համակարգիչի հսկան դիւրին չէ անտեսել եթէ չենք ուզեր ապրիլ վաղուան օրը երբ հայ երախաներ աշխարհին ու իրարու հետ հաղորդակցելու համար դիմեն անպայման անգլերէնի կամ ռուսերէնի ու հայերէնին խօսքը անգամ չըլլայ:

ԱՐՓԻ ԹՈԹՈՅԵԱՆ

LIVRES REÇUS

MARIE STUART

Reine d'Ecosse et Reine de France

Un récit de Jeanne de Recqueville

Ed. 2BR, Paris 1996.

«ԿԱՆՉ»Ի ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ «ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐԱՊԵՏ ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆԻ ՀԵՏ

-- Պր. Աւետիքեան, այսօր շատ է խօսւում մտաւորականութեան դերի, կոչման, պատասխանատուութեան, նաեւ օտարման մասին: Ի՞նչ էք մտածում Դուք, ըստ Ձեզ՝ ո՞վ է մտաւորականը:

-- Երեւի պէտք է սկսել նրանից, թէ ով է մտաւորականը: Կարծում եմ, որ մտաւորականը միայն գրագէտ մարդը չէ, որ բարձր կրթութիւն ունի, մտաւորական չէ նաեւ այն մարդը, որ ասենք, գրքերի հեղինակ է: Դա այլ չափանիշ է: Մտաւորականն այն անձն է, որը հասարակութեան նկատմամբ բարոյամտաւոր պատասխանատուութեան իր պաշարով է ներկայանում հասարակութեանը: Գուցէ շատ վերացական է ասուած, բայց մտաւորականը սովորական մահկանացու չէ: Մտաւորական չեն դաստիարակւում որեւէ համալսարանում, մտաւորականը դառնում է այդպիսին իր հասարակական հետաքրքրութիւնների, բայց մանաւանդ մտահոգութիւնների բերումով, հարցերին ոչ մակերեսօրէն, ոչ էլ չոր գիտական մօտեցումով՝ դրանք արժեւորելով: Մտաւորականն այն մարդն է, որ առաջնորդում է հասարակութեանը, ոչ անպայման քաղաքական ամբիոնից, ոչ էլ զինուորական, այլ հասարակական կարծիքի վրայ է ազդում: Մենք հետեւում ենք այդ մարդկանց, այսինքն՝ նրանց խօսքը, նրանց դիրքորոշումը այս կամ այն հարցի նկատմամբ կարող են մեզ համար ուղեցոյց լինել, որովհետեւ սովորական մահկանացուներս ի վիճակի չենք ամէն հարց, ամէն երեւոյթ մեկնաբանելու, տեսնելու խորքը եւ համեմատելու դրանք մեր անցեալի եւ ազգային ապագայի հետ:

-- Մեր իրականութեան մէջ Դուք տեսնո՞ւմ էք այդպիսի մարդկանց:

-- Շատ քիչ են այդպիսի մարդիկ, անուններ չեմ ուզում տալ: Քիչ են այնպիսի մարդիկ, որ տեսնում են այդ ամբողջը, որոնք այսօր, սակայն, կորցրել են իրենց ներազդելու հնարաւորութիւնները, թերեւս նաեւ քաջութիւնը: Արժէքների համընդհանուր փոփոխութիւն է տեղի ունենում, դա անբնական երեւոյթ չէ նման անցումային շրջանում, մանաւանդ ինչպիսի՞ անցում՝ ե՛ւ մտայնութեան, ե՛ւ տնտեսական, ե՛ւ ֆինանսական: Այս ամէնի մէջ մենք դեռեւս չենք յստակացրել այն տեղը, որ պատկանում է իսկական մտաւորականին: Քանի որ մեր հասարակութիւնը այսօր նիւթական արժէքների հասարակութիւն է դարձել, թւում է՝ մտաւորականը ոչինչ չի կարող տալ, որպէսզի մեր կեանքը փոխուի: Վ. Թէքէեանի խօսքն է, չէ՞. «Բանաստեղծութիւնը կ'ուտուի՞»: Ի՞նչ կարող է տալ այսօր մտաւորականը, որ «ուտուի»: Նոր արժէքները դեռեւս չեն արմատաւորուել, եւ մտաւորականն իր տեղը չի գտնում: Գուցէ դրանում նաեւ ինքն է մեղաւոր: Սրանից հինգ տարի առաջ նա այլ բան էր քարոզում, այլ ուղղութիւն էր ցոյց տալիս եւ այսօր մենակ է այդ ուղղութեան մէջ: Սա ողբերգութիւն է: Ինչ վերաբերում է գրագէտ խաւին ընդհանրապէս՝ արուեստագէտներ, գրողներ, լրագրողներ, այստեղ էլ անցում է տեղի ունենում երբեմն հոգեկան բեկումների գնով՝ նորից լսարանի, ամբիոնի բացակայութեան, իր տեղի գիտակցութեան հարցն է, իրենց տրուած արժէքների գնահատման հարցը: Եւ, ի վերջոյ, մտաւորականն էլ ունի ընտանիք, կարիքներ, աշխատում է մի կերպ հոգալ դրանք:

-- Հասարակութեան վրայ մտաւորականի ներազդելու միջոցներից մէկն էլ մամուլն է: Հայաստանում այսօր կա՞յ ազատ, անկախ մամուլ, եւ Դուք տարբերութիւն դնո՞ւմ էք ազատ մամուլ եւ անկախ մամուլ հասկացութիւնների միջեւ:

-- Ի հարկէ, դրանք տարբեր բաներ են, մէկը միւսի հետ չաղկապուած, բայց տարբեր մակարդակներ են: Ազատ մամուլն այն է, երբ հասարակութիւնը, իշխանութիւնները որոշում են ունենալ կարծիքի ազատութիւն եւ դրա համար ստեղծում են որոշակի պայմաններ: Կուսակցութիւններ, խմբաւորումներ, անհատներ հնարաւորութիւն են ստանում իրենց ամբիոնն ունենալու, մամուլի օրգան ստեղծելու եւ այնտեղ արտայայտուելու: Գրաքննութիւնը ազատ մամուլի դէպքում չի գործում: Իսկ անկախ մամուլը, որը չի կարող գոյութիւն ունենալ առանց մամուլի ազատութեան, աւելի բարձր մակարդակ է ենթադրում: Նախապայմանը ազատ մամուլն է, այսինքն՝ պէտք է լինել ազատ, որպէսզի անկախ լինես: Ես խօսում եմ նիւթական, ֆինանսատնտեսական անկախութեան մասին, երբ, հակառակ գոյութիւն ունեցող շահերին, մամուլը կարող է իր իսկ շահերի դէմ գնալ՝ կորուստներ ունենալ նիւթական իմաստով, բայց գրել: Սա է անկախ մամուլը, որ պատուէրներ չի ընդունում: Իհարկէ, աշխարհում նման բան բացարձակ իմաստով գոյութիւն չունի, բոլորն էլ ինչ-որ գաղափարախօսութիւն ունեն: Այս դէպքում ի՞նչ է դուրս գալիս. մամուլի ազատութիւնը մեզ տալիս է հաւաքական անկախութեան մի գաղափար, եթէ ունենք անկախ մամուլ, կը նշանակի անջատ չէք, առանձին չէք: Բերեմ ամենադասական օրինակները՝ Ֆրանսիական սոցիալիստական մարդասիրական ուղղուածութեան «Մոնտ»ը եւ պահպանողական լիբերալների «Ֆիկառօ»ն: Այս երկուսն իրար ամբողջացնում են, որովհետեւ ազատ են, նաեւ անկախ են, ուրեմն կարողանում են հասանքների այլազանութիւնը մտցնել՝ դրանով իսկ լրացնելով իրականութեան սպեկտրը: Այս դէպքում ընթերցողը բաւականին կը լինի երկու թերթն էլ կարդալ՝ ամբողջական պատկերացում ստանալու համար: Ինչ վերաբերում է Հայաստանին, մենք ունենք ազատ մամուլի համար որոշակի պայմաններ, չէի ասի ամբողջական, սակայն օրէնքը տալիս է ազատ մամուլ ունենալու նախադրեալներ: Գրաքննութիւն համարեա թէ չունենք: Սակայն կան որոշակի ճնշումներ, հետապնդումներ, կան նաեւ դրական ճնշումներ, երբ մամուլին ցոյց են տալիս առաւել չհաւէտ վիճակներ: Սա նոյնպէս անբնական չէ. յիշենք, թէ ինչ ժառանգութիւն ենք ստացել: Ես գտնում եմ, որ Հայաստանում կայ ազատ մամուլի վիճակ: Սակայն տարբեր բաներ են, երբ մարդկանց տրւում է հնարաւորութիւն, եւ երբ նարնք են ստեղծում հնարաւորութիւնը: Այստեղ գալիս, մեր դէմ կանգնում է մէկ այլ հանգամանք. մեր երկրում անկախ մամուլ չի ստեղծուի, քանի որ ձեռներէց անձը, խանութ կամ սրճարան բացելու փոխարէն, թերթ չի տպի: Այդ քայլն անում են միայն քաղաքական նպատակներ ունեցողները: Ձեռներէցութիւնը շահոյթ է ենթադրում, իսկ մամուլը մեզանում մնում է անշահաւէտ բնագաւառ: Այս պայմաններում բնական է, որ մեզ մօտ քաղաքական կուսակցութիւններն ու հոսանքներն են զբաղւում մամուլ հիմնելով կամ պահելով: Անբնականն այն է, որ քննադատւում է կուսակցական մամուլը, երբ չունենք այլ տարբերակ: Մեծ վտանգ եմ տեսնում մամուլի մասին նոր օրէնքի նախագծի մէջ: Եթէ այդ ընդունուեց, ոչ միայն մօտ ապագայում անկախ մամուլ չենք ունենայ, այլեւ եղածն էլ կը կորցնենք ի սպառ:

-- Մամուլի ազատութիւն եւ լրագրողի էթիկա: Ինչպէ՞ս ենք մենք համադրում այս երկուսը, ինչպէ՞ս ենք հասկանում եւ օգտագործում ազատութիւնը:

-- Շատ նրբին հարց է, թէ որոնք են մամուլի կենցաղագիտութեան չափանիշները: Դա աւանդոյթով է ստեղծւում, իսկ մենք աւանդոյթներ չունենք: Դրա համար դժուար է կողմնորոշուել, թէ որն է էթիկապէս ճիշդ, եւ որը՝ ոչ: Անհրաժեշտ է, որ լրագրողական կազմակերպութիւններում, ակումբներում, կոնկրետ օրինակներով քննար-

...կուի դա, բանավիճեն: Մեր մամուլն է... թերկայի առումով ոչ մի չափանիշ չունի, եւ չափանիշ չստեղծելուն նպաստում է նաեւ պաշտօնական մամուլն իր ...սարսափելի միակողմանիութեամբ, երբեմն մեր՝ապարանոց քարոզչութեամբ: ...նման յատկանիշ ունէր եւ, ցաւօք, այժմ ...փակուած «Երկիր» թերթը: Բերեմ օրինակ: վերջերս բացայայտուեց Իջեւանում ընդունելութեան քննութիւնների ժամանակ կաշառակերութեան դէպք: Ես նոյն գիշերն իսկ լուր ունէի, բայց ...մի քիչ մտածելուց յետոյ որոշեցի չտալ: Խօսք կար յայտնի մտաւորականների մասին, եւ մի կողմից չէի ուզում եւս ...մէկ հարուած հասցնել հասարակութեան ...աչքին օրէց օր իր հեղինակութիւնը կորցնող մտաւորական, դասախօսական խաւին, բայց միւս կողմից՝ հասարակական ...արիք է, եւ մեր առաքելութիւնը մարդկանց տեղեակ պահելն է: Այսպէս, մի փոքրիկ պատերազմ գնաց իմ մէջ: Ուրիշ թերթեր մի քանի օր անց գրեցին այդ դէպքի մասին եւ, փաստահարար, այդ օրը առաւել վաճառուեցին: Իւրաքանչիւր խմբագրի, լրագրողի ներսում մէկը կայ նստած, որ յուշում է, թէ ինչ անել, ինչ գրել կամ չգրել: Իսկ չափանիշներ չեն ստեղծուել, եւ այդ մասին պէտք է լրջօրէն մտածել:

- Ի՞նչ կ՚ասէք «Ազգ»ի հրատարակչական գործունէութեան եւ «Ալեք Մանուկեան» մատենաշարի մասին:

- «Ալեք Մանուկեան» մատենաշարը ...ւիչ կամ վճռական առընչութիւններ ...«Ազգ»ի հետ չունի: Մենք հանդէս ենք ...իս պարզապէս որպէս հրատարակիչ, ...ղւում ենք ձեւաւորման, տպարանի ...ներով: Բայց այն, որ դա օգտակար եւ կարեւոր աշխատանք է, ինչ ..., նաեւ նպաստում է թերթի հեղինակութեան բարձրացմանը: Մինչեւ հիմա տպագրուել է եօթը գիրք, այս տարի ընթերցողի սեղանին կը դրուի եւս ...՝ Մարինէ Պետրոսեանի, Հայկ ...րդանեանի, Հովիկ Վարդումեանի, ...կամ Թոփչեանի եւ այլոց գործերը: ...րքերի ընտրութիւնը եւս մենք չենք ...ատարում, կայ յատուկ յանձնաժողով: Ասեմ, որ «Ալեք Մանուկեան» մատենաշարը տպագրում է միայն գեղարուեստական գրականութիւն: Ես կը ցանկանայի, որ հրատարակչական գործունէութիւնը «Ազգ»ի համար դառնար շատ ...փեսիոնալ եւ շարունակական: Ցաւօք, համապատասխան հնարաւորութիւն... չունենք:

Հարցազրոյցը վարեց՝
ԼՈՒՍԻՆԷ ԲԱԴԱԼԵԱՆ

...նչ», Յուլիս 17

ՕՐՈՒԱՆ
ՇԱՐԺՈՒՄԻՆ ՀԵՏ

ՊԱՐՈՆ ՏԸ ԳՈՒՊԵՐԹԷՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՀԸ

Այս խորագիրը կը կրէ «Նուվէլ Օպսէրվաթէօր» շաբաթաթերթի Յուլիս 25 - 31-ի թիւին քրոնիկը որ ստորագրուած է Ժագ Ժիւլիարի կողմէ: Ան խորապէս ընդվզած է ողիմպիականներու նման մարդկան ոգիի ամէնէն վեհ արտադրութիւնը ըլլալու կոչուած շարժումի մը հանդէպ չուկայիկ այն վերաբերումէն զոր առաջին օրէն ցոյց կուտան Ամերիկացիները: Նախ ամբարտաւանութիւն կ՚որակէ պնդումը որով անոնք իրենց հողամասը փոխադրեցին դարադարձի խաղերը, մինչդեռ անոնք պէտք է տեղի ունենային Աթէնք ուրկէ սկիզբ առած էին արդի ժամանակներու խաղերը: Դժգոհութիւնը չեշտուած է գլխաւորաբար «ծիծաղելի» եւ տգեղ այն արտայայտութիւններով, որոնք տեղ գտած են խաղերուն առընչուած բոլոր մարդերուն մէջ: Անոնցմէ կը յիշուին անիմաստ մասքոթը, ողիմպիականներու բոցին համար ընտրուած աւհաւոր տգեղութեամբ ջահակալը, յուշանուէրներու վաճառորդներուն ամէն անկիւն ներկայութիւնը, ուտելիք ծախողներու առատութիւնը եւ մանաւանդ խեղճուկրակ կազմակերպութիւնը: Ինչպէս շատ ուրիշներ ալ մատնանշեցին, փոխադրամիջոցները բնաւ գոհացուցիչ չեն, ելեկտրոնիկ սարքաւորումները մեծ անկանոնութիւններով կը բանին ու արդիւնքներուն հրապարակումը յաճախ սխալներով լեցուն կ՚ըլլայ:

Քրոնիկագիրը անդրադառնալով ողիմպիական ոգիին հիմնական կէտերուն, -- եղբայրութիւն, պարկեշտութիւն եւ մարտունակութիւն--, կ՚ըսէ թէ այս երբեակէն հարիւր տարի ետք միակ մնացածը վերջինն է, Ներկայի խաղերուն մէջ ակներեւ է արդի ժամանակներու երանելի բթամութիւնը, սպառումի մեծ տենչը որ նախընտրելի է քան գիտարարութիւնը եւ արկածախնդրական ոգին:

Այս տուեալներով ի՞նչպէս կարելի է ըսել որ ողիմպիականները կը շարունակեն նոյն կիրքերը եւ հաճոյքը պատճառել: Այսուհանդերձ, կարելի չէ չհետեւիլ խաղերու հեռասփռումին, մրցանակներու մետալներու բաշխումին: Մետալներ որոնց ամէնէն նուազ արժէքաւորներն ալ աւելի հետաքրքրութիւն կը գրաւեն քան ոճիրներ ու բնական աղէտներ:

ՔԱՂՀԱՆ

ՀՕՄ-Ի ՃԱՄԲԱՐԻ ԵՐԱԽԱՆԵՐԸ ՍՏԱՑԱՆ ԳԱՐԵԳԻՆ Ա. ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ

Յուլիսի 26-ին Վեհարանի Հանդիսութիւնների մեծ դահլիճում Նորին Սրբութիւն Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հ.Օ.Մ.-ի «Գուգարք» ճամբարի 130 սաներին: Ճամբարում հիմնականում հանգստանում են զոհուած ազատամարտիկների, ինչպէս նաեւ ըՍփիւռքից ժամանած հայ երեխաներ:

Ողջունելով փոքրիկ այցելուներին Վեհափառ Հայրապետը հայրական սիրով նրանց ներկայացրեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի 17-դարեայ պատմութիւնը՝ եւ ընդգծեց, որ սրբատեղին իւրաքանչիւր Հայի հարազատ տունն է:

«Ձեր այցելութեամբ Ս. Էջմիածինը վերաթարմանում եւ վերանորոգւում է, իսկ ձեր հաւատքը՝ վերածաղկում». ասաց Նորին Սրբութիւնը եւ պատգամեց երեխաներին պատասխանատուութեամբ եւ նուիրումով շարունակել իրենց հայրերի գործը, նոր իրագործումներով հարստացնել նրանց թողած ժառանգութիւնը: Վեհափառ Հայրապետը բարձր գնահատանքի խօսք ասաց նաեւ Հ.Օ.Մ.-ի ծաւալած բարեսիրական գործունէութեան մասին՝ սկսած Եղեռնի դաժան տարիներից մինչեւ մեր օրերը:

Խօսքի աւարտին, որպէս յուշ այդ գեղեցիկ հանդիպման, Ամենայն Հայոց Հայրապետը երեխաներին նուիրեց փոքրիկ յուշանուէրներ: Ապա երեխաները մեծ հետաքրքրութեամբ ծանօթացան Գանձատան եւ Մայր Տաճարի թանգարանի հոգեւոր եւ մշակութային բարձրարժէք նմոյշներին:

ՄԱՄԼՈՅ ԴԻՒԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌ

ՊՈԼՍՈՅ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱԼՈՒԱԾՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Պոլսոյ երկլեզու «Ակօս» շաբաթաթերթը Յուլիս 19-ի թիւով կ՚անդրադառնայ Վոսփորի եւրոպական ափի երբեմնի հայաշատ արուարձանին՝ Օրթագիւղի գերեզմանատան կորուստին: Հոն կայ հայկական Սուրբ Աստուածածին Եկեղեցին, քովը Սուրբ Թարգմանչաց Նախակրթարանը: Իսկ հայկական գերեզմանատունը որ մօտակայ բլուրի մը վրայ կը գտնուէր ժամանակին, այսօր անհետ կորսուած է շինութիւններու մեծ թափին ու արագօրէն բնակավայրի վերածուած նախկին ազատ տարածքներուն դիմափոխութեան պատճառով:

Տեղւոյն Թաղական Խորհուրդին նախագահը յայտնած է թէ վերջին 20 - 25 տարուան ընթացքին ոչ մէկ մեռեալ թաղուած է գերեզմանատան մէջ. եկեղեցւոյ վարչութիւնն ալ որեւէ կալուածաթուղթ չունի գերեզմանատան սեփականութիւնը փաստող: Կայ միայն յայտարարագիր մը: Օրթագիւղի հայութիւնը այսօր շատ նօսրացած ըլլալով Թաղական Խորհուրդը հարկաւոր նախաձեռնութիւններուն դիմելու միջոցներէն զուրկ է, գերեզմանատան տեղը յայտնաբերելու եւ անոր սեփականաթուղթին տիրանալու համար:

Թաղական Խորհուրդին Նախագահը կ՚ըսէ թէ պետական կալուածներու տնօրէնութիւնը 1968-ին հանրապետական ըստացուածք յայտարարած է գերեզմանատան տարածքը, որպէս սեփականատէր առանց նկատի ունենալու եկեղեցին ու հողաշերտը նկատելով անտէր:

Ներկայիս գերեզմանատան ենթադրեալ տարածքին վրայ ոչ մէկ գերեզմանաքար կամ այլ հետք գտած է թերթին աշխատակիցը: Լրատուութիւնը կը փակէ գրելով որ ծովահայեաց դիրքով, ան խաչալ վայր մըն է շինութեան գործով հարստութիւն դիզելու հետամուտ ախորժակներու համար...:

ԳԱՂՈՒԹԷ
ԳԱՂՈՒԹ

ՊՈՒԷՆՈՍ - ԱՅՐԷՍԻ Արմենիօ - Արխենթինա վարժարանը այցելած են Յուլիս 12-ին Հայաստանէն Հաղորդակցութեան նախարարութեան դրոշմաթուղթերու բաժնի ընդհանուր տնօրէն Սուրէն Սիմոնեան եւ դրոշմաթուղթի ընկերակցութեան փոխ - նախագահ Սամուէլ Օհանեան: Իրենց ընկերացած է Արժանթինի դրոշմաթուղթի ընկերակցութեան փոխ - նախագահ Հրաչ Փէչեան: Հիւրերը ներկայ եղած են աշակերտական երգահանդէսի մը:

ԿՂԶԻՆ ԵՒ ՄԻ ՄԱՐԴ
—վիպակ—

ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ

...արոն Տոլարը ժամանակին թենորի ... է ունեցել: Երգել է մանաւանդ եկեղեցիներում, մեծ տօներին, մեծ հարսանիքներին, մեծ թաղումներին: Պրուքլինում: Ժամերգութիւններից յետոյ ... է եկել ճերմակ մի թաշկինակ բերանին բռնած՝ դդուշութեան համար եւ ... ցոյց տալու համար, որ երգողը ինքն ...: Մի թաշկինակ բերանին բռնած, աչքի ... աղջիկներին նայելով, հանդիսա..., ինքը իրմով լեցուած:

Ձայնը կորցրել է: Ձայնը կորցրած ...՝ կէս մարդ է, Հանդիսաւոր, յա..., ինքը իրմով լեցուած, բայց կէս մարդ: Կոկորդը թաշկինակով կապած, ... վեր, աչքերը վար:

Վերադարձել է ծննդավայր, մտածե... որ եթէ կէս մարդ է Բրուքլինում, ... երկրում կը լինի ամբողջ մի մարդ: ... աւելի, իր երկրում կը լինի մեծ ... մարդ:

Եւ ահա երեսուն տարի է, որ ման է ... փողոցից փողոց, խանութից խանութ, ծովափից տուն, տնից ծովափ:

Իր հայրենակիցները տգէտ են, չեն հասկանում: Ինքը երգել է Պրուքլինի մայր եկեղեցում:

- Ձեզ ասեմ, քանի անգամ մտածել եմ ինքնասպանութիւն գործել: Բայց աւելի լաւ է խնդալ, այո՛, խնդալ:

Բերանը վեր է բարձրանում, ծռում իբր թէ ծիծաղում է եւ դառն գծեր են վայր թափւում իր երկու շրթունքներից:

- Դա ի՛նչ լաւ կօշիկներ էք հագել, - ասում եմ իր ունայնամտութիւնը շոյելու համար:

- Սիրեցի՞ք:

- Շատ:

Երկայն պատմութիւնների մէջ է մըտնում: Միայն ինք կարող է այդպիսի լաւ կօշիկներ այդքան աժան գնով գնել:

Ուրախ ուրախ հեռանում է, կօշիկները ճռճռացնելով եւ անդադար նրանց նայելով:

Գիւղի կենտրոնը ամառուան եղանակին կոտրած մի հայելի է:

Բոլոր մանր բաները մէկը միւսի վրայ են դիզւում եւ պսպղում: Ձուկ, պտուղ, բանջարեղէն, աժան խաղալիկներ, կէս մերկ մարմիններ, եւ բազմացած քահանաներ, պատռուած եւ բոպիկ լակոտներ, մեծ քթերով եւ թափուած ակռաներով պառաւներ, թիթեղէ առարկաներ, անհանդիստ աղջիկների վաւոտուն նայուածքներ, հաստ, երբեք եկող կանանց գլխաներ, հարմոնիքաների մելամաղձոտ նուագներ, կրօնական թափօրներ, արհեստական ներկուած խմիչքների պայթող շիշեր:

Լպրտուն մի տաք, որի վրայ հեռուից ոլոր եկած ինչ որ խոնաւ շրթունքներ ծուլօրէն փչում են:

Փչում են եւ ամէն ինչ թառամում է, թեւերը ուժասպառ վայր նետած ընկնում, տնքալով երկարում:

Ջնայած դրան, կղզին այդ ամէնը դասաւորում է եւ զետեղում իր անփոփոխ կերպի մէջ: Ամէն ինչին պարտադրում է իր դրոշմը, իր ոճը, իր բնոյթը:

Իր վեր ցցուած, խոժոռ աշտարակները իրեն են ենթադրկում բոլոր պատահական եւ անցողակի երեւոյթները: Իր բազմաթիւ եկեղեցիները, որոնց հետ կապուած են մեծ եւ նշանակալից եղելութիւններ, արհամարհանքով են դիտում կրծքերը շարժելով թանկօներ պարող աղջիկների վրայ եւ տարիքը առնող կանանց վաւաշոտ նայուածքների վրայ:

Գիւղաքաղաքը իսկ թւում է հին, փըլուած, փոշիոտ, անժամանակից ծերացած, սակայն նա եւս ներկայ է ինչ որ մնայուն, ինչ որ ներքին կորիզի շուրջը բոլորուած ուրոյն կեանքով:

Նա ոճ է: Իր տեղը կանգնած, մնայուն մի ապրելակերպ:

Տօն օրերին, գիշերուան ժամը տասի մօտերը, կենտրոնական հրապարակի վըրայ երաժշտութիւն է նուագում: Գիւղաքաղաքը իր նուագախումբը ունի, որին մասնակցում են փոքրիկ վաճառականները, բանուորները, քաղաքապետութեան մանր պաշտօնեաները, մի ուսուցիչ եւ անկիւնի սափրիչը:

Ամէնից հանդիսաւորը սափրիչն է: Մազերը լաւ ճեղքուած, երեսը մաքուր ածիլուած, կարմիր թաշկինակը վզի վրայ նետուած: Նա քլարինետ է նուագում: Նա ինքնավստահ քայլերով բարձրանում է վեր, գործիքը արկղից հանում, կամաց շարժումով մաքրում, աջ ու ձախ նայում, վիզը կանչել պատրաստուող աքլորին նման երկարում, եւ, թուշերը ուռեցնելով, մի երկու - երեք ձայներ հանում: Նա համոզուած է, որ բոլոր գեղեցիկ աղջիկների նայուածքները իր վրայ են յառած:

Նուագախումբի մարզիչը փիլոնազուրկ մի քահանայ է: Պատարագ չի ասում, եկեղեցի չի գնում, բայց կղերական զգեստները շարունակում է հագնել: Նրպարավաճառի խանութ ունի: Ցերեկը առեւտուր է անում եւ գիշերները մարզում է նուագախումբը:

Նուագի օրերին, մօտաւոր գիւղերից ահագին ժողովուրդ է գալիս: Խանութները մինչեւ կէս գիշեր բաց են մնում եւ գիւղի բոլոր անկիւններից երշիկի եւ գինու հոտ է գալիս:

Շատ զուարճալի է: Սիրում եմ դիտել նուագողներին: Ամէնքն էլ անճանաչելի են, երեւի ոսկեզօծ կոճակներով եւ փայլուն ուսադիրներով հագած համազգեստի պատճառով: Հինգած, տոպրակի նման իրենց ուսերի վրայից վայր ընկնող համազգեստի պատճառով: Փչւում են, լրջանում, պեխերը սրում, աչքերը հըլըզում: Գիտեն, որ օրուան հերոսներն են եւ բոլորի ուշադրութիւնը իրենց վրայ է կենտրոնացած: Ընտանիքը, ազգականները, ծանօթները ներկայ են:

- Դուք նուագախմբում թրոմպոն էք նուագում, իսկ պանիրը կշռած ժամանակ ինձ խաբում էք, - ասում եմ անկիւնի նպարավաճառին:

Աչքերը դուրս է նետում եւ բերանը բաց նայում:

- Չեմ հասկանում, թրոմպոնը պանիրի հետ ի՞նչ կապ ունի:

- Չէ՞ որ երաժշտութիւնը պէտք է ազնւացնի մարդկանց:

- Ձեր ասածը եկեղեցական երաժշտութիւնն է:

(Շար. 41)

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆ

ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

Մելգոնեան Կրթական Հաստատութեան 1996 - 1997 ուսումնական տարեշրջանի մուտքի քննութիւնները տեղի կ՚ունենան Երկուշաբթի եւ Երեքշաբթի, Օգոստոս 12-ին եւ 13-ին, ժամը 10-ին, Հ. Բ. Ը. Միութեան Փարիզի գրասենեակին մէջ

11, square Alboni, 75016 Paris

Հեռաձայն. -

45 - 20 - 03 - 18

Քննութեանց արդիւնքները կը հաղորդուին մինչեւ Օգոստոս 30:

ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ
Մ. Կ. ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ

«ՅԱՌԱՋ»ի ընթացիկ ազդերու սակագինը

Մահազդ	700	(844,20)
Հոգեհանգիստ	600	(723,60)
Շնորհակալիք	600	(723,60)
Հարսնիք--Նշանտուք	600	(723,60)
Ծնունդ	600	(723,60)

Բոլոր ազդերու սակերուն վրայ, հարկ է աւելցնել 20,60% Թէ.Վէ.Ա. (տե՛ս. փակագծի մէջ ընդհ. գումարը):

Այս գիները կը վերաբերին մէկ անգամ հրատարակելի ազդերու, ՄԻՆՉԵՒ ՄԷԿ ՔԱՌՈՐԴ ՍԻՒՆԱԿ (25 տող) մահազդներու պարագային եւ 1/8-րդ (12-13 տող) մնացեալին:

Առեւտրական եւ այլ ծանուցումներու համար, դիմել Թերթին Վարչութեան:

N'oubliez pas votre 15 AOUT

à Saint - Raphaël

au HOME ARMENIEN

avec

Marten YORGANTZ

DATE A RETENIR

NAVASART à Marseille

Les 4 Sections de la Croix Bleue des Arméniens de France - région Marseille, demandent à toutes les associations de prendre en considération la date du

SAMEDI 19 OCTOBRE en soirée.

Plus amples renseignements ultérieurement.

RETENEZ DES MAINTENANT LES DATES DES

14 et 15 DECEMBRE

pour la

5EME GRANDE BRADERIE DE NOEL

de

« CHENE — FRANCE »

Հ. Բ. Ը. Մ.

ԾԱՆՈՒՑԱԳԻՐ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ

Հայկ Բարեգործական Ընդհ. Միութեան («Միութիւն») Կեդր. Վարչական Ժողովը ներկայիւս կը ծանուցանէ Միութեան բոլոր իրաւասու անդամներուն թէ Միութեան 79-րդ Ընդհանուր Ժողովը պիտի գումարուի 1996, Շաբաթ, Նոյեմբեր 16, առաւօտեան ժամը 10-ին, Հ.Բ.Ը.Մ.ի կեդրոնին մէջ 2495 E. Mountain St., Փասատինա, Գալիֆորնիա, ԱՄՆ.:

Սոյնը 79-րդ Ընդհանուր Ժողովին գումարման մասին տրուող միակ ծանուցագիրն է: Հետեւաբար, Միութեան իրաւասու անդամներէն կը խնդրենք որ անձնապէս ներկայ գտնուին Ժողովին, վերոյիշեալ Թուականին եւ վայրը, եւ կամ ամէնէն ուշը մինչեւ 1996, Հոկտեմբեր 15 իրենց փոխանորդագրերը, - Հիմնական Կանոնագրի տրամադրութեանց համաձայն գործադրուած եւ վաւերացուած, - յանձնեն Կեդրոնական Վարչական Ժողովի ատենադպիրին, հետեւեալ հասցէով. -

Armenian General Benevolent Union
Central Board of Directors
31 West 52nd Street
New York, N.Y. 10019-6118.

ԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳ

1. -- Ներկայացում եւ վաւերացում 1994 եւ 1995 տարեշրջաններու Միութեան ընդհանուր բարոյական տեղեկագրին:

2. -- Ներկայացում եւ վաւերացում 1994 եւ 1995 տարեշրջաններու Միութեան ընդհանուր նիւթական տեղկագրին:

3. -- Ընտրութիւն Միութեան Կեդրոնական Վարչական Ժողովի անդամներու:

4. -- Ընտրութիւն Հաշուեքննիչ Յանձնախումբի անդամի մը:

5. -- Նկատառում եւ գործադրում վերոնշեալներում հետ առնչուող որեւէ հարցի, ինչպէս նաեւ Ժողովին ուշադրութեան բերուող եւ անոր աշխատանքներու ընթացքին ըստ պատշաճի արծարծուող հարցերու:

6. -- Քննարկում Ընդհանուր Ժողովի առաջարկներու եւ բանաձեւերու:

Ի Դիմաց
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

ԼՈՒԻՋ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՍԻՄՈՆ
Նախագահ

ՊԵՐՃ ՍԵԴՐԱԿԵԱՆ
Ատենադպիր

UGAB . . . UGAB . . . UGAB . . . UGAB

«UGAB - 90»

A l'occasion de la célébration de son 90ème anniversaire, l'UGAB organise un grand

Gala de Bienfaisance

au profit des *TABLES DE L'UGAB*, en Arménie

le Vendredi 18 Octobre à 20 heures

au Pavillon Dauphine _ 75016 Paris

P.A.F. : 750 Frs

Rens. : 45 20 03 18 / 42 27 12 26.

UGAB . . . UGAB . . . UGAB . . . UGAB

Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 PARIS
SIRET: 51027317 A R. C. Paris
Commission paritaire: N° 55935

ՀԵՌԱՏԵՍԻԼ

FRANCE 2

ՀԱՅԿԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ

Կիրակի, Օգոստոս 4, ժամը 9.30-ին՝

Հայաստան
Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Սիփան - Կոմիտաս երգչախումբի վարչութիւնը կը խնդրէ նկատի առնել իր յառաջիկայ համերգը որ տեղի պիտի ունենայ Շաբաթ, Նոյեմբեր 30-ին, Փարիզ, Opéra Comique — Salle Favart-ի մէջ:

Յայտագիրը յատկացուած է Կանաչեանի եւ Ափրիկեանի գործերուն:

MAISON DE LA CULTURE
ARMENIENNE
D'ALFORTVILLE
ԱԼՖՈՐՎԻԼԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՏՈՒՆ

1976-1996

M.C.A. 20ème

En Octobre prochain, la M.C.A. d'Alfortville fêtera le 20ème anniversaire de l'INAUGURATION DE SA STRUCTURE.

Plusieurs manifestations sont prévues du Vendredi 11 au Samedi 19 Octobre.

Merci de retenir ces dates.

9, rue de Madrid, 94140 ALFORTVILLE
Tél.: 43 76 55 89 Fax : 43 78 66 64

ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

«ՅԱՌԱՋ» ՄԱՏԵՆԱՇԱՐ

ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ՕՐԵՐ ԵՒ ԺԱՄԵՐ	100 Ֆր.

ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐ

ՆԱՀԱՆՋԸ ԱՌԱՆՑ ԵՐԳԻ	80 Ֆր.
ԲԱՑ ՏՈՄԱՐԸ	75 Ֆր.
ԿՐԱԿԸ ԿՈՂՔԻՍ	75 Ֆր.
ՍԻՐՏ ՍՐՏԻ	150 Ֆր.

ՀՐԱՆՏ ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԵՐ	80 Ֆր.

ԽԱՉԻԿ ԹԷՕԼԷՕԼԵԱՆ

ՍՓԻՒՌՔԻ ՄԷՋ	75 Ֆր.

ԵՒ

«ՅԱՌԱՋ - 50»
(Ծաղկաքաղ 50-ամեայ հաւաքածոյէն) 120 Ֆր.

Դիմել «ՅԱՌԱՋ»ի:

Թղթատարի ծախք 25 Ֆր., հատոր գլուխ:

ԾՆՆԴԵԱՆ

ՄԿՐՏՈՒԹԵԱՆ

ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ

ԵՐԿԼԵԶՈՒ

ՁԵՐ ՀՐԱՒԷՐՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

ԴԻՄԵՑԷ՛Ք «ՅԱՌԱՋ»Ի ՏՊԱՐԱՆԸ

ՆՈՐՈՒՈՅ ՆԱՄՈՒՆԵՐ, ԱՐԱԳ ՅԱՆՁՆՈՒՄ

Տեղւոյն վրայ ձրի խաղալի

ՈՒՐԲԱԹ
ՕԳՈՍՏՈՍ 2
VENDREDI
2 AOUT
1996

LE NUMERO : 5,00 F.

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1925-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE-FONDE EN 1925
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 47. 70. 86. 60 — TELEX : HARATCH 280 868 F
— FAX : 48. 00. 06. 70 —
C.C.P. PARIS 15069-82 E

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 1.100 Ֆ. – Վեցամսեայ : 560 Ֆ.
Արտասահման : Տար. 1.400 Ֆ. (ամէնօրեայ առաքում)
1.250 Ֆ. (շաբաթական առաքում) – Հատը : 5,00 Ֆ.

72րդ ՏԱՐԻ – Թիւ 18.910

Fondateur SCHAVARCH MISSAKIAN

72e ANNEE — N° 18.910

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

71

Խօս երէկ էր:

Այսինքն ճիշդ ու ճիշդ տարի մը առաջ: «Յառաջ» կը խոստովանէր որ 70 տարեկան է եւ թերթերու պարագային ծերութեան նշան չէ, այլ՝ կենսունակութեան, գիմադրական ոգիի, տոկունութեան:

Ինքնագոհութի՞ւն, Թերեւս: Բայց, պարկ է հաստատել որ նոյնիսկ Ֆրանսերէն այն օրաթերթերը որոնք կրնան պարծենալ թէ կէս դարէ աւելի գոյութիւն ունին, բանալի չեն կազմեր:

Նման հանգրուանի մը հասնիլ, ալ աւելի դժուար է հայերէն օրաթերթի մը համար, որ յամառօրէն կառչած կը մնայ ժամանակավրէպ սկզբունքներու, չուզեր դաւաճանել իր գոյութեան իմաստ տուող կոչումին եւ կը մերժէ քալել ժամանակին հետ:

Ժամանակին հետ քալել պիտի նշանակէր ... եւ առաջ, ենթարկուիլ երկրին լեզուին: Հոս՝ ֆրանսերէնի, հոն՝ անգլերէնի, ... սպաներէնի, դեռ փորթուկալերէնի ... հոլանտերէնի, ռումաներէնի, պուլկարերէնի եւայլն, եւայլն:

Հետաքրքրական պիտի ըլլար գիտնալ ... ընթերցողներու զգալի յաւելում մը ... արձանագրէի՞ն այդ թերթերը: Այդ յաւելումը թերեւս արդարացնէր տեղատուութիւնը, մանաւանդ եթէ կարելի ըլլար հաստատել որ օտարախօս երիտասարդութիւնը կը մօտենայ իր արմատներուն, երբ գիտակից կ'ըլլայ եւ մամուլը ... առաջ կ'երթայ իրեն, որպէսզի յոգնութիւնը չկրէ իր մայրենի լեզուն սորվելու աւելի հարազատօրէն ընտելանալու համար իր մշակոյթին:

Բայց, այս ցաւերուն կրկնութիւնները պիտի փոխեն, ընդհակառակն: Լեզուական նահանջը պիտի շարունակուի օրէ աւելի մեծ ծաւալով եւ պիտի դատապարտուին անոնք - այսինքն՝ մենք - որոնք ... հասկցած թէ սփրաշահելու համար ... երիտասարդը հարկ է խօսիլ ... լեզուն:

... դառն խորհրդածութիւնները անխուսափելի են տարեդարձէ տարեդարձ, ... երատեսութիւնը կը ստիպէ հաստատել թէ կարելի չէ օրօրուիլ երանելի լաւատեսութեամբ մը: Ծիծի մը կէսը լեցուն ... չի բաւեր չտեսնելու այն միւս ..., որ պարապ է:

***

Ի՞նչ պատկեր կը պարզէ այսօր Սփիւռքի մեր մամուլը: Զրկուած առեւտրական ... յաջողումներէ, ինչ որ գլխաւոր նեցուկն է որեւէ մամուլի, ընթերցողներու լայն ..., ան կը տուայտի դժուարագոյն պայմաններու մէջ: Այս դժուարագոյն պայմանները պատճառ եղան որ օրաթերթեր իրենց կեանքին վերջ տան կուսակցական պաշտօնաթերթեր ինչպէս «Հայրենիք», «Արմենիա», «Պայքար» (այս վերջինը բոլորովին թաղելով արտասահմանեան իր հրատարակութիւնը) հակառակ որ նիւթական բեռը տանող կար: Այսօր, Սփիւռքի մէջ, լոյս տեսնող 12 օրաթերթերէն, ինը կուսակցական պաշտօնաթերթեր են, եւ միայն երեքը անկախ, «Մարմարա», «Ժամանակ» եւ «Յառաջ»:

Անկախ ըլլալ չի նշանակեր անշուշտ ... եւ այդ ուղղութեամբ, «Յառաջ»ի ընթերցողը գիտէ թէ տասնամեակներու երկայնքին, «Յառաջ» մնացած է միշտ ... մամուլ, ջանալով զանազանել ... ու չիտակը, չտարուելով կողմնակալ մօտեցումներէ:

***

Այսօր, ան կը թեւակոխէ իր 72-րդ տարին շատ աւելի դժուար պայմաններու մէջ քան անցեալին:

Այս չի նշանակեր, սակայն, թէ տրամադիր է տեղի տալու: Ընդհակառակն, աւելի քան երբեք վճռած է շարունակել իր հիմնադիրին գծած ճամբան, դէմ դնելով բոլոր խոչընդոտներուն, այն խոր համոզումով որ իր վայելած համակրութիւնը գլխաւոր նեցուկն է իր գոյատեւման:

«ՅԱՌԱՋ»

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹԻՒՆԸ զգալի նոր յաւելում մը կրած է Ֆրանսայի մէջ, անգամ մը եւս փաստը տալով թէ ձախէն աջ, ոչ մէկ կառավարութիւն լուծում մը կը գտնէ: Յունիսին 22.800 նոր գործազուրկներ աւելցած են, 12,5%-ի հասցնելով գործազրկութեան համեմատութիւնը երկրին մէջ, բազդատմամբ գործօն տարրին: Գործազրկութեան գլխաւոր զոհերն են 25 տարեկանէն վար երիտասարդները եւ 3 տարիէն աւելի չաշխատողները: Այս աղէտալի կացութիւնը ցոյց կուտայ այդ ուղղութեամբ տարուած քաղաքականութեան ձախողութիւնը: Մէկ տարուան ընթացքին գործազրկութիւնը 4,6% յաւելում արձանագրած է: Գլխաւոր պատճառներէն է նաեւ պաշտօնազրկումը, որ չի դադրիր:

ԿԻՊՐՈՍԻ շուրջ, Ֆրանսայի եւրոպական հարցերու պատուիրակ նախարարը՝ Միշէլ Պարնիէ կ'ուզէ որ եւրոպական հաստատաց նախաձեռնութիւն մը ըլլայ: Միշէլ Պարնիէ, Յուլիս 30-ին, ընդունուած է Կիպրոսի հանրապետութեան երկու կողմերը, այսինքն՝ թէ նախագահ Գլերիտէսէ եւ թէ «հիւսիսային Կիպրոսի հանրապետութեան» (զոր միայն Թուրքիա կը ճանչնայ) նախագահ՝ Տէքթաշի կողմէ: Եւրոպացիները յանձնառու եղած են բանակցութիւններ տանելու Կիպրոսի անդամակցութեան համար Եւրոպական Միութեան մէջ, ինչ որ ստիպողական բնոյթ կուտայ կիպրական տագնապին լուծման:

ԹՐՔԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ մօտէն կը հսկէ իսլամական իր տարրերը եւ այս առընչութեամբ, բարձրաստիճան զինուորական մը յայտարարած է «Այտընլըք» չաբաթաթին. - «Էրպաքանի իշխանութեան գլուխ ըլլալը պատճառ չէ որ թոյլ տանք Շարիային (իսլամական օրէնք) գլուխ կողմնակիցներուն որ բանակը նուաճեն»: 1995 Օգոստոսին, սպայակոյտի նոր պետը՝ Իսմայիլ Հաքքը Գարատայի միայն 15 վայրկեան տեսակցութիւն մը շնորհած էր Էրպաքանի որ եկած էր զինք շնորհաւորելու: Ընտրութենէն ի վեր, Էրպաքան նոր տեսակցութեան մը արժանացած է: Բանակը մասնաւորաբար հսկողութեան տակ առած է իր սպաները եւ նոյնիսկ ցանկը պատրաստած անոնց որոնք կը յարգեն Ռամազանը, 1995 Դեկտեմբերին, անոնցմէ յիսունը արտաքսուած էին «կրօնական որոշ եղբայրութիւններու հետ» իրենց յարաբերութեանց համար: Զինուորական բարձրագոյն Խորհուրդը որուն որոշումները վերաքննութեան ենթակայ չեն, Օգոստոսին կը գումարէ իր յաջորդ վեցամսեայ ժողովը, ուր, ի մէջ այլոց, պիտի որոշէ նոր հեռացումներ այն զինուորականներուն որոնց «իսլամական կապերը» կասկածի տակ առնուած են:

ՖՐԱՆՍԱՅԻ ԵՒ ԱԼԺԵՐԻՈՅ յարաբերութիւնները բարելաւելու միտումով է որ Հ. տը Շարէթ Ալժէ գնաց Յուլիս 31-ին: Երկու երկիրներու միջեւ առկախ հարցեր շատ են: Ալժէ դժգոհ է որ Փարիզի օդակայաններու հետ իր տարակարծութիւնները պատճառ ըլլան միշտ որ ալժերական ընկերութեան օդանաւերը սխալին Լիոն, Մարսէյլ կամ Լիլ էջք կատարել: Միւս կողմէ Ֆրանսա համոզուած է որ Ալժէ հարկ եղածը չըրաւ Ֆրանսացի եօթը վանականները փրկելու համար: Այսուհանդերձ, հաւանական չէ որ Ֆրանսա աւելցնէ իր օժանդակութիւնը: 1994-էն ի վեր վարկերը տարեկան 6 միլիառ Ֆրանք են եւ դեռ ամբողջովին ալ չեն օգտագործուած:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՄԷՋ արկած մը պատահած է Յուլիս 24-ին եւ բազմաթիւ անձեր վարակուած են շողագործօն տարրերէ: Բժշկական չփոթ մթնոլորտի մը մէջ է որ լուրը յայտնուած է Համշահրի պարսկական թերթին կողմէ, որ կ'ըսէ թէ 50 է վարակուած անձերու թիւը: Հիւլէական միջադէպը պատահեր է Ռախթ, երկրին հիւսիսը: Կը կարծուի սակայն թէ դէպքը շատ ծանրակշիռ բնոյթ չունի, քանի թեհրան օտար (Ֆրանսական մանաւանդ) մասնագիտացած հիւանդանոցներու կոչ չէ ըրած:

ՉԷՉԷՆՆԵՐԸ կը մերժեն բանակցիլ ցորչափ Ռուսերը չեն դադրեցներ ռմբակոծութիւնները: Իրենց բանբերը յայտարարած է. -- «Նման կացութեան մը մէջ բանակցիլ պիտի նշանակէր դաւաճանել չէչէն ժողովուրդին շահերուն»:

ԳԼՕՏԷԹ ԳՈԼՊԷՐ, հանրածանօթ, բայց մոռցուած դերասանուհին մեռաւ 91 տարեկանին, Պարպատի իր ապարանքին մէջ ուր կ'ապրէր տարիներէ ի վեր: Փարիզեան արուարձան մը ծնած այս Ֆրանսուհին, Հոլիվուտի աստղը եղած է 30-ական թուականներուն եւ ամէնէն մեծ դերասաններուն հետ խաղացած է հռչակաւոր բեմադիրներու ղեկավարութեամբ:

ՍԱՐԱ ՊԱԼԱՊԱԿԱՆ, փիլիպպեանցի 17-ամեայ աղջնակը որ մահուան դատապարտուած էր Արաբական Միացեալ Իշխանապետութեանց կողմէ, որովհետեւ սպաննած էր 84 տարեկան իր գործատէրը որ զինք բռնաբարած էր, ազատ արձակուեցաւ Յուլիս 31-ին: Ան որպէս սպասուհի կը ծառայէր 1994 Մայիսին երբ փիլիպպեաններէն եկած էր աշխատելու համար: Առաջին անգամ մը, ընդունուած էր օրինաւոր պաշտպանութեան բնոյթը եւ միայն 7 տարի բանտարկութեան դատապարտուած էր եւ 40 հազար տոլար հատուցում վճարելու ընտանիքին: Ապա, դատարանը նոր վճիռ մը կուտար, այս անգամ մահուան: Միջազգային ճնշումին տակ, դատարանը տեղի տուաւ եւ աղջնակը ազատ արձակուեցաւ ու արտաքսուեցաւ դէպի իր հայրենիքը:

ՕԼԻՄՊԻԱԿԱՆ 100

ԸՄԲՇԱՄԱՐՏ

ԱՐՄԷՆ ՄԿՐՏՉԵԱՆ ԱԼ ԱՐԾԱԹ ՄԵՏԱԼ ԿԸ ՊԱՐԳԵՒԷ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Կոփամարտի մէջ հայ մարզիկներու յաւաջացուցած յուսախաբութենէն ետք մետալի հայկական վերջին յոյսերը յենած էին ազատ ոճի ըմբշամարտի: Հայ երկու ըմբիշները Արմէն Մկրտչեան (48 քկ.) եւ Արայիկ Գէորգեան (68 քկ.) կը մրցէին Յուլիս 30-ին եւ 31-ին:

Անոնցմէ առաջինը՝ Մկրտչեան գլտման խաղերուն առաջին փուլին յաղթելէ (10 -- 0) յաղթելէ ետք գոլոմպիացի իր մրցակցին, երկրորդ փուլին ալ նոյնքան համոզիչ 9 -- 2 արդիւնքով դուրս կը ձգէր ամերիկացի իր մրցակիցը: Ապա քառորդ աւարտականներուն, Ա. Մկրտչեան Գուպացիին (4 -- 1) եւ կէս աւարտականներուն Մոլդովացիին (7 -- 2) յաղթելով կը հասնէր աւարտականին: Սակայն եզրափակիչ այս խաղը, որ շատ բուռն եղաւ, վերջ գտաւ 5 -- 4 չնչին տարբերութեամբ ի նպաստ հարաւային գորէացի ըմբիշին որ խլեց ոսկի մետալը եւ Արմէն Մկրտչեան ստիպուած եղաւ գոհանալ արծաթով: Այսպէսով ան ապահովեց Հայաստանի երկրորդ մետալը Արմէն Նազարեանէն ետք, որ շահած էր ոսկի մետալ յունահռոմէական ըմբշամարտի մէջ:

Գալով Արայիկ Գէորգեանի, ան ալ յաջող զտման մրցումներէ ետք, 6-րդ շրջանին պարտուած է Գուպացիէ մը եւ զրկուած մետալի իրաւունքէ: Այսուհանդերձ ան հանդիսացած է 5-րդ:

Ծանրաբարձութեան մէջ Աշոտ Դանիէլեան +108 քկ. դասակարգին մէջ չէ յաջողած լաւ արդիւնք մը արձանագրել եւ մրցաշարքը աւարտած է 13-րդ 395 քկ. բարձրացնելով, մինչ առաջինը Շեմերգին (Ռուսաստան) 457,5 քկ. բարձացուցած է:

Այլ մարզաձեւի մէջ այլ հայ մը, Արուսեակ Գիւլբուդաղեան ջրացատքի մէջ բաւական անբախտ 20-րդ տեղ մը գրաւած է զտման ցատքերուն, երբ միայն առաջին 18-ը կ'որակուէին:

Ֆրանսական ճակատին վրայ ամէնէն յատկանշական արդիւնքն էր Փաթրիսիա

(Շար.-ը կարդալ Դ. էջ)

ԹՂԹԱԿՑՈՒՄ

ԳԱՐՈԼԻՆ ՃԱՄԿԷՕԶ ՁՅԱՁՈՂԵՑԱՒ ԴԵՂԱՐԱՆ ՄԸ ԲԱՆԱԼ ՊԻԹԼԻՍ, ՈՐՈՎՀԵՏԵՒ... ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԷՐ

«Մարմարա» Յուլիս 24-ի իր թիւով կ'արձագանգէ դեղագործ Գարոլինի «ոդիսականին» Պիթլիսի մէջ. --

***

Դեղագործուհի Գարոլին Ճամկէօզ Յուլիս 23-ին Մարդկային իրաւանց միութեան շէնքին մէջ մամլոյ ասուլիս մը սարքելով գանգատեցաւ որ Պիթլիսի մէջ դեղարան բանալու արտօնութիւն չէ տրուած իրեն պարզապէս անոր համար որ քրիստոնեայ է ինք եւ Գարոլին կը կոչուի: «Սապահ» թերթը լայն սիւնակ յատկացուցած է այս մամլոյ ասուլիսին, որու ընթացքին Գարոլին Ճամկէօզ կը յայտնէ թէ Պիթլիսի իշխանութիւններու կողմէ իրեն դէմ ի գործ դրուած այս տգեղ վերաբերումը գինքը ստիպած է որ դիմէ Մարդկային իրաւունքներու միութեան:

«10 տարիէ ի վեր դեղագործ եմ, 1996 Փետրուար 1-ին Անթալիայէն Պիթլիսի Հիզան գիւղաքաղաքը գացի հոն դեղագործութիւն ընելու համար: Պաշտօնական դիմումները կատարեցի, սակայն Պիթլիսի կուսակալ Շիւքրիւ Գօճաթեփէ եւ փոխ - կուսակալ Ապտուլրահման Սավաշ մերժեցին ստորագրել թուղթերս: Իրենց պատճառաբանութիւնն ալ այն էր որ ես քրիստոնեայ էի եւ Գարոլին կը կոչուէի: Մինչեւ իսկ բնակութեան վաւերագիր չտուին ինծի որպէսզի առով արձանագրուիմ դեղագործներու սենեակը: Հիզանի քաղաքապետ Սալիմ Բարլաք սպառնալիքներ ըրաւ իմ թաղիս մուխթարին եւ ճնշում ի գործ դնելով ապահովեց որ բնակութեան վաւերագիր չտրուի ինծի: Ես միայն դատական որոշումով է որ յաջողեցայ առնել այդ վաւերագիրը եւ արձանագրուիլ դեղագործներու սենեակը» ըսաւ Գարոլին Ճամկէօզ:

Գարոլին Ճամկէօզ աւելցուց որ երեք անգամ հսկողութեան տակ առնուած է այն ամբաստանութեամբ թէ ՓՔՔ-ի դեղօրայք ծախած է: Մինչդեռ ինք միայն խեղճ ու հիւանդ մարդոց ծառայութիւն կը մատուցանէ: Կը սիրէ իր գործը, սակայն արգելքներ կը դրուին իր դիմաց: Մինչեւ վերջ ալ պիտի պայքարի այս մտայնութեան դէմ: Եթէ պէտք ըլլայ պիտի դիմէ Եւրոպայի Մարդկային իրաւունքներու յանձնախումբին:

Մարդկային իրաւունքներու յանձնախումբի նախագահ Էրճան Գանարն ալ ըսաւ որ Արեւելեան նահանգներու մէջ միայն Քիւրտերը չեն որ նեղ կացութեան մատնուած են, այլ նաեւ փոքրամասնութիւնները: «Մենք այս հարցը սէնտիքաներու համագաշնակցութեան պիտի փոխանցենք» ըսաւ Գանար:

ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 71ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻՒ

«ՅԱՌԱՋ» ՆՊԱՏԱԿԻ ՄԸ ՀԱՄԱՐ ՍՏԵՂԾՈՒԱԾ Է

Հայերէն լեզուն, գրաւոր թէ բանաւոր, ջուր կ'առնէ ամէն կողմերէն։

Դեռ որքան ժամանակ կը մնայ փոխանակութեան, հաղորդակցութեան միջոց, չենք գիտեր։ Մէկ բան հաստատ է. Այսօր, լեզուի գործածութիւնը հակադարձաբար համեմատական է սերունդներու յաջորդականութեան։ Սփիւռքի մէջ, յետ ապրիլեան կոչուած սերունդին, չորրորդ սերունդն է որ հրապարակ կուգայ եւ լեզուն ոչ թէ չորս անգամ այլ քառասուն անգամ նուազ կը խօսուի, կը կարդացուի եւ կը գրուի։

Կարելի է տալ բազում օրինակներ, անձնական թէ հաւաքական կեանքէն ներս։

Ընտանիքներուն մէջ, շատ յաճախ մեծ մօր մը կամ մեծ հօր մը անհետացումովը կը ցամքի լեզուն եւ գիրը կը դադրի առօրեայ ներկայութիւն մը ըլլալէ։

Միութիւններուն մէջ, շատ քիչ բացառութեամբ գործածուած լեզուն տեղական այսինքն երկրի լեզուն է։ Ատենագրութիւնները, նամակագրութիւնները, հաղորդագրութիւնները, ծանուցումները, ազդերը կ'ըլլան ոչ հայերէնով։

Հրապարակային ձեռնարկներու ընթացքին, գեղարուեստական - մշակութային - տեղեկատուութեան -- տօնական, ելոյթները կ'ըլլան գրեթէ զուտ օտար լեզուով։

Եկեղեցիներէն ներս իսկ, հազուադէպ չէ ոչ հայերէնով աղօթք մը կամ ընթերցում մը լսել, քարոզ մը կամ դամբանական մը կամ շնորհաւորութեան խօսք մը մտիկ ընել։

Հայկական ձայնասփիւռներ կան (բացառութիւնները յարգելի են) որոնց հաղորդումները կ'ըլլան միայն Ֆրանսերէնով։ Աւելին, յաճախ վարիչն իսկ ոչ հայերէն գիտէ, ոչ հայկական մշակոյթին ծանօթ է եւ ոչ իսկ հայկական աշխարհէն տեղեակ է. եւ սակայն հայկական ռատիօ է։

Վերջապէս ի՞նչ ըսել երբ հայերէն լեզուի դասընթացքներու ժամանակ եւս կը գործածուի այլ լեզու քան հայերէնը։ Իսկ մամուլը ընդհանրապէս դարձած է բազմալեզու։

Այլուհանդերձ, այս «օտարութեան» մէջ, այս Բաբելոնի աշտարակին մէջ, կան վստահաբար եւ բարեբախտաբար մտահոգ անձեր, բացառութիւն կազմող միութիւններ ու հաստատութիւններ որոնք հաւատարմօրէն, յամառօրէն կառչած կը մնան հիմնական աւանդական արժէքներուն եւ անոնց գլխաւորին՝ լեզուին։ Տեղի չեն տար։ Կը մնան հաստատակամ։ Կը տուժեն նիւթապէս։ Կը մարտնչին հոսանքն ի վեր։ Եւ կը տոկան։ Կը տոկան որովհետեւ նպատակի մը համար ստեղծուած են, ու այդ նպատակը տկարութիւն պէտք չէ ճանչնայ։ Լեզուն պէտք չէ նահանջէ։

Այդ անտեղիտալի հաստատութիւնը, կանգուն պահակը հայ լեզուին, Ֆրանսայի մէջ, կը մնայ «Յառաջ»ը որ հայ մամուլին միակ ներկայացուցիչն է։ Հայ մամուլ կը նշանակէ հայերէն մամուլ։ Հայ մամուլ մնալով «Յառաջ» աշխարհասփիւռ հայութիւնը իրարու կը կամրջէ, կապը կը հաստատէ Հայրենիքին հետ, մշակոյթ - գրականութիւն - արուեստ կը պահպանէ, մէկ հասարակաց յայտարարի տակ՝ լեզուն, մեսրոպեան լեզուն իր հարազատ ուղղագրութեամբ։

Հայ մամուլին տարազը այս է։

«Յառաջ» օրինակ մը կը հանդիսանայ քանի անաղարտ եւ վառ կը պահէ 71 տարիէ ի վեր Մատրասի պատգամն ու լոյսը իր հարազատ առաքինութեամբ եւ առաքելութեամբ։

ԿԱՐՕ ՅՈՎՍԷՓԵԱՆ

ՍՓԻՒՌՔԱՀԱՅ ԵՐԱԺԻՇՏՆԵՐ

ԳՈՒՐԳԷՆ Մ. ԱԼԷՄՇԱՀ (1907 – 1947)

ԺԱՆ ՊԱՀՃԱՃԵԱՆ

(Ա) ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆԸ

Սփիւռքահայ երաժշտական երկնակամարին վրայ սկսաւ փայլիլ մեծ աստղ մը, որ շուտով պիտի ստանար համաշխարհային հռչակ, եւ իր մուրատն ու իղձերը սրտին մէջ ինկաւ անժամանակ կէս ճամբուն վրայ։ Սփիւռքի եզակի մէկ երգահանը եղաւ ան։

Գուրգէն Միքայէլի Ալէմշահ ծնած է Նիկոմիդիա 1907 Մայիս 22-ին։ Նախնական եւ երկրորդական ուսումը ստացած է Վենետիկի Մխիթարեան հայրերուն շունչին տակ նախ Պոլիս եւ յետոյ Վենետիկ 1919-ին, Մուրատ Ռափայէլեան հաստատութեան մէջ, ուրկէ շրջանաւարտ կ'ըլլայ 1923-ին։ Ի բնէ անհուն բարութեան խորհրդանիշը բնորոշող՝ ան փոքր տարիքէն բնածին սէր ու հակում ցուցաբերած է երաժշտութեան հանդէպ։ Այնուհետեւ, կ'անցնի Միլանօ, ուր յետ մրցման՝ կ'ընդունուի Միլանոյի Ճուզեփփէ Վերտի պետական երաժշտանոցը եւ կ'աշակերտէ Փիլէթթիի, Պուսիի, Փարիպէնիի եւ այլ ժամանակակից երաժշտութեան ականաւոր վարպետներու։ Այս երաժշտանոցին հայ աշակերտը եղած է ան. տասը տարուան ընթացքին, միայն չորս հոգի յաջողած են այդ խստապահանջ երաժշտանոցէն երգահանի վկայական ստանալ։ Այդ չորսին մէկը եղած է Ալէմշահ, որ 1930-ին փայլուն կերպով աւարտած է երաժշտանոցի ընթացքը, ստանալով երգահանի վկայական եւ փրոֆէսէօրի տիտղոս։

Նոյն տարին, Սեւրի Սամուէլ Մուրատեան վարժարանի երաժիշտ - ուսուցիչի պաշտօնին կոչուիլը, կը փութացնէ Ալէմշահի Փարիզ հաստատուիլը ուր 1931-ին արդէն իսկ կը կազմէ «Կիլիկիա» երգչախումբը ու կը մասնակցի հայ եւ օտար կազմակերպութիւններու սարքած հանդէսներուն։

(Բ) ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԱՇՏԵՐԸ

«Կիլիկիա» երգչախումբի աշխատանքի զուգընթաց, Ալէմշահ որոշ ժամանակ մը ղեկավարած է ՀՕՄ-ի «Ալագեազ» երգչախումբը։ Ֆրանսահայերը 1925-ին, Փարիզի մէջ, կը կազմակերպեն «Սիփան» երգչախումբը. իսկ 1930-ին՝ «Կոմիտաս» երգչախումբը։ Ժամանակ մը վերջ, երգչախումբերու կազմը սակաւամարդ կը դառնայ։ Տեղի հայկական կազմակերպութիւնները, 1936-ին, կը միացնեն այդ երգչախումբերը ու կը կոչեն «Սիփան - Կոմիտաս», զոր Ալէմշահ կը ղեկավարէ ձեռնհասօրէն մինչեւ իր եղերական մահը։

Նոյն տարին, Ալէմշահ նուագահանդէսներու շարք մը կուտայ Վենետիկի մէջ՝ իտալացի հասարակութեան համար, Ս. Մարկոս հրապարակին վրայ։ «Սիփան - Կոմիտաս» երգչախումբը գիշերները բացօթեայ համերգներ կը սարքէ, գրեթէ բացառապէս Կոմիտաս վարդապետի խմբերգներով կազմուած յայտագրով եւ այնպէս ջերմօրէն կ'ընդունուին խումբին կատարողները, որ ունկնդիրներէն շատերը, տեղն ու տեղը, կը ձայնակցին երգչախումբին։ Իսկ 1937-ին, այցելելով Սուրիա եւ Լիբանան, ան կուտայ շարք մը համերգներ, որոնք մեծապէս գնահատուեցան երաժշտասէր հասարակութեան կողմէ։ Հայ եւ օտար մամուլը հիացումով արտայայտուեցաւ երաժշտական բեղուն հմտութեան մասին։ Ալէմշահ մեծ ջանասիրութեամբ օտարներուն ծանօթացուցած է հայ երգն ու երաժշտութիւնը, ճոխացնելով յայտագիրը իր իսկ ստեղծագործութիւններով, իր «Սիփան - Կոմիտաս» երգչախումբով, ներկայացուցած է Արմէն Տիգրանեանի «Անուշ»ը։ Այդ երգչախումբը երգած է Փարիզի մեծ եկեղեցիներուն մէջ, իսկ ամէն տարի Մայիսի առաջին Կիրակին, Աստուածամօր տաճարին մէջ։ Ալէմշահ իր աննախընթաց համերգներով պանծացուցած է հայ երգը Ֆրանսայի տարբեր քաղաքներուն մէջ։ Իր գլխաւոր մտահոգութիւններէն մին եղած է՝ օտարութեան մէջ վեր հանել ու վառ պահել հայ ժողովուրդի ազգային - ժողովրդական երաժշտական մշակոյթը, երաժշտական դասական լաւագոյն նմոյշները, միեւնոյն ժամանակ ջանալով միանգամայն օտարներու համակրութիւնը հրաւիրել հայ ազգին վրայ՝ ծանօթացնելով եւ վայելել տալով անոնց՝ մեր երաժշտական գոհարները։

Ալէմշահ հայրենանուէր երաժիշտ էր. հոս կը մէջբերեմ իր խօսքը. «Ամէն ծաղիկ իր հողի մէջ կը բուսնի եւ որքան որ ջանանք մենք, մեր հայրենիքի սահմաններէն դուրս, չենք կրնար հասնիլ կատարեալին»։

(Գ) ԱԼԷՄՇԱՀԻ ԳՈՐԾԵՐԸ ԵՒ ԻՐ ՏԵՂԸ ՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Ուշագրաւ է Ալէմշահի ստեղծագործութիւնը. աշխատելով հարազատ մնալ ազգային երաժշտութեանը, ան դիմած է ստեղծագործական բազմաթիւ ճիւղերու։ Մեներգ, խմբերգ, նուագային եւ սենֆոնիք ստեղծագործութիւններու իր տպուած գործերն են ինը մեներգ դաշնակի ընկերակցութեամբ եւ հինգ խմբերգ միայն։ Ան, մեծ նուագախումբի համար պատրաստած է շարք մը կտորներ, ինչպէս՝ «Արեւելեան գիշերներ» (1931), «Հէքեաթ», «Երկու պատմուածք՝ 1001 գիշերներ», հայ ժողովրդական պարերու ստեղծագործութիւնները։ Իր ամենանշանաւոր մեծ կտաւի գործն է «Աւարայրի պատերազմը», երգեցիկ, սենֆոնիք երգը, որ գրուած է 1934-ին։ Ասոնցմէ զատ ունի նաեւ երկու երաժշտական պատկերներ «Վարդավառ» (1932), մէկ արարով, եւ «Ծովինար»՝ երկու արար։ Ալէմշահ, բացի իր հեղինակած երաժշտական գոհարներէն, ձայնագրած է նաեւ կարգ մը ֆիլմերու երաժշտական բաժինը, ինչպէս «Ֆէն տը Սեզոն» եւ «Րիվիէռ» ու նաեւ՝ գեղջկական հարսանիք խօսուն ֆիլմը։ Ինքնաստեղծ երգերու կողքին, Ալէմշահ ունի ժողովրդական երգերու բազմաթիւ մշակումներ. «Հօյ Նար», «Շուշօ», «Հարսանեկան երգ աղջիկ տանելուն» եւայլն։ Ժողովուրդներու երաժշտութեան մրցահանդէսին, Ալէմշահի «Հայկական հարսանիք» երկը շահած է երկրորդ մրցանակ։

Ալէմշահի ստեղծագործութիւնները օրկանապէս կապուած են հայ ժողովրդական եւ դասական երաժշտական աւանդութիւններուն։ Որպէս խմբավար եւ ղեկավար Ֆրանսայի, Իտալիոյ եւ Միացեալ - Նահանգներու մէջ, ան յաճախ հանդէս է եկած սենֆոնիք եւ խմբերգային համերգներով, կատարած է Կոմիտասի, Ալ. Սպենդիարեանի, Ա. Տիգրանեանի, Տ. Չուխաճեանի, Քրիստափոր Կարա - Մուրզայի եւ այլ երգահաններու ստեղծագործութիւնները։ Հրապարակած է սալերու շարք մը, սենֆոնիք նուագախումբի կատարմամբ, Ալ. Սպենդիարեանի «Երեւանի էթիւտներ»էն, «Էնզելի եւ հիճազ» գործերը, որոնք դարձած են ներկայիս անգտանելի։ Ալէմշահ սփիւռքի շնորհալի երգահաններէն մէկն էր, ան ունի իւրայատուկ եւ ինքնատիպ ստեղծագործական ոճ։ Իր կարգ մը երգերուն մէջ, մաս մը միայն օգտագործած է Հայաստանեայց հոգեւոր մեղեդիներէն ու բուն ժողովրդական երաժշտութեան առաւել խոհական, ճարտարապետական կառուցուածքի հետ։ Գալով իր մեներգներուն, Ալէմշահ կուտայ երգի վերջին մասին այնպիսի պատկեր մը, ուր հայկական մոթիֆը կը բուրէ ու իր ներկայութիւնը անմիջապէս ի յայտ կը բերէ, ինչպէս հոտաւէտ մեխակը բիւրաւոր ծաղիկներու ընդմէջէն։

Այսպէս են իր «Նազերով»ը, «Աղուորներուն»ը, «Ծաղիկ էի», «Իմ երգը», «Ես սիրեցի»ն, «Իմ եարը», «Իղձ»ը, եւայլն։ Ալէմշահի բազմաթիւ մեներգներէն հետաքրքրականներէն է «Բուլբուլիկ»ը՝ Մխիթարեան միաբան հայր Վահան Վրդ. Յովհաննէսեանի բանաստեղծութեամբ, եւ երգին մէջ հայրենիքի տաք շունչն է որ կը զգաք։ Նկարագրական բնոյթի նուագակցութեամբ ու ոգեշունչ արտայայտիչ մեղեդիի միասնութեամբ այս երկը կը հակի ռոմանթիք ոճի, ռոմանս, իր մէջ պահելով ազգային ոգին։

Առանձնապէս հրապուրիչ են Ալէմշահի նրբակերտ երգերը, գրուած ընտիր բանաստեղծութիւններու հիման վրայ, որոնց ոգեշունչ կերպարները թեւաւորուած են համահնչիւն մեղեդիներով։ Ալէմշահ կուտայ ոտանաւորին իմաստը հաճելի եղանակով եւ նոյնքան հաճելի ու ճարտար դաշնակի նուագակցութիւնը լեցնող, լրացնող, վերածող մեղեդիի իմաստին մէջ, ներդրուած լրացուցիչ բովանդակութեանը տրամադրութիւնը։

Ալէմշահի մեղեդին անընդհատ ծորուն մեղեդի չէ, այլ միեւնոյն մեղեդիական կերպարի մէջ բազմազան, յաճախ հակադիր թոնին ելեւէջը շարահիւսութիւններով զարգացող հատուածներ, որոնք կը միաւորեն ամբողջացնելով հիմնական կերպարը, գաղափարը։

Բոլոր երգահանները իրենց սկզբնական ստեղծագործութեան շրջանին, կը կրեն զգալիօրէն ազդեցութիւնը իրենց յաճախած դպրոցին, ինչ որ բնական է եւ անխուսափելի։ Զերծ չէ նաեւ Ալէմշահի պարագան, սակայն, Ալէմշահ կրցած է ձերբազատիլ եւ կարճ որոնումներէ ետք, ունեցած է իր սեփական ոճը։

Երաժշտանոցի ուսանող եղած ժամանակամիջոցին, 1928-ին, պատասխանելով իրեն ուղղուած հարցումի մը, երաժշտանոցի տնօրէնը կ'ըսէր ապագայ երաժիշտին մասին. «Առանց դատելու եւ կշռելու Ալէմշահի ամբողջական կարողութիւնը, վստահօրէն կրնամ ըսել, թէ եզական են իր ներշնչման աղբիւրները եւ գնահատելի՝ զանոնք մշակելու եւ ընդլայնելու համար ցոյց տուած յատկութիւնը։ Արեւմտեան երաժշտական թեքնիքի բոլոր նրբութիւնները զերծ կը մնան որեւէ այլակերպումէ ու կը պահեն ինքնուրոյն հաճելի շեշտ մը»։ (1)

Փորձառու երաժշտանոցի տնօրէնին նախատեսութիւնը յետագային լիովին արդարացուց անուանի երաժիշտը։ Դժբախտաբար, իր բոլոր գործերը տպուած չեն։ Սա ճակատագիր է շատ մը սփիւռքահայ երաժիշտներուն, սակայն, այն ինչ որ մեզի փոխանցուած է, մեզ կը բերէ այն համոզման, որ Ալէմշահ բացառիկ շնորհքով, գեղեցիկին, վսեմին, բարիին պաշտամունք ունեցող գեղարուեստական բարձր մակարդակով, յօրինումի բոլոր տուեալները բնորոշող երաժիշտ - երգահան մը եղած է. ան իր սիրուն ստեղծագործութիւններով հաստատեց, որ գեղեցիկը մարդը կը դարձնէ երջանիկ։ Ուժեղ եւ բարի անոր զուարթ երգերը ունկդիրին մէջ կ'արթնցնեն պայծառ ու բերկրալի զգացումներ։ Թուենք իր յատկութիւնները - պարզութիւն, բառի կշռոյթ, առանձնայատուկ ոճ, երաժշտական գիտութիւն, ինքնաբխութիւն եւ հայկական երաժշտութեան հարազատ նկարագիր։

Ան, մտերիմ շրջանակի մը մէջ, այսպէս արտայայտուած է ... «Այս արտադրած գործերս ոչինչ են»։ Ո՛չ, սիրելի Ալէմշահ, ժամանակը ցոյց տուաւ որ տուած գործերդ ո՛չ միայն մնայուն արժէքներ են ու կը դիմանան ժամանակին, այլեւ իրենց ուրոյն տեղը ունին մեր հայ երգարուեստի բնաշխարհին մէջ։ Քաջ վստահ եղիր, որ քու այս թանկագին սիրուն ստեղծագործութիւններդ հնչեցին ու պիտի հնչեն ինչպէս ռազմի շեփորները թէ՛ արտասահմանի եւ թէ՛ Մայր Հայրենիքի երգիչ - երգչուհիներու կողմէ։ Դուն բառին բովանդակ իմաստով հայ դասականացած երաժշտութեան օրինակելի անխոնջ առաքեալն էիր. փառքի օրերդ մօտալուտ էին, ինչպէս նաեւ համաշխարհային չափանիշով արտադրելիք գործերդ. հայ ազգը անձկութեամբ կը սպասէր այս բոլորին եւ պիտի հրճուէր ի տես իր խոստմնալից զաւկին նորանոր յաջողութիւններուն։

(Դ) ԳՈՒՐԳԷՆ ԱԼԷՄՇԱՀ ԿԸ ԽՕՍԻ

«Եթէ արուեստը հայրենիք չունի, նոյնը չէ արուեստագէտին համար, հայ արուեստագէտին համար։ Արարատի շուքէն անդին հայրենիք չկայ։ Հայ երաժշտին համար՝ հայրենիքի երգէն դուրս ներշնչում չկայ։ Հայ երաժշտութիւնը, իր ոգիով, գեղեցկութեամբ, գոյնով եւ պարզ արուեստով, կը գտնենք առաւելապէս գեղջուկ երաժշտութեան մէջ։

Այս տեսակէտէն, Կոմիտաս վարդապետի գործը անհուն է, անփոխարինելի, աննախընթաց եւ գուցէ անյաջորդ։ Վարդապետը տարիներ շրջելով հաւաքած է բազմաթիւ ժողովրդական երգեր, զանազան փոփոխակներով, ըստ իրենց կրած ազդեցութեան՝ արեւելեան, պարսկական, թրքական, քրտական եւայլն, եւ այլ բոլորին մէջէն գտած, բիւրեղացուցած է հայկականը։

Կոմիտասի մեծագոյն արժէքը իր դաշնաւորման մէջ է։ Ան գտած տուած է զայն գեղջուկ երգերուն մէջ։ Եւ տուած է հայ երգը իր պարզ գեղեցկութեամբ։

Հակառակ երաժշտական իր մեծ զարգացումին ու գիտութեան, անիկա չխնդեց եւ ինչպէս ուրիշներ ըրած են ու

ՀԱՆՐԱՅԻՆ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԸ
ԿԸ ՏԱՐԲԵՐԻՆ ԵՐԿՐԷ ԵՐԿԻՐ

ԵՐԹԵՒԵԿԻ ՃԱՄԲԱՆԵՐՈՒ ՎՐԱՅՈՎ

Հանրային փոխադրամիջոցները երկար ատենէ ի վեր հրջած են մեր մոլորակին վրայ: Օրինակ, Բրիտանիոյ մէջ անոնք սկսած են երթեւեկը դիւրացնել 1694 թուականին: Աշխարհը օրական 24 ժամ լեցուն է տեղէ տեղ գացող մարդոց հոսանքներով: Երկրագունդին վրայ չկայ բնակուած անկիւն մը, որ հանրային փոխադրամիջոցի տեսակ մը չունենայ... Իսկ այդ տեսակը կախեալ է տուեալ երկրին մշակոյթէն:

● ԼՈՆՏՈՆ (ԲՐԻՏԱՆԻԱ)

«ՕՍԹԻՆ FX4» վաճառանիշով փոխադրամիջոցները, որոնք ճանչցուած են «սեւ ինքնաշարժ» բացատրութեամբ (ինչ գոյնով ալ ներկուած ըլլան), խտէալ սպասարկութիւն մը կը համարուին Լոնտոնի բնակիչներուն եւ զբօսաշրջիկներուն կողմէ: Սակայն անոնք անգործնական պիտի ըլլէին աշխարհի այլ վայրի մը մէջ: Նաեւ չկայ այլ երկիր մը, որ Անգլիոյ չափ հանճներ ունի իր հանրային փոխադրամիջոցները վարող սպասարկուներէն. Անոնք պարտաւոր են միջին հաշուով երկու տարի ուսանիլ եւ գիտելիք ամբարել քաղաքին ասպարէզին վերաբերեալ:

Ընտրութեան ներկայանալը գրեթէ գիտնական կարգապահութիւն կ'ենթադրէ: Իւրաքանչիւր ունի իր թարիքները. Լոնտոնի «քեպիներ»ը աշխարհի ամէնէն աւելի վարձատրուած շարժավարներն են: Անոնց նուազագոյն սակը 3 տոլար է, իսկ շաբաթական աշխատավարձը՝ 1200 տոլար: Բաւական է ունենալ գիտութեամբ հաստատուած արտօնագիր՝ ձեռք ձգելու համար այս գրաւիչ գործը:

● ՄԵՔՍԻՔՕ ՔԱՂԱՔ (ՄԵՔՍԻՔԱ)

Մեքսիքայի մէջ հանրային ինքնաշարժի ընտրութիւնը կախեալ է յաճախորդին ճաշակէն: Հոն կարելի է տեղափոխուիլ գունաւորուած «հիւրասենեակով» կամ Մեքսիքայի մէջ շինուած փոլքսվակէն «պիթըլով»: Այս դեղին «կրիաները» աւելի կրնան ըլլալ, սակայն այնքան ալ հարկ չեն. զանոնք քշողները իրենց յաճախորդները խաբելով կը գոյատեւեն:

Անոնց նուազագոյն սակը 90 սենթ է, իսկ շաբաթական աշխատավարձը՝ 105 տոլար:

● ՎԵՆԵՏԻԿ (ԻՏԱԼԻԱ)

Հեզասահ կոնտոլները վենետիկեան կեանքին մաս կազմած են 16-րդ դարէն սկսեալ: Աւանդաբար եղած են բնտանեկան ու խնամիական շրջանակներու մէջ փակուած եւ սերունդէ սերունդ փոխանցուած ասպարէզ: Սակայն երկու տարի առաջ ամէն ինչ հրջուեցաւ, եւ այս շահաբեր ասպարէզը դարձաւ աւելի «ժողովրդավարական»: Սակայն կոնտոլիէ մը դառնալը դիւրին չէ: Ան պէտք է քննութիւն անցընէ ոչ միայն իր արհեստին մէջ ձեռք ձգած վարժութիւնը ապացուցելու, այլեւ՝ Վենետիկի պատմութեան, աշխարհագրութեան, մշակոյթին եւ նաւավարութեան օրէնքներուն մասին իր գիտութիւնը փաստելու համար: Բոլոր կոնտոլիէները հանգստեան կը կոչուին 65 տարեկանին: Կոնտոլով տեղափոխութեան նուազագոյն սակը 40 տոլար է, իսկ կոնտոլիէի մը շաբաթական աշխատավարձը՝ 675 տոլար:

● ՊՈՄՊԷՅ (ՀՆԴԿԱՍՏԱՆ)

Պոմպէյի հանրային ինքնաշարժները տեղական արտադրութեամբ 1962-ի «Ֆիաթ» 1100 տիպի ինքնաշարժներ են, ճանչցուած՝ «փատմինի» անունով: Անոնք աւելի աժան միակ փոխընտրանքն են 1954-ի «Մօրիս Օքսֆորտ» ինքնաշարժներէն ետք: Զանոնք քշողները «ոգիներէ» հալածուած ըլլալու տենդով կը սուրան: Անոնք նուազագոյնը 25 սենթ կը պահանջեն յաճախորդներէն եւ շաբթական կը ստանան 22 տոլար:

● ՍՈՒՐԱՔԱՐԹԱ (ԻՆՏՈՆԵԶԻԱ)

Ինտոնեզիոյ հեծանիւով ռիքշոները եզակի են իրենց տեսակին մէջ, որովհետեւ յաճախորդներ կը նստին առջեւը, իսկ քշողը՝ ետեւը: Ասիկա սարսափ կը պատճառէ, որովհետեւ բախումի մը պարագային յաճախորդը կը կրէ անոր հետեւանքները, մինչ քշողը անհոգ կրնայ շարունակել ճամբան: Ան նուազագոյնը 30 սենթ կը պահանջէ կարճ տեղափոխութեան մը համար եւ շաբաթական կը ստանայ 7.5 տոլար աշխատավարձ:

● ՊԱՆՔՈՔ (ԹԱՅԼԱՆՏ)

Թուք - թուքը, ինչպէս կը կոչուի այս քաղաքին յատուկ հանրային եռանիւ փոխադրամիջոցը, չափազանց անհանգստաւէտ է և իր շարժակներուն ձայնին «թուք-թուք»ով կը ջղագրգռէ յաճախորդը: Քշողը կը նստի առանձին, առջեւի անիւին վրայ, մինչ յաճախորդները կը թառին ետեւի նստարանին՝ փորձելով յանկարծ դուրս չիյնալ առանց դուռի այս կառքէն: Անոնք նուազագոյնը 90 սենթ կը վճարեն, իսկ թուք - թուքի վարորդիմը շաբթական աշխատավարձը 60 տոլար է:

● ՖԷԶ (ՄԱՌՈՔ)

Մառոքի մեծ թաքսիներուն մեծամասնութիւնը «Մերսեթես» վաճառանիշով լիմուզիններ են, որոնք կը գործածուին քաղաքէ քաղաք երկար ճամբորդութիւններու համար: Աւելի կարճ տեղափոխութեան համար կը գործածուին փոքր եւ աժան թաքսիներ, որոնք ընդհանրապէս 1970-ական տարիներու «Ֆիաթ 124» տիպի եւ 1960-ական տարիներու «Սիմքա 1000» տիպի ինքնաշարժներ են: Անոնց խստիւ արգիլուած է դուրս գալ Ֆէզի սահմաններէն: Նուազագոյն սակը 3 տոլար է, իսկ շարժավարի մը շաբթական աշխատավարձը՝ 68 տոլար:

● ՀՕ ՇԻ ՄԻՆ (ՎԻԵԹՆԱՄ)

Վիեթնամի մէջ ճամբուն եզրին յաճախորդ առնելը ապօրինի է: Հանրային ինքնաշարժ վարող մը կրնայ յաճախորդ ընդունիլ միայն, երբ իր ծառայած գրասենեակը հեռաձայնով պահանջ ստացած ըլլայ: Հօ Շի Մինի փողոցներուն մէջ սովորական են «Ռընօ 4» տիպի թաքսիները: Սակայն անոնցմէ աւելի հիներն ալ կան, ինչպէս՝ 1950-ական տարիներու «Ռընօ 4 CV» տիպի ինքնաշարժները: Նուազագոյն սակը 2.80 տոլար է, իսկ քշողի մը շաբթական աշխատավարձը՝ 35 տոլար:

● ՄԱՆԻԼԱ (ՓԻԼԻՊՊԵԱՆ ԿՂԶԻՆԵՐ)

Բ. Աշխարհամարտէն ետք ամերիկեան բանակներու կողմէ լքուած «Ճի - Էյ.» ճիփերը այսօր վերածուած են արտառոց ձեւի գունազարդ փոխադրամիջոցներու: Անոնք ճանչցուած են «Ճիփնի» անունով: Զանոնք քշողները երբեմնի գինուորական այս փոխադրակառքերը վերածած են կրօնական կամ պատերազմական խորհրդանիշներով ողողուած «սրբավայրերու»: Անոնք խլացող աղմուկով կ'անցնին Մանիլայի փողոցներէն: Յաճախորդները եւս կը մասնակցին աղմուկին, որովհետեւ «Ճիփնի» մը կանգնեցնելու համար պէտք է զօրաւոր սուլել կամ բռունցքով հարուածել անոր տանիքին...: Շարժավարը երբեք ճամբայ չելլեր, եթէ իր «Ճիփնի»ն չյորդի յաճախորդներով: Արտասովոր երեւոյթ մը չէ «Ճիփնի»ի մէջ թխմուած աւելի քան 30 Փիլիպպեանցիներ տեսնելը, մինչդեռ այս փոխադրամիջոցը ձեւաւորուած է առաւելագոյնը 8 ճամբորդ ընդունելու համար: «Ճիփնի»ի մը պահանջած նուազագոյն սակը 6.5 սենթ է, իսկ շարժավարի մը շաբթական աշխատավարձը՝ 105 տոլար:

● ՆԻՒ - ԵՈՐՔ ՔԱՂԱՔ
(ՄԻԱՑԵԱԼ - ՆԱՀԱՆԳՆԵՐ)

Վուտի Ալլընի ժապաւէններուն մէջ երեւցող դեղին թաքսիները այսօր հազուադէպ կը տեսնուին Նիւ - Եորք քաղաքին մէջ: Անոնք օժտուած էին նոյնիսկ փամփշտարգել ապակիներով, ինչ որ զանոնք բաւական գործնական կը դարձնէր Պրոնքսի կամ Պրուքլինի մաֆիական շրջաններուն մէջ: Այս ինքնաշարժները պատրաստուած էին «Չեքըր» ընկերութեան կողմէ, որ 1982-էն ի վեր դադրեցուցած է անոնց արտադրութիւնը: Այժմ Նիւ - Եորք քաղաքին պողոտաներէն սուրացող հազարաւոր թաքսիները «Շըւրոլէ Քափրիս» տիպի ինքնաշարժներ են: Մինչ Նիւ - Եորքցիներուն մեծամասնութիւնը տակաւին կարօտով կը յիշէ երբեմնի չեքըրները, անդին հանրային փոխադրամիջոցներու սպասարկուները գոհ են, որ ձերբազատած են անկէ, որովհետեւ «Քափրիս»ը աւելի աժան եւ խնայողական է, նաեւ՝ շատ աւելի արագ: «Քափրիս»ով տեղափոխութեան նուազագոյն սակը 3.5 տոլար է, իսկ զայն քշողին շաբթական աշխատավարձը՝ 450 տոլար: «Քափրիս» թաքսիի վարորդ մը ըլլալու համար հարկ է հետեւիլ 20 ժամուան դասընթացքի մը:

Պատրաստեց՝

Լ. ԿԻՒԼՈՅԵԱՆ – ՍՐԱՊԵԱՆ

...եանն, եւրոպական խոշոր զգեստներ ...ացուց հայ երգին: Ոմանք, չարամիտներ կամ տգէտներ, փորձեցին նուազեցնել Կոմիտասի արժանիքը, ըսելով թէ ...եան պարզութեամբ տուած է ան հայ ...րգը, որովհետեւ աւելիին չէր կրնար ...նիլ: Իրականութիւնը ճիշդ հակառակն է. մեծ արուեստագէտները միայն ...ն հասնիլ այդքան պարզ գեղեցկութեան, եւ Կոմիտաս վարդապետը հասած ...:

...ս ալ իմ երաժշտութեանս հայեցի մասը վարդապետին կը պարտիմ, անոր գործերուն ընթերցումով է որ հայ երաժշտութեան յայտնութիւնն ունեցայ: Այդ ...ով է որ Մեծ Վարպետին անուղղակի ...ամտութեամբ, ուղիս գծուեցաւ, դարձայ հայ երաժշտագէտ. կ'ըսեմ հայ եւ ...թէ հայազգի երաժշտագէտ, որովհետեւ ... է տարբերութիւնը այս երկրին մէջ»:

(Ե) ԵՂԵՐԱԿԱՆ ՄԱՀԸ

Իր բուն արտադրելիք եւ հասուն շրջանին, Գուրգէն Ալէմշահ 1947 Դեկտեմբեր 14-ին, Տիթրոյթի մէջ յանկարծամահ եղաւ 40 տարեկան հասակին մէջ: Ան Միացեալ - Նահանգներ գացած էր շարք մը երգահանդէսներ տալու: Հոկտեմբեր 3-ին, Նիւ - Եորքի Թաուն Հօլ-ի մէջ կը վարէ ամերիկեան իր անդրանիկ, բայց ...ա՜ղ վերջին նուագահանդէսը:

Անոր բարի հոգին յմիշտ բաժնուած էր իր գործերէն:

Գուրգէն Ալէմշահի վաղաժամ մահով, հայ երաժշտութիւնը կորսնցուց իր տաղանդաւոր եւ վաւերական զաւակներէն մէկը: Անոր անշնչացած մարմինը այժմ կը հանգչի խաղաղ մէկ անկիւնը Ս. Ղազարի Մխիթարեան հայրերուն վանքը, այն վանքը որ իրեն ազգային ոգի ներշնչած էր:

Իր մահէն ետք, 1948-ին, տպուած եւ անտիպ իր բոլոր ստեղծագործութիւնները, իր ջերմ ցանկութեամբ ուղարկուած են Հայաստան ու յանձնուած՝ Գրականութեան եւ Արուեստի Թանգարանին: (*)

Շատ սիրելի Ալէմշահ, քու սիրուն ստեղծագործութիւններդ քանակով քիչ, սակայն, որակով բարձր, պիտի ապրին, պիտի լեցնեն սրտերը, այնքան ատեն որ Հայ կայ աշխարհիս վրայ:

Փա՛ռք հայ հանճարին, փառք իր անթառամ յիշատակին:

(1) «Կոմիտաս», մատենաշար թիւ 3, 1938 – Հալէպ

Հ ա լ է պ
Մայիս 13, 1996

(*) «ՅԱՌԱՋ». -- Հոս, պարտինք նըշդում մը ընել: Գ. Ալէմշահ, իր վաղահաս մահուան պատճառով իսկ երբեք նման «ջերմ ցանկութիւն» մը չէր արտայայտած: Իր բոլոր արխիւները Երեւանի գրականութեան եւ արուեստի Չարենց թանգարանին յանձնուեցան մեր միջոցներով, 1977 Յունիս 15-ին եւ հոն կը մնան 2398 թիւին տակ արձանագրուած:

ԳԱՂՈՒԹԷ ԳԱՂՈՒԹ

ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ մէջ (Լիբանան) վերջերս բացումը կատարած է Հ.Մ.Ը.Մ.-ի տեղւոյն մասնաճիւղի նորակառոյց ակումբին, որու ներկայ դահլիճ, Ց. գ. շ. եւ յուշագրանը՝ Ցոլակ Թիւթէլեան եւ ողբացեալ Երուանդ Տէմիրճեանի հարազատները, քանի անոր անունը կը կրէ սրահը: Բացումը կատարած է Կարպիս Հարպոյեան:

***

ՊԸՐԼԻՆԿԹԸՆԻ ՄԷՋ (Գանատա) Յուլիս 10-ին իր մահկանացուն կնքած է Արամ Այվազեան, հանրային ծանօթ դէմք մը որ բեղուն գործունէութիւն ունեցած է Հ.Յ.Դ. շարքերուն մէջ: Եղած է նաեւ ատենապետ Հայ Դատի Յանձնախումբին: Ծնած էր 1912-ին եւ մանկութիւնը անցուցած որբանոցներու մէջ: Քարիւղի Շէլ ընկերութեան մէջ իր աշխատանքին բերումով ապրած է Լոնտոն եւ Դամասկոս: 1966-ին հաստատուած է Գանատա: 1992-ին հրատարակած է Հայ Դատի մասին անգլերէն իր գիրքը՝ «Հայաստան, գերեվարուած ցեղասպանութեամբ եւ դաւաճանութեամբ»:

***

ՄՈՆՐԷԱԼի Հայ Կեդրոնին մէջ, Յուլիս 9-ին, Գանատայի Հայ Առեւտրական Խորհուրդը ճաշ մը տուած է ի պատիւ երեսփոխան Սարգիս Ասատուրեանի: Բանախօսելու հրաւիրուած էր Ելմտական նախարար՝ Փօլ Մարթէն: Պատուոյ հիւրերու կարգին եղած են Եգիպտոսի դեսպանը, Սուրիոյ պատուակալ հիւպատոսը եւ Գանատայի միջ - կառավարական հարցերու նախարար Սթեֆան Տիոն:

***

ԹՈՐՈՆԹՈՅԻ Հոլիտէյ Կարտընս դաշտավայրին մէջ, Յուլիս 14-ին, դաշտագնացութիւն մը տեղի ունեցած է Վարդավառի առթիւ, հոծ բազմութեան մը մասնակցութեամբ:

***

ԳԷՄԲՐԻՃԻ (Գանատա) Ս. Նշան Եկեղեցւոյ կազմակերպութեամբ, ճաշ - խրախճանք մը տեղի ունեցած է Յուլիս 13-ին, Հայ Կեդրոնի սրահին մէջ: Գեղարուեստական բաժնին իր մասնակցութիւնը բերած են Երեւանէն ժամանած Կիլիկիա նուագախումբը եւ երգչուհի Գայեանէ Սերոբեան:

ՀԱՅԱՍՏԱՆ

ԿԵԱՆՔԻ ՏԵՒՈՂՈՒԹԻՒՆԸ ՆՈՒԱԶԱԾ

Տնտեսական նախարարութեան տուեալներուն համաձայն Հայաստանի մէջ նուազած է կեանքի տեւողութեան միջինը: 1995-ին այդ միջինը եղած է 70 տարի, կիներունը՝ 72, իսկ այրերունը՝ 68: Մինչդեռ 1988-ին այդ թիւերը 75 - 76 եւ 70 էին, իսկ միջինը՝ 73: Վերջին երկու տարիներուն նուազած է մահերու համեմատութիւնը, բաղդատած՝ 1989 - 93 շրջանին: Մահերու գլխաւոր պատճառն են արեան շրջանառութեան հիւանդութիւնները, քաղցկեղը: Կարեւոր տոկոս կը կազմեն նաեւ թունաւորումները:

ՉՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ՁԵՌԱԳԻՐՆԵՐԸ ՉԵՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՒԻՐ

«ՅԱՌԱՋ»Ի ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

ԳՈԼՈՄԲ. - Տէր եւ Տիկին Գեղամ Թորոսեան 500 Ֆր.։

***

ՄԱՍԻ. - Տիկին Նելլի Պարեան 400 Ֆր.։

***

ՆԻՕՅԻ. - Տիկին Սիլվա Գույումճեան 200 Ֆր.։

(Շար. Ա. էջէն)

Ժիրարին, որ 100 մեթր ցանկարշաւի (haie) մէջ խլեց, բաւական անակնկալօրէն, պրոնզէ մետալը։

«ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Յուլիս 31 / Օգոստոս 1)

ԵՐԵՒԱՆ – ՖՐԱՆՔՖՈՒՐԹ – ԵՐԵՒԱՆ ՆՈՐ ԳԻԾԻ ԱՌԱՋԻՆ ԹՌԻՉՔԸ

Յուլիս 31-ին «Հայկական Աւիաուղիներու» առաջին թռիչքը կատարուած է Երեւան – Ֆրանքֆուրթ – Երեւան կանոնաւոր նոր գիծին վրայ։ Փարիզէն, Ամսթերտամէն ետք ան եւրոպական երրորդ քաղաքն է որ ուղղակի թռիչքներով կը կապուի Հայաստանի։

***

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ՅԻՍՆԱՄԵԱԿԸ

Բռնադաղթածներու մասին Խորհ. Միութեան Գերագոյն Խորհուրդին կողմէ ընդունուած օրէնքին հռչակումէն ետք 1946-ին հայրենադարձներու առաջին կարաւանները կը հասնէին Հայաստան։

Յուլիս 30-ին հայրենադարձ վեթերանները հաւաքուելով Արտասահմանի հետ Մշակութային Կապերու և Համագործակցութեան Միութեան սրահին մէջ հանդիսաւոր կերպով նշած են հայրենադարձութեան կէս դարը։ Ելոյթներ ունեցած են պատմաբաններ, Միութեան աշխատակիցներ, առաջին հայրենադարձներ։

DATE A RETENIR

NAVASART à Marseille

Les 4 Sections de la Croix Bleue des Arméniens de France - région Marseille, demandent à toutes les associations de prendre en considération la date du

SAMEDI 19 OCTOBRE en soirée.

Plus amples renseignements ultérieurement.

Ի ՅԻՇԱՏԱԿ

ՓՈՆ ՏԸ ՇԵՐԻԻ-էն, Տիկին Գրիգորեան 100 Ֆր. կը նուիրէ «Յառաջ»ին իր ամուսնոյն՝ Միսաք Գրիգորեանի մահուան 19-րդ տարելիցին ի յիշատակ։

SABERATOURS SEVAN VOYAGES SABERATOURS SEVAN VOYAGES SABERATOURS SEVAN VOYAGES

PARIS·EREVAN·PARIS
VOLS HEBDOMADAIRES

- ASSISTANCE A L'AÉROPORT
- ORGANISATION D'ACCUEIL ET DE TRANSFERT
- RÉSERVATION D'HÔTEL
- LOCATION DE VOITURE AVEC CHAUFFEUR
- EXCURSIONS GUIDÉES
- VOYAGES ORGANISÉS EN GROUPE

PRIX
PARIS-EREVAN-PARIS A PARTIR DE 3700F
RENSEIGNEMENTS ET RÉSERVATIONS SUR SIMPLE APPEL

PARIS-EREVAN
VOL CARGO MENSUEL

SABERATOURS
31, RUE D'ARGENTEUIL - 75001 PARIS
TEL 42 61 51 13 - FAX 42 61 94 53

SEVAN VOYAGES
48, COURS DE LA LIBERTÉ - 69003 LYON
TEL 78 60 13 66 - FAX 78 60 92 26

EREVAN
37, RUE HANRABEDOUTIAN - EREVAN 10
TEL 52 85 48 - FAX 52 54 48

EN COLLABORATION AVEC
ARMENIAN AIRLINES

N'oubliez pas votre 15 AOUT

à Saint - Raphaël
au HOME ARMENIEN
avec
Marten YORGANTZ

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆ

ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

Մելգոնեան Կրթական Հաստատութեան 1996 - 1997 ուսումնական տարեշրջանի մուտքի քննութիւնները տեղի կ'ունենան Երկուշաբթի եւ Երեքշաբթի, Օգոստոս 12-ին եւ 13-ին, ժամը 10-ին, Հ. Բ. Ը. Միութեան Փարիզի գրասենեակին մէջ

11, square Alboni, 75016 Paris

Հեռաձայն. -
45 - 20 - 03 - 18

Քննութեանց արդիւնքները կը հաղորդուին մինչեւ Օգոստոս 30։

ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ
Մ. Կ. ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ

UGAB . . . UGAB . . . UGAB . . . UGAB

«UGAB - 90»

A l'occasion de la célébration de son 90ème anniversaire, l'UGAB organise un grand

Gala de Bienfaisance

au profit des *TABLES DE L'UGAB*, en Arménie

le Vendredi 18 Octobre à 20 heures

au Pavillon Dauphine - 75016 Paris

P.A.F. : 750 Frs

Rens. : 45 20 03 18 / 42 27 12 26.

UGAB . . . UGAB . . . UGAB . . . UGAB

ՀԵՌԱՏԵՍԻԼ

FRANCE 2

ՀԱՅԿԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ

Կիրակի, Օգոստոս 4, ժամը 9.30-ին՝
Հայաստան
Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Սփիւռք - Կոմիտաս երգչախումբի վարչութիւնը կը խնդրէ նկատի առնել իր յառաջիկայ համերգը որ տեղի պիտի ունենայ Շաբաթ, Նոյեմբեր 30-ին, Փարիզ, Opéra Comique — Salle Favart-ի մէջ։

Յայտագիրը յատկացուած է Կոմիտասի եւ Ափրիկեանի գործերուն։

MAISON DE LA CULTURE ARMENIENNE D'ALFORTVILLE
ԱԼՖՈՐՎԻԼԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՏՈՒՆ

1976-1996

M.C.A. 20ème

En Octobre prochain, la M.C.A. d'Alfortville fêtera le 20ème anniversaire de l'INAUGURATION DE SA STRUCTURE.

Plusieurs manifestations sont prévues du Vendredi 11 au Samedi 19 Octobre.

Merci de retenir ces dates.

9, rue de Madrid, 94140 ALFORTVILLE
Tél. : 43 76 55 89 Fax : 43 78 66 64

Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 PARIS
SIRET: 51027317 A R. C. Paris
Commission paritaire: N° 55935

ԿԱՊՈՅՏ ԽԱՉ

ՄԵԾ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ ԵՒ ԽԱՂՈՂՕՐՀՆԷՔ

Կիրակի, Օգոստոս 11-ին, ամբողջ օրը, Պէլֆոնթէնի (Ժիւրա) կայանը։

Առաւօտեան, Խաղողօրհնէքի արարողութիւնը կը կատարէ՝
ՄԿՐՏԻՉ ՔԱՀԱՆԱՅ ՊԱԼԱՊԱՆԵԱՆ

Պիւփէ - Գեղարուեստական յայտագիր կայանի երախաներուն կողմէ

- Հաճելի անակնկալներ

ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

«ՅԱՌԱՋ» ՄԱՏԵՆԱՇԱՐ

ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ	
ՕՐԵՐ ԵՒ ԺԱՄԵՐ	100 Ֆր.
ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐ	
ՆԱՀԱՆՋԸ ԱՌԱՆՑ ԵՐԳԻ	80 Ֆր.
ԲԱՑ ՏՈՄԱՐԸ	75 Ֆր.
ԿՐԱԿԸ ԿՈՂՔԻՍ	75 Ֆր.
ՍԻՐՏ ՍՐՏԻ	150 Ֆր.
ՀՐԱՆՏ ՍԱՄՈՒԷԼ	
ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԵՐ	80 Ֆր.
ԽԱՉԻԿ ԹԷՕԼԷՕԼԵԱՆ	
ՍՓԻՒՌՔԻ ՄԷՋ	75 Ֆր.
ԵՒ	
«ՅԱՌԱՋ - 50» (Ծաղկաքաղ 50-ամեայ հաւաքածոյէն)	120 Ֆր.

Դիմել «ՅԱՌԱՋ»ի։

Թղթատարի ծախք՝ 25 Ֆր., հատը գլուխ։

ՇԱԲԱԹ - ԿԻՐԱԿԻ
ՕԳՈՍՏՈՍ 3-4
SAMEDI - DIMANCHE
3-4 AOUT
1996

LE NUMERO : 5,00 F.

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1925-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE-FONDE EN 1925
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 47. 70. 86. 60 — TELEX : HARATCH 280 868 F
— FAX : 48. 00. 06. 70 —
C.C.P. PARIS 15069-82 E

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 1.100 Ֆ. – Վեցամսեայ : 560 Ֆ.
Արտասահման : Տար. 1.400 Ֆ. (ամէնօրեայ առաքում)
1.250 Ֆ. (շաբաթական առաքում) – Հատը : 5,00 Ֆ.

72ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 18.911 Fondateur SCHAVARCH MISSAKIAN 72e ANNEE — N° 18.911

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ԱԼԺԷ

ՕՌԱՆԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ ՍՊԱՆՆՈՒԱԾ

ՄԱՀԱՓՈՐՁԷՆ ԱՌԱՋ Հ. ՏԸ ՇԱՐԷԹԻ ՀԵՏ ԷՐ

10-րդ Ֆրանսացին է եւ 19-րդ կրօնաւորը որ կը սպաննուի Ալժէրի մէջ: Օգոստոս 1ի երեկոյեան ժամը 22.30-ին (Փարիզի ժամով՝ 23.30) է որ օդը կ'եղէր Օռանի Արքեպիսկոպոս՝ Փիէր Գլավըրիի կառքը, երբ կը հասնէր արքեպիսկոպոսարանի իր բնակարանին դրան առջեւ: Պայթումը այնքան զօրաւոր եղած է որ կառքը կտոր կտոր եղած էր անմիջապէս եւ տեղն ու տեղը մեռած էին Արքեպիսկոպոսը եւ վարորդը:

Նոյնօրէն առաջ, Արքեպիսկոպոսը, Ֆրանսայի Արտաքին Նախարար՝ Հ. տը Շարէթի հետ ներկայ եղած էր ոգեկոչման արարողութեան մը ի յիշատակ սպաննուած եօթը Ֆրանսացի վանականներուն: 58 տարեկան, գերպ. Փիէր Գլավըրի ծնած էր Ալժէրիա, կապուած այդ հողին եւ ծանօթ էր որպէս մէկը որ չէր ծածկեր բաները: Խստօրէն դատապարտած էր բիրտ ուժը, անհանդուրժողութիւնը, մոլեռանդ իսլամապաշտութիւնը:

Այս արարքով, Ժի - Ի - Ա-ն (Իսլամական Զինեալ Խումբ) ասպարէզ կը կարդայ ոչ միայն երկրին իշխանութեան, այլեւ եւ մանաւանդ Ֆրանսայի: Արդարեւ, իսլամականները խստօրէն կը դատապարտէին Հ. տը Շարէթի այցելութիւնը (երեք տարի է նման այցելութիւն չէր եղած), հակառակ անոր որ Ֆրանսա կը պնդէ թէ այցելութիւնը քաղաքական բնոյթ չունէր, այլ՝ թեքնիք: Թէեւ, կ'ըսուէր նաեւ թէ ան կը ձգտէր նոր մեկնակէտ մը տալու երկու երկիրներու յարաբերութիւններուն:

Գաղտնիք չէ որ տարիներէ ի վեր, ձախ թէ աջ կառավարութիւններ չկրցան դիւանագիտական քաղաքականութիւն մը կիրարկել Ալժէրիոյ հետ: Ֆրանսա իր տուած օժանդակութիւնը կ'արդարացնէ այն պատճառաբանութեամբ որ պէտք է օգնել զօրավար Զերուալի որպէսզի վերահաստատէ ժողովրդավարութիւնը երկրին մէջ: Շիրաք չէր գիր մըն ալ գրկած էր Զերուալին Հ. տը Շարէթի միջոցաւ, մոռացութեան տալով անոր առնուազն վիրաւորական ընթացքը Նիւ-Եորքի Ազգաժողովին ատեն, երբ կը մերժէր Շիրաքի հետ նախատեսուած տեսակցութիւնը:

Ամէն պարագայի մէջ, այս նոր արարքը կը փաստէ որ երկրին իշխանութիւնը չի հակակշռեր կացութիւնը, հակառակ իր յայտարարութեանց: Միւս կողմէ, կը կարծուի որ զինուորականները պիտի օգտագործեն այս նոր արարքը պահանջելու համար օտար երկիրներէն, ի մասնաւորի Ֆրանսայէ, որ նիւթական լայն օժանդակութիւն ապահովեն Ալժէրիոյ...:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԹՐՔԱԿԱՆ ՔԻՒՐՏԻՍՏԱՆԻ ՄԷՋ 17 քիւրտեր եւս սպաննուած են զինուորական գործողութիւններու ընթացքին, հարաւային Անատոլուի տարբեր շրջաններ:

«ՖԱՆԱՌ ԱՆՇԷՆԷ»Ի հիմնադրութենէն ի վեր, առաջին անգամ ըլլալով խուզարկութիւն մը կատարուած է թերթին խմբագրատունը: Դատաւորը այս խուզարկութեան ձեռնարկած է լրագրող Անրէ Ռուժոյի պատճառաւ որ քննութիւն մը կը տանի երեսփոխանուհի Եան Փիայի սպանութեան շուրջ եւ բաւական յայտնութիւններու արժանացած է: Լրագրողը պարտաւորուած է, իր գրասենեակին խուզարկութենէն ետք, դատաւորը առաջնորդել նաեւ իր բնակարանը:

ԳԱՐՓԱՆԹՐԱՅԻ (Հարաւային Ֆրանսա) հրէական գերեզմանատան շիրիմներու սրբապղծութեան (1990, Մայիս) հարցը նոր յայտնութիւններու առիթ տուաւ: Արդարեւ, վեց տարի առաջ վերագրուած էր Ժ. Մ. Լը Փէնի Ազգ. Ճակատի ցեղապաշտ տարրերու, բայց, անցեալ տարի կը պարզուէր որ սխալ է եւ տեղական ընոյթ ունի պատահածը: Այս ալ պատճառ էր որ Ժ. Մ. Լը Փէն հրապարակաւ ներողութիւն պահանջէ իր շարժումին դէմ եղած մեղադրանքին համար: Յանկարծ, նոր դէպք մը պատճառ եղաւ որ ամէն ինչ փոխուի եւ պարզուի որ ծայրայեղ աջ սքինհէտներու գործն ըլլալը հաստատուի: Այս պատահեցաւ անոնցմէ մէկուն, 26-ամեայ Եանիք Կառնիէի խոստովանութեան հետեւանքով: Ան, ինքնաբերաբար, յայտարարած է որ 1990 Մայիս 10-ին մասնակցած է այն գործողութեան որու ընթացքին 34 շիրիմներ քարուքանդ եղած էին: Վեց երիտասարդներ մասնակցած են արարքին. անոնք կը պատկանին Ֆրանսական եւ եւրոպական ազգայնապաշտ կուսակցութեան (Նոր - Նացիական Նկատուած): Մէկը արկածով մեռած է անցեալ տարի, 4 ուրիշներ մեղադրանքի սակ առնուած են: Վեց տարուան յապաղումով երեւան ելած այս իրողութիւնը լայն տեղ գրաւէ բերանացի թէ գրաւոր մամուլին մէջ, էջեր կը լեցնէ «Մոնտէն» «Ֆիկառօ»:

Ն. ԿՈՎԱԼԷՒ նախկին ՔԱ - կէ - Պէ-ի, այժմ՝ էՖ - էՍ - Պէ-ի պետը յայտարարած է որ չէչէն զինուորները Դուդայեւի նմանակներ կը պատրաստեն: Ծանօթ է որ ան, պաշտօնապէս, սպաննուած էր ռուսական ռումբի մը արձակումէն, բայց ոչ ոք դիակը տեսած էր եւ վերջերս ալ լուր

(Շար.ը կարդալ Դ. էջ)

(Շար.ը կարդալ Դ. էջ)

ԴՐԱՄԱՇՈՐԹՈՒԹԻՒՆ ՄԸ

URSSAF - GAURSSAFIAN ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ ՄԸ

Երեւան հանուած է բաւական «հնարամիտ» առաւ-փախաութիւն մը որու զոհ են Իլ-տը-Ֆրանս շրջանի հարիւրաւոր գործատէրեր որոնք իրենց սակերը կը վճարեն ընկերային ապահովութեան Սընտուկին:

Արդարեւ, առաւ-փախաւներ կեղծարարութիւններ գործած են չէքերուն վըրայ, URSSAF-ը վերածելով՝ GAURSSAFIAN-ի, աւելցնելով Fondation pour un hôpital en Arménie.

Չէքերը կը փոխանցուէին Պրաթիսլաւայի (Սլովաքիա) դրամատան մը:

Զոհերը պարտին կրկին կատարել իրենց վճարումները...: Նման խարդախութիւններէ խուսափելու համար, կ'ըսուի թէ չէքերուն վրայ պէտք չէ միայն URSSAF գրել այլ՝ Mr. L'Agent Comptable de l'URSSAF.

ՕԼԻՄՊԻԱԿԱՆ 100

ԱԹԼԷԹԻԶՄ

ՓԵՐԷՔ ԵՒ ՃՈՆՍԸՆ ԿԸ ԳԵՐԻՇԽԵՆ

Օգոստոս 1-ին, Մարի-Ժոզէ Փերէք եւ Մայքըլ Ճոնսըն անգամ մը եւս ապացուցանեցին իրենց անսակարկելի արժէքը: Արդարեւ, նախ ֆրանսացի մարզիկը, քառորդ ժամ վերջ ալ Ամերիկացին բաւական դժուար իրագործելի յաջողութեամբ իրենց դրոշմը դրին խաղերուն վրայ: Առաջինը աղջիկներու, երկրորդը այրերու 400 մեթր վազքարշաւը շահելէ քանի մը օր ետք այս անգամ ալ Հինգշաբթի Օգոստոս 1-ին 200 մեթր վազքարշաւի մէջ իրենց եաին ձգեցին բոլոր մրցակիցները: Մինչ Փերէք ողիմպիական անցեալի մէջ միայն մէկ անգամ՝ ամերիկացի Վալերի Պրիսքօ-Հուքսի կողմէ իրագործուած (200 եւ 400 մեթր վազքարշաւներու մետալներ) նուաճումը կը կըրկնէր, միւս կողմէ Ճոնսըն 200 մեթրի մէջ կը կոտրէր համաշխարհային մրցանիշը 19"32-ով:

Գալով հայկական նոր մետալի մը աւընչուող յոյսերուն, պէտք է ըսել թէ այլեւս մեծ սպասումներ ունենալ կարելի չէ, քանի որ գրեթէ հայ մարզիկ չմնաց չարունակուող մարզաձեւերուն մէջ:

Սակայն ինչ կը վերաբերի քուլիսներուն, կան նորութիւններ: Այսպէս շշուկներ կան, թէ հայկական ողիմպիական պատուիրակութեան անդամ երկու մարզիկներ՝ մարմնամարզիկ Նորայր Սարգսեան եւ ծանրաբարձ Եղուարդ Դարբինեան ԱՄՆ մնալու փափաք յայտնած են: Սակայն Հայաստանի ողիմպիական պատուիրակութեան ղեկավարները դեռ չէին հաստատած լուրը:

ՄԱՄՈՒԼ

«L'EXPRESS» (1-7 Août)

«...J'AI EU UN COUP D'AMOUR POUR DINARD»

Ամրան առթիւ, «Էքսփրէս» շաբաթաթերթը էջեր կը նուիրէ Ֆրանսայի տեսարժան վայրերուն: Այս շաբթուան թիւը լայն տեղ կուտայ Ատլանտեան ափին, Տինար, Պէլ - Իլ, Իլ տը Ռէ եւայլն: Տինարի առընչութեամբ կարճ յայտարարութիւն մը հրապարակած է Գառզուէ որ կ'ըսէ. - «Ձմեռը հարաւ կ'երթամ, Վանսի տունս: Բայց, ամառը, շատ մարդ կայ եւ շատ տաք է: Սիրահարեցայ Տինարի, զոր չէի ճանչնար եւ որ հրաշալի է: Այդ կտրատուած ծովափը նկարագիր ունի: Առանձնաշնորհեալ վայր մըն է: Հրապուրուած եմ, այն աստիճանի որ կը խորհիմ Վանսի հիմնարկս Տինար փոխադրել: Թանգարանի ծրագիր մը ունինք քաղաքապետարանի հետ»:

ՕՐՈՒԱՆ ՀԱՐՑԵՐ

ՉԷՉԷՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐՈՒ ՍՊԱՌՆԱԼԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Մարտի սկիզբին լրատուները կը հաղորդէին թէ մահացած է Տաղստանի մէջ Յունուար 9-ին գործուած ահաբեկչական արարքին հեղինակը չէչէն պարագլուխ Սալման Ռատուեւ: Շուրջ հինգ ամիս ետք ան կը յայտնուէր Չէչէնիոյ մէջ, գըրեթէ անճանաչելի դէմքով մը:

Կը պատմէ թէ ծանրօրէն վիրաւորուելէն ետք բազմաթիւ իսլամական երկիրներ դարմանումի առաջարկներ ըրած են իրեն, բայց ինք նախընտրած է եւրոպացի բժիշկներ որովհետեւ անոնք լաւագոյններն են: Բելառուսիոյ ճամբով, առանց ինքնութեան թուղթի, զինք փոխադրած են Գերմանիա: Գերմանացի վիրաբոյժներ առաջարկած են շարժանկարի դերասանի մը դէմքը տալ իրեն, մերժած է: Պէտք եղած է վերստին ձեւաւորել քիթը, կզակը: Կորսնցուցած է մէկ աչքը: Փակելէ ետք բժշկական դարմանումներու էջը, մեկնած է կարգ մը իսլամական երկիրներ վերահաստատելու համար իր նախկին յարաբերութիւնները ու նորեր փորձելու: Կ'ըսէ թէ հանդիպած է նաեւ Ճ. Դուդայեւի:

Ինչ կը վերաբերի այս վերջինին կենդանի ըլլալուն, Ռատուեւ կ'երդնու որեւէ մահմետականի համար ամէնէն նուիրական բանին՝ Գուրանի վրայ թէ ան կ'ապրի: Ենթարկուած մահափորձէն ետք շատ ծանր վիճակի մը մէջ հիւանդանոց փոխադրուած է: Յոյս կայ որ վերագտնէ բոլոր իր կարողութիւնները: Ինք անկէ հրահանգ ստացած է պատերազմը շարունակելու մինչեւ յաղթանակ. եթէ պէտք ըլլայ պիտի կռուին 50 տարի, մինչեւ որ ձեռք ձգեն իրենց անկախութիւնը:

Խօսելով Ռուսաստանի հետ գոյացած համաձայնութիւններուն մասին, չէչէն պարագլուխը բաւական արհամարհանք կ'արտայայտէ: Մեծ բան չեն ներկայացներ անոնք. սխալ է վստահիլ Ռուսերու հետ ստորագրուած համաձայնագրերու: Անմիջապէս որ վերադարձած է Չէչէնիա, ժողով մը հրաւիրած է բոլոր ենթասպաները ու որոշած են բոլոր զօրաբաժինները միացնելով սրբազան պատերազմի միակ բանակ մը ձեւացնել. ան պիտի ըլլայ Ճ. Դուդայեւի բանակը: Նոյն ժողովին ռուս ամէնէն բարձրաստիճան ղեկավարներն ալ մահուան դատապարտուած են, որոշումին անմիջական գործադրութեան վճիռով:

Ներկայիս հրահանգուած է որ զինեալ խումբերը Չէչէնիոյ եւ Ռուսաստանի մէջ լայնածաւալ գործողութիւններու ձեռնարկեն: Իր նպատակներէն մէկն ալ Մոսկուան փճացնել դուրս վերածել է: Ռատուեւ ակնարկելով Մոսկուայի հանրակառքերուն մէջ Յուլիսին պայթած ռումբերուն, կ'ըսէ թէ միայն սկիզբ մը պէտք է նկատել զանոնք եւ թէ անօգուտ է այդ արարքներուն մէջ անդիտանալ Չէչէններու պատասխանատուութիւնը:

Իրեն հետ «Կոմսոմոլսկայա Պրաւդա»յի աշխատակիցին կատարած հարցազրոյցը աւարտէն առաջ կը յանգի ամէնէն փափուկ կէտին. «պատերազմը շարունակելու միջոցները ունի՞ք» հարցումին չէչէն զինուորականը դրական կը պատասխանէ. ունին, նաեւ շատով կարեւոր մարդկային նեցուկ պիտի ստանան: Իրենց հետ կըռուելու պիտի գան 800-ի չափ երիտասարդներ որոնք Պոսնիոյ մահմետականներուն կողքին կռուած են: Կուգան այլ երկիրներէ ալ: Վարձկաններ չեն, դրամին համար չեն կռուիր: Ընդհակառակն. իրենց հետ գումարներ կը բերեն իսլամական տարբեր կազմակերպութիւններէ: Զէնք ճարելու դժուարութիւն ալ պիտի չունենան: Իսլամ եղբայրները վերջերս իրենց հող - օդ տասը շարժական հրթիռ նուիրած են: Տէր են նաեւ քիմիական զէնքերու:

ԿԱՐԴԻՆԱԼ ԱՂԱՃԱՆԵԱՆԻ ՆՈՒԻՐԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Հ. ՆԵՐՍԷՍ ԱՐՔ. ՏԷՐ - ՆԵՐՍԷՍԵԱՆ
Առաջնորդ Կաթողիկէ Հայոց
Արեւելեան Եւրոպայի

Պատմութեան հազարամեայ հոլովոյթի հորիզոնն ի վեր, գիսաւոր աստղի նման պայծառափայլ ճաճանչեց, քաներորդ դարու եկեղեցա - կրօնական երկնակամարին, Աւետարանի լոյս պատգամներն ու սրբակրօն հոգեւորականի օծեալ շնորհները սփռելով, Կովկասի սիգապանծ լեռներէն մինչեւ Լիբանան ու Միջին - Արեւելքի այլեւայլ երկիրներ, մինչեւ չորս ծագերն երկրագունդիս:

Ու անցաւ ան այս երկրէն, հայ ոգիի հարազատ կայծերով արծարծուն, մեր լուսերամ Հայրապետներու անեղծ հաւատքին շողերով բոցավառ, որպէս քրիստոնեայ նոր Վահագն, ու մանաւանդ -- թող թոյլ տրուի ինծ յայտարարել -- մեր Շնորհալի Սուրբ Ներսէս Կաթողիկոսի հեզահոգի կերպարին հոգեմայլ տեսիլքովն յաւերժօրէն խանդավառ:

Այդպիսին էր նորին Վսեմաշուք Տէրութիւն՝ Կարդինալ Գրիգոր - Պետրոս ԺԵ. Կաթողիկոս - Պատրիարքի պատկառելի անձնաւորութիւնը, որու ծննդեան 100-ամեակի այս խնկելի յիշատակին, ահա՛ կուգանք մեր խորին տուրքը մատուցանել՝ խոնարհ ակնածանքով: 100-ամեակ, որուն կուգայ գումարել 25-րդ տարելիցը անոր բարի մահուան:

Պատկառելի անձնաւորութիւն՝ արդարեւ, որուն հարազատ արձանը քանդակելու համար, ցանկալի էր Միքէլանճելոյի հրաշագործ մուրճը ոգեկոչել այստեղ, կամ Ռաֆաէլլոյի մոգական վրձինն ունենալ՝ անոր չքնաղ պատկերը նկարելու, եւ կամ ... ինչո՞ւ ոչ, Նեմեսիսի երկրպագու՝ մեր նահատակ բանաստեղծ Դանիէլ Վարուժանի գրիչը եղգնեայ, արժանաւոր դրուատիքն հիւսելու՝ աշխարհահռչակ այս եկեղեցականին:

Իր առաքինազարդ, եկեղեցաշէն ու ազգանուէր հոգին, ինչպէս բիւրեղային շողիւնը պրիսմակին, ամէն անկիւնէ կը պսպղայ՝ թաւշային զմայլելի փայլով ու բազմակի երանգներով պազպաջուն, այնպէս որ անհնար է ինծ պատշաճօրէն նըկատել, նկարել ու բնութագրել անոր գեղեցկութիւնն սքանչելի:

***

Խորհո՜ւրդ խորին, Աղաճանեան Կարդինալի մանկութիւնը, Կարնեցի գերդաստանէ, ծիլ տուած՝ մեր հինաւուրց Ջաւախքի չէն հովիտին մէջ, ուր հազիւ տասնըմէկ գարուններու վարդերն ըմբոշխնած, ինքն ալ ծաղիկ աննման կամ թըռչուն քաղցրաձայն, 1906 թուականի աշնան, հայրենական բոյնէն կը գաղթէր հեռու աշխարհ, ընտրութեամբ՝ Կովկասի Կաթողիկէ Հայոց օրուան եկեղեցական Կառավարիչին, որ մարգարէաշունչ ոգիով, մեծ յոյսեր կը տածէր՝ գերազանցօրէն ուշիմ, կրակ ու բոց եւ բարեպաշտ այս մանկան ապագային վրայ: Երեք գաւակներու ամենափոքրիկն էր Ղազարոսը, մատղաշ տարիքէն հայրազուրկ, որ ահա՛ կ'երթար ուսանելու Արեւմուտքի հռչակաւոր մայրաքաղաքը: Հայոց գիրերու գիւտի ժամանակներէն ի վեր, Հայաստանէն ուսումնատենչ պատանիներ կ'առաքուէին Արեւմուտք (Աթէնք, Բիւզանդիոն, Աղեքսանդրիա), յառաջադէմ գիտութեանց լոյսով արբենալու եւ անով ողողելու մեր աշխարհը: Մեր փոքրիկ Ախալցխացին ալ, անոնց նման պիտի զարգանար Հռոմի մէջ, բազում գիտելիքներ պիտի ամբարէր, լեզուներ պիտի սորվէր, պիտի սերտէր փիլիսոփայութիւն, աստուածաբանութիւն, իրաւաբանութիւն. վարդապետական տիտղոսներ ու ոսկի մետալներ պիտի շահէր, ինչպէս երբեմն՝ Սահակ - Մեսրոպի դափնեկիր աշակերտները, Աթէնքի մէջ: Լսած եմ, Ղազարոսի աշակերտակից Մխիթարեան Հայրերէ, որ անիկա ամէն քննութեան՝ բարձրագոյն նիշեր կը խլէր. գերազանցիկ լիարժէք:

Կը սահէին այսպէս տասնըմէկ գարուններ եւս, եւ ահա՛ 1917-ի ձմեռը, երիտասարդ Աղաճանեան, կուսակրօն քահանայութեան շնորհներով օծուն, սուրբ խորան կը բարձրանար, Աւետարանի մանանեխի փոքրիկ հատիկին նման ուռճացած, պատրաստ՝ իր լայն ոստերը տարածելու մինչեւ Հայրենիք:

1919-ին՝ զինք կը գտնենք Թիֆլիս, որպէս հոգեւոր հովիւ՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ: Կ'այցելէ Շիրակ. կը ծրագէ հիմնել Աղեքսանդրապոլի մէջ «Ալիշան» անունով դպրոց մը: Հազիւ պատեհութիւնը կ'ունենայ վայելելու հայրենիքի եւ ընտանիքի քաղցր համբոյրը եւ ազգականներու մտերմութիւնը, ահա՛ յանկարծ վրայ կը հասնին կարմիր յեղափոխութեան դաժան օրերը:

Աղաճանեան Վարդապետ, Մեծաւորներու խոհեմ կարգադրութեամբ, կը վերադառնայ Հռոմ, 1921-ի վերջերը, մինչ իր հոգեկից բազում քահանայ եղբայրներ, աւա՜ղ, բանտերու եւ անվերադարձ աքսորի դառն տառապանքները պիտի կրէին:

Հռոմի մէջ, Աղաճանեան Վարդապետի գործունէութեան դաշտը՝ հովուականէն կը փոխուի ուսումնականի եւ կրթականի. նախ՝ տասնըմէկ տարի՝ որպէս փոխ - տեսուչ, ապա հինգ տարի՝ որպէս Տեսուչ - Մեծաւոր Ժառանգաւորաց Հայ Վարժարանին, ուր փութաջան հոգածութեամբ կը նուիրուի ընծայացուներու հոգեւոր եւ ուսումնական պատրաստութեան: Այդ ժամանակաշրջանին այսինքն՝ 1921 -- 1937, կը դասաւանդէ Ուրբանեան համալսարանին մէջ, նախ՝ մի քանի տարի՝ փիլիսոփայական ամպիոնէն տիեզերաբանութիւն (cosmologie), յետոյ՝ աստուածաբանութիւն, ընդհանրապէս՝ Սուրբ Խորհուրդներու, եւ առանձնապէս՝ Ս. Հաղորդութեան Խորհուրդի մասին (De Sacramentis in genere et de Eucharistia). կ'ըսուի թէ այս վերջին նիւթի մասին՝ առձեռն դասագիրք ալ պատրաստած ըլլայ, լատիներէն, ցարդ՝ անտիպ: Աղաճանեան Վարդապետ մտերիմ յարաբերութիւն է մշակած նաեւ Ֆրանսացի հռչակաւոր աստուածաբան՝ Կարդինալ Պիյիոյի հետ: Լսած եմ Մխիթարեան Հայրերէ, թէ՝ այդ տարիներուն ան խորապէս ուսումնասիրած է հայ հոգեւոր գրականութեան հարուստ գանձարանը, զոր օգտագործած է յաճախ իր դասախօսութեանց ընթացքին. դասախօսութիւններ՝ որոնք - կը պատմեն շատեր իր ունկնդիրներէն - աստուածախօսական վերացումի զմայլելի պահեր եղած են:

Աստուածաբան Աղաճանեանի բազմահարիւր օտարազգի աշակերտները, ամէն գոյնէ ու երկրամասէ, ոմանք՝ ապագայ հովուապետ - եպիսկոպոսներ, երախտագիտական զգացումներով առլցուն՝ իրենց պաշտելի ուսուցչին հանդէպ, եւ - ի՜նչ զարմանք - նաեւ հայ ազգին հանդէպ գերազանց սիրով խանդավառ, հրճուանքով բացած են դռները՝ Ծիրանեփառ մեր Կարդինալին յետագայ ուղեւորութեանց առջեւ, Ամերիկայէն Աւստրալիա, Ափրիկեան երկիրներէն Հնդկաստան ու մինչեւ Փիլիպեան կղզիներ:

1929-ին կը հրատարակէ ընդարձակ կենսագրականը Երանելի Տէր Կոմիտաս Քահանայի, ծանօթացնելով եւրոպացի ընթերցողներուն՝ 17 - 18-րդ դարերու մեր եկեղեցապատմական իրադարձութիւնները:

Քառասնամեայ Աղաճանեան Վարդապետ կ'ընդունի եպիսկոպոսական Սուրբ Կարգը: Օծման սուրբ միւռոնի բոյրը ճակատին, իրեն կը յանձնուի Զմմառեան Միաբանութեան Կանոնագրի վերաքննութեան եւ յարակից հարցերու ուսումնասիրութեան թղթածրարը, զոր ձեռնհասօրէն քննարկելու համար՝ կ'ուղեւորի Պէյրութ, ուր մեծ յաջողութիւն կ'արձանագրէ, շահելով ամէնուն համակրանքը, խանդավառ ապագայի լաւատես ակընկալութիւններ ներշնչելով ամէնուր: Երկու տարի ետք, 1937-ի Նոյեմբեր 30-ին, կը բարձրանայ Պատրիարքական Աթոռ, յորջորջուելով Գրիգոր -- Պետրոս ԺԵ. Կաթողիկոս -- Պատրիարք: Լիովին գիտակից ստանձնած ծանր պատասխանատուութեան, այդ օրուան նշանաբան կը դարձնէ սա խոնարհ խօսքերը. «Փառքն ու պատիւը՝ Աստուծոյ, ուրախութիւնն ու մխիթարանքը՝ Ազգիս, իսկ Խաչն ու միայն Խաչը՝ իմ անձիս»:

Եւ ահա առաջին խաչն ու անդրանիկ մտահոգութիւնը նորընտիր Հայրապետին: Այդ օրերուն՝ Ֆրանսայի խնամակալ հովանաւորութիւնը պիտի դադրէր Սուրիայէն ու Լիբանանէն, որուն հետեւանքով՝ աղխարբեր վտանգներ կը ըսպառնային Սանճաքի Հայութեան, Թուրքիոյ կցուելու պարագային: Բայց Կաթողիկոս Աղաճանեանի հայանպաստ անդուլ դիմումները, Վատիկանեան իշխանութեանց ու Ֆրանսական կառավարութեան մօտ, յաջողութեամբ պսակուեցան եւ հազարաւոր հայորդիներ փրկուեցան՝ ապաստան գտնելով Լիբանան. իսկ հայաբնակ հինաւուրց Քեսապ գիւղաքաղաքը, նշխարիկ մը հայկական Կիլիկիոյ փառապանծ օրերէն, պիտի գոյատեւէր ու ծաղկէր Սուրիոյ ապահով սահմաններուն մէջ:

Տարիներ ետք, 1955-ին, Սուրիոյ Հանրապետութեան նախագահը, երկրի գերագոյն շքանշանով պիտի զարդարէր Կարդինալ Աղաճանեանի կուրծքը, յայտարարելով որ «Իր նման անձնաւորութիւնները Աստուծոյ շնորհքն ու օրհնութիւնը կ'իջեցնեն՝ ուր որ երթան»:

Վրայ կը հասնին Եւրոպական Երկրորդ պատերազմի արիւնալի օրերը: Սակայն Աղաճանեան Պատրիարք՝ իր ժողովուրդի բազում հոգերով մտայոյզ, հովուական այցելութիւններ կը կատարէ, վազելով Արեւելքէն Արեւմուտք: Հալէպ, Դամասկոս, Տէր - Զօր, Երուսաղէմ, Յորդանան, Եգիպտոս, Իրաք ... հանգրուաններն իր ուղեւորութեանց: Յանկարծ զինք կը գտնենք Ֆրանսա, Փարիզէն Մարսէյլ, Լիոն, Վալանս: Ու դարձեալ Պէյրութ, ուր Նահատակներու Յուշարձան կը նուիրագործէ՝ Պատրիարքարանի բակին մէջ, կ'օրհնէ հիմնաքարը Այնճարի Հայ Կաթողիկէ Վարժարանին. անխոնջ՝ կը բաշխէ իր հայրական խօսքն ու քաջալերիչ օրհնութիւնը, 1915-ի աղէտէն ճողոպրած եւ մոխիրներէն վերածնած հայորդիներուն:

Եւ ահա՛ կը թեւակոխենք 1946 տարին: Հայ ժողովուրդի Տարեգրութեանց համար՝ պատմական թուական: Պիոս ԺԲ. Պապը կ'անուանէ 32 նոր կարդինալներ. ծիրանաւորներու շարքին գլուխն է Հայ Կաթողիկէ Պատրիարքը, որ յիշատակելի պատարագ կը մատուցանէ Վատիկանի Սիքստեան մատրան մէջ, հայկական ծէսին բովանդակ շքեղութեամբ, նոյն Սրբազան Պապի եւ բոլոր Կարդինալներու ներկայութեան: Այդ առիթով, կը յիշեմ, Սուրբ Ղազարէն բերուած էին ամէնէն թանկարժէք հանդերձներն ու սպասները, ամերիկեան տիրոջ ուժերու սպայակոյտին եւ օրուան Արքահօր անձնական հսկողութեան ներքեւ: Խմբերգին մէջ դեր ունէր նաեւ նուաստս, որ այդ օրերուն՝ սարկաւագ կը ձեռնադրուէր նորընտիր Կարդինալէն:

Տօնական օրեր էին, յատկապէս՝ Իտալիոյ բովանդակ Հայութեան համար, որոնց ընթացքին, Կարդինալ Աղաճանեան, հանդիսաւոր նիստի մը պահուն, հռչակուեցաւ, Մխիթարեան Հայրերու կողմէ, Ս. Ղազարու Հայկական Ակադեմիայի Պատուոյ Նախագահ:

Բայց ինք պատիւներ փնտռող, ծիրանի շղարշին հաճոյքը վայելող անձնաւորութիւնը չէր:

Եթէ դարձնենք անոր կենսագրութեան յաջորդ էջերը, զինք կը գտնենք յաճախ՝ պատմական ուղեւորութեանց ճանապարհին, Իտալիայէն Յունաստան, Եգիպտոս ու Թուրքիա, Պոմպէյէն Պոսթըն, Փարիզէն Սիտնէյ, Կալկաթայէն Վենետիկ, Լուրտէն Լոնտոն. բայց եւ սակայն կանգ առնելով Պէյրութ, իր Աթոռի գործերուն եւ իր հովուապետական բարձր պաշտօնի պարտականութեանց հետամուտ: Կը սիրէր իր պաշտելի գրասեղանին առջեւ, որ յաճախ աղօթարանն ալ էր իր հոգիին, գիշերներ լուսցնել՝ խմբագրելով բազմաթիւ Շրջաբերական Նամակներ, Հովուական Թուղթեր, Սուրբ Հայրապետներու ծաղկոցէն քաղելով հոգեշունչ ընտիր գաղափարներ, ի շինութիւն իր Հօտին: Միաժամանակ կը փութար օծելու Պատրիարքական Նորակառոյց Մայր Տաճարը եւ Զահլէի Հայ Կաթողիկէ Եկեղեցին:

Բայց անգամ մը եւս թող դառնան էջերն իր օրագրութեան. հանդիպում՝ Գերմանիոյ վարչապետ Գոնրատ Ատէնաուէրի, զօրավար տը Կոլի, Պելժիոյ Թագաւոր Պոտուէն Ա.-ի, ինչպէս նաեւ Արեւելքի այլ Գահակալներու կամ Հանրապետութեանց մեծանուն նախագահներու հետ:

Ֆրանսա կատարած այցելութիւններէն մէկուն առիթով, զարմանքով ու հիացումով, մեծանուն գրականագէտ ու ազգային գործիչ՝ Արշակ Չօպանեանը, որ աւելի քան քառասուն տարիներ գործած է Փարիզ, Ֆրանսացիներուն լայնօրէն ծանօթացնելով հայ մշակոյթն ու պատմութիւնը, յայտարարած է. -- «Աղաճանեան Պատրիարքի սոսկ անցքը Ֆրանսայէն՝ բաւեց սքանչելի կերպով իրագործելու այն, ինչ որ ես իմ երկար տարիներու կատարած գրական գործունէութեամբս չէի յաջողած ընել, ի նպաստ հայ անունին եւ մշակոյթին»: Մէկ շաբաթ բաւարար եղած էր՝ Ֆրանսայի բովանդակ մամուլն ոտքի հանելու՝ ի յարգանս հայ ժողովուրդին եւ անոր արժանընտիր ներկայացուցչին:

Ու դարձեալ թուականներ եւ պատմական իրողութիւններ.

1955 թուականը կ'անուանուի նախագահ՝ Արեւելեան Եկեղեցիներու Նոր Կանոնագրքի պատրաստութեան կարդինալական Յանձնախումբին:

1958 թուականին կը մասնակցի Պապի դռնփակ ընտրական նիստերուն: Շատ կը խօսուի հաւանական իր ընտրութեան մասին, նոյնիսկ միջազգային մամուլին մէջ: Բայց այդ օրուան իր օրագրութեան էջը սպիտակ է թողուած, Պապ չէ ընտրուած, բայց Պապի նման աշխատած է ի պայծառութիւն Սուրբ Եկեղեցւոյ: Կը պատմուի՝ թէ այս դէպքերէն յիսուն տարի առաջ, Պիոս Ժ. Պապը, ունկնդրութեան մը պահուն, աջը դնելով ժպտադէմ փոքրիկ Ղազարոսի գլուխին, ըսած ըլլայ. «Արժանի ըլլաս Եպիսկոպոսութեան ալ, Պատրիարքութեան ալ»: Աւելին խօսք չկայ:

1960 թուականին կ'անուանուի նախագահ Հաւատոյ Տարածման Ժողովին (աւելի ճիշդ՝ Խորհրդաժողովին), զոր արդէն կը վարէր, երկու տարիէ ի վեր, փոխանորդի տիտղոսով:

1963 թուականին կ'անուանուի Վատիկանեան Բ. Տիեզերական Ժողովի չորս ատենավարներէն մէկը:

1967 թուականին հանդիսաւոր կերպով կը տօնուի իր քահանայական օծման յիսնամեակը, մինչ յաջողուած էր գըրեթէ անծանօթ անցընել քսանհինգամեակը (1942-ին), ինչպէս իր եպիսկոպոսութեանն ալ (1960-ին): Այս առիթով լոյս կը տեսնէ «Ձայն Հովուական» 513 էջնոց հատոր մը, տպուած Վենետիկ - Ս. Ղազար, որ կը պարունակէ Կարդինալին Հովուական Թուղթերը, Բանախօսութիւնները, Ճառերը, Քարոզները: Միաժամանակ, դարձեալ երկար ուղեւորութիւններ, Պօղոս Զ. Սրբազան Պապի կողքին, կամ որպէս Քահանայապետական նուիրակ, մասնակցելու կրօնական մեծ համաժողովներու, բացառիկ տօնակատարութեանց, Մատակասկարէն, Ուկանտայէն՝ Ծայրագոյն Արեւելք: Այսպիսի պարագաներուն, ան հսկայ աշխատանք տարած է, Վատիկանեան Բ. մեծ Ժողովի ոգիով կազմակերպելու եւ ազգային բնիկ նկարագրով ու ծէսով ամրապնդելու, մանաւանդ Երրորդ աշխարհամասի իր կիրներուն մէջ, նորածին եկեղեցիները: Առաջին սեւամորթ եպիսկոպոսներն իր ձեռքէն ընդունած են Սուրբ Օծումը: Իր ուղեւորութիւններու ժամանակ, ամէնուրեք կը փնտռէր Հայու բեկորներ. եւ անակնկալ հանդիպումներու բազմաթիւ ուրախառիթ դրուագներ է պատմած՝ իր մտերիմներուն, ամէն վերադարձի, որպէս թանկագին յուշեր՝ աշխարհացրիւ Հայութեան: Հակառակ այս տիեզերածաւալ գործունէութեան, հեւ ի հեւ տեղափոխութեանց ու բազմազբաղ աշխատանքին, Կարդինալ Աղաճանեան, իր կեանքի յետին տասը տարիներուն՝ կը տառապէր անողոք հիւանդութենէ մը, որ պիտի խլէր նոյնիսկ աչքերուն տեսութիւնը, վերջին ամիսներուն, հակառակ բժշկական դարմանումի ուժեղ խնամքներուն:

Բայց անմոռանալի դէպք մը եկաւ, հայրենիքի վարդերուն նման՝ ծաղկելու, ծերունազարդ Կարդինալի հոգիին մէջ: Շնորհաբեր հանդիպումն էր այդ, Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ, որ Հռոմ կը ժամանէր, որպէս հիւր՝ Պօղոս Զ. Պապին (1970, Մայիս): Հայրենիքի սրբութիւններուն կարօտով, տաժանելի սիրոյ ողջոյնն ու համբոյրը՝ որպէս զօրաւոր մխիթարանքի, մինչ հոգեկան հըրճուանքի արցունքներ շողային, այդ օրը ծիրանեփառ Հայրապետի աչքերուն մէջ: Արշալոյսն էր բացուէր՝ աստուածաշնորհ վերջալոյսի ծիրանի շողերով:

Այդ օրերէն ոչ բազում ժամանակ ետք, Կարդինալ Աղաճանեան անվերադարձ պիտի հեռանար մեր հորիզոնէն, համբերութեամբ տոկալով առաջացած հիւանդութեան դառն ցաւերուն: Սուրբ Եկեղեցւոյ խորհուրդներով զօրացած, կ'օրհնէր իր անարին շուրջ հաւաքուած սիրելիները, եւ հարազատ հոգեւորականի սրբաշունչ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

ՍԱՄՓՈՒՆ, ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ, ՎԱՆ...

ԱՆԲԱՐԵԱՑԱԿԱՄՈՒԹԻՒՆ ԱՄԷՆ ԻՆՉԻ ՆԿԱՏՄԱՄԲ, ՈՐ ՀԱՅԿԱԿԱՆ Է

1996 թ. Յունիսի 5-ին մենք Ստամպուլ ժամանեցինք «Հաբիթաթ – 2» խորհրդաժողովին մասնակցելու համար: Այն կազմակերպել էր ՄԱԿ-ը ամենալայն առումով քաղաքի հիմնահարցերի ուսումնասիրման համար: Խորհրդաժողովը տեւեց Յունիսի 3 – 14-ը:

Ամուսինս՝ Սթիվէն Անլեանը եւ ես ժամանել էինք որպէս ամերիկահպատակներ: Առաջին տպաւորութիւնը վատ չէր: Մեզ սպասարկում էին համազգեստաւոր աղջիկներ, որոնք ուշադիր էին եւ կատարում էին մեր բոլոր ցանկութիւնները: Փաստաթղթերն ստուգելով մեզ յատուկ ատրպուսներով տարան հիւրանոց:

Յաջորդ օրը ձեռնամուխ եղանք խորհրդաժողովի նիւթերի ուսումնասիրման: Ուշադրութիւնս անմիջապէս գրաւեց «փոքրամասնութիւնների վիճակը Թուրքիայում» սեկցիայի անուանումը: Դրա համար նախատեսուած լսարանը լեփ-լեցուն էր:

Առաջինը Թուրքերէնով ելոյթ ունեցաւ մի Թուրք գիտնական: Չնայած համաժողովի կազմակերպման տեխնիկական բարձր մակարդակին, անգլերէն թարգմանութիւնը չափազանց վատ էր կազմակերպուած: 20 րոպէանոց զեկուցումը թարգմանիչը ամփոփեց հինգ րոպէում: Ըստ որում, նրա անգլերէնը բանի պէտք չէր: Ներկայացուած թարգմանութիւնից կարելի էր հասկանալ, որ 1914 – 15 թթ. Թուրքիայում այնուամենայնիւ տեղի է ունեցել Հայ բնակչութեան աքսոր: «Ցեղասպանութիւն» բառը չհնչեց:

Խօսուեց այն մասին, որ Թուրքերի ազգագրական գիտակցութեան մէջ տեղ է ունենում Հայի եւ Քրտի, որպէս Թուրք ժողովրդի թշնամիների կերպարների նոյնացում եւ չովինիստական տրամադրութիւնների, ազգային փոքրամասնութիւնների հանդէպ ագրեսիւութեան աճ: Հայը ընկալւում է որպէս թշնամի, որը կարող է ամէն պահին փորձել հասցնել թիկունքից: Աւելի ուշ թշնամի Հայի կերպարին ինքնաբերաբար փոխարինեց Քրտի կերպարը:

Այդ ելոյթը ընդհատուեց մի պարոնի միջամտութեամբ, որը «տիրեց» խօսափողին եւ առաջարկեց քննարկումը շարունակել Թուրքերէն, ապա ամփոփումը տալ անգլերէն: Այդ առաջարկութիւնը ներկաների շատերին, այդ թւում ինձ, դուր չեկաւ, եւ մենք բուռն կերպով բողոքեցինք, արժանանալով Թուրքամէտ ունկնդիրների զայրացկոտ հայեացքներին: Աւելի ուշ ես պարզեցի, որ դա պատմութեան Թուրք փրոֆեսոր էր: Նա Թուրքիայում փոքրամասնութիւնների վիճակը համարեց անկարեւոր, բերեց Թուրքական քաղաքչութեան նախընտրած օրինակներից մէկը. Փինանսների փոխ-նախարարը ծագումով Հայ է, բայց դա բողոքներ չի յարուցում:

Դահլիճից Թուրքերէն նրան մի քանի հարց տուեցին: Եւ նա հարկ չհամարեց դրանք թարգմանել անգլերէն: Զգացւում էր, որ հարցերը նրան դուր չեկան եւ նա պատասխանը կարճ կապեց:

Այնուհետեւ ձայնը տրուեց Թուրքիայում հրէական փոքրամասնութեան ներկայացուցչին: Նրա քննադատական լուրջ ելոյթի ընթացքում Թուրք փրոֆեսորը յանկարծ անհետացաւ, դրանով իսկ ցուցադրելով իր «յարգանքը» ելոյթ ունեցողների եւ լսարանի հանդէպ: Հրեան Թուրքիային մեղադրեց ռասիզմի, մարդու իրաւունքների խախտման, ժողովրդավարութեան բացակայութեան մէջ:

Ելոյթ ունեցաւ Ստամպուլի «Ակօս» հայկական թերթի ներկայացուցիչը:

Թերթի 10 էջերից միայն երկուսն են հայերէն: «Ակօս»ի թղթակիցը մասնաւորապէս ասաց. «Թուրքիայում ապրող Հայերի վիճակը կարելի է բնութագրել փարանոիա բառով: Կանգնած ես անդունդի եզրին, իսկ նրանք քեզ հրում են այնտեղ: Գոյատեւելու համար պէտք է դիմադրես»: Նրա խօսքերով՝ ժողովրդավարութիւնը Թուրքիայում ընկալւում է որպէս մեծամասնութեան արտօնութիւն, որի հանդէպ յատկապէս ագրեսիւ եւ անզիջում է բիւրոկրատական համակարգը: Զանգուածային լրատուութեան միջոցները հակահայկական եւ հակայունական քարոզչութեամբ են լցուած: Դրանց հաղորդումների համաձայն պոռնիկների շարքերը համալրւում են յոյն կանանց հաշուին, իսկ գողերն ու գրպանահատները հայկական ԱՍԱԼԱ-ի անդամներն են: Հանրային հիմնարկներում Աթաթիւրքի դիմանկար կախելը պարտադիր է: Ով չկախի, անմիջապէս յայտարարւում է Թուրք ժողովրդի թշնամին: Թուրք պաշտօնական անձանցից մէկը ասել է. «Խորհրդարանը մաքուր է, եթէ այնտեղ չկան ազգային փոքրամասնութիւնների ներկայացուցիչներ»: Ինչպէս ասաց ելոյթ ունեցողը, վերջերս Թուրքիայի Մշակոյթի նախարարութիւնը յայտարարել է, թէ հայկական դպրոցներում հայերէնը կը դասաւանդուի որպէս օտար լեզու, իսկ միւս առարկաները կը դասաւանդուին Թուրքերէն: Հայ համայնքը բողոքի ելոյթներ է կազմակերպել, բայց արդիւնքի չի հասել: Փակւում են հայկական հոգեւոր դպրոցները, հոգեւորականների շարքերը չեն համալրւում: Ինձ յաջողուեց պարզել, որ այժմ Ստամպուլում մօտ 60 հազար Հայ կայ:

Նման տխուր վիճակում է ապրում Թուրքիայի Հայ բնակչութիւնը:

Ինչպէս իմացանք աւելի ուշ, քիւրտ բնակչութիւնը Թուրքիայում արձանագրուած չէ որպէս փոքրամասնութիւն. անձնագրերում նրանք նշւում են որպէս Թուրքեր:

Նիստերից ազատ ժամերին մենք քաղաքում փնտռում էինք Հայերի կեանքի հետքեր եւ յաճախ գտնում դրանք: Ստամպուլում մենք գտանք Սուրբ Յարութիւն հայկական եկեղեցին: Այն բառացիօրէն եօթը փակի յետեւում էր: Առանց ծանօթ Հայի օգնութեան մենք երբեք չէինք գտնի այն: Եկեղեցին գտնւում է բարձր պատի եւ ամուր դարպասի յետեւում, որը ամրացուած է եւս մէկ մետաղեայ դռնով: Այդ խոչընդոտները յաղթահարելուց յետոյ մենք յայտնուեցինք եկեղեցու բակում, որտեղ ապրում է վերջերս Սասունից փախած մի հայ ընտանիք: Եկեղեցին գործում է, այն մաքուր է, ամէն կիրակի պատարագ է մատուցւում:

Բայց վերադառնանք խորհրդաժողով: Ցուցասրահներից մէկում մենք յայտնաբերեցինք մի հետաքրքիր ցուցադրանք: Տարբեր երկրներ խորհրդաժողովին առընչուող նիւթեր էին ներկայացրել: Հայաստանը ներկայացուած չէր, մինչդեռ Ադրբեջանը ցուցադրել էր տարբեր բնագաւառներում, այդ թւում քաղաքական կեանքում իր կուտակած փորձը: Աչքի էին զարնում Ղարաբաղի «գրաւումը» եւ Հայաստանի «ագրեսիան» արտացոլող լուսանկարները, ցուցադրուած էր Ադրբեջանի քարտէզը, որտեղ նշուած էին Հայերի գրաւած տարածքները: Այցելուներին առաջարկւում էին «Զիյյտաբարուած պատերազմ» եւ «Խոջալու. վերջին օր» գրքոյկները: Բայց ոչ մի խօսք չկար Սումգայիթի, Բաքուի յայտնի ոճիրների, խորհրդային զօրքերի եւ Ադրբեջանցիների համատեղ անցկացրած «Օղակ» գործողութեան մասին: Բացի դրանից, կար յատուկ կրպակ, որտեղ վաճառւում էին անմէն տեսակ հակահայկական կեղծագրեր:

Մէկ շաբաթ Ստամպուլում անցկացնելով, մենք չարժուեցինք արեւելք: Մեր նպատակն էր այցելել Տիգրանակերտ, որն ամերիկահայ ամուսնուս նախնիների (տատի եւ պապի) ծննդավայրն էր: Ապա մենք մտադիր էինք գնալ Վան:

Տիգրանակերտում վայրէջք կատարեցինք երեկոյեան: Դա դաւառական փոքր մահմետական քաղաք է: Փողոցներում կանայք չէին երեւում, իսկ տղամարդիկ կրպակների մուտքերի մօտ էին: Ատրճանակներին նստած նրանք հետաքրքրութեամբ նայում էին անցորդներին: Դժուար է պատկերացնել, որ մի ժամանակ Տիգրանակերտը եղել է առաւելապէս հայաբնակ քաղաք:

Յաջորդ առաւօտեան մենք ուղեկցորդ գտանք եւ սկսեցինք ուսումնասիրել մեր նախնիների քաղաքը: Ուղեկցորդը քիւրտ էր: Իմանալով, որ մենք Հայեր ենք, խոստովանեց, որ իր երակներում նաեւ հայկական արիւն է հոսում (տատը եւ նախատատը): Նա մեզ ցոյց տուեց Ս. Կիրակոս հայկական եկեղեցին: Դա հրակայ չէնք էր, բազմաթիւ կամարներով: Եկեղեցու տանիքը լրիւ քանդուած էր, պահպանուել էին միայն խոտածածկ հեծանները եւ պատերը: Գորշ կապոյտ բազալտից շարուած պատերը եւ կլոր անցքերի շրջակայ սալիտակ նախշազարդերը թեթեւութեան եւ լոյսի տպաւորութիւն էին ստեղծում: Աւերուած վիճակում անգամ զգացւում էին երբեմնի վեհութիւնը, փառաբանուած հայ ճարտարապետների մտածողութեան մասշտաբայնութիւնը:

Եկեղեցու բակում գտնուող կցակառոյցներից մէկում մեզ ցոյց տուեցին այն յարկաբաժինը, որտեղ սովորաբար պատարագ է մատուցում Հայ հոգեւորականը: Բայց նա այնտեղ չէր, եւ դուռը փակ էր:

ՆՈՒՆԷ ԱՆԼԵԱՆ

«Ազգ», Յուլիս 23

(Մնացեալը յաջորդիւ)

...մըն ու օրինակը Թողլով կտակ՝ գալիք սերունդներուն, աղօթքի մրմունջներով աւանդէր հոգին, 1971-ի Մայիսի 16-ին: Իր դողդոջուն շրթներէն կը լսուէին՝ կարծես Շնորհալիի բառերը. «Լո՛յս ճշմարիտ, Քրիստոս, արժանաւորեա՛ զհոգի իմ ուրախութեամբ տեսանել զլոյս փառաց քոց՝ ի կոչման աւուրն»:

«Յիշատակն արդարոյն՝ օրհնութեամբ եղիցի»:

Համեստօրէն փորձեցինք, բայց յաջողեցա՞նք արդեօք, բանալ քօղը ծիրանի, որ կը ծածկէր Կարդինալ Աղաճանեանի անձը խորհուրդը: Կը խորհիմ, թէ յաւէտ ծածկուած պիտի մնան բազում խորհուրդներ, զոր պատմագէտներ ջանացած են յայտնաբերել, մանաւանդ այս վերջին ամիսներուն: Ցայտնաբերել երջանկայիշատակ Կարդինալ Աղաճանեանի մէջ՝ մարդը, մտաւորականը, հոգեւորականը, հայրենասէրն ու կրօնասէրը: Դժուարին ձեռնարկ:

Մարդը -- Նկարագրով՝ խոնարհ, հեզաբարոյ, համեստ, երկիւղած, ժպտադէմ, գործունեայ, աշխատասէր, խոհեմ:

Մտաւորականը -- խորաթափանց, ընթերցասէր, յստակատես, քննարկու, բազմահմուտ, լեզուագէտ:

Հոգեւորականը -- Նարեկացիի նման՝ Քրիստոսի յիշատակով սատուածախոհ, Աստուածամօր սիրով խանդակաթ: Շնորհալիի նման՝ աղօթանուէր, եկեղեցասէր, սրբակրօն:

Հայրենասէրը -- Հայրենիքի կատարեալ ազատութեան եւ անկախութեան տենչով յաւէտ յուսալիր. Հայրենի հողին կարօտով պանդուխտ սրտամորմոք:

Կրօնասէրը -- Վարդանանց օրինակով պատրաստ՝ իր կեանքը զոհելու, «վասն Կրօնից եւ Հայրենեաց»:

Ապրիլեան սգատօնի մը առիթով - կը յիշեմ - 1958-ին, Վենետիկի մէջ, Կարդինալ Աղաճանեան այսպէս կ՚եզրափակէր իր ճառը, ակնարկելով իր բոսորագոյն ծիրանի հանդերձին, որով նոյն առաւօտ մասնակցեր էր քաղաքին Մայր Տաճարին մէջ տեղի ունեցող սրբազան արարողութեան մը. «Ես պէտք էի ներկայանալ սուգի՛ տարազով. բայց պարագաները այնպէս բերին՝ որ հանդէս գամ արիւնաներկ: Նշան մըն է ասիկա, որ՝ եթէ երբէք դաժան թշնամիներ յարձակին դարձեալ մեր հաւատքի ու կրօնի նուիրական գաղափարներուն դէմ, որոնք հայութեան փառքն ու պարծանքն են, մենք պատրաստ ենք դարձեալ արիւնոտուելու, բայց ոչ՝ դաւանանելու»:

Վարդանանց դաւանանքն էր, որ յաւերժօրէն կը խանդավառէր Կարդինալ Աղաճանեանի հոգին:

Գիւմրի, Յուլիս 14

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ՀԱՅԿ. ԿԵԱՆՔԸ ԳԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՄԷՋ

«ԳՐԱԿԱՆ ԱՆԿԻՒՆ»Ի ՁԵՌՆԱՐԿԸ

Կլէնտէյլի հանրային գրադարանի սրահին մէջ, Յուլիս 12-ին, տեղի ունեցած է «Գրական Անկիւն»ի կազմակերպած հերթական հանդիպումը, որու ընթացքին քննարկուած են արձակագիր Խորէն Արամունիի եւ բանաստեղծուհի Արմինէ Քիւրքճեանի գործերը: Տարի մը առաջ Գուրգէն Արզումանեանի եւ Էլիզաբէթ Գրիգորեանի կողմէ հիմնուած «Գրական Անկիւն» խումբը կը հրատարակէ «Բաց Նամակ» անունով պարբերական մը, ուր լոյս կը տեսնեն պատմուածքներ, փորձագրութիւններ, բանաստեղծութիւններ, թարգմանական գործեր:

***

Հ. Մ. Ը. Մ. «ԱՐԱՐԱՏ»Ի ՆՈՐ ԿԵԴՐՈՆԸ

Կլէնտէյլի Հ. Մ. Ը. Մ. «Արարատ» մասնաճիւղի նոր կեդրոնին մէջ, Յուլիս 22-ին, տեղի ունեցած է մամուլի ասուլիս մը, որու ընթացքին Հ. Մ. Ը. Մ.-ի Շրջանային Վարչութեան ատենապետ Րաֆֆի Սարգիսեան, Արարատ մասնաճիւղի ատենապետ Վիգէն Դաւթեան եւ տնտեսական յանձնախումբի ատենապետ Արմոնդ Գորգորեան ներկայացուցած են նոր կեդրոնին ծրագիրը: 1.900.000 տոլար արժողութեամբ նոր կեդրոնը ունի 65 հազար քառակուսի ոտք հողային տարածութիւն. բաղկացած է 20 հազար քառակուսի ոտք ունեցող սրահէ մը եւ 15 դրասենեակներէ:

***

ՍԱՄՈՒԷԼ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ ԳՐՔԻՆ ԳԻՆԵՁՕՆԸ

Հոլիվուտի «Կարապետեան» սրահին մէջ, Յուլիս 18-ին, տեղի ունեցած է Սամուէլ Մկրտիչեանի «Օտար ճամբաներու վրայ» գրքին գինեձօնը: Ձեռնարկին բացումը կատարած է Յովհաննէս Մանուկեան: Պետրոս Պէրպէրեան ներկայացուցած է հեղինակին կենսագրականը: Ողջոյնի խօսք արտասանած են յանուն Տարօն Տուրուբերանի Հայրենակցական Միութեան Մարի Օհաննէսեան, յանուն Համազգայինի Կարօ Ծոպոյեան եւ յանուն Հ. Մ. Ը. Մ.-ի Յարութիւն Բարսեղեան: Գիրքը ներկայացուցած է Կարօ Պետրոսեան: Հուսկ՝ շնորհակալութեան խօսքով հանդէս եկած է հեղինակը:

***

ՀԱՆԴԻՊՈՒՄ Զ. ԽԱԼԱՓԵԱՆԻ ԵՒ Յ. ՊԱԼԵԱՆԻ ՀԵՏ

Ֆրէզնոյի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ սրահին մէջ, Յուլիս 14-ին, տեղի ունեցած է հանդիպում մը գրող Զօրայր Խալափեանի (Հայաստանէն) եւ լրագրող Յակոբ Պալեանի (Փարիզէն) հետ: Յ. Պալեան ներկայացուցած է գրողը, իսկ Զ. Խալափեան խօսած է իր «Վասիլ Մեծ, Հայ Կայսր Բիւզանդիայի կամ Կճուճների Թագաւորը» գործին մասին:

***

ՄԱՏԹԷՈՍ ԶԱՐԻՖԵԱՆԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԵՐԵԿՈՅԹ

Փասատինայի Հայ Կեդրոնին մէջ, Յունիս 30-ին, տեղի ունեցած է երեկոյթ մը, նուիրուած Մատթէոս Զարիֆեանին, կազմակերպութեամբ «Յակոբ Օշական» գրական խմբակին: Երեկոյթի ընթացքին Յարութիւն Գաբրիէլեան արտասանած է Մատթէոս Զարիֆեանի բանաստեղծութիւններէն նմոյշներ. յայտագրին մասնակցած են սրնգահար Սալբի Քերքոնեան եւ դաշնակահարուհի Սօսի Քերքոնեան:

ԼՐԱՏՈՒ

(Շար. Ա. էջէն)

կը տարածուէր թէ ողջ է եւ Գերմանիա ապաստանած է ։

ՄԵԾՆ - ԲՐԻՏԱՆԻՈՅ կառավարութիւնը յայտարարեց որ խենթ կովերու հիւանդութիւնը կը փոխանցուի հորթին, ինչ որ բաւական մտահոգիչ յայտնութիւն մըն է ։ Ֆրանսայի Գիւղատնտեսութեան նախարարը կ՚ըսէ թէ այս յայտնութիւնը բան չի փոխեր ։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ հանրածանօթ օրաթերթին՝ «Պրաւդա»յի (Ճշմարտութիւն) գոյութիւնը վտանգուած է ։ Արդէն լոյս չի տեսներ Յուլիս 25-էն ի վեր եւ ներքին տագնապն ալ ելք չէ գտած ։ Կնճիռը դէմ առ դէմ հանած է «խմբագրութեան աշխատաւորներու հաւաքականը» եւ տէրերը՝ 2 միլիոնատէր Յոյներ Իանիքոս եղբայրները ։ Ասոնք թերթը գնած էին 1992-ին ։ Տպաքանակը որ 11 միլիոն էր Խորհրդային Միութեան օրերուն, 218 հազարի իջած էր 1995-ին և վերջերս ալ՝ 170 հազարի ։ Ի տես այս կացութեան, Իանիքոս եղբայրները կը խորհին որ օրաթերթը պէտք է արդիականանայ եւ խմբագրութիւնն ալ՝ նորոգուի ։ Յաւելուածին խմբագրապետը՝ Կվաշինի համար «աշխատաւորներու հաւաքականը» անցեալի մէջ կ՚ապրի ։ Տէրերուն եւ խմբագրապետին միջեւ երկխօսութիւնը չէ խզուած, բայց լաւ ընթացքի մէջ չէ ։ Իանիքոսները կ՚ուզեն որ Իլիյին քաշուի, այս վերջինն ալ յոյս ունի որ ելք մը կը գտնուի, որովհետեւ, կ՚ըսէ. - «Երբեք պիտի չընդունինք որ ազատական - քաղքենի օրաթերթի մը վերածուինք եւ դաւաճանենք մեր բաժանորդներուն յոյսերուն» ։ Լրագրողներուն համաձայն, Յոյները կը պահանջեն որ իրենց հրամանները գործադրուին առանց այլեւայլի եւ շատ կը խառնուին խմբագրական հարցերուն ։ «Վերջնագիրները, կ՚ըսէ Իլիյին, անընդունելի են» ։ Թերթին հիները ահազանգ կը հնչեցնեն՝ «Ճշմարտութիւնը (Պրաւդա) պիտի մեռնի» ։

ԳՐԷԹԷՅԼԻ Թղթատարական կեդրոնին մէջ թակարդ ծրար մը պայթած է Օգոստոս 1-ին, ժամը 21-ի շուրջ ։ Զոհ չկայ ։ Կը կարծուի որ ծրարը մէկուն հասցէագրուած էր եւ արկածի հետեւանքով է որ կեդրոնը պայթած է ։

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆ

ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

Մելգոնեան Կրթական Հաստատութեան 1996 - 1997 ուսումնական տարեշրջանի մուտքի քննութիւնները տեղի կ՚ունենան Երկուշաբթի եւ Երեքշաբթի, Օգոստոս 12-ին եւ 13-ին, ժամը 10-ին, Հ. Բ. Ը. Միութեան Փարիզի գրասենեակին մէջ

11, square Alboni, 75016 Paris

Հեռաձայն. -
45 - 20 - 03 - 18

Քննութեանց արդիւնքները կը հաղորդուին մինչեւ Օգոստոս 30 ։

ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ
Մ. Կ. ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ

DATE A RETENIR

NAVASART à Marseille

Les 4 Sections de la Croix Bleue des Arméniens de France - région Marseille, demandent à toutes les associations de prendre en considération la date du

SAMEDI 19 OCTOBRE en soirée.

Plus amples renseignements ultérieurement.

N'oubliez pas votre 15 AOUT

à Saint - Raphaël

au HOME ARMENIEN

avec

Marten YORGANTZ

---

8 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1996

ՄԻՒՌՈՆՕՐՀՆԷՔ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԷՋ

Յայտնի է մեր ժողովուրդին, թէ յառաջիկայ 8 Սեպտեմբերին (1996) Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ՝ Նորին Սուրբ Օծութիւն ՏԷՐ ՏԷՐ ԳԱՐԵԳԻՆ Ա. Ծայրագոյն Պատրիարք – Կաթողիկոս Ամենայն Հայոց իր անդրանիկ Միւռոնօրհնութիւնը պիտի կատարէ ։

«Միւռոնի Օրհնութիւնը ողջ Հայ Ժողովուրդին համար հոգեկից առիթ է եւ միջոց, մեր ժողովուրդի Քրիստոնէական և Ազգային կեանքի վերանորոգութեան եւ զարգացման համար» ։

Առ այդ, սրտագին կոչ կ՚ընենք Ֆրանսայի եւ ամբողջ Արեւմտեան Եւրոպայի հոգեւոր մեր զաւակներուն, խուռներամ բազմութեամբ Ուխտի երթալ Սուրբ Էջմիածին ու Շնորհօք վերազարդարուիլ՝ Սուրբ Միւռոնի բացառիկ այս Օրհնութեան ներկայ գտնուելով ։

Այս նպատակաւ, Սեպտեմբեր 5-էն 12-ին՝ մէկ շաբաթուան՝ դէպի Հայաստան Ուխտագնացութիւն կազմակերպուած է ։

SABERATOURS-ը մեր կողմէ լիազօրուած է ապահովել ճամբորդական բոլոր գործառնութիւններն – վիզա, օդանաւ, պանդոկ, պտոյտներ, ապահովագրութիւն եւ սնունդ ։

Անհրաժեշտ է անյապաղ փութով, մինչեւ 31 Յուլիս ներառեալ, արձանագրուիլ յիշեալ Ուխտագնացութեան, կանխելու համար տեղ ապահովելու յետագայի խճողումը ։

ԴԻՒԱՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ
ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ

Արձանագրուելու համար դիմել. --
SABERATOURS
19, rue St-Roch, 75001 PARIS
Tél. : 42. 96. 10. 10 — Fax : 42. 96. 18. 77.

ԿԱՊՈՅՏ ԽԱՉ

ՄԵԾ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ ԵՒ ԽԱՂՈՂՕՐՀՆԷՔ

Կիրակի, Օգոստոս 11-ին, ամբողջ օրը, Պէլփոնթէնի (Ժիւրա) կայանը ։

Առաւօտեան, Խաղողօրհնէքի արարողութիւնը կը կատարէ՝
ՄԿՐՏԻՉ ՔԱՀԱՆԱՅ ՊԱԼԱՊԱՆԵԱՆ

Պիւփէ – Գեղարուեստական յայտագիր կայանի երախաներուն կողմէ

– Հաճելի անակնկալներ

1954 — 1996

PÈLERINAGE ANNUEL 42ème Anniversaire ST-GRÉGOIRE à TALLARD

1954 — 1996

Une messe sera célébrée selon le rite de l'Eglise Apostolique Arménienne

ՏԱՐԵԿԱՆ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ԹԱԼԱՐԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ

Dimanche 15 Septembre

sous l'égide du Conseil Diocésain de l'Eglise Apostolique Arménienne du Midi de la France et le concours de l'Association Culturelle des Arméniens de Gap et des Hautes Alpes
Sous la Présidence de
MGR LAGRANGE, évêque de Gap, et de **MGR DARON GEREJIAN, Vicaire Général des Arméniens du Sud de la France,**
le Rév. Père VARTAVAR KASPARIAN célébrera la messe à 10 heures 30, en présence du Clergé de Tallard et de ses environs.
La messe sera chantée par la Chorale de l'Eglise
Serpotz Tatéos-Bartoughiméos

à 13 heures Un repas fraternel réunira les pèlerins dans la Salle Polyvalente de Tallard, en présence des autorités religieuses et civiles.
Des autocars, suivant le nombre des inscrits, seront mis à la disposition, pour des personnes qui ne peuvent se rendre par leurs propres moyens.

Départ à 7 heures précises

Pour tous renseignements et réservations s'adresser :

— **MARSEILLE** - Cathédrale Arménienne du Prado, Tél. : 91 77 84 70.
— **SAINT-ANTOINE** - Eglise Saint Tatéos Tél. : 91 65 56 75 M. Tashan Tél. : 91 65 54 45.
— **BEAUMONT** - Eglise Saint Grégoire L'Illuminateur, Tél. : 91 93 13 50.
— **CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE** - Tél. :91 93 30 08.
— **TOULON - ABRIS CLUB** - Tél. : 94 27 10 51.
— **Pour toutes autres régions - Ass. Culturelle des Arméniens de Gap** - Tél. : 92 51 71 80 (heures de repas) 92 51 00 87.

Prix du Trajet de Marseille	
Aller-retour seul	100 Frs
Repas seul	120 Frs
Aller-Retour et repas compris	220 Frs

Pour la vente d'objets demander l'autorisation à l'Association de Gap.

MAISON DE LA CULTURE ARMENIENNE D'ALFORTVILLE
ԱԼՖՈՐՎԻԼԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՏՈՒՆ

1976-1996 M.C.A. 20ème

En Octobre prochain, la M.C.A. d'Alfortville fêtera le 20ème anniversaire de l'INAUGURATION DE SA STRUCTURE.

AU PROGRAMME :

vendredi 11 octobre à 19h
Salle des Fêtes
SOIREE D'OUVERTURE DES MANIFESTATIONS

samedi 12 octobre à 10h
EMISSION RADIO «Cartes sur table»
AYP FM 99.5

samedi 12 octobre à 20h45
Salle des Fêtes
SOIREE ARTISTIQUE ARMENIENNE
Musique traditionnelle
Danse – Voix

dimanche 13 octobre à 11h
Eglise Apostolique Arménienne
MESSE DE REQUIEM
à la mémoire des Fondateurs disparus

mercredi 16 octobre à 10h15
EMISSION RADIO
«Que sont les anciens élèves devenus? Cours et Parcours»
AYP FM 99.5

vendredi 18 octobre à 20h45
Salle des Fêtes
SOIREE THEATRE ARMENIEN

samedi 19 octobre à 20h
Salle des Fêtes
DINER SPECTACLE

Programme détaillé ultérieurement

Pour tous renseignements : M.C.A.
9, rue de Madrid, 94140 Alfortville
Tél.: 43 76 55 89 Fax: 43 78 66 64

UGAB . . . UGAB . . . UGAB . . . UGAB

«UGAB - 90»

A l'occasion de la célébration de son 90ème anniversaire, l'UGAB organise un grand

Gala de Bienfaisance

au profit des *TABLES DE L'UGAB*, en Arménie

le Vendredi 18 Octobre à 20 heures

au Pavillon Dauphine - 75016 Paris

P.A.F. : 750 Frs

Rens. : 45 20 03 18 / 42 27 12 26.

UGAB . . . UGAB . . . UGAB . . . UGAB

Imprimé sur les presses du Journal «HARATCH» 83, rue d'Hauteville, 75010 Paris
Commission Paritaire : N° 55935 SIRET : 51027317 A R.C. Paris

ԵՐԵՔՇԱԲԹԻ
ՕԳՈՍՏՈՍ 6
MARDI
6 AOUT
1996

LE NUMERO : 5,00 F.

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1925-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE-FONDE EN 1925
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 47. 70. 86. 60 — TELEX : HARATCH 280 868 F
— FAX : 48. 00. 06. 70 —
C.C.P. PARIS 15069-82 E

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 1.100 Ֆ. – Վեցամսեայ : 560 Ֆ.
Արտասահման : Տար. 1.400 Ֆ. (ամէնօրեայ առաքում)
1.250 Ֆ. (շաբաթական առաքում) – Հատը : 5,00 Ֆ.

72րդ ՏԱՐԻ - ԹԻՒ 18.912 | Fondateur SCHAVARCH MISSAKIAN | 72e ANNEE — N° 18.912

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ՈՂԻՄՊԻԱԿԱՆ 100

ԽԱՂԵՐԸ ՎԵՐՋԱՑԱՆ

ԱՌԱՋԻՆ Է ԱՄԵՐԻԿԱՆ ՖՐԱՆՍԱ՝ 5ՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ 45ՐԴ

Տեղւոյ ժամով 10.52-ին է, Կիրակի, Օգոստոս 4-ի գիշերը որ վերջ գտան Ողիմպիական խաղերը, բայց, խախտելով աւանդութիւնը Կոմիտէին նախագահը՝ Սամարանչ չըսաւ ծանօթ նախադասութիւնը, թէ լաւագոյններն էին: Արդարեւ, ռմբափորձը, անկազմակերպ վիճակը, դրամին տիրապետութիւնը եւ ընդհանուր մթնոլորտը պատճառ եղան որ [...]անաւոր գոհունակութիւն մը չտրուէ:

Դասաւորման գլուխը կը գտնուին Միացեալ-Նահանգները 100 մետալներով (43 ոսկի, 32 արծաթ, 25 պրոնզ), անոնց կը յաջորդեն Ռուսաստան (61), Գերմանիա (65, բայց միայն 20 ոսկի), Չինաստան (50) եւ Ֆրանսա որ 37 մետալներով, որոնց 15-ը ոսկի աննախընթաց նուաճում մը արձանագրեց:

Հայաստան 45-րդ է 77-ի վրայ, ինչ որ յուսախաբութիւն պատճառեց: Ան ունի միայն մէկ ոսկի (Արմէն Նազարեան, յունա-հռոմէական ըմբշամարտի մէջ) եւ մէկ արծաթ (Արսէն Մկրտչեան, ազատ ոճի ըմբշամարտ): Կարելի է մխիթարուիլ, թերեւս, այն իրողութեամբ որ Ազրպէյճան [...]րդ է, Վրաստան՝ 68-րդ է, դեռ Հայաստանէն ետք կուգան Փորթուկալի, Արժանթինի, Հնդկաստանի, Իսրայէլի նման երկիրներ:

Աւելցնենք թէ Աղասի կրցաւ մոռնալ անցեալի ձախողութիւնները թենիսի ողիմպիական ախոյեան դառնալով:

Յաջորդ խաղերը՝ 2000-ին, Սիտնէ:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԾՈՑԻ մէջ, ամերիկեան զօրքը ահազանգի մէջ է, ի լուր ահաբեկչական սպառնալիքներու: Ուաշինկթըն նոյնիսկ պարպած է ամերիկացի զինուորներու եւ դիւանագիտական մարմնի ընտանիքները: Ամերիկացիներուն համար, գլխաւոր կասկածելին՝ Իրանն է որ հերքեց որեւէ պատասխանատուութիւն: Սաուտի Արաբիոյ մէջ 700 ամերիկացի քաղաքացիներ կ'ապրին: Ֆրանսա եւ Մեծն-Բրիտանիա եւս որոշ քանակով ուժեր ունին:

ՉԷՉԷՆԻՈՅ մայրաքաղաքին՝ Գրոզնիի մէջ առեւանգուած են մարդասիրական Ա.Ս.Ֆ. (Անօթութեան դէմ գործունէութիւն) ֆրանսական կազմակերպութեան երկու անդամներ, մէկը անգլիացի, միւսը՝ ֆրանսացի: Կ'ըսուի թէ 500 հազար տոլարի փրկագին մը պահանջուած է, բայց կարելի չէ եղած ստուգել: Կը կարծուի թէ հասարակ աւազակութեան արարք մըն է, այսինքն քաղաքական բնոյթ չունի: Միւս կողմէ, ռուսական օդուժը կը շարունակէ ռմբակոծել: Շաբաթէն Կիրակի (Օգոստոս 3-էն 4) լուսնալիք գիշերը Բորզոյ եւ Գուչին-Կալէ՝ գիւղերը թիրախ եղած եւ տասնեակներով մեռեալ եւ վիրաւոր կայ ըստ անկախապաշտներու:

ԵԼՑԻՆ միշտ անտեսանելի կը մնայ: Պաշտօնապէս՝ «կը հանգստանայ», բայց կարելի չէ եղած զինք տեսնել: Քաղաքական իր խորհրդականը կ'ըսէ թէ վճռած է իր պաշտօնին ժամանակաշրջանին մինչեւ ծայրը (4 տարի) երթալ: Միեւնոյն ատեն, սակայն, կը խորհի իր յաջորդութեան եւ այդ առնչութեամբ կը յիշուին Չերնոմիրդինի, Լեբէդի եւ Մոսկուայի քաղաքապետ՝ Լուժկովի անունները:

ԱՅՍՐԵՈՐԴԱՆԱՆԻ ՄԷՋ, Համաս կը սպառնայ վրէժ լուծել ցուցարարի մը եւ բանտարկեալի մը մահէն ետք: Զեկոյցին մէջ կ'ըսէ. - «Ի պատասխան Արաֆաթի եւ իր քաղաքացօրքին ոճիրներուն, կոչ կ'ընենք Էզզետին - ալ - Քասէմի մեր մարտիկներուն որ հարուածեն սիոնական թիրախները»:

ՄԻՇԷԼ ՏԸՊՐԷԻ ՄԱՀԸ

Ազգ. Ժողովի նախագահը՝ Ֆ. Սեկէն, ակնարկելով Միշէլ Տըպրէի մահուան կ'ըսէ՝ «Ամէն մէկ կօլիստ ինքզինք որբ կը զգայ»: Արդարեւ, տը Կօլէն աւելի կօլիստ, Միշէլ Տըպրէ 5-րդ Հանրապետութեան կոլեան ամէնէն հարազատ խորհրդանիշն է: Հայրերէն, եթէ ոչ միակ հայրը Սահմանադրութեան, հաւատարիմներէն եթէ ոչ ամէնէն հաւատարիմը զօրավար տը Կօլի, Միշէլ Տըպրէ անսակարկ նուիրումով ծառայեց Ե. Հանրապետութեան: Այս է անձը որ իր մահկանացուն կնքեց Օգոստոս 2-ին, 84 տարեկանին Ամպուազի իր բնակարանը: Յուղարկաւորութիւնն ալ կատարուեցաւ Օգոստոս 5-ին, նոյն գիւղին եկեղեցին, ի ներկայութեան Հանրապետութեան նախագահին, վարչապետին եւ բազմաթիւ նախարարներու, ի շարս որոնց իր որդին՝ Ներքին նախարարը՝ Ժ. Լ. Տըպրէ:

Ծնած էր Փարիզ 1912-ին, շրջանաւարտ էր Իրաւաբանական համալսարանէն, ապա՝ քաղաքական գիտութեանց Ազատ Վարժարանէն: Զաւակն էր մանկանց հիւանդութեանց մասնագէտ՝ Ռոպէր Տըպրէի եւ Թոոլ Ռաբունիի մը, բայց ընտանեօք դաւանափոխ եղած էին: Քաղաքական ասպարէզը սկսած է 1939-ին որպէս կցորդ Փօլ Ռէնոյի դահլիճին մէջ: 1943-ին, դիմադրական է եւ 1944-ին կը հանդիպի տը Կօլին, որ ճակատագրական հանդիպում մըն է իրեն համար: Ալժերիոյ շրջանին, նախ համոզուած է որ ան ֆրանսական պիտի մնայ եւ կը սպառնայ անոնց որոնք հեռանալ կ'ուզեն Ալժերիայէն: 1958-ին սակայն, տը Կօլի կողքին է եւ Արդարադատութեան որպէս նախարար իրեն կը յանձնուի Սահմանադրութեան շարադրութիւնը: 1959-ին վարչապետ է եւ կ'անդրադառնայ որ տը Կօլ կողմնակից է ինքնորոշման: Կը հրաժարի իր համոզումներէն պատրաստելու համար հանրային կարծիքը անկախ Ալժերիոյ գաղափարին: 1961-ին, Ալժերիոյ փուչին ատեն, սրտաճմլիկ կոչ մը կ'ընէ Ֆրանսայի ժողովուրդին (բաւական ծաղրանքի նիւթ տալէներու երկայնքին) զայն հրաւիրելով որ՝ «հետիոտն կամ կառքով» փութայ օդակայան ընդդիմանալու համար ապստամբ վայրաչուներուն: Կ'ուզէ հրաժարիլ, բայց, հրաժարականը կը մերժուի ու կը մնայ մինչեւ Էվիանի համաձայնագրերը: 1968-ին Մարսէյեզը կ'երգէ Մալրոյի կողքին Շան զ'Էլիզէներու վրայ եւ կը նշանակուի Արտաքին Նախարար: 1981-ին նախագահական թեկնածու է ու կը ստանայ միայն ձայներու 1.6%-ը: 1988-ին անգամ կ'ընտրուի Ֆրանսական Կաճառին, կը պարտուի երեսփոխանական ընտրութիւններուն եւ 80 տարեկանին ալ իր զաւկին՝ Պերնարին կը թողու Ամպուազի քաղաքապետի իր պաշտօնը: Ինք է նաեւ որ հիմնած է ԷՆԱ-ն՝ Վարչական Ազգային Վարժարան ուրկէ շրջանաւարտ են կառավարական գրեթէ բոլոր անդամները տասնամեակներէ ի վեր:

ԹՈՒՐՔ ՄԱՄՈՒԼ

ԷՆՎԷՐԻ ԱՃԻՒՆՆԵՐՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ԹԱՂՈՒՄԸ ՊՈԼՍՈՅ ՄԷՋ

Ինչպէս յայտարարուած էր, Ա. աշխարհամարտի օրերուն Օսմանեան կայսրութեան պատերազմական նախարար, ընդհանուր հրամանատար Էնվէր փաշայի աճիւնը Տաճիկստանէն փոխադրուած է Թուրքիա ու հողին յանձնուած պաշտօնական արարողութեամբ մը, իր մահէն 74 տարի ետք, Օգոստոս 4-ին:

Աճիւնը զինուորական օդանաւով մը Պոլիս փոխադրուելէ ետք կրօնական արարողութիւն մը կատարուած է ուր ներկայ գտնուած են Հանրապետութեան նախագահը, Պաշտպանութեան, Պետական, Առողջութեան, Մշակոյթի նախարարները, Պոլսոյ կուսակալը, պաշտօնական այլ անձեր, Էնվէրի թոռը ու հարազատներ: Աճիւնը մզկիթէն տարուած է թաղման վայրը ուր Ս. Տէմիրէլ որպէս դամբանական ըսած է. - «Էնվէր Փաշա իր սխալներով ու բարի գործերով մեր մօտ անցեալին կարեւոր մէկ դէմքն է: Ոչ մէկ կասկած ունինք որ պատմութիւնը պիտի դատէ անցեալին մէջ թաղուած պատահարները ու արդար վճիռներու պիտի յանգի: Էնվէր Փաշա թուրք ժողովուրդին նկատումով հերոս մըն է»:

***

Էնվէր փաշայի աճիւններուն փոխադրութեան առթիւ Թուրք մամուլը անոր կեանքին ու գործունէութեան մասին բազմաթիւ գրութիւններ կը հրատարակէ վերջերս: Աւելորդ է ըսել որ անոր որպէս զինուորական ղեկավար ու պետական մարդ արժեւորումը բոլորովին գնահատական չըլլալով հանդերձ, ոչ մէկ ակնարկութիւն կայ Հայերու ցեղասպանութեան հեղինակի հանգամանքին: Շարունակական յօդուածներու, անջատ գրութիւններու մէջ ամէնէն «քննադատական» կեցուածք մասնողները կարելի է նկատել հետեւեալ երկու էջերը. առաջինը Է. Չէօլաշանի ստորագրութեամբ լոյս տեսած է Օգոստոս 3-ի «Հիւրրիյէթ»ին մէջ. հոն ըսուած է որ Էնվէր գլխաւոր պատասխանատուն է Օսմանեան պետութեան Ա. աշխարհամարտին մասնակցելուն եւ հետեւաբար իր պատմութեան «մեծագոյն դժբախտութեան»: Ապա կը յիշուի նաեւ իր պատճառով Սարիղամիշի մէջ 90 հազար Թուրք զինուորի կորուստը, եւայլն: Լրագրողը կ'եզրակացնէ թէ Էնվէր արկածախնդիր մըն էր ու երկրին ծառայած ըլլալով հանդերձ, աւելի ծանր կը կշռեն իր մեղքերն ու սխալները:

Երկրորդ էջը Օգոստոս 4-ի «Միլլիյէթ» օրաթերթէն է. աճիւններուն փոխադրութեան անդրադառնալէ ետք հեղինակը կ'ըսէ «այսօր չենք յիշուիր նոյնիսկ Հանրապետութեան հիմնումին համար վաստակ ունեցող դէմքեր. ոչ ալ անոնց արձանները կը տեսնուին: Ատոր փոխարէն պատմութեան անկարեւոր էջերէն անուններ առաջ կը քաշուին ու կը շքաւորուին: Ինչպէս կ'ըսէր պատմաբան մէկ բարեկամս, արդեօք կը թեւակոխենք շրջան մը որուն ընթացքին պետութիւն քանդողներ հերոս պիտի որակուին, իսկ պետութիւն հիմնողներ՝ յանցաւո՞ր»:

ԵՐԵՒԱՆ ՀԵՌԱՏԻՊ ՓԱՐԻԶ

«ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Օգոստոս 2 / 5)

ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐՈՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՍԿՍԱԾ Է

Օգոստոս 1-ին «Հանրապետութիւն» միաւորման կուսակցութեան ներկայացուցիչները Կեդրոնական ընտրական յանձնախումբին յանձնած են թեկնածու Լ. Տէր-Պետրոսեանի համար հաւաքուած մօտ 40 հազար ստորագրութիւնները եւ հարկաւոր միւս փաստաթուղթերը: Ներկայի նախագահին 36.751 ստորագրութեամբ կը յաջորդէ Համայնավար կուսակցութեան նախագահ Ս. Բադալեան: Գ. դիրքի վրայ է Արամ Սարգսեան

(Շար.ը Կարդալ Դ. էջ)

ՄԱՄՈՒԼ

LIBERATION (3 août)

RETOUR AU BERCAIL

ՀԱՅԵՐՈՒ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԵԾ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉԻՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁԸ

«Լիպերասիոն» կ'անդրադառնայ Էնվէր փաշայի աճիւններու տունդարձին եւ այդ առնչութեամբ կը գրէ թէ Մուսթաֆա Քեմալ, Հանրապետութեան հիմնադիրը, հաւանաբար կը դառնայ իր դամբարանին մէջ: Իր մեծ մրցակիցին՝ Երիտթուրք շարժումի հիմնադիր, կատաղի կողմնակից Գերմանիոյ հետ զինակցութեան, պատերազմական նախարար Ա. աշխարհամարտին, մեծ կազմակերպիչ Հայերու ցեղասպանութեան, Էնվէր փաշայի մարմինը երկիր կը վերադառնայ: Հանդիսաւոր կերպով պիտի թաղուի Պոլիս: Հարկ եղան 74 տարիներ գտնելու համար Թուրք զօրավարին գերեզմանը: Ան ինկած էր Տաճիկստան կռուելով Բոլշեւիկներու դէմ, համիսլամական կեռիլլայի մը գլուխը, տարուած ամբողջ կեդրոնական Ասիան ընդգրկող մահմետական հսկայ Պետութեան մը երազով:

Շիրիմը կը գտնուէր լեռնային շրջան մը, Բալժուվան գիւղին մօտ, Դուշամբէէն 300 քիլոմեթր հարաւ-արեւմուտք: Էնվէրի զէնքի մէկ ընկերոջ ութսունամեայ եղբայրն է որ յայտնած է վայրը: Թուրք դեսպանը չէ ծածկած իր ուրախութիւնը ու յայտնած. - «Թուրք ժողովուրդի պատմութեան մէկ մասնիկն է որ կը վերադառնայ»:

Լուրը տուած էինք Յուլիս 30-ի մեր թիւով:

ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԱՇՈՏ ՄԱՆՈՒՉԱՐԵԱՆ ՍՓԻՒՌՔԻ ՄԱՍԻՆ

Հայաստան նախագահական ընտրութեան նախօրեակը կ'ապրի: Ամէն օր լրատուամիջոցները կու տան այս կամ այն թեկնածուին հաւաքած ստորագրութիւններուն, մամուլի ասուլիսին, կամ քուէներու մասին հարցախոյզերու, անոնց արդիւնքներուն առնչուած տեղեկութիւններ: Կարելի չէ ըսել որ ընտրապայքարը այդ կոչումը արդարացնող թափով կ'ընթանայ: Ճիշդ է որ թեկնածուները խօսք կ'առնեն համագումարներու, ընտրական հանդիպումներ կ'ունենան նաեւ Երեւանէն դուրս, յայտարարութիւններ կ'ընեն, եւայլն, բայց դոնէ մամուլէն դատելով, մեծ սպասումներու տեղի չի տար ընտրութեան արդիւնքը: Ամէն մարդ խոստովանի կամ ոչ, ընդհանուր է կարծիքը թէ անկախ Հայաստանի հանրապետութեան առաջին նախագահը այդ պաշտօնին կ'ընտրուի նաեւ երկրորդ հնգամեակի մը համար: Այս համոզումը կրնար տատանումներ ունենալ եթէ ընդդիմութիւնը յաջողէր միասնական ճակատ կազմել ու ներկայանալ միակ թեկնածուով մը. բայց այդ ուղղութեամբ կատարուող ջանքերն ալ արդիւնք չտուին մինչեւ այսօր. շատ հաւանական ալ չի թուիր որ ասկէ ետք, մնացած երկու ամիսէն ալ կարճ ժամանակին ընթացքին, կարելի ըլլայ գտնել համաձայնութեան եզր մը,

Ընտրապայքարին կարեւոր դրամագլուխն է, ինչպէս ամէն երկրի մէջ, քննադատելիներու պաշարը: Հասկնալի է որ աթոռի մը տիրութեան նկրտողներ անոր վրայ գտնուողին բարեմասնութիւնները, յաջողութիւնները նկատի պիտի չունենան, չեշտելու համար որ իրենք աւելի արժանի են այդ դիրքին: Իսկ քննադատելիք բան գտնել, աշխարհի ամէնէն ազատ, ամէնէն բարօր, ամէնէն խաղաղ երկրին մէջ ալ, կարելի է միշտ:

Ընտրապայքարին Սփիւռքի մէկ անկիւնէն հետեւողի մը համար յատկապէս ուշագրաւ է Հայաստանի ներքին ու արտաքին քաղաքականութեան, հետ Սփիւռքին նկատառումն ալ, թեկնածուներու բերանացի կամ գրաւոր ելոյթներուն մէջ: Այդ մասին ընդդիմութեան գլխաւոր անունը՝ Վազգէն Մանուկեանէ ետք որ նիւթին տեղ տուած էր իր գլխաւորած կուսակցութեան՝ ԱԺՄ-ի համագումարին (տե՛ս, «Յառաջ» Յունիս 7), երէկուան Ղարաբաղ Կոմիտէէն երկրորդ դէմք մը, նոյնպէս նախագահական թեկնածու Աշոտ Մանուչարեան եւս «Գիտաարդիւնաբերական եւ քաղաքացիական միութեան» Բ. համագումարին (ԳԻԱՐՔՄ) ունեցած ծաւալուն ելոյթին մէջ («Լրագիր» Յուլիս 18) նոյնպէս անդրադարձած է Սփիւռքի գործօնին:

Ան մէջբերելով Կարօ Արմէնեանի խօսքը թէ «Վրաստանը ունի ծով, Ադրբէջանը նաւթ, իսկ Հայաստանը՝ Սփիւռք» կ'ըսէ թէ պետութեան մը ռազմավարական հզօրագոյն զէնքը արտաքին աշխարհին հետ յարաբերութեան, մարզին կը պատկանի: Այդ գործօնին դերը նոյնիսկ չնչին չափով նուազեցնել կոպիտ սխալ կը նկատէ: Իր պատկերացումով Սփիւռքը ազգային ապահովութեան համակարգի շրջանակին մէկ ազդակը կրնայ ըլլալ «երբ կապուած է Հայրենիքի հետ, երբ հայաստանակենտրոն եւ հայակենտրոն է»: Սփիւռքցիները իր դատումով իրենց ապրած երկիրներուն լաւագոյն քաղաքացիները պէտք է ըլլան եւ անոնց համար Հայաստանը՝ «լուսաւոր մի կէտ, հոգեւոր հայրենիք որի հետ կապուած են էութեան բոլոր թելերով եւ յանուն որի ապրում եւ գործում են»:

Քաղաքական ելոյթ մը, այն ալ ընտրապայքարի մը շրջանին, յարմար տեղը չէ բնականաբար Սփիւռքի նկատմամբ կեցուածքներ զարգացնելու: Ինչպէս Վ. Մանուկեանի պարագային, հոս եւս առաջին տպաւորութիւնը այն կ'ըլլայ որ Սփիւռքի թեմային նկատառումը կարեւոր տեղ մը ունի ընտրական քարոզչութեան մէջ: Ասոր մէջ հաւանօրէն պէտք է նշմարել նախագահ Լ. Տէր-Պետրոսեանի «օտարերկրացի»ի արժեւորումին յարուցած հակազդեցութիւններուն ուղղուած ակնարկութիւն մը, Անոր մօտեցումէն յստակ տարբերութիւն չեշտելու ճիգ մը: Սակայն, ո՞րքանով ատիկա կրնայ յաջողութիւն գտնել երբ ըսուածը շատ չի հեռանար լոզունգի մակարդակէն ու մանաւանդ Սփիւռքի, անոր էութեան, կոչումին սահմանումը կ'ըլլայ շատ հարեւանցի կերպով ու վիճելի հաստատումներով: Բան մը կը նշանակէ՞ «հայակեդրոն», «հայաստանակեդրոն» ըլլալու հարկը: Յետոյ «լաւ քաղաքացի»ի, «լուսաւոր կէտ»ի, «հոգեւոր հայրենիք»ի, յանուն այդ հայրենիքին ապրելու, գործելու պարտքին միախառնումը քիչ մը շատ պարագայական չի՞ հոտիր: Առաջին եզրակացութիւնը որուն կը յանգի ընթերցողը, այն է որ Ա. Մանուչարեան Սփիւռքը կը նկատէ ոչ թէ կորսուած հայրենիքէ մը տարասփռուած ինքնուրոյն ամբողջութիւն, այլ ներկայ Հայաստանի համար գրեթէ չօշափուկային գոյութիւն մը:

Շարունակելով Ա. Մանուչարեանի ըսփիւռքեան պարբերութիւնը, կը հասնինք անոր նկատմամբ ներկայի հայաստանեան մօտեցումին ներկայացումին: Ան կ'ըսէ թէ կար Սփիւռքին կապող երկու ուղղութիւն. Եկեղեցին եւ Հ. Յ. Դ.-ն: Ներկայի իշխանութիւնը եկեղեցական մարզին մէջ «կաթողիկոսական երկու աթոռների միաւորութիւն» կամ «առաւել միաւորուած գործունէութիւն» հռչակեց, բայց ճիշդ հակառակ պատկերը յառաջ եկաւ. Իսկ Դաշնակցութիւնը որ արագ ընթացքով կը դիմէր դէպի հայաստանակեդրոն ըլլալու հանգամանքին, դէմը գտաւ տասնեակ անակնկալ արգելքներ, տասցաւ բազմաթիւ ուժգին հարուածներ: «Կարծես թէ ինչ որ մէկը անում է ամէն ինչ որպէսզի այդ գործընթացը ընդհատուի եւ Դաշնակցութիւնը չդառնայ հայաստանեան կուսակցութիւն» կ'ըսէ նախագահական թեկնածուն, սլաքները ուղղելով ոչ միայն քաղաքական, այլեւ արդարութեան վերին իշխանութեան: Որքա՞ն արդարացի կրնայ նկատուիլ դատումը երբ Հ. Յ. Դ.-ի պատասխանատուներ բաւական ծանր ամբաստանութիւններով դատարան ներկայացուած են ու դատը տակաւին աւարտած չէ: Հակառակ ասոր Ա. Մանուչարեան կը յայտարարէ. «իրականում մեղադրանքների մեծամասնութիւնը բացարձակ կեղծ է»: Այս արժեւորումին մէջ եթէ նոյնիսկ Հ. Յ. Դ.-ի համակիրներ սիրաշահելու միտում մըն ալ կայ, ատիկա եղած է բաւական մակերեսային ձեւով. մեղադրանքներու մեծամասնութեան կեղծ ըլլալը յայտարարելու համար կամ պէտք է սպասել դատին աւարտին, կամ օրինակ, որպէս լաւատեղեակ ունենալ որոշ փաստեր: Ծանօթ է որ դատը աւարտած չէ, իսկ փաստերու մասին Մանչուրեան ոչինչ կ'ըսէ:

Ելոյթը անկախ՝ ընտրապայքարի միջոցի հանգամանքէն, յաւելեալ տուեալ մըն է անգամ մը եւս նշմարելու ղեկավար տարրերու մօտ Սփիւռքի ընկալումը: Այդ ընկալումին մէջ, մէկդի ձգելով ճիշդն ու սխալը, կը շեշտուի երկու կէտ. առաջինը այն է որ Սփիւռքը մեծ անծանօթ է այդ շրջանակին համար: Սփիւռքին կը տրուի իմաստ, տեղ, դեր, միշտ մեկնելով հայաստանեան արժեչափերէ: Իսկ երկրորդ կէտը որ թերեւս աւելի վարկաբեկիչ է Սփիւռքին համար, անոր ցուցաբերուած հետաքրքրութեան գրեթէ առանց բացառութեան պարագայական հանգամանքն է: Ան կը յիշուի, անոր կարեւորութիւնը, հայ ժողովուրդ կոչուածին բաղկացուցիչի հանգամանքը կը շեշտուի երբ ատոր պահանջքը ներկայանայ:

Սփիւռքը չճանչնալը թերութիւն մըն է ղեկավար դէմքի մը համար. բայց նկատի առած ատոր պատճառները, կարելի է յուսալ որ յարաբերութիւններու զարգացումը, ժամանակը հետզհետէ կ'օգնեն անոր սրբագրութեան, եթէ անշուշտ ըլլայ ատոր անկեղծ փափաքը: Սակայն, մինչեւ այսօր այս վերջին կէտը եղաւ ու կը մնայ Հայաստան - Սփիւռք ոլորտին մեծ բացական: Ընտրապայքարի ելոյթներով դէպի Սփիւռք նետուած քանի մը վարդերն ալ շատ անզօր են հիմնական փոփոխութիւն մը նշմարել տալու համար այս ուղղութեամբ:

ԱՐՓԻ ԹՈԹՈՅԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

ՍՏԱՄՊՈՒԼ, ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ, ՎԱՆ...

ԱՆԲԱՐԵԱՑԱԿԱՄՈՒԹԻՒՆ ԱՄԷՆ ԻՆՉԻ ՆԿԱՏՄԱՄԲ, ՈՐ ՀԱՅԿԱԿԱՆ Է

(Բ. եւ վերջին մաս)

Յաջորդ օրը մենք մեկնեցինք հարաւ արեւմուտք՝ Ուռհա, Խառան եւ Մարտին: Ուռհայում այցելեցինք հայկական եկեղեցի, որն անճանաչելիօրէն փոխելով դարձրել էին մզկիթ:

Եւ ահա Մարտինից շարժւում ենք Տիգրանակերտ: Ամուսնուս հետ նստած ենք մեր քիւրտ ուղեկցորդի մեքենայում: Բանակային պահակակէտերում մեզ երկու անգամ կանգնեցրին: Արդէն գրեթէ կէս գիշեր էր: Պարզապէս սարսափելի էր: Աւտոմատաւոր զինուորներն արագ – արագ թուրքերէն էին խօսում, ձեռքերով կրակելու շարժումներ նմանակում, մեքենայի բեռնատեղը ստուգում: Նրանք յայտնաբերեցին Քրտստանի մարզական թիմի դրօշը, որի մասին մենք գաղափար չունէինք: Ըստ երեւոյթին, մեր ուղեկցորդն այն մոռացել էր մեքենայի մէջ: Համոզուելով, որ մենք Ամերիկացիներ ենք, նշաններով բացատրեցին, որ հարկաւոր է գնալ հիւրանոց, որ այստեղ վտանգաւոր է այս ուշ ժամին:

Երկրորդ պահակակէտը գտնւում էր մի քանի հարիւր մեթր հեռու: Մեր փաստաթղթերն ստուգեցին երկրորդ անգամ: Ստուգումը տեւեց կէս ժամ, եւ կամաց – կամաց գործողութեան մէջ ներգրաւուեցին աւելի ու աւելի շատ անձինք: Փորձեցինք բացատրել, որ կենում ենք հիւրանոցում, նշեցինք անունը՝ «Տէմիր Հօթէլ»: Ոչինչ չէր օգնում, նրանք անգլերէն չգիտէին, մենք էլ Թուրքերէն: Բացատրութեան ապարդիւն փորձերից յետոյ մեզ ասացին, թէ կ'ուղեկցեն հիւրանոց, ըստ որում անձնագրերը չվերադարձրին: Հետեւեցինք ոստիկանական մեքենային: Պարզուեց, որ մեզ ուղեկցել են ոչ թէ հիւրանոց, այլ ոստիկանական տեղամաս:

Սենեակում բացի մեզնից եւս հինգ մարդ կար: Պատին Աթաթիւրքի մեծ դիմանկարն էր: Մեր անձնագրերը դարձեալ մանրակրկիտ ուսումնասիրուեցին, բայց չկարողացանք կարգին հասկանալ, թէ ինչու են մեզ բռնել, որն է մեր յանցանքը: Որոշ ժամանակ անց յայտնուեց ոստիկանի համազգեստով մի մարդ, որը խօսում էր անգլերէն: Լարուածութիւնը փոքր-ինչ մեղմացաւ: Նա ողջունեց մեզ, նստեց եւ սկսեց հարցաքննութիւնը: Տեղամասում մեզ պահեցին մօտ մէկ ժամ: Հարցաքննողի ուշադրութիւնը հիմնականում բեւեռած էր ամուսնուս Սթիվ Անլեանի վրայ: Առաջին հարցն այս էր. «Դու Հա՞յ ես»: Սթիվը պատասխանեց, որ Ամերիկացի է, ծնուել է Նիւ-Ջըրզիում: Հարցը կրկնուեց: Այն տպաւորութիւնն էր ստեղծւում, թէ Հայ լինելը յանցանք է: Ապա ոստիկանը հարցրեց, թէ մենք ինչ ենք անում Տիգրանակերտում, ինչու ենք այցելել Ուռհա եւ Մարտին, ով է մեքենայի տէրը: Հարցաքննութիւնը մի քանի անգամ ընդհատելով, նա հեռախօսով կապուեց պետի հետ, զեկուցելով, որ իրենք բռնել են Ամերիկահայի իր ռուս կնոջ հետ: Նրանք ինձ Հայի տեղ չէին դրել, քանի որ իմ ամերիկեան անձնագրում որպէս ծննդավայր նշուած է Մոսկուան: Իսկ Սթիվի անձնագրում Հայաստանի մեծ այցագիր է տպուած, որը, ըստ երեւոյթին, անմիջապէս նկատել էին կարգի Թուրք պահապանները:

Նկատեցի, թէ Սթիվն ինչպիսի դժուարութեամբ է զսպւում, թէեւ պատասխանում է հարցերին: Պատմում է, որ մենք Թուրքիա ենք ժամանել մասնակցելու ՄԱԿ-ի կազմակերպած «Հաբիթա – 2» խորհրդաժողովին, եւ որ Տիգրանակերտում ենք յայտնուել այն պատճառով, որ իր նախնիներն այստեղացի են եղել, եւ իր համար հետաքրքիր է լինել նրանց ծննդավայրում:

Ի վերջոյ վերցրին մեր տեսաժապաւէնները, յայտարարելով, թէ կը վերադարձնեն յաջորդ օրը, եւ մեզ թոյլատրեցին մեկնել: Այդ ամբողջ նուաստացուցիչ արարողակարգը տեւեց մօտ երեք ժամ: Հիւրանոց վերադառնալով, մի քանի խօսք փոխանակեցի տնօրէնի հետ, որն ինձ յայտնեց, թէ երկու ոստիկաններ գրոյցից հասկացել է, որ սկզբում մեզ կանգնեցրած զինուորականները նկատելով տեսաժապաւէնները կարգադրել էին մեզ կալանաւորել:

Ծրագրի համաձայն, մեր յաջորդ կանգառը պէտք է լինէր Վանում: Երազում էի տեսնել Վանայ լիճը եւ Ախթամարը: Ուստի անհամբեր սպասում էի լուսաբացին, որպէսզի ստանանք մեր անձնագրերը եւ տեսաժապաւէնները եւ ճանապարհ ընկնենք: Վերջապէս մենք կրկին մեքենայում ենք եւ շարժւում ենք դէպի բաղձալի լիճը: Հարթավայրին փոխարինում է լեռնային տեղանքը, եւ այստեղ սկսում ենք նկատել տանկեր եւ այլ ռազմական տեխնիկա: Մենք յայտնուել էինք պատմական գործողութիւնների գօտում: Խճուղուց ձախ տանկեր էին, իսկ աջում անմատչելի լեռներ, որտեղ քիւրտ զինեալներն էին: Մենք յայտնուել էինք նրանց արանքում: Մի անգամ տանկերի արկերը անցան հէնց մեքենայի վրայով:

Վերջապէս հորիզոնում երեւաց Վանը, եւ մեր վախն ու տհաճութիւնները մոռացանք: Իմ առջեւ բնութեան հրաշալի կերտուածքն էր, Մեծ Հայքի հզօրութեան հնօրեայ խորհրդանիշը: Վանայ լիճը շատ նման է Սեւանին, նոյն գլուխ(?) ջուրն է, նոյն լեռները:

Ափից ոչ հեռու, կղզու վրայ ծուարել էր հոչակաւոր Ախթամարը: Եկեղեցին հմայում է գեղեցկութեամբ ու նրբագեղութեամբ, շրջակայ աշխարհի հետ իր ներդաշնակութեամբ: Ներկայ Հայաստանի տարածքում ես ոչ մի տեղ չէի տեսել հարթաքանդակների ու որմնանկարների այդպիսի առատութիւն: Կղզու վրայ կեանքը ընթանում էր սովորական հունով. մարդիկ խնջոյքներ էին սարքում, լողում էին, խորոված պատրաստում, պարում, ամէնուրեք երեւում էին Քրտուհիներն իրենց տարազներով: Մարդիկ միանգամայն անտարբեր էին մօտերքում գտնուող քրիստոնէական մեծ յուշարձանի նկատմամբ: Դա ողբերգական հակադրութիւն էր:

Սրտի կսկիծով մենք հեռացանք կղզուց, Ախթամարը թողնելով անտարբեր եւ օտար մշակոյթի տէր մարդկանց միջավայրում:

Ինձ շատ անգամ է վիճակուել Երեւան վերադառնալ տարբեր երկրներից: Բայց երբեք այնպիսի ուրախութիւն ու թեթեւութիւն չէի զգացել, ինչպէս այս անգամ, երբ մեր Եակ – 40 ինքնաթիռը բարեհաջող(?) ռական ցածր թռչելով Թուրքերի ու Քրտերի ռազմական գործողութիւնների շրջանների վրայով, վայրէջք կատարեց «Զուարթնոց» օդանաւակայանում:

ՆՈՒՆԷ ԱՆԼԵԱՆ

«Ազգ», Յուլիս 23

ՆԵՐԳԱՂԹՈՂՆԵՐՈՒ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆԸ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԱՐԵՒՏՈՒՐԻՆ ՄԷՋ

1990-էն ի վեր Ռուսաստանէն շուրջ 600 հազար Հրեաներ ներգաղթած են Իսրայէլ: Անոնք կարճ ժամանակի մէջ գոյացուցած են գործի մարդոց նոր խաւ մը որուն գործունէութիւնը հիմ ունի նախկին Խորհրդային Միութեան շրջանակներու հետ պահպանուած կապերը: Լաւատեղեակ են հոն տիրող մտայնութեան, լեզուին, գործելակերպին: Ազդակներ որոնց օգտագործումով կը յաջողին տեղ գիրք ապահովել միջազգային շուկային մէջ: Այսօր անոնք իրենց ղեկավարութեան տակ ունին իսրայէլեան առեւտրական շատ մը ընկերութիւններ:

Այդ ընկերութիւններէն մէկն է օրինակ Օրգիսը որուն տարեկան գործառնութիւնը կը հասնի 10 միլիոն տոլարի: Առեւտուր կ'ընէ Տաշքենդի, Կիեւի հետ: Նաեւ ...անդլեզէն ու հաղորդակցութեան նիւթեր կ'արտածէ դէպի Ռուսաստան: Մեծ շահ ապահոված է յատկապէս ռուսական շուկային համար հնարուած ըմպելիի վաճառքէն: Թեթեւակի ալքոլային այդ ըմպելին որ պղպջակներով կը պատրաստուի, կ'արտածուի յատուկ թիթեղէ տուփերով որոնք կ'արտադրէ իսրայէլեան ընկերութիւն մը:

Ռուսաստանէն ներգաղթող Հրեաները առեւտուրէն զատ կը զբաղին նաեւ խորհրդատուական գործով: Անոնցմէ ոմանք ...ելով անդրադառնալով նախկին խորհրդային շուկաներու մեծ տարողութեան, այդ շուկաներուն վրայ գործունէութիւն ...նենալու փափաքի տէր առեւտրականներու բազմութեան, խորհրդակցական գրասենեակներ բացած են. այդ գրասենեակներուն մէջ իրենց կը տրուի անհրաժեշտ տեղեկութիւնը թէ օրինակ՝ ինչ կարելիութիւններ կան փոխառութիւն ընելու, վարկ ստանալու, հիմնադրամներէ օգտուելու, եւայլն:

Ներգաղթողները գլխաւորաբար երկու խումբ կը ներկայացնեն. առաջինը անոնք են որ որոշ գումարներով կը հասնին ու կը ձեռնարկեն արտածում - ներածումի գործին, օգտուելով Ռուսաստանի մէջ պահուած յարաբերութիւններէ: Երկրորդ խումբին պատկանողները հնարամիտներ են. նոր արտադրութիւններ կը հանեն հրապարակ, կամ նոր առարկաներ: Անոնք հնարած են օրինակ համակարգիչներու ռուսերէն բանիչներ ([illegible]) որոնց համար մեծ պահանջք կայ: Ներգաղթողներու ամէնէն համբաւաւորներէն է Պէն Արին. ան Իսրայէլ հասած է 1989-ին, տարի մը բանտը մնալէ

ետք Զուիցերիոյ մէջ, ղեղծարարութեան մեղադրանքով, երբ իր հիմնած դրամատունը ապօրինի գործառնութիւններ կատարած է: Անցնող քանի մը տարուան ընթացքին տնտեսական իր գործառնութեան ծաւալը միլիառաւոր տոլարներու հասած է: Իսրայէլ ներգաղթելէն ի վեր կը փորձէ ռուսեւիսրայէլեան դրամատուն մը հիմնել բայց Իսրայէլի Կեդրոնական դրամատունը այդ արտօնութիւնը կը մերժէ իրեն: Միայն վերջերս իր հիմնած ընկերութիւններէն մէկը լիազօրուած է օտարահպատակներու հաշուին դրամական գործողութիւններ կատարելու: Այդ արտօնութիւնը ունենալու համար պայման դրուած գումարը հինգ միլիոն տոլար եղած է:

Ներգաղթողներու այս խումբերը շատ գոհ են Իսրայէլի քաղաքական վերջին փոփոխութիւններէն: Գոհունակութեան գլխաւոր պատճառն է սեփականաշնորհումներու թափը: Անոնց քուէները կարեւոր մասնակցութիւն ունեցած են Բ. Նեթանիահուի յաղթանակին մէջ:

ՔԱՂՀԱՆ

ՏՈՊՐԷ ԹԱՆԳԱՐԱՆԻՆ ՀԱՅԵՐԷՆԻ ԳՐԱՎԱՐԺՈՒԹԵԱՆ ԴԱՍԵՐԸ

Նանթի «Տոպրէ» թանգարանին մէջ «Հայաստան՝ սկիզբէն մինչեւ Դ. դար» ցուցահանդէսին առնթեր կը կազմակերպուին (?) հայերէնի գրավարժութեան շաբաթական երկու ժամուան աշխատանոց մըն ալ: Հոն յաճախած են նախակրթարանի ինը դասարաններ: Այնքան մեծ եղած է պատանիներուն հետաքրքրութիւնը որ փափաք յայտնուած է գալ տարի եւս շարունակելու աշխատանոցը:

Ամէն անգամուն հիւր դասարանը նախ այցելած է ցուցահանդէսը ուր յատուկ ուշադրութիւն հրաւիրուած է հայ տառերու գլուխն պարագաներուն վրայ: Յետոյ գրավարժութեան ժամուն անոնց բացատրուած է հայկական այբուբենին անհրաժեշտութեան պատճառները, Ժ. դարէն ետք երկու գիրեր աւելցնելու պարտաւորութիւնը, եւայլն: Ապա պատանիները սկսած են ընդօրինակել հայկական տառերը, մեկնելով իրենց տրուած թերթերէ. հայատառ գրած են իրենց անունը, եւայլն:

Աշխատանոցին վարիչը Վերա Պոսիկեան այս մասին իր տեղեկատուութեան աւարտին կ'ըսէ թէ այնքան հաճոյք պատճառած է այդ աշխատանքը պատանիներուն որ գրեթէ ամէն անգամուն պէտք եղած է ստիպել որ մեկնին:

ԳԱՐԵԳԻՆ Ա. ՕՐՀՆԵՑ ՕՐԲԱԼՈՅՍ ՄԻՒՌՈՆԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՆԳՐՈՒԱՆԸ

Յունիսի 29-ին, բուն Միւռոնօրհնէքին նախորդող քառասուներորդ օրը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, հանդիսապետութեամբ Նորին Սրբութիւն Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցաւ միւռոնի համար գործածուող նիւթերի օրհնութիւնը: Շուրջ 40 ծաղիկների նեկտարներ եւ դափնեւղ լցուեց Միւռոնի կաթսայի մէջ:

Կաթսայի տեղադրումից յետոյ Նորին Սրբութիւն Գարեգին Ա. Վեհափառ Հայրապետը, շրջապատուած Միաբան Հայրերով, Եպիսկոպոսներով, Վարդապետներով, նաեւ Քահանայ Հայրերով, Սարկաւագներով, Հոգեւոր Ճեմարանի սաներով առաջնորդուեց Միւռոնի պատրաստման վայրը՝ Վեհարանի շրջաբակում: Այստեղ կատարուեցին Աստուածաշնչական ընթերցումներ եւ Վեհափառ Հայրապետի կողմից մատուցուեց յատուկ աղօթք՝ իր իսկ գրչով շարադրուած:

Ապա Վեհափառ Հայրապետը օրհնեց բոլոր նիւթեղէններին, լուսարարապետին ու լուսարարներին, Միւռոնի պատրաստութեան բոլոր նուիրատուներին ու աշխատողներին:

Նորին Սրբութիւնը կոչ ուղղեց հայ ժողովրդին, որ հոգով պատրաստուեն առաջիկայ Սեպտեմբերի 8-ին Ս. Էջմիածնում տեղի ունեցող Միւռոնօրհնէքին, որը լինելու է Վեհափառ Հայրապետի առաջին Միւռոնօրհնութիւնը՝ որպէս Կաթողիկոս Ամենայն Հայոց: Ուխտաւորներ պիտի լինեն բոլոր երկրներից, իրենց ուխտաւոր պէտք է զգան նոյնիսկ չեկողները:

Աստծոյ պատկերն է Միւռոնը մեր ճակատին, ասել է Նարեկացին: Երբ Աստուած մեր բոլորի մէջ ներկայ է, մեր հայրերի կնիքով, Ս. Միւռոնի դրոշմով, այլեւս չի կարող բաժանում եւ պառակտում լինել մեր մէջ, որովհետեւ Աստծոյ մէջ եւ Աստծով միացած ենք իրար: Նրա մէջ է մեր զօրութեան աղբիւրը, Նրա մէջ է մեր Եկեղեցու վերանորոգութեան գաղտնիքը, Նրա մէջ է նաեւ մեր հայրենիքի, պետութեան եւ ժողովրդի ամրութեան ու զօրացման բանալին:

Վեհափառ Հօր յուզիչ խօսքերից յետոյ հնչեց «Էջմիածինն ի Հօրէ» շարականը եւ «Պահպանիչ» աղօթքով աւարտուեց արարողութիւնը:

Այժմ արդէն սկսած պէտք է համարել Միւռոնօրհնէքը՝ հոգիների մէջ մեր հաւատացեալ ժողովրդի...

ՄԱՄԼՈՅ ԴԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

ԱԿՆԱՐԿՆԵՐ

ԴԵՂԱԳԻՐ ՖՐԱՆՍԱԿԱՆ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ

- Առանց որմնադիր ըլլալու՝ կիները ճարտարօրէն թէ՛ կը շինեն տուները եւ թէ կը քակեն:
- Ամէն հողի վրայ նախ պատերազմ կը բուսնի, յետոյ ցորեն կամ գարի:
- Նոյն արեւն է, որ կը հալեցնէ մոմը եւ կը չորցնէ կաւը:
- Տուն առանց կնոջ կը նմանի մարմնին, որ հոգի չունի:
- Կինը Աստուած մըն է տունին մէջ, վա՜յ թէ դառնայ սատանայ:
- Երեք օրէն տաղտկալի կը դառնան անձրեւը, հիւրը եւ կինը:
- Մինակ մի՛ ձգեր աղջիկդ ինչպէս կաթը՝ կրակին վրայ:
- Բամբասանք կ'ըլլայ՝ երբ մօտիկ ընող ըլլայ:
- Խօսքը աղջիկ է, գործը մանչ է:
- Աջը ձախին եղբայրն է:
- Ապրեցէք կատարեալ առողջութեան մէջ, գիտնալով, որ երիտասարդ են անոնք միայն, որոնք առողջ են:
- Այն որ ողխութիւն կ'ողբայ՝ յարգելի մարդ մըն է. իսկ այն որ կ'աշխատի եռանդով դարմանել զայն՝ մեծ մարդ մըն է:
- Մարդկային մեծագործութիւնը կը գնահատուի անոնց յառաջ բերած ներշնչումներէն:
- Բախտը այն պարիկն է որ երբեմն ընկոյզ կը շնորհէ ... ակռայ չունեցողին:
- Պարտքը վճարողը կը հարստանայ:
- Ճանճ չեն որսար քացախով:
- Կ'ըսեն թէ կապիկը ստեղծուած է մասնաւորաբար նուաստացնելու համար մարդ արարածը՝ յիշեցնելով որ կապիկին եւ մարդուն տարբերութիւնը երանգի մը հարց է:
- Լաւ սեխ մը եւ լաւ կին մը ընտրելէն աւելի դժուար բան չկայ:
- Յոյսը դժբախտներուն հացն է:
- Մոլեխինդը չէր, որ սպաննեց Սոկրատը, այլ տրամաբանութիւնը:
- Անհասկնալին այն կ'ըլլայ, որ երբ աշխարհ կը դառնայ հասկնալի:
- Պատերազմը կը ստեղծէ երեք բանակ, - խեղանդամներու բանակ, եղերամայրերու բանակ, աւազակներու բանակ:
- Կրնաս ծաղիկ մը նկարել խաբելու աստիճան իրական, բայց չես կրնար տալ անոր բուրումը:
- Ծուքը կ'անցնի եւ կը վերադառնայ, իսկ մարդը կ'անցնի առանց վերադառնալու:
- Մարդիկ կը սիրեն խնդացնել, ուզելով միշտ երեւիլ սրամիտ, բայց երբեք յիմարներ:
- Ծուլութիւնը վարժութիւն մըն է հանգստանալու դեռ չյոգնած:

«ԱՐԾԻՒ»

«Մարմարա»

ԿՂԶԻՆ ԵՒ ՄԻ ՄԱՐԴ

— վիպակ —

ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ

Կարճ, գրեթէ անվիզ, լայնուս, կլոր, ...ցուն դէմքով մի արարած է: Ահա բարձրանում է խարդաղայի վրայ: Համազգեստը չափազանց երկայն է եւ գլխի կարկատը ընկել է յօնքերի վրայ: Վեր է բարձրանում աշխոյժ քայլերով, ուսերը ...երում, երկու մատով գլխարկը նետում ...ետ, կանգ առնում, շունչ առնում, ապա ...անդաղ շարժումով գործիքը դուրս հանում մաշուած արկղի միջից, վրան նայում, ...րճում, զննում եւ աչքերը չորս կողմ պտըտցնելով, յաղթական նայում ...լորը կանգնած ամբոխին:

- Պատւո՛ Թրոմպոնը, - պոռում են վարից:

Թրոմպոնը ժպտում է, ձեռքով բարեկամական նշաններ անում, ապա, լրջացած, գործիքի մէջ ամբողջ ուժով փչում է: Փչում է եւ մի անճոռնի ձայն է դուրս գալիս: Ծիծաղում են: Թրոմպոնը արհամարհանքով նայում է, գործիքը նորից դնում մաշուած արկղի մէջ եւ շտապ շտապ վայր իջնում, իբր թէ շատ մի կարեւոր բան է մոռացել:

Միւս նուագողները խմբով վեր են բարձրանում: Աշխատում են բնական եւ անտարբեր ձեւանալ: Հասարակութեան միջից կանչում են նրանց անունները, կատակում, աղմկում: Բայց նրանք ուշադրութիւն չեն դարձնում: Նայում են աստղերին, շտկում են իրենց գլխարկները, ձեռքերը մէկը միւսին են քսում կամ փորձում են գործիքները:

Երբ վերջապէս, փիլոնապուրկ քահանայի օգնականը՝ տեղական դպրոցի ջղային եւ ամչկոտ վարժապետը՝ սանդուխի չորս աստիճաններից վեր է բարձրանում, տասը մատները խրում իր մազերի մէջ, սանրում, ճպոտը վերցնում՝ նուագախմբի անդամները առաջում են իրենց դիրքերում, նայում են եւ սպասում, կարծես պիտի լուսանկարուեն: Գամի եւ երկաթեղէնի գէր վաճառականը, որ թմբկահար է, մեծ փորը եւ աչքերը դուրս է նետում եւ սպասում, ինչպէս որսորդը բռնում է ծառի ետեւից դուրս պրծնող նապաստակին: Ղեկավարը ճպոտի ծայրը քսում է ձախ ձեռքին, նայում իր շուրջը: Մէկ էլ կուրծքը եւ գլուխը վեր է նետում եւ ճպոտը վեր տնկում: Սպասում են: Ղեկավարը միտքը փոխում է, ճպոտը վայր առնում եւ գլուխը առաջ տանելով ինչ որ բաներ փսփսում ետեւի շարքերին: Այս խաղը կրկնւում է մի քանի անգամ: Ամէնքը յուսահատւում են եւ երբ յուսահատւում են՝ նուագախմբից մի ահագին դղրդոց է բարձրանում եւ քլարինեթը սկսում է աղաղակել:

Նուագում են «Այտա՞յի» քայլերգը:

Միջերկրականի երկիրներում երաժշտութիւնը արեւի, աղտի, ծուլութեան մի անբաժանելի մասն է: Հրապարակներում զետեղուած անճաշակ արձանների, ոճրագործութեամբ եւ սիրային վէպերով լեցուած ամէնօրեայ թերթերի, պղպղակի, բաժակ սուրճի հետ կապուած առօրեայ մի երեւոյթ: Հոռմէացիների դըռեհկութիւնը եւ ցուցամոլութիւնը միշտ ներկայ է: Նուագը բղաւող գոյն է, ծածանուող դրօշակ, լեգէոնականների տրոփող քայլերգ եւ սրտի վրայից սահող մեղեդի: Նուագը, ինչպէս ամբողջ կեանքը, մանաւանդ փողոց է, հրապարակ:

Ամբոխը լսում է ուշադրութեամբ: Ձըմեռ ժամանակ անկողին մտնելու պէս, նրանք միանում են ձայների այդ վերմակներին եւ դառնում են բուրդ եւ ջերմութիւն: Եւ եթէ մարդ ուշադրութեամբ նայի, կը տեսնի որ աղաղակների այդ ծոցում անհամար անբաժանելի մաս է կազմում վերը փռուած աստղոտ երկնքի, վրադ ծանրօրէն չնչող սիրոքքոյի, իրենց սեւուկ աչքերը ոլորող աղջիկների, կտոր կտոր շարուած կարմիր ձմերուկի, ընդահնուր քրտինքի եւ հոտի:

Եւ նաեւ գինու:

Բացայայտ է, որ ուխսկին, ճինը, վոտկան օտար են այդ երաժշտութեան: Իբերամերժ բեւեռներ են: Եւ պէտք է տարբերել նաեւ գինիների տեսակները: Ֆրանսական գինիները արեւի մէջ աստիճանաբար դաստուորուող դրգիռներ են: Շապլին եւ Պիւզէն կապուած են ներքին հաղորդակցութիւններով: Փոմարը՝ Ամպրուազ Թոմա է: Պրամսը՝ գարեջուրի հոգեկան ճնշում, Մուսորգսկին՝ լեարդը տակնուվրայ անող վոտկա: Արամ Խաչատրեանի եղակի հանճարը գալիս է Հայաստանի ճերմակ գինու հոգեկան թափից:

Նստել եմ, այդպիսի նմանութիւններ եմ անում եւ ներքնապէս զուարճանում:

- Սպասաւո՛ր, մի բաժակ գինի եւս:

Կէս գիշերին տուն եմ վերադառնում: Սեղանիս վրայ մի նամակ կայ: Ստեֆանից:

« ... Մենք մոռանում ենք - եւ այդ 1500-ից ի վեր - որ ապրում ենք տարածութեան մէջ շրջող մի գնդի վրայ: Երկիր - հորիզոնը այլեւս գոյութիւն չունի, իսկ տարածութիւն-հորիզոնը տարրալուծւում է հին եւ նոր նախաքրիստոնէական շրջանի օրացոյցի կրկնակի անվերջում»:

«Այլեւս վստահ մի կէտի վրայ չէ, որ կանգնած ենք: Վստահ կէտը փախել է մեր ոտքերի տակից եւ ամէն ինչ յարաբերական է: Ոչ իսկ կարող ենք չափել աշխարհը կամ գիտակցել նրան մեր եսով: Որովհետեւ եսը մի կտորից չինուած, պատրաստուած լինել չէ, որ կարելի լինի նկարագրել ինչպէս մի «բան», մի իրականութիւն, մի ճշմարտութիւն: Նա դերադանցապէս «ինքնա - գոյանալ» է: Լինելու զօրութիւնը»:

(Տար. 42)

(Շար. Ա. էջէն)

(27.666 ստորագրութիւն) որ Հայաստանի Դեմոկրատական կուսակցութեան թեկնածուն է:

***

ԵԼՑԻՆԻ ՅԱՏՈՒԿ ԲԱՆԱԳՆԱՑԸ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ ԵՒ Լ. ՏԷՐ - ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ՄՕՏ

Օգոստոս 1-ին Լ. Տէր - Պետրոսեան ընդունած է նախագահ Ելցինի յատուկ բանագնաց, ղարաբաղեան կարգաւորման նոր ղեկավար Եուրի Եուկալովը որ կը փոխարինէ Վլադիմիր Կազիմիրովը: Նոր պաշտօնատարը ըսած է թէ իրեն համար տակաւին կանուխ է քաղաքական յայտարարութիւններ ընելու նիւթին մասին, բայց յոյսով է որ հարցը ի վերջոյ կը կարգաւորուի:

Նախորդ օրն ալ անոնք այցելած են Ստեփանակերտ ուր Կազիմիրով ըսած է թէ ղարաբաղեան խնդրին կարգաւորման համար դիւրին լուծումներ գտնել կարելի չէ եւ կողմերը ստիպուած կ'ըլլան փոխադարձ զիջումներ ընելու, որովհետեւ չկայ ձեւ մը որ առանց կողմերէն մէկուն վնաս պատճառելու երկուքին համար ալ երջանիկ աւարտ մը բերէ:

***

ՊԱՇՏՕՆԱԶՐԿՈՒՄ

Հայաստանի Նախագահի հրամանագրով Եդուարդ Զուլոյեան զադրած է Արտաքին Գործերու Նախարարի տեղեկալի պաշտօն վարելէ:

***

ԱՐՏԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՆԿՈՒՄԻՆ ԲԱՐԻՔԸ

Արդիւնաբերութեան յստակ անկումը վերջին տարիներուն անուղղակի կերպով նպաստած է Երեւանցիներու առողջութեան, քանի որ բարելաւուած են բնապահական պայմանները: Ոչ ամբողջական զօրութեամբ կ'աշխատին «Նայիրիտ»ը, «Կանազ» ինքնաշարժի անիւներու, ելեկտրական լամբերու գործատունը: Վտանգաւոր նիւթերու արտանետումը պակսած է: Առոր փոխարէն քաղաքին մէջ աւելցած է ինքնաշարժերու թիւը որ իր կարգին պատճառ մըն է մթնոլորտին ապականութեան: Երեւանը գտնուելով գոգահովիտի մը մէջ, օդին փոփոխութիւնն ալ դժուար կ'ըլլայ ու բնակչութիւնը կը ստիպուի շնչելու ապականած օդը:

***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՑԵԱԼ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Հանրապետական կուսակցութեան կեդրոնին մէջ Օգոստոս 1-ին տեղի ունեցած մամուլի ասուլիսի մը ընթացքին խօսք առած է Ազգային Միացեալ Կուսակցութեան հիմնադիրներէն Շահէն Յարութիւնեան: Ան ըսած է թէ Հայաստանի ներկայի անկախութիւնը նաեւ իր կուսակցութեան ծրագրին իրականացումն է: Ազգ. Միացեալ Կուսակցութիւնը հիմնուած է 30 տարի առաջ, Շ. Յարութիւնեանի ու Ս. Զատիկեանի նախաձեռնութեամբ: Առաջինը տիրող իշխանութեան կողմէ հալածանքի ենթարկուելով վտարուած է Խորհրդային Միութենէն, ապաստանած՝ Միացեալ - Նահանգներ: Հոն հիմնած է խորհրդահայ քաղաքական բանտարկեալներու պաշտպանութեան յանձնախումբը: Շ. Յարութիւնեան ըսած է թէ կը վաւերացնէ Հայաստանի ներկայի արտաքին քաղաքականութիւնը եւ եթէ ունենար հայաստանեան քաղաքացիութիւն, կողմնակից կ'ըլլար ներկայ նախագահին թեկնածութեան:

***

ԲՌՆԱԳԱՂԹԱԾՆԵՐՈՒ ԲՈՂՈՔԻ ՑՈՅՑԸ

Սումգայիթէն, Կիրովաբադէն եւ Բաքուէն բռնագաղթածներ, Յուլիս 31-ին Հանրապետութեան նախագահին նստավայրին առջեւ հաւաք մը կազմակերպած են: Անոնք պահանջներ ներկայացուցած են գիրենք ներառնող հանրապետական օրէնքի մը բացակայութեան պայմաններուն մէջ առնուազն միջազգային օրէնքները ի գործ դնելու կապակցութեամբ:

Անոնց բարձրացուցած բողոքի ձայնը գլխաւորաբար կը վերաբերի իրենց զաւակները բանակէն ազատ արձակելուն, քանի որ անոնք պարտադրուած են իրենց ազգային ծառայութիւնը կատարել երկրի մէջ, որուն քաղաքացիներն իսկ չեն: Ցուցարարները կը գանգատին նաեւ այն անորոշ կացութենէն, որուն մէջ իրենք կը գտնուին: Կ'ըսեն թէ միշտ իրենց գլխուն վրայ կախուած կը զգան վտարման սպառնալիքը, քանի որ կը մերժուի պաշտօնական որեւէ արձանագրութիւն: Հուսկ անոնք դժգոհութիւններ ունին նաեւ մարդասիրական օգնութեան անբաւարար բընոյթին ու ընտրելու եւ ընտրուելու իրաւունքէն զրկուած ըլլալու բերմամբ:

«ՅԱՌԱՋ»Ի ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

71ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻՒ

ՄԻԼԱՆՕ. - Տէր եւ Տիկին Հրանդ Բամպակեան 1000 Ֆր.:

ՓԱՐԻԶ. - Դր. Ստեփան Պենլեան 100 Ֆրանք:

DATE A RETENIR

NAVASART à Marseille

Les 4 Sections de la Croix Bleue des Arméniens de France - région Marseille, demandent à toutes les associations de prendre en considération la date du

SAMEDI 19 OCTOBRE en soirée.

Plus amples renseignements ultérieurement.

ՅԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Ֆրանսահայ Կապոյտ Խաչի Շրջանային Վարչութիւնը իր վշտակցութիւնը կը յայտնէ Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան մեծ ընտանիքին եւ Ֆրանսայի Շրջանային Վարչութեան իր պատուոյ նախագահին՝ ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ մահուան առիթով:

Ֆրանսահայ Կապոյտ Խաչը կը խոնարհի հայ ազգային մեծ բարերարին ազգաշէն վաստակին առջեւ, որ գիտցաւ առատօրէն բաշխել իր բարիքները հայ դըպրոցի եւ մշակոյթի կառոյցներուն ստեղծման եւ պահպանման համար:

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԿԱՊՈՅՏ ԽԱՉԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

N'oubliez pas votre 15 AOUT

à Saint - Raphaël

au HOME ARMENIEN

avec

Marten YORGANTZ

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆ

ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

Մելգոնեան Կրթական Հաստատութեան 1996 - 1997 ուսումնական տարեշրջանի մուտքի քննութիւնները տեղի կ'ունենան Երկուշաբթի եւ Երեքշաբթի, Օգոստոս 12-ին եւ 13-ին, ժամը 10-ին, Հ. Բ. Ը. Միութեան Փարիզի գրասենեակին մէջ

11, square Alboni, 75016 Paris

Հեռաձայն. -

45 - 20 - 03 - 18

Քննութեանց արդիւնքները կը հաղորդուին մինչեւ Օգոստոս 30:

ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

Մ. Կ. ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ

ԿԱՊՈՅՏ ԽԱՉ

ՄԵԾ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ ԵՒ ԽԱՂՈՂՕՐՀՆԷՔ

Կիրակի, Օգոստոս 11-ին, ամբողջ օրը, Պէլֆոնթէնի (Ժիւրա) կայանը:

Առաւօտեան, Խաղողօրհնէքի արարողութիւնը կը կատարէ՝

ՄԿՐՏԻՉ ՔԱՀԱՆԱՅ ՊԱԼԱՊԱՆԵԱՆ

Պիւֆէ - Գեղարուեստական յայտագիր կայանի երախաներուն կողմէ

- Հաճելի անակնկալներ

UGAB . . . UGAB . . . UGAB . . . UGAB

«UGAB - 90»

A l'occasion de la célébration de son 90ème anniversaire, l'UGAB organise un grand

Gala de Bienfaisance

au profit des *TABLES DE L'UGAB* en Arménie

le Vendredi 18 Octobre à 20 heures

au Pavillon Dauphine - 75016 Paris

P.A.F. : 750 Frs

Rens. : 45 20 03 18 / 42 27 12 26

UGAB . . . UGAB . . . UGAB . . . UGAB

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 Paris
Siret : 51027317 A R. C. Paris
Commission paritaire : N° 55935

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Շաբաթ, Կիրակի
Դեկտեմբեր 14 / 15

5ème GRANDE BRADERIE DE NOEL

«Շէն -- Ֆրանս»

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Սիփան - Կոմիտաս երգչախումբի վարչութիւնը կը խնդրէ նկատի առնել իր յառաջիկայ համերգը որ տեղի պիտի ունենայ Շաբաթ, Նոյեմբեր 30-ին, Փարիզ, Opéra Comique — Salle Favart-ի մէջ:

Յայտագիրը յատկացուած է Կանաչեանի եւ Ափրիկեանի գործերուն:

---

8 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1996

ՄԻՒՌՈՆՕՐՀՆԷՔ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԷՋ

Յայտնի է մեր ժողովուրդին, թէ յառաջիկայ 8 Սեպտեմբերին (1996) Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ՝ Նորին Սուրբ Օծութիւն ՏԷՐ ՏԷՐ ԳԱՐԵԳԻՆ Ա. Ծայրագոյն Պատրիարք - Կաթողիկոս Ամենայն Հայոց իր անդրանիկ Միւռոնօրհնութիւնը պիտի կատարէ:

«Միւռոնի Օրհնութիւնը ողջ Հայ Ժողովուրդին համար հոգեկան առիթ է եւ միջոց, մեր ժողովուրդի Քրիստոնէական և Ազգային կեանքի վերանորոգութեան եւ զարգացման համար»:

Առ այդ, սրտագին կոչ կ'ընենք Ֆրանսայի եւ ամբողջ Արեւմտեան Եւրոպայի հօգեւոր մեր զաւակներուն, խունկերամ բազմութեամբ Ուխտի երթալ Սուրբ Էջմիածին ու Շնորհօք վերադարձարուիլ՝ Սուրբ Միւռոնի բացառիկ այս Օրհնութեան ներկայ գտնուելով:

Այս նպատակաւ, Սեպտեմբեր 5-էն 12-ին՝ մէկ շաբաթուան՝ դէպի Հայաստան Ուխտագնացութիւն կազմակերպուած է:

SABERATOURS-ը մեր կողմէ լիազօրուած է ապահովել ճամբորդական բոլոր գործառնութիւններն - վիզա, օդանաւ, պանդոկ, պտոյտներ, ապահովագրութիւն եւ սնունդ:

Անհրաժեշտ է անյապաղ փութալ, մինչեւ 31 Յուլիս ներառեալ, արձանագրուիլ յիշեալ Ուխտագնացութեան, կանխելու համար տեղ ապահովելու յետագայի խճողումը:

ԴԻՒԱՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ
ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ

Արձանագրուելու համար դիմել. -

SABERATOURS
19, rue St-Roch, 75001 PARIS
Tél. : 42. 96. 10. 10 — Fax : 42. 96. 18. 77.

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
ՕԳՈՍՏՈՍ 7
MERCREDI
7 AOUT
1996

LE NUMERO : 5,00 F.

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1925-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE-FONDE EN 1925
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 47. 70. 86. 60 — TELEX : HARATCH 280 868 F
— FAX : 48. 00. 06. 70 —
C.C.P. PARIS 15069-82 E

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 1.100 Ֆ. - Վեցամսեայ : 560 Ֆ.
Արտասահման : Տար. 1.400 Ֆ. (ամէնօրեայ առաքում)
1.250 Ֆ. (շաբաթական առաքում) - Հատը : 5,00 Ֆ.

72րդ ՏԱՐԻ - ԹԻՒ 18.913 | Fondateur SCHAVARCH MISSAKIAN | 72e ANNEE — N° 18.913

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ԱՀԱԲԵԿՉՈՒԹԻՒՆ, ԳԼԻՆԹԸՆ ԵՒ ԵՒՐՈՊԱ

Նախագահ Գլինթըն օրէնք մը ստորագրեց Օգոստոս 5-ին որ թոյլ կուտայ Միացեալ -- Նահանգներուն պատժամիջոցներ ձեռք առնել այն երկիրներուն դէմ որոնք 200 միլիոն փրանքէն աւելի ներդրումներ կ'ընեն Լիբիա եւ Իրան: Օրէնքի հեղինակ՝ ծերակուտական Ամաթոյի ատենը կրող այս օրէնքը կը ձգտի պարագրանքներու ենթարկել Ուաշինկթընի համաձայն ընկերակիցները: Գլինթըն դրած ալ ունեցած է այս առթիւ եւ չեշտած. -- «Այս օրէնքով, կը դիմենք մեր դաշնակիցներուն որպէսզի մեզի միանան աւելի արդիւնաւէտ ձեւով»: Գլինթընի համար՝ ահաբեկչութիւնը մեր սերունդին թշնամին է:

Այս օրէնքին հռչակման առթիւ, Մեծն - Բրիտանիա, Իտալիա, Ֆրանսա եւ Գերմանիա խիստ կերպով դատապարտած են եւ կը խորհին հակամիջոցներու ձեռնարկել: Պարզ է որ նման օրէնքի մը գործադրութիւնը կը վնասէ գլխաւորաբար քարիւղային ընկերութիւններուն, առաջին առթիւ՝ Թոթալի, ինչ կը վերաբերի Ֆրանսայի: Դեռ կան Շէլ, Աճիփ եւայլն, եւայլն:

Մատնանշելով հանդերձ Լիբիան եւ Իրանը որպէս այն երկիրները որոնք ամէնէն վտանգաւոր նեցուկը կ'ապահովեն ահաբեկչութեան, Գլինթըն զինուորական միջոցներ առնելու մասին անոնց դէմ, որեւէ ակնարկութիւն չըրաւ: Գոհացած է յայտնելով թէ գալ ամիս օրինագիծ մը պիտի առաջարկէ Գոնկրէսին «միջազգային ոճիրի հակակշռի» կապակցութեամբ:

Այս ամբողջը, անշուշտ, մաս կը կազմէ Գլինթընի նախագահական ընտրապայքարին, եւ ըստ ոմանց, նախագահին ակնկրանեաց արշաւը կը միտի հոգեբանական պատրաստութիւն մը տեսնել «հոկտեմբերի անակնկալին» համար, որ ուրիշ բան չէ, կ'ըսուի, եթէ ոչ զինուորական գործողութիւն մը Թեհրանի, Տրիպոլիի կամ Պաղտատի դէմ:

Ամէն պարագայի մէջ, եւրոպական երկիրները անընդունելի կը գտնեն որ նման որոշում մը տրուի առանց խորհրդակցութեան:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԱԴՐԲԵՋԱՆԻ նախագահը Աղդամի դըրաւման Գ. տարին լրանալուն առթիւ այդ շրջանէն Բաքու գաղթածներու խումբ մը ընդունելով յայտարարած է որ Հայաստանի ու Ատրպէջանի միջեւ խաղաղութեան բանակցութիւնները ապարդիւն ըլլալու պարագային պէտք է պատրաստ գտնուիլ պայքարի, ետ առնելու համար գրաւեալ հողերը: Ան ըսած է նաեւ թէ պատերազմները միշտ հաշտութեամբ կ'աւարտին ու Հայաստան եւ Ատրպէջան եւս չեն կրնար յաւիտեան թշնամի մնալ իրարու: Ալիեւ երաշխիք տուած է գաղթականներուն որ հայկական գրաւման ենթակայ տարածքները անպայման պիտի ազատագրուին եւ թէ իրենք արդէն Համաշխարհային դրամատան հետ շփումներ կ'ունենան, այդ շրջաններուն վերանորոգման հարկաւոր վարկեր ապահովելու համար:

ԹՈՒՐՔԻՈՅ վարչապետը Ն. Էրպաքան կը ձեռնարկէ միջին արեւելեան շրջապտոյտի մը որ կ'ընդգրկէ Իրանը, Փաքիստանը, Սինկափուրը, Մալէզիան եւ Ինտոնէզիան: Որոշումը հիմնովին աւելորդ եւ անտեղի նկատուած է քաղաքական շրջանակներու կողմէ, յատկապէս Իրանի պարագան: Տրուած մեկնաբանութիւնը այն է որ Էրպաքան ամերիկեան Հարաւածային ուժին տեւողութիւնը նոր երկարաձգած ըլլալով, կ'ուզէ Իրանի հետ յարաբերութիւններն ալ հաւասարակշռել: Կայ նաեւ Իրանի կրօնական կազմակերպութիւններուն հետ իր կապերը աշխուժացնելու նպատակը: Այս շրջապտոյտը փոքր բախումի մըն ալ պատճառ եղած է իրեն եւ Հանրապետութեան նախագահ Տէմիրէլի միջեւ որ նոյնպէս կը պատրաստուէր Սեպտեմբերին նման շրջապտոյտ մը կատարել Միջին - Արեւելքի մէջ: Այս վերջինը պարտաւորուած է ջնջել իր ծրագիրը:

ԹՈՒՐՔԻՈՅ Արտաքին նախարարին՝ Թանսու Չիլլէրի մէկ գործակիցը յայտարարած է Օգոստոս 5-ին, որ Անգարա կրնայ անուղղակի երկխօսութեան մը ձեռնարկել ՓՔՔ-ի հետ, եթէ այս վերջինը հրաժարի զինեալ պայքարէ: Միւս կողմէ «Հիւրրիյէթ»ի համաձայն, կառավարութիւնը կրնայ արտօնել հեռատեսիլի ԹՌԹ պետական կայանը որ քրտերէն հաղորդումներ ընէ:

ԻՐԱՔԵԱՆ ՔԻՒՐՏԻՍՏԱՆԻ Դեմոկրատ կուսակցութեան (Մասուտ Պարզանի) Փարիզի ներկայացուցիչը՝ Ժաֆար Հասօ Կիւլի սպաննուած գտնուած է փարիզեան իր յարկաբաժինին մէջ: Ըստ առաջին տեղեկութիւններու, թրքահպատակ 42 տարեկան այս Քիւրտը խեղդուած է եւ գլուխն ալ ջախջախուած: Բնակարանը խուզարկուած է եւ կը կարծուի որ փաստաթուղթեր ալ անհետացած են: Կիւլի Փարիզ կը բնակէր շուրջ 20 տարիներէ ի վեր, ուր ճարտարապետութիւն ուսանած էր, ապա Պարզանիի ներկայացուցիչը դարձած: Ծոցի պատերազմէն ետք, Ֆրանսայի քիւրտ ինքնավար կառավարութեան պաշտօնական կցորդ նշանակուած էր: Քանի մը օրէն իրաքեան Քիւրտիստան պիտի մեկնէր կուսակցութեան 50-ամեակը տօնելու համար:

ՅՈՐԴԱՆԱՆԻ Թագաւորը, Օգոստոս 5-ին, ընդունած է Իսրայէլի վարչապետը՝ Նեթանիահու, որ շատ չափաւոր արտայայտութիւններ ունեցած է Ամման կատարած այս պաշտօնական այցելութեան ընթացքին: Հիւսէյն Թագաւորը կը ջանայ միջնորդի դեր խաղալ Իսրայէլի եւ Սուրիոյ միջեւ: Այս այցելութեան առթիւ, բաւական իրարանցում ստեղծուած է Իսրայէլի Արտաքին նախարարութեան մէջ, որովհետեւ Նեթանիահու ոչ Արտաքին նախարարը ոչ ալ ուեւէ ուրիշ ներկայացուցիչ հրաւիրած էր իրեն ընկերանալու: Կը կարծուի որ Նեթանիահու կ'ուզէ ինք վարել նաեւ Արտաքին նախարարութիւնը:

ԱՄՊՈՒԱՃԻ մէջ, կոլխոս ընտանիքը իր վերջին յարգանքը մատուցանեց Միշէլ Տըպրէի: Դամբանականներ արտասանած են Հայր Կիւսթաւ - Մարթըլէ եւ Թոռնէրէն մէկը (Ներքին նախարարին տղան):

ՓԱՐԻԶԻ Թամ Թամ կազմակերպութիւնը որ կը պայքարի 13-րդ Թաղամասի քաղաքաշինական հսկայ գործողութեան դէմ, իր ձեւով բացումը պիտի կատարէ, Օգոստոս 7, ժամը 18.30-ին Շառլ - տը - Կօլ նոր կամուրջին որ Սէնի վրայ կը բարձրանայ Օսթերլից կայարանէն եւ որ մէկ միլիառ փրանք արժած է:

ԿԻՋԷԻ բուրգերուն մօտ, բանուորներ յայտնաբերած կ'ըլլան կրանիթեայ վարդագոյն պատկառելի արձան մը, որ կը ներկայացնէ Ռամսէս Բ. շինարար փարաւոնը: Բազմաթիւ հարցումներ կը մնան սակայն, առնցմէ առաջինն է՝ ինչո՞ւ միայն այսօր կ'ըլլայ նման յայտնաբերում մը:

ՓՈՒԼԱՆ ՏՈՄՍԻ

ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԹԻԹԵՂ ՄԵՏԱԼՆԵՐ...

Կիրակի, Օգոստոս 4-ին աւարտեցան Ողիմպիական ամառնային մարզախաղերը Միացեալ -- Նահանգներու Աթլանթա քաղաքին մէջ: Ողիմպիական հիմնադրութեան այս դարադարձը պիտի արձանագրուի որպէս ամէնէն բազմազգ -- 179, ամէնէն մեծաթիւ մարզիկներու մասնակցութեամբ -- 11.000, եւ ամէնէն երկարատեւ -- 17 օր տեւողութիւն ունեցող Ողիմպիականը, որուն ներկայ գտնուած են նաեւ մրցանիշ կոտրող մարզասէրներ -- աւելի քան հինգ միլիոն: Հաստատուեցաւ նաեւ ուրիշ մրցանիշ մը -- սպառեցաւ հարիւր միլիոն շիշ գոգա -- գոլա...

Ախոյեան մարզիկները արժանացան 3×271 մետալներու -- ոսկի, արծաթ եւ պրոնզ: Կոտրուեցան աշխարհի մրցանիշներ շարք մը մարզախաղերու մէջ:

Ողիմպիականները բնականաբար աւելի կ'արժեն քան ոսկին, արծաթը եւ պրոնզը: Անոնք աշխարհի եղբայրութեան, երկրագունդիս ժողովուրդներու միութեան, ցեղերու եւ սեռերու հաւասարութեան եւ բարի մրցակցութեան գերագոյն խորհրդանիշներն են: Մարդկային ազնուագոյն ձգտումներն եւ ոգին է որ մեզի կը փոխանցուի Ողիմպոսի բարձունքներէն մեզի հասած բոցավառ ջահով, որ դարերը կը շաղկապէ իրարու եւ որուն վրայ թեւատարած կը սաւառնի արդարութեան եւ խաղաղութեան աղաւնին: Հետեւաբար, ամէն երեւոյթ կամ ամէն ինչ որ կը հակադրուի կամ նոյնիսկ նուազագոյն չափով կը վնասէ Ողիմպիականի էութեան, կը դառնայ մերժելի եւ դատապարտելի: Անոնց համար պէտք է ստեղծել չորրորդ տեսակի մետալ մը -- Թիթեղ:

Ողիմպիական այս խաղերուն շատ մը անձեր եւ կազմակերպութիւններ արժանի դարձան այս վերջին մետալին: Նշենք մի քանին:

6 -- Ողիմպիականի Միջազգային Կոմիտէն, որ Ճորճիա նահանգին մայրաքաղաք Աթլանթան ընտրեց որպէս խաղավայր: Այդ նահանգը, Էմնըսթի Ինթէրնէյշընըլի վերջին տեղեկագիրին իսկ հաստատումով, վայր մըն է ուր կ'իշխէ ցեղային բացայայտ խտրականութիւնը եւ ուր մահավճիռը ի զօրու է, ինչ որ բացարձակապէս հակառակ է Ողիմպիականի ոգիին եւ տառին: Նահանգ մըն է, ուր 1983-էն ասդին ելեկտրական աթոռին վրայ մահուան ցնցումները ապրած քսան դատապարտեալներէն տասնեւինը սեւամորթներ են, որոնք դատապարտուած են սպիտակամորթ սպաննած ըլլալու ոճիրով, մինչ սեւամորթ ամերիկացի սպաննած ոչ մէկ սպիտակամորթ դատապարտուած է ունենալու նոյն վախճանը: Էմնըսթիի իսկ բնորոշումով՝ Ճորճիայի մէջ մահավճիռը «ցեղապաշտ, կամայական եւ անարդար է»: Ողիմպիականի Միջազգային Կոմիտէն դիւրաւ կրնար ընտրել ամերիկեան ուրիշ նահանգ մը ուր հաւասարութիւնը, արդարութիւնը եւ մարդկային իրաւունքը օրինակելի են:

-- Ողիմպիականը փինանսաւորող անհատ կազմակերպիչները, որոնց վաճառաշահ եւ վաշխառու ոգին տիրապետեց: Իրենց համար ո՛չ միայն ամէն ձեւ եւ միջոց լաւ էր եւ թոյլատրելի՝ աէնթ մը -- դուք ըսէք միլիոններ -- աւելի շահելու համար, այլ նաեւ՝ ո՛չ մէկ չափ ու կշիռ կը սահմանափակէր իրենց շահագիտական ախորժակը: Ողիմպիական աւանը եւ Աթլանթան դարձած էին համատարած flee market մը, marché aux puces մը, մեծ մայրս պիտի ըսէր՝ պիթ պազար մը:

-- NBC Հեռատեսիլի կայանը, որ շուրջ 430 միլիոն տոլարով գնած էր այս եւ յառաջիկայ երկու ողիմպիականներուն հեռասփռումներուն -- եւ ծանուցումներուն -- մենաշնորհը: Վերոնշեալ կայանին պատասխանատուները ցաւալի կերպով շփոթած էին Ողիմպիականի մը միջազգային մրցաշարքերը ամերիկեան ազգային -- տեղական մրցումներուն հետ: Եթէ ամերիկացի հեռադիտորդը ամէն իմաստով լիացած կրնար զգալ ազգային մարզիկներուն յաղթանակովը եւ անոնց ամէն ոսկի մետալ շահելուն առթիւ ամերիկեան մաղթերգին -- ունկնդրութեամբ, ինչպէս նաեւ նոյն այդ մարզիկներու մասին կենսագրական տեղեկութիւններով, անոնք շատ քիչ բան տեսան եւ գիտցան -- շատ մը պարագաներու ալ երբեք չտեսան -- ոսկի մետալի արժանացած 52 այլ երկիրներու մարզիկներուն եւ անոնց յաղթանակներուն մասին: Ամերիկեան հեռատեսիլի չորս մեծագոյն կայաններէն մէկը եղող NBC-ն այս առթիւ ունէր ողիմպիական վսեմ պաշտօն մը՝ ամերիկացի ժողովուրդին առջեւ աշխարհի դռները լայն բանալու եւ զանոնք լուսաւորելու, որմէ սակայն դժբախտաբար թերացաւ: Մնաց յաճախ ինքնաբաւ, գրեթէ ինքնակուզպ:

-- Հայաստանի հինգ մարզիկները: Նախ կարեւորութեամբ, նշենք որ աշխարհի մէջ ամէն Հայ արդարացի հպարտութեան զգացումը ունեցաւ երբ դեռեւս ազատուն Հայաստանի մարզիկները շահեցան իրենց ոսկի եւ արծաթ մետալները: Եւ տակաւին պէտք է հաշուի առնել նաեւ ուրիշ ախոյեան հայորդիներ, որոնք իրենց մետալները շահեցան տարբեր երկիրներու դրօշին ներքեւ: Կայսեր բաժինը տալէ ետք կայսեր, տանք նաեւ սատանային բաժինը: Հայաստանի մարզիկներէն հինգը, փոխանակ լիովին ապրելու Ողիմպիական բացառիկ մթնոլորտը եւ մտածելու՝ բարձր պահելու մասին իրենց երկրին պատիւը, Աթլանթայի փողոցներուն մէջ սայթաքեցան գիշերային աղմկալից ... որսորդութեան մը, որուն ելքի դուռը գտան տեղւոյն ոստիկանատան մէջ, ամերիկեան մամուլի մէջ եւս «արժանի» յիշատակումի արժանանալով: Մեր կողմէ իրենց կը նուիրենք հինգ Թիթեղ մետալներ՝ իրենց արտամարզական սխրագործութեան համար:

Վերջապէս Թիթեղ մետալ մըն ալ՝

-- Ամերիկեան Պասքէթպոլի Երազ(ային) խումբին: Մարզիկներ՝ մեծամասնաբար յղփացած եւ շփացած իրենց վայելած փառքով եւ առատ դրամով: Այս միլիոնատէրերուն -- որոնցմէ մէկը վերջերս ստորագրեց 120 միլիոն տոլարի պայմանագիր մը եօթը տարուան համար -- մօտ զգալի էր պակասը ողիմպիական առողջ մրցակցութեան ոգիի մը, որ հաւանաբար կուգար նաեւ իրենց անչափ ինքնավստահութենէն: Այս անախորժ երեւոյթը աւելի զգալի դարձաւ վերջին մրցումին, երբ աւստրալիական խումբին նախանձախնդիր մարզիկները զիրենք շփոթի մատնեցին առաջին 15 վայրկեաններուն:

ԳՐ. ՔԷՕՍԷԵԱՆ

Պոսթըն

«ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Օգոստոս 5)

ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՆ ԵՕԹԸ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ

Օգոստոս 2-ին լրացած է նախագահական ընտրութեան համար թեկնածու արձանագրուելու պայմանաժամը: Վերջնական դասաւորումը հետեւեալ պատկերը կուտայ, ըստ հաւաքուած ստորագրութիւններու.

Լ. Տէր -- Պետրոսեան («Հանրապետութիւն») 39.882

(Շար-ը կարդալ Դ. էջ)

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹԻՒՆ 50

ՎԿԱՅՈՒՄ ԵՆ ՔՐԷԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

(1953 – 1960 թթ.)

ԽՄԲ. – Անկախութեան հռչակումէն ի վեր հայաստանեան մամուլը պարբերաբար տեղ կու տայ բռնութեան տարիներու հալածանքներուն որոնցմէ կարեւոր բաժին մըն ալ ունեցած են մեր հայրենադարձները: Անհերթերութեան գլուխ գործոցներ արձանագրած է այդ շրջանի ժամանակագրութիւնը, պահելով «հակասովետական արտայայտութիւններ»ու մեղքով զանազան պատիժներու դատապարտուածներու անուններուն երկար, շատ երկար ցանկեր: Այդ անուններէն մէկուն ու միւսին վիճակած դառնութեան բաժինը ներկայիս լոյսին կը բերուի մամուլի էջերով: «Ազգ»ը Յուլիս 19-ի թիւով կը բանայ այդ շարքէն թղթածրար մը որուն հերոսներուն մէջ կան Ֆրանսահայեր ալ որոնց մեղքերէն եղած է «սիստեմատիկաբար կարդալ «Յառաջ» թերթից»...:

***

1953 թ. վախճանուեց «Ժողովուրդների Դաչիճը» Ստալինը, որին հետեւեցին յայտնի իրադարձութիւնները կապուած անհատի պաշտամունքի քննադատման հետ: Արդարացուեցին շատ անմեղ զոհեր, աքսորավայրերից վերադառնում էին մարդիկ, ընտանիքներ, պատժւում էին անօրինականութիւններ թոյլ տուած որոշ պաշտօնեաներ...

Սակայն, ամէն ինչ չէ, որ հեշտութեամբ, տեղի էր տալիս արդէն ձեւաւորուած քաղաքական համակարգում: Ճիշդ է, առանց ցուցադրութեան եւ նախորդ տարիների համար բնորոշ զանգուածայնութեան՝ 50-ական թուերին դատարաններում շարունակում էին դատապարտել երկրի քաղաքացիներին հակախորհրդային արտայայտութիւններ թոյլ տալու համար:

1953 – 60 թթ. ՀԽՍՀ քրէական օրէնսգրքի 67 յօդուածի առաջին մասով, որը պատիժ էր նախատեսում հակախորհրդային արտայայտութիւնների համար, Հայաստանում դատապարտուել են 27 մարդ:

Թէ հզօր Խորհրդային Միութեան համար ինչ վտանգ էին ներկայացնում այդ «յանցագործները», կը տեղեկանանք ծանօթանալով նրանցից մի քանիսի գործերին:

Բոլոր հասարակարգերում միշտ էլ կը գտնուեն մարդիկ, որոնք դժգոհ կը լինեն ինչ-ինչ հարցերից եւ բարձրաձայն կ՚արտայայտուեն դրա մասին. առաւել եւս, յետպատերազմեան իրավիճակում հնարաւոր չէր խուսափել նման երեւոյթների դրսեւորումներից: Դրանք, որպէս կանոն կրում էին կենցաղային բնոյթ, սակայն հասնելով դատական ատեաններ՝ ստանում էին քաղաքական գնահատականներ: Բնական էր որ նման դժգոհութիւնները կարող էին լինել եւ հայրենադարձների մէջ, եւ պատահական չէ, որ Հայաստանում վերայիշատակուած յօդուածով դատապարտուածներից 8-ը նրանցից էին:

Ստորեւ ներկայացնենք հատուածներ վերջիններից մի քանիսի գործերից, որոնք այդ տարիներին տիրող ընդհանուր իրավիճակի եւ 1946 – 47 թթ. մեծ ոգեւորութեամբ հայրենիք եկած մարդկանց ճակատագրերի խօսուն վկայութիւններն են:

1953 թ. Մարտի 3-ին ՀԽՍՀ Գերագոյն դատարանը 10 տարուայ ազատազրկման դատավճիռ կայացրեց Երեւան քաղաքի բնակիչ, 5-ամեայ կրթութեամբ, սառը ջրերի վաճառող Գրիգոր Սաղաթէլեանին, որը Հայաստան էր ներգաղթել 1947 թուին Յունաստանից: Դատավճռի բովանդակութիւնը շատ խօսուն է, ուստի առանց մեկնաբանութիւնների այն ներկայացնենք մասնակի կրճատումներով:

ԴԱՏԱՎՃԻՌ

«1953 թ. Մարտի 3-ին ՀՍՍՌ Գերագոյն դատարանի քրէական գործերի դատական կոլեգիան դատաքննութեամբ, գործի տուեալներով եւ մեղադրեալի մասնակի խոստովանութեամբ գտաւ հաստատուած այն, որ մեղադրեալ Սաղաթէլեանը՝

1. 1930 թ. մինչեւ 1935 թ. Յունաստանի Քսանթի քաղաքում եղել է դաշնակցական երկսեռ երիտասարդական միութեան անդամ ու 1936 թ. դաշնակցական բուրժուա-նացիոնալիստական պարտիայի անդամ, միաժամանակ 1936 – 40 թթ. եղել է այնտեղ գտնուած ռէակցիոն "Դեղին ակումբ"ի անդամ:

2. 1943 թ. կամաւոր կերպով Յունաստանից մեկնել է ֆաշիստական Գերմանիա եւ այնտեղ աշխատել է մինչեւ 1945 թ., որից յետոյ վերադարձել է Յունաստան ու այնտեղից 1947 թ. Սեպտեմբեր-Հոկտեմբեր ամիսներին ներգաղթել Սովետական Հայաստան չխզելով կապը դաշնակցական պարտիայի հետ, որի ամբողջ գործունէութիւնն ուղղուած է կոմունիստների, սովետական կարգերի եւ Սովետական Հայաստանի դէմ:

3. Սովետական Հայաստան ներգաղթելու նախօրեակին հանդիպում է ունեցել Քսանթի քաղաքում գտնուած դաշնակների ղեկավարներից Գէորգ Արաճեանի հետ եւ յանձնարարութիւն է ստացել պայմանական նամակներով քաղաքական եւ տնտեսական բնոյթ կրող տեղեկանքներ յայտնել Հայաստանի վերաբերեալ, որով օժանդակել է դաշնակներին, այսինքն կատարել է յանցանք, որը նախատեսուած է քր. օր. 61-րդ յօդ. (այստեղ միջամտենք՝ նշելով, որ գործում այս կէտը մեղադրանքը հաստատող որեւէ գործողութիւն չի յիշատակուած– Ա. Մ.):

4. Հայաստան ներգաղթելուց յետոյ մնալով հաւատարիմ դաշնակցական գաղափարներին, շրջապատում սիստեմատիկաբար տարել է հակասովետական ագիտացիա, որը արտայայտուել է հետեւեալում:

Վկայ — «Մօտաւորապէս 1950 թ. Հոկտեմբերին մեղադրեալը ասել է, որ Գերմանիայում ժողովուրդը աւելի լաւ է ապրում, քան սոց-ԽՍՀՄ, գովաբանում էր Գերմանիայի համակարգը: Ինքը դժգոհ է կոմունիզմի կառուցումով»:

Վկայ – «Մեղադրեալ Սաղաթէլեանը Քսանթի ք. երիտասարդական կազմակերպութեան անդամ էր, որ ղեկավարում էր դաշնակցական պարտիան: Արտասահմանում էլ նա ունէր հակասովետական տրամադրութիւններ եւ դրա մասին նա պատմում էր ուրիշներին, արտայայտում էր դժգոհութիւն Հայաստանում կեանքի պայմաններով»: «Յայտնում էր կարծիք Անգլիայի, Ամերիկայի եւ ԽՍՀ մէջ նոր պատերազմի ծագմանը, եւ որ Ամերիկան կը յաղթի, որովհետեւ շատ ուժեղ է»:

Թշնամօրէն քննադատել է Սովետական իրականութիւնը, փորձել է վարկաբեկել կոմպարտիայի եւ Սովետական իշխանութեան ձեռնարկումները, թոյլ էր տուել լպիրշ ու անվայել զրպարտանք ՍՄԿՊ-ի եւ սովետական կառավարութեան ղեկավարութեան մէկի հասցէին, գովաբանել է կապիտալիստական կարգերը ու միտք է յայտնել, որ նոր պատերազմ կը ծագի ու սովետական իշխանութիւնը կը տապալուի, այսինքն կատարել է յանցանք, որ նախատեսուած է քր. օր. 67 յօդ. առաջին մասով...»:

Փաստենք, որ 1990 թ. Նոյեմբերին ՀՀ գերագոյն դատարանի նախագահական որոշմամբ նրա դատավճիռը բեկանուել է եւ գործը կարճուել յանցակազմի բացակայութեան պատճառով:

Նոյն վերջաբանն է ունեցել 1953 թ. Մարտի 24-ին 10 տարի ազատազրկման դատապարտուած Սերոբ Յովհաննէսեանի գործը, որը 1946 թ. Իրանից ներգաղթելով Հայաստան, «որպէս սովետական կարգերից դժգոհ տարր, շարունակում է հակասովետական ագիտացիան իր շրջապատում, դժգոհութիւն յայտնելով ՍՍՌՄ-ի կեանքի պայմաններից, փորձելով զրպարտել սովետական իրականութիւնը, նրա դեմոկրատական ու ազատ կարգերը...»:

Իսկ ահա, 1953 թ. Մարտին նոյն յօդուածով դատապարտուած, Երեւանի թիւ 67 դպրոցի գրադարանի վարիչ Դաւիթ Շահլամեանը, որը Հայաստան էր ներգաղթել 1948 թ. Եգիպտոսից, գործով անցնող որոշ վկաների հետ խօսելիս ասել է.

«1. ... որ Եգիպտոսում կեանքն աւելի լաւ է քան Հայաստանում:

2. ... որ Հայաստանում գրականութիւնը միակողմանի է. ուստի եւ նա չի կարող Հայաստանում զբաղուել գրականութեամբ:

3. Որ հայկական լեզուն աղաւաղուած է ռուսերէն բառերով:

4. Որ Խանջեանը եղել է հայրենասէր մարդ ու նրա մասին լաւ կարծիք են ունեցել եւ...», ուստի եւ դատապարտուել է 8 տարուայ ազատազրկման: Սակայն այն «ահաւոր յանցագործութիւններն» յօդս են ցնդել արդէն իսկ 1963 թուին, երբ ԽՍՀՄ Գերագոյն դատարանի պլենումի որոշմամբ նրա գործը կարճուել է յանցակազմի բացակայութեան պատճառով եւ Շահլամեանը արդարացուել է:

Այժմ ներկայացնենք 1947 թ. Ֆրանսայից Հայաստան ներգաղթած, նախկին Լենինական քաղաքի գուլպայ – տրիկոտաժի Ֆաբրիկայի բանուորուհի Աննա Սրապեանի գործը, որի դատավարութիւնը տեղի է ունեցել 1957 թ. Դեկտեմբերին:

Սյսպէս, նրա դատավճռում գրուած է.

«...Մեղադրեալ Աննա Սրապեանը 1947 թ. իր ծնողների, չորս եղբայրների եւ երեք քոյրերի հետ, ռեպատրիացիայի կարգով տեղափոխւում են Սովետական Հայաստան եւ բնակութիւն հաստատում Լենինական քաղաքում, որտեղ ինքը՝ մեղադրեալ Սրապեանը անմիջապէս անցնում է աշխատանքի գուլպա – տրիկոտայ Ֆաբրիկայում: ...Ըլնելով իր անձնական նիւթական վիճակից ունեցել է դժգոհ տրամադրութիւններ եւ ցանկութիւն է ունեցել վերադառնալ Ֆրանսա:

Ֆրանսա վերադառնալու իր տրամադրութիւնը նա դրսեւորել է նաեւ Ֆրանսայում բնակուող՝ իր նախկին հարեւան ումն տիկին Ֆերնանտ Ֆրեյին գրած նամակներում, որոնցում դժգոհելով Սովետական Հայաստանում ունեցած իր նիւթական դժգոհութիւնից, խնդրել է հետաքրքրուել այն հարցով, թէ արդեօք որեւէ քայլ կատարւում է իրենց Ֆրանսա տեղափոխելու հարցով...»:

Բացի այդ նա համարձակութիւն է դրսեւորել եւ իր դժգոհութիւնները արտայայտել «Կոմսոմոլի ընտրական հաշուետու ժողովի ժամանակ»:

Սրապեանը, ՀԽՍՀ քր. օր. 67 յօդ. առաջին մասով մեղաւոր է ճանաչւում եւ դատապարտւում 6 ամիս ժամանակով ազատազրկման: Հետաքրքիր է նաեւ այն իրողութիւնը, որ դատարանն, այնուամենայնիւ, հաշուի է առել նրա ջահէլ տարիքը, լաւ աշխատանքը եւ այն, որ եղբայրը ծառայութեան մէջ է բանակում՝ նրան պայմանական պատիժ է տուել: Այս անգամ արդարութիւնը վերականգնւում է բաւականին արագ եւ Սրապեանի գործը կարճւում է արդէն 1959 թ. յանցակազմի բացակայութեան պատճառով:

Ծանօթանանք նաեւ 1957 թ. Մայիսին խմբական գործով դատապարտուած, Ֆրանսայից հայրենադարձներ, Միասնիկեանի անուան գրադարանի աշխատակիցներ Յովհաննէս Տէր-Խաչատրեանի, Վահան Քերեստեճեանի, փոքր հիդրոտուրբինների գործարանի ինժեներ Նազար Ինճէեանի գործին:

Դատավճիռից տեղեկանում ենք, որ Տէր-Խաչատրեանը «..իր օրագրերում սիստեմատիկօրէն շարադրել է իր հակասովետական հայեացքները», ինչպէս նաեւ, զրպարտչական մտքեր է տարածել Ֆրանսայից ներգաղթած Հայերի եւ իր գաղափարակիցների մէջ, որով ցանկացել է "նրանց մօտ եւս ստեղծել հակասովետական տրամադրութիւններ, հետեւաբար եւ սովետական երկրից նորից Ֆրանսա գնալու ցանկութիւն", "սիստեմատիկաբար կարդացել է արտասահմանեան մամուլը եւ նրանցում զետեղուած հակասովետական յօդուածները տարածել է Երեւանի, Լենինականի եւ Կիրովականի իր ծանօթների եւ գաղափարակիցների շրջապատում"»:

Ինչպէս գրանցւում է դատավճռում, Վահան Քերեստեճեանն ընկնելով նրա ազդեցութեան տակ, զբաղուել է նման հակասովետական գործունէութեամբ, մասնաւորապէս արտասահմանեան մամուլից՝ «"Յառաջ" թերթից, եւ "Թայմս" թերթից սիստեմատիկաբար կարդացել է եւ նրանցում եղած հակասովատական յօդուածները յանձնել է իր գաղափարակից մեղադրեալ Տէր-Խաչատրեանին...»:

Իսկ Նազար Ինճէեանը «լինելով տրամադրուած հակասովետօրէն, գրել է մի քանի երգեր հակասովետական բովանդակութեան, որոնցում միաժամանակ թոյլ է տուել խուլիգանական արտայայտութիւններ սովետական պետութեան ղեկավարների հասցէին...»:

Կարծում ենք, որ մեկնաբանութիւններ կարիք չի զգացւում: Տէր-Խաչատրեանը դատապարտուեց հինգ տարի, Քերեստեճեանը եւ Ինճէեանը՝ երեքական տարի ազատազրկման:

ԱՐՄԵՆԱԿ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՄԱՐՄԱՐԱ

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՄԱՐԴԻԿ, ՈՐՈՆՔ ԼՈՒՍԱՆԿԱՐԷՆ ԴՈՒՐՍ ՄՆԱՑԱԾ ԵՆ

Ա.

Նայեցայ երկու նախագահներու լուսանկարին: Մէկը տանուտէր, միւսը հիւր: Երկուքն ալ շքեղ սրահի մը կեդրոնը, շքեղ բազկաթոռներու վրայ քով քովի նստած, կը նային ու կը ժպտին աշխարհի բոլոր լուսանկարի գործիքներուն: Սա լուսանկարը այսօր հրատարակուած է հազարաւոր թերթերու մէջ, երկրագունտին մէկ ծայրէն մինչեւ միւս ծայրը: Ժպիտ կայ երկու նախագահներու նայուածքին մէջ: Քիչ վերջ անոնք գոց դրան մը ետին թերեւս պիտի կռուին իրարու հետ, բայց սա պահուն, լրագրողներու դիմաց, կը ժպտին մէկզմէկու ու լուսանկարի գործիքներուն:

Զգեցի մէկ թերթը ու վերցուցի միւսը: Յետոյ ուրիշ թերթ մը: Բոլոր թերթերը իրենց առաջին էջին վրայ այդ լուսանկարն է որ հրատարակած են: Դարձեալ նայեցայ: Նայեցայ այն բազկաթոռներուն, որոնց մէջ նստած են անոնք: Երկու նախագահներու ետին մարմարեայ պատուանդան մը կայ, վրան զարդեղէններով: Իսկ առջեւը, փոքրիկ սեղանիկ մը, որ շատ գեղեցիկ ծաղիկներ զետեղուած են: Բայց այս մանրամասնութիւնները կարեւոր չեն: Կարեւորը երկու նախագահներն են: Անոնք կը նային երջանկօրէն եւ այդ վայրկեանին անշուշտ կը խորհին որ յաջորդ օր միլիառաւոր մարդիկ իրենց պիտի նային այդ լուսանկարին մէջէն: Ի՜նչ էր կը զգան:

Երեք, չորս թերթերու մէջ եւս նոյն լուսանկարը ելաւ դիմացս: Լուսանկարներէն մէկը գունաւոր, միւսը սեւ - ճերմակ, մէկը քիչ մը սեւ, միւսը քիչ մը տժգոյն, մէկը շատ յստակ տպուած էր: Բայց բոլորն ալ նոյն վայրկեանը, նոյն երկվայրկեանը կը ցոլացնէին: Ահաւասիկ քով քովի երկու մարդիկ, որոնք վայրկեանի մը համար աշխարհի կեդրոնը դարձած են աշխարհի բազմութիւններու մէջէն:

Յանկարծ թերթերէն մէկուն մէջ ուշադրութիւնս գրաւեց երկու նախագահներուն տարբեր մէկ լուսանկարը: Այս լուսանկարը կարծես քիչ մը աւելի հեռուէն քաշուած էր եւ այդ պատճառաւ, երկու նախագահներուն քով, քիչ անդին, կը տեսնուէին ուրիշ քաղաքագէտներ ալ: Մէկը թերեւս թարգման մը, մէկը թերեւս փոխ - նախագահ մը, մէկը թերեւս պարզ պատուիրակ մը: Անոնք ալ բազկաթոռներու մէջ նստած էին, անոնք ալ լրագրողներուն կը նայէին: Բայց անոնք կը բացակայէին միւս լուսանկարներուն մէջ: Լրագրողները զանոնք դուրս ձգած էին իրենց տեսողութեան դաշտէն: Լրագրողներուն համար անոնք կարեւոր չէին: Միայն սա ո՞վ գիտէ որ համբակ լրագրողն էր որ կարեւորին կողքին, անկարեւորին ալ տեղ տուած էր իր լուսանկարին մէջ եւ փոխանակ իր գործիքին ոսպնեակը կեդրոնացնելու միայն երկու նախագահներուն վրայ, արտօնած էր որ ուրիշներ ալ մուտք գործեն հոնկէ ներս:

Այն ատեն մտածեցի բոլոր այն մարդոց մասին, որոնք միշտ լուսանկարէ մը դուրս մնացողներն են: Է՜հ, տխմար ու անփորձ չենք, որպէսզի չգիտնանք թէ միշտ ուրիշ պաշտօնավարներ ալ կ՚ընկերակցին երկու նախագահներու, երբ անոնք այսպէս քով քովի կուգան պալատի մը, դղեակի մը, պանդոկի մը մէջ: Տխմար ու անփորձ չենք, որպէսզի չգիտնանք որ այդ նախագահներուն ընկերացող պաշտօնավարները երբեմն աւելի կարեւոր դեր կը խաղան, քան նոյն ինքն նախագահները: Բայց խաղին օրէնքն այն է, որ այդ մարդիկը լուսանկարէն դուրս մնան: Կարեւոր

– ԳԱՂՈՒԹԷ ԳԱՂՈՒԹ –

ՊԷՅՐՈՒԹԻ Թէքէեան Կեդրոնին մէջ, Յունիս 20-ին, գրական հանդիպում մը տեղի ունեցած է նուիրուած բանաստեղծ, արձակագիր, պատմաբան, «Շիրակ» ամսագրի խմբագրութեան անդամ՝ Լեւոն Վարդանի, անոր ծննդեան 70-ամեակին առթիւ ընծայուած «Կրկին հեծութիւն» քերթուածներու հաւաքածոյին առթիւ։ Երեկոյթը կազմակերպած էր ԹՄՄ.-ի Շիրակ [...]ակումբը եւ ամսագիրը։ Խօսք առած են ամսագրի պատասխանատու խմբագիր Գանիէլեան, Հայաստանցի բանաստեղծ՝ Հենրիկ Էդոյեան, տոքթոր Թորանեան։ Վերջին խօսքը եղած է Լեւոն Վարդան։ Հեղինակին գործերէն արտասանած է Արփի Բարդիեան։

***

ՄԻԱՑԵԱԼ -- ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ հիւսիս-[...]ին - Ամերիկայի Արեւելեան Շրջանի եւ Գանատայի Թեմին առաջնորդին որոշումով նոյն Թեմին առաջնորդական փոխանորդ նշանակուած է Խաժակ Ծ. Վրդ. Յակոբեան որու կը յանձնուի նաեւ Մոնթրէալի Ս. Յակոբ Մայր Եկեղեցւոյ հոգեւոր տեսուչի պաշտօնը, Փոխանորդը իր պաշտօնին ձեռնարկած է Օգոստոս 5-ին։ Իր նախկին պաշտօնն էր Նիւ - Եորքի Ս. [...] ամէնօրեայ դպրոցի տեսչութիւնը զոր վարելու հրաւիրուած է [...] Գաբրիէլեան։ Խաժակ Ծ. Վրդ. Յակոբեան ծնած է հիւսիսային Սուրիոյ Սպիտակ Բլուր աւանի Հարոնագրիւր գիւղը 1945-ին։ Փոքր տարիքէն Լիբանան փոխադրուած է եւ յաճախած Պէյրութի Հայաշէն Թաղամասի Ազգային Թորգոմեան Վարժարանը։ Մեծի Տանն Կիլիկիոյ Դպրեվանքը ընդունուած է 1961-ին եւ 1968-ին կուսակրօն քահանայ ձեռնադրուած է ձեռամբ հոգելոյս Տաճատ Արք. Ուրֆալեանի։ Վարած է հսկիչի եւ ուսուցիչի պաշտօններ Դպրեվանքը, ապա, 1971-ին Բերիոյ Թեմի Ազգային Խառն Ժողովին կողմէ առաջնորդական փոխանորդ ընտրուած է Սուրիոյ հիւսիսային (Ճէզիրէ) շրջանը։ 1979-ին վերադարձած է Լիբանան, միաժամանակ հետեւելով բարձրագոյն ուսման եւ վարելով ուսուցչութեան եւ մատակարարութեան պաշտօններ Կաթողիկոսարանէն ներս։

***

ՔԱՍԼԻՔԻ (Լիբանան) Ս. Հոգի Համալսարանի երաժշտութեան ամպիոնի հանդիսասրահին մէջ, Յունիս 12-ին տեղի ունեցած է Թամար Թորոսեանի դաշնակի Բ. կարգի քննութիւնը։ Ան Վ. Թէքէեան երաժշտանոցի առաջին աշակերտն է որ կը ներկայանայ նուագարանի մը Բ. կարգի քննութեան։ Ան քննութեան ներկայացուցած է Մոսկովսկիէ, Պախէ, Պէթհովընէ եւ Շումանէ գործեր եւ յաջողութեամբ անցուցած է քննութիւնը։

[...]տուլին։ Լուսանկքի մարդ դառնան, [...]նուլին։ Ձախնդարեն երկու նախա[...]ներու միասնութիւնն ու առանձնու[...]իւնը։

[...]ւ սակայն անո՛նք են, լուսանկարէն [դ]ուրս մնացո՛ղներն են, որ մեծամասնու[թ]իւն կը կազմեն, Իրենց ճակատագիրն [է] դուրս մնալ լուսանկարի գործիքին [...]եւողութեան ու հետաքրքրութեան դաշ[տ]էն։ Իրենց ճակատագիրն է՝ նստիլ հոն, [...] սրահին մէջ, եւ տեսնել թէ ի՛նչպէս [...]իւրաւոր լրագրողներ չեն հետաքրքրուիր իրենցմով։ Տեսնել թէ ի՛նչպէս [...] հարիւրաւոր լրագրողները իրարու [...] կը կոխեն միայն երկու նախագահ[ներ]ը լուսանկարելու համար։ Այդ անտեսումը կ'անհանդստացնէ՞ զիրենք, կը տառապեցնէ՞։ Յաջորդ օր անոնք կ'ընդվզի՞ն [...] կը տեսնեն որ իրենք դարձեալ չեն [...] մուտք գործել լուսանկարէն ներս։ [...] կը զգա՞ն, երբ կը մտածեն թէ ի[...] ալ հոն էին այդ պահուն, երկու [...] անդին, լուսանկարի տեսադաշտէն [դու]րս մնացած փոքրիկ տարածութեան մէջ։

Է՛հ, անշուշտ աշխարհի վրայ չկայ տխմար լրագրող մը, որ երկու նախագահները անտեսէ եւ լուսանկարէ միայն միւսները, լուսանկարէ լուսանկարէն դուրս մնալու կոչուածները։

Բայց ամբողջ աշխարհ լեցուն է լուսանկարէ դուրս մնացած մարդոցմով։ Ո՛չ միայն նախագահական պալատներու մէջ, ո՛չ միայն քաղաքական թատերաբեմերու վրայ, այլ ամէնուրեք, ամէն ծակ ու ծուկէ ներս, ամէն հաւաքականութեան մէջ, նոյնիսկ ամէն տունէ ներս։ Կեանքը լեցուն է լուսանկարէ դուրս մնացած մարդոցմով, որոնք տեսադաշտէն դուրս կը վռնտուին պարզապէս անոր համար որ իրական կամ կեղծ գագաթ մը կայ անոնց քով։ Գագաթը չարտօներ որ ցած մնացածները ուշադրութիւն գրաւեն, տեսնուին։ Գագաթը գագաթ կը դառնայ շնորհիւ այն միւսներուն, որոնք պէտք է ցածը մնան, կամ մնան՝ լուսանկարէն դուրս։

Ռ. Հ.

ԱՄԱՌ

ԱՌՈՂՋ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄԱՂԹԱՆՔՈՎ

ՓԻՆԿ -- ՓՈՆԿ

Բոլոր տարիքներու յարմար խաղ մը, որ կը վարժեցնէ արագաշարժութեան։ Բարոյական գետնի վրայ խաղացող ինքզինք կշռելու եւ տիրապետելու կը վարժուի։ Սակայն ունի զանազան անպատեհութիւններ. որոնցմէ՝ յոգնութիւն, արթնութեան կորուստ եւ մանաւանդ ըմբռնողութեան նուազում։

***

ԼՈՂԱԼ

Յարմար՝ բոլորին։ Մարմնի բոլոր մըկաններուն միջեւ ներդաշնակում կը ստեղծէ։ Լողորդը կը վարժուի տոկալու եւ շարունակելու մինչեւ «ծայրը» հասնելու ձգտումով ... Միակ անպատեհութիւնը՝ մկաններու պրկում։

***

ԹԵՆԻՍ

3 տարեկանէն սկսեալ կարելի է թենիս խաղալ, բայց որոշ տարիքէ մը ետք բժըշկական քննութիւն մը պէտք է անցընել։ Բարոյական գետնի վրայ կը վարժեցնէ՝ կեդրոնացման, ճշգրտութեան եւ մրցակցութեան։ Անոր անպատեհութիւններէն է՝ ճնշում ողնայարին վրայ, եւ ծունկի ու ոտքի կոճի վնասներ։

***

ՎՈԼԷՊՈԼ

12 -- 13 տարեկանէն ետք կարելի է խաղալ։ Այս խաղը կը վարժեցնէ թեթեւ, արագ, եւ ճկուն ըլլալ։ Բարոյական գետնի վրայ՝ ըլլալ ճշգրիտ եւ ճկուն։ Յաճախակի վնասներէն է ոտքի կոճի վնասները, ինչպէս նաեւ՝ ձեռքերուն, ափերուն եւ ուսերուն վնասները։

***

ԾԱՆՐԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

17 տարեկանէն ետք պէտք է այս մարմնամարզանքին ձեռնարկել։ Անիկա կը բարելաւէ մկանային կարողութիւնը, բարոյական գետնի վրայ կամք եւ շարունակականութեան ոգին կը փոխանցէ։ Այս մարմնամարզանքը խիստ կարեւոր է կատարել մարզիչի մը հսկողութեան տակ։ Անոր անպատեհութիւնը՝ ծունկերու մակարդակի վնասներ, տրուած ըլլալով որ երկաթներուն ծանրութիւնը ուղղակի ծունկը կը կրէ։

***

ՁԻ ՀԵԾՆԵԼ

Չորս տարեկանէն կարելի է սկսիլ ձի հեծնելու։ Շատ լաւ կը զօրացնէ սրունքներու վերի բաժինը եւ կռնակին մկանները։ Կը վարժեցնէ ճշգրտութեան եւ անասուններու հանդէպ սէր կ'արթընցընէ։ Անոր միակ անպատեհութիւնը՝ յանկարծակի անկումներ, որոնք կրնան ֆիզիքական շարժման արգելք հանդիսանալ եւ կամ պարզապէս մահացու ըլլալ։

***

ՀԵՆՏՊՈԼ

11 տարեկանէն կարելի է այս խաղը խաղալ։ Թեւերու եւ սրունքներու մկանները կը զօրացնէ եւ միեւնոյն ժամանակ ճշգրտութիւն եւ կեդրոնացում կը շնորհէ։ Միակ անպատեհութիւնը՝ գնդակի հարուած մը ստանալ ուղղակի դէմքին...

***

JET SKI

14 տարեկանէն սկսեալ այս «զբաղում» մարզանքը կը զօրացնէ սրունքներուն վերի բաժնի մկանները եւ մասնաւորաբար կռնակին մկանները։ Անոր օգտակարութիւնը բարոյական մարզէն ներս ծովուն հետ շփումը եւ ազատ հովուն դէմ գտնուիլն է, Անոր անպատեհութիւններէն է մէջքի ցաւը եւ պէտք է զգոյշ ըլլալ լողացողները չկոխկրտելէ։

ՉՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ՁԵՌԱԳԻՐՆԵՐԸ ՉԵՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՒԻՐ

ԿՂԶԻՆ ԵՒ ՄԻ ՄԱՐԴ

–վիպակ–

ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ

«Այս երկտողը գրում եմ խաղողի հը[...] մի պնակի առջեւ նստած։ Տանտէ[...] լուսարացին իջեր է պարտէզ, քաղել [...] դրել նախաճաշիկիս սեղանին վրայ։ [...] զմայլելի պտուղ է խաղողը։ Ցօղի [...] կաթիլները դեռ վրան են։ [...]պէս հասկանում եմ Յոյներին, [...] ճակատագիրը կապում էին Դիո[...] հետ։ Հոգեկան հարբեցողութիւնը, [...]ը, բանաստեղծական եւ կրօնական թրիչքը, մահը եւ վերածնունդը։ Ա[...] մի էութիւն, ինչպէս նաեւ ամէն մի [...] իր յատուկ առաքելութիւնը ունի [...] աշխարհում։ Արեւը խօսում է երկ[...] իր ջերմ եւ կենսարար լեզուով։ [...] իր բոց - բառն է»։

«Չե՞ս կարծում որ մենք կորցրել ենք [...] ձայնը ունկնդրելու մեր կարո[...]թիւնը, նրա սուր զգայնութիւնով աշ[...] չափելը, նրա գաղտնի խորհրդով [...] միանալու թափը»։

«Զմռսանա, վաղը սպասում ենք քեզ»։

Հանուել եմ, մտել անկողին։ Ձեմ կարողանում քնել։

Մտածում եմ այս կղզու մասին։ Կան վայրեր, որ կլանում են քեզ եւ կան վայրեր, ուր դու գտնում ես քո մարդկային չափը։ Կարելի չէ այդ կղզին մտածել առանց մարդկային ներկայութեան, ինչպէս մտածում ենք անապատը կամ արեւադարձային անտառը։ Կղզին պէտք ունի մարդկային ներկայութեան, իր ներքին բնոյթը դրսեւորելու համար։

Իր երկինքը յաճախ խառն կապոյտից անցնում է գմրուխտի, ապա, պայծառ փերուզայի ջրերում լուացուելով, տտխճանաբար անհետանում է։ Ամառը եւ աշնան։ Ձմեռը նրա գոյները սրանում են եւ ամպերի լեզուն փոխւում է։ Նրանք գործ են ածում զօրչ եւ մանուածոյ մի քերականութիւն։

Ինչպէս շատ ուրիշ տեղեր, նա չի յարձակւում եկուորի վրայ եւ չի աշխատում նրան իւրացնել, սեփականացնել։ Նա ինքը՝ չնայած իր մնայուն, անփոփոխ բնոյթին՝ յարմարւում է քեզ, ինչպէս խելացի հիւրասէրը յարմարւում է հիւրի բնաւորութեան եւ սովորութիւններին։

Որեւէ Ոդիսեւս կարող է գալ, պառկել իր ծովափին, «խմել իր գինին եւ ուտել իր սոխը»։ Գալ, պառկել, ազատագրուել վշտից եւ ազատագրուել կրքից։

Կղզին ապրել է պատմութիւնից մի քիչ կողմ քաշուած։ Պայծառ եւ տխուր։ Մենակ, ինչպէս ապրում են բանաստեղծները, աստղերը եւ հովիւի սրինգից դուրս եկած մելամաղձոտ հառաչները։

Հինաւուրց ցեղերը տեղափոխութիւնների կամ գաղթի ժամանակ իրենց հետ տանում էին նաեւ իրենց «տարածութիւնը», որ հայրենիք էր։ Սահման էին քաշում եւ զոհաբերական սեղանը զետեղում կենտրոնում։ Իրենց հետ կրում էին իրենց տարածութիւնը եւ ժամանակը։

Վերա-էանում էին։

Այդ ծիսակատարութիւնը մեր արեան մէջն է։ Մենք տարագրւում ենք մեր տարածութեան հետ միասին։

Բայց ահա՝ ո՞ւմ եւ ի՞նչպէս պիտի զոհաբերենք։

Լոյսը մարում եմ, աշխատում քնել։

- Մեկնելու օրերը մօտենում են, - ասում է Ստեֆանը. - Լսեցի որ Լաուին ստիպուած է հիւանդ կինը տեղափոխել Լոնտոնի մի բուժարանը։ Հելենան, ինչպէս գիտես, արդէն մեկնել է։ Միլտըրէտի մտադրութիւնները դեռ անորոշ են։ Ինքը այդ մասին կ'ասի. շուտով պիտի գայ։ Այսօր գնանք, մի լաւ պտոյտ անենք։ Մեր գիւղի վերի մասերը չես տեսել։ Մէկ էլ ո՞վ է իմանում՝ ո՞ւր պիտի հանդիպենք։ Եկ Լոնտոն, անպատճառ եկ Լոնտոն։ Խոնաւ է, մշուշոտ է, բայց գիտե՞ս, հսկայական շունչով քաղաք է։ Վարժուես՝ կը սիրես։

Գիւղի վերի ճանապարհից անցնելուց յետոյ, հասնում ենք փոքրիկ մի հրապարակ եւ նստում այնտեղ զետեղուած մարմարէ մի նստարանի վրայ։ Այնտեղից բացւում է մի մեծ տեսարան։ Մի կողմից՝ Թերակղզու նման երկարող վայրը, իր բոլրգանման ժայռակոյտով, իր նեղ եւ անհանգիստ ծովեզրքով, իր տափակ տանիքներով, իսկ միւս կողմից՝ ձորը եւ ձորի ետեւից վեր կարկառուող գիւղը, իր սեպ եւ ցից պատերով։

Միլտըրէտը եկել է, գունաւոր մի թաշկինակ գլխին կապած։ Աջ քունքի վրայից կապտաւուն մի երակ է վայր իջնում, այտերը քիչ քաշուել են եւ աչքերը խորացել։

- Տխուր ես երեւում, -- ասում եմ՝ ուշադրութեամբ նրա աչքերի մէջ նայելով։

- Գնացել էի Լաուին տեսնելու։ Ուրախ բաներ չեն։

- Չէ՛, անշուշտ,

- Ի՞նչ եղան միւսները։

- Չեկան։ Մենք շարունակենք մեր ճանապարհը։

Հրապարակը լքում ենք, դէպի Լաւ Հաց կոչուած վայրի զառիվերը առնում։ Ապա նեղ կածաններով մագլցում ենք ժայռերի կողքից եւ, բաւական քայլելուց յետոյ, հասնում ենք Մըրկահար անուանուած տեղը։

Աղքատ, քամիներից անդադար ծեծուած մի փոքրիկ գիւղակ է։ Շուրջը այգիներ կան, մեծ մասամբ որթենիներ, բայց նաեւ թզենիներ եւ ընկուզենիներ։ Մի պարտէզի մօտ, որի միջից պիտի անցնենք, երկու աղջիկներ են կանգնել։ Մէկը յունական արձանի է նմանում։ Հելլենական այն Կորէներից մէկը, որով սկսւում է յունական արուեստի պատմութիւնը։ Փորձեցինք հետը խօսքի բռնուել. կարմրեց, ամաչեց, փախաւ։ Ետեւից նայեցինք. երագ թռաց։ Ասում են, որ կղզու ամենագեղեցիկ աղջիկները այս կողմերումն են եւ որ, առհասարակ, տեղական բնակչութիւնը, հին ժամանակներից ի վեր, յայտնի է իր բացառիկ առողջութիւնով եւ կայտառութիւնով։

Նախ՝ որոշել էինք բլուրների վրայով հասնել մինչեւ Թերակղզու վրայ իշխող գիւղը, բայց կէս ճանապարհից ետ վերադարձանք։ Կղզին հազար դէմք ունի։ Ամէն քայլափոխին մի նոր տեսարան է բացւում։ Մէկ կողմից՝ սեպ, հսկայական ժայռեր, որ վիթխարի բերդի նման պատեր են վեր ցցում, եւ միւս կողմից՝ խոր ընկած ձորեր, որ յաջորդում են մէկը միւսին, մինչեւ ծովափը։

(Շար. 43)

(Շար. Ա. էջէն)

Վազգէն Մանուկեան -- (ԱԺՄ) 39·113
Սերգէյ Բաղալեան -- (Համայնավար կուսակցութիւն) 36·751
Պարոյր Հայրիկեան -- (ԱԻՄ) 30·343
Լենսեր Աղալովեան -- (Արցախ -- Հայաստան) 29·507
Արամ Սարգսեան (Հայաստանի Դեմոկրատ կուսակցութիւն) 27·666
Աշոտ Մանուչարեան (Գի Ար ՔՄ) 25·192

Ներկայացուած ստորագրութիւններու վաւերականութիւնը ստուգելէ ետք Կեդր. ընտրական յանձնախումբը արդիւնքները եւ թեկնածուներու արձանագրութեան մասին հաղորդագրութիւնը կը հրապարակէ Օգոստոս 23-ին:

***

Բ. ԱՐԱՐՔՑԵԱՆ ԸՆԴՈՒՆԱԾ ԿԱԶԻՄԻՐՈՎՆ ՈՒ ԵՈՒԿԱԼՈՎԸ

Ազգային ժողովի նախագահը Օգոստոս 2-ին ընդունած է Ռուսաստանի նախագահին անձնական ներկայացուցիչ եւ Ղարաբաղի հարցին վերջերս նոր միջնորդ կարգուած Եուրի Եուկալովը: Բաբգէն Արարքցեան գնահատելով նախկին միջնորդ Կազիմիրովի կատարած աշխատանքը, անոր յաջողութիւն մաղթած եւ յոյս յայտնած է որ իր յաջորդն ալ նոյնքան արդիւնաւէտ գործունէութիւն կ՚ունենայ:

***

ՆԵՐՔԻՆ ՆԱԽԱՐԱՐԸ ԸՆԴՈՒՆԱԾ ՖՐԱՆՍԱՅԻ ԴԵՍՊԱՆԸ

Վ. Սիրադեղեան ընդունած է Ֆրանսայի Երեւանի նոր դեսպանը Միշէլ Լըկրան, զանազան նիւթերու շուրջ զրոյց ունենալով անոր հետ: Շօշափուած են ապօրինի գումարներու օրինականացման, դրամանենգութեան, թմրեցուցիչի վաճառքի, գէնքի ապօրինի առեւտուրի վտանգներն ու անոնց դէմ միասնական պայքարի կարեւորութիւնը:

Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 PARIS
SIRET: 51027317 A R. C. Paris
Commission paritaire: N° 55935

«ՅԱՌԱՋ»Ի ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

71ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻՒ

Մարի եւ Շարլթ 1000 Ֆր. գնահատելով թերթը որ «գրեթէ չորս սերունդի համար "ծառայեց" իբրեւ փարոս ազգային դետնի վրայ»:

RENTREE 1996

Où inscrire votre enfant ? Pensez à

L'ECOLE PRIVEE HAMASKAINE

ENSEIGNEMENT BILINGUE ARMENIEN - FRANÇAIS
DE LA MATERNELLE A LA TERMINALE
PRIMAIRE et COLLEGE
sous contrat

Classes à petits effectitfs
Suivi des études personnalisé pour chaque élève
Avantage de présenter l'arménien en LV1 et en spécialité (coefficient 7ou8)

INSCRIPTIONS
à compter du 12 août, sur rendez-vous
Adresse
185, chemin des Sables Jaunes
13012 Marseille
Tél. : 91 93 75 25
Fax : 91 88 22 65

N'oubliez pas votre 15 AOUT
à Saint - Raphaël
au HOME ARMENIEN
avec
Marten YORGANTZ

ԿԱՊՈՅՏ ԽԱՉ

ՄԵԾ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ ԵՒ ԽԱՂՈՂՕՐՀՆԷՔ

Կիրակի, Օգոստոս 11-ին, ամբողջ օրը, Պէլֆոնթէնի (Ժիւրա) կայանը:

Առաւօտեան, Խաղողօրհնէքի արարողութիւնը կը կատարէ՝
ՄԿՐՏԻՉ ՔԱՀԱՆԱՅ ՊԱԼԱՊԱՆԵԱՆ

Պիւֆէ -Գեղարուեստական յայտագիր կայանի երախաներուն կողմէ

-- Հանելի անակնկալներ

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆ

ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

Մելգոնեան Կրթական Հաստատութեան 1996 - 1997 ուսումնական տարեշրջանի մուտքի քննութիւնները տեղի կ՚ունենան Երկուշաբթի եւ Երեքշաբթի, Օգոստոս 12-ին եւ 13-ին, ժամը 10-ին, Հ. Բ. Ը. Միութեան Փարիզի գրասենեակին մէջ
11, square Alboni, 75016 Paris

Հեռաձայն. -
45 - 20 - 03 - 18

Քննութեանց արդիւնքները կը հաղորդուին մինչեւ Օգոստոս 30:

ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ
Մ. Կ. ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ

1954 ——— 1996
PÈLERINAGE ANNUEL
42ème Anniversaire
ST-GRÉGOIRE à TALLARD
1954 ——— 1996

Une messe sera célébrée selon le rite de l'Eglise Apostolique Arménienne

ՏԱՐԵԿԱՆ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ԹԱԼԱՐԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ

Dimanche 15 Septembre

sous l'égide du Conseil Diocèsain de l'Eglise Apostolique Arménienne du Midi de la France
et le concours de l'Association Culturelle des Arméniens de Gap et des Hautes Alpes
Sous la Présidence de
MGR LAGRANGE, évêque de Gap, et de **MGR DARON GEREJIAN, Vicaire Général des Arméniens du Sud de la France,**
le Rév. Père VARTAVAR KASPARIAN célébrera la messe à 10 heures 30, en présence du Clergé de Tallard et de ses environs.
La messe sera chantée par la Chorale de l'Eglise
Serpotz Tatéos-Bartoughiméos

à 13 heures Un repas fraternel réunira les pèlerins dans la Salle Polyvalente de Tallard, en présence des autorités religieuses et civiles.

Des autocars, suivant le nombre des inscrits, seront mis à la disposition, pour des personnes qui ne peuvent se rendre par leurs propres moyens.

Départ à 7 heures précises

Pour tous renseignements et réservations s'adresser :

— **MARSEILLE** - Cathédrale Arménienne du Prado, Tél. : 91 77 84 70.
— **SAINT-ANTOINE** - Eglise Saint Tatéos Tél. : 91 65 56 75
M. Tashan Tél. : 91 65 54 45.
— **BEAUMONT** - Eglise Saint Grégoire L'Illuminateur, Tél. : 91 93 13 50.
— **CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE** - Tél. :91 93 30 08.
— **TOULON - ABRIS CLUB** - Tél. : 94 27 10 51.
— **Pour toutes autres régions - Ass. Culturelle des Arméniens de Gap** - Tél. : 92 51 71 80 (heures de repas) 92 51 00 87.

Prix du Trajet de Marseille
Aller-retour seul 100 Frs
Repas seul 120 Frs
Aller-Retour et repas compris 220 Frs

Pour la vente d'objets demander l'autorisation à l'Association de Gap.

UGAB . . . UGAB . . . UGAB . . . UGAB

«UGAB - 90»

A l'occasion de la célébration de son 90ème anniversaire, l'UGAB organise un grand
Gala de Bienfaisance
au profit des *TABLES DE L'UGAB*, en Arménie
le Vendredi 18 Octobre à 20 heures
au Pavillon Dauphine - 75016 Paris
P.A.F. : 750 Frs
Rens. : 45 20 03 18 / 42 27 12 26.

UGAB . . . UGAB . . . UGAB . . . UGAB

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Ի նպաստ «ՀԱՅԱՍՏԱՆ» Հիմնադրամին ԿԻՐԱԿԻ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 29, ԺԱՄԸ 15-ԻՆ, Իսի լէ Մուլինօ:

***

Իսիի Հայ Առաքելական Եկեղեցւոյ Մատաղօրհնութիւնը եւ շինութեան 21-րդ տարեդարձը՝
ԿԻՐԱԿԻ, ՆՈՅԵՄԲԵՐ 10-ԻՆ

***

Սիփան - Կոմիտաս երգչախումբի վարչութիւնը կը խնդրէ նկատի առնել իր յառաջիկայ համերգը որ տեղի պիտի ունենայ Շաբաթ, Նոյեմբեր 30-ին, Փարիզ, Opéra Comique — Salle Favart-ի մէջ:
Յայտագիրը յատկացուած է Կանաչեանի եւ Ափրիկեանի գործերուն:

ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

«ՅԱՌԱՋ» ՄԱՏԵՆԱՇԱՐ

ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ
ՕՐԵՐ ԵՒ ԺԱՄԵՐ 100 Ֆր.

ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐ
ՆԱՀԱՆՋԸ ԱՌԱՆՑ ԵՐԳԻ 80 Ֆր.
ԲԱՑ ՏՈՄԱՐԸ 75 Ֆր.
ԿՐԱԿԸ ԿՈՂՔԻՍ 75 Ֆր.
ՍԻՐՏ ՍՐՏԻ 150 Ֆր.

ՀՐԱՆՏ ՍԱՄՈՒԷԼ
ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԵՐ 80 Ֆր.

ԽԱՉԻԿ ԹԷՕԼԷՕԼԵԱՆ
ՍՓԻՒՌՔԻ ՄԷՋ 75 Ֆր.

ԵՒ

«ՅԱՌԱՋ - 50»
(Ծաղկաքաղ 50-ամեայ հաւաքածոյէն) 120 Ֆր.

Դիմել «ՅԱՌԱՋ»ի:
Թղթատարի ծախք՝ 25 Ֆր., Հատոր գլուխ:

ՀԻՆԳՇԱԲԹԻ
ՕԳՈՍՏՈՍ 8
JEUDI
8 AOUT
1996

LE NUMERO : 5,00 F.

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1925-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE-FONDE EN 1925
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 47. 70. 86. 60 — TELEX : HARATCH 280 868 F
— FAX : 48. 00. 06. 70 —
C.C.P. PARIS 15069-82 E

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 1.100 Ֆ. — Վեցամսեայ : 560 Ֆ.
Արտասահման : Տար. 1.400 Ֆ. (ամէնօրեայ առաքում)
1.250 Ֆ. (շաբաթական առաքում) — Հատը : 5,00 Ֆ.

...ՐԴ ՏԱՐԻ - ԹԻՒ 18.914 — Fondateur SCHAVARCH MISSAKIAN — 72e ANNEE — N° 18.914

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՈՆԻ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆԸ ՈՐՊԷՍ ԿԱՇԱՌԱԿԵՐՈՒԹԵԱՆ ԲՈՅՆ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՆ ՄԷՋ

ԴԵՍՊԱՆԸ ԿԸ ՀԵՐՔԷ

Գերմանական «Ֆոքուս» շաբաթաթերթին 32-րդ թիւին մէջ «Հարուստ պահեստարան մը» խորագիրով շատ վարկաբեկիչ էջ մը կայ Պոնի Հայաստանի դեսպանին վերագրուած դրամական գործառնութիւններու մասին։

Ըսուածը այն է որ դեսպան Ֆէլիքս Մամիկոնեան կաշառակերութեան համակարգ մը հաստատած է որուն եւ Հայաստանէն Գերմանիա արտագաղթածներու շնորհիւ ոչ արհամարհելի գումարներ կը գրպանէ։

Քաղաքական ապաստանեալի օրինավիճակ ստանալու դիմում կատարող Հայաստանի քաղաքացիներ ապօրինի ձեւերով Գերմանիա մուտք կատարելէ ետք կ'ոչնչացնեն իրենց պաշտօնաթուղթերը· գերման իշխանութիւններն ալ ստուգելու համար անոնց ինքնութիւնը կը ստիպուին դիմել Հայաստանի դեսպանատան։ Այս ընթացքն է որ եկամուտի շահաբեր աղբիւր ստեղծած է դեսպանին։ Ըստ գերմանական թերթին, ան ապաստանեալի թեկնածուներուն մասին իրականութիւնը յայտնելու համար պատկան իշխանութիւններու, անոնցմէ ամսական միջին հաշուով 200 մառք կը պահանջէ, առանց որեւէ ստացագիր տալու։ Եւ այնքան ատեն որ գերման պատասխանատու մարմիններ չեն կրնար հետաքննութեան դիմել այդ եկուորներուն դէմ անոնք որոշ ժամանակի մը համար կը փրկուին արտաքսումէ։

Ֆ. Մամիկոնեան, կ'ըսուի նաեւ թէ 300 -- 6000 մառքի հասնող գումարներ կը ... տեղացիներու հետ ամուսնութիւն կնքող Հայաստանցիներէ, այս վերջիններուն սպառնալով որ եթէ չվճարեն կը ... իրենց կնքած կեղծ ամուսնութիւնը։

Դեսպանը հերքած է այս պնդումները, ըսելով. «ոչ մէկ նման աղտոտ գործ կատարած ենք»։

Թերթը կը տեղեկացնէ նաեւ թէ 1995-ի ընթացքին Հայաստանէն 3383 հոգի ապաստանեալի օրինավիճակ ունենալու դիմում ներկայացուցած են գերման իշխանութիւններու։ Ընդունուածներու համեմատութիւնը 2%-ի չափ է միայն։ Ասիկա 65 - 66 հոգինոց խումբ մը կը ներկայացնէ։ Մնացեալ 3300-նոց զանգուածը դժուար չէ նկատել թէ ինչպէս «հարուստ պահեստարան» մը կը կազմէ եթէ ճիշդ է ըսուածը որ դեսպանատան լռութեան փոխարժէքը առնուազն ամսական 200 մառք է։

Թուրք մամուլէն «Սապահ» (Օգոստոս 6) արձագանգած է նիւթին, խորագրելով «Հայ դեսպանին կաշառակերութեան մեղադրանք»։

* **

Կը մնայ մաղթել որ այս աւելի քան անհամ պատմութիւնը հիմք չունենայ, դեսպանին հերքումը հիմք ունենայ, որքան ալ դժուար ըլլայ հաւատալ թէ այս ամբողջը միայն գերմանական թերթին երեւակայութեան արդիւնքն է։ Ծուխ չկայ առանց կրակի եւ նման «ծուխեր» աւելի քան վարկաբեկիչ են անկախ Հայաստանի եւրոպական ներկայացուցչութեան մը համար։

ԵՐԵՒԱՆ — ՀԵՌԱՏԻՊ — ՓԱՐԻԶ

«ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Օգոստոս 6)

ՆԱԽԱԳԱՀԻՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ

Նախագահ Լ. Տէր - Պետրոսեան Օգոստոս 5-ին ընդունած է Մինսկի խումբին Գերմանիոյ ներկայացուցիչ Ֆրանք Լամպսը։ Հանդիպումին ներկայ եղած են Հայաստանի եւ Գերմանիոյ դեսպանները։ Քննարկուած է ղարաբաղեան խնդրին բանակցութիւններուն ընթացքը։

* **

ԱԹՈՄԱԿԱՅԱՆ

Սկսած են աթոմակայանին երկրորդ չերթին ստուգումներն ու չափումները։ Այդ կայանը պիտի դադրեցնէ աշխատանքը որպէսզի կարելի ըլլայ վառելանիւթը նորոգել, ապահովութիւնը աւելցնելու միջոցներու ձեռնարկել եւ նորոգութիւններ կատարել։

* **

ԱՐՄԷՆՓՐԷՍ -- ՌՈՅԹԸՐ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ

Երկու գործակալութիւններուն միջեւ ստորագրուած պայմանագրով մը Արմէնփրէս Հայաստանի մէջ մենաշնորհը կ'ունենայ արբանեակային ուղիղ կապով Ռոյթըրէն ստանալու համաշխարհային կարեւոր պատահարներու լուսանկարները։ Օրական կը հասնին 100 - 120 լուսանկարներ որոնցմէ կրնան ընտրել հայաստանեան լրատուները։

* **

ԴՐԱՄԱՏՆԱՅԻՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ

Հայաստանի կեդրոնական դրամատուն հրաւէրով Երեւան այցելած է պաղէստեան միջազգային կոմիտէի կեդր. եւ Արեւմտեան ափրիկէի դրամատնային հսկիչ կոմիտէի նախագահը։ Համաձայնութիւն գոյացած է դրամատնային զանազան մարզերու մէջ գործակցութեան եւ մասնագէտներու փոխանակումի։ Հիւրը հանդիպումներ ունեցած է նաեւ Հայաստանի կարգ մը դրամատուներուն ներկայացուցիչներուն հետ։

* **

Ջերմուկի առողջարաններէն մէկուն տրուած է բժիշկ, մանկավարժ ու այս մարզին մէջ կարեւոր ծառայութեան տէր փրոֆէսէօր Գերասիմ Աղաճանեանի անունը։ Ջերմուկ քաղաքին մէջ տեղի ունեցած է անոր յիշատակին զետեղուած տախտակին բացումը։

ՕՐՈՒԱՆ ՀԱՐՑԵՐ

ԵՒՐՈՊԱՅԻ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԻՊՐՈՍԻ ԳՐԱՒԸ

Կիպրոսի Եւրոպայի Միութեան անդամակցութեան հարցը 22 տարուան կնճիռը լուծելու նոր փորձերու պատճառ կ'ըլլայ։ Յուլիս 29 եւ 30-ին Մալթա եւ Կիպրոս այցելած էր եւրոպական հարցերու Ֆրանսայի նախարար Միշէլ Պառնիէ, քննարկելու համար երկու երկիրներու թեկնածութեան պարագաները։ Վերադարձած է Նիկոսիայէն այն համոզումով որ Կիպրոսի խնդիրը Եւրոպայի համար նոր փորձաքար մը պիտի ըլլայ քաղաքական կրնճիռի մը կարգաւորումի իր կարողութիւնը ցոյց տալու։ Կնճիռ մը որ Եուկոսլաւիոյ պարագային նման, զուտ եւրոպական ըլլալով հանդերձ, Միացեալ - Նահանգներ եւս կը յաւակնին խրատարարի դերին։ Գլինթըն մղած է նախ եւրոպական հարցերու նախարարը, ապա ՄԱԿ-ի իր դեսպանը որ ձեռք առնեն կիպրական թղթածրարը։

Կղզին շատ հեռու չէ վառօդի տակառի մը բնոյթէն։ Հիւս. Թրք. շրջանին մէջ կայ 35 հազարնոց մնայուն զօրաբաժին մը, հարիւրաւոր հրասայլերով եւ զրահակառքերով։ Կիպրացիներն ալ իրենց կարգին կարեւոր քանակութեամբ զէնք ու գնդամթերք գնած են։ ՄԱԿ-ի շուրջ հազար հոգինոց ուժ մըն ալ երկու համայնքներու միջեւ տեղ գրաւած է։

Նիկոսիա համակերպած է տարօրինակ այդ խաղաղութեան. գրաւման 22 տարուան ընթացքին կիպրացի Յոյները որոնց մէկ երրորդը հիւսիսային շրջանէն ապաստանեալներ են, յաջողած են հրաշք մը իրականացնել, իրենց գօտին բարգաւաճ կղզեակի մը վերածելով։ Ատոր առիթ տուած է արեւմտեան եւ ռուսական դրօսաշրջութիւնը, Լիբանանի եւ Միջին Արեւելքի երկիրներուն հետ առեւտուրը։ Յունական գօտիին մէջ տարեկան միջին եկամուտը անձ գլուխ 60 հազար ֆրանքի չափ է, ինչ որ աւելի է Յունաստանէն, Փորթուգալէն եւ կիպրացի Թուրքերէն։ Այս վերջիններուն նախագահը Տէնքթաշ չի կրնար անդիտանալ այս տուեալը։ Ան սակայն ամէն պատասխանատուութիւն կը ձգէ յատկապէս Եւրոպացիներուն վրայ, զանոնք ամբաստանելով որ Աթէնքի տեսակէտները կը պաշտպանեն։

Ֆրանսացի նախարարին հետ հանդիպումին ընթացքին Թուրք նախագահը դանգատած է որ Եւրոպացիները լքած են կիպրացի Թուրքերը, այսուհանդերձ չէ բացառած իր համայնքին Եւրոպայի Միութեան անդամակցութեան հաւանականութիւնը, առանց Թուրքիոյ անդամակցութեան նախապայմանին։

Ատոր համար պայման է որ նախնական համաձայնութեամբ մը երկու համայնքներու յարաբերութիւնները կարգաւորուին։ Ան կը մերժէ դաշնակցութեան տիպի լուծում մը ուր Թուրքերը որոնց թիւը եռակի նուազ է Յոյներէն, կրկին փոքրամասնութեան վիճակ պիտի ունենան։ Ան կը պահանջէ որ երկու համայնքներն ալ նոյն իրաւունքներուն տէր ըլլան եւ նոյն գերիշխանութեան, որովհետեւ «կիպրացի ազգ գոյութիւն չունի· ասիկա է որ Եւրոպացիները չեն հասկնար»։ Անոր երկրորդ պայմանն ալ Թուրքիոյ երաշխաւորութիւնն է իր համայնքին համար, քանի որ միայն Թուրքերը յանձն կ'առնեն մեռնիլ իրենց համար։ Իսկ Եւրոպան զինուորական ուժ չէ։

Երկու կողմերն ալ համաձայն են որ ժամանակի անցքը ոչ ոքի կը նպաստէ։ Կիպրացի Յոյները կը վախնան որ կացութեան տեւականացումը կղզին հիւսիսային մասին Թուրքիոյ կցումին պատճառ կ'ըլլայ։ Անոնք կ'ուզեն որ արտօնուի 1974-ին լքած իրենց հայրենական տուները։ Աթէնքի զօրակցութեամբ կը պնդեն որ Եւրոպացիները կղզին անդամակցութեան բանակցութիւնները տանին Կիպրոսի միջազգային ճանաչում գտած միակ ներկայացուցիչին՝ այսինքն իրենց կառավարութեան հետ։

Ամէն մարդ համաձայն է որ Միութիւնը չի կրնար դիմագրաւել կիպրական յաւելեալ կնճիռ մըն ալ երբ արդէն դժուարութիւն ունի վարելու յոյնեւթուրք յարաբերութիւնները։ Կարգաւորման բաղձաթիւ ձեւեր առաջարկուած են եթէ կողմերը քիչ մը բարի կամեցողութիւն ցոյց տան։

Հարցը նաեւ հոն է որ Եւրոպացիները ըստ սովորութեան տարիներով անգիտանալէ ետք խնդիրը, այսօր կը գործեն իրարմէ անջատաբար։ Բրիտանացիները յատուկ ներկայացուցիչ մը նշանակած են։ Իսկ Գերմանացիները եւ Ֆրանսացիները որոշ քայլ մը առած չեն։

Կիպրացիները կ'ուզեն եւրոպացի միակ ներկայացուցիչի մը հետ հանդիպում ունենալ, փոխանակ յաջորդական նախագահութիւններու թափին տակ յարմարցնելու։ Մ. Պառնիէ այդ ուղղութեամբ իրենց խոստացած է խօսիլ Փարիզի ու եւրոպական այլ մայրաքաղաքներու հետ։ Ֆրանսացի դիւանագէտի մը համաձայն Կիպրոսի հարցը Եւրոպայի Միութեան համար կրնայ առիթ մը ըլլալ անցեալի իր ձախողութիւններէն դաս քաղելու եւ ցոյց տալու որ կարող է արտաքին քաղաքականութեան մը եւ հաւաքական ապահովութեան մը սկզբնական քայլերը առնելու։

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՉԷՉԷՆՆԵՐԸ բուռն յարձակման անցած են եւ Օգոստոս 6-ին հինգ ռուսական թըռչուններ վար առած։ Չէչէն յարձակումը գլխաւոր երեք քաղաքներու վրայ է՝ Գուդերմէ, Արկուն եւ Գրոզնի, մինչեւ Խանկալայի օդակայանը։ Ելցին, որ Մոսկուա վերադարձած է, պահանջած է որ անկախապաշտ ղեկավարութիւնը դատապարտէ այս յարձակումը, այլապէս կը սպառնայ խզել բանակցութիւնները։ Տեղւոյն վրայ ռուս բանադնացները յայտարարած են թէ այլեւս աւելորդ կը գտնեն երկխօսութիւնը շարունակել։ Ազգութեանց նախարարը՝ Միխայլով կը գտնէ որ մայրաքաղաքին վրայ յարձակումը «մեծ մասշտաբի դըրգռութիւն մըն է»։ Բանակցութեանց ռուսական խմբակին պետն ալ կը խորհի որ այլեւս «ուրիշ ուժերու» հետ պէտք է խօսիլ քան՝ անկախապաշտներու։

ՇԻՐԱՔ, զանազան տեսակցութիւններէ ետք, արձակուրդի մեկնեցաւ Պրեկանսոնի բերդը ուր կայ նախագահներու ամարանոցը։ Հանրապետութեան նախագահը յաջորդաբար ընդունած էր Ալէն Մատըլէնը, Ֆիլիփ Սէկէնը, Ֆ. Լէոթարը, Մ. Ռոքարը, Փ. Մօրուան, հուսկ՝ Շ. Փասքուան։

ՖՐԱՆՍԱՅԻ մարզիկները որոնք մասնակցած էին Աթլանթայի Ողիմպիական-

(Շար-ը Կարդալ Դ. էջ)

ԱՐԺԱՆԹԻՆԱՀԱՅ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ԼԵԶՈՒԻ ԵՒ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ՊԱՐԱԳԱՆ

Վերջերս կատարուած (1995) հարցախոյզի մը արդիւնքները ցոյց կուտան, որ արժանթինահայ աշակերտներու գիտակցութեան մէջ կը խմորուի լեզուի եւ ինքնութեան բիւրեղացում մը։

Քանի մը տասնամեակ առաջ, նոյն տարիքի դպրոցական աշակերտներու մօտ զգալի էր երկուութեան տագնապ մը (Հայ ըլլալու կամ չըլլալու ներքին բախումը, Հայերէն խօսելու կամ չխօսելու ամէնօրեայ պայքարը, եւայլն), որ յաճախ բարդոյթի հանգամանք կը ստանար եւ ժխտական կամ դրական դրսեւորումներով կ'արտայայտուէր առօրեայ կեանքի մէջ։

Այսօր արդէն կարելի է չքացած նկատել հոգեբանական այս տագնապը։ Հայ ըլլալը բարդոյթ մը չէ այլեւս, եւ ո՛չ ալ Հայերէն սորվելու պարտաւորութիւնը ենթակայ է ժխտումի, չկամութեան, ամօթի կամ ինքնամոռացումի գործօններուն։

Ամէն ինչ պարզ է այսօրուան սերունդին համար. --

-- Ինքնութեամբ արժանթինցի են, բայց արմատներով Հայ։ Այսինքն արժանթինցի քաղաքացիներ, որոնք լիուլի համոզուած են, որ պէտք է հաւատարիմ մնան իրենց հայրերու կամ մեծ հայրերու աւանդութիւններուն, մշակոյթին ու պատմութեան։ (Պէտք է կարեւորութեամբ ընդգծել, որ այս եզրակացութիւնը հանուած է հարցախոյզէ մը, որ կատարուած է բացառաբար հայկական վարժարան յաճախող աշակերտներու վրայ։ Բոլորովին այլ հարց է հայկական վարժարան չյաճախողներու պարագան, որ անտեսուած մարզ է մեր համայնքային կեանքին մէջ)։

Վերեւ յիշուած հոգեբանական բիւրեղացումը ուրեմն կ'ընթանայ հետեւեալ ուղղութիւններով. --

Ա) Լեզուի մէջ՝ Հայերէնի եւ մասնաւորաբար հայերէնախօսութեան տեղատուութիւն՝ ի նպաստ սպաներէնի եւ սպանախօսութեան։

Բ) Ինքնութեան մէջ՝ անտարակուսելի արժանթինցիութիւն, հայեցի դրոշմով կամ խառնուրդով։

Հարցախոյզը կատարուած է 168 աշակերտի վրայ (15 -- 17 տարեկան, 66 մանչ, 92 աղջիկ), որոնցմէ միայն երեքը ծնած են Արժանթինէն դուրս։ Այս աշակերտներուն մեծ հայրերն ու մայրերը հարիւր տոկոսով եկած են դուրսէն (Թուրքիա, Յունաստան, Ռումանիա, Լիբանան, եւայլն), շատեր վերապրողներ են 1915-ի Ցեղասպանութենէն, իսկ ուրիշներ ուղղակի եկած են իրենց ծննդավայրէն Հայաստան, Կիլիկիա, եւայլն։ Գալով ծնողներուն, անոնք կը ներկայացնեն հետեւեալ համեմատութիւնները. --

68 առ հարիւր Արժանթին ծնած։
32 առ հարիւր դուրսը ծնած։

Պէտք է յիշել նաեւ, որ հարցախոյզի ենթարկուած աշակերտներու 22 առ հարիւրը ծնունդ են խառն ամուսնութիւններու (հայրը կամ մայրը՝ ոչ - Հայ)։

Հայերէնի եւ հայերէնախօսութեան պարագային յիշենք հետեւեալ յատկանշական համեմատութիւնները. --

ա) Աշակերտներու հայերէնի ընդհանուր (կարդալ, գրել, խօսիլ միասին առնուած) միջինն է 10-ի վրայ 6.21։ Այս միջինը հանուած է իրենց կողմէ նշանակուած ինքնագնահատումի նիշերով։ Հետաքրքրական պիտի ըլլար ունենալ ուսուցիչներու գնահատումը, ինչ որ առայժմ կը պակսի։

բ) Իբրեւ հաղորդակցութեան միջոց՝ գործածական լեզուի նախընտրութիւնը աշակերտներու մօտ կը պարզէ հետեւեալ պատկերը. --

75 առ հարիւրը կը նախընտրէ սպաներէն լեզուն։
12 առ հարիւրը Հայերէնը։
13 առ հարիւրը կը նախընտրէ գործածել երկու լեզուները։

գ) Մանկութեան սորված առաջին լեզուն (մայրենի լեզու) եղած է. --
63 առ հարիւր սպաներէն
18 առ հարիւր հայերէն
14 առ հարիւր սպաներէն -- հայերէն
5 առ հարիւր ուրիշ լեզու (անգլերէն, Թրքերէն)։

դ) Ծնողները հայերէն գիտե՞ն. --
40 առ հարիւր գիտեն
24 առ հարիւր չեն գիտեր
36 առ հարիւր մէկն ու մէկը (հայրը կամ մայրը) չի գիտեր։

Այս վերջիններու տոկոսը պէտք է գումարել հայերէնը չգիտցող ծնողներու տոկոսին վրայ, քանի որ երբ ընտանիքի մը մէջ մէկնումէկը չի գիտեր լեզու մը, տիրապետողը կ'ըլլայ հասարակաց լեզուն։

ե) Տան մէջ խօսուող լեզուն. --
78 առ հարիւր սպաներէն
22 առ հարիւր հայերէն կամ երբեմն հայերէն։

Հայերէնի եւ հայերէնախօսութեան մակարդակները շօշափող այս համեմատութիւններէն կարելի է հանել հետեւեալ եզրակացութիւնները. --

-- Ներկայ արժանթինահայ սերունդի հայերէնագիտութեան մակարդակը եթէ փայլուն չէ, այսուհանդերձ յուսահատական ալ չէ (6.21 ընդհ. միջին)։

-- Նոյն բանը չենք կրնար ըսել հայերէնախօսութեան մակարդակին մասին, քանի որ այս մարզը հսկայական նահանջի մէջ է, եւ սերունդը մեծաքայլ կը յառաջանայ դէպի ամբողջական սպանախօսութիւն։

-- Սպանախօսութիւնը միայն աշակերտներու մօտ ընդհանրացած սովորութիւն չէ, այլեւ հայ ընտանիքներու ջախջախիչ մեծամասնութեան մօտ։

Վերոյիշեալ նահանջը կը հաստատուի նաեւ առարկայական ուրիշ տուեալով մը. դարձեալ մեր կողմէ 1974-ին կատարուած հարցախոյզ մը ցոյց կուտայ, որ հայ ընտանիքներու 57 առ հարիւրը զուտ սպանախօս էր միայն, մինչդեռ 1995-ին այս համեմատութիւնը բարձրացած է 78 առ հարիւրի, ինչ որ կը նշանակէ սպանախօսութեան աւելի քան 20 տոկոսի աճ մը շուրջ քսան տարիներու ընթացքին։ Կը նշանակէ նաեւ հայախօսութեան աստիճանական նահանջը՝ ժամանակի ընթացքին։ Այս երեւոյթը շատ աւելի պերճախօս կը դառնայ, եթէ ըսենք որ վերջին քսան տարիներուն, հայերէնի ուսուցումը մեծ թափ ստացաւ Արժանթինի մէջ, առեղծուեցաւ հայ դպրոցներու քանակն լաւ կազմակերպուած ցանց մը։

Կը մնայ աւելցնել հետեւեալ խիստ ուշագրաւ եւ հետաքրքրական հանգամանքը։ Այն հարցումին, թէ «Ապագային պիտի ուզէի՞ր հայերէն սորվեցնել զաւակներուդ», աշակերտները պատասխանած են հետեւեալ ձեւով. --

Ոչ 2 առ հարիւր
Անորոշ 7 առ հարիւր
Այո 91 առ հարիւր

Բացի այն երեւոյթէն, որ առեղծուածային հակասութիւն մը կայ այս կէտին մէջ (որուն հանգամանքները քննելը դուրս կը մնայ այս յօդուածի սահմանէն) կը կարծենք, որ այստեղ պէտք է փնտռել ներկայ սերունդի ինքնութեան հարազատ նկարագիրը։ Նաեւ՝ հայ դպրոցի խաղացած կարեւոր դերը։

Հարցախոյզի այն հարցումները, որոնցմով կը շօշափուի աշակերտներու ինքնութեան որոնումը, թոյլ կուտան մեզի կատարել հետեւեալ հաստատումները. --

ա) Աշակերտներու գրեթէ լրիւ տոկոսը, 98 առ հարիւր, ինքզինք կը նկատէ արժանթինցի։

բ) Բայց նաեւ լրիւ տոկոսը անհրաժեշտ կը նկատէ հայ մշակոյթի, լեզուի եւ աւանդութիւններու պահպանումը եւ փոխանցումը։

գ) Ներկայ սերունդը ձերբազատած է զինք նախորդող սերունդները յատկանշող տագնապէն կամ երկուութեան բարդոյթէն։ Ո՛չ զգացական խնդիր ունի եւ ոչ ալ ազգային (հայ) խղճմտանքի հարց։ Հայ մշակոյթին ծանօթանալը իրեն համար բիւրեղացած համոզում է, իսկ հակառակը՝ հայերէն չգիտնալ, չսորվիլ, չխօսիլ, եւայլն յանցագործութեան կամ մեղքի համազօր չէ։

Այսպէս, Արժանթին հաստատուած Հայերու «արժանթինացման» հոլովոյթը ունեցած է հետեւեալ 3 հանգրուանները. --

ա) Առաջին սերունդը, որ չուզեց կամ չկրցաւ մերուիլ եւ անայլայլ պահեց հարազատ հողէն բերած իր ինքնութիւնը։

բ) Միջանկեալ սերունդը, որ տագնապեցաւ երկու ինքնութիւններու ցանցին մէջ։

գ) Ներկայ սերունդը, որ յանգած է քաղաքացիական յստակ եւ բիւրեղացած գիտակցութեան մը, ուր ներդաշնակուած են արժանթինեան քաղաքացիութիւնը եւ հայկական աւանդապահութիւնը։

Կազմաւորուելու վրայ է նոր ոգեկի հայ մը, որուն դժուար թէ համապատասխանէ ցարդ կիրարկուող սփիւռքահայ ոգեկումը եւ որ անհրաժեշտ կը դարձնէ մերձեցումի կամ կրթական նոր քաղաքականութեան մը որոնումը։

ՊԵՏՐՈՍ ՀԱՃԵԱՆ

Յուլիս 26, 1996
Պուէնոս -- Այրէս

ՄԱՐՄԱՐԱ

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՄԱՐԴԻԿ, ՈՐՈՆՔ ԼՈՒՍԱՆԿԱՐԷՆ ԴՈՒՐՍ ՄՆԱՑԱԾ ԵՆ

Բ.

Ամէն գագաթ գագաթ կը դառնայ շնորհիւ այն միւսներուն, որոնք ցածը կը մնան եւ չեն խանգարեր գագաթին վեհութիւնը, բարձրութիւնը, վեհափառութիւնը։ Գագաթային ամէն մարդ գիտէ որ ինք առանձինն պէտք է տեսնուի լուսանկարին մէջ, որովհետեւ ա՛յդ է խաղին օրէնքը։ Գագաթային ամէն մարդ գիտէ որ ամբոխը, այսինքն իր հանդիսատեսը, լուսանկարին մէջ բազմութիւն տեսնելէ չախորժիր։ Բազմութեան մէջէն անպայման մէկ քանի մարդ պէտք է զատուի, անջատուի, ուշադրութիւն գրաւէ, որպէս լուսանկարը հետաքրքրական դառնայ։ Ճիշդ է որ երբեմն հանդիսատեսին կը հրամցուին կարգ մը խմբանկարներ ալ, որոնք նոյնքան հետաքրքրական են, բայց այդ խմբանկարին մէջ ալ ընդհանրապէս ամէն մարդ կերպով մը գագաթ մըն է, կամ ունի բան մը որ չի խանգարեր գագաթի համայնապատկերը։ Այդ խմբանկարին մէջ տեսնուող դէմքերէն ամէն մէկը ո՛վ գիտէ որքան շատ մարդ լուսանկարէն դուրս հրած է, որպէսզի ինք մուտք գործէ հոնկէ ներս։

Այո՛, հանդիսատեսը կ'ուզէ գագաթային մարդ, գագաթային ապրանք, գագաթային դէպք տեսնել իր դիմացը։ Գոհարավաճառը փողոցի անցորդներուն ուշադրութիւնը աւելի լաւ կրնայ հրաւիրել, եթէ իր ցուցափեղկին մէջ ցուցադրէ միակ ու շատ փառաւոր գոհարեղէն մը։ Ներսը տակաւին ո՛վ գիտէ որքան գեղեցիկ արժէքաւոր գոհարեղէններ կան, բայց ո՛վ կրնայ անոնց բոլորին գեղեցկութեան անդրադառնալ, եթէ գոհարավաճառը զանոնք լեցնէ ցուցափեղկին մէջ եւ ցուցափեղկը դարձնէ արժէքաւոր ապրանքներու խճողեալ խանութ մը։

Տեսնե՛նք անգամ մը։ Մեր շուրջ որքան շատ են այն մարդիկը որոնք լուսանկարէ դուրս մնացած են ու կը մնան։ Զանոնք պիտի տեսնէք ուր որ նայիք։ Բայց պիտի տեսնէք զանոնք եթէ զանոնք տեսնել գիտէք, որովհետեւ դիւրին չէ տեսնել զանոնք, տրուած ըլլալով որ դուրս մնացած են լուսանկարէն, այսինքն ձեր տեսողութեան դաշտէն։

Ահաւասիկ ձեր դիմաց կամ հեռատեսիլի պաստառին վրայ կը ճառախօսէ նախագահ մը, քաղաքական կարեւոր գործիչ մը։ Հիանալի պատգամներ կը փոխանցէ, շատ լաւ բաներ կ'ըսէ։ Կը հիանաք։ Կը ծափահարէք։ «Այս մարդը որքան լաւ բաներ կ'ըսէ» կ'ըսէք։ Մինչդեռ այն ինչ որ այդ նախագահը կը կարդայ, ուրիշի մը կողմէ գրուած է։ Այդ ուրիշն է որ նախագահի հաշուոյն գրի առած է այդ լաւ բաները։ Միայն թէ ան հոն չի տեսնուիր սա պահուն։ Ան լուսանկարէն դուրս մնացած է։ Ան իր կեանքը կը շահի, իր ասպարէզը կը կերտէ լուսանկարէն դուրս մնալով։

Ահաւասիկ թատերական ներկայացումի մը ներկայ գտնուեցաք ու հիմա որ վարագոյրը կը փակուի, բուռն ծափահարութիւններով կ'ողջունէք, կը շնորհաւորէք դերասանները։ Մինչդեռ այս ներկայացումին մէջ դեր խաղացին ուրիշներ ալ որոնք լուսանկարէն դուրս մնացած են։ Անոնք խաղին սկիզբէն ի վեր քուլիսին մէջ կը գործէին, աչքերէ, լուսանկարի գործիքին տեսադաշտէն հեռու։ Թերեւս վերջաւորութեան երբեմն մէկ երկվայրկեանի համար անոնք ալ բեմ պիտի հրաւիրուին, բայց դուք ձեր գլխաւոր ծափահարութիւնները մասնաւորաբար պիտի ուղղէք պատկերէն ո՛չ թէ դուրս մնացողներուն, այլ ներս մտնողներուն։

Ահաւասիկ զինուորական բարձրաստիճան հրամանատար մը այս կամ այն յաղթանակէն վերջ աստիճանի բարձրացում կը կրէ, թերեւս մետալներ ալ կը ստանայ։ Լուսանկարչական բոլոր գործիքները կեդրոնացած են անոր դէմքին վրայ։ Բայց այդ հրամանատարը իր այդ յաղթանակը տարաւ այն զինուորներուն շնորհիւ, որոնք սա պահուն լուսանկարէն եւ գանգուածային յիշողութեան դաշտէն դուրս մնացած են։

Ուր որ կ'ուզէք նայեցէ՛ք, անպայման պիտի տեսնէք լուսանկարէն ներս մտնողները միայն։ Մինչդեռ լուսանկարէն ներս մտած իւրաքանչիւր մարդու եաին առնուազն կայ տասը մարդ, որ չէ կրցած մտնել լուսանկարէն ներս, եւ որ սակայն թերեւս աւելի արժանի էր լուսանկարէն ներս մտնելու։

Կեանքը իր ընդհանուր երեւոյթին մէջ կը թուի մրցում մը ըլլալ լուսանկարէն ներս մտնել ուզողներու միջեւ։ Բայց այդպէ՞ս է։ Երկրագունդի վրայ ապրող ամէն մարդուն գլխաւոր երա՞զն է արդեօք գագաթ մը դառնալ ու լուսանկարէն ներս մուտք գործել։

Ռ. Հ.

ՏՐՈՎԱԴԱՅԻ ԳԱՆՁԸ ՈՐՈ՛Ւ ԿԸ ՊԱՏԿԱՆԻ

Արեւելեան Գերմանիոյ գոյութեան տարիներուն օրինակ Տրէստէնի նկարչութեան Թանգարանը այցելողի մը կը բացատրուէր որ արուեստի այդ գեղեցիկ գործերը այցելուներու վայելքին տրամադրուած են Կարմիր բանակին հերոսական միջամտութեան շնորհիւ։ Քաջարի զինուորներ խոնաւ նկուղներէ փրկած էին զանոնք (ուր պահուած էին) ու տարած Խորհրդային Միութիւն որպէսզի նորոգուին եւ 1955-ին ալ որպէս բարեկամութեան նշան վերադարձուած էին Արեւելեան - Գերմանիոյ։ Այդ առատաձեռնութիւնը 750 պաստառ կ'ընդգրկէր։ Ոչինչ կ'ըսուէր այն մասին թէ այդ թիւը խորհրդային զօրքին տարածին չնչին մէկ տոկոսն էր միայն։ Արուեստասէրներ երբեք չէին համարձակեր ձայն բարձրացնել կիսատ մնացած հաւաքածոներու մասին։ Արեւելեան - Գերմանիոյ մէջ խորհրդային մեծ եղբօրմէն բան պահանջել թապու էր։

Այսօր այդ եղբայրը նոյնքան հզօր չէ, Արեւելեան - Գերմանիան ընտանեկան նոր պարագաներ գտած է ու հոն ամէնէն առաջ հաշւով կը ներկայացուի շուրջ 200 հազար արուեստի գործի, 2 միլիոն գիրքեր եւ քանի մը քիլոմեթր երկարութեամբ դիւանային նիւթերու կորուստ. Հայր-

…ութիւն մը որ կը պատկանէր Գեր-մանիոյ թանգարաններուն ու սեփական հաւաքածոներուն: Պէ՞տք է պահանջել …մանց կողմէ պատերազմական աւար …կուածը:

Յուլիս 5-ին Ռուսաստանի Դուման քը-…ւէարկեց հրովարտակ մը որ կը յայտա-…րարէ թէ պատերազմին աւարին Խոր-…հրդային Միութիւն բերուած մշակու-…թային ու գեղարուեստի հարստութիւն-…ները ռուս պետութեան ստացուածքը կը …կազմեն: Աւելա թէ՛ հակասական է երկ-…ին օրէնքներուն եւ թէ կ'անտեսէ Լա Հէյի …համաձայնութեան տրամադրութիւնները …րոնցմով կը պահանջուի անյապաղ իրենց …րինաւոր տիրոջը վերադարձնել այն …բոլոր արուեստի գործերը որոնք ապօ-…րինաբար տեղափոխուած են, կամ կոր-…սուած: Ռուս երեսփոխանները իրենց վե-…րոյիշեալ որոշումով կատարեալ անտե-…սումի մատնեցին ռուսեւգերման գործըն-…կերութեան ու մշակոյթի համաձայնու-…թիւնն ալ:

Անկէ ի վեր Գերմանացիները իրենց ակ-…նարկները յառած են վարչապետ Քոհլի: …Բէեւ տկար է յոյսը որ ան իր բարեկամ Ել-…ցինը կարենայ համոզել արուեստի գործե-…րը վերադարձնելու: Անկարելի կը թուի …Ռուսերուն ընդունիլ տալ որ Բ. աշխարհա-…մարտին տարուած բոլոր արժէքները ամ-…բողջութեամբ ետ պէտք է տրուին: Ար-…ւմտեան Արեւելեան - Գերմանիայէն խորհըր-…դային զօրաբաժիններու մեկնումը տկա-…րութիւն նկատուեցաւ Ռուսերուն կողմէ: …Արուեստի գործերուն վերադարձն ալ նոյն …մեկնաբանութիւնը պիտի ունենայ:

…Խնդրոյ առարկայ հարստութեան խոր-…հրդանշական արժէքը այնքան մեծ է որ …նոյնիսկ դրամական առաջարկներ պիտի …մերժէին Մոսկուայի կեցուածքէն ստո-…րակէտ մը իսկ փոխելու: Յետոյ կան նաեւ …ւթէ անլուծելի պարագաներ: Այդ …առարկաները ի՞նչ արժէք կը ներկայացը-…նեն այսօր: Ուրկէ՞ պիտի հայթայթուին …անհրաժեշտ գումարները:

…Կը մնայ քաղաքական գործնական լու-…ծում մը գտնել: Ինչո՞ւ արուեստի գոր-…ծեր ազգային պետութեան մը խորհրդա-…նիշերը նկատել: Գերմանական ինքնու-…թիւնը կապ ունի՞ այս կամ այն գանձին …Պեռլինի մէկ թանգարանը գտնուելուն …կամ չգտնուելուն հետ: Այդ հարստու-…թեան վերադարձն ալ արդէն նորանոր …հարցեր պիտի ստեղծէ: Անոնց նախկին …օրինաւոր տէրերը որոնք իրենց պաստառնե-…րը ծիծաղելի գիներով ծախելու պարտա-…դրուած էին Նացիներու կողմէ, կրնան …պահանջել որ իրենց վերադարձուին ա-…նոնք. կամ հատուցում տրուի անոնց փո-…խարէն: Գերմանիա արդէն նման վէճի մը …ականատես եղաւ միացումէն ետք երբ …Արեւելեան - Գերմանիոյ բազմաթիւ շէն-…քերուն տիրութեան պահանջք ներկայա-…ցուցին անոնց նախկին տէրերուն ժառան-…գորդները որոնք մեծ մասով արեւմըտ-եան Գերմանացիներ կամ այսօր ամերի-կացի դարձած Հրեաներ էին:

Գերմանական «Զիւտտոյչէ ցայթունկ» օրաթերթին մէջ այս մասին յօդուածի մը հեղինակ Հայմս կ'ըսէ թէ արուեստի գործերը մաս կը կազմեն մարդկութեան մշակութային ժառանգութեան: Այդ պատճառով պէտք է մատչելի ըլլան լայն զանգուածներու: Ռուսաստան կրնայ օրինակ հինգ տարուան համար Գերմա-նիոյ փոխ տալ այդ հարստութիւնը որուն փոխարէն Գերմանիա կը տրամադրէ գոր-ծեր որոնք երբեք չեն ցուցադրուած Ռու-սաստանի մէջ: Անոնցմէ է Ի. դարու ար-ուեստը որ Հոկտեմբերեան յեղափոխու-թենէն ետք ամբողջական մերժումի առար-կայ եղած է: Կայ տակաւին ԻՒՆԷՍՔՕ-յի հովանաւորութեամբ ռուսեւգերման հիմ-նարկ մը ստեղծելու կարելիութիւնը. անոր կեդրոնատեղին կը գտնուի Մոս-կուա: Մշակոյթի ու արուեստի եւրոպա-կան թանգարան մըն ալ կրնայ հիւրընկա-լել կռուախնձոր գործերը, առանց որ կողմերէն մէկը կամ միւսը բան մը կոր-սնցուցած ըլլալու տպաւորութիւնը ու-նենայ:

ՔԱՂՀԱՆ

ՔՈՒՆԸ

Երկարակեցութեան կարեւոր ազդակ-ներն են՝ սնունդը, աշխատանքի եւ կեն-ցաղային պայմանները, հիւանդութիւննե-րէ նախազգուշացումը եւ անոնց ժամանա-կին դարմանումը. ասոնց կարգին պէտք է դասել նաեւ առողջարար, աշխուժացը-նող եւ թարմացնող քունը:

Քունը մարմնին այն բնական վիճակն է, երբ ջղային կեդրոնական դրութեան գործունէութիւնը կը դադրի: Երկարա-տեւ արթուն վիճակի մէջ, «յոգնած» բը-ջիջները սնդական նիւթեր կ'իւրացնեն ու կը վերակենդանանան: Քունը հանգստու-թիւն կը հայթայթէ ինչպէս ջղային դրութեան, նոյնպէս եւ ամբողջ մարմնին:

Քունը մարդուն համար ամէնօրեայ եւ կենսական կարիք մըն է: Կարելի է ա-ւելի երկար ծարաւ կամ անօթի մնալ, քան՝ անքուն: Ինչպէս ուտելու, հագնե-լու, աշխատելու եւ ամէնօրեայ կեանքի մէջ անհրաժեշտ է առողջապահական որոշ կանոններուն պահպանումը, երկարա-կեցութեան համար ոչ նուազ կարեւոր են քունի կանոնները: Որո՞նք են այդ կանոն-ները:

Քունը նախ պէտք է բաւարար ըլլայ, երախաներուն համար՝ 12 - 14 ժամ, պա-տանիներուն համար՝ 10 - 12 ժամ, իսկ տարեցներու համար՝ օրը ութ ժամ: Շատ երկար քունն ալ օգտակար չէ, որովհե-տեւ կը նուազեցնէ փոխանակման գործո-ղութիւնները, կը գիրցնէ մարմինը եւ կը թուլացնէ մարմնին կենսունակութիւ-նը: Անքնութիւնն ալ վնասակար է առող-ջութեան, որովհետեւ կանխահաս ար-թերիոզ - ճլերոզի եւ կանուխ ծերացման պայմաններ կը ստեղծէ՝ ըստ բժիշկնե-րուն:

Քունը յատկապէս աւելի առողջարար է շարժումէ, ֆիզիքական աշխատանքէ ետք, որովհետեւ՝ կ'արագացնէ փոխա-նակման գործողութիւնները: Աւելա ի զօրու է մասնաւորաբար մտաւորական աշխատանք տանողներուն համար, որոնք առիթ եւ սովորութիւն չունին շարժում ընելու: Այսպիսի անձեր լաւ կ'ընեն, եթէ անկողին մտնելէ առաջ կէս ժամ կամ աւելի տեւողութեամբ պտոյտ կամ ֆիզի-քական մեղմ շարժումներ կատարեն:

Թելադրելի է նաեւ չխանգարել պառ-կելու ճշդուած ժամերը: Գիշերուան քունը աւելի օգտակար է, որովհետեւ չկայ աղմուկ, լոյս կամ այլ գրգիչ ազ-դակներ: Յետ միջօրէի քունը օգտակար է հիւանդ տարեց մարդոց եւ երախաներուն համար:

Քնանալէն երկու - երեք ժամ առաջ ան-հրաժեշտ է վերջ տալ աշխատանքին եւ ժամանակը անցընել մշակութային զբա-ղումով, պտոյտով, եւայլն...

Անկողինն ու գիշերանոցը պէտք է մա-քուր ըլլան, իսկ ննջասենեակին մէջ օդի մաքրութիւնը առողջ քունի լաւ պայ-ման է: Յանձնարարելի է բաց պատուհա-նով քնանալ: Այս պատճառով ալ պէտք չէ սենեակին մէջ քնացողներուն թիւը մեծ ըլլայ:

Երեկոները պէտք չէ ստամոքսը լեցնել ծանր կերակուրներով, ինչպէս նաեւ՝ պէտք է խուսափիլ ոգելից ըմպելիներէն, թէյէն, սուրճէն եւ ծխախոտէն:

Անկողին մտնելէ առաջ լոգանքը կամ մարձումներն ալ նպաստաւոր դեր կը խա-ղան քունին համար: Շատ զգայուն ան-ձերը պէտք չէ իրիկունները յուզիչ ժա-պաւէններ կամ ներկայացումներ դիտեն:

Անքնութենէ տառապողները պէտք չէ արուեստական միջոցներու դիմեն քնա-նալու համար, քանի որ քունին որակը նոյնը չըլլար, ոչ ալ նոյն օգտակարու-թիւնը կ'ունենայ մարմնին համար:

Առողջ, թարմացնող եւ կայտառացնող քունը քաջառողջութիւն եւ երկար կեանք կուտայ:

ԱԿՆԱՐԿՆԵՐ

ՄՏԱՑԻՆ ԶԲՕՍԱՆՔ

1. -- Ո՞վ գտած է փենիսիլինը:

-- Անգլիացի գիտնական, բժիշկ, 1945-ի Նոպէլեան մրցանակակիր Ալեքսանտր Ֆլէմինկ:

2. -- Ո՞ր թուականին մահացաւ Աշոտ Մեծ, հիմնադիր Բագրատունեաց հարըս-տութեան:

-- 891-ին:

3. -- Ո՞վ էր Ալեքսանտր Պուշկին:

-- Արդի ռուս գրականութեան նախա-կարապետը եւ յառաջապահը, որ ծնաւ 1799-ին Մոսկուա եւ մեռաւ 1837 Փե-տըրուար 10-ին, Լենինկրադի մէջ, մենա-մարտութեան մը ընթացքին, երբ ստիպ-ուեցաւ պաշտպանել իր կնոջ պատիւը: Ունի բանաստեղծութիւններ, վէպեր եւ թատերգութիւններ: Հեղինակն է «Տամ տը փիք» օփերախաղին:

4. -- Ի՞նչ ազգութեան կը պատկանէր մտաւորական եւ գրող Սամըրսէթ Մոմ:

-- Անգլիացի էր:

5. -- Ո՞ր թուականին բացուեցաւ Երե-ւանի մէջ Գ. Սունդուկեան Պետական թատրոնը:

-- 1922-ին, երբ սկսաւ լոյս տեսնել «Գրական Թերթ»ը:

6. -- Ո՞վ էր Յարութիւն Շամշինեան:

-- Հայ նշանաւոր նկարիչ մը, 1856-1914:

7. -- Ո՞ր թուականին Թրքահայոց Պատ-րիարք ընտրուեցաւ Իզմիրլեան Սրբազան:

-- 1894-ին:

8. -- Էտկար Ալէն Փօ բանաստեղծ եւ գրողը Ամերիկացի՞ էր թէ Անգլիացի:

-- Ամերիկացի էր (1809 -- 1849):

9. -- Ո՞վ էր Մարլէն Տիթրիխ:

-- Գերման ծագումով Ամերիկացի սինե-մարուեստագիտուհի մը, որ մեռաւ 1992 Մայիս 6-ին, Փարիզի մէջ: Ան, ծանօթ էր իբրեւ գեղեցկագոյն սրունքներ ունեցող մեծ մայրիկը: Ծնած էր Պեռլին՝ 1904-ին: Դերեր ստանձնեց «Կապոյտ Հրեշտակը», «Խարտիշագեղ Վէնիւսը» եւ «Անսպասելի վկան» ֆիլմերուն մէջ:

10. -- Ո՞վ էր հեռատեսիլի հնարման առաջին փորձը կատարողը, ո՞ր թուակա-նին:

-- 1926-ին: Ճոն Պըրտ, Լոնտոնի իր գի-տաշխատանոցին մէջ:

ԱՐՇԻԻ

LIVRES REÇUS

ARMIN T. WEGNER
E GLI ARMENI IN ANATOLIA 1915
Immagini e testimonianze

Guerini E. Associati
Juin 1996, Milano

ԿՂԶԻՆ ԵՒ ՄԻ ՄԱՐԴ

—վիպակ—

ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ

…ժայռի մի կատարին նստած, վայելե-…լինք մայրամուտը:

…Մեծղի, բոցավառ, կլանիչ:

…Ծովը, նախ արեւների մէջ ողողուած, …կամաց կամաց գունատւում է եւ մանի-…շակագոյն սաւաններով ծածկւում: Ցա-…ւօրդաբար արծաթէ արտացոլումներ է …առնում, ոսկէ ցոլքերով սատափւում: …Կանաչ զմրուխտի վերածւում եւ, վերջն …էլ, թեթեւ պսպղանքով սարսռում ու …մտնում գորշ մի խաղաղութեան մէջ:

- Ահա մի տեսարան, որ անկարելի է …նկարել, - ասաց Սթեֆանը. - Ինչպէս …էք ուզում, որ թիթեղէ խողովակների …մէջ փակուած արհեստական գոյները այ-…տայայտեն բնութեան կրծքերը այրող …այս կրակը: Բնութիւնը գերբնական դըպ-…րոցին պատկանող նկարիչ է: Յանդուգն, …անքնական, անօրինակելի:

- Նկարչութիւնը եւ առհասարակ ար-ուեստը ընդօրինակութիւն չէ: Արուես-տագէտի եւ բնութեան նպատակները տարբեր են: Բնութիւնը արտայայտւում է այնպէս, ինչպէս կովը ծնում է: Ար-ուեստագէտը արտացոլում է այն համա-դրութիւնը, որ առաջ է գալիս իր եւ աշ-խարհը ղեկավարող խորհրդի մէջ:

- Պայմանով որ այդ խորհուրդը համա-պատասխանի մարդկային էութեան ներ-քին հաւասարակշռութեան:

- Այո՛, մարդ եւ աշխարհ պէտք է հան-դիպեն ոսկէ սահմանի վրայ:

Միլտըրէտի աչքերը հեռու են:

Ձեռքը վերցնում եմ ձեռքիս մէջ. տաք են:

- Չես խօսում:

- Բառերս կորցրել եմ:

Ժպտում է:

Վարի ձորի խորքում մութ կապոյտ շու-քեր են կուտակուել: Մօտի բլրան կատա-րին մի ամպ է նստել: Մտածում է:

Սթեֆանը մի բանաստեղծութիւն է ար-տասանում: Քաղցր է եւ տխուր: Ինչ որ մի մեղեդիացում, որ թափառում է աս-տղերի միջով: Պարզ, նշանակալից:

Լռում ենք:

Բլրան կատարի ամպը կամաց կամաց հալւում է, անհետանում:

- Մարդկային անհատը հասարակ բեղմ-նաւորման արդիւնք չէ, նա չի ծնում մօր եւ հօր մօտեցումից, այլ գալիս է գերա-գոյնից տարբեր մի աշխարհից: Այդ պատ-ճառով էլ մարդկային անհատը կանգնած է երկու աշխարհները բաժանող գծի վը-րայ, որոնք անդադրում պայքարում են նրա մէջ: Մարմինը եւ հոգին, ազատու-թիւնը եւ անհրաժեշտութիւնը, կախումը եւ անկախութիւնը:

- Միլտըրէտ, հասկանո՞ւմ ես:

- Շատ:

Անձկութեամբ նայում է ինձ:

- Շատ, - կրկնում է նա,

Գլուխը դնում է ծունկերի մէջ եւ այդ-պէս մնում:

- Անձը միութիւն է, անբաժանելիու-թիւն: Միւսները անդադար կտորտւ-ւում են, բաժանւում, ենթարկւում իրա-կանութեան հակասական եւ կոյր ուժե-րին: Բանաստեղծութիւնը այդ միու-թեան, այդ անբաժանելիութեան անմի-ջական արտայայտութիւնն է: Կարողա-նալ խորասուզուել ոչ թէ դէպքերի ժխո-րում, այլ կեանքի ովկէանոսում եւ ա-ռանց խօսքի այդ ներկայութիւնը ակներեւ դարձնել:

Միլտըրէտի ձեռքը առնում եմ ձեռքե-րիս մէջ եւ շոյում:

- Մի քանի օրից պիտի մեկնեմ, - ասում է նա:

- Ո՞ւր:

- Մայրս պիտի գայ Հռոմ:

Հիմա նստել եմ Սթեֆանի տան վերի սենեակում եւ պատուհանից նայում եմ մութին:

Մի քանի աղօտ լամպարների լոյսը դեռ աւելի է խորացնում գիշերը: Երկինքը լեցուն է աստղերով: Խոր մի լռութիւն է տիրում աշխարհի վրայ:

Լռութեան տակ թաքնուած չերտերը ամենակենդանիներն են: Միայն լռու-թեան ճանապարհով է, որ կարելի է իջ-նել խորութեան, ուր ներկայ է ամբողջը: Բառերով կարելի է այդ բացատրել: Բա-ռերը, առանց նրանց ետեւը կանգնած նա-խապատրաստող լռութեան, պարապ են: Բառը նշանակալից է, սրբազան է, իսկ սրբազանը գալիս է լռութիւնից:

Արդի ամբողջ կեանքը, նրա սրընթաց վազքը, նրա մեքենական շարժականու-թիւնը, նրա ամբողջ մթնոլորտը դաւում են լռութեան դէմ: Կեանքը դաւում է կեանքի դէմ:

Ինչքա՜ն անհաճոյ բան է դիտել լռու-թիւնից զրկուած մարդկային դէմքերին: Դէմքեր, ուր ծնօտը աւելի ներկայ է քան ճակատը, ուր բերանը չոր է եւ կծկուած, ուր աչքերը զրկուած են ներքին լոյսից: Դէմքեր, որ նայում են լոյսին եւ չեն մասնակցում նրա գաղտնիքին:

Շարժուող տերեւները շոյում են լռու-թիւնը, Նոճիի գագաթը չի խօսում: Վար-դը իր փերթը վայր գցելու ժամանակ՝ մտածում է:

Ո՞վ կարող է բացատրել նռենու ծաղի-կի շուրջը բոլորուած անհամաձայնու-թիւնը:

Նաեւ --

Մենք ծովի մի մասն ենք: Էրոսի, Էրի, Արայի: Այն, որ երգը անուանում է ծի-րանի: Երկնքում տարածուող ծիրանի ծովի մի մասը:

Կրակ եւ բոց: Ծիրանի ծովի մի մասը:

Կղզու ժայռերի միջից աշունը կամաց մտել է ներս:

Մօտեցել է գիւղաքաղաքի պաշտպան սրբի տօնը: Յայտնի է, որ աշունը սիրում է սրբերին, եւ սրբերը ականջը կախած, սպասում են այգիների միջից սուրացող առաջին հովերին:

(Շար. 44)

(Շար. Ա. էջէն)

ներու, Փարիզ հասան Օգոստոս 6-ին եւ օդակայանը ընդունուեցան նախարարապետ՝ Ա. Ժիւփէի կողմէ:

ՍՈՒՐԻԱ կը մերժէ որեւէ խօսակցութիւն Իսրայէլի հետ, ցորչափ այս վերջինը յանձնառութիւն չի ստանձներ Կոլանը պարպելու: Նեթանիահու տրամադրութիւն յայտնած էր բանակցելու Դամասկոսի հետ Հարաւային - Լիբանանի պարպումին մասին առանց բացառելու այլ կէտեր: Կոլանը, սակայն, նախապայման կը մնայ Սուրիոյ համար: Այս մերժումը դիւանագիտական առաջին ձախողութիւն մը կը նկատուի Իսրայէլի վարչապետին համար:

ՓԱՐԻԶԻ 36-րդ կամուրջը՝ Շ. տը Կօլ այլեւս պատրաստ է երթեւեկի համար: Շինութիւնը տեւեց 3 տարի: Կամուրջին երկարութիւնն է 208 մեթր, լայնքը՝ 30 (մայթերը ներառեալ): Ան կը կապէ Պերսիի (12-րդ Թաղամաս) Սէնի աջ ափին վրայ 13-րդ Թաղամասի ձախ ափին (Թոլպիաք, Օսթերլից): Այս կամուրջը ոչինչով կը նմանի միւս 35 կամուրջներուն, զայն յղացող երկու ճարտարապետներն ալ մեռած են:

ԱՄԲՈՂՋ ՄԵԾՆ - ԲՐԻՏԱՆԻԱՆ իրար անցած է երկուորեակներու յղի կնոջ մը պարագային պատճառաւ եւ ամբողջ մամուլն ուրիշ նիւթ չունի ծեծելիք: Երիտասարդ ամուրի կինը, արդէն մայր զաւկի, ուզած է վիժեցնել երկուորեակներէն մէկը նիւթական պատճառներով: Ներկայիս արդէն 400 հազար Ֆր. կ'առաջարկուի կնոջ որ հրաժարի իր մտադրութենէն: Վիժումի դէմ ընկերութիւն մըն ալ ամսական 1100 ֆրանքի նպաստ մը տալու տրամադիր է: Մնաց որ կարգ մը լուրերու համաձայն, այդ մասնակի վիժումը կատարուած է արդէն, վեց ամիս առաջ:

DATE A RETENIR

NAVASART à Marseille

Les 4 Sections de la Croix Bleue des Arméniens de France - région Marseille, demandent à toutes les associations de prendre en considération la date du

SAMEDI 19 OCTOBRE en soirée.

Plus amples renseignements ultérieurement.

ՎԱԼԱՆՍ
Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

Հինգշաբթի, Օգոստոս 15-ին, ժամը 10-ին կը մատուցուի հանդիսաւոր պատարագ եւ աւարտին հոգեհանգստեան պաշտօն՝ Ռմբակոծութեան եւ Բ. պատերազմի զոհ բոլոր ննջեցելոց հոգւոց:

Պատարագիչ եւ քարոզիչ՝
ՆԱՐԵԿ Ա. ՔՀՆՑ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

UGAB . . . UGAB . . . UGAB . . . UGAB

«UGAB - 90»

A l'occasion de la célébration
de son 90ème anniversaire.
l'UGAB organise un grand

Gala de Bienfaisance

au profit des *TABLES DE L'UGAB*, en Arménie

le Vendredi 18 Octobre à 20 heures

au Pavillon Dauphine - 75016 Paris

P.A.F. : 750 Frs

Rens. : 45 20 03 18 / 42 27 12 26.

UGAB . . . UGAB . . . UGAB . . . UGAB

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Ի նպաստ «ՀԱՅԱՍՏԱՆ» Հիմնադրամին ԿԻՐԱԿԻ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 29, ԺԱՄԸ 15-ԻՆ, Իսի լէ Մուլինօ:

***

Իսիի Հայ Առաքելական Եկեղեցւոյ Մատաղօրհնութիւնը եւ շինութեան 21-րդ տարեդարձը՝

ԿԻՐԱԿԻ, ՆՈՅԵՄԲԵՐ 10-ԻՆ

***

Սիփան - Կոմիտաս երգչախումբի վարչութիւնը կը խնդրէ նկատի առնել իր յառաջիկայ համերգը որ տեղի պիտի ունենայ Շաբաթ, Նոյեմբեր 30-ին, Փարիզ, Opéra Comique — Salle Favart-ի մէջ:

Յայտագիրը յատկացուած է Կանաչեանի եւ Ափրիկեանի գործերուն:

8 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1996

ՄԻՒՌՈՆՕՐՀՆԷՔ
ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԷՋ

Յայտնի է մեր ժողովուրդին, թէ յառաջիկայ 8 Սեպտեմբերին (1996) Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ՝ Նորին Սուրբ Օծութիւն ՏԷՐ ՏԷՐ ԳԱՐԵԳԻՆ Ա. Ծայրագոյն Պատրիարք - Կաթողիկոս Ամենայն Հայոց իր անդրանիկ Միւռոնօրհնութիւնը պիտի կատարէ:

«Միւռոնի Օրհնութիւնը ողջ Հայ ժողովուրդին համար հոգեկից առիթ է եւ միջոց, մեր ժողովուրդի Քրիստոնէական և Ազգային կեանքի վերանորոգութեան եւ զարգացման համար»:

Առ այդ, սրտագին կոչ կ'ընենք Ֆրանսայի եւ ամբողջ Արեւմտեան Եւրոպայի հոգեւոր մեր զաւակներուն, խուռներամ բազմութեամբ Ուխտի երթալ Սուրբ Էջմիածին ու Շնորհօք վերագրարդարուիլ՝ Սուրբ Միւռոնի բացառիկ այս Օրհնութեան ներկայ գտնուելով:

Այս նպատակաւ, Սեպտեմբեր 5-էն 12-ին՝ մէկ շաբաթուան՝ դէպի Հայաստան Ուխտագնացութիւն կազմակերպուած է:

SABERATOURS-ը մեր կողմէ լիազօրուած է ապահովել ճամբորդական բոլոր գործառնութիւններն - վիզա, օդանաւ, պանդոկ, պտոյտներ, ապահովագրութիւն եւ սնունդ:

Անհրաժեշտ է անյապաղ փութով, մինչեւ 31 Յուլիս ներառեալ, արձանագրուիլ յիշեալ Ուխտագնացութեան, կանխելու համար տեղ ապահովելու յետագայի խճողումը:

ԴԻՒԱՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ
ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ

Արձանագրուելու համար դիմել. -
SABERATOURS
19, rue St-Roch, 75001 PARIS
Tél. : 42. 96. 10. 10 — Fax : 42. 96. 18. 77.

- ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ -

Ս. ՅԱԿՈԲ — ԼԻՈՆ

Կիրակի, Օգոստոս 18, տօն է Վերափոխման Սուրբ Աստուածածնի:

Այս առթիւ Լիոնի Ս. Յակոբ Մայր Եկեղեցւոյ մէջ տեղի պիտի ունենայ պատարագ:

Կը պատարագէ եւ կը քարոզէ՝

ՆՈՐՎԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԶԱՔԱՐԵԱՆ

Հայր. Պատրիարքի փոխանորդ
ԼԻՈՆԻ ԵՒ ՌՈՆ - ԱԼՓԻ ՀԱՅՈՑ

Յաւարտ պատարագի կը կատարուի խաղողօրհնէքի աւանդական արարողութիւնը:

Հաւատացեալներ որոնք Օրհնութեան համար ուխտած են խաղող նուիրել կրնան ուղարկել Եկեղեցւոյս Դիւանատունը:

Սիրով կը հրաւիրուի Լիոնի եւ Շրջանի ուխտաւոր ժողովուրդը սոյն Տաղաւարի հանդիսութեանց:

Սկիզբ Ժամերգութեանց ժամը 8.45-ին:
Պատարագ ժամը 10-ին:
Քարոզ ժամը 11.15-ին:
Խաղողօրհնէք ժամը 12-ին:

ՎԱԼԱՆՍ - Ս. ՍԱՀԱԿ

Կիրակի, Օգոստոս 18
Ս. Սահակ Եկեղեցւոյ մէջ
Ռիւ տը լա Սեսիլ
Վերափոխում Աստուածածնի
Հանդիսաւոր պատարագ կը մատուցուի ժամը 10-ին: Յաւարտ պատարագի, կը կատարուի խաղողի օրհնութիւնը:
Այդ օրը հոգեհանգստեան պաշտօն չի կատարուիր:

ՄԱՐՍԷՅԼԻ
ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Տօն վերափոխման Ս. Աստուածածնի
ԽԱՂՈՂՕՐՀՆՈՒԹԻՒՆ
Կիրակի, Օգոստոս 18
Մարսէյլի
Սրբոց Թարգմանչաց Մայր Եկեղեցւոյ մէջ
Սկիզբ Ժամերգութեանց ժամը 8.30-ին:
Առաւօտեան ժամը 10-ին կը մատուցուի հանդիսաւոր պատարագ:
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ՏԱՐՕՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՃԷՐԷՃԵԱՆ
Առաջնորդական Տեղապահ
Հարաւային Ֆրանսայի Հայոց Թեմի
Պատարագի ընթացքին կը կատարուի «Օրհնութիւն խաղողոյ» աւանդական արարողութիւնը:

ԿԱՊՈՅՏ ԽԱՉ

ՄԵԾ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ
ԵՒ
ԽԱՂՈՂՕՐՀՆԷՔ

Կիրակի, Օգոստոս 11-ին, ամբողջ օրը, Պէլփոնթէնի (Ժիւրա) կայանը:

Առաւօտեան, Խաղողօրհնէքի արարողութիւնը կը կատարէ՝
ՄԿՐՏԻՉ ՔԱՀԱՆԱՅ ՊԱԼԱՊԱՆԵԱՆ

Պիւֆէ - Գեղարուեստական յայտագիր կայանի երախաներուն կողմէ

- Հաճելի անակնկալներ

ԾՆՆԴԵԱՆ

ՄԿՐՏՈՒԹԵԱՆ

ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ

ԵՐԿԼԵԶՈՒ
ՁԵՐ ՀՐԱՒԷՐՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

ԴԻՄԵՑԷ՛Ք «ՅԱՌԱՋ»Ի ՏՊԱՐԱՆԸ

ԽՆԱՄՈՒԱԾ ԱՇԽԱՏԱՆՔ, ԱՐԱԳ ՅԱՆՁՆՈՒՄ

Տեղւոյն վրայ ճոխ խաբաղոկ

Imprimé sur les presses du Journal «HARATCH» 83, rue d'Hauteville, 75010 Paris
Commission Paritaire : N° 55935 SIRET : 51027317 A R.C. Paris

ՈՒՐԲԱԹ
ՕԳՈՍՏՈՍ 9
VENDREDI
9 AOUT
1996

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

LE NUMERO : 5,00 F.

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1925-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE-FONDE EN 1925
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 47. 70. 86. 60 — TELEX : HARATCH 280 868 F
— FAX : 48. 00. 06. 70 —
C.C.P. PARIS 15069-82 E

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 1.100 Ֆ. — Վեցամսեայ : 560 Ֆ.
Արտասահման : Տար. 1.400 Ֆ. (ամէնօրեայ առաքում)
1.250 Ֆ. (շաբաթական առաքում) — Հատը : 5,00 Ֆ.

72րդ ՏԱՐԻ - Թիւ 18.915 — Fondateur SCHAVARCH MISSAKIAN — 72e ANNEE — N° 18.915

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՉԷՉԷՆԻՈՅ ԱՆՎԵՐՋԱՆԱԼԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՒ ՏԵՍԱԿ ՏԵՍԱԿ ՇԱՀԵՐ

Անկախապաշտները կրկին տէր դարձան Գրոզնիի, բայց կատաղի կռիւները կը շարունակուէին Օգոստոս 8-ին, երբ Ռուսերը նոր ուժերով յարձակման կ'անցնէին։

Սկզբունքով Չէչէնները կը կռուին իրենց անկախութեան համար եւ Ռուսերն ալ կը պաշտպանեն Դաշնակցութեան հողային ամբողջականութիւնը, բայց այս իրողութիւն ետին կան շատ ու շատ այլ շահեր։ Քաղաքական դէմքեր, զինուորականներ եւ լրագրողներ փորձած են քօղը վերցնել եւ յայտնաբերել բուն նպատակները այս «աղտոտ պատերազմին»։ Հոն կան գաղտնի սպասարկութիւններ, ամէն տեսակի մաքսանենգներ, վարկաբեկուած քաղաքական դէմքեր, վարձկաններ եւայլն, եւայլն։

Բանակցութեանց պատասխանատու Արկադի Վոլսկի (երբեմնի ղեկավարը Արցախի ռուսական Կոմիտէին) կը պնդէ որ. -- «զօրաւոր ուժեր Մոսկուա եւ Գրոզնի շահ ունին պատերազմի շարունակութենէն»։ Երեք փորձեր որոնց նպատակն էր վերջ դնել պատերազմին, ձախողեցան աւելի ոճրափորձերու պատճառաւ -- 1995 Յուլիսին, 1996 Ապրիլին, 1996 Յունիսին։

Ո՞վ կը նպաստաւորուի այս պատերազմէն։ Միլիոնաւոր տոլարներու կը նստի Մոսկուայի, բայց նաեւ միլիոնաւոր տոլարներ կը բերէ քարիւղի եւ զէնքի շահագործութեամբ ապրողներուն։ 1995-ին 2 միլիառ տոլար յատկացուած է Գրոզնիի վերաշինութեան։ Ռուս կամ օտար բազմաթիւ շինարարական ձեռնարկութիւններու ամէն մէկը 290 միլիոն տոլարի պայմանագրութիւն ստորագրած է։ Եօթը դրամատուներ կը զբաղին փոխանցումներով։ Միայն անոնք չեն օգտուողները։ Ներքին նախարարութիւնը որ կարեւոր դեր ունի խաղալիք, առիթը կ'օգտագործէ յաւելեալ գումարներ պահանջելու համար իր պիւտճէին (400 միլիոն տոլար)։ Նկատի կ'առնուի նաեւ որ երկու լրագրողներ որոնք փորձած են քիչ մը աւելի հեռու երթալ, երկուքն ալ սպաննուած են։ Մէկը Նինա Էֆիմովա կ'աշխատէր Գրոզնիի (ռուսամէտ), միւսն ալ Նադեժդա Չայքովա Օբշայա Կազետայի համար։

***

Տեղւոյն վրայ, կռիւները բուռն են եւ Ռուսերը մեծ կորուստներ արձանագրած են։ Կորսնցուցած են ութ թռան, 15 հրասայլ եւ 50-էն աւելի զինուոր։ Անկախապաշտներու ղեկավարներէն մէկը՝ Զուբայրեւ, ուրախութեամբ կը պարծենայ. -- «Տարիուկէս առաջ ստիպեցին որ նահանջենք, այսօր մեր հակայարձակումն է։ Մեր քաղաքը կ'ազատագրենք գրաւողներէն»։

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՍՊԱՆԻՈՅ հարաւ - արեւելեան շրջանը (Ֆրանսական սահմանագլուխ) Պիէսքասի մէջ, արակոնեան Փիրէնեաններ, ահաւոր ողողումներ աւեր գործած են Զորեքշաբթի, Օգոստոս 7-ի գիշերը, ճամբարի մը մէջ ուր 800 հոգի բանակում կ'ընէին։ Ջուրերը, քարերը, ցեխը քշած են ամբողջ բանակավայրը։ Առաջին հաշուեկշիռի մը համաձայն, 30 մեռեալ կար եւ 140 վիրաւոր։ Պարզուած պատկերը, Հինգշաբթի առտու, ահաւոր էր ըստ ականատեսներու եւ վախ կար որ զոհերու թիւը շատ աւելի մեծ ըլլար։

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ Օգոստոս 7-ին վերջին նիստ մը գումարեց երկու շաբաթուան արձակուրդէ մը առաջ եւ կարգ մը որոշումներ տուաւ։ 1997-ի պիւտճէն կը նախատեսէ խնայողութիւններ եւ տուրքերու նուազումը։ Այս վերջին կէտին համեմատութիւնը չէ ճշդուած, Տնտեսութեան նախարարը կ'որակէ՝ «նշանակալից»։ Կառավարութիւնն ալ նուազ պիտի ծախսէ, այսինքն՝ ոչ աւելի քան 1996-ին։ Բոլոր նախարարութիւնները բացի՝ Կրթականէն, Առողջապահականէն եւ Արդարադատութենէն պարտին զգալի խնայողութիւններ ընել։ Կառավարութեան բանբերին համար կառավարութեան ծախքերուն պահպանումը 1997-ին նախընթաց չունեցող ճիգ մըն է։ Կառավարութիւնը ծրագրած է նաեւ 6500-էն 7000 պաշտօնազրկում պաշտօնատարներու մարզին մէջ, ինչ որ բաւական աղմուկ հանած է եւ ալ աւելի կրնայ հանել վերամուտին։ Շուկաներն ալ բաւական պաղ ընդունելութիւն մը ըրին այս ծրագիրներուն առթիւ, Ֆրանքն ալ միշտ տկար կը մնայ մարքին բաղդատմամբ (3,41)։

ԷՐՊԱՔԱՆ բացարձակապէս հերքած է թէ իր կառավարութիւնը որեւէ մտադրութիւն ունենայ բանակցութիւններ բանալու ՓՔՔ-ի հետ։ «Ահաբեկիչներու հետ սեղան չենք նստիր» շեշտած է Թուրքիոյ վարչապետը։

ՀՐԱՏ մոլորակի վրայ կեանքի հետքեր

(Շար.ը կարդալ Դ. էջ)

ՄԱՄՈՒԼ

LE MONDE (8 août)

LE RETOUR
DE LA DEPOUILLE MORTELLE
D'ENVER PACHA EN TURQUIE

Թերթին Պոլսոյ մնայուն թղթակիցը՝ Նիքոլ Փոփ կ'անդրադառնայ Էնվէր փաշայի աճիւնին հայրենադարձին եւ այդ առընչութեամբ կ'ոգեկոչէ մարդը որ բանակէն նիւթ եղած է անցեալին -- եւ է՛ այսօր ալ -- Թուրքիոյ մէջ։

«Հերո՞ս թէ անպատասխանատու արկածախնդիր» հարց կուտայ յօդուածագիրը առաջին տողէն իսկ, աւելցնելով անմիջապէս՝ «Թուրք պատմութիւնը իր վերջնական վճիռը չէ արձակած»։

Արձագանգելէ ետք թաղման արարողութեան (տես՝ «Յառաջ» Օգոստոս 6), Նիքոլ Փոփ կ'անցնի Էնվէրի կենսագրականին ու կը գրէ. -- «Հանրապետական բազմաթիւ Թուրքերու աչքին, Էնվէր Փաշա երկար ատեն խորհրդանշեց փառքէ հեռու անցեալ մը որ բարձի թողի եղած էր քեմալական վարչակարգին կողմէ։ Երիտթուրք արդիապաշտ շարժումին ամէնէն կարեւոր անդամն էր, երբ շարժումը իր գագաթնակէտին հասած էր 1908-ի եւ 1918-ի միջեւ, Սուլթանը շատ տկարացած էր ընդդիմանալու համար անոր ազդեցութեան։ Երիտթուրքերը նոր կենսունակութիւն կ'ուզէին տալ կայսրութեան, բայց, պատերազմական նախարարը զիրենք մղեց աղէտալի զինակցութեան մը Գերմանիոյ հետ։ Վայելուչ, շնորհալի եւ փառասէր, նուաճումներ երազելով, Էնվէր փաշա իր զինուորները նետեց ռուս զօրքերու դէմ 1914-ի ձմրան, ինչ որ շուրջ 100 հազար հոգիի մահուան պատճառ եղաւ։ Անատոլուի ռուս հակայարձակման հետեւեցաւ հրաման մը տեղահանելու հայ բնակչութիւնը, զոր Պոլսոյ իշխանութիւնը կ'ամբաստանէր որպէս գործակից թշնամիին։ Էնվէր Փաշա եւ իր պաշտօնակիցները պատասխանատուութիւնը կը կրեն 1915-ի եղերական ջարդերուն»։

Ապա, Նիքոլ Փոփ կը շարունակէ Էնվէրի կենսագրականը, կը յիշէ անոր նոր արկածախնդրութիւնները Լենինի հետ, Մոսկուա, ապա Կեդրոնական Ասիա, մահմետական, պասմաչիներու հետ եւ իր մահը խորհրդային գնդակներէ։ Ու թերթին թղթակիցը կ'եզրակացնէ. -- «պատուելով այս խնդրոյ առարկայ զօրավարը, որ հայրենասէր մը նկատուած է հակառակ իր սխալներուն, Թուրքիա, բացէ ի բաց կը ճակատի իր պատմութեան մէկ շրջանին հետ, զոր երկար ատեն անտեսած է»։

ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐՔԻԱ ՄԵՐՁԵՑՈՒՄԸ ԳՈՐԾԻ ՄԱՐԴՈՑ ՆԱԽԱՁԵՌՆՈՎ

Յուլիս 28 -- Օգոստոս 1 Հայաստանէն գործի մարդոց պատուիրակութիւն մը Պոլսոյ մէջ կարեւոր շփումներ ունեցած է թուրք քաղաքական եւ տնտեսական մարզին դէմքերու հետ։ Հայկական պատուիրակութիւնը գլխաւորած է երեսփոխան ու ծանօթ գործարար Թելման Տէր - Պետրոսեան. իրեն ընկերացած են Հայաստանի գործի աշխարհին ծանօթ դէմքերէն Արամ Վարդանեան, Խաչիկ Սուքիասեան, Գագիկ Պօղոսեան, Վազգէն Պօղոսեան, Ջաւէն Յարութիւնեան, Արմէն Ղազարեան եւ ուրիշներ։

Հայկական պատուիրակութիւնը որ հրաւիրուած է «Պողպատի արտադրութեան թէքնոլոժիներ» խորագրուած միջազգային գիտաժողովին կազմակերպիչ թրքական «Ինթէնքօ» հաստատութեան կողմէ, զանազան շփումներ ունեցած է թրքական արտադրող մեծ հաստատութիւններու պատասխանատուներու, տնտեսագէտներու հետ։

Ինչ որ առաւել հետաքրքրական է, այս այցելութեան ընթացքին տեղի ունեցած հանդիպումն է Թ. Տէր - Պետրոսեանի եւ ծագումով հրեայ թուրք երեսփոխան Ճէֆի Քամհիի ու Ալ. Թիւրքէշի տղուն Թուղրուլ Թիւրքէշի հետ։ Այս հանդիպումին ներկայ գտնուած է նաեւ Ֆրանսայէն Սամսոն Խօզարարտ որ Սեւ-ծովեան տնտեսական համագործակցութեան խորհուրդին մօտ Հայաստանի ներկայացուցիչն է։ Ան է որ կարեւորագոյն դերը կատարած է նախագահ Լ. Տէր - Պետրոսեանի եւ Ալփասլան Թիւրքէշի փարիզեան հանդիպումին։

«Ակօս» շաբաթաթերթին մէջ ուր ամբողջ էջ մը յատկացուած է Հայաստանի պատուիրակութեան եռօրեայ հանդիպումներուն, հետաքրքրական է կարդալ Թ. Տէր -- Պետրոսեանի, Թ. Թիւրքէշի եւ հիւրընկալ թրքական հաստատութեան (Ինթէքնօ) նախագահին արտայայտութիւնները։ Բացայայտ է որ նման նախաձեռնութիւններուն կը տրուի քաղաքական տարողութիւն մըն ալ։ Այս պարագան անուղղակի ձեւով տեղ գտած է Թ. Տէր - Պետրոսեանի խօսքերուն մէջ. ան առաւելաբար ծանրացած է երկու երկիրներուն համար ալ առեւտրական յարաբերութիւններու շահաւոր բնոյթին վրայ, շեշտելով կարեւորութիւնը Հայաստան -- Թուրքիա սահմանային անցքերուն։ Խօսելով երկու կողմին համար ատկէ ակնկալելի շահերու մասին, ան կ'ըսէ. «Թուրքիոյ եւ Հայաստանի քաղաքական դէմքերը այլեւս պէտք է անդրադառնան այս իրականութեան ու ըմբռնեն երկու երկիրներուն շահերը։ Ժողովուրդն ու գործի մարդիկը արդէն անդրադարձած են ատոր»։

Թ. Թիւրքէշ որ փոխ - նախագահն է հօրը հիմնած ու ղեկավարած «Ազգայնական շարժում» կուսակցութեան, գոհունակութիւն յայտնելէ ետք հայկական պատուիրակութեան Թուրքիա գտնուելուն, Թելման Տէր - Պետրոսեանի հետ նախապէս հաստատուած բարեկամութիւն մը ամրապնդելու առիթ կը նկատէ ատիկա։ Նման փոխադարձ այցելութիւններու վրայ հաւատք ունի որպէս շրջանին մէջ աւելի ամուր յարաբերութիւններու մեկնակէտ։ Կ'ըսէ թէ Հայաստան եւ Թուրքիա շրջանին երկու կարեւոր երկիրներն են ու պէտք է շփումի բոլոր առիթները օգտագործել։ Այդ յարաբերութիւնները որքան շուտով հաստատուին, այնքան օգտակար կ'ըլլան։

Ինթէքնօ հաստատութեան նախագահն ալ յոյս կը յայտնէ որ գործի աշխարհին մարդոց կողմէ առնուած քայլերուն հետեւին քաղաքական դէմքերը, քանի որ բարեկամութիւնները կարեւոր զարգացումներու հիմը կը կազմեն։

***

Քաղաքականէն աւելի արդիւնաւէտ ըլլալու կոչուած տնտեսական մարզի նախաքայլերը յայտնապէս աւելի կարճ ճամբէն յաջողութեան կրնան հասնիլ, քանի որ հայկական պատուիրակութիւնը Թուրքիայէն Կարսի ճամբով հազիւ վերադարձած Երեւան, Օգոստոս 7 -- 10 Հայաստան կը գտնուի Կարսի առեւտրաարդիւնաբերական պալատին 4 հոգինոց պատուիրակութիւնը, Հայաստանի Արդիւնաբերողներու եւ գործարարներու Միութեան հրաւէրով։ Հիւր պատուիրակութիւնը կ'այցելէ նաեւ Գիւմրի։ Հոկտեմբերին համար ծրագրուած է թրքական այլ պատուիրակութեան մը այցելութիւնը Հայաստան։

ԹՐՔԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ

«ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՈԼՈՎՈՅԹԻՆ ՄԷՋ ՕՍՄԱՆԵԱՆ ՈՍՏԱՆՆԵՐ»

Այս խորագիրով անցեալ Մարտին Պոլսոյ մէջ լոյս տեսած է 200 էջնոց (թրքերէն) հատոր մը ուր խմբուած են «Օսմանեան կայսրութենէն ներկայի Թուրքիան» նիւթով գիտաժողովին ելոյթները։ Թուրքիայէն եւ արեւմտեան երկիրներէ -- մեծ մասով Ֆրանսայէն -- պատմաբաններ նիւթ առած են Օսմանեան շրջանի կարեւոր քաղաքները -- Պոլիս, Պուրսա, Վան, Պաղտատ, Աղեքսանդրիա, եւլն.--։ Վանի մասին հետաքրքրական զեկուցում մը կարդացած է Անահիտ Տէր -- Մինասեան, զարասկիզբի քաղաքը ներկայացնելով հայկական աղբիւրներէ։ Զեկուցումին հետ հատորին մէջ տեղ տրուած է նաեւ հայկական աղբիւրներէ առնուած հայատառ քարտէսներու, Վանէն տեսարաններու եւ վիճակագրական ցուցակներու։

Հատորին խմբագիրներն են Փօլ Տիւմոն եւ Ֆրանսուա Ժորժոն, հրատարակուած է Թուրքիոյ «Պատմութեան վաքըֆին եուրթ» հրատարակչականին կողմէ։

ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ՎԱՀԷ ՕՇԱԿԱՆ

– 2 –

Քիչ են ճամբաները որ Հայաստանէն Ղարաբաղ կը տանին: Հիմնականին մէջ երկու հատ են, եթէ նկատի չառնենք ուղղաթիռով Երեւանէն Ստեփանակերտ գիծը որ աճապարող վաճառականներու, քաղաքագէտներու, զինուորականներու եւ միջազգային անհոտ, անգոյն եւ աննըկարագիր դիւանակալներու նախընտրած ճամբան է: Առաջինը ամէնէն ծանօթն է, այն է որ Գորիսի վրայով կը հասնի Լաչին (այս քաղաքին հին հայկական անունը Քաշաթաղ եղած է եւ որ 15-րդ դարուն Մելիքութիւններու աթոռանիստ վայր էր եւ ունէր իր նշանաւոր Քաշաթաղի բերդը) եւ անցնելով Լիսագորէն եւ Շուշիէն կը հասնի Ստեփանակերտ: Ահաւոր է այս ճամբուն քարքարուտ, խորտուբորտ նկարագիրը որ տառացիօրէն կառքին ու մարդուն հոգին բերանը կը բերէ մինչեւ որ հասնի իր աւարտին: Բայց անկասկած որ ներքին լոժիք մը, իմաստ մը կայ այս իրողութեան մէջ եւ ան որ երեւոյթներուն ետին կ'անցնի՝ ան է որ կը հասկնայ ինչու այդ ժամերով չվերջացող տանջանքը լուռ ու համակերպ համբերութեամբ, նոյնիսկ թաքուն երջանկութեամբ մը պէտք է տանի մարդ, իբրեւ իրական ուխտագնացութեան մը գինը: Ի վերջոյ, գիտենք թէ, սկզբունքով, դժուար պէտք է ըլլայ Ուղին գտնելն ու անոր հետեւիլը: «Ճշմարտութիւնը ծաղիկ մը չէ որ կը պոկենք այլ բարձունք մը որ կը մագլցինք» կ'ըսեն հին իմաստունները: Այս օրերուս, «Փորձութեան ճանապարհը» սկսած է այլափոխուիլ, կորսնցնել իր խորհրդանշական իմաստը եւ աչքը բաց, կատակ չվերցնող ու քիթը գործին մարդերու բանակ մը լծուած է զայն վերածելու աշխարհի ամէնէն դիւրանցնելի, հանգստաւէտ ու գեղատեսիլ, ասֆալդապատ խճուղիին: Ըսելիք չունիմ, ճակատամարտը կորսըւած է արդէն եւ քանի մը տարիէն այդ ինքնատիպ եւ խորհրդապատ կտոր մը հողը պիտի դառնայ, ինծի պէս մարդոց համար՝ աննկարագիր, հասարակ եւ կատարելապէս անշահեկան ճամբայ մը: Այս խճուղիի նորոգութեան համար պատրաստուած հանգանակութեան յայտարարութիւնը կը հաղորդէ թէ մէկ մեթր նորոգութիւնը 250 տոլար պիտի արժէ: Անկասկած ամէն հայրենասէր Հայ պիտի մասնակցի, սակայն բուն գինը հազար անգամ աւելի պիտի ըլլայ եւ այդ՝ պիտի վճարեն գալիք հայ սերունդները վերածուած թուրիսթներու, գործարարներու, հանգստեան կոչուածներու բազմութեան որ թիմուած մեծափարթամ, աշխարհակալ ու հականեխուած օթօպիւսներու մէջ՝ պիտի սուրան հարիւրի վրայ, անցնին երթան, առանց բան մը հասկնալու «Դէպի Ղարաբաղ» ճամբորդութենէն: (Հոս տեղն է նշելու թէ հողային երկրորդ ճամբայ մըն ալ կայ որ Աղդամէն կը մեկնի եւ Ֆիզուլիի եւ Ճապրայիլի վրայով, այսինքն ամբողջութեամբ նախկին ազըրպէջանեան հողամասին վրայէն անցնելով կը հասնի Գորիս: Թուրքերուն շինած այս ճամբան կ'ըսեն թէ շատ աւելի մաքուր ու կանոնաւոր է, թէեւ շատ աւելի երկար, ու կ'աւելցնեն «արտաքին ճամբաները, այսինքն անոնք որոնք նախկին Թրքական հողէն կ'անցնին միշտ աւելի լաւ շինուած են, աւելի հաճելի են քան ներքին, այսինքն ղարաբաղեան սահմաններէն ներս, հայկական ճամբաները»: Այս ալ արդիւնքներէն մին է Ազրպէջանի կառավարութեան հակահայ քաղաքականութեան):

Բարեբախտաբար կայ երկրորդ ճամբայ մը որ յաւիտեանս կը պահէ իր խորունկ նշանակութիւնը եւ զոր ոչ մէկ բարեմիտ գործարար կրնայ խաթարել -- արուեստի, երեւակայութեան ու ոգիի ճամբան: Առաջին եւ գլխաւոր բանը որ մարդ պէտք է գիտնայ Ղարաբաղի մասին՝ այն է որ Ղարաբաղցի ժողովուրդը դարերէ ի վեր անհաշտ եւ դաժն պայքարի, պատերազմի մէջ եղած է անգութ բայց չքեղ բնութեան մը եւ անգութ բայց վատ ժողովուրդներու հետ: 11-րդ եւ 12-րդ դարերուն՝ Սելճուքներու դէմ, 13-րդ դարէն մինչեւ 17-րդ դար՝ Թաթար -- Մոնղոլներու դէմ ազատագրական անդուլ պայքար՝ որ կը յանգէր ի վերջոյ Մելիքութիւններու վարչակարգին որ կը տեւէր մինչեւ 18-րդ դար երբ ծայր կուտար կենաց -- մահու կռիւը Թուրքերու դէմ որոնք գըրաւած էին Անդրկովկասի մեծ մասը: Հոս ալ յաղթական են Հայերը Դաւիթ Բեկի, Մխիթար Սպարապետի, Ավան հարիւրապետի եւ Մելիքութիւններու գըլխաւորութեամբ: 1750-ական թուականներուն էր սակայն որ, օգտուելով Ղարաբաղի Մելիքներու միջեւ ծագած անհամաձայնութենէն Կովկասի վաչկատուն, Պարսիկ -- Թաթար, այսինքն ազրպէջանցի ցեղապետ Փանահ Ալին կը գրաւէր Շուշի բերդը ու ինքզինքը կը հռչակէր Ղարաղի Խան: Ու կռիւը կը շարունակուէր...:

Ինծի կը թուի թէ մենք Արեւմտահայերս անկարող ենք այս յարատեւ եւ անդուլ կռուին նշանակութիւնը լրիւ հասկնալու: Մենք վեց հարիւր տարի գերի ապրեցանք եւ մեր ուժն ու յոյսը եկեղեցւոյ եւ բնածին խելքին վրայ դրինք, ու միայն մէկ դարէ ի վեր է որ մեր կռուի բնազդը արթնցած է մեր մէջ: Այդ մէկ դարուն մէջ ալ միայն քսան տարի էր որ հայ մարդը զէնն ի ձեռին կռիւ մղեց յանուն պատուին եւ անկախութեան: Ղարաբաղի հայութիւնը, նման հին Յունաստանի Սպարտացիներուն, պատերազմիկ ժողովուրդ եղած է, սէրն ու մահը, զուրգուրանքն ու ատելութիւնը հաւասար կիրքով ապրող ընկերութիւն մը, արմատները ուժգին խրած իր աւանդութիւններուն ու բնաշխարհին ընդերքին: Ասկէ կը ծնի այն բացառիկ յարաբերութիւնը որ Ղարաբաղցին ունի իր հողին ու բնութեան հետ որ մենք, Արեւմուտքի մայթերուն վրայ ապրող եւ վերացական, օտար օրէնքներով ապրող Հայերս անկարող ենք ամբողջութեամբ ըմբռնել:

Զարքաշ եւ ծայրայեղութիւններու վըրայ խարսխուած այս կեանքը, պրկուած քաջութեան, ազատասիրութեան եւ հայրենասիրութեան մկաններով, իրեն յատուկ մշակոյթ մը ստեղծած է որ կը յատկանշուի իր խոր մարդկայնութեամբ, զգացական առաքինութիւններու բիւրեղացումով եւ ներզօր հայկականութեամբ: Ստեփանակերտ փողոցը ոեւէ մէկը կըրնաս կեցնել ու բարեկամանալ հետը, խօսիլ ու կատակել. հակառակ երկրին տընտեսական անձուկ վիճակին՝ չկայ ստահակ, մուրացկան կամ գինով ու մարդկային յարաբերութիւնները իրենց պարզագոյն, ամէնէն բնական համեմատութեանց հասած են: Էն քիչ լսուող բառերը «ներողութիւն» կամ «շնորհակալութիւն» բառերն ու քաղաքավարական սովորական փորմիւլներն են որովհետեւ մարդիկ կը զգան իրարու հոգեվիճակը եւ պէտք չունին աւելորդ խօսքերով զգուշութիւններու կամ ձեւակերպութիւններու դիմելու: Ատոր տեղը՝ իրարու ծաղիկ կուտան կամ օգնութեան կը հասնին, կենացներ կ'առաջարկեն, լուռ բայց տաք՝ ձեռք կը սեղմեն, զաղտնի կը ժպտին: Ու հիմա որ Թուրքը (Ղարաբաղցիք Ազերիներուն Թուրք անունը կուտան) լաւ մը ափած են, Հայուն սարսափով խարանած անոր հոգին եւ լուծած իրենց դարաւոր վրէժը՝ ինքնավստահութիւն մը եւ հպարտութիւն մը եկած են աւելնալ անոնց սրտերուն մէջ որ պարզապէս հիանալի փայլ մը կուտայ անոնց այլապէս աղխիւ, մարդամօտ նկարագրին:

Սակայն այս բոլորը չեն կրնար մոռցնել վիշտը որ կ'այրէ մարդոց սրտերը: Չկայ տուն մը ուր մահը այցելած չըլլայ, յաճախ քանի մը անգամ ու մարդիկ ծունկի չբերած: Մշակոյթը սակայն կրցած է տանիլ այդ հարուածները, գիտցած է մանաւանդ այդ կատաղի սուգը ուժի վերածել անոնց կուրծքին մէջ: Ղարաբաղը բանաստեղծներու երկիր է այսօր եւ անոնց տողերէն է որ կը պոռթկայ, կեանքի հրճուանքին հետ որ բանաստեղծական արարքն է՝ ցասումը, տառապանքը որով սանձարձակ մահը ճմլած, տրորած է մարդոց հոգիները: Ահա փաւերական քերթուածը երիտասարդ տաղանդաւոր բանաստեղծ կնոջ, Զինայդա Բալայեանի առնուած իր «Շառաւիղեան» (Երեւան, 1995) հատորէն:

Մահը խրախճանք է սփռել
  քաղաքի խաչմերուկներում,
  փողոցներում անհրապոյր,
մահը ոխակալ, անբարոյ վարքով
  բրբրում է ջահել կանանց լուսաւոր
  մարմինները
  ի տես լուսնթագի՝
    անդամախառում...
  մահը շնկշնկալով առնում է
    ուժահատ մօր
  ուսերը ու ծունկն - ծունկն անում...
  մահը անբարոյ, անհրապոյր...
  տէր,
  ոռնում է ու մնում անհամբեր...

Այդպէս նախատակւում են մամիկներ,
պապիկներ, պարմանիներ,
աղջիկներ արքունեքի կարօտ, զգուանքի,
համբոյրի կարօտ,
այրեր որ կուռւմ են, մարտիրոսւում,
գողեր, որ չեն խորշում,
մուտք գործելու տներ՝ անտէրունչ...
հունձը դառել է առատ,
վարձը՝ կեանքի չնչին բեկոր,
  ժամանակի սեւ գոյնը,
  աշխարհի անտարբեր վարքից
    գունաւորուած,
  զիգզագներ է յղում անորոշ
    ուղղութեամբ...
Ուրուականներ՝ մեռեալ
  քաղաքի դեռեւս պիրկ մարմնին...

Տէր, ահա զոհերը քո.
  համտեսի՛ր,
  վարձը բաւական առատ է...
Ո՛վ Հայոց խրոխտ աստուածներ,
  վերադարձրէք մեր բազկի ուժը,
    Արցախայ ծխին՝ զօրավիգ...

12.00 գիշեր
25 - 2 - 1992
Ք. Ստեփանակերտ

«Հայոց խրոխտ աստուածներ» ... դիւրին հռետորութիւն չէ ասիկա եւ ես տեսայ զանոնք, Փէտայի հերոսներու, հողագործներու, պատահական հանդիպումներու, ուսուցիչներու եւ բանաստեղծներու մարդկային կերպարանքով Ազատամարտիկներու պողպատային երկայնքին: Զինայդա Բալայեանին այս քերթուածը շատ աւելի ցայտք կուտայ Ղարաբաղի կամքին, քան հազար լրագրողի կամ այցելուի վկայութիւնը: Արուեստը կը մնայ լաւագոյն ճամբան դէպի Ղարաբաղ:

«Ասպարէզ»

ՄԱՐՄԱՐԱ

ՑՈՒՑԱՏԵՍ

ՄԱՐԴԻԿ, ՈՐՈՆՔ ԼՈՒՍԱՆԿԱՐԷՆ ԴՈՒՐՍ ՄՆԱՑԱԾ ԵՆ

Գ.

Միլիոնաւոր ընթերցողներ կան, որոնք եթէ թերթ մը թղթատեն ու լուսանկարի մը մէջ տեսնեն երկու նախագահներու գագաթային մէկ նկարը, կամ գագաթային առանձին դէմքի մը լուսանկարը, իրենց մտքէն իսկ չեն կրնար անցընել թէ իրենք ալ օր մը կրնան թերեւս այդպիսի գագաթային դէմք մը դառնալ: Բնութիւնը մարդոց ջախջախիչ մեծամասնութեան հոգեբանութիւնը սահմանափակած է որոշ արգելքներով: Ձեզ շրջապատող մարդոց միջեւ անպայման կրնան գտնուիլ մէկ կամ երկու մարդիկ որոնք կրնան երազել օր մը երկրին նախագահը կամ վարչապետը դառնալ: Բայց ձեզ շրջապատող մարդոց մեծամասնութիւնը այդպիսի ցանկութիւն մը, այդպիսի հեռանկար մը չի կրնար սնուցանել: Անոնց միջեւ անտարակոյս կան մարդիկ, որոնք, եթէ երկրին նախագահը ըլլալ չեն ուզեր, ատոր փոխարէն կ'երազեն տարբեր մարզէ մը ներս գագաթ մը դառնալ, օրինակ՝ իրենց աշխատած ընկերութեան մէջ վարչութեան նախագահ կարգուիլ, իրենց աշխատած գիտական հիմնարկութեան մէջ կարեւոր դիրք մը ընել, իրենց գործի ասպարէզէն ներս երկրին ամենամեծ հոլտինկներէն մէկը հիմնել, եւայլն: Բայց անոնք ալ մեծամասնութիւն չեն կազմեր: Գագաթ դառնալու տենչանքը ամէնուն տրուած չէ: Մեզ շրջապատող մարդոց ջախջախիչ մեծամասնութիւնը ուրիշ ո՛չինչ կրնայ երազել, եթէ ոչ հանգիստ ու բարօր կեանք մը ապրիլ, բնական կեանք մը վարել, վայելել կեանքի գեղեցկութիւնները, եւ այդքան: Այսինքն մնալ միջին մարդու շրջանակին մէջ: Ո՛չ շատ բարձր, ոչ ալ շատ ցած:

Ինչո՞ւ մարդիկ ընդհանրապէս չեն տենչար գագաթ մը դառնալ: Երկու գլխաւոր պատճառներով:

Նախ, մարդիկ ընդհանրապէս, ճիշդ կամ սխալ, պատկերացում մը ունին իրենց կարողութիւններուն մասին: Գիտեն թէ ինչ կրնան ընել եւ ինչ չեն կրնար ընել: Ուստի կը մտածեն որ գագաթ մը դառնալու կարողութիւն չունին, ատիկա իրենց գործը չէ: Այդ պատճառաւ չեն իսկ երազեր այդպիսի հեռապատկեր մը: Անոնք ընկերութեան մէջ աւելի համեստ տեղ մը կ'ակնկալեն իրենց համար:

Յետոյ, կան նաեւ մարդիկ, որոնք չեն տենչար գագաթ դառնալ: Կը մտածեն որ թերեւս իրենք ընդունակ էին գագաթ մը դառնալու, այսինքն ունին դէպի գագաթ մագլցելու կարողութիւն եւ արժանիք, բայց իրենց համար ցանկալի չէ գագաթային այդ դիրքը: Անոնք կը զգան թէ ինչպիսի անպատեհութիւններ ունի գագաթային դիրքը: Ծանր պատասխանատուութիւն, այդ պատասխանատուութեան կողմէ պարտադրուած հոգեցնցում, անձնական կեանքի սահմանափակում, եւ այսպիսի բաներ: Անոնց համար այս անպատեհութիւնները աւելի ծանր կը կշռեն, քան թէ գագաթ մը ըլլալու փառքը: Մնաց որ անոնք գիտեն թէ գագաթային դիրքը ընդհանրապէս միշտ անցողիկ է: Գագաթը ո՛չ մէկուն համար մնայուն տեղ է: Կարգ մը ասպարէզներու մէջ գագաթային դիրքը կրնայ միայն երկու, երեք տարի տեւել: Կ'արժէ՞ ամբողջ կեանք մը հասցէագրել այսքան կարճատեւ փառաւորութեան մը հասնելու համար: Գագաթէն վերջ ի՞նչ պիտի ըլլայ: Ոմանք կըրնա՞ն հանդուրժել գագաթային դիրքը գրաւելէ վերջ սովորական մարդ դառնալու անփառունակութեան: Լուսանկարին մէջ տեսնուած նախագահը քանի մը տարի վերջ իր տեղը ուրիշին պիտի թողու: Պատմութեան մէջ տեղ մը պիտի գրաւէ թերեւս, բայց ընկերութեան մէջ ի՞նչ դիրք պիտի գրաւէ մինչեւ մահ:

Թերեւս երրորդ պատճառ մըն ալ կայ որուն համար մարդիկ կրնան չտենչալ գագաթ մը դառնալ: Բայց շատ աննշան պատճառ մըն է այդ: Այդ է՝ չգիտնալ գագաթի գոյութիւնը: Գագաթի մասին բնաւ գաղափար չունենալ: Ապրիլ այնպիսի յետամնաց, նախնական, մեկուսացեալ պայմաններու մէջ, որ գագաթներու գոյութենէն լուր չունենալ, չգիտնալ թէ ինչ կը նշանակէ գագաթը:

Այսպէս կամ այնպէս, ընկերութիւնը բաղկացնող մարդոց միջեւ փաքրամասնութիւն կը կազմեն անո՛նք որոնք գագաթ մը դառնալու հեռապատկերով կը գործեն, կը շարժին, կը պայքարին: Կը յաջողին, կամ չեն յաջողիր: Անոնց աչքը ուղղուած է դէպի վեր:

Իսկ մեծամասնութիւնը կը նախընտրէ մասամբ դուրս մնալ գագաթային մարդոց լուսանկարէն, մնալ շուքին մէջ, կամ մնալ իր սեփական երդիքին տակ: Այս մէկը աւելի մեծ երջանկութիւն կը պարգեւէ մարդոց, աւելի անդորր կեանք մը կ'ապահովէ: Մարդիկ աւելի հանգիստ կը քնանան գիշերը եթէ լուսանկարին մէջ տեսնուած կարեւոր մարդը չեն:

Մէկ բան միայն անհանգստութիւն կըրնայ պատճառել այն համեստ մարդոց, որոնք նախընտրած են լուսանկարէն

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՎԵՆԵՏԻԿԻ ՄԷՋ

Վենետիկի Մուրատ - Ռափայէլեան վարժարանին մէջ Յուլիս 28-ին վերջ գտաւ ամառնային դասընթացքը: Ես ...երէնի ...եկն էի անոնցմէ որոնք հետեւեցան այդ ...ներուն հայերէն սորվելու, կամ իրենց ...ացածը կատարելագործելու համար:

Առաւօտները կանուխ Թափառականի ...ման քալեցի Վենետիկի ծաղկազարդ ...նեղ փողոցներէն եւ անցայ իր բոլոր կամուրջներէն: Մե՜ղք անոնց որոնք չեն տեսած Վենետիկի խորայատուկ գեղեցկութիւնը առաւօտեան լոյսով երբ ան կը ...փայլի թարմ գոյներով: Այդ ժամուն Վենետիկցին տակաւին տէրն է իր քաղաքին. Զբօսաշրջիկներու գունդերը քնացած են եւ քիչ յետոյ ալիքներու նման պիտի գրաւեն գեղեցկուհի քաղաքը: Մինչ այդ, ի՜նչ հաճոյք է դիտել ու լսել միայն ...ացիները որոնք աշխոյժ քայլերով կը ...ին իրենց աշխատավայրերը: Հաճոյք՝ ...եւ հետեւիլ իրենց: Հոգ չէ որ ձեր ...մբէն կը շեղիք եւ կը կարծէք թէ մոլորած էք: Վենետիկը լաբիւրինթոս մըն է ուր սակայն երբեք չէք կորսուիր: Բոլոր ճամբաները կ'առաջնորդեն Մուրատ -- Ռափայէլեան Վարժարան:

***

Հայր Վահան խանդավառ լեզուագէտ մըն է: Ան մեզի պիտի սորվեցնէ հայերէնի ուղղագրութեան հիմնական կանոնները:

-- Գրեցէ՛ք առաջին կանոնը. ա-էն յետոյ միշտ փ կուգայ. օրինակ՝ ծափ: Հիմա դուք ալ օրինակներ գտէք:

Բայց աւա՜ղ, մեր ուղեղներուն ալիքները չեն վարժուած հայերէն հրահանգներ ստանալու ու շատ դանդաղօրէն կը պատասխանեն: Ատիկա չի խանգարեր Հ. Վահանին խանդավառութիւնը. կը շարունակէ՝ քաջալերել մեզ.

-- Բառ մըն ալ դուք գտէք ձայնիմ. Ռուբէ՛ն բառ մը գտա՞ր:

-- ... Փափաք:

-- Ապրի՛ս: Հիմա բացառութիւնները գրեցէ՛ք յուսախաբ...

***

Հայր Սամուէլ ստուեր մըն է որ կը շրջի վարժարանին մէկ ծայրէն միւսը, կամ կը քաշուի իր գրասենեակը: Երբեմն ալ Հայոց պատմութեան դասին բոլորովին անկաշկանդ մէկը կը դառնայ, իր դասաւանդութիւնները կ'ընէ, ապա կրկին կ'անհետանայ:

***

Եւ ահա Պր. Տաքէսեանը որ իր գրասենեակէն լրջօրէն կը դիտէ մեզ՝ Բ. մակարդակի իր աշակերտները: Անոր նայուածքը արդէն կ'ըսէ թէ հայերէն սորվիլը կատակ չէ, այլ կարեւոր գործ մը: Այդ նպատակով ան ծրագիր մը պատրաստած է ուր կան ընթերցումներ, քերականական ու պարտականութիւններու բաժիններ:

-- Այս երկու ընթերցումներուն մէջ կ'րսէ ան ակնարկելով «Աստուծոյ տասերկու օրը» եւ Պ. Զէյթունցեանի «Մեծ լռութիւնը գործերուն, մօտաւորապէս 200 նոր բառ համրեցի որոնք առօրեայ խօսակցութեան մէջ չէք գործածեր: Կանոնաւոր ընթերցումի միջոցով անոնք ընթացիկ բառեր պիտի դառնան:

***

Կ'ուզէի աւարտել այս տողերը չյիշելով վարժարանին խալայցի անճանակալին համակրական վերաբերումը մեզի հանդէպ:

ՇՈՒՇԻԿ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ

Թուլուզ

...րս մնալ: Ի վերջոյ, իրենց կեանքը ...խեալ է գաղթի վրայ գտնուող ինչ-... մարդոց տնօրինութիւններէն: Իրենք ...քան ալ արհամարհեն գաղթի մարդը, ...որքան ալ հեռու մնալ ուզեն գաղա...թային դիրքէն, գաղթի մարդը հեղի...նակութիւն մը պիտի ունենայ իրենց վրայ ...ւ միշտ չէ որ անոնց այդ հեղինակութիւնը հաճելի կամ ընդունելի պիտի դառնայ իրենց:

Մէկ բան ալ կայ, որ կրնայ մխիթարութիւն պատճառել լուսանկարէն դուրս ...նացած մարդոց: Գիտնալ՝ որ սա գաղթի մարդը ի վերջոյ իրենց նման մարդ մըն է, երբեմն մինչեւ իսկ իրենցմէ աւելի տկար կարողութիւններով ու արժանիքներով օժտուած: Գիտնալ՝ թէ գաղթային մարդը երբեք գերմարդ մը չէ, ...մարդոց մէջէն ընտրուած բացառիկ հանճար մը չէ: Գիտակցիլ՝ թէ բնականոն մարդը որեւէ պատճառ չունի գաղթի մարդուն դիմաց ստորակայական բարդոյթ մը զգալու: Վերջապէս չմոռնալ՝ որ ...մարդկային պատմութեան գամբիւղը լեցուած է այդ գամբիւղին մէջ նետուած գաղթային մարդոց լուսանկարներով:

Բ. Հ.

ԵՂԱՆԱԿԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ

ԱՐԵՒԱՀԱՐՈՒԹԻՒՆԸ

Մարդկային մարմինը անակնկալ կերպով հարուածող հիւանդութիւն մըն է արեւահարութիւնը: Անոր ենթակայ կ'ըլլանք մեր անզգուշութեան հետեւանքով:

Ճիշդ է, որ երբեմն արեւահար կ'ըլլանք անսպասելի կերպով յայտնուող տաքերէն, եթէ այդ ժամերուն զուրկ ենք պաշտպանութեան միջոցներէն. սակայն այդ պարագան եւս հետեւանք պէտք է նկատել մեր անզգուշութեան:

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԱՐԵՒԱՀԱՐՈՒԹԵԱՆ ԱԽՏԱՆՇԱՆՆԵՐԸ

Արեւահար հիւանդին մորթը շատ տաք կ'ըլլայ եւ կրնայ մինչեւ 40 ջերմաստիճանի հասնիլ, ենթական ծարաւ կը զգայ, միշտ միզելու պահանջ կ'ունենայ, եւ ծունկերը կը թուլնան: Այս ախտանշաններուն կը յաջորդեն գլխու եւ կուրծքի ցաւերը, սրտին զարկերու արագացում, տեսողութեան խանգարում եւայլն...

Արեւահարութենէն տառապողին դէմքը կրնայ երկու տարբեր երեւոյթներ առնել. այսպէս, ոմանք կը տժգունին եւ կարծէք թէ պիտի նուաղին, ուրիշներ ալ, ընդհակառակն, կը կարմրին, անոնց մորթը քրտինքով կը ծածկուի, եւ երակները յստակօրէն կը յայտնուին, հիւանդը շնչահեղձ կ'ըլլայ:

Հազուադէպօրէն եւ ծանր պարագաներու, հիւանդը գինովի մը պէս կը տատանի, ապա յանկարծ կ'իյնայ՝ անգիտակից վիճակի մէջ:

ԻՆՉՊԷ՞Ս ՀԱԿԱԶԴԵԼ

Արեւահարութիւնը լուրջ անհանգստութիւն մըն է, պէտք զայն լուրջի առնել եւ անմիջապէս բժիշկին խնամքին յանձնել հիւանդը. այսուհանդերձ մինչեւ բժիշկին ժամանումը ի՞նչ կրնանք ընել արեւահարութեան պարագայի մը դիմաց:

● Հիւանդը պէտք է փոխադրել զով, շուք եւ մանաւանդ օդասուն տեղ մը: Ապա զայն պէտք է ձերբազատել իր նեղ հագուստներէն, փողկապէն, գօտիէն, եւայլն...

● Զգախէժէ տոպրակի մը մէջ սառոյց լեցնել եւ ապա տոպրակին բերանը ամուր փակել ու զայն դնել արեւահար հիւանդին գլխուն: Նոյն ձեւի տոպրակ մըն ալ կարելի է պտըտցնել հիւանդին մարմնին մնացեալ մասերուն վրայ, ջերմութիւնը իջեցնելու մտահոգութեամբ:

● Հիւանդին հագուստը հանելէ ետք զայն փաթթել նախապէս պաղ ջուրով թրջուած սաւանի մը մէջ: Ծովեզերքը գտնուելու պարագային կարելի է օգտագործել ծովուն ջուրը եւ խոշոր անձեռոցները: Սաւանը կամ անձեռոցը պէտք է միշտ «թարմացնել» պաղ ջուրով:

● Հիւանդին պաղ ջուրի լոգանք մը տալ, ջուրը աստիճանաբար պաղեցնելով:

● Հիւանդին առատօրէն ջուր խմցնել. բայց պայման է, որ սառնարանի ջուր չըլլայ, այլ՝ ծորակի:

● Ասփիրին կամ փարասեթամոլ տալ հիւանդին, եթէ ջերմութիւնը տակաւին բարձր է:

ԱՐԵՒԱՀԱՐՈՒԹԵԱՆ ՅԱՋՈՐԴ ՕՐԵՐԸ

Թէեւ արեւահարութիւններուն պարագային, եթէ անմիջական դարմանները լաւ ձեւով կատարուած են հիւանդին, երկու -- երեք օրուան հանգիստ մը բաւարար է, որպէսզի հիւանդը ոտքի ելլէ: Անշուշտ որ որոշ տկարութիւն եւ յոգնութիւն պիտի զգայ ան, բայց անոնք աստիճանաբար կ'անհետանան:

Այսուհանդերձ, եթէ գլխու ցաւը շարունակուի, պէտք է, որ հիւանդը անպայման բժիշկին դիմէ:

ԻՆՉՊԷ՞Ս ԽՈՒՍԱՓԻԼ ԱՐԵՒԱՀԱՐՈՒԹԵՆԷ

Բժիշկներու կարծիքով, կարելի է դիւրաւ խուսափիլ արեւահարութենէն, պայմանաւ որ յարգենք կարգ մը տարրական օրէնքներ եւ որդեգրենք որոշ միջոցառումներ:

× Մանուկներով տեղափոխուողները պէտք է, որ տեւաբար իրենց հետ շիշ մը ջուր ունենան: Երախաներուն գլուխը միշտ պէտք է արեւէն պաշտպանել գլխարկով մը, մանաւանդ՝ ծովեզերքը եւ գիւղը: Ամրան պէտք է երախաները թեթեւ հագցնել եւ ոչ մէկ պատճառով երախայ մը առանձին, փակ ինքնաշարժի մը մէջ պէտք է ձգել:

× Ինքնաշարժով տեղափոխուողները պէտք է պատուհանները յաճախ բանան, ներսի օդը փոխելու եւ զովացնելու համար:

Ինքնաշարժին մէջ եւս պէտք է շիշ մը ջուր ունենալ: Մեր երկրի մէջ խճողումները սովորական երեւոյթ են, եւ շիշ մը ջուրը մեծ անհրաժեշտութիւն է տաք օրերուն:

× Ծովեզերքը առատօրէն ջուր խմել մարմնին բնական ջերմութիւնը պահպանելու համար: Արեւէն պաշտպանուիլ լայնեզր գլխարկով մը եւ կամ թրջուած անձեռոցով մը:

× Ամրան տաք օրերուն պէտք է խուսափիլ ճարպոտ ուտելիքներէն եւ միսը փոխարինել ձուկով կամ հաւով:

Նախապատուութիւնը տանք պտուղներուն եւ բանջարեղէններուն, որոնք կարեւոր քանակութեամբ ջուր կը պարունակեն:

Խուսափինք ալքոլ պարունակող խմիչքներէն:

Զգուշանանք պնդութենէն: Նկատուած է, որ արեւահարութիւնը առաւելաբար կը հարուածէ պնդութիւն ունեցող անձերը:

Կրենք առաւելաբար բաց գոյնի հագուստներ, սեւը եւ մուգ գոյները դէպի իրենց կը քաշեն տաք ճառագայթները:

Կրենք բամպակեայ լայն ու հանգստաւէտ հագուստներ:

Խուսափինք շատ ճիգ պահանջող մարզանքներէն եւ նախապատուութիւնը տանք քալելուն եւ հեծիկ քշելուն:

ՈՐՈ՞ՆՔ ԱՒԵԼԻ ՀԱԿԱՄԷՏ ԵՆ

Կարգ մը անձեր նուազ կը հանդուրժեն տաքը, քան՝ ուրիշներ, հետեւաբար ալ աւելի ենթակայ են արեւահարութեան: Այս անձերէն յիշենք գէրերը, յղի կիները, յոգնածները, սրտի հիւանդութիւն կամ շունչի նեղութիւն ունեցողները՝ տկար երիկամներ ունեցողները եւ տարեցները:

Ասոնցմէ զատ, նորածինները լուրջ հոգածութեան եւ ուշադրութեան կը կարօտին, մանաւանդ՝ ամրան տաք օրերուն:

Պատրաստեց՝

ՇՈՒՇԻԿ ՄԱՒԻՍԱԳԱԼԵԱՆ

ԿՂԶԻՆ ԵՒ ՄԻ ՄԱՐԴ

— վիպակ —

ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ

Պտուղները հասել են, խաղողը քաղուած է, գինին ճզմուած եւ աղջիկների աչքերը լցուն են կայծկլտող ցանկութիւններով: Ծովը սկսել է անհանգստանալ ափերի մօտ: Ծիծեռնակները ինչ որ գաղտնի պատրաստութիւններ են տեսնում: Տների կարպետները թափ են տալիս, Ամէն ոք մելամաղձոտ սպասումի մէջ է: Ոմանք պլպլոտ աչքերով երկինքն են նայում. ոմանք լողալով վայր ընկնող ծառերի դեղնած տերեւներէն, եւ ոմանք էլ, նոր գինիով լցուած բաժակի առջեւ նստած, նախազգացումներով եւ ծանր մտածումներով են լցւում:

Գինին եւ մահը լաւ բարեկամներ են:

Սրբի եկեղեցու քահանան, քանի օրից ի վեր, բոլորովին անճանաչելի է դարձել: Անդադար վազում է: Լուռ, հանդիսաւոր, մտազբաղ: Փէշերը վեր քաշած, երկայն ոտքերը առաջ նետելով, մէջքը քիչ ծռած, բազուկները ճօճեցնելով, նա անցնում է փողոցներից հովի նման, առանց ոչ ոքի նայելու: Երբեմն կանգ է առնում, մեծ մի թաշկինակով ճակատի քրտինքը սրբում, ետ վազում, մի խանութի առջեւ ինչ որ մի բան պոռում եւ նորից վազում:

- Փառէ, մարդու երես չէք նայում, բարեւ չէք տալիս, ի՞նչ է պատահել:

Շնչասպառ կանգ է առնում, ապշած երեսիդ նայում եւ ձեռքերը բարձրացընում դէպի երկինք:

- Նուազախմբի դժուարութիւններ, նուագախմբի դժուարութիւններ, - ասում է նա յուսահատ ձայնով եւ բառերի կէսը ուտելով:

Անհետանում է:

Կղզու բոլոր վայրերում, բոլոր պատերի վրայ կպցրած են մեծ յայտարարութիւններ, որոնց վրայ կարելի է կարդալ գալիք տօնակատարութեան մանրամասնութիւնները: Երեք օր տեւող ծիսակատարութիւնների մանրամասնութիւնները:

Բնակչութեան մէջ քոյն դրած ազատամիտները զայրանում են: Սրճարաններում, հրապարակներում, եկեղեցիների առջեւ խմբով կանգնած, նրանք իրենց հաստ բռունցքներով ծեծում են օդը եւ ճառում: «Ամէն տարի ահագին գումարներ են ծախսում, գանգատւում են նրանք, ահագին դրամ վատնում լոկ փառասիրութեան համար: Իսկ նայեցէ՛ք մեր շուրջը տարածուող թշուառութեան վրայ: Բոպիկ ոտքեր, նիհար, անօթի մարմիններ, հիւանդ կրծքեր: Ընտանիքներ կան, որ մի կտոր հաց իսկ չունեն եւ հարիւրաւոր երեխաներ վազվզում են փողոցներում՝ առանց զգեստի, առանց կօշիկի, առանց դպրոցի»:

«Նախ եւ առաջ պէտք է մեծարել սրբերին, առարկում են կղերականները: Եթէ սրբերին չմեծարենք՝ նրանք էլ թշուառներին չեն օգնի: Եղել են վայրեր, ուր սրբերի դրամները ծախսել են ուրիշ բաների վրայ, եւ հետեւանքները եղել են սոսկալի: Հրդեհներ, երկրաշարժներ, համաճարակներ: Ուզում էք գիւղը վըտանգնե՞րի մատնել, Ուզում էք, որ մեր գլխին չանթ ու որո՞տ տեղայ»:

Կղերականները անհանգստանում են, իրենց աչքերը ոլոր ածում եւ փորերը դուրս նետում:

Ազատամիտները ծիծաղում են եւ իրենց շրթունքների վրայից դառնութիւնը սրբում: Նստում են, գինի խմում եւ լռում:

Ամէն տարի այս ճառերը կրկնւում են, եւ ամէն տարի տօները տեղի են ունենում ծրագրուած կերպով, անփոփոխ:

Կղզու բոլոր վայրերից, մօտակայ ու հեռաւոր գիւղերից եւ նոյնիսկ քաղաքներից ահագին քանակութեամբ մարդիկ եւ կանայք են գալիս: Աւտօպիւսների թիւը կրկնապատկւում է՝ երթեւեկութիւնը շարունակւում է՝ առանց դադարի, մինչեւ առաւօտ: Պանդոկներում եւ մասնաւոր տներում անկարելի է սենեակ ճարել: Եկողները քնում են այգիներում, հրապարակների նստարանների վրայ, մօտակայ դաշտերի ծառերի տակ, տանիքների վրայ:

(Շար. 45)

«ՅԱՌԱՋ»Ի ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

71ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԻԹԻՒ

ՄԱՐՍԷՅԼ. _ Սէն - Լու Ս. Գէորգ Եկեղեցւոյ Թաղական խորհուրդը 1000 Ֆր.:

⁂

Սէն - Ժերոմ Ս. Սահակ - Մեսրոպ Եկեղեցւոյ Թաղական խորհուրդը 1000 Ֆր.:

⁂

ԳԼԱՄԱՐ. - Տիկին Սանոսեան 100 Ֆր.:

ՎԱԼԱՆՍ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

Հինգշաբթի, Օգոստոս 15-ին, ժամը 10-ին կը մատուցուի հանդիսաւոր պատարագ եւ աւարտին հոգեհանգստեան պաշտօն՝ Ռմբակոծումէն եւ Բ. պատերազմի զոհ բոլոր ննջեցելոց հոգւոց:

Պատարագիչ եւ քարոզիչ՝
ՆԱՐԵԿ Ա. ՔՀՆՅ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

(Շար. Ա. էջէն)

գտած է ՆԱՍԱ-ն (ամերիկեան անջրպետային կազմակերպութիւն): Այդ հետքերը յայտնաբերուած են երկնաքարի մը վրայ որ 13 հազար տարի առաջ ինկեր է հարաւային բեւեռ: Այդ քարի կտորը Հրատէն եկած է: Կարելի չէ հաստատել թէ մարդկային կեանքի նշաննե՞ր են, թէ պարզապէս մանրէի հետքեր կան:

ԹՈՒՐՔ ԲԺԻՇԿՆԵՐԸ որեւէ ակնարկութիւն չեն ըներ իրենց տեղեկագիրներուն մէջ չարչարանքներու մասին: Այս կէտը յայտնաբերած է «Բժիշկներ մարդկային իրաւանց համար միութիւնը» որ քննութիւն մը կատարած էր վերջերս այդ ուղղութեամբ: Տեղեկագրին գլխաւոր հեղինակը՝ Տոքթոր Վինսան Իաքուինօ կը շեշտէ որ Թուրք օրէնսդրութիւնը կը պահանջէ որ բոլոր բանտարկեալները բժշկական քննութենէ անցնին, բայց, բժիշկները կառավարական պաշտօնեաներ են եւ ճնշումի ենթակայ, որպէսզի հաստատեն թէ չարչարանքի ոչ մէկ հետք կայ: Բժիշկներու 96%-ը յայտնած է որ չարչարանք կայ, 31%-ը կ'ընդունի որ բոլոր բանտարկեալներն ալ ենթակայ են, բայց ոչ մէկը կ'ուզէ յատուկ պարագաներ մատնանշել:

ԺԱՆ ԵՒ ԵՈՒՐԻ ՃՈՐՔԱՅԷՖ խորագրին տակ, «Լիպերասիոն» (Օգոստոս 8) էջ մը նուիրած է հայր ու որդի Ճորքայէֆներու որոնք պատիւ բերին եւ կը բերեն ֆրանսական ֆութպոլին: Հոն ալ, Եուրի կը յիշէ իր մանկութիւնը հայկական մթնոլորտի մէջ:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Օր. Անահիտ Դարբինեան, Տէր եւ Տիկին Համբարձում Դարբինեան զաւակներն ու թոռները, Տէր եւ Տիկին Գէորգ Դարբինեան եւ զաւակները կը ծանուցանեն թէ հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի Կիրակի, Օգոստոս 11, Իսիի Ս. Մարիամ Աստուածածին Եկեղեցին իրենց մօր եւ մեծ - մօր՝

ՏԻԿԻՆ ՆՈՒԱՐԴ ԴԱՐԲԻՆԵԱՆԻ

մահուան քառասունքին առթիւ:

Ի գիտութիւն ողբացեալին յիշատակը յարգողներուն:

SABERATOURS
SEVAN VOYAGES
SABERATOURS
SEVAN VOYAGES
SABERATOURS
SEVAN VOYAGES

PARIS·EREVAN·PARIS
VOLS HEBDOMADAIRES

- ASSISTANCE A L'AÉROPORT
- ORGANISATION D'ACCUEIL ET DE TRANSFERT
- RÉSERVATION D'HÔTEL
- LOCATION DE VOITURE AVEC CHAUFFEUR
- EXCURSIONS GUIDÉES
- VOYAGES ORGANISÉS EN GROUPE

PRIX
PARIS-EREVAN-PARIS A PARTIR DE 3700F
RENSEIGNEMENTS ET RÉSERVATIONS SUR SIMPLE APPEL

PARIS-EREVAN
VOL CARGO MENSUEL

SABERATOURS
31, RUE D'ARGENTEUIL - 75001 PARIS
TEL 42 61 51 13 - FAX 42 61 94 53

SEVAN VOYAGES
48, COURS DE LA LIBERTÉ - 69003 LYON
TEL 78 60 13 66 - FAX 78 60 92 26

EREVAN
37, RUE HANRABEDOUTIAN - EREVAN 10
TEL 52 85 48 - FAX 52 54 48

EN COLLABORATION AVEC
ARMENIAN AIRLINES

STUDIO VICKEN - PARIS 96

ԿԱՊՈՅՏ ԽԱՉ

ՄԵԾ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ ԵՒ ԽԱՂՈՂՕՐՀՆԷՔ

Կիրակի, Օգոստոս 11-ին, ամբողջ օրը, Պէլփոնթէնի (Ժիւրա) կայանը:

Առաւօտեան, Խաղողօրհնէքի արարողութիւնը կը կատարէ՝
ՄԿՐՏԻՉ ՔԱՀԱՆԱՅ ՊԱԼԱՊԱՆԵԱՆ

Պիւֆէ - Գեղարուեստական յայտագիր կայանի երախաներուն կողմէ

- Հաճելի անակնկալներ

- ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ -

Ս. ՅԱԿՈԲ — ԼԻՈՆ

Կիրակի, Օգոստոս 18, տօն է Վերափոխման Սուրբ Աստուածածնի:

Այս առթիւ Լիոնի Ս. Յակոբ Մայր Եկեղեցւոյ մէջ տեղի պիտի ունենայ պատարագ:

Կը պատարագէ եւ կը քարոզէ՝

ՆՈՐՎԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԶԱՔԱՐԵԱՆ

Հայր. Պատուիրակի փոխանորդ
ԼԻՈՆԻ ԵՒ ՌՈՆ _ ԱԼՓԻ ՀԱՅՈՑ

Յաւարտ պատարագի կը կատարուի խաղողօրհնէքի աւանդական արարողութիւնը:

Հաւատացեալներ որոնք Օրհնութեան համար ուխտած են խաղող նուիրել կրնան ուղարկել Եկեղեցւոյս Դիւանատունը:

Սիրով կը հրաւիրուի Լիոնի եւ Շրջանի ուխտաւոր ժողովուրդը սոյն Տաղաւարի հանդիսութեանց:

Սկիզբ Ժամերգութեանց ժամը 8.45-ին:
Պատարագ ժամը 10-ին:
Քարոզ ժամը 11.15-ին:
Խաղողօրհնէք ժամը 12-ին:

ՎԱԼԱՆՍ - Ս. ՍԱՀԱԿ

Կիրակի, Օգոստոս 18
Ս. Սահակ Եկեղեցւոյ մէջ
Ռիւ տը լա Սեսիլ
Վերափոխում Աստուածածնի
Հանդիսաւոր պատարագ կը մատուցուի ժամը 10-ին: Յաւարտ պատարագի, կը կատարուի խաղողի օրհնութիւնը:
Այդ օրը հոգեհանգստեան պաշտօն չի կատարուիր:

ՄԱՐՍԷՅԼԻ ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Տօն Վերափոխման Ս. Աստուածածնի
ԽԱՂՈՂՕՐՀՆՈՒԹԻՒՆ
Կիրակի, Օգոստոս 18
Մարսէյլի
Սրբոց Թարգմանչաց Մայր Եկեղեցւոյ մէջ
Սկիզբ Ժամերգութեանց ժամը 8.30-ին:
Առաւօտեան ժամը 10-ին կը մատուցուի հանդիսաւոր պատարագ:
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ՏԱՐՕՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՃԷՐԷՃԵԱՆ
Առաջնորդական Տեղապահ
Հարաւային Ֆրանսայի Հայոց Թեմի
Պատարագի ընթացքին կը կատարուի «Օրհնութիւն խաղողոյ» աւանդական արարողութիւնը:

-ՎԵՐԱՄՈՒՏ-

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՄԻՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

Լիոնի Հայկազեան Միօրեայ Վարժարանի վերամուտն է Չորեքշաբթի, Հոկտեմբեր 2-ին, Առաւօտեան ժամը 9-ին:

Դասաւանդութիւնները տեղի կ'ունենան Չորեքշաբթի, առաւօտեան ժամը 9-էն 12, կէսօրէ վերջ ժամը 14-էն 16:

Աշակերտները կրնան օգտուիլ կէսօրուան ճաշէն. իսկ երթեւեկի սպասարկութիւն մը կարելի է նախատեսել ծնողքներու հետ համաձայնելով:

Յաւելեալ տեղեկութեան եւ արձանագրութեան համար դիմել Եկեղեցւոյ Դիւանատունը:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Մարսէյլի Մայր Եկեղեցւոյ վարչութիւնը շնորհակալութեամբ ստացած է հետեւեալ նուիրատուութիւնները. - Շաքէ Պետրոսեանի հոգեհանգստեան առթիւ՝ Տէր եւ Տիկին Գրիգոր Պետրոսեան 200 ֆրանք, Յարութիւն Մարգարեան ընտանիք 100 Ֆր.:

Սաթենիկ Թիւթիւնճեանի թաղման առթիւ Թիւթիւնճեան ընտանիք 1000 Ֆր., Տէր եւ Տիկին Կարապետ Տէրտէրեան, Ռմն, Օր. Ժիլտա Խանոյեան, Պր. Վարդապետեան 100-ական Ֆր., Պր. Խաչատուր Օհաննէսեան 500 Ֆր. երդչախումբին:

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Ի նպաստ «ՀԱՅԱՍՏԱՆ» Հիմնադրամի ԿԻՐԱԿԻ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 29, ԺԱՄԸ 15-ին, Իսի լէ Մուլինօ:

8 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1996

ՄԻՒՌՈՆՕՐՀՆԷՔ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԷՋ

Յայտնի է մեր ժողովուրդին, թէ յառաջիկայ 8 Սեպտեմբերին (1996) Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ՝ Նորին Սուրբ Օծութիւն ՏԷՐ ՏԷՐ ԳԱՐԵԳԻՆ Ա. Ծայրագոյն Պատրիարք - Կաթողիկոս Ամենայն Հայոց իր անդրանիկ Միւռոնօրհնութիւնը պիտի կատարէ:

«Միւռոնի Օրհնութիւնը ողջ Հայ Ժողովուրդին համար հոգեկից առիթ է եւ միջոց, մեր ժողովուրդի Քրիստոնէական և Ազգային կեանքի վերանորոգութեան եւ զարգացման համար»:

Առ այդ, սրտագին կոչ կ'ընենք Ֆրանսայի եւ ամբողջ Արեւմտեան Եւրոպայի հոգեւոր մեր զաւակներուն, խուռներամ բազմութեամբ Ուխտի երթալ Սուրբ Էջմիածին ու Շնորհօք վերապարգեւուիլ՝ Սուրբ Միւռոնի բացառիկ այս Օրհնութեան ներկայ գտնուելով:

Այս նպատակաւ, Սեպտեմբեր 5-էն 12-ին՝ մէկ շաբաթուան՝ դէպի Հայաստան Ուխտագնացութիւն կազմակերպուած է:

SABERATOURS-ը մեր կողմէ լիազօրուած է ապահովել ճամբորդական բոլոր գործառնութիւններն - վիզա, օդանաւ, պանդոկ, պտոյտներ, ապահովագրութիւն եւ սնունդ:

Անհրաժեշտ է անյապաղ փութով, մինչեւ 31 Յուլիս ներառեալ, արձանագրուիլ յիշեալ Ուխտագնացութեան, կանխելու համար տեղ ապահովելու յետագայ խճողումը:

ԴԻՒԱՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ
ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ

Արձանագրուելու համար դիմել. -
SABERATOURS
19, rue St-Roch, 75001 PARIS
Tél. : 42. 96. 10. 10 — Fax : 42. 96. 18. 77.

Imprimé sur les presses du Journal «HARATCH» 83, rue d'Hauteville, 75010 Paris
Commission Paritaire : N° 55935 SIRET : 51027317 A R.C. Paris

ՇԱԲԱԹ - ԿԻՐԱԿԻ
ՕԳՈՍՏՈՍ 10-11
SAMEDI - DIMANCHE
10-11 AOUT
1996

LE NUMERO : 5,00 F.

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1925-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE-FONDE EN 1925
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 47. 70. 86. 60 — TELEX : HARATCH 280 868 F
— FAX : 48. 00. 06. 70 —
C.C.P. PARIS 15069-82 E

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 1.100 Ֆ. - Վեցամսեայ : 560 Ֆ.
Արտասահման : Տար. 1.400 Ֆ. (ամէնօրեայ առաքում)
1.250 Ֆ. (շաբաթական առաքում) - Հատը : 5,00 Ֆ.

72ՐԴ ՏԱՐԻ - ԹԻՒ 18.916
Fondateur SCHAVARCH MISSAKIAN
72e ANNEE — N° 18.916

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ԵԼՑԻՆԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

ՆԱԽԱԳԱՀ ՏԷՐ -- ՊԵՏՐՈՍԵԱՆ ՆԵՐԿԱՅ ԵՂԱՒ

Օգոստոս 9-ին է, Ուրբաթ օր, որ Կրեմլինի մէջ տեղի կ'ունենար նախագահ Ելցինի երդման արարողութիւնը իր վերընտրութեան առթիւ:

Վերընտրուած Յուլիս 3-ին, ան դրեթէ առաջին անգամն է որ հրապարակ կ'ելլէր, արարողութիւնն ալ բաւական կրճատուած էր: Տրուած պատճառաբանութիւնը այն է որ հարկ է խնայողութիւն ընել, բայց, անշուշտ միշտ շշուկներ կային Ելցինի առողջութեան վերաբերեալ, քանի արարողութենէն անմիջապէս ետք, պիտի մեկնէր հանգստանալու երկու ամսուան համար,

Կը յիշուի որ այս արարողութիւնը որ միայն կէս ժամ պիտի տեւէր, տեղի կ'ունենար ճիշդ հարիւր տարի ետք «բոլոր Ռուսաստաններու» վերջին ցարին թագադրութենէն: Նախատեսուած էր որ Սահմանադրութեան վրայ այս հանդիսաւոր երդումը բացօթեայ տեղի ունենար, Գաթեդրալներու հրապարակը ու երկարէր մինչեւ իրիկուն ժողովուրդին մասնակցութեամբ, բայց, ի վերջոյ տեղի կ'ունենար Համագումարներու պալատին մէջ եւ ճառ, երդում, արժանեաց շքանշանի յանձնում եւ Ալեքսիս Բ. պատրիարքի օրհնութիւն, ամբողջը վերջ գտաւ 20 վայրկեանէն: Շուրջ 3000 հոգի հրաւէր ստացած էին Գաթեդրալներու հրապարակին համար եւ հարկ կ'ըլլար, վերջին պահուն, բացատրել փոփոխութեան պատճառները՝ անձրեւի վախ եւ խնայողութիւն: Բացօթեայ հանդիսութիւնը պիտի արժէր 6 միլիառ ռուբլի: Չի բացառուիր նաեւ Չեչենիոյ պատերազմը որ թոյլ չէր տար որ խրախճանքներ կատարուին, երբ ռուս զինուորներ կը մեռնին:

Համայնավարները չեն գոհանար այս բացատրութիւններով եւ չեն ծածկեր որ «անակնկալի պարագային, պատրաստ են» երկար յօդուածով մը «Կոմսոմոլսկայա Պրաւդա»ի մէջ Պաւէլ Վոշչինով կը գրէ. - Առողջ ըլլայ թէ հիւանդ, Բորիս Ելցին այլեւս միայն իր ընտանիքին սիրելի է: Երկրին համար, նախագահը «մեքենայութիւն» մըն է որու մաշումը կրնայ ամբողջովին անդամալոյծ ընել Պետութիւնը: «Օբշչայա Կազետա» շաբաթաթերթն ալ անկարելի չէր գտներ որ արարողութիւնը վերջին պահուն ջնջուէր, բայց, տեղի ունեցաւ:

***

Արարողութեան մասնակցելու համար Օգոստոս 8-ին, Մոսկուա մեկնած էր նախագահ Լեւոն Տէր - Պետրոսեան որ Երեւան կը վերադառնար, արարողութենէն ետք, Օգոստոս 9-ին: Մինչեւ նախագահական ընտրութիւն (Սեպտեմբեր 22) որեւէ այլ ճամբորդութիւն չէ նախատեսուած:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ կ'ուզէ դատի քաշել Քրէտի Լիոնէ դրամատան նախկին ղեկավարները, որոնք պատասխանատու կը նկատուին պետական դրամատան սնանկութեան: Ելմտական նախարարը դիմած է Արդարութեան նախարարին որ դատական հետապնդումի ձեռնարկէ դրամատան նախկին վարիչներուն դէմ: Անուն չի տրուիր, բայց, բոլորը կը խորհին Ժան - Իվ Հապերէրի մասին որ կառավարիչն էր դրամատան մինչեւ 1993 Նոյեմբեր: Պանք տը Ֆրանսի ներկայ կառավարիչն ալ՝ Ժան - Գլոտ Թրիշէ որ այն ատեն Գանձի տնօրէն էր կրնայ խնդրոյ առարկայ ըլլալ, այն պարզ մեղադրանքով որ չէ կրցած հակակշռել Քրէտի Լիոնէի մատակարարութիւնը: Այս դէպքը աննախընթաց է եւ կրնայ նախընթաց ծառայել (ժիւռիսփրիւտանս): Թոյլ կուտայ դատաւորներուն որ զբաղին քաղաքա -- դրամատանական ֆրանսական դրութեամբ մը ուր ամէն մարդ եւ ամէն ինչ իրարմէ կախում ունի: Քրէտի Լիոնէի բացը 100 միլիառ է:

ԱՄԲՈՂՋ ՍՊԱՆԻԱՆ սուգի մէջ է Պիէսքասի ահաւոր աղէտէն ետք: Ուրբաթ, Օգոստոս 9-ի առաւօտուն, նոր հաշուեկշիռի մը համաձայն որ, դժբախտաբար, վերջնական չէր, մեռեալներու թիւը 63 էր, 150-է աւելի վիրաւորներ կային եւ քանի մը տասնեակ անհետացածներ ցեխերուն եւ ջուրերուն տակ: Օգոստոս 8-ին, վարչապետ Ազնարէն ետք, Խուան Գարլոս թագաւորը եւ Սոֆի թագուհին այցելեցին աղէտեալ վայրը եւ հիւանդանոցը, ուր փոխադրուած էին վիրաւորները: Եւրոպական ամէնէն մեծ աղէտը կը նկատուի վերջին քանի տարիներու ընթացքին: Ինչպէս ամէն անգամ նման պարագաներու մէջ, հարցումները չեն փոխուիր, ինչո՞ւ բանակումի կարելիութիւն տրուած է նման վտանգաւոր շրջանի մը մէջ: Շատեր փրկուած են ծառերու ճիւղերուն կառչելով, երբ յորձանքը կը քշէր կը տանէր ամէն ինչ: Զոհերուն մէջ է տասնամեայ Ֆրանսացի աղջնակ մը:

ԼԻԲԱՆԱՆԻ Սահմանադրական Խորհուրդը անվաւեր հռչակեց ընտրական օրէնքին երեք յօդուածները: Ընտրութիւնները, այս օրէնքին հիման վրայ պէտք է սկսէին Օգոստոս 18-ին: Սահմանադրական Խորհուրդին այս որոշումը գոհացում կուտայ 10 երեսփոխաններու (6 քրիստոնեայ, 4 մահմետական) դիմումին եւ Հարիրիի կառավարութիւնը պարտի նոր բնագիր մը պատրաստել եւ ընտրութիւններու համար ալ նոր թուական մը ճշդել: Հարիրի Դամասկոս գացած է անմիջապէս խորհրդակցելու համար: Վիճաբանութեան գլխաւոր նիւթերը կը վերաբերին ընտրական շրջաններու նոր բաժանումներու: Օրինակ Մոն - Լիպանի շրջանը որ քրիստոնեայ բերդ մըն է այլ շրջաններէ տարբեր բաժանումի մը ենթարկուած է: Ան, ինչպէս կը գրէ «Լ'Օրիան - լը - Ժուռ», գոհացում կուտայ Վալիտ Ճումպլաթի որ կը մերժէ որ լեռնային շրջանի տրուզի երեսփոխաններու ընտրութիւնը կախում ունենայ քրիստոնեայ ընտրողներէ որոնք մեծամասնութիւն են: Նաեւ Նապաթիյէի եւ Պինթ Ժպէյլի բաժանումները որոնք կը նպաստեն Նապիհ Պէրրիի: Ֆրանսուա Բոշըպլուան որ Ազգ. Ժողովին մէջ, նախագահն է «Լիբանանի հիմնական ազատութեանց պահպանման Դիտարանին» յայտարարած էր վերջերս որ ընտրական օրէնքը արդար չէ: Արտասահմանի Լիբանանցիները քուէարկելու իրաւունք չունին, մինչ նոր հպատակութիւն ստացած գաղթողները կրնան քուէարկել: Պաշտօնապէս 175 հազար են, բայց ընդդիմութիւնը կ'ըսէ թէ 250 հազար են, եւ բոլորն ալ կը քուէարկեն Պասսի ի նպաստ, որ կողմնակից է Սուրիա - լիբանանեան համագործակցութեան մը: Փարիզ գտնուող ընդդիմութիւնը որոշած էր պոյքոթի ենթարկել քուէարկութիւնը, բայց, տոքթոր Մուխայպէրի համար (արտա-

(Շար.ը կարդալ Դ. էջ)

ՕՐԸ ՕՐԻՆ

Ի՞ՆՉ ԼՈՒՐ ՄԵՏԱԼԻՆ ՄԻՒՍ ԵՐԵՍԷՆ

«Արմէնփրէս»ի Օգոստոս 7-ի լրատուութիւնը տեղ տուած է դժգոհութեան մը: Հայաստանի մարզասէրները եւ մարմնամարզի մասնագէտները մեծ մասով դժգոհ են Ատլանթայի մէջ Հայաստանի մարզիկներուն արդիւնքներէն: Խօսքը կը վերաբերի յատկապէս ծանրաբարձներուն, յունահռոմէական ոճի ըմբիշներուն եւ կոփամարտիկներուն որոնց կ'ըսուի թէ որոշ յոյսեր կապուած էին: Լուրը կը յիշեցնէ այս առթիւ թէ 1992-ի Ողիմպիականներուն մաս կազմելով ՀԱՊ-ի հաւաքականին, հայաստանցի մարզիկները շահած էին 3 ոսկեայ եւ 1 արծաթէ մետալ, առանձինն գրաւելով 16-րդ տեղը:

Հասկնալի է դժգոհութիւնը. ո՞վ պիտի չուզէր հպարտութեան աւելի լայն առիթ չունենալ: Սակայն, դժգոհութիւն յայտնելէ աւելի ազդեցիկ միջոցներ հարկաւոր են որպէսզի յոյսերը Ատլանթայի մէջ ալ ի դերեւ չելլեն: Այդ միջոցներուն մասին մտածելու, զանոնք հայթայթելու գործը ձգելով մարզական աշխարհին պատասխանատուներուն, հաւանաբար ինծի նման շատեր ալ անհամբեր են տեղեկանալու մետալին միւս երեսին:

Մարզիկներու արդիւնքներէն դժգոհներու բազմութիւնը ի՞նչ հակազդեցութիւն ունեցաւ արդեօք Հայաստանի հաւաքականին հինգ «հերոս»ներուն վերադարձին. անոնց որոնք 100 տոլարնոց դրամագլուխով մը փորձեցին նոր մարզաձեւ մը հաստատել Ատլանթայի մէջ, նկրտելով անոր խմբական առաջին ախոյեանութեան եւ պարտուեցան պոռնիկէ մը...:

Չունեցանք հայաստանցի երկու մարզիկի հոն մնալու որոշումին մասին տրուած առաջին լուրի մը հաստատումը կամ հերքումն ալ:

Պարագաներ որոնք չեն կրնար անտարբեր ձգած ըլլալ այնքան նախանձախնդիր մարզասէրները որոնք ձեռք ձգուած ոչ այնքան արհամարհելի արդիւնքին հանդէպ իրենց դժգոհութիւնը հասցուցած են մինչեւ «Արմէնփրէս»: Եւ մանաւանդ որ եթէ լուրջ են յուսախաբութիւնը եւ լաւագոյնին ակնկալութիւնը, առանց իրագործումը չի կրնար անտեսել նման սխրագործութիւններու կրկնութեան հաւանականութիւնը:

Թ. ԱՐՓԻ

ԵՐԵՒԱՆ ՀԵՌԱՏԻՊ ՓԱՐԻԶ

«ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Օգոստոս 8 / 9)

ՖՐԱՆՍԱՅԻ ԴԵՍՊԱՆԸ ԳԻՒՄՐԻ ԱՅՑԵԼԱԾ

Ֆրանսայի Երեւանի դեսպանը Մ. Լըկրա այցելած է Գիւմրի, հանդիպում ունեցած Շիրակի մարզպետին հետ ու ծանօթացած այն ոլորտներուն որոնց զարգացումը կախում ունի արտաքին ներդրումներէ: Կարեւոր նկատուած են առեւտրական կապերու զարգացումը, ճամբաներու վերաբացումը: Մ. Լըկրա հետաքրքրուած է Ֆրանսական վարժարանին շինութեամբ որուն ուսումնական շէնքը Սեպտեմբերին գործածութեան պիտի յանձնուի: Դեսպանը գոհ մնացած է կատարուած աշխատանքէն ու խոստացած կարելի ամէն օժանդակութիւն բերել գործին: Ան այցելած է նաեւ կարգ մը արդիւնաբերական ձեռնարկութիւններ:

***

ՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ ԸՆԴՈՒՆԱԾ ՓԻՒՆԻԿԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ

Նախագահ Լ. Տէր - Պետրոսեան եւ Ազգային Ժողովի նախագահ Բ. Արարքցեան Օգոստոս 6-ին ընդունած են Հայաստանի հաշմանդամներու Փիւնիկ մարզախումբին պատուիրակութիւնը որ Աթլանթա կը մեկնի մասնակցելու 10-րդ միջազգային խաղերուն: Մարզական այս բնագաւառին Կոմիտէի նախագահը Յակոբ Աբրահամեան ծանօթացուցած է մարզիկները ու նշած իւրաքանչիւրին միջազգային յաջողութիւնները:

ՊԵՂՈՒՄ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԷՋ

Ասկերանի շրջանի Լուսաձոր գիւղին մօտակայքը յայտնաբերուած եւ մասամբ պեղուած է հնագոյն բնակատեղի: Գտածոներն են դամբարաններ, մարդկային երկու կմախքներու մնացորդներ որոնք երեքհազարամեայ հնութիւն ունին:

***

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

Առողջապահութեան նախարարութեան բարեփոխումներով բուժման ծառայութիւնները առաւելագոյն չափով կը մօտենան բնակչութեան: Կը շեշտուի ընտանեկան բժիշկներու դերին կարեւորութիւնը: Առողջապահութեան Ազգային հիմնարկին մէջ երկու ամպիոն կը բացուի ընտանեկան բժիշկներ պատրաստելու համար:

***

ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏՆԵՐՈՒ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆԸ

Նիւ - Եորքի մէջ մեծ գնահատանքի արժանացած են Երեւանի օփերային նախկին մեներգիչ Վաղարշակ Օհանեան եւ երեւանցի երգչուհի Անահիտ Զաքարեան: Յայտագիրը բաղկացած է ռուս, եւրոպացի եւ հայ երգահաններու -- Չուխաճեան, Տիգրանեան, Կանաչեան, Խաչատրեան -- գործերէն: Վ. Օհանեան հրաւիրուած է Սեպտեմբերին երգելու հռչակաւոր «Գառնըկի հոլ»ին մէջ, իսկ Հոկտեմբերին կը մասնակցի օփերայի երգիչներու միջազգային մրցումին:

***

ՏՈԼԱՐԻՆ ԳԻՆԸ ԲԱՐՁՐԱՑԱԾ Է

Վերջին օրերուն տարադրամի շուկային վրայ կը նկատուի տոլարի փոխարժէքի աճ: Օգոստոս 8-ին ան արժած է 422 - 427 դրամ: Ֆինանսներու նախարար Լեւոն Բարխուդարեանի համաձայն տարադրամի շուկան ներկայիս աւելի իրական չափանիշներու վրայ հիմնուած է եւ տարադրամի տատանումները պայմանաւորուած են ժամանակ առ ժամանակ աւելցող պահանջով:

ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ՎԱՀԷ ՕՇԱԿԱՆ

~ 3 ~

Շաբաթ, 1996, Ապրիլ 20: Դէպի Ղարաբաղ:

Կէսօրէ ետք ժամը 1-ին ճամբայ կ'իյնանք Երեւանի «Հրազդան» պանդոկէն դէպի Ստեփանակերտ: Կամօն եւ Արշակը առջեւ նստած են, ես ետին, մինակս, Ներքին գործոց նախարարի անձնական «ճիփ»ին մէջ դուրսէն անթափանց սեւ ապակիներով հանգստաւէտ, մաքուր, չարքաշ: Արշակ կապը կը պահէ Երեւանի կեդրոնին հետ, առձեռն հեռաձայնով: Կամօն վարորդ է, երկարահասակ, լուրջ, ջղուտ, թէ՛ հեռու եւ թէ մտերիմ: Արշակն է կը խօսի:

-- Արուշ 4... Արուշ 4...:

Կը տեղաւորուիմ մութ -- կարմիր նըստարանին վրայ, կը պատրաստուիմ երկար ճամբորդութեան: Կը սուրանք քաղաքէն դուրս, Կամօն եւ Արշակը հաճելի խօսակիցներ են, համալսարանական կրթութեամբ, քաղաքավար ու տէրը իրենց պաշտօնին զոր կը սիրեն, Հետաքրքրուած են Սփիւռքի հայութեամբ եւ Աւստրալիոյ անծանօթ, հեռաւոր քաղաքակրթութեամբ: Կաշիէ, սեւ, երկար վերարկուէն զատ ոչ մէկ պայմանական նշան կը կրեն թէ գաղտնի ոստիկաններ են: Շուտով կը բարեկամանանք, բան մը որ անբնական կերպով դիւրին է Հայաստանի մէջ: Ու ժամանակը կը թուի անշարժացած ըլլալ, բայց իմ ժամանակս չէ, այլ երկրինն է, ան է որ կը սեղմէ ու կը լեցնէ զայն: Դուրսի աշխարհին մէջ ալ նոյն բանն է, հոն ալ ժամանակը իմս չէ այլ փոխ տըրուած է ինծի անծանօթ երկրի մը կողմէ: Ես աշխարհի մէջ օտար եմ, ինծի համար օտարութիւնն է մարդկային բնական վիճակը:

Ամէն վայրկեան աւելի մը սուզուիմ հոկայ, խորհրդաւոր գաղտնիքին ծոցը որ Հայաստան կը կոչուի: Բայց ո՞ւր գտնել զայն, ինչպէ՞ս ստուգել անոր ինքնութիւնը ու տալ անունը, հողի՞ն մէջ է թէ օդին, երեւակայութեան հորիզոնի՞ն թէ յիշողութեան անձաւներուն եւ փանթէզիի ոլորտներուն մէջ, ո՞ւր փախիլ անկէ ու անոր յաճախանքէն, երա՞զ է թէ իրականութիւն: Կը նայիմ կառքին քովէն փախչող ծառերուն, բլուրներուն, պատահական չէնքերուն, ճամբու եզրին կայնած մարդու մը կերպարանքին եւ կը զգամ թէ ամէն անցնող շուքին ու պատկերին հետ աւելի կը մխրճուիմ մարդկային պատմութեան ամէնէն հում, վաւերական նիւթեղէնին մէջ, տառապանքի եւ հերոսութեան, վախի ու վայելքի, թանձրացած եւ առկախուած յիշողութեան մէջ: Հայաստանը ե՞ս եմ նաեւ ու ինչ որ կը բերեմ հետս, ամբողջ սերունդներու աւանդը, ժառանգութիւնը: Ու կը մտածեմ իմ վիթխարի հօր մասին որ Աստուած միայն գիտէ ինչ տըղեր, ինչ էջեր, ի՜նչ հատորներ պիտի ապրէր եթէ այս վայրը գտնուէր հիմա, ու մայրս՝ ի՜նչ անբարբառելի ու հրաշէկ սիրով պիտի սրսփար անոր սիրտը ... ու եղբայրս՝ զոր կ'երեւակայեմ փռուած գետին, այդ անծանօթ հողին վրայ, դէմքը խրած խոտին ու փոշիին մէջ, լալով ու խնդալով նոյն ատեն...: Ու դեռ իմ ընկերներս որոնք Հայաստանի երազի կրակին մէջ այրեցան բայց մոխիր չեղան - Փարիզեան օրերու Արծիւը, Վարդգէսը, Արթիւթը, Պիզին, Մատվօն, Սէրգօն ... եւ աւելի ուշ՝ Կիւլոյեանը, Խաչիկը...:

Ժամերը փոխուած են բայց չեն անցած ու մնացած են մէջս, տեսարանն ալ նոյնը չէ, լեռներ ու ձորեր եկած են դաշտերու տեղ՝ բայց ատոնք կրկնապատկերներ են, չեն բուն իրականութիւնը որ կը պահուըտի միշտ իմ զգայարանքներէս, եւ մանաւանդ՝ միտքէս: Ժամանակէն ու տարածութենէն դուրս վայր մըն է հոս, օդը պայծառ է, տրամադրութիւնս բարձր: Գիտացնորային վէ՞պ է ասիկա...:

Ու յանկարծ՝ Սիսիանի կոնակին՝ կանգ կ'առնէ կառքը: Լաստիկը պայթած է եւ իջած ենք կարծր, անկատակելի իրականութեան գիրկը: Զօրս դին՝ ամայութիւն, ազատ հով մը կը փչէ Զանգեզուրի հեռուներէն, մարդ մարդասանք չկայ: Բայց արդէն Արշակ գործի անցած է, ձեռքի նշան մը՝ եւ անցնող կառք մը կանգ կ'առնէ, յետոյ ուրիշ մը: Հինգ վայրկեան՝ եւ արդէն չորս կառք ու մէկ բեռնակառք շարուած են ճամբուն երկու կողմերը եւ տաս - տասնըհինգ հոգի հաւաքուած մեր կառքին մէջ: Ե՞րբ եկան աս մարդիկը, ուրկէ՞ բուսան...: Հիմա ամէն մէկը կարծիք մը կը յայտնէ, կ'օգնէ մեզի, խօսակցութեան բռնուած է ուրիշներու հետ կամ պարզապէս եկեր է որ դիտէ եղածը...: Վարը, ձորին մէջ, հովիւ մը հօտը կ'արածէ: Քանի մը վայրկեանէն ամէն ինչ լմնցած է: Ու մէկէն ամայութիւն է նորէն:

-- Ասիկա Հայաստան է, -- կ'ըսէ Կամօն:

Կրկին ճամբայ կ'իյնանք: Երկու ժամէն Գորիս ենք, անմիջապէս նորոգուած է պայթած լաստիկը՝ ոստիկանական հրահանգով, ու կը շարունակենք ճամբան: Ջորի մը մէջ կանգ կ'առնենք, երկու պըղտիկ սենեակնոց ճաշարաններէն մէկուն մօտ: Պատրաստ է խորոված ը եւ անխուսափելի քոնիաքը: Զափահաս, կատակասէր մարդ մը ու իր լաօ, ներհայեացողան կը դնեն սեղանը: Ախորժակով կ'ուտենք խոզի խղոտ միսը ու վայրկեան մը կը յիշեմ Սան - Ֆրանսիսքոյի բժիշկս ու իր մտասեւեռումը քոլեսթէրոլի աճաւոր վտանգին մասին: Բայց միայն վայրկեան մը «Հայաստան է ասիկա» կը կրկնեմ մտքէս:

Երբ կրկին ճամբայ կ'իյնանք, աճարկու մառախուղ մը պատած է ամբողջ աշխարհը: Մութը կը կոխէ արդէն ու ճամբան աներեւակայելիօրէն խորդ ու բորդ է, խորունկ ջրափոսերով, ցցուն քարերով լեցուն: Տասը քայլ հեռու չի տեսնուիր: Ցնցուելով ու նետուելով աջէն ձախ, հազար դըժուարութիւններով ու խուսնջի քայլուածքով կը կտրենք Լաչինը ու կը բարձրանանք դէպի Ղարաբաղ: Մութին մէջ ամփոփուած եմ իմ անկիւնս ու կառչած՝ կառքին երկաթներուն, անկարող կեդրոնանալու եւ մտածելու, կամ նոյնիսկ երեւակայելու: Սահմանագլուխը պարզ ձեւակերպութիւն մըն է եւ արդէն հոս հոն լոյսեր կը նշմարուին: Դանդաղ բայց անդուլ, ճիփը կը մխրճուի վտանգով եւ անակնկալով լեցուն մթութեան սրտին մէջ: Ժամերէ ի վեր Կամօն չի խօսիր, պրկուած ահաւոր կեդրոնացումով որ կը պահանջուի այդ պայմաններուն տակ կառք քշողէն: Գիշերուան ժամը 10-ին Ստեփանակերտ կը հասնինք, քայքայուած ջիղերով,

Վերջին անակնկալը՝ համալսարանի տնօրէնն է: Հիւրն ըլլալով Արցախի Պետական Համալսարանին, իր հացէին է որ կը դիմենք: Ի վերջոյ կը գտնենք զինքը -- տոքթոր Լեւոն Եպիսկոպոսեան: Քառասուննոց, աշխոյժ ու զուարթ ճէնէթիքսի գիտնական մըն է որ այդ գիշերուան համար գլխ իր տունը վար կը դնէ: Անակնկալը՝ իր երիտասարդութիւնն էր, որովհետեւ անկարող հետը խօսելու ոչ Սիտնիէն, ոչ Պէյրութէն, ոչ ալ Երեւանէն (թղթատարական դրութիւն չկայ Ղարաբաղի հետ, հեռաձայնները չեն բաներ, փաքսը չաշխատիր յաճախ...)՝ մտքովս հինաւուրց դանդաղ, ծանր եւ անմատչելի «փրոֆեսոր» մը պատկերացուցեր էի զինքը: Սակայն սա՝ բնաւ միտքէս չէր անցեր: «Երիտասարդ Համալսարանին, երիտասարդ հանրապետութեան՝ տասնկէնճ մարդ վայել է, նոր ու ներզօր, բազմաթիւ լեզուներ գիտցող խանդավառ գիտնական մը» մտածեցի հիմա, նստած արագ ճաշի մը իր հետ «սիրտս հանգիստ քուն կրնամ մտնել այս գիշեր» խորհեցայ հիմա: Սակայն վերջին հրաժեշտի պահ մը կար, Կամոյին եւ Արշակին հետ, որոնք վարը դրան առջեւ, մութին գլխ կը սպասէին: Վար կ'իջնեմ:

-- Մեր հրահանգն էր ձեզի ապահով ձեռքերու մէջ դնել: Եղա՞ւ:

-- Այո:

Կ'ողջագուրուինք, սրտանց: Հայաստանի հո՞ղն է թէ օդն է՝ բայց մարդկային կապերը տաք ու արագ կը շինուին:

-- Զմոռնաք Պր. Ուշտունիին լուր տալ երբ Հայաստան պիտի վերադառնաք, ես ու Արշակը կուգանք ձեզ կ'առնենք հոսկէ:

-- Օքէյ:

-- Բարի գիշեր:

-- Գիշեր բարի:

Ետ վեր կ'ելլեմ, ջղասպառ սակայն խորունկ, անտրամաբանական, գրեթէ միրթիք երջանկութեամբ մը լեցուն: Ուխտագնացութիւնս այս վայրկեանէն կը սկսէր: Ինչպէ՞ս պիտի վերջանար:

ԱՐՄԻՆ ՎԵԳՆԵՐ ԵՒ ՀԱՅԵՐԸ ԱՆԱՏՈԼՈՒԻ ՄԷՋ՝ 1915ԻՆ

նկարներ եւ վկայութիւններ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ՝ GUERINI E ASSOCIATI - ԻՏԱԼԻԱ

1995, Ապրիլ 22-ին, Հայկական Ցեղասպանութեան 80-ամեակի առթիւ Միլանոյի Հնագիտական Թանգարանին մէջ նոյն վերնագրով տեղի ունեցած ցուցահանդէսը չէինք մտածեր որ պիտի ունենար այսքան մեծ արձագանգ իտալական ուրիշ քաղաքներու պաշտօնական կամ մշակութային շրջանակներէ ներս: Իսկապէս, Միլանոյի ցուցադրութենէն ետք (որ տեղւոյն թրքական հիւպատոսարանի անտեղի միջամտութենէն քիչ մը գայթակղած լըրագրողներ յօդուածներ հրատարակեցին իտալական օրաթերթերու մէջ, տարածելով ցուցահանդէսին եւ Հայկական Ցեղասպանութեան տեղեկութիւնը հոն ուր կազմակերպիչները իրենց համեստ միջոցներով չէին յաջողած ըլլալ) այլ քաղաքներու բնակիչ Հայերու ջանքերով նոյն ցուցահանդէսը շրջեցաւ զանազան քաղաքներ: Թուականի կարգով՝ 1995-ին Քասթէլ տ'Այանօ, Փատովա, Քամփօ Սանփիէրօ, Վիչենցա (տեղական էմնըսթի Ինթէրնէշընըլի ջանքով), Ֆիրէնցէ (քաղաքապետարանի մշակոյթի բաժնի հետաքրքրութեամբ): Կը շարունակուի 1996-ին, Պատի -- Վենետիկ՝ Ս. Ղազարի մէջ, Փերուճիա: Այս շրջանիս կը գտնուի Թրէնթօ նահանգի Ռովերէթօ քաղաքը եւ արդէն աշնան համար նախատեսուած է անոր ցուցադրութիւնը Ֆելթրէ եւ Ազոլօ քաղաքներուն մէջ:

Այժմ՝ Ռովերէթօ քաղաքի Պատերազմական պատմական Թանգարանի տնօրէնութիւնը մասնաւոր սարքաւորումով մը կը ներկայացնէ այս ցուցահանդէսը որ պիտի տեւէ մինչեւ Հոկտեմբեր: Բացումը եղաւ Յունիս 21-ին, նոյն ինքն Վեգների որդւոյն ներկայութեամբ եւ ելոյթով: Քաղաքապետը եւ մօտ 150 քաղաքացիներ ներկայ էին: Բացման եւ բացատրական խօսքերէն վերջ ներկաները ունկնդրեցին հայկական դասական երաժըշտութիւն, դաշնակահար Անի Մարտիրոսեանի եւ ջութակահար Դանիէլ Տէմիրճիի մեկնաբանութեամբ: Հայկական համտեսներու ճոխ սեղան մը լրացուց այդ գիշերուան ստեղծած հետաքրքրութիւնը եւ խանդավառութիւնը: Ռովերէթոյի Պատերազմական Թանգարանը կը գտնուի բերդ - դղեակի մը մէջ եւ ցուցադրութեան համար տրամադրուած մասերը, քարաշէն պատերով, աւելի տպաւորիչ, քիչ մը տրամաթիկ բնոյթ կուտային ամբողջութեան: Գեղեցիկ ցուցահանդէս մը, որ կը պարունակէ 80 նկարներ նոյն ինքն Վեգների գրութիւններով, քարտէսներ եւ այլ բացատրական եւ պատմական պիտակներ, ժամանակուան հրատարակութիւններ, քարտեր, ցեղասպանութենէն վերապրող իտալաբնակ անձերու տեսերիզի առնուած վկայութիւններ շարունակական ցուցադրութիւնով: Դըժբախտաբար չկար Վեգների գործած նկարչական գործիքը որ գողցուեցաւ Պատի ցուցահանդէսին ժամանակ:

Միլանոյի ցուցադրութեան առթիւ պատրաստուած էր գրքոյկ մը որ արդէն կը պարունակէր հարուստ նիւթ: Միւս քաղաքներու ցուցադրութեան առթիւ եղան համեստ ցուցակատախտակներ: Ֆիրէնցէի քաղաքապետութիւնը միայն հրատարակեց 46 էջերէ բաղկացած նիւթերու հաւաքածոյ մը որ բաժնուեցաւ բոլոր այցելուներուն:

Իտալիոյ Հայոց Միութիւնը եւ Իտալիա -- Հայաստան ընկերակցութիւնը, նկատի ունենալով ցուցահանդէսին, նիւթին, մարդուն եւ ցեղասպանութեան յառաջ բերած հետաքրքրութիւնը, աւելի լայն շրջանակի մէջ եւ Իտալիայէն դուրս ալ ծանօթացնելու եւ տարածելու նպատակով, յարմար նկատեցին գրութիւնները, նկարները, բացատրութիւնները հաւաքել հատորի մը մէջ որ գրքի մը կերպարին յատուկ, տարածուելու եւ դրադարանի մը մէջ պահուելու, պարունակութեան ուսումնասիրութիւնը դիւրացնելու յարմարութիւնը ունի: Հրատարակութիւնը իտալերէն եւ անգլերէն լեզուով տպուած է: 220 էջնոց այս գիրքը կը պարունակէ Վեգների անձին, գործին եւ յիշատակներուն վերաբերեալ գրութիւններ: Լայն կենսագրական մը ընտանեկան պատկերներով: Գերմանիա իր ընտանիքին եւ բարեկամներուն ուղղուած նամականութիւնը Պաղտատէն, Միջագետքէն: Իր քաշած նկարներու բաժինը հարուստ է իր զանազանութեամբ եւ կը ներկայացնէ ցեղասպանութեան եւ տարագրութեան ժամանակ եղած սարսափելի անցքերու վկայութիւնները: Ասոր մասին իր նկարագրութիւնները: Կան՝ իր օրագրութիւններէն քաղուած յիշատակներ, նախագահ Ուիլսընին գրած նամակը, Սողոմոն Թէհլիրեանի դատավարութեան սեղագրութիւնը պարունակող գրքին իր կողմէ գրուած նախաբանը, բաց նամակ Հիթլէրի, հարցազրոյց մը հրէականութեան հետ ունեցած կապին մասին: Հոն կայ ցեղասպանութեան 50-ամեակին առթիւ «Տի Վելթվոխէ»ի մէջ հրատարակուած իր յօդուածը՝ Տաս Կուֆը Լիխթ, բարի լոյս (*): Գիրքին 3-րդ մասին մէջ տեղ գտած են պատմական նօթագրութիւններ հայկական ցեղասպանութեան մասին, տեղեկութիւններ Հայերու եւ Անկախ Հայաստանի վերաբերեալ: Հուսկ մատենագրական հարուստ ցանկ մը հայ եւ օտար, անցեալի եւ ներկայի հեղինակներու հրատարակութիւններու, ուր ամէն հետաքրքրուող ամբողջացնելու համար իր ծանօթութիւնները կրնայ ուսումնասիրութեան համար լայն նիւթեր քաղելու կարելիութիւն ունենալ:

Վ. Բ.

Միլանօ

(*) Որուն մէջ կը յանձէ իր ցաւը եւ յուսախաբութիւնը որովհետեւ ապարդիւն եղան վկայի իր ջանքերը՝ ծանօթացնելու համար մարդկային ողբերգութիւն մը: Ոչ ոք ուզեց լսել զինք: Անցան յիսուն տարիներ: Ուրիշ ազգեր կրեցին ողբերգական ցաւեր: Ինք կը մնայ ամօթահար եւ գրեթէ խղճահար: Բայց շուրջն ալ գտաւ միայն լռութիւն: Բոլորը դռները մնացին գոց: «Մենք ալ մեր ցաւերը ունինք. ինչո՞ւ պիտի անձկութիւն զգանք ուրիշի ցաւերուն համար որոնք արդէն մոռցուած են»: Եւ, գրեթէ մխիթարելու համար ինքզինքը, իր իսկ ձեռքով գրած է Սթրոմպոլիի իր աշխատասենեակին ցողունին վրայ. «Մեզի տրուեցաւ պարտականութիւն մը աշխատելու համար գործի մը վրայ, բայց չտրուեցաւ կարելիութիւնը զայն լրումի բերելու»:

ԱՄԻԱՆԹԻՆ ՍԱՐՍԱՓԸ

Ֆրանսայի համալսարանական մեծագոյն ոստանը՝ Ժիւսիէօն ուր կ՚աշխատին 40 հազար ուսանողներ եւ 10 հազար հետազօտողներ, փորձանքի աստիճանի գըլուխ ցաւ մըն է Կրթական Նախարարութեան համար: Անոր շինութեան ընթացքին գործածուած ամիանթը այսօր բացայայտուած է որ շատ վնասակար ազդեցութիւն կ՚ունենայ մարդկային առողջութեան վրայ: Այլ խօսքով՝ Ե. Հանրապետութիւնը որ տիպար համալսարան մը կառուցանելու հպարտութեան տէր էր, երկրին նուիրած է թունաւոր հրէշ մը:

Ժիւսիէօն Փարիզի գինիի մեծ շուկան էր, դարասկիզբէն ախորժակը կը գրգռէր Գիտական Փաքիւլթէին: 1959-ին Տը Կօլի մէկ հրամանագրով որոշուեցաւ ապասփականացնել շէնքերը ու ծրագրուեցաւ նորերու կառուցումը: 1962-ին Մշակոյթի նախարար Ա. Մալրօ վայրը կ՚այցելէ ու ժեծապէս կը խանդավառուի ծրագրէն: Ամբողջութիւնը 500 քառակուսի մեթրնոց ամերիկեան տիպի համալիր մը պիտի ըլլայ: Մետաղին ու ապակիին տիրապետութեան յանձնուած կառոյցին մէջ որպէս հրդեհի դէմ միջոց լայն գործածութիւն կը գտնէ ամիանթը:

1964 -- 1969 նոր շէնքը կը սկսի հիմերէն բարձրանալ, մինչ հին մասին մէջ ուսերը կը շարունակուին: 1968-ին ճարտարապետը կը մահանայ: Անոր գծած հատակագծին հաւատարմութեան շատ փափաք չկայ: Յետոյ, 1970-ին շինութիւնը կ՚ընդհատուի: Գինիի շուկային վերածումով ամբողջովին փոխուած է թաղին ներդաշնակութիւնն ալ. յաճախորդներու ժեծամասնութիւնը սկսած է բաղկանալ ուսանողներէ ու փակուած են շատ խանութներ: Ֆաքիւլթէն անաւարտ մնացած է: Յետոյ, 1975-ին նոր ծրագրով մը որոշուած է ներքին գրադարան մը կառուցանել, բայց Արաբական հիմնարկին շինութեան պատճառով ան ալ մէկդի ձգուած է:

Իսկ երբ իրենց համբերութիւնը սպառած, համալսարանի հետազօտողները սկսած են ձայն բարձրացնել, տեղեկացած են թէ շինուած շէնքերը ամիանթով լեցուած են ու իրենք լաւատեղեակ են անոր թունաւոր, վտանգաւոր բնոյթին: Կը կազմուի խումբ մը պահանջելով որ լուրջ ուսումնասիրութիւն մը կատարուի ամիանթի գործածութեան մասին ու արդիւնքը հրապարակուի: Ֆրանսական բժշկութիւնը յետ պատերազմեան շըրջանէն տեղեակ է ամիանթին մահացու բնոյթին: Խումբին բողոքը մեծ ազդեցութիւն չի գործեր իշխանութեան վրայ որ սակայն տեղեակ կը պահէ ամիանթի ճարտարարուեստին մարդիկը: Անոնք ալ իրենց կարգին կը կազմեն խումբ մը: Անոր նպատակը կ՚ըլլայ ապահովութիւն տալ, հանդարտեցնել, քնացնել. նուազագոյն նախազգուշութիւն մը եւ ամիանթը վտանգաւոր չէ, իրար անցնելու պէտք չկայ: Այս խումբը շուտով լրատուիններու առանձնաշնորհեալ խօսակիցը կ՚ըլլայ. անոր մէջ ամիանթի ճարտարարուեստին մարդոցմէ զատ ներկայացուած են հինգ նախարարութիւններ, սենտիքաներ եւ Հետազօտութեան ու ապահովութեան ազգային հիմնարկը: Կայ եւ ուրիշ մը. երկու բժիշկ դասախօսներ որոնց աշխատութիւնները շնչառութեան ճամբաներու քաղցկեղին մասին է, խումբին կ՚ընծայեն գիտական անհրաժեշտ երաշխիքը:

Այս բժիշկներէն յատկապէս մէկը՝ Ժան Պինեօն 1975-էն սկսած է աշխատիլ ամիանթի հարցին վրայ ու յանգած այն եզրակացութեան որ պէտք է անյապաղ վերջ տալ որպէս ծածք ամիանթի գործածութեան: Այնպէս կը թուի որ ան իր կարծիքը փոխած է վերոնշեալ խումբին անդամ ըլլալէ ետք: Իսկ 1994-ին սարքագըրած է նոր տեղեկագիր մը ուր կ՚ըսուի թէ ամիանթին վտանգները արհամարհելի չափեր ունին շէնքին բնակիչներուն համար: Եւ ի վերջոյ երբ ամիանթի հարցը մեծ տարողութիւն ստացաւ, նոյն դասախօսը ինքնաքննադատութեան շեշտով մը ըսաւ թէ պէտք է ընդդիմանային այդ խումբին կազմութեան:

1975-էն այսօր անցած 20 տարուան ընթացքին Ժիւսիէօի կացութիւնը տեւականօրէն վատթարացաւ: 1994-ին սկսան ստուգել որ ի՛նչ չափի հասած էր ամիանթին վնասը: Այսօր հիւանդութեան քանի չափ պարագաներ կան դասախօսներուն եւ աշխատակազմին մէջ: Կան մահացածներ ալ որոնց ուղղակի պատճառ նկատել ամիանթը, կարելի չէ:

1996-ին, շէնքին ամէնէն աւելի վտանգաւոր նկատուած մասերը կը փակուին, զգուշացնող ցուցանակներ կը զետեղուին, բայց ամիանթը քակելու ուղղութեամբ ոչ մէկ քայլ կ՚առնուի մինչեւ այս ամառուան սկիզբը երբ Առողջապահութեան նախարարը յառաջիկայ Յունուար 1-էն կ՚արգիլէր այդ նիւթին գործածութիւնը. իսկ Յուլիս 14-ի ճառով նախագահ Շիրաք ընդհանուր զարմանք պատճառելով կը յայտնէր թէ մինչեւ տարեվերջ Ժիւսիէօն պիտի պարպուէր: Յաջորդեց Կրթական Նախարարին սրբագրութիւնը թէ «տարեվերջ» կը նշանակէր դպրոցական շրջանին աւարտը: Ֆ. Պայրու երաշխիք կուտայ որ պետութիւնը պիտի կատարէ բոլոր իր պարտաւորութիւնները: Միւս կողմէ, բողոքողները արդէն դիմումնագիր մը պատրաստած են որ պիտի յանձնուի պատկան իշխանութեան եթէ պատասխանատուները իրենց խոստումները չյարգեն ու կացութիւնը շուտով չբարելաւուի:

ՔԱՂՀԱՆ

«ՄԱՇՏՈՑ» ՄԻՈՒԹԵԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔԸ ՎԱՌՆԱՅԻ ՄԷՋ

Առաջին անգամ ըլլալով Փարիզի «Մաշտոց» Միութեան նախաձեռնութեամբ Ֆրանսայէն եւ Պուլկարիոյ զանազան քաղաքներէն 23 աշակերտներ երեք շաբթուան դասընթացքներով յառաջացուցին իրենց հայերէնը, միութեան հիմնադիր եւ նախագահ Տիկին Հիլտա Գալֆայեան - Փանոսեանի ղեկավարութեամբ: Որպէս դասընթացքի միջոց գործածուեցան անոր դասագիրքերը որոնց կ՚ընկերակցին ձայներիզներ: Տեսալսողական այդ մեթոտը պատրաստուած է օտարախօսներու համար: Հայերէնի ուսուցման այս ձեւը նոր էջ մը կը կազմէ Պուլկարիոյ հայերէն լեզուի ուսուցման մարզին մէջ: Աւելի մանաւանդ այն պատճառով որ երկար տարիներ Պուլկարիոյ հայկական վարժարանները գոց մնացած են:

Այս դասընթացքներուն մասնակցիլ փափաքողներու թիւը, յատկապէս Փլովտիւէն, ակնկալուածէն շատ աւելին էր, այդ պատճառով Հ. Բ. Ը. Մ. Փլովտիւի մասնաճիւղին խնդրանքով Տիկին Հիլտա Գալֆայեան - Փանոսեան կրկին պիտի այցելէ յաջորդ տարի:

Կը մնայ յաջողութիւն մաղթել գործին կազմակերպիչներուն եւ զայն իրականացնողներուն:

ՄԱԼՎԻՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Փլովտիւ

ԳԱՂՈՒԹԷ ԳԱՂՈՒԹ

ԹՈՐՈՆԹՈՅԻ Հայ Աւետարանական Եկեղեցւոյ հիմնարկէքի արարողութիւնը տեղի ունեցած է Յուլիս 28-ին: Հանդիսավարը եղած է Տիգրան Գալայճեան որու բացման խօսքէն ետք գործադրուած է կրօնաշունչ յայտագիր մը: Յաջորդաբար խօսք առած են Միհրան Ճիզմէճեան, վեր. Սըլօ Նիկողոսեան, Հրայր Սագըրեան, նաեւ երեսփոխան Սարգիս Ասատուրեան: Փակման խօսքը արտասանած է վեր. Սարմազեան:

***

ՄՈՆՐԷԱԼԻ Հայ Կեդրոնին Աւետիս Ահարոնեան սրահին մէջ, Յուլիս 26-ին գինեձօն մը տեղի ունեցած է կազմակերպութեամբ Համազգայինի տեղւոյն մասնաճիւղին, նուիրուած Վարուժան Երանդեանի (Վ. Պօյաճեան) «Հայ լուսաւորութեան կեդրոններ» գիրքին, անոր հրատարակութեան առթիւ: Բարի գալուստի խօսք արտասանած է Տիկին Ջեփիւռ Լուլու, ապա գիրքն ու հեղինակը ներկայացուցած է Եդուարդ Էլոյեան: Ցուցադրուած են նաեւ Հայ եկեղեցիներու եւ վանքերու սահիկներ:

***

ՄՈՆՐԷԱԼԻ Լոնկ Սոլ գետեզերեայ զբօսայգիին մէջ, աւելի քան 2000 հոգիի մասնակցութեամբ տեղի ունեցած է Խանասորի արշաւանքի 99-րդ տարեդարձին առթիւ ղաշտահանդէս մը, Յուլիս 28-ին: Գեղարուեստական ճոխ յայտագիր մը ջերմ մթնոլորտ մը ստեղծած է:

***

ՏԱՏԱԲԱՆԻԱ (Հունգարիա) քաղաքը Մայիս 18 -- 19-ին տեղի ունեցած է Ազգութիւններու Փոլքլորի առաջին հանրապետական փառատօնը, որու մասնակցած են երկու հայազգի պատանիներ: Վիքթորիա Աւետիքեան (23 տարեկան) եւ Դաւիթ Զիթեան (13 տարեկան): Անոնք արժանացած են Ա. եւ Բ. մրցանակներու:

ՍՏԱՑԱՆՔ

ՀԱՅԵՐ ԵՒ ... «ՀԱՅԵՐ»
Յ. ԶՈՐԵՅԻ

Պէյրութ, 1996

ԿՂԶԻՆ ԵՒ ՄԻ ՄԱՐԴ

— վիպակ —

ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ

Սուրբը՝ սուրբ, գործն էլ՝ գործ:

Գլխաւոր փողոցների մայթերի վրայ մանր մունր վաճառականները շարել են իրենց աննշան, թուղթէ, փայտէ շինուած ապրանքները: Մոմէ արձաններ, բացիկներ, զունաւորուած շաքարեղէններ, թել թել շաքար, թղթէ գլխարկներ, սանտրեր, դանակներ, մկրատներ:

Հարմոնիքա նուագողներ, երգիչներ: Երբեմն ամբողջ ընտանիքով: Հայրը՝ հապկէտի զգեստներով, կառակախօս, լկտի: Մայրը՝ մաշուած, նիհար՝ վարդագոյն զգեստներով: Աղջիկները՝ քիթը վեր, շրթունքները կարմիր քսած, փոքրիկ թմբուկներ իրենց ձեռքին: Երգում են, պարում, կատակում:

Տեղացի առեւտրականները, այս արհամարհեց չտուժելու համար, նոյնպէս շարում են իրենց լաւագոյն ապրանքները: Ծէքօրէն ցուցադրուած պտուղներ, յարդէ հիւսուած զանազան առարկաներ, մեղրով եփուած ընկուզեղէն, ներկուած պնակներ:

Սրճարաններում տեղ չկայ: Գինետունները լեցուած են ծուխով եւ աղաղակներով: Հրապարակները ճարպ են հոտում եւ փիցցա:

Ամէն տեղ լուսաւոր կամարներ են շինուած: Գունաւոր թղթերով, ելեկտրական բազմաթիւ լամբարներով: Տների պատշգամները եւ պատուհանները զարդարուած են խալիներով, կտաւներով, մետաքսէ լաթերով, լուսաւորուած պսակներով, ծաղիկներով:

Քաղաքը նմանում է աղքատ գիւղի թըրշուառ մի քահանայի, որ պատարագի ժամանակ կորել է շքեղ փիլոնի տակ: Երբ փիլոնը բարձրանում է, երեւում են մաշուած տափատի պատառուած ծայրերը եւ ծակուած կօշիկները:

Լոյսեր, քրտինք, թրիք, աղմուկ:

Շաբաթ առաւօտ, դեռ լոյսը չբացուած, տանս վարի հրապարակի կողմից, յանկարծակի պայթումների ձայներ են լըսւում: Օդը դղրդում է, պատուհանների ապակիները զրնգում են: Անկողնից վար եմ ցատքում եւ դուրս նայում: Մութ է, ոչինչ չի երեւում: Ետ եմ դառնում, պառկում, աչքերս փակում: Հազիւ կոպերս սկսում են ծանրանալ. տունը ժաժ է գալիս: Ի՞նչ կարող է պատահած լինել: Նորից վեր եմ թռչում, դուրս գալիս պատշգամ, ուշադրութեամբ նայում. ոչ ոք չի երեւում: Ներս եմ մտնում թէ չէ՝ նոր պայթումներ են լսւում, այս անգամ միացած զանգակների ղօղանջներին:

Սենեակս պարում է ձայների կատարին: Մօտակայ եկեղեցու զանգակները մտնում են ներս եւ ահաւոր դղրդումով թաւալ գալիս: Օդը պատռւում է: Կարծես մօտեցող մի երկրաշարժ, վայր պիտի թափէ պատերը եւ ինձ թաղէ այդ աղմուկի տակ:

Աւելի ուշ իմանում եմ, որ, ըստ վաղեմի սովորութեան, պայթուցիկների նպատակն է արթնացնել սրբին. - «Վեր կա՛ց, վեր կա՛ց»: Թո՛ղ իմանայ, որ օրը եկել է երբ մի տարուան բանտարկութիւնից յետոյ նա դուրս պիտի գայ իր խուցից: «Այլապէս -- բացատրում են -- չպիտի ուզի իր երկար քունից արթնանալ եւ ներկայանալ ժողովրդին»:

Այդ աղմուկից անմիջապէս յետոյ, ըսկըսւում են ժամերգութիւնները: Մէկը միւսի ետեւից: Ժամը տասնըմէկին տեղի է ունենում առաջին հանդիսաւոր պատարագը, նուիրուած երկրից մեկնած եւ օտարութեան մէջ հաստատուած այն բարերարների, որոնք ամէն տարի սրբի տօնի համար դրամ են ղրկում: Ժամերգութիւնից յետոյ, դուրսը դրուած սեղանի վրայ մեծ քանակութեամբ հաց են դիզում՝ աղքատներին բաժանելու համար: Եկեղեցու քահանան, ամբողջովին զգեստաւորուած, խաչը ձեռքին, կանգնում է սեղանի գլխին, որի վրայ մեծ տառերով գրուած է. «Կեցցեն մեր հայրենակիցները, որ թէպէտ հեռւում, վեհանձնօրէն օգնում են իրենց թշուառ հայրենակիցներին»:

Տեղիս լուսանկարիչը, որ նաեւ ժամագործ է, ռատիօ շտկող, գրամեքենաներ մաքրող, ոստիկանական պաշտօնեայ, անյայտ տեղերից փախցրած ապրանք վաճառող, ելեկտրական հաշուեմեքենաները խարդախող, աղատ աղջիկների մասին տեղեկութիւններ տուող, փոքրիկ մի մեքենայ ձեռքին, աջ ու ձախ է գըրնում, հրամաններ տալիս սեղանի շուրջը հաւաքուած թշուառներին: Թո՛ղ աղքատները իրենց ձեռքերը ծալեն իրենց կրծքերի վրայ եւ համեստօրէն նայեն: Թո՛ղ քահանան իրեն ձեռքի խաչը աւելի վեր բռնի: Թո՛ղ այս, թո՛ղ այն:

Լուսանկարում է:

Երկու րոպէ յետոյ, ներկաները մորեխի նման ընկնում են սեղանի վրայ եւ ամէն ինչ մաքրում:

Շաբաթ օրուան յայտագրի ամենակարեւոր կէտը դրսից հրաւիրուած նուագախումբի ժամանումն է:

Ամէն տարի կարեւոր գումարներ են ծախսում՝ դրսի քաղաքներից լաւագոյն նուագախումբը բերելու համար: Պատերի վրայ կպցրած հսկայական յայտարարութիւնների մէջ այս պարագան առանձնապէս նշուած է:

«Մեզ համար անհուն հաճոյք է յայտարարելու սիրելի ժողովրդին, որ կանգ չառնելով անհաւատալիօրէն մեծ ծախսերի առջեւ, տօնակատարութիւնների մասնախումբը, մեր պաշտելի Սրբին հաճելի լինելու համար, յանձն է առել հըրաւիրելու մեծահռչակ, անզերազանցելի, բազմաթիւ յաջողութիւնների դափնեպսակներ կրող նուագախումբը, որ կոչւում է «Զայների Մոգերը» եւ որի ղեկավարն է նրբաճաշակ, մեծահռչակ, ահագնատաղանդ Մաէսթրօ Այսինչը, որ նաեւ հեղինակն է մի քանի զմայլելի քայլերգների, որ անշուշտ նուագախումբը իր իսկ հանճարեղ հեղինակի ղեկավարութեամբ պիտի նուագի՝ մեզ աննախընթաց վայելք պատճառելու համար: Ժամը ճիշդ հինգին, օ՛, հաւատացեալ եւ ազնիւ ժողովուրդ, վազի՛ր դէպի քարափ՝ դիմաւորելու համար հեռու տեղերից ժամանող նուագախումբը, որ եկել է պատուելու ձեր անզերազանցելի, մեծ Սրբին: Կեցցեն «Զայների Մոգերը» կոչւող նուագախումբը եւ իր բազմահանճար ղեկավար Մաէսթրօ Այսինչը»:

(Շար. 46)

«ՅԱՌԱՋ»Ի ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

71ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻՒ

ՄԱՐՍԷՅԼ. --

Հայ Մշակոյթի Տան Վարչութիւն 1000 ֆրանք :

Տէր եւ Տիկին Ժագ Պօղոսեան 500 Ֆր. :

Տէր եւ Տիկին Կարօ Յովսէփեան 500 ֆրանք :

(Շար. Ա. էջէն)

խորհրդարանական ընդդիմութիւն) Միչէլ Առնի եւ նախկին նախագահ Ամին Ճեմայէլի դիրքը անպատասխանատու է եւ ինք կողմնակից է քուէարկութեան մասնակցելու, այլապէս երկիրը պառակտումի կ'ենթարկուի :

ԹՈՒՐՔԻՈՅ Նախագահին հետ հարցազրոյց մը հրատարակած է «Ֆիկառօ» (Օգոստոս 9) ուր Տէմիրէլ չի վարանիր չեշտելէ թէ Թուրքիան, մահմետական 53 պետութիւններէն, միակ աշխարհական ժողովրդավարութիւնն է եւ կ'ուզենք «հպարտ ենք ատով» : Ի հարկին, կ'անդրադառնանք,

ՖՐԱՆՍԱՅԻ Ներքին նախարարը անդրդուելի կը մնայ առանց ինքնութեան թուղթի օտարականներու հանդէպ որոնք 35 օր է (Օգոստոս 9-ին) հացադուլի դիմած են եւ ապաստանած Փարիզի Սէն - Պեռնար Եկեղեցին : Նախարարը կը շարունակէ չարթերներով իրենց երկիրը վերադարձնել ապօրինի վիճակի մէջ գտնուողները, ամիսը 3 օդանաւեր կը մեկնին : Օգոստոս 8-ին 40 Մարոքցիներ եւ 38 Մալիցիներ եւս արտաքսուած են :

ԳՐՈԶՆԻԻ մէջ (Չէչէնիոյ մայրաքաղաք) կռիւները նոյն սաստիկ բնոյթն ունէին Օգոստոս 9-ին եւ Ռուսերը շատ մեծ կորուստներ ունին : Իրենց իսկ աղբիւրներուն համաձայն 70 զինուոր մեռած է : Չէչէններն ալ շատ զոհեր ունին : Այն տպաւորութիւնը կայ նաեւ որ այս կռիւները կրնան վճռական բնոյթ ունենալ : Ուրբաթ առտու, կ'ըսուէր թէ ռուսական ուժերը պաշարուած են Գրոզնիի մէջ եւ կառավարական շէնքն ալ բոցերու մէջ է :

ԱԼԺԷՐԻ կեդրոնին մէջ ռմբափորձ մը պատահած է Օգոստոս 8-ին, որու հետեւանքով 7 վիրաւորներ կան : Ռումբը պայթած է ճիշդ ցերեկին սրճարանի մը մէջ : Վերջին երեք շաբաթներու ընթացքին, սրճարաններու եւ ճաշարաններու դէմ գործուած ռմբափորձերէ շուրջ 20 հոգի սպաննուած է եւ տասնեակներով ալ վիրաւորներ կան :

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՏԱՆԱՅԻ (Թուրքիա) Քիւչիւքթիքիլի գիւղին մէջ 6 հոգի սպաննուած են, Օգոստոս 8-ին, ոստիկանական գործողութեան մը ընթացքին : Ըստ Անատոլու գործակալութեան հոն ապաստանած էին ՓՔՔ-ի զինեալ չորս անդամներ : Մեռեալներու մէջ են երկու աղջիկներ, կան նաեւ վիրաւորուած կին մը եւ մանուկ մը :

«ՇԱՌԽԱՅԻ ՊԱՏՈՒՄՆԵՐ» հատորը որու հեղինակն է Թուրք համալսարանական մը որ Միքայէլ - Նահանդներ կ'ապրի, դրաւուած է Պոլսոյ դատարանին կողմէ : Հատորը նախատական կը նկատուի Իսլամին համար :

UGAB . . . UGAB . . . UGAB . . . UGAB

«UGAB - 90»

A l'occasion de la célébration de son 90ème anniversaire, l'UGAB organise un grand

Gala de Bienfaisance

au profit des *TABLES DE L'UGAB*, en Arménie

le Vendredi 18 Octobre à 20 heures

au Pavillon Dauphine _ 75016 Paris

P.A.F. : 750 Frs

Rens. : 45 20 03 18 / 42 27 12 26.

UGAB . . . UGAB . . . UGAB . . . UGAB

ՎԱԼԱՆՍ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

Հինգշաբթի, Օգոստոս 15-ին, ժամը 10-ին կը մատուցուի հանդիսաւոր պատարագ եւ աւարտին հոգեհանգստեան պաշտօն՝ Ռմբակոծութեան եւ Բ. պատերազմի զոհ բոլոր ննջեցելոց հոգւոց :

Պատարագիչ եւ քարոզիչ՝
ՆԱՐԵԿ Ա. ՔՀՆՅ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Կապոյտ Խաչի Մարսէյլ քաղաքի մասնաճիւղը շնորհակալութեամբ ստացած է հետեւեալ նուէրները Տիկին Սաթենիկ Թիւթիւքճեանի մահուան առթիւ :

Օր. Սեդա Սիմոնեան 500 Ֆր., Տիկին Լեւոն Գիլնճեան 500 Ֆր., Տէր եւ Տիկին Լեւոն Զոլաքեան 300 Ֆր., Տէր եւ Տիկին Ժագ Պօղոսեան 500 Ֆր., Տէր եւ Տիկին Սերժ Գիլնճեան 200 Ֆր., Քէօսէեան ընտանիք 300 Ֆր., Տիկին Սիրվարդ Ծամուղեան 200 Ֆր., Օր. Տանիէլ Խաչատուրեան 100 Ֆր., Տէր եւ Տիկին Վարդուկեան 150 Ֆր., Նաւարեան եւ Քէրքիկեան ընտանիքներ 800 Ֆր., Կոստանեան եւ Վարդանեան ընտանիքներ 100 Ֆր., Գլեմանս եւ Սեդա Թիւթիւքճեան 1000 Ֆր., Տէր եւ Տիկին Քաջազուն Օհաննէսեան 1000 Ֆր., Գանտէրեան ընտանիք 200 ֆրանք, Թորոս Վարդապետեան 300 Ֆր., Տիկին Միլտոնեան 100 ֆրանք, Կարօ Եօթնեղբայրեան եւ Տիկին Անիթա Աչկքէօղեան 500 Ֆր., Տիկին Մակի Թրխուլէ 300 Ֆր., Տէր եւ Տիկին Ջաւէն Կապրիէլեան 500 Ֆր., Համազգայինի դպրոց 800 ֆրանք :

-ՎԵՐԱՄՈՒՏ-

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՄԻՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

Լիոնի Հայկազեան Միօրեայ Վարժարանի վերամուտն է Չորեքշաբթի, Հոկտեմբեր 2-ին, Առաւօտեան ժամը 9-ին :

Դասաւանդութիւնները տեղի կ'ունենան Չորեքշաբթի, առաւօտեան ժամը 9-էն 12, կէսօրէ վերջ ժամը 14-էն 16 :

Աշակերտները կրնան օգտուիլ կէսօրուան ճաշէն. իսկ երթեւեկի սպասարկութիւն մը կարելի է նախատեսել ծնողքներու հետ համաձայնելով :

Յաւելեալ տեղեկութեան եւ արձանագրութեան համար դիմել Եկեղեցւոյ Դիւանատունը :

RENTREE 1996

Où inscrire votre enfant ? Pensez à

L'ECOLE PRIVEE HAMASKAINE

ENSEIGNEMENT BILINGUE ARMENIEN - FRANÇAIS

DE LA MATERNELLE A LA TERMINALE

PRIMAIRE et COLLEGE sous contrat

Classes à petits effectifs

Suivi des études personnalisé pour chaque élève

Avantage de présenter l'arménien en LV1 et en spécialité (coefficient 7ou8)

INSCRIPTIONS
à compter du 12 août, sur rendez-vous

Adresse
185, chemin des Sables Jaunes
13012 Marseille

Tél. : 91 93 75 25
Fax : 91 88 22 65

DATE A RETENIR

NAVASART à Marseille

Les 4 Sections de la Croix Bleue des Arméniens de France - région Marseille, demandent à toutes les associations de prendre en considération la date du

SAMEDI 19 OCTOBRE en soirée.

Plus amples renseignements ultérieurement.

- ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ -

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

Կիրակի, Օգոստոս 18

Տօն է Վերափոխման Ս. Աստուածածնի :
Պատարագ ժամը 10.30-ին :
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ԳԻՒՏ ԱՐՔ. ՆԱԳԳԱՇԵԱՆ
Կաթ. Պատուիրակ եւ Առաջնորդ Փարիզի Հայոց

Ս. ՅԱԿՈԲ — ԼԻՈՆ

Կիրակի, Օգոստոս 18, տօն է Վերափոխման Սուրբ Աստուածածնի :

Այս առթիւ Լիոնի Ս. Յակոբ Մայր Եկեղեցւոյ մէջ տեղի պիտի ունենայ պատարագ :

Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ՆՈՐՎԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԶԱՔԱՐԵԱՆ
Հայր. Պատուիրակի փոխանորդ
ԼԻՈՆԻ ԵՒ ՌՈՆ _ ԱԼՓԻ ՀԱՅՈՑ

Յաւարտ պատարագի կը կատարուի խաղողօրհնէքի աւանդական արարողութիւնը :

Հաւատացեալներ որոնք Օրհնութեան համար ուխտած են խաղող նուիրել կրնան ուղարկել Եկեղեցւոյս Դիւանատունը :

Սիրով կը հրաւիրուի Լիոնի եւ Շրջանի ուխտաւոր ժողովուրդը սոյն Տաղաւարի հանդիսութեանց :

Սկիզբ Ժամերգութեանց ժամը 8.45-ին :
Պատարագ ժամը 10-ին :
Քարոզ ժամը 11.15-ին :
Խաղողօրհնէք ժամը 12-ին :

ՎԱԼԱՆՍ _ Ս. ՍԱՀԱԿ

Կիրակի, Օգոստոս 18
Ս. Սահակ Եկեղեցւոյ մէջ
Ռիւ տը լա Սեսիլ
Վերափոխում Աստուածածնի

Հանդիսաւոր պատարագ կը մատուցուի ժամը 10-ին : Յաւարտ պատարագի, կը կատարուի խաղողի օրհնութիւնը :

Այդ օրը հոգեհանգստեան պաշտօն չի կատարուիր :

ՄԱՐՍԷՅԼԻ ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Տօն վերափոխումն Ս. Աստուածածնի
ԽԱՂՈՂՕՐՀՆՈՒԹԻՒՆ
Կիրակի, Օգոստոս 18
Մարսէյլի
Սրբոց Թարգմանչաց Մայր Եկեղեցւոյ մէջ

Սկիզբ Ժամերգութեանց ժամը 8.30-ին :
Առաւօտեան ժամը 10-ին կը մատուցուի հանդիսաւոր պատարագ :
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ՏԱՐՕՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՃԷՐԷՃԵԱՆ
Առաջնորդական Տեղապահ
Հարաւային Ֆրանսայի Հայոց Թեմի

Պատարագի ընթացքին կը կատարուի «Օրհնութիւն խաղողոյ» աւանդական արարողութիւնը :

Ս. ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ ՍԷՆ-ԺԵՐՈՄ

Կիրակի, Օգոստոս 18
Սկիզբ ժամերգութեան՝ ժամը 9-ին :
Պատարագ՝ ժամը 10.15-ին :
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ՎԱՉԷ Ծ. ՎՐԴ. ԻԳՆԱՏԻՈՍԵԱՆ
Յաւարտ պատարագի կը կատարուի խաղողօրհնէքի աւանդական արարողութիւնը :

ՍԷՆ ԼՈՒ _ Ս. ԳԷՈՐԳ

Կիրակի, Օգոստոս 18
Հանդիսաւոր պատարագ ձեռամբ հոգեւոր հովիւ՝
ՇԱՀԱՆ Ա. ՔՀՆՅ. ՏԷՏԷԵԱՆԻ
Սկիզբ պատարագի՝ ժամը 10-ին :
Պատարագի աւարտին կը կատարուի խաղողօրհնութիւն :

N'oubliez pas votre 15 AOUT

à Saint - Raphaël

au HOME ARMENIEN

avec

Marten YORGANTZ

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆ

ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

Մելգոնեան Կրթական Հաստատութեան 1996 - 1997 ուսումնական տարեշրջանի մուտքի քննութիւնները տեղի կ'ունենան Երկուշաբթի եւ Երեքշաբթի, Օգոստոս 12-ին եւ 13-ին, ժամը 10-ին, Հ. Բ. Ը. Միութեան Փարիզի գրասենեակին մէջ

11, square Alboni, 75016 Paris

Հեռաձայն. -
45 - 20 - 03 - 18

Քննութեանց արդիւնքները կը հաղորդուին մինչեւ Օգոստոս 30 :

ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ
Մ. Կ. ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 PARIS
SIRET : 51027317 A R. C. Paris
Commission paritaire: N° 55935

ԿԱՊՈՅՏ ԽԱՉ

ՄԵԾ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ ԵՒ ԽԱՂՈՂՕՐՀՆԷՔ

Կիրակի, Օգոստոս 11-ին, ամբողջ օրը, Պէլֆոնթէնի (Ժիւրա) կայանը :

Առաւօտեան, Խաղողօրհնէքի արարողութիւնը կը կատարէ՝
ՄԿՐՏԻՉ ՔԱՀԱՆԱՅ ՊԱԼԱՊԱՆԵԱՆ

Պիւֆէ - Գեղարուեստական յայտագիր կայանի երախաներուն կողմէ

- Հաճելի անակնկալներ

ԵՐԵՔՇԱԲԹԻ
ՕԳՈՍՏՈՍ 13
MARDI
13 AOUT
1996

LE NUMERO : 5,00 F.

ՅԱՌԱՋ
ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1925-1957)

HARATCH
LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE-FONDE EN 1925
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 47. 70. 86. 60 — TELEX : HARATCH 280 868 F
— FAX : 48. 00. 06. 70 —
C.C.P. PARIS 15069-82 E

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 1.100 Ֆ. - Վեցամսեայ : 560 Ֆ.
Արտասահման : Տար. 1.400 Ֆ. (ամէնօրեայ առաքում)
1.250 Ֆ. (շաբաթական առաքում) - Հատը : 5,00 Ֆ.

72րդ ՏԱՐԻ - ԹԻՒ 18.917 Fondateur SCHAVARCH MISSAKIAN 72e ANNEE — N° 18.917

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ԷՐՊԱՔԱՆ ԻՐԱՆՈՎ ՍԿՍԱՒ ԻՐ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՊՏՈՅՏԸ

ԱՄԵՐԻԿԱՑԻՔ ԴԺԳՈՀ ԵՆ

Ճիշդ այն շրջանին ուր նախագահ Գլինթըն ծանրօրէն կը քննադատէ Իրանը եւ կ'սպառնայ իր զինակիցները որ դաշինքներ ընելէ հոն ու կը սպառնայ պատժել, Թուրքիոյ սիրալիր յարաբերութիւնները կը ձեռնարկէ: Էրպաքան ըսած է, ի պատասխան Ուաշինթընի դժգոհութեան, «Ես գոյութիւն ունիմ Թուրքիոյ շահերը պաշտպանելու համար եւ ոչ թէ Միացեալ-Նահանգներու»:

Անոնք որոնք կը նկատեն թէ Էրպաքան քաղաքական իր շրջապտոյտը մահմետական երկիրներու մէջ կը սկսի Իրան-ով, իր շրջապատը կ'առարկէ. - «Ո՛չ, Նախ Հիւսիսային Կիպրոսի Թրքական Հանրապետութիւնը այցելեց: Յետոյ, միայն Իրան չերթար, Փաքիստան ալ պիտի երթայ, Մալեզիա, Ինտոնեզիա, նոյնիսկ Սինկափուր»:

Էրպաքանի կ'ընկերանան շուրջ 100 գործարարներ եւ վարչապետը կ'ըսէ թէ իր այցելութիւնը աւելի տնտեսական է քան քաղաքական: Այս շրջապտոյտը մեծ ուշադրութեան կ'արժանանայ մանաւանդ արեւմտեան շրջանակներուն մէջ: Սկիզբը, Էրպաքան շատ չափաւոր դիրք բռնեց արեւմուտքի առջեւ, ձայն չհանեց Թուրք-իսրայէլեան զինուորական դաշինքին մասին եւ ձգեց որ հինգ ամիսներով ալ երկարաձգուի այն համաձայնագիրը որ Ինճիրլիքի մէջ թոյլ կուտայ որ օտար ուժեր մնան ի պաշտպանութիւն հիւսիսային Իրաքի Քիւրտերուն: Բայց, չի կրնար նաեւ կեր չտալ իր կողմնակիցներուն եւ այս շրջապտոյտով կ'ուզէ փաստել որ տարբեր մէկն է: Դիւանագէտ մը այս գործունէութեան մէջ «ներքին խոհանոց»ի հարցեր կը տեսնէ: Պատիկ պատմութեան համար, կը յիշուի թէ լրագրողներն ալ պէտք է յարմարին այս նոր վարչապետին որ արգիլած էր ալքոլը տասնօրեայ իր շրջապտոյտի ընթացքին:

Այս առաջին այցելութեան առթիւ, Անգարա եւ Թեհրան յայտարարած են նաեւ թէ զինուորական գետնի վրայ պիտի ամրապնդեն իրենց գործակցութիւնը պաշտպանելու համար իրենց սահմանները: Այլ խօսքով՝ զսպելու համար Քիւրտերու շարժումները: Էրպաքան կը փորձէ նաեւ վեհաժողով մը գումարել Իրանի, Իրաքի եւ Սուրիոյ հետ լուծում մը գտնելու համար «հիւսիսային Իրաքի հարցին»:

Աւելի սերտացած են նաեւ Իրանի եւ Թուրքիոյ տնտեսական կապերը: Օգոստոս 12-ին կը ստորագրուէր կազի կարեւոր պայմանագիր մը:

***

Ժընեւի մէջ, ՄԱԿ-ի Մարդկային իրաւանց ենթայանձնախումբի ժողովին Թուրքիա խիստ դատապարտումներու ենթարկուած է: Բազմաց նիստին, բրիտանացի փորձագէտը մեծարած է կիպրացի Թուրք լրագրող՝ Քութլու Ատալըի յիշատակը որ քննադատած էր Անգարայի դերը եւ որ սպաննուած է: Բազմաթիւ ոչ-կառավարական կազմակերպութիւններ քննադատած են մարդկային իրաւանց բռնաբարումը: Մարդկային իրաւանց միջազգային լիկայի անունով Ապուլ Կաբիտի Տիալօ յայտարարած է թէ Թուրքիոյ մէջ 152 օրէնք կարծիքի ազատութիւնը տնօրինող, ըստ իրեն կացութիւնը օրէ օր կը վատթարանայ: Յիշուած են բազմաթիւ պարագաներ՝ Եաշար Քեմալ, Լէյլա Զանա եւ ուրիշներ: Շեշտած է նաեւ բանտերու կացութիւնը: 1995-ին բանտարկեալներու 231 անհետացում կայ, 57 մահ չարչարանքի հետեւանքով, 1412 չարչարանքի պարագայ եւայլն, եւայլն:

Այս առնչութեամբ, հետաքրքրական է զուգահեռ մը ընել այն հարցազրոյցին հետ զոր Խոուար Սապլիէ ունեցած է նախագահ Տէմիրէլի հետ («Ֆիկարօ», Օգոստոս 9) եւ ուր Թուրքիոյ նախագահը չի վարանիր ասպարէզ ալ կարդալէ ու կ'ըսէ. -- «Ի՞նչ ունիք ձեր երկրին մէջ, ազատ ընտրութիւննե՞ր, ես ա՛լ. հանրաքուէով ընտրուած խորհրդարան ունինք: Ի՞նչ ունիք ձեր երկրին մէջ, օրէնսդրութի՞ւն մը որ կ'երաշխաւորէ ազատութիւնը, ես ա՛լ: Ի՞նչ ունիք ձեր երկրին մէջ, ազա՞տ մամուլ մը. տեղեկատուութիւնը ազատ է երկրիս մէջ: Նայեցէք թերթերու եւ հրատարակութիւններու քանակը: Հեռատեսիլի 17 կայան ունինք, որոնց 8-ը ոչ-պետական եւ 300 տեղական կայան: Ի՞նչ ունիք ձեր երկրին մէջ, երբ ժողովրդավարութեան մասին կը խօսիք: Ինչ որ ունիք, մե՛նք ալ ունինք: Բանտե՞րը. գիտցէք որ բանտերը Պետութեան հակակշռին տակ չեն...»: Ու այն հարցումին թէ ո՞վ է զանոնք հակակշռողը, Տէմիրէլ կը պատասխանէ՝ «ահաբեկիչները»:

***

Պոլսոյ Առեւտուրի սենեակի անդամ գործարարներու պատուիրակութիւն մը Պաղտատ գացած է Օգոստ. 7-ին, հանդիպումներ ունենալու համար Իրաքի ղեկավարներու հետ: Թուրք գործի մարդիկը կը պատկանին սննդեղէնի եւ դեղօրայքի մարզին: Այս այցելութիւնը երկրորդն է իր տեսակին մէջ:

ԿԻՊՐՈՍ

ԾԱՆՐ ՄԻՋԱԴԷՊԵՐ

ՅՈՅՆ ԿԻՊՐԱՑԻ ՄԸ ՍՊԱՆՆՈՒԱԾ

Կիրակի, Օգոստոս 11-ին, 7000 մոթարներ, գլխաւորաբար յոյն-կիպրացի, բայց նաեւ Թուրք, քիւրտ եւայլն, խաղաղ ցոյց մը կ'ընէին բողոքելու համար կղզիին բաժանման դէմ: Անոնք ճամբայ ելած էին Օգոստոս 2-ին Պէրլինէն, անցած էին Հունգարիայէն, Ռումանիայէն եւ Պուլկարիայէն: Պիտի փորձէին «Կանանչ գիծը» անցնիլ (երկու մասերը բաժնող եւ ուր են ՄԱԿ-ի պաշտպան ուժերը) պահպանելու համար Պետութեան ապահովութիւնը: Հակառակ Թուրք եւ յոյն իշխանութեանց ազդարարութիւններուն, շուրջ 500 ցուցարարներ մուտք գործած են այդ չէզոքացած եւ ՄԱԿ-ի պաշտպանութիւնը վայելող գօտին որ կը բաժնէ երկու համայնքները: Բախումները անմիջապէս ծայր տուած են, քար, բիր, կրակոց: ՄԱԿ-ի ուժերը ի վիճակի չեն յայտնելու թէ ուրկէ՞ եւ ի՞նչպէս սկսած են կռիւները, բայց, «Թուրք Հանրապետութեան» նախագահը Տէնքթաշ հրահանգ տուած էր թրքական ուժերուն որ կրակ բանան անոնց վրայ որոնք կը փորձեն գիծը անցնիլ: Ինչպէս միշտ, նման պարագաներու մէջ, կողմերը իրարու վրայ կը ձգեն միջադէպերու պատասխանատուութիւնը: ՄԱԿ-ն ալ կ'ամբաստանէ երկու կողմերու կարգապահութեան ուժերը «որոնք չեն ստանձնած իրենց պատասխանատուութիւնը որ կը կայանայ արգելք ըլլալու մէջ որ մարդիկ չէզոք գօտին մըտնեն»: Ըստ կիպրական հեռատեսիլին, Թուրք զինուորներ մտած են Աինայ գիւղէն, Տէրինիայի մօտ, ինչ որ ՄԱԿ-ի ուժերը կը հերքեն:

Այս կռիւներուն հետեւանքով ծեծի տակ մեռած է 24-ամեայ Յոյն կիպրացի մը:

Մամուլը կը նկատէ որ այս բախումները կը յիշեցնեն անլուծելի կնճիռի մը գոյութիւնը:

ՄԱՄՈՒԼ

ԹՈՒՐՔԻՈՅ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋԵՒ
«ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆ»
ԴԱՇԻՆՔ ՄԸ ԿԱՅ ԵՂԵՐ...

«Ֆիկարօ -- Մակազին»ի (Օգոստոս 10) Նամականիի բաժնին մէջ հրատարակուած է Ժ. Շարտոն անուն մէկուն նամակէն հատուած մը Թուրքիոյ եւ Եւրոպայի մասին: Ան բոլորովին համաձայն է նոյն թերթին մէջ լոյս տեսած Փաթրիս տը Փլէօնքէթի խմբագրականին հետ (տես՝ «Յառաջ», Յուլիս 17) եւ իր տողերով ցոյց կուտայ թէ բնաւ համակիր չէ Թուրքիոյ ու կ'եզրակացնէ. -- «Միւս կողմէ, Թուրքիոյ մէջ է (Անգարա) որ կայ Չէչէնիոյ զօրավիգ շարժումը: Այդ շարժումը միլիոնաւոր տոլարներ ունի իր տրամադրութեան տակ: Ինչ որ նուազ ծանօթ է այն է որ Թուրքիա կ'ընդլայնէ այն ճամբաները որոնք Աբխազիա կը տանին թոյլ տալու համար որ ծանր հրետանին անցնի: Ծանօթ է՞ որ Թուրքիա չեղեալ հռչակեց բարեկամութեան իր դաշնագիրը Հայաստանի հետ»:

Պարզ է որ ծանօթ չէ, քանի նման դաշնագիր գոյութիւն ունի միայն Ժ. Շարտոնի երեւակայութեան մէջ:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՉԷՉԷՆԻՈՅ մէջ կռիւները կը շարունակուին եւ ռուսական զօրքն ալ տեղքայլ կ'ընէ: Այս կացութեան մէջ է որ Ելցին յատուկ բանագնաց նշանակեց Լեբեդը, լուծում մը գտնելու համար: Անկախապաշտներու բանբերը՝ Ուդուգով յայտարարած է այս առթիւ. -- «Պատրաստ ենք օգնելու Ա. Լեբէդի որպէսզի կատարէ ընտրական իր խոստումները: Բայց, կ'ուզենք որ ինքզինք մեր տեղը դնէ եւ հարց տայ ինքն իրեն թէ ի՞նչ պիտի ընէր»: Ելցին այլեւս կը ստիպուի խոստովանիլ որ՝ «մեր ներկայացուցիչները կոպիտ սխալներ գործած են կացութեան գնահատման եւ մարտիկներու ուժերուն նկատմամբ»: Այդ կոպիտ սխալներուն հետեւանքով ցարդ 40 հազար մեռեալ կայ: Զերնոմիրդին գաղջ ընդունելութիւն մը ըրած է այս նշանակումին առթիւ, ըսելով. -- «Կը խորհիմ որ կը յաջողի: Պէտք է յաջողի»: Ժիրինովսկի ալ յայտարարած է. -- «Շատ լաւ է, թող հոն երթայ աշխատի»:

ՄԻԱՑԵԱԼ-ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ Հանրապետական թեկնածուն՝ Պոպ Տոլ ընտրեց իր ցանկակիցը, այսինքն ընտրուելու պարագային՝ փոխ-նախագահը յանձին նախկին ֆութպոլիստ Ճէք Քէմփի, 61 տարեկան: Այս նշանակումով, Տոլ կ'ուզէ նոր զարկ տալ իր ընտրապայքարին, Քէմփ ժողովրդականութիւն կը վայելէ, Ռեկընի խորհրդականը եղած է:

ՆԻՍԻ օդակայանին անձնակազմին գործադուլը պատճառ եղաւ որ չաբաթա-

(Շար. ը կարդալ Դ. էջ)

ԵՐԵՒԱՆ ՀԵՌԱՏԻՊ ՓԱՐԻԶ

«ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Օգոստոս 9 / 12)

«ԿՈՏԱՅՔ» ՅԱՂԹԱԿԱՆ՝ 1 -- 0

Օգոստոս 8-ին Եւրոպայի Բաժակի Ի-Է-Ֆ-Ա մրցաշարքի խաղերուն, Աբովեանի Կոտայքը խաղացած է Լաունքայի «ԱԷԿ»ի հետ: Մրցումին 82-րդ վայրկեանին Հենրիկ Պէրպէրեանի կոլը 1 -- 0 յաղթանակ մը պարգեւած է հայկական խումբին: Փոխ վրէժի մրցումը տեղի կ'ունենայ երկու շաբաթ ետք Կիպրոսի մէջ:

***

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԴԻՐՔԻ
ՉԱՐԱՇԱՀՈՒՄ

Օգոստոս 8-ին պաշտօնական դիրքի չարաշահումի մեղադրանքով Ներքին նախարարութենէն գնդապետ Վալերի Պարոնեան եւ քաղաքագօրքի սպայ Տիգրան Գրիգորեանի դէմ քննութեան ձեռնարկուած է: Այս առթիւ կատարուած խուզարկութեան ընթացքին Տ. Գրիգորեանի եւ պարագաներուն բնակարաններէն հրազէն, դաշոյն, զինամթերք ու զարդեր, ոսկեղրամներ, արուեստի գործեր, սրբապատկերներ եւ ամերիկեան տոլարներ գտնուած են: Հետաքննութիւն բացուած է:

***

ՈՒՐԱԽ ԵՒ ՀՆԱՐԱՄԻՏ
«ՆՈՐ ՀԱՅԵՐ»Ը

Եուրմալայի մէջ Ուրախներու եւ Հնարամիտներու ակումբներու փառատօնին մասնակցած է Պալթեան եւ ՀԱՊ-ի երկիրներու ներկայացուցիչներու կարգին Հայաստանի «Նոր Հայեր» խումբը: Ան արժանի նկատուած է երեք մրցանակներէն «Եղանակի աստղ»ին:

***

ՀԱՅԿԱԿԱՆ ՁԵՌԱԳԻՐՆԵՐ
ԹԻՖԼԻՍԻ ՄԷՋ

Վրաստանի մայրաքաղաքին մէջ կան 310 հայերէն ձեռագիրներ որոնք տեղւոյն ձեռագիրներու հիմնարկին սեփականութիւնն են: Երկկողմանի համաձայնութեամբ զանոնք պիտի ուսումնասիրէ Հայաստանի Ազգ. գրադարանի տնօրէն Գէորգ Տէր-Վարդանեան: Ձեռագիրներու նկարագրութեամբ նախապէս զբաղած է Մատենադարանէն Սամսոն Լալաֆարեան որուն մահուան պատճառով գործը կիսատ մնացած է:

ՖՈՒԹՊՈԼ

Օգոստոս 9-ին արդէն սկսաւ ֆութպոլի խաղերու նոր շրջանը: Առաջին դասակարգին բացումը ըրաւ Մարսէյլ 3 -- 1 պարտութեան մատնելով Լիոնի խումբը:

Բ. դասակարգի մրցումներու շարքին, Վալանսի Հայ Մարզականը 1 -- 0 յաղթեց Պօվէի: Այս առաջին խաղերէն ետք, Բ. դասակարգին գլուխն են Փերփինեան եւ Սոշօ 3 կէտով, Վալանս 6-րդ դիրքի վրայ է Թուլուզի հետ:

Ի՞ՆՉՊԷՍ ՊԱՐԵՆԱՒՈՐԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԸ

ՎԱԶԳԷՆ ԱՆԴՐԷԱՍԵԱՆ (*)

Ի՞նչպէս պարենաւորել Հայաստանը: Ահա տարօրինակ սակայն էական հարցում մը, որ կը հետաքրքրէ առաջին հերթին Հայաստանի բնակիչներն ու իրենց կառավարութիւնը, յետոյ նաեւ՝ Սփիւռքը, ուր բարեացակամ բազմաթիւ Հայեր կը փորձեն աջակցիլ Հայաստանի ժողովուրդին: Ինծի թուեցաւ որ ներկայ վիճակին մասին, իմ վերլուծումս կրնար փոքր ինչ տարբեր լոյս մը սփռել Հայաստանի ապագայ տնտեսական զարգացման ու պարենաւորման խնդրին վրայ:

Ներկայացնելու համար Հայաստանի պարենաւորման արդի խնդիրները, անհրաժեշտ է քննարկել ու վերլուծել դարու սկիզբէն մինչեւ Խորհրդային Միութեան փլուզումը ընդգրկող ժամանակամիջոցի ընթացքին տեղի ունեցած փոփոխութիւնները եւ յետոյ միայն անցնիլ նոր կացութեան հարցերուն:

ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԷՆ ՅԵՏՈՅ

Հայաստան Առաջին Հանրապետութեան շրջանին, ինչպէս նաեւ խորհրդայնացումէն յետոյ, պարենաւորման մեծ խնդիրներ ունէր: Այդ կացութեան գլխաւոր պատճառներն էին ապաստանեալներու մեծ թիւը եւ պատերազմին հետեւանքները: Հայաստանի սահմաններուն մէջ, ճարտարարուեստը շատ քիչ զարգացած էր եւ բնակչութեան մեծ մասը հողագործութեամբ կ՚ապրէր: Երկիրը տեսականօրէն գրեթէ ինքնաբաւ էր, իսկ սովի տարիները կանոնաւոր յաճախականութեամբ կը կրկնուէին:

Հաւաքականացում եւ գուլագաթափում

Հայաստանի խորհրդայնացման յաջորդեցին հաւաքականացումը (collectivisation-ը) եւ գուլագաթափումը (dékoulakisation-ը): Հաւաքականացնել կը նշանակէր՝ համախմբել հողերու գործածութիւնը եւ արտադրութեան միւս միջոցները: Գիւղացիներու մեծամասնութիւնը հակառակ էր այս դրութեան եւ ամէնէն աւելի դիմադրողները եղան գուլագները. այսինքն հողատէր գիւղացիները: Խորհրդային Հայաստանի իշխանութիւնները լուծեցին դիմադրութեան այդ խնդիրը «գուլագաթափման» դիմելով. այսինքն բանտարկելով, աքսորելով կամ սպաննելով գիւղատնտեսական աշխարհի ամենազարգացած ու նախաձեռնող տարրերը: Հայաստանի գիւղացիներու նախաձեռնելու ոգիի պակասը մեծ մասամբ կարելի է վերագրել այդ տարիներուն կիրարկուած քաղաքականութեան:

Ճարտարարուեստի զարգացումը խորհրդային Հայաստանի մէջ

Ամբողջ Խորհրդային Միութեան տարածքին, նոր իշխանութիւնները որոշած էին իրենց ուժերը կեդրոնացնել ճարտարարուեստի զարգացման վրայ: Հայաստանի մէջ՝ տարերային ճարտարարուեստը, թեթեւ ճարտարարուեստն ու մեքենաշինութիւնը աճեցան. յատկապէս Երկրորդ Համաշխարհային պատերազմէն յետոյ: Հետեւաբար, Հայաստանի մէջ կազմուած նոր ընտրանին շատ քիչ հետաքրքրութիւն ցոյց տուաւ գիւղատնտեսութեան ի նպաստ:

Խորհրդային Հայաստանի գիւղատնտեսութիւնը եւ պարենաւորումը վարչակարգին փլուզումէն առաջ

Սակայն, խորհրդային վարչակարգին փլուզումէն առաջ Հայաստան կրցած էր կարեւոր յաջողութիւններ ունենալ. նոյնիսկ գիւղատնտեսութեան նման «անկարեւոր» կամ «ոչ - հեռանկարային» նկատուած մարզի մը մէջ: Հայաստան կը ներածէր Միութեան այլ հանրապետութիւններէն սննդանիւթերու մեծ մասը. յատկապէս միսը, կաթնեղէնը եւ անասունի կերը: Ու իր կարգին կ՚արտածէր մեծ քանակութեամբ եւ բարձրորակ պտուղներ եւ բանջարեղէններ:

Ի դէպ, այդ ժամանակաշրջանին, Հայաստանի գիւղատնտեսութիւնը յառաջացած էր՝

- զարգացած էին ոռոգման ցանցերը,
- բարելաւուած էին Արարատեան հարթավայրի աղուտներու մէկ մասը,
- գործունէութիւնը բաւական մեծ համեմատութեամբ մեքենայացած էր,
- գիւղատնտեսութիւնը այլեւս մասնագիտացած էր: Հայաստանը կ՚արտածէր իր արտադրութեան մեծ մասը, որ խորհրդային շուկային վրայ գնահատուած եւ փնտռուած էր: Իսկ այլ սննդանիւթեր ներածելու համար Հայաստան կ՚օգտուէր խորհրդային փոխադրամիջոցներու համակարգէն եւ ցած գիներէն:

Կային նաեւ անբաւարարութիւններ՝

- անասնաբուծական համակարգը ներածուած անասունի կերին ենթակայ էր,
- գիւղատնտեսութիւնը այլեւս դուրս էր ընտրանիին մտահոգութեանց ոլորտէն,
- գիւղացին՝ նախաձեռնողի իր ոգին կորսնցուցած էր,
- ինչպէս ամբողջ պետական համակարգին մէջ, գիւղատնտեսութեան մէջ եւս կը տիրէր պահեստապետներու իշխանութիւնը: Կար զուգահեռ տնտեսութիւն մը, որ գլխաւորաբար պետութենէն գողցուած ապրանքներուն վրայ հիմնուած էր:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՓԼՈՒԶՈՒՄԸ

Խորհրդային Միութեան փլուզման հետեւանքով, Հայաստանի մատակարարման եւ արտածման աւանդական կապերը արագ կերպով քայքայուեցան, ինչ որ պատճառ եղաւ երկրին ճարտարարուեստին կասեցման: Հայաստանի ճարտարարուեստական արտադրութիւնը մեծամասնութեամբ տեղի կ՚ունենար ներածուած նախանիւթերով: Եթէ նոյնիսկ նախանիւթի պահեստներ գոյութիւն ունենային, սոյն արտադրութեան կասեցումը անխուսափելի էր:

Գիւղատնտեսութիւնն ալ, իր մասնագիտացած վիճակին պատճառաւ վատթարացաւ: Հարց ծագեցաւ թէ՝ ի՞նչպէս արտածել պտուղները, գինիները եւ տարբեր տեսակի պահածոները դէպի գնորդ շուկաները. թէ՝ ի՞նչպէս ձեռք բերել բուժանիւթերն ու արուեստական պարարտանիւթերը, որոնք Հայաստանի մէջ չէին արտադրուեր հակառակ իր հզօր տարերային ճարտարարուեստին: Աւելցնենք որ 70 տարուան ընթացքին, «հաւաքական» մտածելակերպը խորապէս արմատացած էր հայ գիւղացիներուն մէջ: Այս վիճակէն ձերբազատուելու համար է որ ձեռնարկուեցաւ հողի սեփականաշնորհումին,

ՀՈՂԻ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՈՒՄԸ

Հողին սեփականաշնորհման նախապատրաստական աշխատանքները սկսան անկախութենէն անմիջապէս յետոյ: Հողի սեփականաշնորհման օրէնքը քուէարկուեցաւ 1991 Յունուարին, ու հողը բաշխուեցաւ 1992-ի սկիզբը: Հայաստանի մէջ տեղի ունեցած հողատիրութեան այլակերպումը (réforme agraire) եզակի է երբեմնի Խորհրդային Միութեան տարածքին վրայ իր արագութեամբ, պայմաններով, ու վերջապէս՝ իւրայատուկ յաջողութեամբ:

Հողատէր դարձան գիւղական գրեթէ բոլոր ընտանիքները: Շատ մը գիւղերու մէջ նոյնիսկ հող ստացան այն մարդիկը որոնք քաղաքի մէջ կ՚ապրէին, բայց գիւղի մէջ ծնած ու մեծցած էին: Պետական տնտեսութեան՝ «սովխոզներու» եւ հաւաքական տնտեսութեան՝ «կոլխոզներու» մեքենաները մեծ մասամբ ծախուեցան անոնց վարորդներուն եւ մեքենավարներուն:

Հողին սեփականաշնորհումը ունեցաւ վիճելի հետեւանքներ: Հակառակորդները կը պնդեն որ հողը սխալ ձեւով բաշխուեցաւ՝ Արարատեան դաշտի մէջ իւրաքանչիւր ընտանիք ստացաւ մօտաւորապէս 0,5 հա. սակայն ո՛չ ոռոգման համակարգը, ո՛չ ալ գոյութիւն ունեցող մեքենաները կը համապատասխանէին փոքր հողակտորներու վրայ մշակութեան կարիքներուն:

Ամենայնդէպս անառարկելի է որ՝ Հայաստան դժուար օրեր ապրեցաւ պատերազմին, Խորհրդային Միութեան քայքայման եւ շրջափակման պատճառաւ: Սակայն Հայաստանի բնակիչները կրցան իրենք զիրենք կերակրել արտասահմանէն բերուած համեմատաբար փոքր լրացումներով: Սով տեղի չունեցաւ երկրին մէջ:

Հայաստանի գիւղատնտեսութեան այլակերպումը վերջացնելու եւ անոր պարենաւորման հարցը կայունացնելու համար, պէտք էր սակայն անցնիլ յաջորդ փուլին՝ սննդամշակման (agro-alimentaire) գործարաններուն սեփականաշնորհման: Սակայն, ցայսօր քաղաքական վիճակը դժբախտաբար թոյլ չէ տուած իրագործել զայն եւ Հայաստանի գիւղատնտեսութիւնը խոստմնալից ապագայի ճանապարհէն շեղելով, մտած է լճացման ներկայ փուլին մէջ:

(Մնացեալը յաջորդով)

(*) Վազգէն - Փօլ Անդրէասեան ծնած է 1969-ին Փարիզ ուր հայերէն խօսիլ - կարդալ ու գրել սորված է մեծ հօրմէ, Կեդրոնականցի Վազգէն Անդրէասեանէն. հոն կատարած է նաեւ իր ուսումը՝ նախակրթարան, միջնակարգ եւ բարձրագոյն. աւարտած է Ջուրերու եւ Անտառներու Ճարտարագիտութեան Ազգային Վարժարանը, ENGREF (Ecole Nationale du Génie Rural, des Eaux et Forêts) 1992-ին, նոյն տարին առընթերաբար բոլորած է Արիզոնայի Համալսարանի Ջրագիտութեան Ուսման շրջանը: Աշխատած է Հայաստան՝ 2.5 տարի որուն երկու տարին Ֆրանսայի դեսպանութեան որպէս Գիտութեան Կցորդը Երեւանի մէջ, նաեւ շրջելով երկրին բոլոր նահանգներուն (Մարզերուն) մէջ. իսկ վեց ամիս՝ մասնակցած է Եւրոմիութեան օժանդակութեան ծրագիրներէն "Գիւղացիական փոխ - օգնութեան պանք"ին իրագործումին: Ներկայիս՝ 1995-էն ի վեր կ՚աշխատի CEMAGREF (Centre d'Etudes des Machines Agricoles, Génie Rural des Eaux et Forêts)-ի ջրագիտութեան բաժնին մէջ: Իր առաջին գիտական յօդուածը, ֆրանսերէն, Հայաստանի անտառներուն մասին է: Ներկայ յօդուածը նիւթն ունի կեդրոնական Սանուց Ֆրանսայի Միութեան հետ խորհրդակցաբար ընթերցուած բանախօսութիւնը որ տեղի ունեցաւ Փարիզ, 1996, Մարտ 19-ին: Այնուհետեւ, ցայսօր, 1996 Յուլիս 24, կատարուած դիտարկումները մեծ փոփոխութիւններու վկայութիւն մը բերելու բնոյթը չունին յիշեալ բանախօսութեան մէջ:

ՍՓԻՒՌՔԱՀԱՅ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՀԱՄԱԺՈՂՈՎ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԹԻՒ 3

Սփիւռքահայ վարժարաններու համաժողովը գումարուեցաւ 1996, Յունիս 7, 8, 9-ին, Նիսի (Ֆրանսա) Պարսամեան Համալիրին մէջ, մասնակցութեամբ հինգ ցամաքամասերէ (Միացեալ -- Նահանգներ, Արժանթին, Աւստրալիա, Աւստրիա, Գանատա, Եգիպտոս, Թուրքիա, Իտալիա, Լիբանան, Պուլկարիա, Ռումանիա, Ֆրանսա) ժամանած հինգ տասնեակ դպրոցներու վարիչներուն, կազմակերպիչ մարմնի անդամներուն եւ հայ մամուլի ներկայացուցիչներուն, (Ֆրանսայէն «Յառաջ», «France-Arménie» եւ «Azad Magazine», Իսթանպուլէն՝ «Մարմարա» եւ «Ժամանակ»), ընդամէնը 63 հոգի: Հրաւիրուած էին Ֆրանսայի մօտ Հայաստանի դեսպան Վիգէն Չիտէչեան, եւ Երեւանի «Սփիւռք» Գիտահետազօտական Կեդրոնի վարիչ փրոֆէսէօր Սուրէն Դանիէլեան: Երեւանի հեռատեսիլէն ալ ժամանած էին Տիկին Հրաչուհի Տատուրեան եւ Պր. Լեւոն Մկրտչեան:

Ստուգուած ըլլալով որ Սփիւռքի մէջ կը գործեն աւելի քան 160 հայկական ամէնօրեայ վարժարաններ (բացի միօրեայ դասընթացքներէ եւ հայագիտական ամպիոններէ, որոնց մասին չունինք ամբողջական տեղեկութիւններ, կանխաւ անոնց ղրկուած էին մանրամասն հարցարաններ: Ստացուած 43 պատասխաններուն պարունակած տեղեկութիւնները ընդհանուր քարտուղարութեան կողմէ արձանագրուեցան synoptiques (համակարգական) ցուցակներու վրայ եւ տրամադրութեան տակ դրուեցան ժողովականներուն, առ ի տեղեկութիւն:

Կազմակերպիչ մարմնի անունով համաժողովի բացումը ընելով, Պր. Տիգրան Հաճեան (Նիս), փորձեց հանել հաշուական եզրակացութիւններ այդ տուեալներէն, մատնանշելով որ հայ վարժարան յաճախող տղոց թիւը Սփիւռքահայոց ընդհանուր թիւին համեմատութեամբ հազարին 13 է, այսինքն շատ քիչ: Շեշտեց նաեւ թէ, ըստ վարժարաններէ քաղուած տեղեկութիւններուն, անոնց մէջ կ՚օգտագործուին 40-ի մօտ հայերէն դասագրքեր, ինչ որ ցոյց կուտայ թէ ամէն դպրոց եւ ամէն ուսուցիչ իւրայատուկ ճամբէ մը կը քալէ: Եւ մաղթեց որ խորհրդակցական այս համաժողովին առաջադրութիւնները ներդաշնակօրէն ուղղուին դէպի միասնացումը հայեցի կրթութեան ի Սփիւռս աշխարհի, եւ անվաղորդայն հաւաք մը չդառնայ սկսուած աշխատանքը:

Դարձեալ կազմակերպիչ մարմնի անունով Պր. Արթուն Համալեան (Նիւ - Ճըրզի, Միացեալ - Նահանգներ) մանրամասնօրէն բացատրեց համաժողովին հետապնդած նպատակը, յոյս յայտնելով որ ի մօտոյ կարելի պիտի ըլլայ կապ հաստատել միւս վարժարաններուն հետ ալ, որոնք կա՛մ տեղեակ չըլլալով, կա՛մ իրենց բազմազբաղ վիճակին բերումով չէին կրցած պատասխանել հարցարաններուն եւ ներկայացուցիչ ղրկել: Ապա հրաւիրեց որ, աշխատանքի սկսելէ առաջ չորս մասնախումբերուն վարիչները յաջորդաբար պարզաբանեն իրենց նիւթերը:

Թիւ 1 Մասնախումբի («Հայ Վարժարանի Առաքելութիւն») վարիչ Պր. Վարդան Օզինեան ըրաւ սահմանումը Սփիւռքեան հայկական վարժարանին եւ անոր առաքելութեան, ճշդելով թէ երկրին լեզուին ու մշակոյթին կողքին հոն հայկականն ալ պէտք է ուժեղ ըլլայ անհրաժեշտօրէն, այլապէս իր գոյութիւնն իսկ կրնայ տարակուսելի դառնալ:

Թիւ 2 Մասնախումբի («Ուսուցիչներու Պատրաստութիւն») վարիչ Պր. Արթուն Համալեան խօսելով հայերէնի արհեստավարժ բարձրորակ ուսուցիչներու պատրաստութեան մասին, բացատրեց թէ Ամերիկայի եւ Եւրոպայի մէջ տեղածին ուսուցիչներ պատրաստելու միջոցները ձեռնտու չեն թուիր առ այժմ, եւ ըսաւ թէ իրենց մասնախումբին նպատակն պիտի ըլլայ որոնել այդ միջոցները, չմոռնալով օգտուիլ այլ շրջաններու մէջ գործող կեդրոններէ:

Թիւ 3 Մասնախումբի («Դասագրքերու Վերաբերեալ Հարցեր») վարիչ Հ. Լեւոն Զէքիեան ձեռք առաւ դասագրքերու հարցը, զայն կապելով ուսումնական յստակ եւ համահայկական ծրագրի մը անհրաժեշտութեան, ծրագիր որ մանրամասնութիւններու մէջ կրնայ պատշաճիլ երկրին պայմաններուն, բայց խորքին մէջ պէտք է ըլլայ ընդհանրական: Կայ անշուշտ մեթոտաբանական մասը, որ պէտք է պատշաճի արդի մանկավարժական սկզբունքներուն, եւայլն:

Իսկ Թիւ 4 Մասնախումբի («Արտադասագրքային Միջոցներ») վարիչ Տիկին Լուսին Մալիքեան բացատրեց թէ իրենց աշխատանքը պիտի կեդրոնանայ արտադասագրքային առարկաներու, այսինքն դասագրքերու նեցուկ միջոցներու ուսումնասիրութեան վրայ, քանի որ ներկայ դարուս փոքրիկներուն հաճելի շատ մը միջոցներ կը կիրարկուին ուսուցման նպատակով, եւ կարգ մը հայկական կեդրոններու մէջ նման առարկաներու գործածութեան ձեռնարկուած է արդէն:

Այս 4 Մասնախումբերու նիւթերուն ներկայացումէն վերջ, խումբերը առանձնացան Պարսամեան վարժարանի դասարաններուն մէջ, յարատեւօրէն աշխատելով ամբողջ երկու օր, իւրաքանչիւր օրուան վերջաւորութեան իրենց ձեռք բերած եզրակացութիւնները ներկայացնելով համաժողովի բոլոր անդամներուն, առ ի գիտութիւն:

Հայաստանի դեսպանը առիթը ունեցաւ

վերջին օրուան առաւօտուն ժողովական-ներուն հետ պանդոկին մէջ հանդիպում մը ունենալու, մաղթելու համար յաջողութիւն եւ արտայայտելու համար գոհունակութիւն՝ ի մասին նման ձեռնարկի մը կարեւորութեան: Գեսպանը ծանրացաւ մանաւորաբար ուսուցիչներու պատրաստութեան հարցին վրայ, շեշտելով թէ հայկական վարժարանը իր առաքելութիւնը գլուխ կարենալ հանելու համար պէտք չէ բաւականանայ հայախօս դասատուներով, այլ պէտք է օժտուի մանկավարժական գիտելիքներու տէր եւ իր անուած երկրին կրթական դրութեան տեղեակ դասախարակներով: Այսինքն, անոնք պէտք է ըլլան նա՛խ մասնագէտ ուսուցիչ, ապա՝ հայերէնի դասատու: Յետոյ յոյս յայտնեց որ այս առաջին համաժողովը կը դառնայ աւանդութիւն:

Ու վերջացուց, մաղթելով որ ունենանք հզօր մշակոյթ, հզօր պետութիւն, պահպանենք հայութիւնը, պահենք մեր լեզուն ամբողջ աշխարհի վրայ իբր մայրենի լեզու:

Համաժողովին վերջին օրուան լիագումար նիստին ընթացքին, մասնախումբերու վարիչները ընդհանուրին պարզեցին իրենց ուսումնասիրութեան վերջնական արդիւնքները որոնք արժանացան համաժողովին հաւանութեան, եւ յառաջիկային պիտի հրատարակուին անջատաբար, այլ զեկուցումներու հետ:

Իսկ որպէսզի կարելի ըլլայ գործնական գետնի վրայ արդիւնաւորել սկսուած գործը, համաժողովը պաշտօն տուաւ կազմակերպիչ Մարմնի անդամներուն, անոնց վրայ աւելցնելով Միջին - Արեւելքէն եւ Ամերիկայէն քանի մը այլ ձեռնհաս եւ յանձնառու անձեր ալ, որպէսզի կազմեն «Սփիւռքահայ Վարժարաններու Հաղորդակցութեան եւ Համակարգումի Մարմին» մը, որուն պարտականութիւնը պիտի ըլլայ՝

- Զանալ հաղորդակցութեան մէջ մտնել համաժողովին չմասնակցած վարժարաններուն հետ ալ:
- Հաւաքել, համադրել ու ամբողջացնել վիճակագրական ցուցակները հայ վարժարաններուն:
- Ձեռք բերած տեղեկութիւնները փոխանցել բոլոր վարժարաններուն եւ նաեւ այն մարմիններուն եւ անձերուն որոնք գործնապէս կը ծառայեն Սփիւռքի հայեցի կրթութեան ու ի մասնաւորի Սփիւռքահայ վարժարաններուն:
- Կեդրոնացնել եւ համադրել աշխատանքը չորս յատուկ Մասնախումբերուն:
- Եւ աշխատիլ իբր Հաղորդակցութեան միջոց, օգտագործելով պատրաստութիւնը կեդրոնական քարտուղարութեան՝ ի Նիս, եւ օժանդակ քարտուղարութեան՝ ի Նիւ -- Ճըրզի, որոնց հասցէն տրուած էստորեւ:
- Այս մարմինը պիտի շարունակէ գործել իրաւական գետնի վրայ իրեն իբր յենակ ունենալով «Association pour le Développement des Echanges Culturels, Artistiques et Scientifiques»ը (Նիս), առաջնորդութեամբ՝ Նիւ - Ճըրզիի (Միացեալ - Նահանգներ) Յովնանեան վարժարանին որ կարեւոր բաժին ունեցաւ, համաժողովին կազմակերպման մէջ:

Համաժողովը վերջացաւ ժողովրդային քօքթէյլով մը, որուն հրաւիրուած էին շրջանի հայ համայնքին անդամները, տեղեակ մնալու համար կատարուած աշխատանքներուն:

Կ՚ուզենք ճշդել թէ եռօրեայ համաժողովը տեղի ունեցաւ խրախուսկացողութեան եղբայրական ջերմ մթնոլորտի մը մէջ, եւ հեռաւոր երկիրներէ ժամանած ժողովականները հոգեկան մեծ բաւարարութեամբ է որ լեցուեցան ի մի հաւաքուելով, մանաւանդ այն պատճառով որ համաժողովին աշխատութեան լեզուն եղաւ մի միայն հայերէնը, ի հեճուկս նոր սովորութիւններու որոնք հայերէնը կը մեկուսացնեն կամ պարզապէս կը ջնջեն հայկական ժողովներու ընթացքին:

Կազմակերպչական գետնի վրայ համաժողովը իր յաջողութիւնը կը պարտի նաեւ նուիրեալ այն Տիկիններուն, Օրիորդներուն եւ Պարոններուն, որոնք իբր «հիւրընկալ յանձնախումբ» բոլորանուէր ըղձացին դիմաւորելու, անոնց ընկերակցելու, պանդոկի, ճաշի եւ այլ հարցերով ալ:

Հաճելին օգտակարին միացնելով, ամէն իրիկուն հիւրերը առաջնորդուեցան հետաքրքրական վայր մը՝ նախ Monte-Carlo, ապա Cannes ուր վայելեցին Մարսէյլի JAF (Jeunesse Arménienne de France)ի պարախումբին կողմէ հայկական պարի ներկայացում մը, Palais des Festivals-ի մէջ, կազմակերպուած Cannes-ի Հայկական Միութեան կողմէ, եւ Juan-les-Pins, ուր ծովահայեաց պանդոկի մը շքեղ սրահներուն մէջ ճաշասար մը սարքուեցաւ իրենց ի պատիւ իբր փակման հանդիսութիւն, ոգեւորուած Նիսի Հայ Մշակութային Տան նուագախումբին կողմէ:

Պարտք կը զգանք ճշդել նաեւ թէ այս համաժողովը կարելի եղաւ իրականացնել շնորհիւ բարձր հովանաւորութեան եւ նիւթական օժանդակութեան Ֆրանսայի Կրթական Նախարարութեան եւ Provence-Alpes-Côted'Azur-ի Շրջանային Խորհուրդին, միջնորդութեամբ Ֆրանսայի վարչապետի խորհրդական Պր. Փաթրիք Սթէֆանինիի, եւ մասնաւորաբար շնորհիւ նուիրատուութիւններուն՝

Նիսէն՝ Տիկին Լիւսի Պարսամեանի

Նիւ - Ճըրզիէն՝ Տէր եւ Տիկին Վահագն եւ Յասմիկ Յովնանեանի

Մոնաքոյէն՝ մշակութասէր հայրենակիցի մը

Նիսէն՝ Arma Cuir-ի (Արման Էվրէն)

Գաննէն՝ Տիկին Ռէժին Ճէվիզեանի եւ Didier Parakian-ի

Փարիզէն՝ G.A.M.M.A. Institute-ի

Փարիզէն՝ Պր. Լեւոն Պաղտասարեանի, SABERATOURS

Ինչպէս նաեւ տեղւոյն վրայ հրաւիրեալներուն միջեւ կատարուած ինքնաբուխ հանգանակութեան մը:

Ժողովականները մեկնեցան գոհունակ, առաջին իսկ առթիւ կրկին համաժողով գումարելու վճռակամութեամբ:

Ընդհանուր Քարտուղարութիւն
ՇԱՀԷ ՅԱԿՈԲԵԱՆ ԳԼԱՌԻՍՆ
ԳՐԻԳՈՐ ԱԺՏԷՐԽԱՆԵԱՆ

Կեդրոնական Քարտուղարութիւն
Secrétariat Général
281, boulevard de la Madeleine
06000 Nice - France
Tél. (33) 93 44 44 03 / (33) 09 54 96 62
(33) 93 81 38 64
Fax: (33) 93 86 15 26 / (33) 93 77 19 79

Օժանդակ Քարտուղարութիւն
Secrétariat Général Adjoint
817, River Road
New Milford, New Jersey 07646
U. S. A.
Tel.: (201) 967 5940
Fax: (201) 967 0249

ՍՓԻՒՌՔԱՀԱՅ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ
ԵՒ
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԻ ՄԱՐՄՆԻ ԱՆԴԱՄՆԵՐ
(Այբուբենի կարգով)

ԱԺՏԷՐԽԱՆԵԱՆ Գրիգոր (Նիս, Ֆրանսա),
ԲԱՂԴԵԱՆՑ Ալեքսանդր (Նիս, Ֆրանսա),
ԳԱՍԱՐԵԱՆ Մոնիք (Ալֆորվիլ, Ֆրանսա),
ԴԱՆԻԳԵԱՆ Այտա (Նիս, Ֆրանսա),
ԴԱՆԻԷԼԵԱՆ Ժիրայր (Պէյրութ, Լիբանան),
ԶԷՔԻՐԵԱՆ Հ. Լեւոն (Վենետիկ, Իտալիա),
ԼԱՏՈՅԵԱՆ Յակոբ (Պէյրութ, Լիբանան),
ԿԱՐՄԻՐԵԱՆ Անի (Փարիզ, Ֆրանսա),
ՀԱՄԱԼԵԱՆ Արթուր (Նիւ - Ճըրզի, Միացեալ - Նահանգներ),
ՀԱՃԵԱՆ Տիգրան (Նիս, Ֆրանսա),
ՄԱԼԻՔԵԱՆ Լուսին (Մարսէյլ, Ֆրանսա),
ՅԱԿՈԲԵԱՆ Յակոբ (Գալիֆորնիա, Միացեալ - Նահանգներ),
ՅԱԿՈԲԵԱՆ ԳԼԱՌԻՍՆ Շահէ (Նիս, Ֆրանսա),
ՇԽՐՏՄԵԱՆ Մհեր (Գալիֆորնիա, Միացեալ - Նահանգներ),
ԼԻՋՈՒՆԵԱՆ Ներսէս (Մոնրէալ, Գանատա),
ՊԵՏՐՈՍԵԱՆ Ք. Թէօվլատէ (Պէյրութ, Լիբանան),
ՊՈՒԼԿԱՐԵԱՆ Յակոբ (Մոնրէալ, Գանատա),
ՏԱՔԷՍԵԱՆ Կարապետ (Փարիզ, Ֆրանսա),
ՏԷՐ - ՄԵՐԿԵՐԵԱՆ Ռոպէր (Էքս-ան-Փրովանս, Ֆրանսա),
ՕԶԱՐԱՐԱՏ Սամսոն (Նիս, Ֆրանսա),
ՕԶԻՆԵԱՆ Վարդան (Փարիզ, Ֆրանսա),
ՖՕՎ Սթէֆան (Լիոն, Ֆրանսա):

ԿԱՊԻԿՆԵՐՆ ԱԼ ԿԸ ԲՈՂՈՔԵ՞Ն

Վանինի խոալացի բժիշկ մըն էր որ 1616-ին յանդգնեցաւ գրել թէ մարդը սերած էր կապիկէն: Այդ արարքը իր կեանքը արժեց. ողջակիզուեցաւ Թուլուզի հրապարակին վրայ: Ժամանակը նման նոր գաղափարներու համար բնաւ յարմար չէր:

Այսօր եւս, Տարվինի մահէն աւելի քան դար մը ետք, նիւթը կը պահէ իր փափուկ հանգամանքը: Նախագահ Ռեկըն, որքան ալ անհեթեթ ու անհաւատալի թուի, պարտադրած էր որ ամերիկեան վարժարաններու մէջ գիտութեան դասին մարդ արարածին սեղծումին մասին տրոց սորվեցնեն աստուածաշնչական տարբերակը: Եւ հանրապետականներն ալ իրենց համագումարներուն զօրավիգ կը կանգնին նոյն տեսակէտին: Պէտք է գո՞հ ըլլալ արդեօք որ այս մտայնութեան տէրերը գոնէ դատարան չեն դիմեր կապիկ նախահօր մը վարկած առաջարկողներու դէմ, ինչպէս եղած է 1925-ին երբ Թէնըսիի մէջ կենսաբանութեան ուսուցիչ մը՝ Ճոն Սքոփ բանտարկութեան ու 100 տոլար տուգանքի դատապարտուած է «ռճիրի համազօր խիզախութեամբ մը դասաւանդած ըլլալուն համար թէ մարդը սերած է աւելի ցած կարգի կենդանիէ մը»:

Հարցին մասին գիտնականներն ալ յըստակ կեցուածք ճշդելու դժուարութիւն ունին: Գիւվիէ որ բրածոներու մեծ մասնագէտ մըն էր, կը կարծէր թէ աշխարհը յաջորդական աղէտներու ենթարկուած է ու անհետացած են կենդանական սեռեր որոնց բրածոները մնացած էին: Ու ամէն աղէտէ ետք, ինչպէս Ջրհեղեղին պարագային, աստուածային արարչութիւնը կը կրկնուէր: Ուրեմն, եղափոխութեան հարց չկար: Շ. Լինէ որ շնչաւոր բոլոր արարածները դասաւորած է «Բնութեան համակարգը» գործին մէջ ու մեզ անուանած՝ Հօմօ սափիէնս, մարդը կը դնէր կապիկին անմիջապէս քովը, ըսելով թէ չատ քիչ բաներով կը տարբերինք անկէ...: Եւ ըսել որ 1735-ին նման կեցուածք արդէն մեծ համարձակութիւն էր:

Եղափոխութեան ըմբռնումը կը կրէ 1809 թուականը. զայն կը պարտինք Լամառքի: Ան չի պնդեր կապիկէն սերած ըլլալու տեսակէտին վրայ: Ընդունելի կ՚ըլլար ան, եթէ մարդը կապիկէն տարբեր ծագում չունենար: Այդ ժամանակաշրջանին Մէնտէլ տակաւին ծնած չըլլալով գիտութիւնը ծանօթ չէր ծնաբանութեան:

Պէտք եղաւ սպասել Տարվինի գալստեան որպէսզի սեռերու եղափոխութեան արդիական ըմբռնումը, բնական զտումի տեսակէտը ի վերջոյ պարտադրեն իրենք զիրենք: Եւ խորհիլ որ Թէնըսիյի կենսաբանին դատավարութիւնն ու դատապարտումը Տարվինի մահէն 40 տարի ետք տեղի ունեցած է...:

ՔԱՂՀԱՆ

ԿՂԶԻՆ
ԵՒ
ՄԻ ՄԱՐԴ
— վիպակ —

ԿՈՍՏԱՆ
ԶԱՐԵԱՆ

Ժամը հինգի մօտերը ծովափը լեցուել է հետաքրքրուած բազմաթիւ ժողովրդով: Բոլորի աչքերը յառել են կղզու դուրս ցցուած այն մասի վրայ, որտեղից նաւերը ծռում են եւ իրենց քիթը դարձնում դէպի ուղղութեամբ: Երկար ժամանակ սպասելուց յետոյ, մօտաւոր կտուրների եւ պատշգամների վրայ կանգնածները նշաններ են անում եւ իրենց ցուցամատները տնկում եկող նաւի կողմը: Վիզերը երկարում են, մարմինները ցցւում ոտքի մատների վրայ, եւ ամէն մարդ ուզում է տեսնել մօտեցող նաւը:

Ահա երեւում է կղզու երթեւեկութիւնները պահող, ցորեն եւ մեծաքանակ գինի ծախող վաճառականի նաւը: Կարճ, ճերմակ, հաստլիկ «Մշակը»: Ահա նա աւելի առաջ է գալիս ահա երեւում են նրա վրայ կանգնած մարդիկ: Ուռռա՛, ուռռա՛: Գոռում են, աղաղակում, սուլում: Երեխաները, ոգեւորուած, մեծերին հրմշտկելով, վազում են կամրջակի կողմը եւ ցատքոտելով բղաւում են երգում: Գիւղերից եկած կանանց վրայից խենթութեան մի դող է անցնում: Հրում են եւ անցնում առաջին շարքերը: Երկու ոստիկաններ՝ մէկը հաստ, կարճ, ոլոր եւ միւսը՝ երկայն, ջղային՝ աշխատում են, առանց յաջողութեան, կարգ ու կանոնը պահել:

Երբ, վերջապէս, նաւը հասնում է նաւամատոյցի մէջտեղը, ծովափից պայթուցիկներ են տրաքւում: Ողջունում են նուագախումբը: Նաւը, բազմաթիւ դրօշակներով զարդարուած, պատասխանում է անվերջանալի, գէլ եւ խռպոտ սուլոցներով: Քանի սուլում է, այնքան պայթուցիկների տրաքոցները բազմանում են: Այնքան բազմութեան աղաղակները սաստկանում են, ծափերը դղրդում, ոգեւորութիւնը իր գագաթնակէտին հասնում:

Ծովափից, բազմաթիւ նաւակներ, արագ - արագ թիավարելով, հասնում են նաւի մօտերը եւ երաժշտախմբի անդամներին խումբ խումբ իջեցնում ափը: Երաժիշտները, այսքան աղմուկից ապշած, շտկում են իրենց համազգեստները, աչքերը չռած նայում իրենց շուրջը, կարծես մորթելու բերուած կովեր լինեն: Մաէսթրոն -- քառակուսի գլխով, լայն ուսերով եւ կարճ ոտքերով մի մարդ -- ձեռքերը աջ ու ձախ, վեր ի վար շարժելով՝ ոստիկաններին ինչ որ բան է բացատրում: Երբ վերջացնում է, ոստիկանները, անհանգստացած, այս ու այն կողմ են վազվզում, սրա նրա փորը հրում եւ աշխատում ճամբայ բանալ: Նուագախումբը շարժւում է եւ սպասում: Մաէսթրոն, Նափոլէոնի նման, ձեռքը բաճկոնի արանքը խօթած, գլուխը վեր առած, համբերութեամբ սպասում է: Ոստիկանները՝ մէկ հաստ, միւսը բարակ՝ վազում են դէպի նրան եւ ինչ որ բաներ ասում: Մաէսթրոն թատերական ձեւով գլուխը դեռ աւելի վեր է բարձրանում, դառնում դէպի երաժշտախումբը, նայում, նշան անում եւ օդը լեցւում է արծաթէ զրնգացող, թրթռացող ձայներով: Աշխոյժ, վստահ, յաղթական թափով եւ ոգեւորութիւնով լեցուած, խումբը առաջանում է դէպի քաղաքի կենտրոնը:

Ամբոխը վազում է նրանց ետեւից: Մայթերը լեցւում են: Զարդարուած պատշգամների վրայից երիտասարդ աղջիկներ ու տղաներ ծաղիկ եւ գոյնզգոյն թղթիկներ են նետում նրանց գլխին:

Կեցցէ՛ նուագախումբը, կեցցէ՛ նուագախումբը:

Մինչ այդ, բոլոր եկեղեցիների այր սրբերը, թափօրներով շրջապատուած, լքում են իրենց խցիկները եւ երիտասարդների ուսերի վրայ բազմած եւ բազմութիւնով շրջապատուած, առաջանում են դէպի Մայր Եկեղեցին, ուր պիտի հիւրասիրուեն եւ գիշերեն: Տօնակատարութեան Սուրբը նրանց հրաւիրած է: Պատշաճութեան համար, սրբուհիները գիշերելու չեն հրաւիրուած: Այր սրբերի հետ նրանք կարող են շրջել, բայց նոյն տանիքի տակ գիշերը՝ ո՞ւր է լսուած:

Կայ նաեւ մի դժբախտ պարագայ: Միակ սուրբը, որ թափօրներին չպիտի մասնակցի ու նաեւ հիւրասիրութիւններին, դա Սուրբ Ֆրանչեսքոն է: Եւ այդ, անցեալ տարուան անախորժ միջադէպի պատճառով, Թափօրի ընթացքին Սուրբ Ֆրանչեսքոյին վերջին տեղն էին տուել: Երբ իր եկեղեցու քահանան այդ տեսաւ, գոյնը նետեց, աչքերը ոլորեց եւ սաստիկ բողոքեց: «Դա մի անարգա՛նք է, մի մահացու վիրաւորանք», պոռաց նա: Երկար վիճաբանութիւններ եւ նոյնիսկ կռիւներ տեղի ունեցան: Գրքեր մէջտեղ բերին, մէջբերումներ կարդացին, պատմական փաստեր մէկնաբանեցին: Քթերի ծայրին կախուած ակնոցներ դողդողացին եւ օդը պայրացած ձեռքերով կտրտեցին:

Այս տարի, երբ երիտասարդները գնացել են Սուրբ Ֆրանչեսքոյի եկեղեցին սուրբը առնելու, քահանան -- ծալուած, փոքրահասակ, երիկամունքներից տառապող մի մարդ -- նրանց տեսել է թէ չէ, բազուկները վեր է բարձրացրել, եկեղեցու դուռը փակել եւ արգիլել, որ նրանք ներս մտնեն:

«Իմ սուրբս, պոռացել է նա, պէտք չունի ձեր կեղծ մեծարանքին: Ֆրանչեսքոն սրբերի սուրբն է, ամենակարեւորը Քրիստոսից յետոյ եւ թափօրների մէջ էն առաջին տեղը պէտք է ունենայ: Հեռացէ՛ք, հեռացէ՛ք այստեղից»:

(Շար. 47)

(Շար. Ա. էջէն)

վերջին (Օգոստոս 9, 10, 11 եւ յաջորդական օրերն ալ) էր – Ֆրանսայի բոլոր թռիչքները Փարիզէն Նիս կամ Նիսէն Փարիզ ջնջուին: Վախ կար որ չարժումը տարածուի Մարսէյլ – Փրովանս օդակայանին: Բանթողները աշխատավարձքի յաւելում կ'ուզեն եւ մտահոգ են ապագայի ծրագրերու պատճառաւ: Ճամբորդները երկաթուղիի կամ մրցակից ընկերութիւններու կը դիմեն:

ԱՆՏՐԷ ՄԱԼՐՕՅԻ մահուան քսանամեակին առթիւ որոշուեցաւ իր աճիւնը Պանթէոն փոխադրել: Հանրապետութեան նախագահը հրովարտակը ստորագրեց Օգոստոս 7-ին, արարողութիւնը տեղի պիտի ունենայ Նոյեմբեր 23-ին: Տը Կոլի Մշակոյթի նախարարը, հեղինակ՝ Լա Գոնտիսիոն Հիւմէնի, կ'ըսէր. – «Կեանք մը ոչինչ կ'արժէ, բայց ոչինչ կեանք մը կ'արժէ»: Շատեր ծիծաղելի կը գտնեն այս կարգադրութիւնը եւ Ժան Տիւթուռ կ'ըսէ նոյնիսկ. – «Մալրօն շատ կը սիրէի որպէսզի նման խեղկատակութեան մը ներկայ ըլլամ: Այն տպաւորութիւնն ունիմ որ այս որոշումը տուողները գինք ջղագրգռած պիտի ըլլային: Պանթէոնը չարաշուք վայր մըն է»: Առաջին մուտք գործողը Պանթէոն Միրապօն եղած է 1791 Ապրիլ 4-ին, իրեն հետեւած են Վոլթէռ, Ժ.-Ժ. Ռուսօ, ժամանակակիցներէն ալ կարելի է յիշել Ռընէ Գասէն (1987), Ժան Մոնէ (1988), Փիէր եւ Մարի Գիւրի (1995):

ՕԼԷՐՈՆ կղզիի (Պրըթանիը) բացը ձըկնորսանաւ մը ուր 50 հոգի գիգուած էր, ընկղմած է Օգոստոս 11-ին երբ ծովի տօնը կը կատարուէր: 5 մեռեալ կայ եւ նոյնքան ալ անհետացածներ: Օդը շատ դէշ էր եւ նաւարկութիւնը վտանգաւոր, նաեւ ալ իր կարողութենէն շատ աւելի մեծ թիւով մարդ կը փոխադրէր:

ԼԻԲԱՆԱՆԻ երեսփոխանական ընտրութիւններու թուականը անփոփոխ կը մընայ (Օգոստոս 18): Խորհրդարանը ընտրական նոր օրէնք մը պիտի հռչակէ Օգոստոս 13-ին որ համապատասխանէ Սահմանադրական Խորհուրդին դիտողութիւններուն:

ՊԻԷՍՔԱՍԻ (Սպանիա) աղէտին վերջնական հաշուեկշիռին համաձայն մեռեալներու թիւը 83 է եւ դեռ կան քանի մը անհետացածներ: Կիրակի, Օգոստոս 11-ին, ազգային սուգ էր երկրին մէջ:

ՎԱԼԱՆՍ
Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

Հինգշաբթի, Օգոստոս 15-ին, ժամը 10-ին կը մատուցուի հանդիսաւոր պատարագ եւ աւարտին հոգեհանգստեան պաշտօն՝ Ռմբակոծութեան եւ Բ. պատերազմի զոհ բոլոր ննջեցելոց հոգւոց:

Պատարագիչ եւ քարոզիչ՝
ՆԱՐԵԿ Ա. ՔՀՆՑ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ
Ս. ԽԱՉ
ԱԹՈՌԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑԻ
13, rue du Perche — 75003 Paris

Կիրակի, Օգոստոս 18
Առաւօտեան ժամը 11-ին, Աստուածածնայ Վերափոխման տօնին առթիւ պատարագ կը մատուցանէ եւ կը քարոզէ՝
ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿ. ԿԱՊՐՈՅԵԱՆ
Առաջնորդ Ֆրանսայի
Կաթողիկէ Հայոց
Ցաւարտ պատարագին տեղի կ'ունենայ խաղողօրհնէքի արարողութիւն:

ՀԵՌԱՏԵՍԻԼ

FRANCE 2

Հինգշաբթի, Օգոստոս 15, ժամը 10-ին
ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ ՏՕՆԸ
ՀԱՅԵՐՈՒ ՄՕՏ

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Մայր ՀՄՄ.-ի 75-ամեակի եւ
Ֆրանսայի ՀՄՄ.-ի Մարտիկ
մասնաճիւղին 10-ամեակի
ճաշ – պարահանդէսը
Հոկտեմբեր 12-ին
Orée du Bois (Porte Maillot)

***

Ի նպաստ «ՀԱՅԱՍՏԱՆ» Հիմնադրամին
ԿԻՐԱԿԻ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 29, ԺԱՄԸ 15-ԻՆ, Իսի լէ Մուլինօ:

– ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ –

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ
ՓԱՐԻԶ

Կիրակի, Օգոստոս 18
Տօն է Վերափոխման Ս. Աստուածածնի:
Սկիզբ ժամերգութեանց՝ ժամը 8.45-ին:
Պատարագ ժամը 10.30-ին:
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ԳԻՒՏ ԱՐՔ. ՆԱԳԳԱՇԵԱՆ
Կաթ. Պատուիրակ եւ Առաջնորդ
Փարիզի Հայոց
Պատարագի աւարտին խաղող կ'օրհնուի:
Ծանօթ. - Այսօր հոգեհանգիստ չի կատարուիր:

Երկուշաբթի, Օգոստոս 19
Բ. օր վերափոխման Ս. Աստուածածնի:
Յիշատակ Մեռելոց:
Այս առթիւ ժամը 10-ին պատարագ կը մատուցուի:
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ԱՒԵՏԻՍ ՔԱՀԱՆԱՅ ՊԱԼԸԳԵԱՆ
Պատարագի աւարտին հոգեհանգիստ կը կատարուի «Վասն համօրէն ննջեցելոց»:

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ
ՇԱՒԻԼ

Պատարագ, Կիրակի Օգոստոս 18, առաւօտեան ժամը 10-ին:
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔՀՆՑ. ԹԱՇՃԵԱՆ
Պատարագի ընթացքին կը կատարուի խաղողօրհնէքի աւանդական արարողութիւնը:

Ս. ՅԱԿՈԲ — ԼԻՈՆ

Կիրակի, Օգոստոս 18, տօն է վերափոխման Սուրբ Աստուածածնի:
Այս առթիւ Լիոնի Ս. Յակոբ Մայր Եկեղեցւոյ մէջ տեղի պիտի ունենայ պատարագ:
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ՆՈՐՎԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԶԱՔԱՐԵԱՆ
Հայր. Պատուիրակի փոխանորդ
ԼԻՈՆԻ ԵՒ ՌՈՆ - ԱԼՓԻ ՀԱՅՈՑ
Ցաւարտ պատարագի կը կատարուի խաղողօրհնէքի աւանդական արարողութիւնը:
Հաւատացեալներ որոնք Օրհնութեան համար ուխտած են խաղող նուիրել կրնան ուղարկել Եկեղեցւոյս Դիւանատունը:
Սիրով կը հրաւիրուի Լիոնի եւ Շրջանի ուխտաւոր ժողովուրդը սոյն Տաղաւարի հանդիսութեանց:
Սկիզբ ժամերգութեանց ժամը 8.45-ին:
Պատարագ ժամը 10-ին:
Քարոզ ժամը 11.15-ին:
Խաղողօրհնէք ժամը 12-ին:

ՎԱԼԱՆՍ - Ս. ՍԱՀԱԿ

Կիրակի, Օգոստոս 18
Ս. Սահակ Եկեղեցւոյ մէջ
Ռիւ տը լա Սեսիլ
Վերափոխում Աստուածածնի
Հանդիսաւոր պատարագ կը մատուցուի ժամը 10-ին: Ցաւարտ պատարագի, կը կատարուի խաղողի օրհնութիւնը:
Այդ օրը հոգեհանգստեան պաշտօն չի կատարուիր:

ՄԱՐՍԷՅԼԻ
ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Տօն վերափոխումն Ս. Աստուածածնի
ԽԱՂՈՂՕՐՀՆՈՒԹԻՒՆ
Կիրակի, Օգոստոս 18
Մարսէյլի
Սրբոց Թարգմանչաց Մայր Եկեղեցւոյ մէջ
Սկիզբ ժամերգութեանց ժամը 8.30-ին:
Առաւօտեան ժամը 10-ին կը մատուցուի հանդիսաւոր պատարագ:
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ՏԱՐՕՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՃԸՐԷՃԵԱՆ
Առանորդական Տեղապահ
Հարաւային Ֆրանսայի Հայոց Թեմի
Պատարագի ընթացքին կը կատարուի «Օրհնութիւն խաղողոյ» աւանդական արարողութիւնը:

Ս. ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ
ՍԷՆ-ԺԵՐՈՄ

Կիրակի, Օգոստոս 18
Սկիզբ ժամերգութեան՝ ժամը 9-ին:
Պատարագ՝ ժամը 10.15-ին:
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ՎԱՉԷ Ծ. ՎՐԴ. ԻԳՆԱՏԻՈՍԵԱՆ
Ցաւարտ պատարագի կը կատարուի խաղողօրհնէքի աւանդական արարողութիւնը:

ՍԷՆ ԼՈՒ - Ս. ԳԷՈՐԳ

Կիրակի, Օգոստոս 18
Հանդիսաւոր պատարագ ձեռամբ հոգեւոր հովիւ՝
ՇԱՀԱՆ Ա. ՔՀՆՑ. ՏԷՍՏԷԵԱՆԻ
Սկիզբ պատարագի՝ ժամը 10-ին:
Պատարագի աւարտին կը կատարուի խաղողօրհնութիւն:

ՊՕՄՈՆ Ս. ԳՐ. ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

Կիրակի, Օգոստոս 18
Տօն է Ս. Աստուածածնի Վերափոխման:
Այս առթիւ Թաղիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ պատարագ կը մատուցուի եւ խաղողօրհնէք կը կատարուի ձեռամբ՝
ՄՈՎՍԷՍ Ա. ՔՀՆՑ. ԳԱԼԷՆՏԷՐԵԱՆ-ի:
Ժամը 10-ին պատարագը կ'երգուի Թաղիս Լուսաւորիչ Դպրաց Դաս երգչախումբին կողմէ, ղեկավարութեամբ եւ երգեհոնահարութեամբ՝ Տէր եւ Տիկին Ռոպէր - Սիւզան Արթինեանի:

Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 PARIS
SIRET: 51027317 A R. C. Paris
Commission paritaire: N° 55935

ԱՐՁԱԿՈՒՐԴԻ
ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

«ՅԱՌԱՋ» ՄԱՏԵՆԱՇԱՐ

ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ
ՕՐԵՐ ԵՒ ԺԱՄԵՐ 100 Ֆր.

ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐ
ՆԱՀԱՆՋԸ ԱՌԱՆՑ ԵՐԳԻ 80 Ֆր.
ԲԱՑ ՏՈՄԱՐԸ 75 Ֆր.
ԿՐԱԿԸ ԿՈՂՔԻՍ 75 Ֆր.
ՍԻՐՏ ՍՐՏԻ 150 Ֆր.

ՀՐԱՆՏ ՍԱՄՈՒԷԼ
ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԵՐ 80 Ֆր.

ԽԱՉԻԿ ԹԷՕԼԷՕԼԵԱՆ
ՍՓԻՒՌՔԻ ՄԷՋ 75 Ֆր.

ԵՒ

«ՅԱՌԱՋ - 50»
(Ծաղկաքաղ 50-ամեայ հաւաքածոյէն) 120 Ֆր.

Դիմել «ՅԱՌԱՋ»ի:

Թղթատարի ծախք՝ 25 Ֆր., հատոր գլուխ:

à l'occasion de la
BENEDICTION DE L'HUILE SAINTE
A ETCHMIADZINE
célébrée
par SA SAINTETE KAREKINE Ier
CATHOLICOS DE TOUS LES ARMENIENS

LE DIMANCHE 8 SEPTEMBRE 1996

Pèlerinage
en Arménie

DU 5 AU 12 SEPTEMBRE
(Transport aérien + Hôtel + Excursions)

RENSEIGNEMENTS ET INSCRIPTIONS

SABERATOURS
31, rue d'Argenteuil
75001 PARIS
Tél. : (1) 42 61 51 13
Fax : (1) 42 61 94 53

SEVAN VOYAGES
48, cours de la Liberté
69003 LYON
Tél. : 78 60 13 66
Fax : 78 60 92 26

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
ՕԳՈՍՏՈՍ 14
MERCREDI
14 AOUT
1996

LE NUMERO : 5,00 F.

ՅԱՌԱՋ
ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1925-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE-FONDE EN 1925
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 47. 70. 86. 60 — TELEX : HARATCH 280 868 F
— FAX : 48. 00. 06. 70 —
C.C.P. PARIS 15069-82 E

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 1.100 Ֆ. - Վեցամսեայ : 560 Ֆ.
Արտասահման : Տար. 1.400 Ֆ. (ամէնօրեայ առաքում)
1.250 Ֆ. (շաբաթական առաքում) - Հատը : 5,00 Ֆ.

72ՐԴ ՏԱՐԻ - ԹԻՒ 18.918 — Fondateur SCHAVARCH MISSAKIAN — 72e ANNEE — N° 18.918

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ԱՄԵՐԻԿԱ ԿԸ ՍՊԱՌՆԱՅ ԹՈՒՐՔԻՈՅ

ԱՆԳԱՐԱ ԵՒ ԹԵՀՐԱՆ ԿԱԶԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՍՏՈՐԱԳՐԵՑԻՆ

Ինչպէս գրեցինք մեր նախորդ թիւով, Էրպաքան Թեհրանի մէջ պայմանագիր մը ստորագրեց Իրանի հետ, ասպարէզ կարդալով Միացեալ - Նահանգներուն: Կազային այս պայմանագիրը 22 տարուան համար է եւ 1999-էն գործադրութեան կը դրուի: 20 միլիառ տոլարի պայմանագիր մըն է (100 միլիառ ֆրանք) որուն շնորհիւ Իրան կազի երկրորդ հայթայթիչը կը դառնայ Թուրքիոյ, Ռուսաստանէն ետք: Իրան տարուէ տարի աւելի մեծ քանակութեամբ կազ պիտի հայթայթէ Անգարայի, սկիզբը՝ 4 միլիառ խորանարդ մեթր հասնելու համար տասը միլիառի վերջին տարիներուն: Համաձայնագիրը կը նախատեսէ նաեւ կազուղիի մը շինութիւնը Իրանի մէջ, Թաւրիզի եւ սահմանագլուխին միջեւ, ապա՝ Թուրքիոյ կապելու համար նորը գոյութիւն ունեցող ցանցին: Իրանի Քարիւղի Նախարարին համաձայն, այս համաձայնագիրը 850 միլիոնէն մէկ միլիառ տոլար պիտի ապահովէ տարեկան:

Միացեալ -- Նահանգները շատ դժգոհ են իրենց այնքա՜ն սիրելի Թուրքիոյ այս ընթացքէն: Էրպաքանի այցելութիւնն ալ «անպատեհ» որակած են: Ուաշինկթընի Արտաքին Նախարարութեան բանբերն ալ չէ վարանած յայտարարելէ. - «Եթէ այս գործառնութիւնը տարեկան 40 միլիոն տոլարէն աւելի ըլլայ, Ամաթօ օրէնքին ենթակայ է»:

Այս օրէնքը (անոր հեղինակ ծերակուտականին անունով) թոյլ կուտայ Ամերիկայի պատժամիջոցներ ձեռք առնել այն երկիրներուն դէմ որոնք ներդրումներ կ՚ընեն իր մատնանշած երկիրներու մէջ (Լիբանան, Իրան, Սուտան): Անգարա կ՚առարկէ որ իր պարագան չէ, քանի եղածը ներդրում չէ այլ, պարզապէս, երկկողմանի առեւտրական համաձայնութիւն մը: Միակ ներդրումը կազուղիին շինութիւնն է, ան ալ Թուրքիոյ հողամասին վրայ պիտի ըլլայ: Ամէն պարագայի մէջ, Ամերիկա համոզուած չէ եւ Ալֆոնս Ամաթօ ալ նամակ մը գրած էր Արտաքին Նախարար՝ Քրիսթոֆըրի ըսելու համար որ այդ ծրագիրը «գրգռիչ է եւ վտանգաւոր»: Պատժական ի՞նչ միջոցներու կրնայ դիմել Ուաշինկթըն: Առաջին առթիւ կրնայ յետաձգել Իրաքէն քարիւղի ներածումները (երբ վերջ գտնէ անպարկօն, ըստ ՄԱԿ-ի թիւ 986 բանաձեւին), ինչ որ վնաս է Թուրքիոյ, քանի այդ քարիւղը իր երկրէն կ՚անցնէ եւ արդէն 6 տարի է, Թուրքիա անցքի իրաւունքի 30 միլիառ տոլար կորսնցուցած է եւ կը յուսար որ շուտով կը վերսկսի թրանզիթը:

Իրան եւ Թուրքիա այլ համաձայնագրեր ալ ստորագրած են, մասնաւորաբար փոխադրութեանց, մաքսային մարզերու մէջ: Որոշած են նաեւ գործակցիլ զինուորական գետնի վրայ, Էրպաքան, առ այժմ գոնէ, ընթացք չէ տուած Իրանի նախագահին՝ Խամէյնիի հրաւէրին՝ խզել Իսրայէլի հետ:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԿԻՊՐՈՍԻ ծանր բախումներու ընթացքին (Օգոստոս 11) երիտասարդ Յոյնին եղերական մահէն զատ, շուրջ յիսուն վիրաւորներ ալ կան, մեծ մասամբ՝ յոյն կիպրացիներ, նաեւ 7 Աւստրիացիներ ՄԱԿ-ի ուժերէն եւ 12 Թուրքեր: Այս միջադէպերը հետեւանք էին ցոյցի մը որուն գաղափարը ունեցած էր Կիպրոսի մոթառներու դաշնակցութիւնը եւ որուն նպատակն էր բողոքել կղզիին բաժանման դէմ: Այդ պատճառով է որ ցուցարարները մեկնած էին Պէրլինէն, այսինքն բաժանումի խորհրդանշական վայրէ մը: Խաղաղութեան պահպանման ուժի (ՄԱԿ) բանբերը կ՚ըսէ թէ 1974-էն ի վեր (թրքական յարձակման եւ գրաւման թուական) ամէնէն բուռն բախումներն են եւ թէ իրենց միջամտութիւնը առաջքն առած է արեան լոգանքի մը: Ուրիշներ սակայն կը դատապարտեն ՄԱԿ-ի ուժերը որ հարկ եղած ձեւով չեն միջամտած: «Իսմանիթէ» (Օգոստոս 13) շատ դիպուկ յօդուած մը հրատարակած էր, ուր կը վերլուծէ ինչ որ պատահած է եւ կը դատապարտէ Թուրքիան, ձաղկելով նաեւ թրքական այդ չակերտաւոր Հանրապետութիւնը զոր «վարձկան գոյութիւն» մը կ՚որակէ որ կը տեւէ շնորհիւ Անգարայի եւ 35.000 թուրք զինուորի: Լրագրողուհին կ՚անդրադառնայ նաեւ Միացեալ -- Նահանգներու, որոնք ոչ արհամարհելի դեր մը խաղցին Մակարիոսի տապալման համար եւ ձգեցին թրքական յարձակումը եւ որոնք, հիմա, կ՚արթննան: Ֆրանսուազ Ժերմէն - Ռոպէն կը յիշէ թէ Տէնքթաշ ջերմ ընդունելութիւն մը ըրած էր Էրպաքանի, ինչ որ դէշ տպաւորութիւն ըրած էր Նիկոսիա, որ չի մոռնար թէ ան փոխ - վարչապետ էր կղզիին յարձակման ատեն:

ԼԵԲԷԴ կը փորձէ, գոնէ հրադադար մը հաստատել Չէչէնիոյ մէջ: Առաջին առթիւ իսկ յայտարարեց՝ «Ռուսաստան կրնայ ապրիլ առանց Չէչէնիոյ, Չէչէնիան չի կրնար ապրիլ առանց Ռուսաստանի»: Լեբէդի եւ անջատողական սպայակոյտի պետ՝ Մասխադովի տեսակցութիւնը դրական կը նկատուի: Երկուքն ալ 95% համեմատութեամբ համաձայնած են Ռուսաստանի եւ Չէչէնիոյ յարաբերութիւններու վերլուծման նկատմամբ: Առաջին հանգրուանը՝ հրադադարն է:

ՓԱՐԻԶԻ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԻՒՆԸ, Օգոստոս 12-ի վաղ առաւօտեան, Սէն - Պեռնար Եկեղեցիէն զանազան հիւանդանոցներ փոխադրեց 10 հացադուլ ընողներ որոնց ծոմապահութիւնը 39-րդ օրուան հասած էր, ինչ որ վտանգաւոր կը նկատուի: Քննութիւններէ ետք, տասն ալ, նոյն օրը, կրկին Եկեղեցին տարուեցան: Առանց թուղթի այս օտարականներու հարցը կը յուզէ մարդասիրական եւ մարդկային իրաւանց կազմակերպութիւնները, բայց Ներքին նախարարը անդրդուելի կը մնայ եւ կը կրկնէ որ պիտի չկանոնաւորէ վիճակը այն օտարականներուն որոնք Ֆրանսայի զաւակ չունին: Գալով ասոնց կը յամառին ու որոշած են շարունակել իրենց ծոմապահութիւնը: Իրենց զօրավիգ է փրոֆ. Լ. Շվարցընպերկ, զօրակցութեան փոքր ցոյց մըն ալ տեղի ունեցաւ Նոթր - Տամ Եկեղեցիին առջեւ, նոյն իրիկունը: Եկեղեցին ապաստանած Մալիցիներու թիւը 300 է: Անել կացութիւն մըն է այլեւս, քանի երկու կողմերն ալ անզիջող կը մնան:

ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ գիները 0.2% եւ 0.3% նուազում արձանագրած են Յուլիսին: Այս

(Շար-ը կարդալ Դ. էջ)

ԵՐԵՒԱՆ — ՀԵՌԱՏԻՊ — ՓԱՐԻԶ

«ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Օգոստոս 12 / 13)

ԹԵԼՄԱՆ ՏԷՐ -- ՊԵՏՐՈՍԵԱՆ ՀԱՅԵՒԹՈՒՐՔ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի պատուիրակութեան Թուրքիայէն վերադարձէն քանի մը օր ետք թրքական պատուիրակութիւն մը այցելած է Երեւան: Օգոստոս 9-ին Հայ եւ Թուրք գործի մարդիկը հանդիպում մը ունեցած են «Հրազդանմաշ» գործատան կեդրոնատեղին: Տնօրէնը Թ. Տէր - Պետրոսեան որ գլխաւորած էր հայկական գործի մարդոց պատուիրակութիւնը, համոզում յայտնած է որ Հայաստան -- Թուրքիա ճամբաները անպայման կը բացուին: Ան ներկայացնելով վերջին ամիսներու հայեւթուրք տնտեսական շփումները, ըսած է թէ ատոնք պէտք չէ կապել քաղաքական մարզին եւ թէ այսօր Թուրքիա յատկապէս Յունաստանի հետ ալ քաղաքական լուրջ հարցեր ունի, սակայն ատիկա արգելք չէ որ տնտեսական յարաբերութիւն ունենան երկու երկիրները:

Նոյն հանդիպումին խօսք առած է Կարսի առեւտուրի պալատին տնօրէն Մէհմէտ Եօլմազ եւս, նշելով որ իրենց նպատակը Կարսի եւ Գիւմրիի միջեւ սահմանային անցքին կարելի չափով շուտ բացումն է: Ըստ իրեն Թուրքիոյ թէ ղեկավարութիւնը, թէ ժողովուրդը մեծ փափաք ունին այդ ուղղութեամբ: Մ. Եօլմազ հաւաստիացուցած է որ Հայաստանի հետ դիւանագիտական յարաբերութիւններու ստեղծումին յաջորդ օրն իսկ սահմանը կը բացուի:

⁂

ԵՐԷԿ ԴՊՐՈՑ, ԱՅՍՕՐ ՄՇԱԿՈՅԹԻ ԿԵԴՐՈՆ

Աստրախանի (Ռուսաստան) Աղապապեան ծանօթ վարժարանի շէնքը տեղւոյն իշխանութեան որոշումով վերադարձուած է հայ համայնքին: Այսուհետեւ կը գործէ որպէս պատմաշակութային կեդրոն, «Արեւ» անունով:

Վարժարանը հիմնադրուած է 1809-ին, ռուսահայ առաջին աշխարհիկ դպրոցն է: Հիմնադիրն է Սպահանէն մեծահարուստ Նիկողայոս Աղապապեան: 109 տարուան գոյութեան ընթացքին վարժարանին աշակերտած են հայ մշակոյթի բազմաթիւ դէմքեր, ինչպէս՝ Յարութիւն Ալէմտարեան, Գաբրիէլ եւ Պետրոս Պատկանեան, Յովակիմ Սոլովեան, Էմին Տէր - Գրիգորեան, եւայլն:

⁂

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԳՆԱՀԱՏԱՆՔ ՀԱՅ ԲԺԻՇԿԻՆ

Երեւանի ամերիկեան դեսպանատան մէջ «Ոսկէ սկաւառակ» պարգեւը յանձնուած է բժիշկ գիտնական Լեւոն Մկրտչեանի, մարդկային առողջութեան մարզին մէջ արձանագրած յաջողութեան համար: Մկրտչեան շուրջ 20 տարիէ ի վեր կը ղեկավարէ Հայաստանի Առողջապահութեան Նախարարութեան «Ուռուցքաբանութեան գիտական կեդրոն»ը: Տէր է բազմաթիւ հետազօտութիւններու, քաղցկեղի տեսակներու կանխումին, դեղերու, դարմանումներու բնագաւառներուն մէջ:

ՊՈՆԻ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ՀԱՐՑՈՎ

Ի՞ՆՉ Կ՚ԸՍԷ Ֆ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Օգոստոս 8-ի մեր թիւով արձագանգած էինք գերմանական թերթի մը կողմէ Հայաստանի Պոնի դեսպան Ֆէլիքս Մամիկոնեանի վերագրուած զգայացունց կաշառակերութեան մը լուրին: Հայաստանի դեսպանը կ՚ամբաստանուէր իր երկրին քաղաքացիներուն նեղ կացութիւնը շահագործելու եւ անոնցմէ կարեւոր գումարներ շորթելու յանցանքով:

Լրատուութիւնը զուգադիպած էր շրջանի մը երբ Ֆ. Մամիկոնեան Երեւան կը գտնուէր: Այս պարագան կը մղէր անհամբեր սպասումի մը, նման գայթակղութիւն մը հերքելու դիրքին վրայ դնելով նախ դեսպանը, ապա Հայաստանի Արտաքին Նախարարութիւնը: Մնաց որ գերմանական շաբաթաթերթին հրապարակումը իր ծանրակշիռ բնոյթով նոյնիսկ կը զօրէր դիւանագիտական անախորժ միջադէպի մը տեղի տալու երկու երկիրներուն միջեւ:

«Արմէնփրէս»ի Օգոստոս 12 թուակիր հաղորդումին առաջին լուրը առընչուած է այս հարցին: Ակնարկելով կատարուած մեղադրանքին, լուրը կ՚ըսէ թէ իրենց թղթակիցը դիմած է նոյնինքն Ֆ. Մամիկոնեանի, խնդրելով որ մեկնաբանէ հրապարակումը: Ան կարծիք կը յայտնէ թէ «յօդուածը պատուիրուած է, իսկ նրանում տեղ գտած թւերը շինծու են եւ անհեթեթ»: Ապա կ՚ըսուի թէ հիւպատոսական ծառայութիւնները վճարովի են ու անոնց շնորհիւ կը գործէ դեսպանատունը: Ֆ. Մամիկոնեան կ՚ըսէ թէ իրենք իրաւունք չունին միջամտելու հայ ապաստանեալներու եւ Գերմանիոյ իշխանութեան յարաբերութիւններուն, եւայլն: Դեսպանութիւնը կրնայ միայն կարծիք յայտնել եթէ հարցը կը վերաբերի մարդկային իրաւունքներու ոտնակոխման: Այս պարագան ալ դժգոհութիւն կը պատճառէ որոշ Հայերու որոնք ամէն գնով կ՚ուզեն Գերմանիա հաստատուիլ:

Ֆ. Մամիկոնեան որ Օգոստոս 13-ին կը վերադառնար Պոն, աւելցուցած է թէ մանրամասնօրէն պիտի ծանօթանայ խնդրին էութեան ու անկարելի չէ որ դատարան դիմէ զրպարտիչներու պատժել տալու համար:

Որպէս կատարուած ծանրագոյն ամբաստանութեան մը ենթական, ակնկալուածին հետ բոլորովին ուղիղ համեմատական չէ Ֆ. Մամիկոնեանի հերքումին վճռականութիւնը: Մանաւանդ երբ կը հաղորդուի որ ըսած է թէ «բացառուած չէ որ դեսպանութիւնը կը դիմի դատարան», հարցականներ կը ծագին մտքերու մէջ. «բացառուած չէ»ն կը նշանակէ նաեւ որ կրնայ եւ դեսպանատունը դատարան չդիմել...:

Ամէն պարագայի, նախ իր եւ իր գլխաւորած Պոնի դեսպանատան, յետոյ նաեւ Հայաստանի միւս ներկայացուցչութիւններուն վարկին, ու անոնց սիրոյն մեծ կամ փոքր զոհողութիւններ կատարած տեղական հայ համայնքներուն մտքի ու սրտի խաղաղութեան համար անհրաժեշտ է որ Ֆ. Մամիկոնեան ամենայն բացայայտութեամբ հրապարակէ ճշմարտութիւնը: Իր վերին իշխանութեան պէտք է յանձնէ եթէ կան ամբաստանութեան հիմք ծառայած արարքներու պատասխանատուներ. իսկ հակառակ պարագային, պէտք է անպայման դիմէ օրինական ճամբաներու, փարատելու համար կասկածի ու ամօթի քօղը որ Պոնի դեսպանատունէն շատ աւելի լայնածիր շրջանի մը վրայ կը տարածուի:

Ի՞ՆՊԷՍ ՊԱՐԵՆԱՒՈՐԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԸ

ՎԱԶԳԷՆ ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

(Բ. եւ վերջին մաս)

ՇՐՋԱՓԱԿՈՒՄ՝ ԾԱՌ ՄԸ ՈՐ ԿԸ ՍՔՕՂԷ ԱՆՏԱՌ ՄԸ

Շրջափակման մասին շատ բան ըսուեցաւ։ Պիտի չծանրանանք այդ նիւթին վրայ։ Բայց քանի որ Հայաստանի շրջափակման մասին շատ ծայրայեղ կարծիքներ կը յայտնուին, մեզի կարեւոր կը թուի մտքերը յստակացնել. իսկական վնասներու ցանկը բաղդատելով գիւղատնտեսութեան զանազան կարիքներուն հետ։

Ցիրուի՝ շրջափակումը կը վնասէ Հայաստանի գիւղատնտեսութեան, հետեւեալ պարագաներով.

- վառելանիւթի, պարարտանիւթի, բուժանիւթի եւ փերմանիւթի ներածումները դժուարացնելով եւ
- Հայաստանի արտադրութեան արտածման արգելք հանդիսանալով։

Իսկ Հայաստանի գիւղացիներուն իրական խնդիրները հետեւեալներն են՝

- Պետական գործարաններուն պարտքերը՝ անոնք գիւղացիներուն արտադրութենէն մաս մը առած են եւ չեն վճարած. կա՛մ այնպիսի ուշացումով վճարած են որ գումարները արժեզրկուած են դրամահոսքի պատճառով,
- շուկայի անկազմակերպութիւնը,
- ջուրի մատակարարման անկանոնութեան պատճառաւ մշակելի հողերու կարեւոր հատուածներ անմշակ կը մնան եւ բերքը կը նուազի,
- դրամատնային համակարգին անկանոն վիճակը,
- ներածուած սննդանիւթերու եւ այլ արտադրութիւններու մրցակցութիւնը. գլխաւորաբար իրանական ու թրքական։

Բացի առաջին խնդիրէն որ մասամբ առնչուած է արտածելու անկարելիութեան հետ, միւս կարեւոր հարցերը ունին կազմակերպչական բնոյթ ու կը բխին անցեալի համակարգէն եւ կրնան լուծուիլ տեղական միջոցներով։

Մաքսազերծման քաղաքականութեան վտանգները.

Օտար սնունդին հայկական շուկայ արգատ մուտքը ամենաապշեցուցիչ երեւոյթներէն մէկն է։ Ի՞նչպէս բացատրել թէ՛ պտուղներ, բանջարեղէններ որոնք Հայաստանի մէջ ալ կ՚արտադրուին՝ ցած գիններով եւ առանց մաքս վճարելու կը ներածուին հոն. վնաս պատճառելով հայ արտադրողներու եկամուտին, յատկապէս երբ բերքը վաղահաս է եւ շուկային վրայ գինները երկար ժամանակ եկամտաբեր չեն մնար։

Պարսկաստանը Հայաստանի կը ծախէ նոյնիսկ ալքոլ. ինչ որ մեծապէս կը վնասէ հայկական խաղողի օղիին սպառման։ Յիշեցնենք նաեւ որ գինիի արտածման դժուարութիւնները պատճառ եղան մեծ տարածութեամբ խաղողի այգիներու բնաջնջման։ Հայաստանի ներկայ պայմաններուն մէջ՝ օղիի արտադրութիւնը միակ ելքն էր այս մարզին պահպանման համար։ Մինչդեռ պարսկական ալքոլի ներածումը կրնայ վտանգաւոր հետեւանքներ ունենալ Հայաստանի խաղողի աւանդական արտադրութեան համար։

Կարելի է դիտել տալ որ, երբ Ֆրանսայի մէջ գիւղացիները անընդհատ կը բողոքեն ներածումներու դէմ ճանապարհները փակելով յատկապէս, հայ գիւղացիները մինչեւ այսօր եղած են չափազանց զուսպ...։

Միջազգային կազմակերպութիւններու օժանդակութեան վտանգները

Վերջին երեք տարիներու ընթացքին, Հայաստան ստացած է մեծ քանակութեամբ պարենային օգնութիւններ։ Ցորենի պարագային՝ 1993-ին 195.000 թոն Եւրոպական Միութենէն (Ե.Մ.-էն), իսկ 1994-ին 240.000 Ե. Մ.-էն եւ Միացեալ-Նահանգներէն։ Կարելի չէ ըսել որ Հայաստանի ժողովուրդը այդ օգնութեան կարիքը չունէր. քանի որ Հայաստան չէր կրնար իր արտադրած ցորենով ինքնաբաւ դառնալ։ Սակայն կ՚արժէ ընթերցողին ուշադրութեան յանձնել յարատեւ պարենային օգնութեան վտանգաւոր բնոյթը։ Արդարեւ, միջազգային կազմակերպութիւններու պարենային օժանդակութիւնը հակասական բնոյթ ունի։ Կարճ ժամանակամիջոցի մը համար ան տագնապէն կը փրկէ օժանդակութիւն ստացող երկիրը։ Բայց միաժամանակ վնասակար հետեւանքներ ունի ան, քանի որ տեղական պարենային շուկայի հաւասարակշռութիւնը կը խախտէ։ Այլ խօսքով՝ մեծ քանակութեամբ ցորեն ներածելով, օգնութեան կազմակերպութիւնները պատճառ կը դառնան որ ցորենի գինը արուեստական ձեւով ցած մնայ ու հայ գիւղացին քաջալերուի աւելի չարտադրելու։ Ցորենը միայն օրինակ մըն է։ Թերեւս լաւ օրինակ մը չէ ան. քանի որ Հայաստան միշտ պէտք պիտի ունենայ ցորեն ներածելու։ Սակայն պէտք է անդրադառնալ թէ որեւէ օգնութիւն բերելու ժամանակ, գինները արուեստական կերպով կ՚իջեցուին։ Ու եթէ քաղաքացիական սպառողը կարճ ժամանակով կ՚օգտուի. արտադրողները եւ հետեւաբար ի վերջոյ երկրի զարգացումը միշտ կը տուժեն։ Այդ պատճառաւ է որ դրեթէ բոլոր զարգացող երկիրներուն մէջ ընդունուած կարգ է այլեւս որ եթէ պարէնի ներածումով օգնութիւն կատարուի, այդ օգնութեան ապրանքը կը վաճառուի բնակիչներուն։ Անկէ գոյացած գումարները կը յատկացուին գիւղատնտեսական զարգացման ծրագրերու։ Սակայն Հայաստան մերժեց այդ քաղաքականութիւնը որդեգրել։

Ի՞ՆՉՊԷՍ ՊԱՐԵՆԱՒՈՐԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Յայտնապէս Հայաստանի պարենաւորման հարցը բարդ է։ Ան կախում ունի երկրի պատմութենէն, աշխարհագրութենէն եւ քաղաքական մշակոյթէն։ Այս կացութենէն ելք որոնելու ժամանակ երկու հարցումներ կը ծագին՝

- Ի՞նչ արտադրել Հայաստանի մէջ,
- Ի՞նչպէս արտադրել Հայաստանի մէջ։

Փորձենք հիմա գոնէ մասնակիօրէն պատասխանել այս հարցումներուն։

- Ի՞նչ արտադրել Հայաստանի մէջ

Նախ՝ պէտք է արտադրել տեղական շուկային համար։ Քանի որ ան է առաջնահերթը։ Այսուհանդերձ պէտք չէ ծայրայեղ ըլլալ որոնելով կատարեալ ինքնաբաւութիւն, ի՛նչ որ բոլորովին անկարելի է։ Ի դէպ՝ այդ շուկան օտար ապրանքներու համար բաւականաչափ թափանցիկ դարձած է եւ գուցէ այլ ծայրայեղութիւն մը պարզելով։ Յետոյ՝ պէտք է արտադրել ի՛նչ որ այսօր պիտի ծախուի եւ ո՛չ թէ ի՛նչ որ անցեալին կը ծախուէր։ Արտաքին եւ ներքին շուկաները փոխուած են։ Իսկ եթէ Հայաստանը վերսկսի արտադրել ինչ որ խորհրդային ժամանակաշրջանին կ՚արտադրէր, ամէն հաւանականութեամբ շուկայ պիտի չգտնէ։ Սպառողը այլեւս աւելի բարձր որակ ու աւելի լաւ «փաթեթաւորում» կ՚ակնկալէ։ Ի մէջ այլոց Ռուսաստանի շուկային վրայ հայկական սննդանիւթը մրցակցութեան ենթակայ է ամբողջ աշխարհի արտադրութեան հետ։ Մէկ խօսքով՝ կանոնները փոխուած են եւ պէտք է յարմարիլ, կամ ... անհետանալ։

- Ի՞նչպէս արտադրել Հայաստանի մէջ

Գիւղատնտեսական արտադրութիւնը զարգացնելու համար, անհրաժեշտ է կարգ մը արհեստամիջոցային (technique) եւ կազմակերպչական հարցերու արագ լուծումը։ Զոր օրինակ՝ առաջնահերթ է ոռոգման ջուրի բաշխման հարցը։ Եթէ ջուրի մատակարարութիւնը չկանոնաւորուի, եթէ գիւղացիները տեղեակ չըլլան թէ երբ կը ստանան ոռոգման ջուրը, անոնցմէ շատեր յանդգնութիւնը պիտի չունենան աւելին մշակելու։ Գիւղացին պէտք է ապահովութիւն ունենայ որպէսզի փափաքի ունենալ աւելի արտադրելու ցանկութիւնը եւ արտադրէ։

Նաեւ՝ պէտք է բարեփոխել շուկաները։ Արտադրողը չի կրնար իր ժամանակը վատնել իր արտադրութիւնը վաճառելու համար։ Պէտք է վստահելի եւ լաւ կազմակերպուած շուկաներ ունենալ, որպէսզի մթերքի կորուստները նուազին։ Գիւղացին կը չահագրգռուի դարձեալ իր արտադրութիւնը աւելցնելով եթէ ապահով ըլլայ որ կարող է գնորդ գտնել։ Այդ նպատակն է որ կը հետապնդէ շուկայի մեծածախս ծրագիրը. գանձատրուած (ֆինանսաւորուած) Եւրոպական Վերակառուցման Դրամատունէն։

Գիւղատնտեսութեան գանձատրային (ֆինանսական) համակարգը պէտք է բարեփոխել որպէսզի գիւղացիները կարենան գայն ստանալ նախ՝ կարճ ժամանակամիջոցի ու յետոյ՝ ներդրման համար։ Առանց վարկային դրութեան բարեփոխման կարելի պիտի չըլլայ Հայաստանի գիւղատնտեսական արտադրութիւնը զարգացնել։ Այդ նպատակը կը հետապնդէ նաեւ Գիւղատնտեսական Փոխ-օգնութեան Դրամատան Ծրագիրը. գանձատրուած (ֆինանսաւորուած) Եւրոպական Միութենէն։

Վերջապէս պէտք է որ Հայաստանի ղեկավար դասակարգը գիտակցի գիւղատնտեսութեան իսկական կարեւորութեան եւ վերաքննէ ու բարեփոխէ իր մօտեցումը անոր նկատմամբ։

ՍՓԻՒՌՔԱՀԱՅ ՄԱՄՈՒԼ

ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԱՆԱՊԱՏՈՒՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՆՁԱԽՆԴՐՈՒԹԵԱՄԲ...

Ազգային սեփական դրօշի ներքոյ, Աթլանթայի մէջ Ողիմպիական խաղերու մեր առաջին մասնակցութիւնն էր։ Մեր փոքր ածուն, 197 երկիրներու շարքին կ՚ունենար իր պատուաբեր մասնակցութիւնն ու պատուաբեր մետալները։ Մեր 32 մարզիկները տուն վերադարձան, իրենց մէկ ոսկի եւ մէկ արծաթ մետալով։ Հայաստանը գրաւեց 45-րդ դիրքը ընդհանուր դասաւորման մէջ։

Եթէ նկատի ունենանք նախորդ ողիմպիականներուն մեր ձեռք ձգած արդիւնքները, բնականաբար այս մէկը անրաւաբար պիտի նկատուի։ Եթէ նկատի ունենանք մեր երկրին ընդհանուր վիճակն ու մարզական կեանքին ալ ... սեփականաշնորհումը, ապա այս արդիւնքը աւելի քան գոհացուցիչ է։ Ի վերջոյ, մեր մարզիկները չունէին եւ կը թուի թէ մօտիկ ապագային ալ պիտի չունենան ֆինանսական եւ մարզումի մեծ հնարաւորութիւններ, մինչեւ որ երկիրը կայունանայ իր տնտեսական ընդհանուր կառոյցներով։

Մինչեւ 2000 թուական, մենք պէտք է կարողանանք քայլ պահել համաշխարհային զարգացման հոլովոյթին հետ, քանի որ ափրիկեան եւ ասիական նորանկախ պետութիւններ ոստումներով յառաջընթաց մը կ՚արձանագրեն՝ մարզական կեանքի մէջ նոյնիսկ մրցակցութեան ասպարէզ կարդալով մեծ աւանդութիւններ ունեցող երկիրներուն։ Աթլանթայի մէջ իրենց ուժականութեան ապացոյցը տուին այդ երկիրները, մանաւանդ «սեւերը», որոնք երկար ժամանակ յետամբռնացներու դասակարգումին մէջ էին։

Հայաստանի Ողիմպիական Խումբը, բընականաբար, անխառն հպարտութիւն չպատճառեց մեզի։ Աւելին կ՚ակնկալէինք մետալներու առումով։ Բայց երբ կը գոհանայինք այսքանով, չէինք ակնկալեր այն հարուածը, զոր կը ստանայինք կարգ մը մարզիկներու անբարեխիղճ կեցուածքին եւ վարքին պատճառով։

Առանց խորանալու եղելութեանց ծալքերուն մէջ, չափազանց վիրաւորական էր, վարկաբեկիչ պայմաններու տակ մտնել «Ինթերնեթ»ի ցանցին մէջ, կամ արժանանալ միջազգային լրատու գործակալութիւններու, հեռատեսիլի կայաններու եւ մամուլի նուաստացուցիչ արտայայտութիւններուն։ Այդ հայ մարզիկները կը ներկայացնէին մեր երկիրը եւ առաջին հերթին պարտաւոր էին այդ երկրին պատիւն ու արժանապատուութիւնը բարձր պահել։ Երբ կ՚ըսենք մեր երկիրը, մենք կը հասկնանք նաեւ աշխարհատարած այն յաւելումը՝ զոր կը կոչենք Սփիւռք, նախկին խորհրդային սահմաններէն մինչեւ հեռաւոր ափերը Աւստրալիոյ։ Բոլորի՛ս պատիւն էր խընդրոյ առարկայ։

Մինչեւ այսօր հարցին բոլոր մանրամասնութիւններուն մասին տեղեկութիւններ չեն տրուիր։ Եթէ սխա՛լ էր լրատուութիւնը, արժանի էր հերքումի եւ բացատրութեան։ Եթէ ճիշդ էր, ապա այդ մարզիկները արժանի են հասարակութեան անարգանքին եւ պատիժին, որովհետեւ արատաւորած էին ոչ թէ իրենց սեփական անձը, այլ ամբողջ երկրի մը պատիւը։

Ձենք գիտեր, թէ Հայաստանի մէջ ինչպիսի զոհողութիւններ կը կատարուին հայ մարզիկները միջազգային թատերաբեմ հանելու համար։ Գիտենք միայն, որ Հայաստանէն բազմաթիւ անձեր արտասահման, կուգան հովանաւորութեան եւ կամ ֆինանսական օգնութեան խընդրանքով։ Իր հնարաւորութիւններուն չափով Սփիւռքը ընդառաջած է, ինչպէս որ ընդառաջեց Աթլանթայի Ողիմպիական խաղերուն հայ մարզիկներուն ներկայութիւնը ապահովելու համար։ Սակայն, ընդունելի չէ, որ կարգ մը մարզիկներ չարաշահեն Հայաստանի եւ Սփիւռքի հայութեան վստահութիւնը, բարոյական իրենց վարքով ծանր հարուած մը հասցնելով մեր ազնիւ անունին եւ հեղինակութեան։ Ընդունելի չէ ասիկա եւ ընդունելի պիտի չըլլայ մեղմացուցիչ որեւէ բացատրութիւն։

Հայաստանի Ողիմպիականի պատասխանատուները բացատրութիւն մը պէտք է տան կատարուածին մասին, փոխանակ լռութիւն պահպանելու։ Շատեր նոյնիսկ կ՚ուզեն լուռ անցնիլ, երբ, ազգային պատուի նախանձախնդրութեամբ։ Ընդհակառակն ազգային պատուի նախանձախնդրութեամբ միանգամընդմիշտ պէտք է բացայայտուի եղելութիւնը, որպէսզի բացառուի ուրիշներու կողմէ նման դէպքերու կրկնութիւնը։ Հայրենասիրութիւնը կը պահանջէ, որ պախարակենք մեր թերութիւնները՝ փոխանակ ծածկելու։

Աթլանթան մեզի պարգեւեց 1 ոսկի եւ 1 արծաթ մետալ։ Այդ մետալներուն փայլքը պէտք չէ աղօտէր մեր կարգ մը մարզիկներու խուլիգանական արարքներով։ Ազգային մեր արժանապատուութիւնը եթէ կը պարտաւորեցնէ մեզի մեր սրտերուն մէջ տեղ տրամադրել Արմէն Նազարեանին եւ Արմէն Մկրտչեանին, ապա կը պարտաւորեցնէ նաեւ անարգանքի սիւնին գամել այդ արժանապատուութիւնը արատաւորողները...։

ՅԱԿՈԲ ՊՕՂՈՍԵԱՆ

«Նոր Օր», (Գալիֆորնիա)
Օգոստոս 7

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ՀԱՅԿ. ԿԵԱՆՔԸ ԳԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՄԷՋ

Հ. ԱՃԱՌԵԱՆԻ
ԾՆՆԴԵԱՆ 120-ԱՄԵԱԿԸ

Հոլիվուտի «Կարապետեան» սրահին մէջ, Յուլիս 25-ին, տեղի ունեցած է երեկոյթ մը, նուիրուած Հրաչեայ Աճառեանի ծննդեան 120-ամեակին, կազմակերպութեամբ Համազգայինի Լոս - Անճըլըսի «Յովհաննէս Շիրազ» գրական խմբակին: Բացումը կատարած է Մանուկ Քրղըլեան: Բանախօսած է տոքթեր Սամուէլ Անթոսեան, անդրադառնալով մեծ հայագէտ - գիտնականի կեանքին ու վաստակին եւ ծանրանալով անոր «Լիակատար քերականութիւն Հայոց լեզուի, համեմատութեամբ 562 լեզուներու» բազմահատոր աշխատութեան վրայ: Գործադրուած է գեղարուեստական յայտագիր մը: Փակման խօսքը արտասանած է Յակոբ Օվայեան:

***

«ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԾՐԱԳԻՐ»Ի
ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

«Ցեղասպանութեան մասին ծրագիր»ը, որուն հիմնադիրներն են Արա Օշական եւ ...րքէն Եղըայրեան, ներկայիս կը նկարահանէ ու հարցազրոյցներ կ՚ունենայ վերապրողներու հետ, վաւերագրելու եւ ժապաւէն մը հրատարակելու համար անոնց ...անաւոր պատմութիւնը: «Ծրագիր»ը ...կազմակերպութիւն մըն է, որուն շուրջ համախմբուած են 20 հոգի: Նպատակադրուած է մինչեւ այս տարուան վերջաւորութիւնը նկարել 100 վերապրողներ եւ հարցազրոյց ունենալ իւրաքանչիւրին հետ:

***

ԼԻԶԱՊՈՆԻ ՀԻՆԳԻՆ
ՅԻՇԱՏԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Օրէնճ Քաունթիի «Ղուկասեան» սրահին մէջ, Օգոստոս 4-ին, տեղի ունեցած է Լիզպոնի հինգին նուիրուած յիշատակի երեկոյթ մը, կազմակերպութեամբ Հ. Յ. Դ. «Աշոտ Երկաթ» Ուխտին: Ցուցադրուած են հայ հինգ նահատակներու նկարներով պատրաստուած տեսերիզ մը, Լիզպոնի մէջ անոնց արարքին եւ Թաղման արարողութենէն պատկերներով: Բանախօսած է Հ. Յ. Դ. Կեդր. Կոմիտէի անդամ Յովիկ Սալիպա: Գործադրուած է գեղարուեստական յայտագիր մը:

***

«ԼԱՐՔ» ԵՐԱԺՇՏԱԿԱՆ
ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ԼՍԱՐԱՆՆԵՐԸ

«Լարք» երաժշտական ընկերակցութիւնը կազմակերպած է գրական - երաժշտական ամառնային լսարաններ, որոնցմէ առաջինը տեղի ունեցած է Յուլիս 18-ին: Փրոֆեսօր Արուսեակ Սահակեան ներկայացուցած է «Բանահիւսութիւնը որպէս մտածողական առանձին համակարգ» նիւթը, շեշտելով խօսքի, լեզուի, մտածելու անզուգական համադրումը, ժողովուրդին կենցաղը արտայայտելով: Փրոֆեսօր Ալինա Փահլեւանեան ներկայացուցած է «Ժողովրդական երգարուեստի սեռերը» նիւթը, իւրաքանչիւր սեռի մասին բացատրութիւններու առընթեր նաեւ մեկնաբանելով նմոյշներ:

Լսարաններէն մէկուն նիւթը եղած է «Բալուն եւ իր հարսանեկան երգերը», զոր ներկայացուցած է Պետրոս Ալահայտոյեան:

***

«ՆՈՐ ՕՐ» ԹԵՐԹԻ ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ
Ի ՆՊԱՍՏ ԵՐԵԿՈՅԹ

Յուլիս 20-ին, Ռ.Ա.Կ.-ի Արեւմտեան Ամերիկայի պաշտօնաթերթ «Նոր Օր»ի ի նպաստ երեկոյթ մը տեղի ունեցած է Կարօ Այալթունի բնակարանին մէջ: Ընթրիքէն ետք խօսք առնելով Ռ.Ա.Կ.-ի Շրջանային Վարչութեան անունով Կարօ Այալթուն, կոչ ըրած է նիւթապէս զօրավիգ ըլլալ 74-ամեայ թերթին: «Նոր Օր»ի մամլոյ դիւանի ատենապետ Փանոս Թիթիզեան շեշտած է ընդհանրապէս հայ մամուլին եւ մասնաւորաբար «Նոր Օր»ի առաքելութիւնը: Լոս - Անճըլըսի Հայ Գրողներու Միութեան ատենապետ Թորգոմ Փոստաճեան դրուատած է թերթին մակարդակը եւ խմբագիր Յակոբ Պօղոսեանի տարած բծախնդիր աշխատանքը: Երեկոյթի ընթացքին ի նպաստ թերթին եղած նուէրներէն գոյացած է 22.500 տոլար:

***

Հ.Մ.Մ.-Ի 75-ԱՄԵԱԿԸ

Փասատինայի «Կարօ Սողանալեան» սրահին մէջ, Յուլիս 25-ին, տօնուած է Հ.Մ.Մ.-ի 75-ամեակը: Բացումը կատարած է Նուպար Գրլնաչըրեան: Ողջոյնի խօսք արտասանած է Շրջանային Վարչութեան ատենապետ Պօղոս Մարգարեան: Կեդրոնական Վարչութեան խօսքը փոխանցած է Տիգրան Սարաֆեան, անդրադառնալով Միութեան կազմութեան, տարիներու ընթացքին անոր ծաւալումին եւ արձանագրած նուաճումներուն: Գործադրուած է գեղարուեստական յայտագիր մը եւ եղած են նուէրներ ի նպաստ Հ.Մ.Մ.-ի բարգաւաճումին:

ԼՐԱՏՈՒ

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ

ՎԱՐԴԻՆ ԲՈՒԺԻՉ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Կը պատմուի, որ ծաղիկներու Թագուհին՝ վարդը Աստղիկէն կաթիլ մը արեան հետ ստացաւ իր կարմիր գոյնը, իսկ սիրոյ աստուածը՝ Կուպիտոն քնքոյշ համբոյրով մը անոր փոխանցեց սքանչելի բոյրը:

Մարդիկ շուտով վարդին մէջ գտան իրենց սիրտերը բուժող յատկութիւններ եւ զայն մտցուցին իրենց դեղագործական շատ մը պատրաստութեանց մէջ:

Ամէնէն առաջ Անակրէոն՝ յոյն քնարերգակ բանաստեղծը (560 - 478 Ք. Ա.) գովերգեց անոր համը եւ բարերար յատկութիւնները հետեւեալ տողերուն մէջ.

«Վարդը կը բուժէ ախտեր զանազան,
Կը տեւէ տարիներ, կը զմռսէ
մեռելներ,
Չի ծերանար երբեք, թէրթն իսկ
դեղնած
Իր ամրան մէջ կը պահէ բոյրն
իր գարնան»:

Հոմերոս իր «Ոդիսական»ի մէջ կը պատմէ, որ Ոդիսեւսի նաւազները, Հռոդոս կղզիին բացերէն անցած ատեն կը շնչէին կղզիին բազմաթիւ վարդերուն բարերար եւ անուշահոտ բոյրը, եւ այդ պատճառով կղզին կոչեցին Ռոտ, այսինքն՝ վարդ:

Ուրեմն վարդը երգուեցաւ յոյն եւ լատին բանաստեղծներու կողմէ ու շատ մը առասպելներու ու դիցաբանական պատմուածքներու մէջ կարեւոր տեղ գրաւեց:

Բանաստեղծներէն ետք՝ հնադարեան բժիշկները սկսան օգտուիլ անոր բժշկական յատկութիւններէն:

Դիոսքորիս կը թուէ կարմիր վարդին զօրացուցիչ եւ սեղմիչ (աստրինժան) յատկութիւնները, իսկ Պլինիոս կը գովէ ոսկոյն վարդին փափկացնող եւ լուծիչ առաւելութիւնները:

Միջին դարուն Շարլըմանը կայսրը իր կալուածներուն մէջ մշակել կուտայ հասարակ վարդը՝ բժշկական նպատակներու համար:

Վերածնունդին Ֆրանսա կը ներածուի ոսկոյն վարդը, որ ժամանակի բժիշկները կ՚օգտագործէին գլխու, ականջի եւ աչքի ցաւերուն համար:

Արաբ բժիշկները, իրենց կարգին, լայն տեղ տուին վարդին եւ զայն մտցուցին իբրեւ հիմ իրենց բարդ պատրաստութեանց մէջ: Նշանաւոր է անոնց վարդի դեղահիւսը, որ կը կոչուէր «սուքքար էլ ուարտ»:

Իպն Սինա մեծապէս կը յանձնարարէր այս պատրաստութիւնը՝ թոքախտաւորներուն համար, իբրեւ լաւագոյն դարման հազի եւ արիւնաթքութեան (էմոփթիզի) դէմ:

Ջաքուեթիւս Լուչիթանուս կը վկայէ, որ՝ «Փորթուկալի փոխարքային կինը, 7 ամիս վարդի դեղախիւս գործածելով կատարելապէս բուժուեցաւ թոքային կեղէ մը»: Այնուհետեւ 17-րդ եւ 18-րդ դարու հիւծախտաբանները լայնօրէն օգտագործեցին այս պատրաստութիւնը, իսկ պաշտօնական բժշկութիւնը զայն ընդունեցաւ դեղամատեանի մէջ, որ տեւեց մինչեւ 1884 թուականը:

Դեղամատեանը զայն կը յիշատակէր «Քոնսերվա ռիւպառոզա» անունով, որուն տարազն ալ հետեւեալն էր.

- Փշրւած կարմիր վարդ 10 կրամ
- Վարդի ջուր 20 կրամ
- Փոշի շաքար 65 կրամ
- Կլիսերին 6 կրամ

Այս դեղահիւսը անշուշտ չէր կրնար յաղթահարել իրենց անծանօթ Քոխի մանրէն, բայց կ՚երեւի՝ վարդին մէջ գտնուած զանազան տարրերը գոնէ մասամբ կը հանդարտեցնէին եւ կը զօրացնէին հիւանդները:

Արաբները վարդը թորելու միջոցները գիտէին: Խաչակիրներն ալ անոնցմէ սորվելով՝ Եւրոպա մտցուցին վարդին հիւթը, որ համբաւաւոր դարձաւ կիներու առօրեայ արդուզարդին համար:

Գեղագիտական յատկութիւններէն ետք, վարդը մտաւ նաեւ խոհանոց եւ գրաւեց կարեւոր տեղ մը՝ դառնալով սքանչելի համեմ մը. վարդի ջուրով կը հոտաւէտէին խմորեղէնները եւ զանազան անուշեղէնները:

Նախանձելի՞ չէ, որ բնութեան այս գլուխ - գործոցը օժտուած ըլլայ այսքան անհամար բարիքներով:

ՉՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ՁԵՌԱԳԻՐՆԵՐԸ
ՉԵՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՒԻՐ

ԿՂԶԻՆ ԵՒ ՄԻ ՄԱՐԴ

—վիպակ—

ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ

Եկեղեցու հաւատացեալները, բնականաբար, բռնել են իրենց քահանայի կողմը եւ, եթէ ծեր մարդիկ չմիջամտէին, ո՞վ է իմանում, ի՞նչպիսի արիւնալի դէպքեր կարող էին տեղի ունենալ:

Կեցցէ՛ նուագախումբը, կեցցէ՛ նուագախումբը:

Նուագախումբը՝ փայլփլուն կայծեր արձակող պորոզաները եւ շեփորները կարկառած, զարդարուած հսկայական թմբուկ ործացնելով՝ առաջանում է գլխաւոր փողոցներով, մի րոպէ կանգառնում կենտրոնական հրապարակում, ձայների հեղեղ դուրս թափում, ապա, զինուորական քայլով, գնում միանում սրբերի թափօրներին, որոնց հետ այցելում է բոլոր եկեղեցիները:

Նուագը այլեւս հնչում է մեղմ, հանդիսաւոր, աղօթագին:

Քլարինեթը կլկլում է: Թմբուկը հառաչում:

Դանդաղ քայլերով առաջանում են վանականների շարքերը: Թուխսի թեւերը բացուած գլխարկներով եւ սպրդնած երեսներով մայրապետներ: Արարողական զգեստների տակ կորած քահանաներ: Հաստ այտերով, մեծ քթերով, կորած ծնօտներով: Մէջտեղը՝ տղամարդկանց ուսերի վրայ բարձր թառած սրբերը: Տօնական փարթամ զգեստներ հագած, թանկարժէք քարեղէններով զարդարուած, ոսկիներով եւ դահլիճներով պըսակուած, նրանց փայտէ կամ մետաղէ մարմինները աջ ու ձախ են երերում, կարծես հարբած լինեն: Նայում են ներկուած, պարապ աչքերով:

Նրանց ետեւից, մի մի մոմ բռնած, սեւ շալերով ծածկուած, գալիս են կանայք: Ապա, իրենց ծանր քայլերը գետինը քսելով, պեխաւոր, լաւ չածիլուած, քառակուսի գիւղացիներ:

Արհեստական կամարների վրայից, չնայած որ ցերեկ է, ելեկտրական լոյսերը կայծկլտում են, բոցավառւում: Երգի ձայները, լոյսերը, մետաղների փայլփլոցը խառնւում են, պայթում, հնչում ադմըկում:

Բոլոր եկեղեցիների զանգակները ղօղանջում են:

Մայր Եկեղեցին, ուր սրբերը հրաւիրուած են գիշերելու, ամբողջովին լոյս է եւ կրակ: Մոմերի անտառներ են բոցկլտում: Կանգնելու տեղ չկայ:

Երբ լսում են մօտեցող նուագի ձայները եւ յայտնի է դառնում, որ թափօրը հասնում է դրան, անասելի մի դղրդոց է բարձրանում: Ամէն կողմից պայթուցիկներ են պայթում: Զանգակները մոլեգնաբար խենթանում են, եւ նուագախումբը, ինքը եւս յանկարծակի անհանդըստացած, ձայների որոտ է բարձրացնում ու ծնծղաները կատաղօրէն փըշրում:

Ամէն ինչ խառնւում է, դղրդում, ադմըկում, երգում:

Ներսում լարային նուագախումբը եւ երգիչները սկսում են արարողութիւնը: Փալեսթինայի հառաչները խառնւում են քառաձայն շարականներին:

Հիւրընկալող սրբի արծաթէ արձանը դուրս է գալիս, մուտքի առջեւ կանգնում եւ հիւրերին բարի գալուստ մաղթում: Երգեցիկ խմբերը, քահանաները եւ ժողովուրդը միանում են նրան:

Սրբերին տեղաւորում են իրենց համար նշանակուած անկիւններում: Նրանք շարունակում են իրենց պուպրիկի նայուածքները յառել միշտ նոյն կէտի վրայ:

Խունկի հոտը խառնւում է քրտինքի հոտերին:

Տաք է, անշնչելի:

Երեկոյեան ժամը ինն եւ կէսին, Հրապարակի վրայ շինուած ամպիոնի վրայ, քաղաք ժամանած փանֆարը տալիս է իր առաջին համերգը:

Նուագում են պորոզանների ձայները մաշող, անվերջանալի սիմֆոնիաներ: Ղեկավարի թեւերի շարժման մէջ են դընում բոլոր ձայները: Կլոր մարդը ուռչում է, գալարւում, ամպերը իրեն հրաւիրում, աստղերը երկու ձեռքերով քերում ցատքում, նսեմանում, թռչում:

Ժողովուրդը ոգեւորուած ծափահարում է:

Իսկ երկնքի նայեն՝ աստղերը հեռու են: Մեր Կաթինի վրայով առագաստանաւեր են անցնում: Ոսկէ: Սրբերի աչքերը ներկայ են. Նրանք զարմանքով նայում են երկրի այս սին աղմկին եւ արհեստական լոյսերին:

Նուագը տեւում է մինչեւ կէս գիշեր:

Մի ոմն ոլորում է իր չրթունքները, ուռեցնում այտերը, փչում: Բոլոր լոյսերը մարւում են: Մայր Եկեղեցում հիւրընկալուած սրբերը միշտ շարունակում են մի կէտի վրայ նայել:

Միւս առաւօտ լոյսը բացւում է որոտալով: Պայթուցիկները գործի վրայ են: Գետինը ցնցւում է, տները երեւում են: Կղզու բոլոր զանգակները հնչում են: Օդը գրնգում է ապակու նման:

Մինչ լոյսը հորիզոնի վրայից քաշում է իր թեթեւ քօղերը, երկիրը շարունակում է դղրդալ: Առաւօտեան աստղը կորչում է մուխի եւ ծուխի մէջ: Աքլորները վախում են կանչել: Կովերի կաթը կտրուել է:

Մայր Եկեղեցու ներսը նորից ժամերգութիւն է: Ինքը, քաղաքի պաշտպան սուրբը, օրուան հերոսը, հռոմէական լեգէոնի զգեստներով, արծաթից ձուլուած մարմինը վեր ցցած, երիտասարդ, փայլուն, գեղեցիկ, կանգնել է մայր սեղանի կենտրոնում շինուած շքեղ շրջանակի մէջ: Հանդիսաւոր, իշխանական աչքերով նա նայում է եկուոր սրբերին:

(Շար. 48)

(Շար. Ա. էջէն)

երեւոյթը կը բացատրուի սպառման նըւազումով, ինչ որ դրական չէ եւ կը պարզէ դնման կարողութեան տկարացումը ընտանիքներու մօտ :

ԻԼ - ՏԸ - ՖՐԱՆՍԻ Նիսի օդակայանի անձնակազմը գործադուլ սարքեց Օգոստոս 12-ի բանակցութիւններէն եւ շատ հաւանական էր որ թռիչքները վերսկսէին իրենց սովորական ընթացքը Օգոստոս 13-էն իսկ : Պաշտօնեաները պիտի ստանան որոշ յաւելում մը (1000 ֆրանք) :

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ հարաւը ռմբահարձ մը գործուած է ճեպընթացի մը մէջ որ Աստրախան - Վոլգոգրադ գիծը կ'ապահովէր : Ռումբ մը պայթած է կառախումբի մը մէջ, մէկ մեռեալ կայ եւ ութ վիրաւոր : Երրորդ ռմբահարձն է որ նոյն թիրախն ունի : Կասկածներ կային Չէչէններու շուրջ, բայց անձնական վրէժ մըն ալ չի բացառուիր :

ՄԻԱՑԵԱԼ -- ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ Հանրապետական կուսակցութեան համագումարը տեղի ունեցաւ Սան - Տիէկօ Օգոստոս 12-ին եւ պաշտօնականացաւ վերջնապէս Պոպ Տոլի թեկնածութիւնը : Տոլ եւ իր կուսակցութեան ծրագիրը միշտ համաձայն չեն, բայց, Տոլ կը խոստովանի (Սան - Տիէկօ Թրիպիւն, Օգոստոս 11). - «Հաւանաբար համաձայն ըլլամ գրուածին հետ, բայց, չեմ կարդացած...» : Տարակարծութեան բաւական նիւթեր կան ինչպէս վիժումի արգիլումը (ինք որոշ հանդուրժողութեան մը կողմնակից էր), բանակին մէջ ծառայելու արգիլումը միասեռականներուն, ամերիկեան հպատակութեան տիրանալու սեղմումներ եւայլն, եւայլն : Ամէն պարագայի մէջ, Գլինթընի հետ 20 կէտերու տարբերութիւնը 9-ի իջած է, այն պահէն երբ նախկին Փութպոլիստ՝ Քէմփը նշանակած է որպէս ցանկակից : Չի բաւեր սակայն, քանի չորս տարուան իր իշխանութեան շրջանին, Գլինթըն կարեւոր կէտեր նշանակած է, ինչպէս՝ գործազրկութեան զգալի նուազումը, դրամահոսքի ալ նուազումը եւայլն, եւայլն : Հանրապետականներու ծայրայեղները դէմ են նաեւ ամուսնալուծման (թէեւ Ռեկըն, ամուսնալուծուած, 1969-ին անպատիժ դարձուցած էր զայն) եւ Տոլ ալ ամուսնալուծուած է, ամէնօրեայ աղօթք ալ կ'ուզեն դպրոցներու մէջ եւ նման բաներ :

UGAB . . . UGAB . . . UGAB . . . UGAB

«UGAB - 90»

A l'occasion de la célébration
de son 90ème anniversaire.
l'UGAB organise un grand

Gala de Bienfaisance

au profit des *TABLES DE L'UGAB*,
en Arménie

le Vendredi 18 Octobre à 20 heures

au Pavillon Dauphine _ 75016 Paris

P.A.F. : 750 Frs

Rens. : 45 20 03 18 / 42 27 12 26.

UGAB . . . UGAB . . . UGAB . . . UGAB
DATE A RETENIR

-ՎԵՐԱՄՈՒՏ-

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՄԻՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

Լիոնի Հայկազեան Միօրեայ Վարժարանի վերամուտն է Չորեքշաբթի, Հոկտեմբեր 2-ին, Առաւօտեան ժամը 9-ին :

Դասաւանդութիւնները տեղի կ'ունենան Չորեքշաբթի, առաւօտեան ժամը 9-էն 12, կէսօրէ վերջ ժամը 14-էն 16 :

Աշակերտները կրնան օգտուիլ կէսօրուան ճաշէն. իսկ երթեւեկի սպասարկութիւն մը կարելի է նախատեսել ծնողքներու հետ համաձայնելով :

Յաւելեալ տեղեկութեան եւ արձանագրութեան համար դիմել Եկեղեցւոյ Դիւանատունը :

**Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 Paris
Siret: 51027317 A R. C. Paris
Commission paritaire: N° 55935**

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ Ս. ԽԱՉ ԱԹՈՌԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑԻ

13, rue du Perche — 75003 Paris

Կիրակի, Օգոստոս 18

Առաւօտեան ժամը 11-ին, Աստուածածնայ Վերափոխման տօնին առթիւ պատարագ կը մատուցանէ եւ կը քարոզէ՝

ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿ. ԿԱՊՐՈՅԵԱՆ
Առաջնորդ Ֆրանսայի
Կաթողիկէ Հայոց

Յաւարտ պատարագին տեղի կ'ունենայ խաղողօրհնէքի արարողութիւն :

ՀԵՌԱՏԵՍԻԼ

FRANCE 2

Հինգշաբթի, Օգոստոս 15, ժամը 10-ին
ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ ՏՕՆԸ
ՀԱՅԵՐՈՒ ՄՕՏ

**CROIX BLEUE
DES ARMENIENS
DE FRANCE**

CBAF - Section St Jérôme / Djavo Chant

Sortie
MUSEE DOBREE / NANTES
Exposition

Arménie

Les Trésors du patrimoine archéologique arménien des origines au IV siècle

**Vendredi 6 Septembre à 22 h
place de la Rotonde Dikran Tekeian
Saint Jérôme**
Départ de Nantes le Samedi soir

PAF de transport et visite musée
350 F environ
pour tous renseignements
et réservations :
tél.: 91 70 00 32 et 91 61 10 82

8 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1996

ՄԻՒՌՈՆՕՐՀՆԷՔ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԷՋ

Յայտնի է մեր ժողովուրդին, թէ յառաջիկայ 8 Սեպտեմբերին (1996) Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ՝ Նորին Սուրբ Օծութիւն ՏԷՐ ՏԷՐ ԳԱՐԵԳԻՆ Ա. Ծայրագոյն Պատրիարք -- Կաթողիկոս Ամենայն Հայոց իր անդրանիկ Միւռոնօրհնութիւնը պիտի կատարէ :

«Միւռոնի Օրհնութիւնը ողջ Հայ Ժողովուրդին համար հոգեկից առիթ է եւ միջոց, մեր ժողովուրդի Քրիստոնէական և Ազգային կեանքի վերանորոգութեան եւ զարգացման համար» :

Առ այդ, սրտագին կոչ կ'ընենք Ֆրանսայի եւ ամբողջ Արեւմտեան Եւրոպայի հոգեւոր մեր զաւակներուն, խուռներամ բազմութեամբ Ուխտի երթալ Սուրբ Էջմիածին ու Շնորհօք վերազարդարուիլ՝ Սուրբ Միւռոնի բացառիկ այս Օրհնութեան ներկայ գտնուելով :

Այս նպատակաւ, Սեպտեմբեր 3-էն 12-ին՝ մէկ շաբաթուան՝ դէպի Հայաստան Ուխտագնացութիւն կազմակերպուած է :

SABERATOURS-ը մեր կողմէ լիազօրուած է ապահովել ճամբորդական բոլոր գործառնութիւններն -- վիզա, օդանաւ, պանդոկ, պտոյտներ, ապահովագրութիւն եւ սնունդ :

Անհրաժեշտ է անյապաղ փութով, մինչեւ 31 Յուլիս ներառեալ, արձանագրուիլ յիշեալ Ուխտագնացութեան, կանխելու համար տեղ ապահովելու յետագայի խճողումը :

ԴԻՒԱՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ
ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ

Արձանագրուելու համար դիմել . --
**SABERATOURS
19, rue St-Roch, 75001 PARIS
Tél. : 42. 96. 10. 10 — Fax : 42. 96. 18. 77.**

- ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ -

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

Կիրակի, Օգոստոս 18

Տօն է Վերափոխման Ս. Աստուածածնի :
Սկիզբ ժամերգութեանց՝ ժամը 8.45-ին :
Պատարագ ժամը 10.30-ին :

Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ԳԻՒՏ ԱՐՔ. ՆԱԳԳԱՇԵԱՆ
Կաթ. Պատուիրակ եւ Առաջնորդ
Փարիզի Հայոց

Պատարագի աւարտին խաղող կ'օրհնուի :
Ծանօթ. - Այսօր հոգեհանգիստ չի կատարուիր :

Երկուշաբթի, Օգոստոս 19
Բ. օր վերափոխման Ս. Աստուածածնի :
Յիշատակ Մեռելոց :
Այս առիթով ժամը 10-ին պատարագ կը մատուցուի :
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ԱԻԵՏԻՍ ՔԱՀԱՆԱՅ ՊԱԼԸԳԵԱՆ
Պատարագի աւարտին հոգեհանգիստ կը կատարուի «Վասն համօրէն ննջեցելոց» :

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՇԱՒԻԼ

Պատարագ, Կիրակի Օգոստոս 18, առաւօտեան ժամը 10-ին :
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔՀՆՅ. ԹԱՇՃԵԱՆ
Պատարագի ընթացքին կը կատարուի խաղողօրհնէքի աւանդական արարողութիւնը :

ՎԱՐԱԳԱՅ Ս. ԽԱՉ ԱՐՆՈՒՎԻԼ

Կիրակի, Օգոստոս 18

Առնուվիի Վարագայ Ս. Խաչ Եկեղեցւոյ մէջ հանդիսաւոր պատարագ :
Կը պատարագէ եւ կը քարոզէ հոգեւոր հովիւ՝
ՄԵՍՐՈՊ Ա. ՔՀՆՅ. ԺԱՄԿՈՉԵԱՆ
Սկիզբ ժամերգութեան եւ պատարագ՝ ժամը 10.30-ին :
Խաղողի օրհնութիւն՝ ժամը 12.15-ին :

Ս. ՅԱԿՈԲ — ԼԻՈՆ

Կիրակի, Օգոստոս 18, տօն է վերափոխման Սուրբ Աստուածածնի :
Այս առթիւ Լիոնի Ս. Յակոբ Մայր Եկեղեցւոյ մէջ տեղի պիտի ունենայ պատարագ :
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ՆՈՐՎԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԶԱՔԱՐԵԱՆ
Հայր. Պատուիրակի փոխանորդ
ԼԻՈՆԻ ԵՒ ՌՈՆ - ԱԼՓԻ ՀԱՅՈՑ
Յաւարտ պատարագի կը կատարուի խաղողօրհնէքի աւանդական արարողութիւնը :
Հաւատացեալներ որոնք Օրհնութեան համար ուխտած են խաղող նուիրել կրնան ուղարկել Եկեղեցւոյս Դիւանատունը :
Սիրով կը հրաւիրուի Լիոնի եւ Շրջանի ուխտաւոր ժողովուրդը սոյն Տաղաւարի Հանդիսութեանց :
Սկիզբ ժամերգութեանց ժամը 8.45-ին :
Պատարագ ժամը 10-ին :
Քարոզ ժամը 11.15-ին :
Խաղողօրհնէք ժամը 12-ին :

ՎԱԼԱՆՍ - Ս. ՍԱՀԱԿ

Կիրակի, Օգոստոս 18
Ս. Սահակ Եկեղեցւոյ մէջ
Ռիւ տը լա Սեսիլ
Վերափոխում Աստուածածնի
Հանդիսաւոր պատարագ կը մատուցուի ժամը 10-ին : Յաւարտ պատարագի, կը կատարուի խաղողի օրհնութիւնը :
Այդ օրը հոգեհանգստեան պաշտօն չի կատարուիր :

ՄԱՐՍԷՅԼԻ ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Տօն վերափոխումն Ս. Աստուածածնի
ԽԱՂՈՂՕՐՀՆՈՒԹԻՒՆ
Կիրակի, Օգոստոս 18
Մարսէյլի
Սրբոց Թարգմանչաց Մայր Եկեղեցւոյ մէջ
Սկիզբ ժամերգութեանց ժամը 8.30-ին :
Առաւօտեան ժամը 10-ին կը մատուցուի հանդիսաւոր պատարագ :
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ՏԱՐՕՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՃԷՐԷՃԵԱՆ
Առանորդական Տեղապահ
Հարաւային Ֆրանսայի Հայոց Թեմի
Պատարագի ընթացքին կը կատարուի «Օրհնութիւն խաղողոյ» աւանդական արարողութիւնը :

Ս. ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ ՍԷՆ-ԺԵՐՈՄ

Կիրակի, Օգոստոս 18
Սկիզբ ժամերգութեան՝ ժամը 9-ին :
Պատարագ՝ ժամը 10.15-ին :
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ՎԱՉԷ Ծ. ՎՐԴ. ԻԳՆԱՏԻՈՍԵԱՆ
Յաւարտ պատարագի կը կատարուի խաղողօրհնէքի աւանդական արարողութիւնը :

ՍԷՆ ԼՈՒ - Ս. ԳԷՈՐԳ

Կիրակի, Օգոստոս 18
Հանդիսաւոր պատարագ ձեռամբ հոգեւոր հովիւ՝
ՇԱՀԱՆ Ա. ՔՀՆՅ. ՏԷՏԷԵԱՆԻ
Սկիզբ պատարագի՝ ժամը 10-ին :
Պատարագի աւարտին կը կատարուի խաղողօրհնութիւն :

ՊՕՄՈՆ Ս. ԳՐ. ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

Կիրակի, Օգոստոս 18
Տօն է Ս. Աստուածածնի Վերափոխման :
Այս առթիւ Թաղիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ պատարագ կը մատուցուի եւ խաղողօրհնէք կը կատարուի ձեռամբ՝
ՄՈՎՍԷՍ Ա. ՔՀՆՅ. ԳԱԼԷՆՏԷՐԵԱՆ-ի :
Ժամը 10-ին պատարագը կ'երգուի Թաղիս Լուսաւորիչ Դպրաց Դաս երգչախումբին կողմէ, ղեկավարութեամբ եւ երգեհոնահարութեամբ՝ Տէր եւ Տիկին Ռոպէր - Սիւզան Արթինեանի :

ՀԻՆԳՇԱԲԹԻ-ՇԱԲԱԹ
ՕԳՈՍՏՈՍ 15-17
JEUDI - SAMEDI
15-17 AOUT
1996

LE NUMERO : 5,00 F.

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1925-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE-FONDE EN 1925
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 47. 70. 86. 60 — TELEX : HARATCH 280 868 F
— FAX : 48. 00. 06. 70 —
C.C.P. PARIS 15069-82 E

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 1.100 Ֆ. - Վեցամսեայ : 560 Ֆ.
Արտասահման : Տար. 1.400 Ֆ. (ամէնօրեայ առաքում)
1.250 Ֆ. (շաբաթական առաքում) - Հատը : 5,00 Ֆ.

ՀԲԴ ՏԱՐԻ - Թիւ 18.919 — Fondateur SCHAVARCH MISSAKIAN — 72e ANNEE — N° 18.920

ՀԱՅԱՍՏԱՆ - ԹՈՒՐՔԻԱ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԳՐԱՒԱՐԿԸ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

Հայաստան -- Թուրքիա յարաբերութիւններու բնագաւառը որ Երեւանի արտաքին քաղաքականութեան մէջ կարեւոր գործօն մըն է ու Սփիւռքի հետ տարակարծութեան գլխաւոր դաշտը, ակներեւ աշխուժացում մը կ'ապրի վերջերս: Այցելութիւններ, փոխադարձ այցելութիւններ կը կատարուին, առիթ տալով համագործակցութեան, բարգաւաճ յարաբերութիւններու ձգտող երկկողմանի յայտարարութիւններու: Ու բոլորն ալ կը ...ին անպայման նոյն թիրախին, որ երկու երկիրներու միջեւ սահմանային անցքի բացումն է բնական արդիւնքը քաղաքական յարաբերութիւններու հաստատումին:

Հայաստանի կիրարկուած շրջափակումը ...ջնջելու ձեւեր գտնուած ըլլալով հանդերձ, ան ծանր կապանք մըն է երկրին տնտեսութեան վերելքին: Պատճառ է որ ... ոլորտին զարգացումը հետեւի խոտոր ճամբաներու եւ ստեղծուի միջնորդներու աւելորդ խաւ մը որ մեծագոյն չարիքը կ'ըլլայ: Կայ նաեւ արտաքին -- յատկապէս արեւմտեան -- աշխարհին հետ համագործակցութեան արգելքի պարագան, ...:

Այս պատուարը խորտակելու Հայաստանեան ջանքերը որոնք եղան զանազան նախաձեռնութիւններու ճամբով, առաւելաբար քաղաքական շրջանակներու մէջ, անթափանցելի արտաքին խոչընդոտներէ զատ ունեցան ներհայկական տարողութիւն մըն ալ. Ցեղասպանութեան մնացորդացի մը չառաւիղ ու խլուած հայրենիքի մը ժառանգորդ Սփիւռքը իրաւազրկուածի ու անարդուածի հակազդեցութիւն ցոյց տուաւ Թուրքիոյ նկատմամբ Երեւանի վարած քաղաքականութեան հանդէպ, պահանջելով որ գործնապաշտութեան հրամայականին չզոհուի անժամանցելին:

Նոյն զանգուածին հասցէով քաւական ...ակնոտ կեցուածք մը պիտի ըլլար այս հակազդեցութեան ալ դեր մը վերագրել, ...րձեցումի հայաստանեան փորձերուն վերջին շրջանին մէկդի ձգուելուն մէջ: Մանաւանդ որ իշխանութեան ամենաբարձր մակարդակի անուններէն քանիցս ...ուած «տարերկրացի»ի սահմանումը ... յստակ ցուցանիշ է այն մասին թէ ինչ տեղ կամ արժէք կրնան ունենալ հոն Սփիւռքեան հակազդեցութիւններ...:

Այսուհանդերձ, բացայայտ է որ Երեւան քաղաքականէն այլ, աւելի անուղղակի ճամբայ մը կը փորձէ Թուրքիոյ հետ յարաբերութիւններու բնականոնացման ... մէջ. այս անգամ մարզը ձգուած է տնտեսական աշխարհին: Գործի, ...ատուրի, ճարտարարուեստի հրապարակին գլխաւոր անունները լծուած են գործի, յաջողելու համար հոն ուր ձախողեցան քաղաքական նախաձեռնութիւնները: Անոնք համոզում կը յայտնեն որ իրենց նախաքայլերուն հետքերով պիտի քալեն քաղաքական աշխարհին պատասխանատուները:

Այս նոր մարտավարութիւնը գործնական վերածուեցաւ նախ Հայաստանեան պատուիրակութեան մը Յուլիսի վերջին օրերու Թուրքիա այցով. յատուկ ուշադրութիւն գրաւող պարագայ է որ զայն կը գլխաւորէր Թելման Տէր-Պետրոսեան: Ան ճիշդ է որ Հայաստանի ճարտարարուեստի ամէնէն կարեւոր մէկ անունն է՝ «Հրազդանմաշ»ի տնօրէնն է. բայց նաեւ երեսփոխան է ու մեծ եղբայրը Հանրապետութեան նախագահին: Երկու հանգամանք որոնք աւելի ծանր կը կշռեն նման պարագայի մէջ, քան՝ գործի աշխարհին պատկանելիութիւն մը: Եւ Թրքական գործի մարդոց հետ հանդիպումներու քով հայաստանեան պատուիրակութեան օրակարգին վրայ Թ. Թիւրքէշի հետ եւս տեսակցութիւնը համոզիչ բացատրութիւն չունի. կոչուած է նման հաստատումի: Թ. Թիւրքէշ փոխ-նախագահն է Թուրքիոյ ամէնէն այլամերժ կուսակցութեան՝ Ազգ. Շարժումին եւ որդին՝ անոր հիմնադիր Ա. Թիւրքէշի: Այլ խօսքով՝ որքան ալ տնտեսական շրջծիրի մէջ գետեղուած ըլլայ հայկական պատուիրակութեան այցը, նոյն շրջանակին մէջ պարփակուած վերոնշեալ տեսակցութիւնը չի կրնար քաղաքական տարածք մըն ալ չտալ անոր:

Յետոյ, այս գործընթացին մէջ նկատելի է աճապարանքի երեւոյթ մըն ալ. հազիւ հայկական պատուիրակութիւնը տուն վերադարձած, կարսէն թրքական նման խմբակ մը փոխ այցի գնաց Երեւան. արդէն որոշուած է չփումներու յաջորդ հանգրուանն ալ, ամենամօտիկ ապագային: Կը յայտնուի թէ Սեպտեմբերին եւ Հոկտեմբերին նախ Գիւմրիի, ապա Կարսի մէջ երկու երկիրներու գործի մարդիկը առիթ պիտի ունենան ծանօթանալու իրենց դրացիին արտադրութեան: Եւ յատկանշական է որ ամէն անգամուն յատուկ խնամքով տեղ կը տրուի քաղաքական ազդակին. ներկայի փուլին պէտք է հետեւի յարաբերութիւններու ա՛յդ մարզը: Այդպէս են մաղթանքները, ակնկալութիւնները: Ու համագործակցութեան հետ կատարեալ համաձայնութեան մըն ալ պատկերը տալով, կողմերը կը կրկնեն թէ երկու ժողովուրդներուն մօտ եւս նշմարած են սարը կտրելու փափաքը:

Լրատուիչներու հասած չափով խնկ անկել, այլ որոշակի այս աշխուժացումին մէջ ուշագրաւ վերջին կէտ մըն ալ ժամանակի ազդակն է: Իրերայաջորդ այցերը, յայտարարութիւններու, հեռանկարներու ծրագրաւորումը կը զուգադիպին Հայաստանի նախագահական ընտրութեան նախօրեակին: Եւ երբ մարդ կ'անդրադառնայ ցոյց տրուած փութկոտութեան, կը կարդայ երկու կողմին լաւատես, յուսատու արտայայտութիւնները, այն տպաւորութիւնը կ'ունենայ թէ կնճռոտ այդ հարցին կարգաւորումը օրերու, ժամերու հարց է: Միջոց մը որ աւելի կարճ կը թուի, քան՝ Սեպտեմբեր 22-ը:

Այս տուեալներով դժուար չէ մտածել որ նախագահ Լ. Տէր-Պետրոսեան մտադիր է քաղաքական յաջողութեան հզօր փաստով մը փակելու պաշտօնավարութեան առաջին հնգամեակը: Ատիկա լաւագոյն պատասխան մը պիտի ըլլայ իր դիւրին վերընտրութեան դրեթէ ընդհանուր համոզումին. մանաւանդ երբ այդ համոզումը կը հիմնուի ընդդիմութեան ճակատի մը չգոյութեան, կամ անզօրութեան վարկածին վրայ:

Ի վերջոյ, մեծ է տարբերութիւնը «առ ի չգոյէ լաւագոյնին» զեղչելի յաջողութեան մը եւ Թուրքիոյ հետ յարաբերութիւններու բնականոնացումով լայնօրէն վճարուած յաղթանակի մը միջեւ: Նոյնիսկ երբ այդ բնականոնացումը գառն համ մը ունենայ [միլիոններով] Սփիւռք կոչուած «տարերկրացի»ներու բազմութեան համար...:

ԱՐՓԻ ԹՈԹՈՑԵԱՆ

ՄԱՀ ՄԵԾ ԳԻՏՆԱԿԱՆ ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆԻ

Օգոստոս 13-ին, Բիւրականի մէջ իր մահկանացուն կնքած է Հայաստանէն դուրս ալ միջազգային համբաւի տիրացած մեծ գիտնական, աստղագէտ՝ Վիկտոր Համբարձումեան:

Ան ծնած է Թիֆլիս, 1908-ին, 1928-ին աւարտած է Լենինկրադի համալսարանը եւ 1928-1931 ուսանած է Խորհրդային Միութեան գիտութեան ակադեմիայի աստղադիտարանի աշխատանոցը ակադեմիկոս Բելոպոլսկիի ղեկավարութեամբ: 1931-1943 աշխատած է Լենինկրադի համալսարանը (1934-էն՝ փրոֆեսոր է): 1939-ին Խորհրդային Միութեան առաջին աստղաֆիզիկայի վարիչը եղած է, նոյն տարին նաեւ Լենինկրադի համալսարանի աստղադիտարանի տնօրէն: 1943-էն աշխատած է Հայաստան, ուր Գիտութեանց Ակադեմիայի հիմնադիր անդամներէն եղած է եւ առաջին փոխ-նախագահը: Մեծ վաստակ ունի ֆիզիքական, մաթեմաթիկական գիտութիւններու զարգացման, բնական եւ թեքնիք գիտութիւններու բնագաւառի հետազօտութիւններու մակարդակի բարձրացման, ժամանակակից գիտական ուղղութիւններու ստեղծման եւ բարձրորակ քատրերու պատրաստութեան գործին մէջ:

Իր բազմաթիւ աշխատութիւնները կը վերաբերին տեսական աստղաֆիզիկայի, աստղերու եւ միգամածութիւններու ֆիզիկայի, աստղաբաշխութեան, արտակալաքթիք աստղագիտութեան, աստղերու եւ աստղահոյլերու (կալաքսի) հարցերուն: Ստեղծած է կազի միգամածութիւններու յուսարձակման քանակական տեսութիւնը որ իբրեւ հիմք ծառայած է այդ բնագաւառին մէջ կատարուած յետագայ հետազօտութիւններու համար: Մշակած է նոր աստղերէ արտանետուող եւ անկայուն աստղերու մակերեւոյթէն արտահոսող կազի զանգուածներու գնահատման մեթոտը: Դժուար է թուել այն բոլոր գիւտերն ու աշխատանքները զորս կատարած է մեծանուն գիտնականը եւ որոնց շնորհիւ մեծ համբաւի տիրացած է միջազգային դետնի վրայ. նախագահ եղած է աստղագիտական Միջազգային Միութեան եւ տոքթոր Հոնորիս Քաուզա բազմաթիւ համալսարաններու որոնց թիւումը շատ երկար պիտի ըլլար. յիշենք ուրեմն առաւելաբար մեզ հետաքրքրողը՝ Սորպոնը:

1965, Նոյեմբեր 9-ի առաւօտուն էր որ ծայրէ ծայր լեցուն Սորպոնի մեծ ամփիթատրոնին մէջ տեղի կ'ունենար հանդիսաւոր արարողութիւնը: Գիտութեանց Համալսարանի տեսուչ՝ Մարկ Զամանսկին է որ այդ տիտղոսը պիտի շնորհէր Վիկտոր Համբարձումեանի, նախագահ Հայաստանի Գիտութեան Ակադեմիայի, անդամ Խորհրդային Միութեան Գիտութեանց ակադեմիայի եւ նախագահ աստղագիտական Միջազգային Միութեան: Այս առթիւ, «Յառաջ»ի յաջորդող թիւին մէջ ալ Շ. Նարդունի կը ստորագրէր՝ գովասանութիւն Վիկտոր Համբարձումեանի ներբողը: Արժանացած է այլ բազմաթիւ պարգեւներու, տիտղոսներու, պատիւներու: Վերջին տարիներուն Հայաստանի Գիտութեան Ակադեմիայի պատուոյ նախագահ էր: Բիւրականի աստղադիտարանի հիմնադրութենէն (1946) եղած էր անոր տնօրէնը, ապա քաշուած տարիքի բերմամբ:

Վիկտոր Համբարձումեանի յիշատակին յարգանքի հաւաքոյթ մը տեղի կ'ունենար Երեւանի Գիտութեանց Ակադեմիան Զորբեքշաբթի, Օգոստոս 14, ժամը 16.30-էն, ժամը՝ 18-ին հոգեհանգստեան պաշտօն: Յաջորդ օրը, Օգոստոս 15-ին, ժամը 11-ին, արարողութիւն մը տեղի կ'ունենար Բիւրական ուր կարճ ելոյթով մը իր յարգանքը կը մատուցանէր կարգադիր յանձնաժողովի նախագահը՝ Բաբգէն Արարքցեան: Դամբանականներ կ'արտասանէին Գիտութեան Ակադեմիայի նախագահը՝ Ֆադէյ Սարգսեան, Բիւրականի աստղադիտարանի տնօրէնը եւ ուրիշներ:

Ժամը 16.30-ին, կը կատարուէր Վիկտոր Համբարձումեանի թաղումը Բիւրականի գերեզմանատան իր ընտանեկան դամբարանը, ըստ ընտանիքին փափաքին:

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԹՈՒՐՔԻԱ ԿԸ ՄՏԱՀՈԳԷ ԱՐԵՒՄՈՒՏՔԸ

Էրպաքանի Իրան այցելութիւնը եւ ստորագրուած համաձայնագիրը Օգոստոս 14-ին կը շարունակէր մեծ աղմուկ ստեղծել արեւմտեան շրջանակներուն մէջ, նաեւ մամուլին որ լայն տեղ կուտար: Օգոստոս 14-ին, «Ֆիկառօ» առաջին էջի լուրերը կը խորագրէր՝ Թուրքիա կը մտահոգէ արեւմտեանները, ենթախորագիր դնելով՝ Թուրք իսլամիստ նոր վարչապետը՝ Ն. Էրպաքան կը մօտենայ իր երկու խռովարար դրացիներուն (իմա՝ Պարսկաստան եւ Իրաք) եւ խմբագրական մը կը ստորագրէր Փիէր Ռուսլէն, որուն խորագիրն էր՝ «Անգարայի լարախաղացը»: Միացեալ -- Նահանգներու Արտաքին Նախարարութեան բանբերը կ'ըսէ սակայն թէ այդ պայմանագիրը պէտք չէ «մեծ խզում մը ստեղծէ» Անգարայի եւ Ուաշինկթընի միջեւ, թէեւ Քրիսթոֆըր կը յիշեցնէ Ամաթօ օրէնքը: Թուրքիոյ Պետական նախարար՝ Ապտուլլահ Կիւլ յայտարարած է որ Էրպաքան Ուաշինկթընի վիզային պէտք չունի Թեհրան երթալու համար:

Թէ «Ֆիկառօ» իր խմբագրականով եւ թէ «Մոնտ» նաեւ խմբագրականով գիտել կուտան որ Էրպաքան այնքան ալ ազատօրէն չի կրնար շարժիլ, կը մնայ բանակին հսկողութեան տակ: «Մոնտ» անդրադառնալով Էրպաքանի քաղաքականութեան, կը յիշէ թէ ան «կը խաղայ» իր երկրին դառնութեան վրայ ի տես Եւրոպայի մերժումին որ «ընկերութենէ» աւելի չի տար եւ արեւմուտքի կողմնակալութեան ի նպաստ Հայերուն Ազրբէջանի հետ պատերազմին մէջ:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՓԵՐՓԻՆԵԱՆԻ օդակայանին վայրէջքի հարթակին վրայ գգայացուց hold-up մը տեղի ունեցած է Օգոստոս 13-ի իրիկունը, երբ Փարիզէն հասնող օդանաւը կանգ կ'առնէր: Բեռնատար կառքէ մը իջած են դէմքերը ծածկուած հինգ-վեց անձեր, մօտեցած օդանաւին, հրահանգած որ օդաչուն բանայ ապրանքատար խցիկները ու քանի մը վայրկեանէն առած են 28 քիլօ կշռող ծրարներ ու անմիջապէս մեկնած: Ծրարները հսկայ գումարներ կը պարունակէին, տէրը՝ Պրինքս, Օգոստոս 14-ին, մերժած էր ճիշդ գումարը յայտնել: Օդանաւին մէջ էր Մարք Կարմիրեան որ թղթակցութիւն մը ապահոված էր «Լիպերասիոն»ի (Օգոստոս 14):

ՉԵՉԵՆԻՈՅ համար շատ չփոթ կացութիւն մը կը տիրէր Օգոստոս 14-ին: Մինչ անկախապաշտները կ'ըսէին թէ համաձայնութիւն գոյացած է եւ հրադադար մը ի զօրու կը դառնայ նոյն օրը ժամը 12-էն, Ռուսերը բոլորովին կը հերքէին: Գրոզնիի մէջ, կատաղի կռիւները կը շարունակուէին:

ԻՐԱՆ թողոք ներկայացուցած է Լա Հէի միջազգային դատարանին առջեւ Միացեալ -- Նահանգներու դէմ, Ամաթօ օրէնքի գործադրութեան պատճառով: Ուաշինկ-

(Շար-ը կարդալ Դ. էջ)

ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ տօնին առթիւ, «Յառաջ» լոյս չի տեսներ Հինգշաբթի, Օգոստոս 15 եւ Ուրբաթ Օգոստոս 16-ին եւ խմբագրատունը փակ է: Մեր յաջորդ թիւը՝ Երեքշաբթի Օգոստոս 20:

Ո՞Վ ԿԸ ՅԻՇԷ ՏԱԿԱՒԻՆ ՀԱՅԵՒՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ԶՈՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Քանի մը շաբաթ առաջ երբ ստացայ Մանոլ Փանտեւսքիի կողմէ Սկիւպի մէջ «1903-ին Արեւմտեան Եւրոպայի մէջ մակեդոնասէր շարժումը» (1) խորագիրով հրատարակուած հատորը, յիշողութեանս մէջ փոքրիկ լոյս մը վառեցաւ։

Շուրջ քսան տարի առաջ ճանչցած էի Մ. Փանտեւսքին Փարիզ, համալսարանական շրջանակին մէջ։ Պաշտօնական պատմաբան էր, Մակեդոնիոյ Գիտութեան ակադեմիային անդամ դարձած. եուկոսլաւ համայնավար մըն էր, այսինքն՝ Թիթոյական մը եւ նոյն ատեն ազգայնական Մակեդոնացի մը։ Խառնուրդ մը որ երգիծանքի շեշտ մը չէր տրամադրեր. բայց որպէս մակեդոնական ազգային շարժումի մասնագէտ, ան զարմանք պատճառեց ինծի Հայերու ժամանակակից պատմութեան ծանօթութեամբ. բազմաթիւ հարցումներ ուղղեց ինծի դարասկիզբին Աբտիւլհամիտ Բ.ի եւ օսմանեան իշխանութեան դէմ մակեդոնացի, հայ եւ պուլկար յեղափոխականներու միասնական գործողութիւններուն մասին։ Այդ օր խօսած էինք «մակեդոնական հարց»ին եւ «հայկ. հարց»ին նմանութիւններուն մասին. «Արեւելեան հարց»ին մէկը եւրոպական, միւսը ասիական այս երկու դրուագներուն որոնք կէս դար զբաղեցուցին եւրոպական պետութիւնները (2)։ Հաստատած էինք նաեւ ճակատագիրներու նմանութիւնը եւ ափսոսանք յայտնած երկու երկիրներու Հայաստանի ու Մակեդոնիոյ քաղաքական ձախողութիւններուն համար։

Հոս անհրաժեշտ չէ կրկնել Հայոց պատմութեան տուեալները, բայց պէտք է քանի մը նշումներ ընել Մակեդոնիոյ պատմութեան մասին (3)։

ԺԹ. դարու վերջին քառորդին Մակեդոնիան Ալպանիոյ եւ Պուլկարիոյ հետ Եւրոպայի Օսմանեան վերջին ստացուածքը կը հանդիսանայ։ Պուլկարիա որ ինքնավար էր 1878-էն ի վեր, 1908-ին կ՚անկախանայ. իսկ Ալպանիա 1912-ին։ Մակեդոնիան որ երեք շրջանէ կը բաղկանար -- Քոսովօ, Մոնասթիր եւ Սելանիկ -- եւ ունէր 2 միլիոն բնակիչ որոնք մարդկային խիտ խճանկար մը կը կազմէին - Պուլկարներ, Սերպեր, Յոյներ, Թուրքեր, Ալպանացիներ, Ցիկաններ, Հրեաներ - ախորժակը կը գրգռէր իր դրացիներուն։ Պալքանեան պատերազմին աւարտին (1912 -- 1913) բաժնուեցաւ Սերպիոյ (Վարտարի մասը), Յունաստանի (Սելանիկ եւ եգէականեան շրջան) եւ Պուլկարիոյ (Փիրինի շրջան) միջեւ։ Ա. աշխարհամարտին երկու ճակատներն ալ չէզոք դիրքի վրայ մնացած Պուլկարիոյ կը խոստանան Մակեդոնիան իր զինակցութեան փոխարէն. ան կ՚ընտրէ Գերմանիոյ, Աւստրիոյ եւ Օսմանեան պետութեան միանալ ու կը գրաւէ ամբողջ Մակեդոնիան (1915 Հոկտեմբեր)։ Երկու աշխարհամարտերու միջեւ Վարտարը մաս կը կազմէ Եուկոսլաւիոյ բայց 1941-ին կրկին կը կցուի Պուլկարիոյ որ այդ շրջանին Նացիական Գերմանիոյ արբանեակն է։ 1945-ին Թիթօ եւ իր համայնավար գործակիցները կը վերակառուցեն Եուկոսլաւիան որուն բնակչութիւնը պատերազմին ընթացքին նօսրացած է. երկիրը կ՚ունենայ ֆետերալ դաշնակցային հանրապետութեան մը կազմը, բաղկացած վեց հանրապետութենէ որոնցմէ մէկն է Մակեդոնիան։ Այդ հանգրուանին նորութիւն են մակեդոնական հանրապետութեան մը (Սկիւպ մայրաքաղաքով) ստեղծումը, մակեդոներէն լեզուի ու մակեդոնական քաղաքացիութեան մը ճանաչումը։

Մեր հանդիպումին բնականաբար ոչ Մ. Փանտովսքի, ոչ ալ ես կրնայինք երեւակայել թէ ապագան ինչ անակնկալ վերապահած էր մեզի։

Եուկոսլաւիոյ քայքայումէն (1990) ետք Մակեդոնիա անկախութիւն հռչակեց (25.713 քառակուսի քիլոմեթր) 1991 Սեպտեմբեր 10-ին, Հայաստան (29.700 քառակուսի քիլոմեթր) նոյն քայլը առաւ 1991 Սեպտեմբեր 23-ին, նոյնիսկ Խորհրդային Միութեան քայքայումէն (Դեկտեմբերի վերջ) ալ առաջ։ Եւ մինչ Հայաստան ճանաչում գտաւ ու ընդունեցաւ ՄԱԿ 1992-ի սկիզբը, Մակեդոնիան պարտաւոր եղաւ մինչեւ 1993-ի Ապրիլը սպասելու։ Ընդունելութիւնն ալ կարելի եղաւ միայն «Նախկին Եուկոսլաւ Մակեդոնիոյ Հանրապետութիւն» (ՆԵՄՀ) առժամեայ անունով։ Դժուար չէ յատկանշական այլ զուգահեռներ ալ գտնել երկու պետութիւններու վերջին շրջանի պատմութեան մէջ։ Հայաստան Ղարաբաղի կնճիռին պատճառով 1989-ի աշունէն Ատրպէյճանի կողմէ տնտեսական շրջափակումի մը ենթարկուեցաւ։ Յունաստան ալ Մակեդոնիոյ կիրարկեց շրջափակում մը որպէսզի պարտադրէ փոխելու անունը եւ դրօշակը որ կը կրէ Փիլիպպոս Մակեդոնացիի՝ Մեծն Աղեքսանդրի հօր զինանշանը։ Եւ վերջապէս, նոյնիսկ եթէ մակեդոնացի քոմիթաճիները երկու պատերազմներու միջեւ վերիվայրեցին պատմութեան ընթացքը (4), եթէ նոյնիսկ դաշնակցականները հայկական Սփիւռքին մէջ կատարեցին իրենց ծանօթ դերը, Մակեդոնիոյ Յեղափոխական Ներքին Կազմակերպութիւնը, հիմնուած՝ 1893-ին եւ Հ. Յ. Դ.-ն, հիմնուած՝ 1890-ին, տասնեակ տարիներու բացակայութենէ մը ետք վերայայտնուեցան Մակեդոնիոյ եւ անկախ Հայաստանի քաղաքական կեանքին մէջ իրենց տեղը ունենալու համար։

***

Սկիւպի մէջ վերջերս լոյս տեսած հատորը յատկապէս կը յիշեցնէ «պատմական» այս կուսակցութիւններուն դերը, անկախութեան դժուարին ճամբուն վրայ։ Հոն կայ 1903-ին Փարիզ հրատարակուած պրակ մը խորագրուած՝ «Հայաստանի ու Մակեդոնիոյ համար» ուր կան նամակներ, յօդուածներ, ճառեր, կենսագրական նօթեր, ազատական կամ ընկերվար այն Եւրոպացիներուն մասին որոնք մասնակցութիւն բերած են հայկական եւ մակեդոնական հարցերուն, դատապարտած՝ Օսմանեան իշխանութեան կեղեքումները եւ պահանջած արմատական բարեփոխումներ։ Այս Եւրոպացիները եղած են ծանօթ «հայասէրներ», ինչպէս՝ Ֆրանսիս տը Փրէսանսէ, Փիէռ Գիյառ, Վիքթոռ Պէռար, Ժան Ժօռէս, Ճէյմս Պրայս, Նոէլ Պիւքսթոն, Տըրի Գոչէն, Թէոֆիլ Տէլքասէ, Սըր Արթիւր էվանս, Անաթոլ Լըռուա -- Պօլիէօ, Ժան Լոնկէ Մարսէլ Սամպա, եւայլն։

1903-ին Փարիզի մէջ եւ այլուր տեղի ունեցած հանրահաւաքները էլինտընի (էլի) ապստամբութեան կոչին կ՚արձագանգէին. ան ամբողջ Մակեդոնիան ոտքի հանած էր ՆԵՄՀ-ի կոչով։ Սակայն սկզբնական յաջողութիւններէ եւ Գրուշեւոյի վաղանցուկ հանրապետութեան մը հռչակումէն ետք որ մակեդոնական պետութեան մը սաղմը նկատուեցաւ, ապստամբները օսմանեան ուժերու կողմէ ճնշուեցան։ Պաշիպոզուքները հրդեհեցին, ջարդեցին, բռնաբարեցին անպատիժ ու ՆԵՄՀ գլխատուեցաւ։ Եւրոպան կը խռովի։ Ֆրանսայի, Անգլիոյ Իտալիոյ մակեդոնասէր կոմիտէներուն, Ռուսաստանի համալսարական շրջանակներուն կոչին անսալով կառավարութիւնները վերջապէս կ՚որոշեն միջամտել։ Ֆրանսուա - Ժոզէֆ եւ Նիքոլա Բ. հանդիպում կ՚ունենան բարենորոգումներու ծրագիր մը պարտադրելու համար Սուլթանին (1903 Հոկտեմբեր) նաեւ պարտադրելու որ Մակեդոնիոյ մէջ կարգ - կանոնը հաստատելու համար միջազգային պահակազօրք մը հիմնուի, Թրքական հովանաւորութեան ներքեւ։ Այդ ուժերը որոնք իրենց կայոյտ համազգեստով նախատիպարներն են ՄԱԿ-ի Պոսնիոյ կապոյտ սաղաւարտաւորներուն, անկարող կ՚ըլլան բռնութեան առաջքը առնելու։

***

Դիպուածի մը արդիւնք չէ որ 1903-ին մակեդոնասէր կոմիտէները Հայաստանի համար եւս բարենորոգումներ կը պահանջեն։ 1894 -- 1896-ի կոտորածները տակաւին թարմ են յիշողութիւններու մէջ։ Հ. Յ. Դ.-ն ալ որուն ղեկավարութիւնը Ժընեւ է, իր կարգին Փարիզի մէջ 1900 Հոկտեմբերէն կը հրատարակէ «Փրօ Արմէնիա» երկշաբաթաթերթը որ մակեդոնացի յեղափոխականներու Արեւմուտքի գլխաւոր յենարանն է։ Թերթին խմբագրութեան մաս կը կազմէ «Հայասէր» վերոնշեալ Ֆրանսացիներու մեծ մասը, թէեւ հրատարակութեան պատասխանատուն կովկասահայ մըն է. Յովհաննէս Լորիս Մելիքօֆ։ Ան խղճամտօրէն կը կատարէ լրատուութեան եւ քարոզչութեան պարտականութիւնը որ իրեն յանձնած է Քրիստափոր Միքայէլեան։ Նպատակն է Հայերու եւ Օսմանեան կայսրութեան հպատակ այլ ժողովուրդներու ի նպաստ շարժման մղել արեւմտեան հանրային կարծիքը։

Տեսնելու համար թէ ի՛նչ վարկ ունէր Հ. Յ. Դ.-ն մակեդոնացի յեղափոխականներու մօտ, պէտք է յիշել նաեւ 1896 Օգոստոս 26-ին Պոլսոյ Պանք Օթօմանին գրաւումը Արմէն Կարօ Բաստրմաճեանի ղեկավարութեամբ դաշնակցական համազէններու խումբի մը կողմէ։

Այդ արարքը որուն նպատակը մեծ պետութիւնները մղել էր ստիպելու Թուրքիան որ յարգէ բարենորոգումներու իր խոստումները, աննախադէպ էր ու միջազգային արձագանգ գտաւ։ Հակառակ իր ձախողութեան ան մեծ ազդուկ պիտի յարուցանէր։

Հայեւմակեդոնական յեղափոխական գործակցութիւնը (5) ողբերգական փակագիծ մը ունեցաւ 1901-ին։ Մակեդոնացի եւ հայ տասնեակ մը զինեալներ Խարբերդի մօտերը բախում կ՚ունենան թուրք զօրքերու հետ։ Ընդհարումէն ողջ կը մնան երկու Մակեդոնացիներ եւ երկու Դաշնակցականներ -- Պետրոս Սէրէմճեան, Օննիկ Թորոսեան--։ Բոլորն ալ քաղաքին չորս տարբեր հրապարակներուն վրայ կախաղան կը հանուին, որպէսզի իրենց օրինակը դաս ըլլայ ուրիշներու։

Միքայէլ Վարանդեան անմահացուցած է Պ. Սէրէմճեանը որ ինք չուանը անցուցած է իր վիզին ու կից մը տուած վրան գտնուած աթոռակին, արտասանելէ ետք հետեւեալ խօսքերը. «Այո՛, ես յեղափոխական եմ. մի՛ մոռնաք որ ես այստեղ կը ներկայանամ իբրեւ գաղափարի ներկայացուցիչ. ինծի կը կախէք, բայց գաղափարը կախել չէք կրող» (6)։

ԱՆԱՀԻՏ ՏԷՐ -- ՄԻՆԱՍԵԱՆ

---

(1) -- Մանոլ Փանտեւսքի -- Մակեդոնական շարժումը Արեւմտեան Եւրոպայի մէջ 1903-ին. Սկիւպ 1995, 183 էջ։ Հրատարակութիւն՝ «Մակեդոնիոյ դիւանների» հաւաքածոյին. մակեդոներէն. այդ լեզուն շատ մօտ է պուլկարերէնի, կը գործածէ կիւրեղեան տառերը։ Նախաբանը ֆրանսերէն է։

(2) -- Պեռլինի վեհաժողովին (1878) երկու ժողովուրդներու ճակատագիրը միացած էր 61 եւ 23-րդ յօդուածներով։

(3) -- Ա. Տէր -- Մինասեան եւ Փ. Փինթա. - «Մակեդոնիա՝ վառօդարան մը» «Նոթրը Հիսթուար» (թիւ 101, 1993 Յունիս)։

(4) -- Ա. Լոնտրը -- «Քոմիթաճիները մէջ» տիարեկչութիւնը Պալքաններու (1932). Ամբողջական երկեր (1992)։

(5) -- Տիւնքան Մ. Փէրրի. -- «Մակեդոնական յեղափոխական կազմակերպութեան հայկական կապերը» «Արմինիըն Ռիվիու» Պոսթըն 1989, թիւ 42։

(6) -- Մ. Վարանդեան -- «Հ. Յ. Դ.-ի պատմութիւն» հ. 1, Փարիզ 1932, էջ 262 -- 263։

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՒԻԱՈՒՂԻՆԵՐ

ՀԱՅԵՐԷՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՈՒ... ՀԻՒՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՈՎ ԿԱՄ ԱՐԵՒՄՏԱԿԱՆԱՑՄԱՆ ՎՆԱՍՆԵՐԸ

Օրըստօրէ յառաջադիմում ենք, ձերբազատւում խորհրդային անցեալից, անկասելի երթով սլանում դէպի ... արեւմուտք, կապիտալիստական կենցաղին անցնելու ճանապարհին սահուն կերպով փոխում արժէքները։ Երանելի հորիզոններին հասնելու ամենակարճ ուղիներից մէկը, պէտք է կարծել, անգլերէնի չուտափոյթ ներդրումն է մեր կեանքի տարբեր ոլորտներում։ Յատկապէս նպատակայարմար է դա անել երկրին արտաքին աշխարհի հետ կապող գլխաւոր զարկերակին հայկական աւիաուղիներին առնչուող թղթերում ու փաստաթղթերում։ Խօսքը վերաբերում է, օրինակ, ինքնաթիռային տոմսերին, որ դեղեցիկ մատուցուած տհաճ անակնկալի տպաւորութիւն են թողնում ուղեւորի վրայ։ Սրանք ոչ միայն հեռաւոր կերպով չեն յիշեցնում իրենց նախորդներին, այլեւ խիստ «արեւմտականացել» են։

Գրքոյկաձեւ տոմսի առաջին էջն ազդարարում է՝ passenger ticket and baggage check (ուղեւորի եւ ուղեբեռի անդորրագիր) առանց որեւէ հայերէն բացատրութեան։ Այնուհետեւ հայերէնը պետական լեզու հռչակած անկախ Հայաստանի Եռագոյն դրօշը խորհրդանշող գոյներով կարդում ենք AAL (որ նշանակում է Armenian Airlines, Հայկական աւիաուղի), քիչ աւելի ներքեւ նոյն արտայայտութիւնը բացուած տեսքով եւ, ի հարկէ նոյնպէս անգլերէն։ Հիմնական տեղեկութիւնը պարունակող էջում, ուր նշուած են երթուղին, տոմսի արժէքը, մեկնելու ժամը եւ այլն հայերէնն ի սպառ բացակայում է։ Ուղեւորների հեղինակները ակնյայտօրէն առաջնորդուել են հայերէնն օտարերկրացիներու «աչքը խոթելու» «գաւառական սովորութիւնից» խուսափելու «ազնիւ» մտադրութեամբ։ Ոչինչ, եթէ պէտք է դիմէք բառարանի կամ անգլերէն իմացող ծանօթների օգնութեանը ձեզ անհրաժեշտ տեղեկութիւնները քաղելու համար, թէեւ նոյնիսկ այդ դէպքում չէք կարող պարզել, օրինակ, թէ թռիչքից քանի ժամ առաջ էք ժա-

մանելու օգակայանում գրանցուելու համար: Փոխարէնը հայերէն եւ անգլերէն մանրամասն հրահանգներ կը գտնէք թռիչքի պայմանների, ձեր իրաւունքների եւ պարտականութիւնների, փոխադրումն իրականացնողների պատասխանատուութեան աստիճանի մասին, որոնք, սակայն, չինական այբուբենի կամ ղժկայն, սարսափ գեղահապի գգացողութիւն են յառաջացնում: Անգլերէնի մակերեսային իմացութիւնն իսկ բերում է այն եզրակացութեան, որ երկարաձիգ տեքստերը գրուած չեն հայերէն, այլ պարզապէս անգլերէնի տեքստերի վրայ թարգմանութիւններ են հայերէնի լեզուամտածողութեան անյարիր, ներքին տրամաբանութիւնից զուրկ բառակոյտերով: Հայերէնի «թերարժէքութիւնն» ապացուցելու համար իբր «քանչիւր էջի ներքեւում աչքի զարնող տառատեսակով գրուած է «հայերէն եւ անգլերէն տեքստերի չհամընկնելու դէպքում նախապատուութիւնը տալ անգլերէնի»: Անհասկնալի է միայն անգլերէնով մատուցուած այս արտայայտութեան իմաստը, օտարերկրացիների համար այն աւելորդ է եւ ընդամէնը խօսում է ինքնանսեմացման մարմաջի մասին, անգլերէն չիմացողի համար նոյնպէս «եղած - չեղած մի հաշիւ է»:

Արժէ՞ր, կոմունիստական ինտերնացիոնալիզմը չթօթափած, նետուել արեւմտամոլութեան գիրկը: Կամ, որ նոյնն է, հազիւ ազատագրուելով ռուսերէնի «կեղակայութիւնից», այն տեղնուտեղը լրացնել անգլերէնի «բռնապետութեամբ»: Միթէ՞ սա միջազգային ճանաչման արժանացած մեր երկրի ինքնահաստատման ապագոյն ճանապարհն է:

Ինքնաթիռի տոմսի ձեռք բերմանն առնչուող եւս մի դրուագ, որի մասին արժէ խօսել: Հայաստանից մեկնող քաղաքացին «ձեւով կամաւոր, բովանդակութեամբ՝ պարտադիր» սկզբունքով ստիպուած է ազգային տուրքի իր բաժինը մատուցել «Հայաստան» հիմնադրամին 500 դրամ իւրաքանչիւր տոմսի համար, որի դիմաց ստանում է (իսկ աւելի յաճախ չի ստանում) «Հայաստան համահայկական հիմնադրամ» մակագրութեամբ մի բացիկ: Ակամայ զուգահեռը խորհրդային կայսրութեան մայրամուտին որոշ գնումների, վճարումների դէպքում «պեբլոտերեյկայի հօր» հաշուին գանձուող գումարների հետ, տհաճ մանրուքների շարքին է դասում յիշեալ դրուագը: Մինչդեռ ինքնաթիռային ուղեւորութիւնն արդէն իսկ այնքան թանկագին «բաւականութիւն» է, որ ուղեւորին բացասական լիցք հաղորդելու այս փոքրիկ առիթը կարող էր եւ չրջանցուել կամ յետաձգուել աւելի առիթի, միշտ պահպանելով կամաւորութեան սկզբունքը:

ԼԻԼԻԹ ՊՕՂՈՍԵԱՆ

«Ազգ», Օգոստոս 1

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

Ի՞ՆՉ Է ԶԳԱՅԱԶՐԿՈՒՄԸ

Շատ յաճախ ընդհանուր զգայազրկումն է, որ կը մտահոգէ հիւանդը, քան թէ՝ բուն վիրաբուժական գործողութիւնը:

Ի՞նչ է զգայազրկումը, ի՞նչ կը պատահի անկէ առաջ, անոր ընթացքին եւ անկէ ետք: Փորձենք պատասխանել այս հարցումներուն լուսաբանելու համար ընթերցողը,

● ԶԳԱՅԱԶՐԿՈՒՄԻՆ ՆԱԽՈՐԴՈՂ ԺԱՄԵՐԸ

Ինչո՞ւ համար պէտք չէ ուտել կամ խմել վիրաբուժական գործողութենէն առաջ:

Ընդհանուր զգայազրկումի ընթացքին, եթէ մեր ստամոքսը լեցուն ըլլայ, փսխելու հաւանականութիւն կը ստեղծուի, որուն հետեւանքով ուտելիքին մէկ մասը կրնայ թոքերը երթալ եւ քարդութիւններ ստեղծել:

Այս անպատեհութեան առաջքը առնելու համար զգայազրկողը խողովակ մը կ՚իջեցնէ մեր շնչափողին մէջ, որուն շընորհիւ շնչառութիւնը կը կանոնաւորուի:

Ուրեմն գործողութենէն առաջ չուտելու եւ չխմելու պարտադրանքը յաւելեալ նախազգուշութեան կը ծառայէ:

Գործողութենէն քանի՞ ժամ առաջ ուտելը կամ խմելը պէտք է դադրեցնել:

Կը թելադրուի գործողութենէն 6-էն 8 ժամ առաջ դադրեցնել ուտելն ու խմելը, որպէսզի ստամոքսը առիթ ունենայ մարսելու եւ պարպուելու պէտք եղած ձեւով:

Իսկ եթէ պատահի, որ օրէնքը չյարգենք, դիտողութիւն լսելու գնով պէտք է զգայազրկող բժիշկը տեղեակ պահենք մեր գործած «յանցանք»ին մասին...

Իսկ անակնկալ, չնախատեսուած գործողութիւններու պարագային, ի՞նչ կը պատահի, երբ մեր ստամոքսը լեցուն է:

Զգայազրկող բժիշկը իր նախազգուշութիւնները կ՚առնէ ի հարկին փսխուքի դէմ ազդու դեղեր գործածելով, անպատեհութեան առաջքը առնելու համար:

● ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ

Ի՞նչ նիւթեր կը գործածուին ընդհանուր զգայազրկումի մը համար:

Երեք տեսակի նիւթեր: Յաճախ զգայազրկողները կը գործածեն մէկէ աւելի դեղեր, ոմանք՝ քնացնելու համար, ուրիշներ՝ ցաւը չէզոքացնելու համար, վերջապէս, տեսակ մըն ալ՝ ընդահնուր հանգարտութիւն տալու համար:

Ճի՞շդ է, որ զգայազրկումի ընթացքին չենք տառապիր եւ ցաւ չենք զգար:

Մեր արուեստական քունին մէջ թաղուած՝ կրնայ պատահիլ, որ գործողութեան ընթացքին պահ մը ցաւ զգանք. անիկա հազուադէպօրէն կը պատահի:

Ամենայնդէպս զգայազրկողը կ՚անդրադառնայ ատոր՝ շնորհիւ որոշ ազդանշաններու, ինչպէս՝ արեան ճնշումի բարձրացում, սրտի բաբախումներու արագացում, Ան ցաւազրկիչի նոր քանակ մը կը սրսկէ, եւ հարցը կը լուծուի:

Նշենք, որ նոյնիսկ ցաւ զգալու պարագային, զգայազիրկ հիւանդը չարթըննար, իսկ գործողութենէն ետք երբ արթըննայ, ոչ իսկ կը յիշէ իր ցաւը...

● ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ ՅԱՋՈՐԴՈՂ ԺԱՄԵՐԸ

Հիւանդասենեակը վերադառնալէ ետք տակաւին վտանգներ կը սպառնա՞ն:

Ո՛չ: Ինչպէս գիտենք, գործողութենէն անմիջապէս ետք հիւանդը սենեակ չի փոխադրուիր, ան յատուկ սրահի մը մէջ հսկողութեան տակ կ՚ըլլայ եւ յետոյ միայն սենեակ կը փոխադրուի:

Զգայազրկումէն վերազարթնումը ցաւ կը պատճառէ՞,

Բուն պատճառող դեղին ազդեցութենէն դուրս գալով՝ հիւանդը կ՚արթննայ. այս միջոցին ցաւազրկող դեղերը տակաւին կը շարունակեն ազդեցութիւն գործել, յետոյ անոնք ալ աստիճանաբար կը չէզոքանան, եւ բնական է, որ հիւանդը ցաւ զգայ: Նման պարագայի՝ համապատասխան հանդարտեցուցիչներով բժիշկները կը փորձեն նուազագոյնի իջեցնել այդ ցաւերը:

Զգայազրկումէ մը ետք կը պատահի՞ որ հիւանդը յիշողութիւնը կորսնցնէ:

Տակաւին քանի մը տարի առաջ գործածուող կարգ մը դեղեր պատճառ կ՚ըլլային, որ հիւանդը ամբողջովին մոռնայ իր կեանքէն որոշ հատուած մը:

Ներկայիս օգտագործուող դեղերը այդ անպատեհութիւնները չեն ստեղծեր: Այսուհանդերձ քանի մը ժամուան մոռացութիւն մը կը վերաբերի զգայազրկումի նախորդող ժամերուն. անիկա մտահոգիչ երեւոյթ մը չէ:

ԺՊԻՏ

●

Հանդուցեալ գաբրովցու շուրջը հաւաքուել էր նրա ողջ ընտանիքը:

– Կարծում եմ, որ պէտք է ճոխ թաղում կազմակերպել, – ասաց փեսան:

– Եթէ հայրիկը կենդանի լինէր, – ասաց որդին, – նա աւելի համեստ յուղարկաւորութիւն կը գերադասէր:

– Մի վիճէք, – ընդհատեց այրին, – կ՚անենք՝ ինչ որ հարկն է: Եթէ հանդուցեալը լսէր, թէ դուք ինչ գներից էք խօսում, վեր կը կենար եւ ինքը կը գնար գերեզմանոց:

○

Ինչ-որ մի կին Սոֆիայում լուսամուտից դուրս ընկաւ: Նրա բախտից լուսամուտի տակ աղբարկղներ էին դրուած, եւ նա ընկաւ դրանցից մէկի մէջ: Կինը ոչ շատ ջահէլ էր, ոչ էլ պառաւ: Այն պահին, երբ նա, գիտակցութիւնը կորցրած, պառկած էր աղբարկղում, կողքից անցաւ գաբրովցին:

– Ա՛յ, ա՛յ, ա՛յ, – ասաց նա, – սոֆիացիները բոլորովին անտնտեսաւոր ժողովուրդ են: Չէ՞ որ այս կինը դեռ մի տասը-տասնհինգ տարի կարող էր ծառայել:

○

Գաբրովոյի մերձակայքից մի գիւղացի, որ գործով Սոֆիա էր եկել, մայրաքաղաքի խանութներից մէկը մտաւ՝ ծղօտէ գլխարկ գնելու: Հարցրեց իրեն դուր եկած գլխարկի արժէքը:

– Գլխարկն արժէ երեսուն լեւ, – ասաց վաճառողը:

Գաբրովցին մտածեց, թէ վաճառողը կատակում է: Պարտքի տակ չմնալու համար նա հարցրեց.

– Իսկ որտե՞ղ են անցքերը:

– Ի՞նչ անցքեր, – զարմացաւ վաճառողը:

– Որտեղից դուրս կը ցցուեն այն էշի ականջները, որը երեսուն լեւ կը տայ մի գլխարկին, – աչքով արեց խորամանկ գիւղացին:

ԿՂԶԻՆ ԵՒ ՄԻ ՄԱՐԴ

– վիպակ –

ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ

Թէպէտ օրը նոր է սկսել, ժողովուրդը գալիս է ամէն կողմից: Պառաւները՝ ծանրացած իրենց ոտքերը քարշ տալով, երիտասարդները՝ իրենց նորանոր զգեստները հագած, աղջիկները գոյնզգոյն շըրջազգեստներով եւ երկայն շալերով: Փոքրիկ ժամերգութիւններից յետոյ, տեղի պիտի ունենայ մեծ պատարագը: Պիտի երգեն Վիտալթինիի «Մեսսա Գաուտիոզան»:

Տօնական այս մթնոլորտը բարձր պահելու համար, մինչեւ պատարագի սկսելը, «Զայների Մոդերը» նուագում է իր լաւագոյն կտորները, ծովափի կողմում:

Ամէն կողմից աւտոմոբիլներ, կառքեր, ինքնաշարժներ են հասնում: Փողոցներից անկարելի է անցնել: Քլաքսոնները հընչում են, մարդիկ պոռում են, երեխաները՝ բոլորովին վայրենացած խենթանում են: Քաղաքի երկրորդ ոստիկանը՝ հաստը՝ գլուխը կորցրած, սրան նրան է մօտենում, աչքերը դուրս հանում, աշխատում մի բան ասել, ապա, վհատած, մեծ դեղին թաշկինակով ճակատի քրտինքն է սրբում եւ անիծում ճակատագիրը:

Ուր որ նայես, ուտում են: Խմում են: Ծովը իր բոլոր քամիները կլլել է եւ շունչը պահել: Տօթից անկարելի է շընչել: Փողոցները եւ մայթերը սեխի, ձմերուկի, նարինջի կեղեւներով են ծածկուած:

Ժամը տասի մօտերը զանգակները նորից են ղօղանջում:

Նուագախմբի մետաղէ ռոնոցները եւ դըրդալից թմբկահարումները զարնում են տներին եւ գլնգալով վայրում պատուհանների ապակիների վրայ: Բարձրախօսների միջոցով եռապատկուած լիմոնադ եւ անուշ ծախողների ձայները որոտում են: Պայթուցիկները ռմբակոծում են երկինքը:

Ծովափի կողմից, նաւերով եւ մակոյկներով նոր հասած բազմութիւնները միանում են աւտոմոբիլներով եկածներին եւ ալիք ալիք բարձրանում դէպի Մայր Եկեղեցու կողմերը:

Պատշգամների վրայ կանգնած տղաները բազմութեան մէջ ծանօթներ են գտնում եւ, գլուխները վայր կախելով, բղաւում: Վարից պատասխանում են դեռ աւելի բարձր ձայնով:

Գիւղը ջղայնանում է, տրորւում, քաոսանում:

Երաժշտութիւն, աղմուկ, աղօթք, քըրտինք խառնւում են եւ խնկի ծուխերի հետ միասին բարձրանում վեր ու միանում զանգահարումների խօլատենդ ալիքներին,

Երիտասարդ աղջիկների սրտի աղաւնիները, թեւերը բաց, շրջում են սրբերի անշարժ արձանների շուրջ եւ մըկտալով պաղատում սէր եւ երջանկութիւն: Դողդողացող ձեռքերով մոմեր են վառում եւ նրանց բոցերի հետ այրւում: Եկեղեցին լեցւում է ոդիներով եւ ուրուականներով:

Երեկոյեան դէմ, արեւը դեռ մայր չմտած, քաղաքի պաշտպան սուրբը եւ իր սրբազան հիւրերը դուրս են գալիս զբօսանքի,

Եկեղեցու դռները լայն բացւում են: Ուսերի վրայ ցցուած, նախ, դուրս են գալիս հիւր սրբերը, ապա՝ ինքը քաղաքի պաշտպան սուրբը:

Կրօնական կազմակերպութիւնները, ոստիկանական, քաղաքապետական եւ զանազան յանձնախմբերի ներկայացուցիչները՝ շատ կերած, շատ խմած, կարմրած երեսներով եւ ծանրացած մարմիններով՝ շարւում են առաջին գծերի վրայ: Նրանք նայում են իրենց ոտքերին եւ բղկտում: Գալիս է երաժշտախումբը: Փայլփլուն, պսպղուն, հանդիսաւոր, նա կանգ է առնում պաշտօնական անձնաւորութիւնների շարքերի ետեւում եւ կազմ ու պատրաստ սպասում: Յետոյ խուժում է ծով բազմութիւնը:

Խաչեր, դրօշակներ, բուրվառներ, յոգնած քահանաներ, արծաթէ մոմակալներ, շալերով ծածկուած կանանց կրնճոտ երեսներ, անակռայ բերանները կծկած ծերեր, փայլփլուն մետաղներ եւ ոսկեջուրը կորցրած անհամար առարկաներ:

Իրենց աչքերը տաւարի նման ոլորող հաստափոր վաճառականներ: Շրջակայ գիւղերի արեւից եփուած, չորացած, անդադար խաչակնքող շինականներ: Քամու հպումից շարժուող ձիթենիների նըման առաջացող մայրապետներ եւ չիթէ կապաներ հագած, կարճ, թուխ, տգեղ դպրոցական աղջիկներ:

Քահանաների սխտորոտ շնչից դուրս թափուող ծամծմուած լատին բառեր: Կանանց խեղդուած ծեծոց եւ նուագախմբի ղանղաղ, յուզիչ բասոների հառաչներ:

Ամէն կողմ սփռուած թղթէ ծաղիկները իրենց թելերի վրայ դողդողում են: Շները թաքնուել են դարպասների ետեւ: Մասվաճառները, ի պատիւ սրբերին, երշիկների երկայն պսակներ են կախ արել: Շքերթը անցնելու ժամանակ նրանք չոքում են իրենց խանութների առջեւ եւ թուքը կուլ տալիս:

Շքերթը կանգ է առնում ծովափի փոքրիկ հրապարակի վրայ՝ լսելու համար սրբին նուիրուած տաղը: Շարժուելու տեղ չկայ: Սրճարանների սեղանների եւ աթոռների վրայ հարիւրաւոր մարդիկ եւ կանայք են կանգ առել: Պատշգամները եւ տանիքները վխտում են: Մեծ մի ամպիոնի վրայ կանգնած երգեցիկ խումբը, հէնց որ տեսնում է մօտեցող սրբի երերող արձանը, տրաքելով հնչում է: Մօտակայ եկեղեցու զանգակները փշրւում են: Աղմուկը որքա՜ն մեծ է, որ ոչինչ չի լըսւում:

(Շար. 49)

«ՅԱՌԱՋ»Ի ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

71ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻՒ

ԿԱՐՏԱՆ. -- Սիմոնեան ընտանիք 1000 ֆրանք :

⁂

ՄԱՐՍԷՅԼ. -- Մարի Տօրումեան 300 ֆրանք :

⁂

Սօնիա Յովսէփեան 700 Ֆր. :

(Շար. Ա. էջէն)

Թրքն պատժամիջոցներու պիտի դիմէր, այդ օրէնքի հիման վրայ, այն երկիրներուն դէմ որոնք մեծ ներդրումներ կ՚ընեն կարգ մը երկիրներու մէջ, որոնց կարգին՝ Իրան :

ՍԱՆ ՏԻԷԿՈՅԻ մէջ, Օգոստոս 13-ին կը շարունակուէր Հանրապետական կուսակցութեան Համագումարը եւ միաժամանակ Պոպ Տոլի ընտրապայքարը : Թեկնածուն մեծ կարիք ունի օգնական ուժերու եւ այդ առընչութեամբ կարեւոր օժանդակութիւն մը բերած է մեծ ժողովրդականութիւն վայելող զօրավար Գոլին Փաուըլ, որ սպայակոյտի պետ էր Ծոցի պատերազմի օրերուն : Օգնութեան հասած է նաեւ Ռեկընի կինը որ արցունքոտ աչքերով բերած է նախկին նախագահին զօրակցութիւնը : Ծանօթ է որ Ռեկըն ալցհայմըրի հիւանդութենէն կը տառապի, ինչ որ արդէլք չէ եղած որ ոմանք՝ «Ռեկըն 1996-ին» պաճով մը պտըտին եւ բոլոր ելոյթ ունեցողներն ալ Տոլի փոխարէն գովաբանեն Ռեկընը որ կը նկատուի՝ «20-րդ դարու վերջին մեծ առիւծը» :

ԱԼԺԷՐԻ ՄԷՋ սպաննուած են լրագրող մը՝ Մոհամէտ Կեսապ, 34 տարեկան եւ իր եղբայրը որ ոստիկան էր : Արարքը կը վերագրուի իսլամական զինեալ խմբակներուն :

ՀԱՅԱՍՏԱՆ

ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐՈՒ ՔԱՐՈԶՉՈՒԹԻՒՆԸ ԼՐԱՍՓԻՒՌՈՎ

Կեդրոնական ընտրական յանձնաժողովը Օգոստոս 6-ին որոշած է նախագահական թեկնածուներու քարոզչութեան կարգը : Ընտրական քարոզչութիւնը կը սկսի Օգոստոս 23-ին : Թեկնածուները հեռատեսիլի համար կ՚ունենան 90-ական վայրկեան : Ելոյթներու կարգի կ՚որոշուի վիճակահանութեամբ, Ասկէ զատ, անոնք հաւասար ձեւով իրաւունք ունին ձայնասփիւռէն անվճար 120 վայրկեան քարոզչութիւն կատարելու : Թեկնածուները, զիրենք առաջադրող կուսակցութիւնները կամ նախաձեռնարկ խումբերը կրնան օգտուիլ նաեւ «Հայաստանի Հանրապետութիւն» պաշտօնաթերթին հայերէն եւ ռուսերէն տարբերակներէն, հոն հրատարակելու համար քարոզչական նիւթեր :

ԵՐԵՒԱՆ — ՀԵՌԱՏԻՊ — ՓԱՐԻԶ

«ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Օգոստոս 13 / 14)

ԿԱՐՍԸ ԵՒ ՇԻՐԱԿԸ ՀԱՅ ԹՈՒՐՔ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԿԱՌԱՔԱՐՇ

Թուրք գործի մարդոց Հայաստան այցը աւարտած է Շիրակի եւ Կարսի այս մարզի համագործակցութեան հիմնական կէտերուն մասին արձանագրութեան մը ստորագրութեամբ : Հոն նշուած է որ Սեպտեմբերի առաջին կէսին Գիւմրիի մէջ բացուի Կարսի մէջ արտադրուող ապրանքներու ցուցահանդէս մը որուն կը մասնակցին մեծ թիւով թուրք գործի մարդիկ : Իսկ Հոկտեմբերին նման ցուցահանդէս մը կը կազմակերպուի Կարսի մէջ, այս անգամ հայկական ապրանքներով :

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Գլեմանս Թիւթէլեան, Սեդա Թիւթէլեան, Տէր եւ Տիկին Քաջազուն Օհաննէսեան, ինչպէս նաեւ ընտանեկան բոլոր պարագաները շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց որոնք իրենց վիշտը յայտնեցին փոխան ծաղիկի նուէրներով թէ այլ ձեւով իրենց մօր՝
ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ՍԱԹԵՆԻԿ ԹԻՒԹԷԼԵԱՆԻ
մահուան առթիւ :

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ Ս. ԽԱՉ ԱԹՈՌԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑԻ
13, rue du Perche — 75003 Paris

Կիրակի, Օգոստոս 18

Առաւօտեան ժամը 11-ին, Աստուածածնայ Վերափոխման տօնին առթիւ պատարագ կը մատուցանէ եւ կը քարոզէ՝
ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿ. ԿԱՊՐՈՅԵԱՆ
Առաջնորդ Ֆրանսայի կաթողիկէ Հայոց
Յաւարտ պատարագին տեղի կ՚ունենայ խաղողօրհնէքի *արարողութիւն :*

---

*Ստորագրուած արձանագրութեան մէջ տեղ գտած է համատեղ ձեռնարկութիւններու ստեղծումը, դրամատնային, զբօսաշրջութեան մարզի գործակցութիւնը : Համաձայնութիւն գոյացած է Կարսի ու Գիւմրիի մէջ առեւտրական ներկայացուցչութիւններ բանալու : «*Կարսը եւ Շիրակը պէտք է լինեն հայ-թուրքական յարաբերութիւնների կառաքարշը : Այս գործակցութիւնը քաղաքական գործիչներին պէտք է յուշի իրատես ճանապարհը*» ըսած է Շիրակի մարզպետ Արարատ Գոմցեան : Կարսի առեւտրական պալատին տնօրէնն ալ ըսած է թէ իրենց փափաքն ու նպատակն է Թուրքիա -- Հայաստան ճամբուն բացումը : Աւելցուցած է թէ չփումներուն ընթացքին նշմարած են երկու ժողովուրդներուն ալ այդ ուղղութեամբ պատրաստակամութիւնը,*

⁂

Ա. ՄԱՆՈՒՉԱՐԵԱՆԻ ԹԵԿՆԱԾՈՒԹԻՒՆԸ Վ՞ՏԱՆԳՈՒԱԾ

Կեդրոնական ընտրական յանձնաժողովը կը շարունակէ ստուգել թեկնածուներու հաւաքած ստորագրութիւնները : Արդէն անվաւեր նկատուած ստորագրութիւններ կան : Բաւական վտանգուած կը թուի ԳԻԱրքմ-ի թեկնածու Ա. Մանուչարեանի տրուած ստորագրութիւններու անհրաժեշտ թիւին ապահովումը : Անոր անունով ներկայացուած ստորագրութիւններէն ըստ վիճակի առնուած 504-ը պէտք է ստուգուին : Իսկ եթէ անոնցմէ չորսը անվաւեր համարուին, Աշոտ Մանուչարեան կը զրկուի որպէս թեկնածու ընտրութեան ներկայանալու իրաւունքէն, Արդէն մէկ ստորագրութիւն անվաւեր նկատուած է :

⁂

ԳԱՍՊԱՐՈՎ ԵՒ ԳԱՐԲՈՎ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

Ճատրակի երեւանեան ողիմպիականին միաժամանակ ներկայ կը գտնուին երկու մեծ վարպետներ Կարի Գասպարով եւ Անատոլի Գարբով : Առաջինը Երեւան կը ժամանէ որպէս Ռուսաստանի հաւաքականին աւագը, իսկ Ա. Գարբով որպէս ճատրակի համաշխարհային 32-րդ ողիմպիականին պատուոյ հիւր :

⁂

ՀԱՅԱՍՏԱՆ ՎԵՆԵՏԻԿԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԻՆ

Սեպտեմբեր 15-էն Նոյեմբեր 17 Վենետիկի մէջ տեղի կ՚ունենայ ճարտարապետական 4-րդ միջազգային ցուցահանդէսը : Հայաստանի Քաղաքաշինութեան Նախարարութիւնը նախատեսած է «Հայաստանի արդի ճարտարապետութիւնը» նիւթով մասնակցիլ անոր : Այս առումով վարչապետ Հ. Բագրատեան յանձնարարած է որ Մշակոյթի, Երիտասարդութեան Հարցերու եւ Մարմնամարզի նախարարութիւնները, Գիտութեան ակադեմիան, Ճարտարապետներու միութիւնը, մաքսային, եւ օդային փոխադրութեան վարչութիւնը տրամադրեն իրենց ենթակայութեան տակ ստնուող նիւթերը :

– ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ –

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

Կիրակի, Օգոստոս 18

Տօն է Վերափոխման Ս. Աստուածածնի : Սկիզբ Ժամերգութեանց՝ ժամը 8.45-ին : Պատարագ ժամը 10.30-ին :

Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ԳԻՒՏ ԱՐՔ. ՆԱԳԳԱՇԵԱՆ
Կաթ. Պատուիրակ եւ Առաջնորդ Փարիզի Հայոց

Պատարագի աւարտին խաղող կ՚օրհնուի :
Ծանօթ. - *Այսօր հոգեհանգիստ չի կատարուիր :*

Երկուշաբթի, Օգոստոս 19

Բ. օր վերափոխման Ս. Աստուածածնի : Յիշատակ Մեռելոց :
Այս առիթով ժամը 10-ին պատարագ կը մատուցուի :
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ԱՒԵՏԻՍ ՔԱՀԱՆԱՅ ՊԱԼԸԳԵԱՆ
Պատարագի աւարտին հոգեհանգիստ կը կատարուի «Վասն համօրէն ննջեցելոց» :

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՇԱՒԻԼ

Պատարագ, Կիրակի Օգոստոս 18, առաւօտեան ժամը 10-ին :
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔՀՆՅ. ԹԱՇՃԵԱՆ
Պատարագի ընթացքին կը կատարուի խաղողօրհնէքի *աւանդական արարողութիւնը :*

Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 PARIS
SIRET : 51027317 A R. C. Paris
Commission paritaire : N° 55935

ՎԱՐԱԳԱՅ Ս. ԽԱՉ ԱՌՆՈՒՎԻԼ

Կիրակի, Օգոստոս 18

Առնուվիլի Վարագայ Ս. Խաչ Եկեղեցւոյ մէջ հանդիսաւոր պատարագ :
Կը պատարագէ եւ կը քարոզէ հոգեւոր հովիւ՝
ՄԵՍՐՈՊ Ա. ՔՀՆՅ. ԺԱՄԿՈՉԵԱՆ
Սկիզբ ժամերգութեան եւ պատարագ՝ Խաղողի օրհնութիւն՝ ժամը 12.15-ին : ժամը 10.30-ին :

Ս. ՅԱԿՈԲ — ԼԻՈՆ

*Կիրակի, Օգոստոս 18, տօն է վերա*փոխման Սուրբ Աստուածածնի :
Այս առթիւ Լիոնի Ս. Յակոբ Մայր Եկեղեցւոյ մէջ տեղի պիտի ունենայ պատարագ :
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ՆՈՐՎԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԶԱՔԱՐԵԱՆ
Հայր. Պատուիրակի փոխանորդ
ԼԻՈՆԻ ԵՒ ՌՈՆ - ԱԼՓԻ ՀԱՅՈՑ
Յաւարտ պատարագի կը կատարուի խաղողօրհնէքի *աւանդական արարողութիւնը :*
Հաւատացեալներ որոնք Օրհնութեան համար ուխտած են խաղող նուիրել, կրնան ուղարկել Եկեղեցւոյս Դիւանատունը :
Սիրով կը հրաւիրուի Լիոնի եւ Շրջանի ուխտաւոր ժողովուրդը սոյն Տաղաւարի հանդիսութեանց :
Սկիզբ Ժամերգութեանց ժամը 8.45-ին :
Պատարագ ժամը 10-ին :
Քարոզ ժամը 11.15-ին :
Խաղողօրհնէք ժամը 12-ին :

ՎԱԼԱՆՍ - Ս. ՍԱՀԱԿ

Կիրակի, Օգոստոս 18
Ս. Սահակ Եկեղեցւոյ մէջ
Ռիւ տը լա Սեսիլ
Վերափոխում Աստուածածնի
Հանդիսաւոր պատարագ կը մատուցուի ժամը 10-ին : Յաւարտ պատարագի, կը կատարուի խաղողի օրհնութիւնը :
Այդ օրը հոգեհանգստեան պաշտօն չի կատարուիր :

ՄԱՐՍԷՅԼԻ ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Տօն վերափոխումն Ս. Աստուածածնի
ԽԱՂՈՂՕՐՀՆՈՒԹԻՒՆ
Կիրակի, Օգոստոս 18
Մարսէյլի
Սրբոց Թարգմանչաց Մայր Եկեղեցւոյ մէջ
Սկիզբ Ժամերգութեանց ժամը 8.30-ին :
Առաւօտեան ժամը 10-ին կը մատուցուի հանդիսաւոր պատարագ :
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ՏԱՐՕՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՃԷՐԷՃԵԱՆ
Առաջնորդական Տեղապահ
Հարաւային Ֆրանսայի Հայոց Թեմի
Պատարագի ընթացքին կը կատարուի «Օրհնութիւն խաղողոյ» *աւանդական արարողութիւնը :*

Ս. ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ ՍԷՆ-ԺԵՐՈՄ

Կիրակի, Օգոստոս 18
Սկիզբ ժամերգութեան՝ ժամը 9-ին :
Պատարագ՝ ժամը 10.15-ին :
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ՎԱՉԷ Ծ. ՎՐԴ. ԻԳՆԱՏԻՈՍԵԱՆ
Յաւարտ պատարագի կը կատարուի խաղողօրհնէքի *աւանդական արարողութիւնը :*

ՍԷՆ ԼՈՒ - Ս. ԳԷՈՐԳ

Կիրակի, Օգոստոս 18
Հանդիսաւոր պատարագ ձեռամբ հոգեւոր հովիւ՝
ՇԱՀԱՆ Ա. ՔՀՆՅ. ՏԷՏԷԵԱՆԻ
Սկիզբ պատարագի՝ ժամը 10-ին :
Պատարագի աւարտին կը կատարուի խաղողօրհնութիւն :

ՊՕՄՈՆ Ս. ԳՐ. ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

Կիրակի, Օգոստոս 18
Տօն է Ս. Աստուածածնի Վերափոխման :
Այս առթիւ Թաղիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ պատարագ կը մատուցուի եւ խաղողօրհնէք *կը կատարուի ձեռամբ՝*
ՄՈՎՍԷՍ Ա. ՔՀՆՅ. ԳԱԼԷՆՏԷՐԵԱՆ-ի :
Ժամը 10-ին պատարագը կ՚երգուի Թաղիս Լուսաւորիչ Դպրաց Դաս երգչախումբին կողմէ, ղեկավարութեամբ եւ երգեհոնահարութեամբ՝ Տէր եւ Տիկին Ռոպէր - Սիւզան Արթինեանի :

ԵՐԵՔՇԱԲԹԻ
ՕԳՈՍՏՈՍ 20
MARDI
20 AOUT
1996

LE NUMERO : 5,00 F.

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1925-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE-FONDE EN 1925
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 47. 70. 86. 60 — TELEX : HARATCH 280 868 F
— FAX : 48. 00. 06. 70 —
C.C.P. PARIS 15069-82 E

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 1.100 Ֆ. – Վեցամսեայ : 560 Ֆ.
Արտասահման : Տար. 1.400 Ֆ. (ամէնօրեայ առաքում)
1.250 Ֆ. (շաբաթական առաքում) – Հատը : 5,00 Ֆ.

...ՐԴ ՏԱՐԻ - Թիւ 18.920 Fondateur SCHAVARCH MISSAKIAN 72e ANNEE — N° 18.921

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԿԻՊՐՈՍ

ԹՈՒՐՔԵՐԸ ԿՐԱԿ ԿԸ ԲԱՆԱՆ ԲԱԶՄՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

...ՅՆ ԿԻՊՐԱՑԻ ՄԸ ԵՒՍ ՍՊԱՆՆՈՒԱԾ

...Մինչեւ Օգոստոս 16, մթնոլորտը չատ ...ուած կը մնար Կիպրոս, ուր առաջին ...էֆ մը եաք, յոյն Կիպրոցիները զոհ ...եւս կուտային Օգոստոս 14-ին, երբ ...ուք ոստիկան մը կը կրակէր, ապա ...չարունակէր կրակել, այս անգամ, ...ղակի բազմութեան վրայ, վիրաւո...ելով երկու կապոյտ սաղաւարտաւոր...եր (անգլիացի), ապա ինը ուրիշներ, ...րոնց մէջ կին մը ծանրօրէն վիրաւոր...ուած, որ 500 մեթր հեռու էր, յունա...ն կողմը, ինչպէս կը վկայէ «Մոնտ»ի ...ատուկ թղթակիցը: ՄԱԿ-ի ներկայա...ցիչներն իսկ «բացարձակապէս ա...րդարանալի» որակած են այդ կրա...ները, մինչ Կիպրոսի Նախագահը՝ ...երիտէս Հանդարտութեան կոչերը կը ...բազմապատկէր առաջքն առնելու հա...ար յետագայ միջադէպերու, թէեւ բար...թիւնը մեծ է: Այս երկրորդ միջադէպը ...պատահէր, երբ հարիւրաւորներ եկած ...ին ներկայ ըլլալու առաջին զոհին յու...արկաւորութեան (սպաննուած Օգոստոս ...ին): Այս ամբողջին գլխաւոր պատաս...խանատու կը նկատուի ՄԱԿ-ը որ չի կըր...նար (ինչպէս՝ Պոսնիա) իր դերը կա...տարել:

...Այս տարի, Թրքական յարձակման եւ ...րաման տարեդարձին օրերուն, մըթ...նոլորտը աւելի լարուած էր քան նա...խորդ Օգոստոսներուն: Կը կարծուի որ ...ախտաճառը կը վերաբերի այն մտավախու...թիւններուն զորս ունի յոյն կիպրացի ...ահմանչութիւնը: Կարգադրութիւններ նա...խատեսուած են որոնք չեն կրնար իրեն ...գոհացում տալ: Այս ողբերգական միջա...դէպերը պատճառ են որ մամուլը վերյի...շումներ ընէ ու կրկին անդրադառնայ ...Կիպրոսի կացութեան, Անգլիացիներու ...պատասխանատուութեան, երկու հա...մայնքներու վիճակին:

...«Մոնտ» խմբագրական մըն ալ կը նուի...րէ Օգոստոս 16-ին «Սպանութիւններ ...Կիպրոսի մէջ» խորագրուած, ուր կը ...յիշուէր Արեւմուտքի յանցանքներուն ...այ: ՄԱԿ-ի Ապահովութեան Խորհուր...դը եօթը բանաձեւեր դատապարտած են ...թրքական գրաւումը (հիւսիսի մէկ խո...րը պատառը) եւ հիմնուած չինծու ...անկախութիւնը»: Եւրոպական Միու...թիւնը չուզեց իր ձեռքն ունեցած ճնշումը ...գործ դնել Թուրքիոյ մաքսային միու...թեան անդամակցութեան առեն: Նոյն ...թիւն մէջ, լրատուութեան բաժնէն ...ղ, «Մոնտ» հակիրճ պատմականն ալ ...կղզին (սկսած 1571-էն, Օսմանեան ...նուաճումէն), աւելի ծանրանալով վեր...ջին 50 տարիներուն վրայ: Կը յիշէ որ ...Կիպրոսի տապալումն էր 1974 Յուլիս ...15-ին Գնդապետներու պետական հար...ուածով եւ լուլեայն Նեցուկով Միաց...եալ - Նահանգներուն, որ առիթ տուաւ ...Թուրքիոյ իր զինուորական միջամտու...թիւնը կատարել եւ իրագործելու իր ...հին երազը՝ թաքսիմը, կղզին բաժանու...մը: Այդ կայծակնային պատերազմը 4000 ...մեռեալ պատճառեց յոյն Կիպրացինե...րուն, 1600 անհետացեալ եւ 180 հազար գաղթական:

***

Յունաստանի մէջ, հակաթուրք միջադէպեր տեղի ունեցած են Օգոստոս 16-ին, մասնաւորաբար՝ Կոմոթինի ուր չորս վիրաւոր կայ:

***

Թանսու Չիլլէր, Օգոստոս 15-ին Կիպրոս գացած է եւ կոչ ըրած որ երկխօսութիւնը վերսկսի երկու համայնքներուն միջեւ, միաժամանակ սպառնալով որ կը ջախջախէ ձեռքերը անոր որ կը դպի Թրքական դրօշակին:

***

Օգոստոս 19-ին, կացութիւնը լարուած կը մնար կղզին մէջ, մինչ ՄԱԿ-ի գլխաւոր ներկայացուցիչը կը խոստովանէր որ «այս տագնապը տեսակ մը զարթնում եղաւ»: Ինք պատասխանատուն է նաեւ այն 1184 կապոյտ սաղաւարտաւորներուն որ 22 տարի է պարտին հսկել հրադադարին:

***

Երապաքան «յունական գրգռութիւններ» կ'որակէ անցուդարձերը եւ կը յայտարարէ. - «Յոյները գիտեն որ գերակայութիւն ունինք բոլոր մարզերուն մէջ: Թուրքիա 65 միլիոն բնակիչ ունի, Յունաստան՝ 15 միլիոն...»: Յունաստանի վարչապետը Նիկոսիա գացած է եւ կրկնած որ «որեւէ զինուորական նոր յառաջխաղաց Թուրքիոյ կողմէ, պատերազմի կը տանի»:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԱՄԲՈՂՋ ՊԵԼՃԻԱՆ հոգեկան ցնցումի մէջ է այն յայտնութիւններէն եաք որոնք կը վերաբերին աւելի քան տարի մըն է անհետացած աղջնակներու 8-էն 15 տարեկան: Օգոստոս 16-ին ոստիկանական հետազօտութիւնները թոյլ տուին որ ձերբակալուի բարին խակական առումով հրէշ մը, 40 տարեկան եւ հայր երեք զաւակներու: Իր պարտէզին մէջ գտնուած են 8 տարեկան երկու աղջնակներու դիակները եւ պարզուած է որ անոնք մեռած են անօթութենէ: Պելճիոյ մէջ առեւանգըւած են 7 - 8 աղջնակներ եւ այս վերջին յայտնաբերումները երեւան հանած են որ Պելճիոյ մէջ (եւ հաւանաբար դրացի պետութեանց) գոյութիւն ունի մանուկներու հանդէպ սեռամոլութեան ամբողջ ցանց մը: Ձերբակալուած էնթական 1989-ին 13 տարուան բանտարկութեան դատապարտուած էր նոյն տեսակի յանցանքներու համար եւ ազատ արձակուած «բարի վարմունքի» հետեւանքով: Կը փնտռուին միւս աղջնակները այն յոյսով որ դեռ ողջ են: Պելճիոյ մէջ, կատաղութիւնը նոյնքան մեծ է որքան յուզումը եւ կրկին կը պահանջուի մահապատիժի վերահաստատումը:

ՓԱՐԻԶԻ ՍԷՆ-ՊԵՐՆԱՐ Եկեղեցին ապաստանած 300 Ափրիկեցիներու (որոնց 10-ը հացադուլ կ'ընեն 45 օրէ ի վեր) հարցը չէր լուծուած Օգոս. 19-ի առաւօտուն: Անոնք կը պահանջեն որ ինքնութեան կանոնաւոր թուղթեր ունենան, մինչ կառավարութիւնը վճռական կը մնայ, Շիրաք ալ՝ լուռ: Ընկերվարական կուսակցութիւնը չատ խոհեմ եւ դիւնուկ դիրք մը բռնած է, Լ. Ժոսփէն հրաւիրեց (Օգոստոս 18-ին) կառավարութիւնը որ միջնորդի դիմէ եւ հատ - հատ քննէ պարագաները, կանոնաւորելով կացութիւնը անոնց որոնք պէտք է կանոնաւորուին, բայց, անշուշտ, ոչ բոլորը: Եկեղեցւոյ այս գրաւումը կը տեւէ 52 օրէ ի վեր: Առանց ինքնութեան թուղթի այս Ափրիկեցիներու շարժումը սկսած էր Մարտ 18-ին Սէն Թ'Ամպրուազ Եկեղեցւոյ գրաւումով (այս եկեղեցին ընտրուեր էր որովհետեւ Մալիցիներու մեծ գաղութը Մոնթրէօյլ կ'ապրի եւ Եկեղեցին մեթրոյի այդ գիծին վրայ կը գըտնուի) եւ Նեյուկը կը գտնեն ծայրայեղ ձախ (Քրիվինի) կուսակցութեան եւ կարգ մը անձնաւորութեանց որոնք իրենց այցելութիւններով զօրավիգ են անոնց: Վերջին օրերուն, Սէն - Պերնար Եկեղեցին այցելեցին Տիկին Տանիէլ Միթերան, փրոֆ. Լ. Շվարցընպերկ, դերա. Կայօ, Էմմանուէլ Պերար, Մարինա Վլատի եւայլն, եւայլն: Ցաւալի է որ կառավարութիւնը անել կացութեան մատնուած է, ժամանակ կորսնցուցած եւ այդ ժամանակը իրեն ի նպաստ չգործեց:

ԼԻԲԵԴ որ, յաջողած էր հեռացնել տալ Պաշտպանութեան Նախարար՝ Գրաչովը, նոյն պահանջը դրաւ Ներքին Նախարարին

(Շար-ը կարդալ Դ. էջ)

ՕՐԸ ՕՐԻՆ

ԱՐԱԳԱԾԻ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒ ԼՈՒՍԱՐԱՐԻՆ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Արագածի կողերուն, Բիւրականի մէջ մահացաւ գիտնականը որ կովկասեան լեռնաշխարհին կորսուած այդ անկիւնը վերածեց երկնային գաղտնիքներու լեզուն վերծանող կեդրոնի: Անով ան միամիտներ կը փոքրիկ Հայաստանի ձեռքէն բռնած տարաւ զայն զետեղելու տիեզերքի ուսումնասիրութեան ոլորտին միջազգային հեղինակութիւններու կարգին մէջ: Վ. Համբարձումեան եղաւ այն քիչերէն որոնք իրենց գործով լուրջ երանգ մը բերին "մեծութիւններ"ու շատ յաճախ երանական մեր դրամագլուխին: Տեղի ու անտեղի ամէն առիթի կրկնուած ինքնափառաւորման հայկական բացառապէս հարուստ մթերանոցը այսօր յանկարծ սնանկութիւն կը յայտարարէ նարծես երբ իրեն նման իսկական մեծութիւն մը արժանաւորապէս սահմանելու հարկը կը ներկայանայ:

Ցաւը այն է որ Արագածի վրայ իր վառած կանթեղը չկրցաւ լուսաւորել 88-ամեայ նամբուն վերջին հանգրուանները: Պատմութեան վերիվայրումները այնպէս ըրին որ վերջալոյսի մը ու արշալոյսի մը հակասութեան մէջ բռնուի այդ վախճանը: Առաջինով կը փակուէր անհատին փառաւոր նամբան, մինչ երկրորդով բուկիզք կ'առնէր հայկական նոր պետականութեան երթը: Ու այդ երթը՝ անկախութեան դժուարին նախաքայլերը, շատ մարզերու կարգին Բիւրականի աստղադիտարանին ալ չկրցան բնթացիկ խնամքը տանիլ: Բողոք ու ցաւ յայտնուեցաւ, յօդուածներ գրուեցան, ահազանգեր հնչեցին կացութեան մասին, բայց կաբելի չեղաւ խորհրդային շրջանի հոգատարութիւնը նարել աստղերու բիւրականցի խօսակիցին: Հասկնալի է որ դիւրին ալ չէր նման հաստատութիւն պահել, նախկին թափով աշխատանքի պայմաններ ապահովել անոր երկրի մը մէջ ուր գլխաւոր նիգերը կեդրոնացած են կայսրութեան մը փլատակներուն տակ չմնալու նպատակին վրայ:

Այսօր աչքերը փակած է Վ. Համբարձումեան, ապահովաբար լքուած իր Բիւրականէն ու անով՝ Հայաստանի միջազգային վարկէն կարեւոր գեղչին ալ ցաւով: Համաժողովրդական սիրոյ, պետական յարգանքի ու պատիւի արտայայտութիւններէն եաք իր գործն ու յիշատակը մեծարելու ամէնէն նշանակալի արարքը պիտի ըլլայ Բիւրականի ժանգերը մաքրելու միջոցներ նարել, որպէսզի նրկին լոյս տայ Արագածի համբարձումեանական կանթեղը:

Թ. ԱՐՓԻ

ՊՈԼՍՈՅ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Պոլսոյ Հայոց Գարեգին Պատրիարքը, Օգոստոս 7-ին, Թոքի վիրաբուժական գործողութեան մը ենթարկուեցաւ Փարիզի (Սէն - Տընի) սրտաբանութեան բուժարանը փրոֆէսօր Պերնար Անդրէասեանի կողմէ: Այս առընչութեամբ, Պոլսոյ Պատրիարքարանի Դիւանը հաղորդագրութիւն մը հրապարակած է Օգոստոս 8-ին, ուր կ'ըսուի ի մէջ այլոց. -

Ամեն. Ս. Պատրիարք Հայրը Փարիզի մէջ եւս քննուած է փրոֆէսօր Տօքթոր Պերնար Անդրէասեանի կողմէ, որ անհրաժեշտ եւ անյետաձգելի դատած է վիրաբուժական միջամտութիւնը: Մեր Հոգեւոր Պետը երէկ, 1996 Օգոստոս 7, ժամը 2.38-ին Փարիզի (Սէն - Տընի) Քարտիոլոժիք Քլինիքին մէջ ենթարկուեցաւ Թոքի վիրաբուժական գործողութեան, որ տեւեց շուրջ երկու ժամ եւ անցաւ չատ յաջող: Պատկ. Կրօնական Ժողովի Ատենապետ՝ Գերշ. Մեսրոպ Արք. Մութաֆեան, գործողութենէն առաջ եւ յետոյ Փարիզի մէջ խորհրդակցութիւն ունեցած է քլինիկի բժշկաց դասուն հետ: Նորին Ամենապատուութիւնը այժմ լաւ է եւ արդէն իսկ սկսած է ապաքինման շրջանը»:

ՀԱՅԱՍՏԱՆ

ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆԻ ԹԱՂՈՒՄԸ

Օգոստոս 14-ին եւ 15-ին յարգանքի յաջորդական հանդիսութիւններ տեղի ունեցած են Երեւան եւ Բիւրական Վիկտոր Համբարձումեանի մահուան առթիւ:

Գիտութեանց Ակադեմիայի դահլիճի սուգի արարողութիւնը սկսած է ընդհանուր ժողովով, զոր բացած է Ֆադէյ Սարգսեան: Իրենց մասնակցութիւնը բերած են նախագահ Լ. Տէր - Պետրոսեան, Ազգ. Ժողովի Նախագահ Բաբգէն Արարքցեան, վարչապետ Հրանտ Բագրատեան, Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Յարութիւնեան, երեսփոխաններ, գիտութեան եւ մշակոյթի գործիչներ, կրօնական դասու ներկայացուցիչներ:

Արարողութեան ընթացքին յայտնուած է որ Երեւանի Պետական համալսարանի աստղաֆիզիքայի բաժանմունքը (ֆաքիւլթէ) եւ «Գիտելիք» ընկերութիւնը վերանուանուած են Վիկտոր Համբարձումեան:

Նախագահ Լ. Տէր - Պետրոսեան իր խօսքին մէջ, չեշտած է. - «Այսօր հրաժեշտ ենք տալիս հայ ժողովրդի մեծագոյն անձնաւորութիւններից մէկին, որը ժամանակի ընթացքում պիտի լինվին բացայայտի իր մեծութիւնն ու դասուի մեր ժողովրդի 3000-ամեայ պատմութեան երախտաւորների շարքում»: Նախագահը յիշած է նաեւ Համբարձումեան քաղաքացիի կերպարը որ 88-էն եաք, դարաբաղեան հարցի բոլոր վճռական պահերուն աղդանուէր գործունէութիւն ցուցաբերած է:

Օգոստոս 15-ին, այս անգամ Բիւրականի մէջ է որ վերջին հրաժեշտի արարողութիւն մը տեղի ունեցած է, նոյն անձնաւորութիւններու ներկայութեամբ: Իր դամբանականին մէջ, պետական համալսարանի տեսուչ՝ ակադեմական Ռադիկ Մարտիրոսեան նշած է՝ «Երկնքում մարեց Վիկտոր Համբարձումեանի աստղը, բայց Վիկտոր Համբարձումեան աստղը յաւերժօրէն փայլելու է տիեզերքի հաւաստեղութիւնում»:

Ի ՅՈՒՇ ԻՐ ՄԱՀՈՒԱՆ 22ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ
(1974, ՕԳՈՍՏՈՍ 20)

ԱՆՏԻՊ ՆՈԹԵՐ ՇԱՀՆՈՒՐԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԷՍ(*)

ԳՐԻԳՈՐ ՔԷՕՍԷԵԱՆ

Սեպտեմբեր, 1961

Սէն - Ռաֆայէլ հասած եմ գալով ուղղակի Պէյրութէն: Գրեթէ շաբաթ մը ճամբորդած եմ նաւով եւ ապա Մարսէյլէն՝ գնացքով: Հայկական Հանգստեան Տան մուտքին ֆրանսացի հիւանդապահուհիի մը կուտամ Շահնուրի անունը: Կը դժուարանայ ճանչնալ: Կը սթափիմ, կուտամ իր ֆրանսական գրչանունը:

-- Ah... Monsieur Lubin, գրեթէ իր բացագանչէ ան: Անմիջապէս կ'աւելցնէ, սակայն, թէ չէի կրնար զինք տեսնել, որովհետեւ Պր. Լիւպէն անցուցած էր շատ գէշ գիշեր մը եւ այժմ կը տառապէր տենդէ: Բացատրեցի թէ կուգայի հեռուներէ եւ թէ ժամադրուած ըլլալով -- թէեւ չաբաթներ առաջ -- սպասուած այցելու մըն էի: Տուի անունս: Անշուշտ չէի կըրնար բացատրել հոգածու հիւանդապահուհիին, թէ իրողապէս ինծի համար այս այցելութիւնը ուխտագնացութեան մը բնոյթը ունէր եւ երազուած էր 1955-էն ի վեր, երբ սկիզբ առած էր Շահնուրի հետ բարեկամական թղթակցութիւն մը, ինչ որ երեք տարի ետք ինծի առիթը պիտի ընծայէր հրատարակելու յետպատերազմեան իր առաջին հատորը՝ «Թերթիս կիրակնօրեայ թիւը», որ պիտի հիմնուէր «Շահնուրի դարձը հայ գրականութեան»:

Շուրջ տասը վայրկեան ետք սանդուխներէն վար կ'իջնէր ինք, եւ կը յառաջանար արագօրէն, պիտի ըսէի՝ շա՛տ արագօրէն մանկաբարբար հիւանդի մը համար: Սակայն որքան մօտենար, նոյնքան նայուածքը կը սահէր գլխուս վրայէն: Այս երեւոյթը չէր բացատրուեր միայն մեր հասակի տարբերութիւններով: Անմիջապէս իրեն կ'երկարեմ ձեռքս քովէս սուրալով չհեռացած եւ կուտամ անունս.

-- Ի՞նչ, դո՞ւն ես Քէօսէեանը, կ'ըսէ զարմացած: Ես կը սպասէի տարիքաւոր անձի մը···:

Վեր կ'ելլենք իր սենեակը, ուր կ'երկարի անկողինին վրայ: Երեկոյեան, վերադարձէս առաջ (Շահնուր չի ծածկեր իր յուսախաբութիւնը որ նոյն օրը կը մեկնիմ (Փարիզ), հակառակ ընդդիմութեանս որ հանդիստ ընէ. ինծի հետ կ'իջնէ մինչեւ ծովափ, համբաւաւոր ֆրանսական Côte d'Azur-ը: Շահնուր սրամիտ ակնարկութիւններ կ'ընէր անցորդ կիներուն մասին.

-- Ասիկա հեռուէն գեղեցիկ կ'երեւի, բայց մի խաբուիր: Դէմքը տգեղ է, աչքերը ծուռ···

Կը նստինք սրճարան մը:

Հետեւեալ տողերով պիտի արտաբերեմ միայն Շահան Շահնուրի մտածումները եւ խօսքերը զանազան հարցերու շուրջ, զանց առնելով շուրջ հինգ ժամերու տեսակցութենէն ստացած տպաւորութիւններս, ունեցած ապրումներս եւ այլ մանրամասնութիւններ, խուսափելով նաեւ վերլուծումներէ, որոնք գրութիւնը կրնան խըճողել. Շահնուրի ուղղած հարցումներս նաեւ կարելի է կռահել իր խօսքերուն ընդմէջէն:

⁂

- Իմ գործերս չեմ կարդար: «Նահանջը» վերստին չեմ կարդացած, սակայն վերջերս կարդացի «Յարալէզները»: Շատ մը միտքեր, մասեր հիացած կը գտնեմ, ժամանակին գրուած՝ եւ հոն մնացած: Հիմա տարբեր պիտի գրէի···

Գործս թերութիւններ ունի, բայց իւրաքանչիւր գործ նէթէ թերութիւններ չունենար, երկրորդը աւելի կատարեալ չէր ըլլար: Ես գործիս թերութիւնները զգացի անմիջապէս որ «Նահանջ»ին հրատարակութիւնը վերջացաւ «Յառաջ»ին մէջ: Անկէ ի վեր մտածած եմ սրբագրել, reviser ընել, բայց աշխատանքի ուժը, souffle պակսած է, որովհետեւ ինձմէ ահագին ճիգ, սպառում կը պահանջէ ստեղծագործութիւնը:

⁂

-- Լեզուն պէտք է բնական ըլլայ: Մեր հայերէն գրական լեզուն արուեստական է, փնտռուած բառերով, ճիճիլի--պիճիլի: Մէկ կողմէն կամ շատ հասարակ է իբր խօսակցական լեզու, կամ շատ բարդացած, պճնուած, արուեստակեալ՝ ինչպէս Օշականինը, օրինակ: Լեզուն ճիշդ գործածած է միայն Թէքէեանը, որ միակն է ամէն ինչով, բայց անոր քով ալ զգալի է ճիգը, քրտինքը --heurté է: ··· Թէքէեանին քով ամէն ինչ վերջնականապէս յըստակ է, փլու բան չկայ լեզուին մէջ ··· Եղբա՛յր, պայմա՛ն չէ, ճի՛շդ չէ որ ամէն բան այդ ձեւով գրուի, պէտք է երբեմն ազատ թողուլ լեզուն, միտքը···

-- Չեմ սիրեր Շուշանեանը (իր գրականութիւնը), գլխաւորաբար իր narcissisme-ին համար:

⁂

-- Մեր արեւմտահայ գրականութեան մէջ կայ Զօհրապը, Մեծարենցը, Ինտրան: Գէշ չէ Երուխանը:

⁂

-- Միջակ խօսակիցներէ չեմ ախորժիր, կը հեռանամ: Կամ միջակէն վեր պէտք է ըլլայ որ հանոյք առնեմ խօսելէ, կամ վար՝ ինչպէս որ տեսար (Տան) սպասուհիին հետ ըրած կատակներէս···

⁂

-- Արեւելահայերէնը չեմ սիրեր: Չեմ կրնար ընդունիլ՝ որպէս լեզուիս աղճատումը: Անշուշտ ան ալ հայերէն է մերինին պէս ··· բայց տարբեր լեզու է: Կը սխալին անոնք, որոնք նո՛յնն է կ'ըսեն: Նո՛յնը չէ: Լեզուի մը շարահիւսութիւնը, նախադասութեանց կազմութիւնը, ածական մը առաջ կամ ետ դնելը ցոյց կուտայ լեզուին կտրած ուղին, հոգեբանութիւնը, մտածո՛ւմը:

⁂

-- Գրողի մը համար տեսութիւնը տարբեր է, գործադրութիւնը՝ տարբեր: Ամէն մարդ գեղեցիկ երազներ կրնայ ունենալ, կամ՝ ունի, բայց կարեւորը միայն անոր գործադրութիւնն է, իրագործումը: Արժէքը հո՛ս կը կայանայ լոկ:

⁂

-- Կ'ատեմ համայնավարութիւնը··· ո՛չ, տեսութեան մասին չէ որ կը խօսիմ, զիս հետաքրքրողը անոր գործադրութիւնն է՝ իբր գրող:

⁂

-- Պզտիկ եղած ատենս գլուխս մարմինիս համեմատ աններդաշնակօրէն մեծ եղած է: Ունեցած եմ շատ փափուկ կազմ: Արդէն ո՛ր գրողն է որ չէ ունեցած, չէ տառապած անձնականութենէն: Մանկութենէս գլխու ցաւ ունեցած եմ: «Նահանջը» գրելու ատեն իսկ ունէի գլխու ցաւ, առողջութենէս դժգոհ էի, կը տառապէի անքնութենէ: Գրելը ո՛չ միայն տաղանդի եւ գիտութեան հարց է, այլ նաեւ ֆիզիքական տոկունութեան, զօրութեան:

⁂

-- Լուսանկարչատան մէջ վարպետ retoucheur մըն էի: Կ'աշխատէի ութ ժամ եւ այդ զիս կը յոգնեցնէր: Ասոր համար որոշեցի տունը տանիլ գործերը, նուազ աշխատիլ եւ, անշուշտ, նուազ ալ շահիլ···:

⁂

Բ. ՀԱՆԴԻՊՈՒՄ

Սեպտեմբեր 25, 1970

«Յառաջ»ի խմբագրատուն այցելութեանս, Արփիկ Միսաքեան ինծի կ'ընէ մեծագոյն անակնկալը -- Շահնուր Փարիզ կը գտնուի եւ իջեւանած է մօտակայ պանդոկ մը: Զիս կ'առաջնորդէ պանդոկ, սակայն շուտով կը վերադառնայ իր խմբագրատան աշխատանքներուն:

Շահնուր ընկողմանած էր անկողինին վրայ, հագուած: Մնայուն ջերմ ունէր: Քովի սեղանէն առաւ երկու դեղահատ: Գիշերային քունը շատ կարճ էր, հակառակ քնաբեր դեղահատերու:

-- Քու դէմքդ հիմա պզտոր կը տեսնեմ...

Հոգեփոխութիւն մը զգալի էր: Հիմա կ'ուզէր աւելի մօտը գտնուիլ հաւաքական, կենդանի կեանքի մը:

-- Երկու օրէն պիտի վերադառնամ Home, ու դարձեալ պիտի վերսկսի առանձնութիւնս:

Կը խօսէր արագ, թեթեւ հեւքով մը:

-- Երէկ ինծի այցելեց Ռուբէն Մելիք եւ նուիրեց բանաստեղծութեան իր հատորը: Կարծիքս ժխտական է: Մելիք լաւ գիտէ ֆրանսերէնը եւ կրնայ յաջողութիւն մը գտնել, ի հարկին արձակի մէջ: Ըսի իրեն թէ արձակ գրէ: Բանաստեղծութիւնը շընչառութեան եւ ասոր կշռոյթին հետ կապուած հարց մըն է:

Խօսքը կը դառնայ Վահագն Դաւթեանի իր դէմ գրած յօդուածին շուրջ, որ այնքան մեծ աղմուկ հոսցուցած էր մեր մամուլին մէջ, Միջին - Արեւելքէն մինչեւ Ատլանտեանի ափերը: Գրական բանավէճէ անդին հարցը վերածուած էր հասարակական իրարանցումի, որուն մեկնակէտը հանդիսացած էր Պէյրութի «Սփիւռք» շաբաթաթերթը՝ որ վերհրատարակած էր երեւանեան թուականներուն գրուած Շահնուրի «Ազատն Կոմիտասը», առանց գրութեան թուականը նշելու:

-- Զիս խռովողը Դաւթեանի յօդուածին մէջ ոչ այնքան իր սխալ մեկնակէտն էր, որքան իմ անձնական, մտերիմ կեանքիս միջամուխ ըլլալը: «Հայութենէ հեռացած եմ», եղեր, Home-ի մէջ «հայերէն հատոր մը իսկ չունիմ» եղեր: Փոքր սենեակիս մէջ տեղ կա՞յ միթէ որ հոն կարենամ զետեղել գրադարան մը: Գիրքերուս պահարանը կը գտնուէր Home-ի նկուղներին մէջ, իսկ ինչ կը վերաբերի արեւելահայերէնի մասին, Թէքէեան անոր աւելի ծանր տողեր նուիրած է: Մտիկ ըրէ···

Շահնուր կը բանայ գիրք մը ու կը սկսի կարդալ, շեշտը դնելով հետեւեալ տողերուն վրայ.

··· Հայպա հոն, կովկաս, ուր կամաց կամաց,
Կը դառնայ լեզուն գնչուի լեզու
Եւ հի՛ն, վեհափառ Մասիսի դիմաց
Խե՛ղճ հայերէն տառ կ'ըլլան լոկ քրուն
Գործիք մը՝ հայկայ լեզուն մատնելու···

Քերթուածը, որ կը կրէր «Գեղօն հայ տառերուն» խորագիրը, տեղ գտած էր Եգիպտոսի մէջ Թէքէեանի յետ մահու հրատարակուած «Ամբողջական Գործեր»ու մէկ հատորին մէջ: Շարքը պիտի մնար կիսատ:

Կէսօրին Արփիկ Միսաքեան կը վերադառնայ եւ երեքով կ'երթանք ճաշարան: Հակառակ իր ջերմին, անքնութեան եւ հաւանաբար ցաւերուն ի՛նչ կենսախայտ Շահնուր: Եւ միշտ զուարթախոհ:

(Մնացեալը յաջորդով)

(*) Շահնուրի այս նօթերը մեծ մասամբ լոյս տեսած են Գրիգոր Շահինեանի Շահնուրի նուիրած մենագրութեան մէջ («Կենսագրութիւն եւ Մատենագիտութիւն Շահան Շահնուրի», 1981, հրատարակութիւն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Պէյրութ, Լիբանան), Այսուհանդերձ, առաջին անգամն է որ «Նօթեր»ը գրեթէ իրենց ամբողջութեամբ կը հրատարակուին հայ մամուլին մէջ: Անշուշտ դեռ առանձին հատորով հրատարակութեան կը սպասէ Շահնուրէն «Նամականի» մը, որուն պէտք է նախաձեռնէ նիւթին հմուտ աշխատասէր մը: Ու այս աշխատանքը պէտք է կատարուի այլեւս առանց յապաղումի, եւ հասկնալիօրէն, մե՛ր սերունդի գրիչներուն կողմէ: Գ. Ք.

ԱՌԱՆՁԻՆ

Ելքը դժուար է: Ձիւնի մէջէն ոտքերս հազիւ ճամբան կը բանան: Բնազդաբար կը շարժին, մէկ - երկու, մէկ - երկու, առանց հրամանի, մեքենայի մը հատիկներուն պէս:

Շուրջս, արծաթի պէս, ջինջ, ծանր ձիւնը կը խեղդէ բնութիւնը, թուփերը, թմրած խոտերը ու պահուըտած արահետը: Ծեր տխտաններ, ուսերը ծանրաբեռնուած, ծառերը միայն կրնան իրենց հըսկայութենէն քաշել սառած օդը:

Առանձին եմ: Յանցանքս մեծ կը զգամ անապականութեան մէջ հետքերս ձգելով:

Ուշ գիշեր, գագաթին կը հասնիմ. Կըրակին քովը, ապակիէ աստղազարդ երկինքին տակ, միտքս կ'երթայ արարչութեան օրերուն: Երազի մը պէս կ'ըմբըռնեմ շուրջիս կատարելութիւնը, Արարիչին ձեռքը ամէնուրեք կը զգամ: Կրակին բոցը միայն, տարածելով արիւն շուրջի ձիւնին վրայ կը յիշեցնէ ինծի, բաժինս ներկայ ժամանակէն: Միւսնե՞րը: Անշարժ, մարած պատկեր մայր բնութենէն:

Արեւելքը սկսաւ հուր սփռել արծաթէ - կուզ լեռներուն վրայ: Լռութեամբ, արեւը աշխարհին ծայրը կը ժայթքի: Յոգնած, մարած կրակին քով, հեռզհետէ քունին մէջ կը սուզուիմ: Վերջէն, ամպ մը տխուր գիս կը գիտէ կէս առանձնութեան:

Փորիս պահանջները արթնցուցին զիս: Արեւը գլխուս վրայէն կ'անցնի օրը կիսելով: Վերստին կրակը կը վառեմ: Բոցի վրայ կը դարձնեմ միսած սալ ու կտոր մը սոխ: Պտոյտներուս ատեն երբեք աւելի բան չեմ առած: Կ'ըսուի թէ կերակուրը կը թմրեցնէ հոգին, բնութենէ առած հաճոյքը շատ պէտք ունի ապրումի:

Կարմրցած ձեռքերովս հացի չերտերը կը տանիմ բերան առանց հոգ տալու, ուշադրութիւնս դուրսն է, անհուն, ջինջ, քարացած ծովերուն վրայ:

<table><tr><td>ԴԱՂՁՈՒԹԻ ԴԱՂՁՈՒԹ</td></tr></table>

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ Կաթողիկոսին այցելութիւն մը տուած է, Օգոստոս 12-ին, Հայաստանի Համայնավար կուսակցութեան Կեդր. Կոմիտէի Ա. քարտուղար եւ նախագահական թեկնածու Սերգէյ Պաատլեան, որու կ'ընկերանար Լիբանանի Համայնավար կուսակցութեան մէկ պատուիրակութիւնը: Ս. Պաատլեան Արամ Ա.-ին պարզած է Հայաստանի ներկայ վիճակը, տնտեսական, ընկերային թէ քաղաքական երեսներով: Կաթողիկոսը իր կարգին շեշտած է Հայաստանի Հանրապետութեան հզօրացումը որպէս կարեւոր ազդակ: Այդ գծով անհրաժեշտ է որ Հայաստանի եւ Սփիւռքի փոխ - յարաբերութիւնները եւ գործադրութիւնը աւելի առողջ հիմերու վրայ դրուին: Հուսկ, Արամ Ա. խօսած է Կիլիկիոյ կաթողիկոսութեան գործունէութեան մասին, ներքին ազգային, մշակութային եւ յարաբերական երեսներով,

Հիացումիս վերջին պահերը կ'ապրիմ: Հին սովորութիւնս կրակը մարել կուտայ: Վտանգ չկայ, բայց անակնկալ հուր մը կրնայ աւրել անգտնելի գեղեցկութիւնը:

Պայուսակը ուսիս, ոտքի տակ կ'առնեմ վերադարձի ճամբան: Աւելի կանուխ կը թուի ինծի վերադարձը: Արդէն նոր ապրումներս յիշատակ դարձան:

Կ'երթամ հոն ուր քաղաքին ձայները կը տանջեն ոգին, ուր փողոցի ցեխերուն մէջ պիտի չգտնեմ հոգիիս հանգիստ, ուր իրական կեանքը կարօտնալ պիտի տայ միայնակ ամպը, առանձին եսս ու անհուն սրբութիւնը:

ԵԶՐԱՍ ՔՀՆՑ. ՊՈՂՏԱՆ

Երուսաղէմ

ԳԱՐԵԳԻՆ Ա.Ի ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՐԺԱՆԹԻՆ

Օգոստոս 7, առաւօտեան ժամը 9-ին Պուէնոս - Այրէսի օդակայանը ժամանեց Գարեգին Ա. որ կուգար Մոնթէվիտէօ-յէն: Իրեն կ'ընկերանային Եւրոպայի Հայր. Պատուիրակ եւ Փարիզի Հայոց առաջնորդ Գիւտ Արք. Նագդաշեան, Պրա-զիլի թեմի առաջնորդ Տաթեւ Արք. Ղա-փլեան, դաւազանակիր Բագրատ Վրդ.:

Կաթողիկոսը որ Արժանթինի հանրա-պետութեան պատուոյ հիւրն էր դիմաւո-րեցին Արժանթինի եւ Չիլիի առաջնորդ Գիսակ Եպիսկոպոս Մուրատեան, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ հոգաբարձութեան ատենապետ Խտուարտօ Գարամեան, Հայաստանի դեսպան Վահան Տէր - Ղեւոնդեան եւ ազգային մարմիններու ներկայացուցիչներ:

Ժամը 11.30-ին ան ժամանեց Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Եկեղեցին: Արտաքին փողոցը լեցուն էր աշակերտներով, դրօշակակիրներով եւ հաւատացեալներով: Ներկայ էին նաեւ քոյր եկեղեցիներու պետերը: Չարականներու երգեցողութեամբ ան քալեց մինչեւ Տաճար որ բերնէ բերան լեցուն էր:

Բարի գալուստի խօսք արտասանեց Գիսակ Եպիսկոպոս, ապա Կաթողիկոսը ողջունեց հաւատացեալները: Շեշտը դրաւ Հայու սրտին զարգացման վրայ: Ըսաւ թէ 1990-ական թուականներու Հայը այն սերունդն է որ կատարուած կը տեսնէ բոլոր այն ազգային իղձերն ու իտէալները որոնց համար մեր նախորդ սերունդները արիւն թափեցին: Անկախ Հայաստանի Եկեղեցին վերագտած էր աշխատանքը. ասիկա կը նշանակէ թէ ամէն բան պէտք է վերանորոգուի. պէտք է վերանորոգուի նաեւ Հայուն սիրտը, ազգային միտքը:

Եկեղեցիէն ժողովուրդը ու Կաթողիկոսը անցան «Հայ Կեդրոն»ի սրահը ուր գաղութին անունով խօսք առաւ Է. Գարամեան, որմէ ետք տեղի ունեցաւ աչքհամբոյր:

Երեկոյեան Սեզար Փառք պանդոկին մէջ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն մը, կազմակերպուած՝ «Պօղոս Արզումանեան Միութեան» ու անոր ատենապետ Տիկին Մեծատուրեանի եւ Միրանոյշ Արզումանեան - Մեծատուրեանի կողմէ:

ԷՔԻՒՄԷՆԻՔ ՀԱՒԱՔ

Օգոստոս 8-ին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ ժամը 11.30-ին տեղի ունեցաւ էքիւմէնիք աղօթք, մասնակցութեամբ՝ Արժանթինի Կաթողիկէ Եկեղեցւոյ հովուապետ եւ Պուէնոս - Այրէս քաղաքի ծիրանաւորին, եւ Ռուս Օրթոտոքս, յոյն, արաբ, ասորի, աւետարանական, անկլիքան, իսլամ ու հրեայ կրօնաւորներու, ներկայացուցիչներու: Ներկայ էր նաեւ հայ կաթողիկէ եկեղեցիէն Վարդան Եպիսկոպոս Պօղոսեան եւ Հայ Աւետարանական Եկեղեցւոյ պատուելին:

Գարեգին Ա. նախագահեց հանդիսութեան, ընկերակցութեամբ իր շքախումբին: Հանդիսութեան ընթացքին խօսք առին կարդինալ Ֆուարտաչինօ եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ Հ.Բ.Ը.Մ.

Երեկոյեան Գարեգին Ա. այցելեց Հ.Բ.Ը.Մ.-ի ակումբը, ուր հանդիպում ունեցաւ Մարի Մանուկեան Վարժարանի աշակերտութեան, ուսուցչական կազմին եւ ծնողքներուն հետ: Գործադրուեցաւ կարճ բայց ճոխ յայտագիր մը:

Խօսք առին տնօրէնուհի Ռոսիթա Պալեան եւ աւարտին Գարեգին Ա., Երգեց միութեան «Շնորհալի» երգչախումբը եւ Մարի Մանուկեան վարժարանի երգչախումբը ղեկավարութեամբ՝ Տիանա Սարաֆեանի:

Նոյն երեկոյեան տեղի ունեցաւ ժողովրդական ճաշ, ներկայութեամբ Միութեան պատուոյ եւ բարերար անդամներու, ինչպէս նաեւ Հ.Բ.Ը.Մ.-ի անդամներու:

Մասնաճիւղին անունով խօսք առաւ ատենապետ՝ Վահրամ Հայրապետեան: Կաթողիկոսին խօսքով վերջ գտաւ հանդիսութիւնը:

Հ.Օ.Մ.-Ի ԾԵՐԱՆՈՑԸ

Ժամը 17-ին Գարեգին Ա. այցելեց Հ.Օ.Մ.-ի Յովհ. Տիարպէքիրեան ծերանոցը ուր շատ սիրալիր զրոյց ունեցաւ մեր պապիկներուն հետ, ձայնակցելով իրենց երգերուն,

Օգոստոս 9 եւ 10-ին Գարեգին Ա. այցելեց Գորտոպա, հանդիպում ունենալու տեղւոյն համայնքին հետ:

ԹՂԹԱԿԻՑ

ՍՓԱԿԷԹԹԻԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Իտալական հանրային կարծիքը կրակ կը ժայթքէ Միացեալ - Նահանգներու դէմ որոնք իրենց արտադրութիւնը հրապարակ քշելու մտածումով որոշած են կարելի բոլոր ձեւերով արգիլել իտալական սփակէթթի-ին երկիր մուտքը: Առաջին ճար մը եղած է մաքսատուրքերու անհամեմատական յաւելումը: Ջայրոյթ յայտնող աղաղակներ կը պահանջեն որ պատերազմ յայտարարուի ղոգա - գոլային, ամերիկեան ժապաւէններու դէմ: Իտալացին կըրնայ հանդուրժել որ ծաղրանքի առարկայ ըլլայ Վատիկանը, Լա Մամմա, բայց ոչ իր սփակէթթին: Հոն հարցը կը փոխուի արմատապէս:

1960 - 1970-ական տարիներուն Ամերիկացիները մարդ գլուխ տարեկան հազիւ 3 քիլօկրամ սփակէթթի կը սպառէին, այսօր այդ քանակութիւնը 14 քիլօկրամի բարձրացած է, ճիշդ է որ ասիկա տակաւին բաւական հեռու է տարեկան 30 քիլօկրամի իտալական սպառումէն, բայց մեծ հաշուագէտ մը ըլլալու պէտք չկայ տեսնելու համար որ ամերիկեան սպառումը կը կրկնապատկուի ամէն տասը տարին: Ասիկա կը նշանակէ որ ապրանքը մեծ պահանջ ունի Միացեալ - Նահանգներ, քանի որ իտալականին կէսին հաւասար սպառումն ալ մեծղի քանակութիւն մը կը ներկայացնէ, նկատի առած երկրին 250 միլիոն բնակչութիւնը Իտալիոյ 69 միլիոնին քով:

Իտալացիներու ներկայի խուճապին պատճառներէն մէկն ալ այն է որ Միացեալ - Նահանգներու մէջ արդէն կորսընցուցած են իրենց ազգային միւս ճաշին՝ փիցցա-յին պաշտպանութեան պայքարը ու չեն ուզեր որ սփակէթթին ալ նոյն վախճանը ունենայ: Այսօր նոյնիսկ Եւրոպայի մէջ ամէն կողմ, բոլոր ձեւերով մեծաղաղակ ծանուցումը կը կատարուի ամերիկեան փիցցա-յին ու քիչեր կ'անդրադառնան իտալականին նրբութեանց անոր լեռ ու ձոր տարբերութեան: Թէեւ Մաք Տոնալտի չափանիշերը իւրացուցած որկորներէ նման անդրադարձ յուսալն ալ ռոմանթիք լաւատեսութիւն է:

Միացեալ - Նահանգներու մէջ իտալական սփակէթթիի վաճառքը 1995-ին 600 միլիոն ֆրանքի չափ եղած է. ամերիկեան տնտեսութեան 30 հազար միլիառ ֆրանքին մէջ այդքա՞ն մեծ բան է ասիկա, հարց կուտան Իտալացիները, որ նախագահ Գլինթըն մաքսային հարկը կը հասցնէ 50%-ի, թշնամացնելով ամբողջ Իտալիան: Ցաւելեալ, կը դատապարտէ իր քաղաքացիները ուտելու տեղական սփակէթթին որ ոչ նոյնքան լաւ արդիւնք կուտայ եփելով, ոչ ալ թացանը ներծծելու նոյն յատկութիւնը ունի: Իտալացիները կը մտածեն որ այս պարագաները այնքան ալ հոգը չեն ամերիկացի նախագահին որ հաւանօրէն կը նախընտրէ hամպուրկէրը եւ որուն կինը ոչինչ եփել գիտէ: Ու իտալացի լրագրողը որ գրած է այս մասին, սրբազան պայքարի մը կոչ կ'ուղղէ իր հայրենակիցներուն, Գոգային, Փէփսիին, Պիք Մաք-ին եւ Ֆորտին դէմ: Վըստահ է որ ամբողջ ժողովուրդը միաձայն, մէկ անձի նման պիտի արձագանգէ այդ կոչին, տալով միակամութեան անկարելի օրինակ մը:

ՔԱՂՀԱՆ

ԺՊԻՏ

Հայկական ռադիոյին հարցնում են.

– Ի՞նչ է փիլիսոփայութիւնը ընդհանրապէս:

– Սեւ կատու որսալ մութ սենեակում:

– Իսկ մարքսեան փիլիսոփայութի՞ւնը:

– Մարքսիստական փիլիսոփայութեան դէպքում սենեակում կատու չկայ ընդհանրապէս:

– Իսկ մարքս – լենինեա՞նը:

– Որսորդներից մէկը ժամանակ առ ժամանակ բղաւում է, որ կատուին բռնել է:

***

Դասախօսն ասում է.

– Ա. քաղաքում էլեկտրակայան է կառուցուել...

Նրան ընդհատում են.

– Ես նոր եմ այնտեղից եկել: Ոչ մի էլեկտրակայան էլ չկայ:

Դասախօսը շարունակում է.

– Բ. քաղաքում նոր քիմիական գործարան է կառուցուել...

Նրան նորից են ընդհատում.

– Ես մի շաբաթ առաջ եմ այնտեղ եղել: Ոչ մի գործարան էլ չկայ:

– Իսկ դուք քիչ դես ու դէն թափառէք եւ փոխարէնը թերթ կարդացէք, – պատասխանում է դասախօսը:

***

– Ինչպիսի՞ տեսք կ'ունենայ մարդը կոմունիստական ապագայում:

– Նա կ'ունենայ փոքր ու թոյլ ձեռքեր, որովհետեւ նրա փոխարէն ամէն ինչ մեքենաները կ'անեն, փոքր ու թոյլ ոտքեր, որովհետեւ նա միայն մեքենաներով կ'երթեւեկի, շատ փոքրիկ ստամոքս, որովհետեւ կը սնուի լոկ հաբերով, եւ հսկայական գլուխ, որովհետեւ անընդհատ ստիպուած է մտածել, թէ որտեղից ձեռք բերի այդ հաբերը:

ԿՂԶԻՆ ԵՒ ՄԻ ՄԱՐԴ

–վիպակ–

ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ

Կարգադրիչները նշաններ են անում, եւ Թափօրը նորից շարժւում է: Առաջանում է գիւղաքաղաքի ձախ կողմում բարձրացող բլրան ուղղութեամբ: Նեղ փողոցների կատարին կախուած խարխուլ պատշգամներից ծաղիկներ են նետում: Լուսաւորուած կամարների ելեկտրական լամպերը բոցկլտում են: Պայթուցիկները տրաքւում են: Հրախաղերը հեռանկարում են ամպերին:

Թափօրը կանգ է առնում այս կամ այն եկեղեցու առջեւ, ուր սպասում են սըրբոհիները: Ձիւլ մի տենոր երգում է մի տաղ, եւ ձայնը կլկլալով վեր է բարձրանում ձայների սանդուխների աստիճաններով: Ներսից դուրս են բերում ամբողջովին ճերմակ հագած, գլխին պսպըղուն մի թագ կպցրած, սրբուհու արձանը: Մարդկանց ուսերի վրայ տատանուելով, նա իր սեւ աչքերը յառում է դէպի երկինք, կարծես լսում է աստղերին,

Նորից շարժւում են: Մտնում են մի ուրիշ նեղ փողոց, սեղմւում, երկարում եւ լոյսերի հեղեղների տակ կանգ առնում մի նոր եկեղեցու առջեւ: Կրկնում են նոյն տաղը եւ դուրս բերում վարդագոյն հագած մի արձան:

Երբ Թափօրը վերադառնում է, ծռում դէպի աջ, իջնում քարափի ուղղութեամբ, նրա առջեւ բացւում է մի հրաշալի տեսարան: Մօտակայ բլուրները, հըսկայական նաւերի նման, լուսաւորուած են բազմահազար ճրագներով: Թեթեւ մի քամի փչում է նրանց բոցերի վրայ եւ թւում է թէ բլուրները շարժւում են:

Ձախ կողմից ծովը ծփում է, կայծկլտող արտացոլումներից ծեծուած: Ջրկնորսների բոլոր մակոյկները զարդարուած են դրօշակներով եւ գոյնզգոյն լոյսերով: Մերթ ընդ մերթ հրթիռներ են ժայթքում, վազում վեր եւ երփներանգ անձրեւով վայր թափւում: Ամբողջ դաշտանկարը տեղափոխւում է արհեստական մի աշխարհ: Ջայները, լոյսերը, գոյները, միացած, մտնում են անվերջական մի մթնոլորտ: Գիւղաքաղաքը, իր աղօթ եւ քրտինքը մոռացած, ման է գալիս թըղթից, հրթիռներից, հայելիի փշրած կտորներից, թիթեղի պսպղումներից բաղադրուած հէքեաթային մի լաբիւրինթոս:

Թափօրը, երգելով եւ աղաղակելով, առաջանում է ծովի եզերքով, հասնում ուրիշ մի եկեղեցի, մի քանի րոպէ կանգ առնում, որպէսզի թանկ վճարուած նըւագախումբը կարողանայ իր շեփորների ձայները ղրկել մօտաւոր բլուրներին, ապա՝ կամաց շարժուելով, իր դրօշակները ծփծփացնում է, իր խաչերը եւ մետաղները վեր ցցում, վերադառնում եւ իջնում դէպի փոքրիկ նաւամատոյցը:

Մօտենում է թէ չէ՝ հեռւում կանգնած երկու փոքրիկ շոգենաւերը, ամբողջովին լուսաւորուած, սկսում են սուլել: Դիմացի քարափից բարձրանում է մեծ մի հրթիռ եւ մոլեգնած ծաղիկի նըման օդը պատռում հազար գոյներով:

Շքերթը կանգ է առնում:

Սրբերին եւ սրբուհիներին ուսերի վըրայից զգուշութեամբ վայր են իջեցնում եւ, նրանց երեսները դէպի ծովը դարձնելով, կանգնեցնում են նրանց համար շինուած պատուանդանների վրայ:

Այստեղից նրանք պիտի դիտեն իրենց ի պատիւ սարքուած հրավառութիւնները:

Ահ, ի՞նչ են մտածում փայտէ այդ արձանները:

Երկիրը ժամ է գալիս: Հսկայական հրթիռամբերը պայթում են մէկը միւսի ետեւից եւ երկինքը պեղում են միլիոնաւոր կրակներով: Ամբոխը մխանում է նրանց ողեւորուած ոռնոցներով:

Ծովը կայծկլտում է: Երկինքը ալեկոծւում է կրակներով եւ գոյներով: Կարծես տեղի է ունենում աշխարհի փլուզման առաջին գործողութիւնը: Աստղաբաշխական կեղծ ողբերգութեան մի հըսկայական բեմադրութիւնը: Հէքեաթի վերջը,

Երբ պայթում է վերջին հրթիռը՝ ամենամեծը եւ ամենահրաշալին, երկինքը կտրւում է վառուած թուղթերով եւ հեղեղի նման վայր թափւում: Մութը իր տափակ ոտքը դնում է գետնի վրայ, եւ ամէն ինչ մարւում է:

Տօնը վերջացել է:

Միլտորէտին ճանապարհ դնելուց յետոյ, վերադարձել եմ տուն: Այլեւս բոլոր ծանօթները եւ բարեկամները մեկնել են:

Աշունը սկսել է չարանալ: Ամէն ինչ դեղին է եւ ցուրտ: Օդը լեցուել է վայր թափուող տերեւներով, եւ քամին պատշգամբիս վրայ վիզը ծռում է գանգատւում:

«Լուսաւոր Լերան» կատարին խոժոռ ու գորշ ամպեր են ժողովւում: Ծովը բարկանում է եւ իր գլուխը զարնում ժայռերին: Կարծես մէկը՝ բարկացած եւ անհանդիստ՝ ման է գալիս կղզու վրայից եւ իր ոտքերը տրոփում քարերին:

Ես էլ պատրաստւում եմ մեկնել:

Ես, պայուսակս, մի քանի գրքեր, անձրեւանոցս եւ վերարկուս:

(Շար. 50 էւ վերջ)

(Շար․ Ա․ էջէն)

համար, ստանալէ ետք ամբողջական վկայութիւններ Չէչէնիոյ համար։ Լեբէդի համար Կուլիկով (Ներքին նախարարը) գլխաւոր պատասխանատուներէն է Չէչէնիոյ ողբերգութեան։ Օգոստոս 19-ին, Ելցին դեռ ընթացք չէր տուած այս պահանջին։

ԱԼԺԵՐԻՈՅ «Էլ Վաթան» թերթը միայն Օգոստոս 18-ին կը յայտնէր որ երեք օր առաջ քաոմնելի ջարդ մը եւս գործըւած էր, Ալժէէն 200 քիլոմեթր հեռու Այն Ուսերա։ 17 երիտասարդներ են, 17-էն 25 տարեկան որոնք մորթուած են իսլամական խումբի մը կողմէ։ Այս խմբակը կեցուցած է հանրակառքը ուր կը գտնուէին, վար առած են երիտասարդները ու ջարդած։ Կ՚ըսուի թէ ջարդին պատճառն այն է որ չեն ուզած միանալ իսլամականներուն, Օգոստոս 19-ին, «Ալ - Հայաթ»ի համաձայն, Շաբաթ օր ալ (Օգոստոս 17) 63 հոգի ջարդուած են։

ԺԼՕՏԻ ԱՆՏՐԷ - ՏԷՀԷ, առաջին Ֆրանսուհին է որ անջրպետ արձակուեցաւ Օգոստոս 16-ին, Ռուսաստանի Բայկոնուր անջրպետակայանէն։ 39 տարեկան, պատրաստութեամբ բժիշկ (յօդացաւի եւ ջղային հիւանդութեանց մասնագէտ), Գ․ Անտրէ - Տէհէ, 14 օր պիտի մնայ այնբանաւուն մէջ։

ՊԱՊԻՆ առողջական վիճակը անգամ մը եւս խնդրոյ առարկայ եղաւ եւ չշուկներու նիւթ Աստուածածնայ տօնին առթիւ, երբ Գասթէլ Կանտոլֆոյի ամարանոցի պատշգամէն իր օրհնութիւնը տուաւ հաւաքուած հաւատացեալներուն, բայց, շատ յոգնած կը թուէր եւ ձայնն ալ դողդոջ էր։ Վատիկան, սակայն, ապահովութիւն տուաւ թէ աճաճներու որու ենթարկուած էր (աղիքներու) անբնական ոչինչ ցոյց տուած էր եւ թէ Յովհ․ Պօղոս Բ․ պիտի կարենար կատարել նախատեսուած ճամբորդութիւնները (Սեպտեմբերին) Հունգարիա եւ Ֆրանսա։

ԺԸՆԵՒԻ մէջ, հիւլէական ապագինման բանակցութիւնները, որոնք կը տեւեն երեք տարիներէ ի վեր, կէս ճամբան մընացին յանկարծ Հնդկաստան ընդդիմանալով ծրագրին, Այս ժխտական դիրքը պատճառ է որ այլ երկիրներ (ի մասնաւորի՝ Փաքիստան) հետեւին իրեն։ Զինացիները դժգոհ չեն Հնդկաստանի այս դիրքէն որ իրենց գործին կուգայ։

ՊՈՊ ՏՈԼԻ ընտրապայքարին գլխաւոր զէնքը կը նկատուի իր կինը որ շատ ջերմ հանդիպում մը տուեղծած է Սան Տիէկօ, հանրապետական համագումարի ընթացքին, ուղղակի խօսակցութիւններ ունենալով ներկայ հանդիսականներուն հետ։ Ան երկու անգամ նախարար եղած է Ռեկընի եւ Պուշի օրով ու քաղաքական ասպարէզէ հեռացած, ամբողջովին նուիրուելու համար իր ամուսնոյն ընտրապայքարին։ Պօպ Տոլի գլխաւոր նշանախօսքերն են՝ Աստուած, ընտանիք, պատիւ, պարտականութիւն, հայրենիք։ Ան, ինչպէս, բոլոր թեկնածուները, շատ հրապուրիչ խոստումներ կ՚ընէ եւ բուռն պայքար կը մղէ Գլինթընի դէմ, Անոնց որոնք կ՚առարկեն թէ ծեր է (73 տարեկան), կը հակադդէ ձաղկելով 50 տարեկաննոց սերունդը (Գլինթըն), նախապատուութիւն տալով փորձառութեամբ ստացուած իմաստութեան։

ՏԱՔՍԻ լիսէ Պորտայի անգլերէնի փըրոֆէսէօրը յարձակման ենթարկուած է առջի օր, փողոցը, երկու ուսանողներու կողմէ որոնցմէ մէկը կ՚ուզէր վրէժ լուծել, որովհետեւ անոր կը վերագրէր իր առժամեայ արտաքսումը։ Դասախօսը ծանր հարուածներ ստացած է կնոջը աչքերուն առջեւ եւ մահաքունի մէջ հիւանդանոց փոխադրուած ուր մեռած է 24 ժամ յետոյ։

ԱՄՄԱՆԻ մէջ, բուռն ցոյցեր տեղի ունեցած են հացի գինին յաւելման դէմ, Օգոստոս 17-ի Ուրբաթ օրուան աղօթքէն ետք։

ԼԻԲԱՆԱՆԻ երեսփոխանական ընտրութիւններու առաջին շրջանին (Օգոստոս 18) մթնոլորտը շատ լարուած էր եւ բախումներու ընթացքին ալ մէկ հոգի մեռած է։ Լեռնալիբանանի շրջանը (մեծամասնութեամբ քրիստոնեայ) մասնակցութիւնը 30-էն 40% եղած է, մինչ միայն 13,5% էր չորս տարի առաջ։ Եթէ այս կէտը հաստատուի կը նշանակէ որ պոյքոթի կոչերը գործ ըրաւ ընդդիմութիւնը ձախողած են։ Անկանոնութիւններ ալ նկատուած են։

ՉԷՉԷՆԻՈՅ համար զօրավար Լեբէդ որեւէ լուծումի չկրցաւ յանգիլ եւ խաղաղութեան իր ծրագիրն ալ տեղ քայլ կ՚ընէ։ Ոչ մէկ հրադադարի շուրջ կարելի եղաւ համաձայնութեան գալ։

ԻՆՏԻԱՆԱՊՈԼԻՍԻ թենիսի մրցաշարքէն արտաքսուեցաւ ողիմպիական ախոյեան Աղասի ծանր հաշհոյանքի մը պատճառաւ զոր ըրած էր իրաւարարին։ Ֆրանսական ձայնասփիւռը, որ, թէեւ ամօթխածութենէ չի տառապիր, յայտնեց թէ չի կրնար կրկնել այդ հայհոյանքը։

«ՅԱՌԱՋ»Ի ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

71ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻՒ

ՄԱՐՍԷՅԼ․ - Տէր եւ Տիկին Գէորգ Զալըղեան 1000 Ֆր․։

ՆՈՒԷՐՆԵՐ

Տէր եւ Տիկին Անդրանիկ Սարգիսեան իրենց ամուսնութեան 50-րդ տարեդարձին առթիւ (1946 -- 1996) 200 Ֆր․ կը նուիրեն «Յառաջ»ին։

***

Տարօն Տուրուբերանի Հայրենակցական Միութեան վերակազմութեան 20-րդ տարեդարձին առթիւ (1976 - 1996) «Յառաջ»ին 200 Ֆր․։

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Վեթերան դաշնակցական, Կապոյտ Խաչի 50 տարուայ անդամ, Հ․ Ե․ Ը․ Մ․ի ֆութպոլի խումբին տարիներու վարիչ եւ բարերար Պր․ Կարապետ Սապունճեանի մահուան առթիւ՝ Կապոյտ Խաչի Վիէնի Սեւան մասնաճիւղը իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ Այրիին՝ Տիկին Ալիս Սապունճեանի, զաւակներուն եւ ընտանեկան բոլոր պարագաներուն։

Այս տխուր առթիւ մասնաճիւղս 300 ֆրանք կը նուիրէ փոխան ծաղիկի, տեղւոյս Անի խումբին։

Ի ՅԻՇԱՏԱԿ

Տիկին Մաալէն Փափազեան 1000 Ֆր․ կը նուիրէ «Յառաջ»ին իր ամուսնոյն՝ Գէորգ Փափազեանի մահուան 8-րդ տարելիցին առթիւ։

***

Տիկին Արփինէ Աւետիսեան 1000 Ֆր․ կը նուիրէ «Յառաջ»ին Գէորգ Փափազեանի մահուան 8-րդ տարելիցին ի յիշատակ։

ARARAT

Orchestre Instrumental de Erévan

à MARSEILLE
Vendredi 23 Août à 20 h 30

Eglise du Sacré Cœur
71, avenue du Prado, 13008 Marseille
(Métro Castellane ou Périer)

au programme :
Katchadourian, Kouprevitch,
Mozart, Low, Offenbach ...
et des œuvres classiques arméniennes

Entrée 60F

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Մայր ՀՄՄ․--ի 75-ամեակի եւ
Ֆրանսայի ՀՄՄ․--ի Մարտիկ
մասնաճիւղին 10-ամեակի
ճաշ -- պարահանդէսը
Հոկտեմբեր 12-ին
Orée du Bois (Porte Maillot)

ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐ

ՍԻՐՏ ՍՐՏԻ

-- ԳՐԱԿԱՆ ԷՋԵՐ, ՅՕԴՈՒԱԾՆԵՐ, ՆԿԱՐՆԵՐ --

Ներածական՝ ԳՐ․ ՊԸԼՏԵԱՆ

290 էջ, Մատենաշար «ՅԱՌԱՋ»

Գին՝ 150 Ֆր․, թղթատարի ծախքով՝ 175 Ֆր․

Դիմել՝ «Յառաջ» կամ Հրանտ-Սամուէլ Գրատուն
(51, rue Monsieur-Le-Prince, 75006 Paris)

ՖՈՒԹՊՈԼ

Վալանսի Հայ Մարզականը 0 - 1 պարտուեցաւ Լորիանէ այս վերջնոյն դաշտին վրայ։ Այժմ, դասաւորման մէջ 12-րդ է Պօվէի հետ, 3 կէտով։ Գլուխն է Փերփինեան։

Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 PARIS
SIRET: 51027317 A R. C. Paris
Commission paritaire: N° 55935

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

CBAF - Section St Jérôme / Djavo Chant

Sortie
MUSEE DOBREE / NANTES
Exposition

Arménie

Les Trésors du patrimoine archéologique arménien des origines au IV siècle

Vendredi 6 Septembre à 22 h
place de la Rotonde Dikran Tekeian
Saint Jérôme
Départ de Nantes le Samedi soir

PAF de transport et visite musée
350 F environ
pour tous renseignements
et réservations :
tél.: 91 70 00 32 et 91 61 10 82

Mise au point

NDLR.- Suite à une interview donnée le 15 août au Home arménien de Saint-Raphaël à un journaliste de FR3, M. André Yedikardachian, président de L'A A A S (Association Arménienne d'Aide Sociale) nous prie d'insérer la mise au point suivante.—

«La réponse de M. YEDIKARDACHIAN André faite lors de son interview par FR3 le jeudi 15 août 1996, n'a pas été retransmise dans son intégralité.
Elle n'engage que son opinion personnelle et non pas celle de l'Association qu'il dirige, ni a fortiori celle de la communauté arménienne de France».

Հ. Բ. Ը. Մ.

ԾԱՆՈՒՑԱԳԻՐ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ

Հայկ Բարեգործական Ընդհ․ Միութեան («Միութիւն») Կեդր․ Վարչական Ժողովը ներկայիւս կը ծանուցանէ Միութեան բոլոր իրաւասու անդամներուն թէ Միութեան 79-րդ Ընդհանուր Ժողովը պիտի գումարուի 1996, Շաբաթ, Նոյեմբեր 16, առաւօտեան ժամը 10-ին, Հ․Բ․Ը․Մ․ի Կեդրոնին մէջ 2495 E. Mountain St., Փասատինա, Գալիֆորնիա, ԱՄՆ․։

Սոյնը 79-րդ Ընդհանուր Ժողովին գումարման մասին տրուող միակ ծանուցագիրն է։ Հետեւաբար, Միութեան իրաւասու անդամներէն կը խնդրենք որ անձնապէս ներկայ գտնուին ժողովին, վերոյիշեալ թուականին եւ վայրը, եւ կամ ամենէն ուշը մինչեւ 1996, Հոկտեմբեր 15 իրենց փոխանորդագրերը, - Հիմնական Կանոնագրի տրամադրութեանց համաձայն գործադրուած եւ վաւերացուած, - յանձնեն Կեդրոնական Վարչական Ժողովի ատենադպիրին, հետեւեալ հասցէով․ ․

Armenian General Benevolent Union
Central Board of Directors
31 West 52nd Street
New York, N.Y. 10019-6118.

ԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳ

1․ -- Ներկայացում եւ վաւերացում 1994 եւ 1995 տարեշրջաններու Միութեան ընդհանուր բարոյական տեղեկագրին։

2․ -- Ներկայացում եւ վաւերացում 1994 եւ 1995 տարեշրջաններու Միութեան ընդհանուր նիւթական տեղկագրին։

3․ -- Ընտրութիւն Միութեան Կեդրոնական Վարչական Ժողովի անդամներու։

4․ -- Ընտրութիւն Հաշուեքննիչ Յանձնախումբի անդամի մը։

5․ -- Նկատառում եւ գործադրում վերոնշեալներուն հետ առնչուող որեւէ հարցի, ինչպէս նաեւ Ժողովին ուշադրութեան բերուող եւ անոր աշխատանքներու ընթացքին ըստ պատշաճի արծարծուող հարցերու։

6․ -- Քննարկում Ընդհանուր Ժողովի առաջարկներու եւ բանաձեւերու։

Ի Դիմաց
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

ԼՈՒԻԶ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՍԻՄՈՆ
Նախագահ

ՊԵՐՃ ՍԵԴՐԱԿԵԱՆ
Ատենադպիր

NAVASART à Marseille

Les 4 Sections de la Croix Bleue des Arméniens de France - région Marseille, demandent à toutes les associations de prendre en considération la date du

SAMEDI 19 OCTOBRE en soirée.

Plus amples renseignements ultérieurement.

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
ՕԳՈՍՏՈՍ 21
MERCREDI
21 AOUT
1996

LE NUMERO : 5,00 F.

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1925-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE-FONDE EN 1925
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 47. 70. 86. 60 — TELEX : HARATCH 280 868 F
— FAX : 48. 00. 06. 70 —
C.C.P. PARIS 15069-82 E

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 1.100 Ֆ. – Վեցամսեայ : 560 Ֆ.
Արտասահման : Տար. 1.400 Ֆ. (ամէնօրեայ առաքում)
1.250 Ֆ. (շաբաթական առաքում) – Հատը : 5,00 Ֆ.

72ՐԴ ՏԱՐԻ - ԹԻՒ 18.921 Fondateur SCHAVARCH MISSAKIAN 72e ANNEE — N° 18.921

ԼԻԲԱՆԱՆ

Հ.Յ.Դ. ԹԵԿՆԱԾՈՒՆ՝ Ս. ՅՈՎՆԱՆԵԱՆ ԸՆՏՐՈՒԱԾ

Լիբանանի ընտրութիւններուն առաջին հանգրուանին (Օգոստոս 18) ընտրուած է Հ.Յ.Դ. թեկնածու Սեպուհ Յովնանեան Մեթնի շրջանին մէջ, Ներքին նախարար՝ Միշէլ Մըրի գլխաւորած «Ազգ. համաձայնութեան» ցանկին վրայ :

Թեկնածութեան այս փոփոխութեան առթիւ, Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդր. Կոմիտէն յայտարարութիւն մը հրապարակած էր Օգոստոս 4-ին, ուր դիտել կուտար որ «...իր տուած որոշումը ոչ մէկ ձեւով արտայայտութիւնն է ընկ. Շահէ Պարսումեանի նկատմամբ քննադատական դիրքորոշման: Ընկ. Շ. Պարսումեան անցնող տարիներուն ընթացքին, թէ՛ իբրեւ երեսփոխան եւ թէ նախարար, կարեւոր ծառայութիւններ մատուցանեց Լիբանանի եւ հայ համայնքին, բծախնդրօրէն վարելով Հ.Յ.Դ. լիբանանեան քաղաքականութիւնը» :

Նոր երեսփոխանը ծնած է Պէյրութ 1947-ին : Աւարտելէ ետք Ս. Նշան Ազգային վարժարանը, երկրորդական ուսումը կատարած է մարիստ եւ «Ինթէրնէշընըլ քոլէճ»ը, ապա՝ Սէն - Ժոզէֆ համալսարանը : Վկայուած է որպէս ատամնաբոյժ : Հ.Յ.Դ. շարքերը մտած է 1968-ին :

*
**

Ընտրութիւններու այս առաջին հրջանին սուրիամէտ թեկնածուները ընտրուած են վեց ընտրաշրջանի մէջ, հաւասար քրիստոնեայ (քրիստոնեայ) երկու ընտրեալ ունի, բայց սուրիական ներկայութեան դէմ եղող գլխաւոր դէմքը Նասիպ Լահուտ Մուխէյպէր պարտուած է : Մամուլը, սակայն, կը ծանրանայ բազմաթիւ անկանոնութիւններու վրայ : «Ֆիկարօ»ի թղթակիցն ալ (Օգոստոս 20) Փարիզ աքսորուած նախկին նախագահ՝ Ամին Ճեմայէլ կը յայտարարէ որ ընտրութիւնները խարդախուած են :

ՏԱՐԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՊԵԼՃԻՔԱ բռնաբարուած, սովամահ, սպաննուած եւ անհետացած աղջնակներու ճակատագրէն եւ սեռամոլ հրէշներու պարագան կը շարունակէ մեծ իրարանցում ստեղծել երկրին մէջ : Մահապատիժի վերահաստատման դիմումները կը բազմանան, նաեւ այլ դիմումներ որպէսզի դատապարտուածի պարագային, վճիռին ընկերանայ արգելափակման պարտադիր շրջան մը ինչպէս է Ֆրանսայի մէջ, ուր ցկեանս բանտարկութեան հետ, վճիռը կը պարտադրէ 20, 30 տարի : Պելժիոյ Արդարութեան նախարարը մերժած է այդ տեսակ դիմումներն ալ ընդունիլ : «Լիպերասիոն» հարց կուտայ (Օգոստոս 20) «Ի՞նչ ընել սեռային ոճրագործները» : Եթէ պատասխանուի որ գոնէ այդ հրէշներուն համար մահապատիժէն այլ ելք չկայ, անոնք կը վերսկսին եւ աւելի բիրտ ձեւով, «գաղտնի ոճիրները» կը վրդովին ու հիմարութիւններն ալ հոգեբանական վերլուծումներով արդարացումներ կը գտնեն : Հարկ է սակայն կեդծաւորութիւնը վանել եւ պաշտպանել մանուկները : Պելժիոյ երկու անհետացած աղջնակներուն համար ալ կ՚ըսուի թէ ծախուած են պոռնկութեան համար Չեխիա : Պելժիոյ Արդարութեան նախկին նախարարն է որ ստորագրած էր Մարք Տիւթրուի (Պելժիոյ հրէշը) ազատ արձակումը 3 տարուան բանտարկութենէ ետք (13 տարուան դատապարտուած էր) հակառակ երկու անհաստատ տեղեկատուութիւններու եւ սակայն, «Լիպերասիոն»ի խմբագրականը կը գտնէ որ հարկ է ուրախանալ որ Պելժիոյ Արդարութեան նախարարը աւելի պաշարուած է եւ տեղի չի տար «հապճեպ ամբոխավարութեան» մը, ինչպէս եղաւ Ֆրանսայի մէջ Մեհէնըրիի հետ : Այս վերջինն է որ, երբ Արդարութեան նախարար էր օրէնք մը հաստատեց, ըստ որուն 15 տարեկանէն վար աղջնակներ բռնաբարողներն ու մարդասպանները երբ ցկեանս բանտարկութեան դատապարտուին պարտաւորուին ցկեանս կամ որոշուած ժամանակաշրջանի մը համար բանտը մնալ : Ժերար Տիւֆիւի («Լիպերասիոն»ի խմբագրականը ստորագրողը) այս օրէնքն է որ հապճեպ ամբոխավարութիւն կը նկատէ, երբ ճիշդ քովի էջին վրայ անհանդուրժելի նկարագրութիւնը կայ երկու աղջնակներու մահուան պարագաներուն :

ԹՈՒՐՔԻՈՅ Արդարութեան նախարարը Իրաք կատարած այցելութեան ընթացքին նախնական համաձայնութիւն մը ստորագրած է Պաղտատի հետ : Անով կը նախատեսուի երկու երկիրներուն միջեւ սահմանային Բ. անցք մըն ալ բանալ, առեւտուրի ծաւալները աւելցնել, զարկ տալ քարիւղի, բնական կազի երկկողմանի ծրագիրներու գործադրութեան :

ՄՈՍԿՈՒԱ կը հրաւիրէ Գրոզնիի բնակչութիւնը որ հեռանայ մայրաքաղաքէն որովհետեւ նոր, լայնածաւալ յարձակում կը պատրաստէ : Ելցին նաեւ խիստ է Լեբէդի հանդէպ որմէ կը պահանջէ կարգուկանոնը վերահաստատել Չեչէնիոյ մէջ ու կը մերժէ հեռացնել Ներքին նախարարը :

ՍԷՆ - ՊԵՐՆԱՐ Եկեղեցւոյ 300 Մալիցիները նոյն վիճակին մէջ էին Օգոստոս 20-ի առաւօտեան : Մետրապոլիտ անձնաւորութիւններու այցելութիւնները կը շարունակուին, ասոնց կարգին՝ աբբայ Փիէր, Օգոստոս 19-ին : Հարցին կարգադրութեան ձգձգումը կառավարութեան կողմէ պատճառ է որ օրէ օր ընդդիմութիւն մը կազմակերպուի եւ Աֆրիկեցիները լայն զօրակցութիւն մը վայելեն : Ոմանք գիշերն ալ կը մնան տեղւոյն վրայ արգելք հանդիսանալու համար ապահովութեան ուժերու միջամտութեան որ Օգոստոս 16-էն ի վեր «անմիջական» կը ծանուցուի մեծամասնութեան կողմէ : Այցելուները կ՚ընդունուին փրոֆէսէօր Շվարցընպերկի եւ իր ընկերուհիին՝ Մարինա Վլատիի կողմէ : Համայնավար կուսակցութեան քարտուղարն ալ, իր այցելութենէն ետք, կոչ ըրած է ձախին որ միացեալ ճակատով Հանրապետութեան նախագահին դիմեն :

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐՈՒ ԻՐԱՒԱՆՑ ԵՒ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ԼԻԿԱՆ ԵՒ ՂԱՐԱԲԱՂ

Ժողովուրդներու իրաւունքներու եւ ազատագրման միջազգային լիկային (Ժըլնեւ) ընդհանուր քարտուղարուհին՝ Վերենա Կրաֆ յայտարարութիւն մը ըրած է, Օգոստոս 15-ին, ՄԱԿ-ի առջեւ, խտրական միջոցներու դէմ պայքարին եւ փոքրամասնութեանց պաշտպանութեան ենթայանձնախումբի 48-րդ նստաշրջանին : Քարտուղարուհին խօսած է հիմ առնելով 13-րդ կէտը որ կը վերաբերի միջազգային խաղաղութեան եւ ապահովութեան եւ որոնք կենսական պայմաններն են մարդու իրաւունքներուն գործադրութեան կեանքի որեւէ իրաւունքէ վեր :

Տիկինը դիպուկ կերպով կը վերլուծէ Ղարաբաղի կացութիւնը, պատմական ակնարկ մըն ալ ընելով յիշելու համար անոր կամայական յանձնումը Ստալինի կողմէ Ազրպէյճանի, ապա հարցին այժմէականացումը Պերեստրոյկայի առթիւ, Ազերիներու պոկրոմները որոնց հետեւանքով հարիւր հազարաւոր Հայեր տեղահանուած են, հուսկ՝ պատերազմը հազարաւոր զոհերով, հարիւր հազարաւոր գաղթականներով եւ բնակչութեան, ցայսօր, տառապանքը :

Ղարաբաղի իշխանութիւնները, կ՚ըսէ Տիկին Կրաֆ, ջանք կը թափեն խօսակցութեանց ընթացքին (Օ-ԷՍ-Սէ-Ը Մինսկի խումբ) որպէսզի 1994 Մայիսին հաստատուած հրադադարը մնայուն խաղաղութեան վերածուի, բայց այդ հեռանկարը մերձաւոր չի թուիր : Ազրպէյճանի նախագահին՝ Ալիեւի Օգոստոս 3-ի յայտարարութիւնը ուր կ՚ըսէր թէ . - «պատրաստ է այդ հողերը զէնքի զօրութեամբ վերատանալու» վաթթարագոյնի վախը կը պատճառէ :

Պատերազմին վերսկսումը այդ շրջանին մէջ մեծ վտանգներ կը ստեղծէ Կովկասի ապահովութեան եւ խաղաղութեան համար : Այդ պատճառով, Լիկան կոչ կ՚ընէ մարդկային իրաւանց փարիզին եւ ենթայանձնախումբին, որպէսզի իրենց ուշադրութիւնը կեդրոնացնեն քաղաքական լուծում մը գտնելու համար Ղարաբաղի հարցին :

Այս յայտարարութեան պատճէնը ստացանք Ղարաբաղի Ֆրանսայի մնայուն ներկայացուցիչ՝ Ժան Գրիգորեանէ որ իր կարգին գոհունակութիւն կը յայտնէ այդ կոչին առթիւ :

ՏԽՐՈՒՆԻ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՇԻՐՎԱՆԵԱՆ

Օգոստոս 18-ին, փարիզեան հայաշատ արուարձաններէն՝ Իսիի մէջ, ուր կը բընակէր, իր մահկանացուն կնքած է անհետացող սերունդի մը վերջին ներկայացուցիչներէն՝ Յարութիւն Շիրվանեան :

Ողբացեալը ծնած էր 1904-ին Սեբաստիոյ Դալրա գիւղը, յետագային անցած Յունաստան, հուսկ՝ Ֆրանսա եւ 1929-ին վերջնապէս կը հաստատուէր Փարիզի Իսի լէ Մուլինոյի արուարձանը :

Այդ թուականներէն սկսեալ, Յարութիւն Շիրվանեան եղած է, բառին խսկական առումով՝ հաւատաւոր դաշնակցական մը եւ նուիրեալ հանրային գործիչ մը : Այսօր, քիչեր, նոյնիսկ իր պատկանած կուսակցութեան մէջ, կը յիշեն հաւանաբար իր անունը : Երբ մարդիկ երկար ապրին ու տարուէ տարի կորսնցնեն իրենց սերնդակիցները, կը մնան «անծանօթներ» ժամանակակիցներու համար ու անցեալի իրենց գործունէութիւնն ալ, բարձի թողի եղած, այլեւս չարժանանար այն նուազագոյն գնահատանքին որ արդարօրէն կ՚ակնկալուի :

Յարութիւն Շիրվանեան եղած է Իսիի Հ.Յ.Դ. Զաւարեան Կոմիտէի հիմնադիր անդամներէն, քանիցս նաեւ ընտրուած է Փարիզի Շրջանային Կոմիտէի անդամ, բայց, այս բոլորի կողքին, երկար տարիներու երկայնքին մնայուն սիւն մը եղած է դաշնակցական բոլոր ձեռնարկներուն, հոն տանելով ամէնէն ապերախտ այլ կենսական աշխատանքները, ինչպէս տոմսերու ցրուում, պիւֆէի կազմակերպութիւն թէ հսկում եւ այլ կազմակերպչական զանազան գործեր, որոնք, ընդհանրապէս շուքի մէջ կը մնան, կ՚անտեսուին քանի՝ խոնարհներու վերապահուած են :

Երկար տարիներէ ի վեր, քաշուած կեանք մը կը վարէր իր զաւակներուն մնայուն խնամքին ներքեւ : Որոշ դառնութեամբ կը վերյիշէր հին օրերը ու երբեմն, հեռաձայնով, ջերմօրէն կը խնդրէր որ մէկը - դրոյ - բրոյ մը - քովը երթայ ու գրի առնէ իր յուշերը, զոր, այսօր, հետը տարաւ, անկասկա՛ծ :

Մեր ցաւակցութիւնները իր զաւակներուն :

ՄԱՀՈՒԱՆ 70 ԱՄԵԱԿ ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆԻ

Երուանդ Օտեանի մահուան 70-ամեակին առթիւ, վերամուտէն կը սկըսինք հրատարակել իր մէկ խիստ շահեկան գործը՝

12 ՏԱՐԻ ՊՈԼՍԷՆ ԴՈՒՐՍ

Մինչ այդ քանի մը էջեր Համասփիւռէն :

ԹՈՒՐՔ ՄԱՄՈՒԼ

ԹՈՒՐՔԻՈՅ ՎԱՐՉԱՊԵՏԸ ԵՒ ԱՐԵՒՄՈՒՏՔԻ ԱՆՎԱՐՏԻՆԵՐԸ

Թուրքիոյ վարչապետը կը շարունակէ թրքական մամուլին հակազդեցութիւններուն ենթակայ ըլլալ արեւելեան երկիրներու իր շրջապտոյտին պատճառով : Ծըրագրին մէջ առնուած որոշ երկիրներու հանդէպ Միացեալ - Նահանգներու դժգոհութենէն ետք, Էրպաքանի այցելութիւնները քննադատութիւններու թիրախ կ՚ըլլան նաեւ ընդունուած արարողակարգին յաճախակի խախտումներուն եւ Թուրք վարչապետին արտայայտութիւններուն պատճառով :

Ն. Էրպաքան Քուալա Լումբուրի մէջ ծայրագոյն աստիճանի հասցուցած է զարտուղութիւնը եւ արտասանած ճառով զարմանքի ու ծիծաղի պահեր ապրեցուցած իր ունկնդիրներուն : Ան նախ յայտնած է թէ կը չեղի ընկալեալ սովորութենէն, մերժելով կարդալ իր խորհրդականներուն կողմէ պատրաստուած պաշտօնական բնագիրը եւ կ՚ուզէ սրտաբացօրէն արտայայտուիլ ։

Արեւմտեան գիտական ու մտաւոր աշխարհը թիրախ առած անոր խօսքերը ծիծաղի ալիքներ շղթայազերծած են սրահին մէջ ուր սակայն արեւմուտքցի դիւանագէտներ ու գիտութեան մարդիկ զարմանքի պահեր ապրած են :

Էրպաքան ըսած է. «Արեւմտեան աշխարհը թուանշան չի ճանչնար. տառեր կը ճանչնայ : Հռոմէական թուանշանները ալ տառեր են : Իրենց բոլոր հաշիւները կ՚ընեն 56 - 60 տառերու սահմանին մէջ : Թուանշաններու գիտը կը պատկանի իսլամ գիտնականներու : Թուաբանութիւնը, գումարումը, հանումը, բոլորն ալ իսլամ գիտնականները հնարած են : Արեւմուտքը զանոնք առած է իսլամական աշխարհէն : Ես անգամ մը Գերմանիոյ մէջ ըսի իրենց թէ թուանշաններու արտօնագիրը մեզի կը պատկանի : Իրենց գործածած իւրաքանչիւր թուանշանի փոխարէն եթէ վճարում պահանջենք, 10 Փարիզ, 10 Լոնտոն տալով իրենց տարուան մը պարտքն իսկ չեն կրնար վճարել : Եթէ արտօնագրի մեր իրաւունքը պահանջենք, բոլորն ալ անվարտի կը մնան» :

Էրպաքան դրուատելով մահմետական գիտնականներու կարողութիւնները եւ ըսելով թէ անոնք միայն կրնան նոր դարաշրջան բանալ գիտութեան մէջ, շարունակած է. «Արեւմուտքցիները լուսին գացին, բայց ի՞նչպէս : Գործածելով իսլամներու թուանշանները. գործածելով բնագիտութեան ու տարրաբանութեան անոնց հնարած կանոնները : Արեւմուտքցիներու մտային կարողութիւնը համադրելու մակարդակին չէ հասած : Այդ կարգի մոտքեր չեն կրնար դարաշրջան բանալ» :

Թուրք վարչապետը մէջբերում մըն ալ ըրած է անդրպետական ամերիկեան կեդրոնին (ՆԱՍԱ) գիտնականներէն մէկուն խօսքերէն որոնք գրի առնուեր են ամերիկացի լրագրողի մը կողմէ : Այս վերջինս նշմարեր է որ ՆԱՍԱ-յի գիտնականները Գուրանէն ընթերցում կ՚ընեն : Իրեն բացատրեր են որ անդրպետի հետազօտութեան ընթացքին անբացատրելի երեւոյթներու կը հանդիպին : Եւ որովհետեւ մահմետական գիտնական մը ըսած է իրենց թէ Գուրանին մէջ կան բոլոր բացատրութիւնները, ամէն անգամ որ անլուծելի հարցի մը դէմ յանդիման կը մընան, կը դիմեն Գուրանին : Այդ թելադրութեան շնորհիւ յաջողած են 20-է աւելի գիւտեր ընել... :

Ի ՅՈՒՇ ԻՐ ՄԱՀՈՒԱՆ 22ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ
(1974, ՕԳՈՍՏՈՍ 20)

ԱՆՏԻՊ ՆՕԹԵՐ ՇԱՀՆՈՒՐԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԷՍ

ԳՐԻԳՈՐ ՔԷՕՍԷԵԱՆ

(Բ. եւ վերջին մաս)

Գ. ՀԱՆԴԻՊՈՒՄ

Մարտ 15, 1974

Տասնեւերեք տարի ետք երկրորդ այցելութիւնս է որ կուտամ Շահնուրին, Սէն-Ռաֆայէլի Հայկական Տունը:

Կը խօսինք քիչ մը ամէն բանի մասին, բայց մանաւանդ գրականութեան, «Փոքրիկ ...» եւ իր ...ին մասին: Սառնէ իր խօսքերը, իրենց ամբողջական հարազատութեամբ:

***

– «Մենք»ը ձախողանք մըն էր: Ես որեւէ ընկերակցութեան մաս չեմ կազմած ու վստահութիւն ալ չունիմ: Այդ շրջանին հիւանդ էի եւ կը մեկնէի արձակուրդ մը առնելու համար: Մեկնումէս ձախօղակին նորգրողները պէտք որ մաս կազմեն ... Տուի գրութիւն մը եւ վերադարձիս ... խմբագրի ... Նշան Պէշիկթաշլեանի, որովհետեւ խումբին մէջ շատեր իրարու հետ համաձայն չէին եւ ... Շուշանեան, օրինակ, կ'ատէր Նարդունին:

***

– Փարիզի մտաւորական շրջանակներէն քիչ յիշատակ պահած եմ: Անոնք գրադատ էին ... պայմաններով, կոփուեցան, չէին հետեւեր միջազգային գրականութեան, նորութիւններուն: Մինչ ես հոս եկայ չեկայ, surréalisme-ին մէջն էի:

– Surréalisme-ին esprit-ն կը հետաքրքրէ զիս: Ընտրեցի ինչ որ ընտրելի էր հոն: Ծայրայեղութիւններու գացին, մարքսիզմի զարկին: Je n'étais pas d'accord: Surréalisme-ին մէջ ընդունելին այն էր որ ils mettaient en cause la religion de leurs prédécesseurs: Այլ նաեւ անտեսուած արժէքներ երեւան հանեցին:

***

– Քսան տարի կտրուած մնացի հայերէն գիրք, թերթ կարդալէ, հայերէն խօսելէ, Հայու երես տեսնելէ, իսկ գրականութիւնը կեանքէ կը բխի ... ո՛չ, հայկական կեանքէ խզումս միայն ֆիզիքական չէր: Ներքին խզում մըն ալ տեղի ունեցաւ: Հիները (*գրողները*) բոլորը դառնացած, յոգնած քաշուած էին: Թէքէեանը գացած էր Եգիպտոս, իսկ ես իմ սերունդիս գրողներէն կը մնայի հեռու -- «Այս ինչ մարդ է որ մեր մէջ չի մտներ», կ'ըսէին: Ես կը մտնէի աւելի ժողովրդական խաւերէ ներս --graveur, կօշկակար, դերձակ ...

Իմ սերունդիս գրողները զիս չէին հետաքրքրեր: Բան մը չէին: Թերթ մը կը հանէին եւ օգտակար գործ մը կը տեսնէին: Սկիզբը Բալուեանն էր, որուն «Զուարթնոց»ը՝ գեղեցիկ յաջողութիւն մըն է:

***

– Գրող մը իր ամբողջ էութեամբ կապուած կը մնայ իր լեզուին: Ես երբեք չեմ ընդունիր ռուսահայերէնը: Զեմ ընդունած զայն սկիզբէն: Չեմ հասկնար այդ լեզուն: «Մտերիմ օրագիր»ս (Կրակը կողքիս) մէջի դրուագը դիտումնաւոր կերպով ըրուած խօսքեր չեն: Չափազանցութիւն չէ: Չէի անդրադարձած որ հայկական երգչանակ մըն էր ունկնդրած եղանակս, որուն բառերուն լեռնականի շեշտը ուշադրութիւնս իսկ չէր գրաւած, որպէս հայերէն:

***

Հայ գրականութիւնը (*արեւմտահայ*) բառի, տառի, ստորակէտի խնդիր է: Ա՛յդ է մտեր իմ արիւնիս մէջ եւ այդ բանը չի փոխուիր: Օտարը կ'ընդունիմ, կ'ունկընդրեմ եւ կը հասկնամ որպէս օտար: Օտա՛ր կը մտածեմ: Բայց այս մէկը (*արեւելահայերէնը*) նման չէ: Պարզ թաղանթ մը կայ երկուքին միջեւ, բայց այդ թաղանթը ամէնէն գէշն է:

Սկիզբէն Արեւմտահայերը հետզհետէ աշխատած են յղկել լեզուն, ճոխացնել, ճշգրիտ դարձնել եւ մանաւանդ՝ կա-նո-նա-ւո-րել: Լեզու մը, ամէնէն առաջ, քերականութիւն է: Բայց անոնք (*Արեւելահայերը*) ճիգ չեն ըրած: Եթէ նայինք, անոնք ամէնն ալ տարբեր լեզուով մը գրած են: Աբովեան, Սունդուկեան, Ծերենց, -- առանց մէկ բառբառը միւսին չի նմանիր: Յովհաննէսի Թումանեանի լեզուն իսկ սարսափելի բան մըն է: Արեւելահայերը բնաւ ճիգ չեն ըրած միացնելու, լեզու մը կազմելու: ... Բայց հիմա՝ ա՛յո:

***

- Այո՛ գրած եմ նաեւ նկարիչներու մասին -- Քեպապճեան, Մարտիրոս Սարեան, բայց սխալ բան մը ըրած եմ: Գրած եմ sur commande, կարեւորութիւն մի տաք: ... Ո՛չ, նշանաւոր դարձած -- ինչպէս դուք կ'ըսէք ինծի համար -- մարդու մը ամէն գրութիւնը կարեւոր չէ: C'est une erreur, la signature ne compte pas:

***

- Թէ ինչո՞ւ հայերէն արձակ եւ ֆրանսերէն բանաստեղծութիւն կը գրեմ ... չեմ գիտեր: Այդպէս եկաւ, այդպէս գացի, այդպէս գրեցի:

***

- Սոլժենիցինին մասին յօդուած մը գրեցի «*Յառաջ*»ի մէջ: Զատորագրեցի յօդուածը որովհետեւ հարցը, իր էութեամբը, քաղաքական բնոյթ ունէր, բայց կրնայի ստորագրել, կրնայի ստորագրել ... (*Շահնուր յայտնապէս դեռ վարանքի մէջ էր իր որոշումին ճշդութեան առնչութեամբ*):

- Երբ պատերազմին Pyrénées-ները (*Հարաւային Ֆրանսայի լեռնաշղթայ*) ռմբակոծուեցան, մեր *սանայի* հիւանդները փոխադրեցին այլ տեղ: Հոն ձգեցին միայն երկու հիւանդ, վստահ ըլլալով որ անոնց վախճանը մօտ է: Մէկը ես էի ... Արդարեւ, երբ միւսը մեռաւ, ստիպուած զիս ալ փոխադրեցին:

Ուտելիք չկար, միշտ խոտ կուտայինք, խո՛տ, խո՛տ: Դեղ չկար: Ամէնէն գէշ շրջանին հիւանդացայ, ամէնէն գէշ շրջանին մտայ հիւանդանոց երբ personnel չկար, ամէնէն գէշ շրջանին գործողութիւն եղայ: Մեծագոյն սխալնին greffe-ի գործողութիւնն էր: Պէտք է գիտնային թէ երբ ողնահար մը թարախոտ է, պատուաստ չի բռներ:

***

(*Մեր բաժանումէն առաջ վերջին իր խօսքը՝ որպէս մեր խօսակցութեան եզրակացութիւն, ուր կար նաեւ պատասխան մը գրելու պնդումներուս*):

-- J'ai pris ma retraite. Je suis un vieux retraité. Je ne suis utile à personne, je ne fais de mal à personne, je ne fais de tort à personne ...

ՎԻԷՆՆԱՅԷՆ ԱՆՑՆԵԼՈՎ ՊԱՀ ՄԸ՝ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՆՔԸ

Արձակուրդի առիթով կամ այլ պարագաներուն Վիէննայէն անցնող Հայը չի կրնար չայցելել Աւստրիոյ մայրաքաղաքին Խորհրդարանի հոյակապ շէնքէն ոչ-շատ հեռու գտնուող, եօթներորդ թաղամասին մէջ, Մխիթարեան վանքը որուն առաջնորդող ուղին 1843-էն ի վեր մկրտուած է իր անունով՝ «Մխիթարեան փողոց - Mechitharistengasse»: Մուտքին զետեղուած է հայրապետական խոյրով քարէ պարզ զինանշան մը:

Քիչ մը պատմութիւն: Հպանցիկ:

1773-ին, Վենետիկէն ընդ միշտ բաժնուող վարդապետներ, թիւով 13, հաստատուեցան Թրիեսթէ կազմելով նոր ճիւղաւորում մը: Սակայն, Ֆրանսական բանակը Թրիեսթէն գրաւելով Մխիթարեանները որպէս հպատակ Հապսպուրկի կայսրութեան, հալածուեցան ու լքեցին իրենց ինչքերն ու կալուածները եւ փոխադրուեցան ու ապաստանեցան Վիէննա, 1810ին: Մխիթարեան հայրերուն տրուեցաւ Գափուչիններու հին վանք մը: Մի քանի տարի յետոյ, բարձրացաւ նոր եւ շատ ընդարձակ շէնք մը որ այսօրուան վանքն իսկ է:

Հինգ յարկերով շէնք մը որ իր մէջ կ'ամփոփէ վանքին բոլոր բաժանումները՝ միաբաններուն մասը իր ննջասենեակներով, ճաշարանով, խոհանոցով եւ գրասենեակներով, ընդունելութեան սրահները, թանգարանը, մատենադարանը, տպարանը եւ այլ յարկաբաժինները: Փողոցին սկիզբը, ներմուծուած վանքի մարմնին մէջ, եւ մուտքը անկիւնի լայն փողոցին վրայ, եկեղեցին կը փաստէ վայրին հնութիւնը: Եկեղեցի մը, կողմնակի չորս խորաններով իւրաքանչիւրը նուիրուած սուրբի մը, որ կրած է ժամանակին մաշումը եւ Բ. աշխարհամարտի ամերիկեան ռմբակոծումները:

Ժամանակի ընթացքին Վիէննայի Մխիթարեան վանքը աճեցաւ, զարգացաւ, ճոխացաւ մտքի հսկաներու հսկայ աշխատանքով: Եւ այդ վաստակաւոր միաբաններու շարքին կը պատկանին հայագէտ Հ. Արսէն Այտընեան, լեզուագէտ եւ պատմիչ Հ. Յովսէփ Գաթըրճեան, բանասէր Հ. Յակոբոս Տաշեան, բանասէր եւ քննադատ՝ Հ. Ներսէս Ակինեան, բանասէր ու բեմբասաց Հ. Սահակ Կոգեան եւ այլ լուսաւոր դէմքեր:

***

Վանքի մուտքին, գաւիթին որ կ'առաջնորդէ դէպի անխնամ բակ մը գործածուած որպէս «փարքինկ» եւ որուն վրայ կը բացուին շէնքին պատուհանները, մեզ դիմաւորեցին երկու ժառանգաւորներ:

Աբբահայրը՝ Պօղոս Վրդ. Գոճանեան մեկնած ըլլալով Հայաստան, մեզ ընդունեցաւ Գէորգ Վրդ. Արգարեան հակառակ անոր որ զբաղած էր եկեղեցւոյ ծաղկազարդումով եւ հազիւ առաջնորդած ու վերջացուցած այցելութիւն մը ամերիկաբնակ Հայերու համար: Ուստի, դեռ շունչ չառած իրեն «պարտադրուեցաւ» այցելութեան նոր շրջան մը, յարկէ յարկ: Սիրով ընդառաջեց: Թող ներողամիտ ըլլայ յանպատրաստից մեր այս այցելութեան անյարմար պահուն եւ ժամուն: Եւ վերելակն ու աստիճանները դիմագրաւելէ առաջ ուժ առնելու համար, Հայր Գէորգ մեզի հետ խմեց հրամցուած վանքին յատուկ ըմպելին՝ «Մխիթարին»ը որ սրտի զօրացման բնական եւ հաճելի զօրացուցիչ մըն է: «Mechitharine»ը պատրաստուած է արեւելեան բազմապիսի բոյսերու եւ զանազան պտուղներու բաղադրութեամբ: Հրապարակի վրայ է 1889-էն ի վեր: Շուկային մէջ կը ծախուի: Ապրանքներ կուգան մինչեւ Ամերիկայէն: Եկամուտի աղբիւր մըն է: Այս քաղցրահամ ըմպելին կը պատրաստուի Վիէննայի շուրջը գտնուող միաբանութեան սեփական ընդարձակ եւ պտղառատ հողին վրայ: Այս աշխատանքին հոգատարն է՝ Անդրէաս Վրդ. Հարմանտիկեան:

Նախ, այցելեցինք հնախօսական նիւթերով հարուստ թանգարանը: Առաջին սրահը կը բացուի եկեղեցական զգեստներու՝ շուրջառ, փորուրար, ծածկոց, սաղաւարտ, անձեռոց ... եւ առարկաներու՝ սկիհ, խաչ, վարդապետական ու եպիսկոպոսական գաւազաններու ... շքեղ հաւաքածոյի մը վրայ եւ անոնց առընթեր այլ եւ այլ ձեռագործներ երբեմն արծաթէ կամ ոսկիէ թելերով հիւսուած, գեղարուեստի գործեր աշխատուած հայ վարպետներու կողմէ: Նոյնպէս, ցուցափեղկերու մէջ կուտակուած՝ հռոմէական, եգիպտական եւ հայկական քարէ եւ կաւէ արձանիկներ: Թանկարժէք եւ հետաքրքրական է հին դրամներու հաւաքածոն որ կը հաշուէ 8000 հայկական դրամներ եւ օտար ազգերու 30.000 կտոր: Անկիւն մը «երկնցած» է հնամեայ մումիա մը: Սրահներու երկայնքին կախուած կամ գետին սփռուած են տարբեր շրջաններու, զանազան վայրերէն եկած պատմական գորգեր, ձեռային աշխատանքներ, ձեռագործներ: Այլ սրահի մը մէջ, պատի բարձրութեամբ ապակիի տակ շարուած են հայկական տարազներու հարսանեկան, իշխանական կամ գեղջկական հարազատ նմոյշներ: Անկիւն մը Հայաստանի հին քարտէսներ: Ուրիշ տեղ մը՝ ընդհանուր աշխարհացոյց մը: Դարաններու վրայ Քէօթահեայի խեցեգործեր, յախճապակիներ եւ ուրիշ նախշական իրեր որոնք շատ անգամ չեն նշմարուիր որովհետեւ չեն դասաւորուած եւ ներկայանալի ձեւով ցուցադրուած: Թանգարանին հետաքրքրական նուէր մը ըրած է Տիկին Աննա Պութրոս Ղալի մայրը ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղարին Պութրոս Պութրոս Ղալիի որուն մեծ հայրը (հօր կողմէ) ծագումով Հայ է ... վարդապետը. արուեստի գործ մը որ ... կարներով, պատկերներով, փոքր արձաններով կը ներկայացնէ տեսարան մը:

Բաւական ճոխ է նաեւ նկարչական բաժինը. Նաղաշ ընտանիքի նկարիչներէն մինչեւ Այվազովսքի, Մախոխեան ... եւ Հայաստանի ու Սփիւռքի համբաւ վայելող նկարիչներու գործերը: Այս նոյն բաժինին մէջ, կայ հանրածանօթ Ալեքսանդր Սարուխանի ծաղրանկարներու հարուստ եւ շահեկան հաւաքածոյ մը: Ան իր երկրորդական ուսումները կատարած է Պոլսոյ Վիէննական Մխիթարեան վարժարանը: Սարուխանի գծագրութիւնները, գունաւոր թէ սեւ-ճերմակ, յատուկ արուեստի մը արտայայտութիւններն են: Ծիծաղի ճամբով եւ փափուկ զգայնութեամբ Սարուխան կը ձաղկէ կեղծիքը, փառասիրութիւնը, մարդկային եւ «ազգային» ինչ ինչ անհանդուրժելի երեւոյթները:

Այցելութիւնը աւարտեցինք գրադարանով: Վիէննայի Մխիթարեան վանքը հայկական Սփիւռքի ճոխ մատենադարաններէն մէկն է: Հոն աւելի քան 120.000 հայատառ գիրքեր կան, 10.000 հատոր ալ օտար լեզու՝ Հայոց պատմութեան, հայ մշակոյթի, հայ ազգի մասին: Ունի 2600 հայերէն արժէքաւոր ձեռագիրներ, ամէնէն հինը Թ. դարէն: Գրադարանը նաեւ ունի շատ ճոխ հաւաքածոյ մը հնօրեայ եւ մերօրեայ հայ թերթերու, պարբերականներու: Թղթատեցինք «Յառաջ»ի հաւաքածոյէն մի քանի հատորներ:

***

Մեր մուտքը եւ ելքը վանք տեւեց քառասուն վայրկեան: Վազքի քայլով մէկ սրահէն միւսը անցանք եւ անկասկած շատ բան վրիպեցաւ մեր ուշադրութենէն: Չտեսանք տպարանը որ ունի արդիական սարքաւորումներ եւ գործիքներ. եւ սակայն կ'աշխատի յատկապէս տեղական, այսինքն օտարներուն համար: Տպարան մը որ հաստատուած է 1770-ին Թրիեսթէի մէջ եւ ապա տեղափոխուած Վիէննա: Տպարան մը որ 50 լեզուներով տպագրած է «Որ օրհնես զայնոսիկ» աղօթքը: Տպարան մը որ 1887-էն ի վեր լոյս կ'ընծայէ «Հանդէս Ամսօրեայ» հայագիտական եւ բանասիրական մեծարժէք պարբերականը: Սակայն, այսօր տարին մէկ թիւ միայն կը հրապարակուի:

Գէորգ Վրդ. Արգարեանի հետ, մեր արագ հանդիպումէն յետոյ, երեկոյեան պանդոկէն հեռաձայնային կապ հաստատեցինք եւ խօսեցանք Միաբանութեան հրատարակչական գործին, որուն մասին կարճ անդրադարձում մը ըրինք, կրթական գործունէութեան եւ այժմու կացութեան մասին:

Տալէ յետոյ, տասնամեակներու ընթացքին փակուած վարժարաններու շարքը,

ԾԵՐՈՒԿԸ

Մեր փողոցը ծերուկ մը կար: Երբ որ ...ջս բացի՝ հոն էր, իր անկիւնը, մաս... մառին քով:

Մեծցեր եմ զինք տեսնելով նոյն տեղը ...ալլեւս իր աննշան անձին կարեւորու... ...ին չէի տար: Գորշ գանգուած մըն էր ...յթին վրայ, ոչ մէկուն նայուածքը գը... ...ող: Նոյնիսկ փողոցին լակոտները ...ք մը չէին նետեր անոր:

Մուրացկանի ձորձ ունէր, բայց ձեռք ...րկելը չեմ տեսած: Չէի գիտեր ուր ...այրի եւ ինչպէս, եւ երկար ժամանակ ...էի մտածեր ասոր մասին:

...քովէն անցնելուս առեն հազիւ ակնարկ ...կը նետէի իր երեսին:

Մորուքաւոր երես մը, աչքեր: Մօտէն ...այն անգամ մը տեսած եմ զինք:

Անձրեւոտ եղանակ մըն էր: Դպրոցէն ...ալուս, հեռուէն տեսայ ինչպէս մարդը ...կը հաւաքէր թափթփած քուրջերը եւ ...անդաղօրէն կը քալէր դէպի քաղաքին ...այրը:

Տեսակ մը հետաքրքրութիւն բռնեց զիս: ...ագիտակցաբար սկսայ հետեւիլ: Ինչո՞ւ: ...Մինչեւ այսօր չեմ կրնար պատասխան ...ալ:

...քալելով չզգացի ժամանակին վազքը: ...կամաց - կամաց օդը կը փոխուէր: Բարակ ...անձրեւ կը մաղուէր: Օրը իրիկուն եղաւ: ...իրեն հետեւելով հասայ քաղաքին հին ...կամուրջին շրջանը: Պատերազմէն ի վեր ...օգործուած չէր: Լքուած աղբերուն ...ով, աւերակ մը:

Ծերուկը կամուրջին տակը մտաւ ...կատելով ետեւէն իր պատռած պայուսակը:

Չհամարձակեցայ մտնել խաւար կամարներուն տակ:

Խեղճը, հոն, իր որջին մէջ լքա՛ծ մա գեցի տուն:

Երկու չաբաթ վերջ, տուիթ գտնելով, կամուրջին մօտեցայ եւ վարանելով կամարներուն տակը մտա՛յ բան մը գտնելու - -յոյսով: Սակայն լաթերէն եւ աղբերէն զատ բան մը չկար:

Ցանկարծ սիրտս կեցաւ: Երկու մեթր անդին մարդ մը տեսայ: Սարսափած իրեն նայեցայ: Հոն էր: Անտարբեր աչքերով զիս կը դիտէր: Բան մը չըսաւ: Զոր տեղ մը գտաւ ու նստաւ: Պայուսակէն կտոր մը հաց հանելով սկսաւ կրծել առանց իմ կողմս նայելու:

Երկար ժամանակ կենալէն վերջ գացի տուն:

Բան մը չէր փոխուած: Հոն էր ամէն օր, մայթին անկիւնը: Երբ կ՚անցնէի իր քովէն, նոյն նայուածքը կը տեսնէի աչքերուն մէջ, նոյն մուրացկանը: Անչարժ երեսով ոչինչ արտայայտող:

Գացի զինուոր, ամուսնացայ, ժամանակ անցաւ:

Օր մը, անցնելով մեր փողոցէն, զգացի որ բան մը կը պակսի: Մայթին անկիւնը հոն չէր: Երբ տուն հասայ մօրս հարցուցի, բայց ան ոչ մէկ լուր ունէր: Ընկերներս, ծանօթներս ալ լուր չունէին:

Կամուրջին տակը գացի:

Կամարներուն տակ ոչ մէկ հետք: Ո՞ւր է: Մինչեւ այս օրս պատասխան կը փնտռեմ բայց ապարդիւն:

Ե՞րբ անհետացաւ: Ցիմար, ցաւալի եւ անլուծելի մանկութեան հարցումներ:

ԵԶՐԱՍ ՔՀՆՑ. ՊՈՂՏԱՆ

Երուսաղէմ

ՍՈՒՐԻԱ - ԻՐԱՔ Կ՚ԵՂԲԱՅՐԱՆԱ՞Ն

Գժտութեան ու ջլամարտի երկար շըրջանէ մը ետք Սուրիոյ եւ Իրաքի նախագահներուն գաղտնի մէկ հանդիպումին լուրը երկու երկիրներու միջեւ մերձեցումի պարագայ մը կը մատնէ: Մերձեցում որ շրջանին համար կրնայ շատ ցնցիչ հանգամանք ունենալ:

Երկու երկիրներու սահմանը 1982-ին Սուրիոյ որոշումով փակուած էր երբ երկու երկիրներու լարումը գագաթնակէտին հասած էր. այնպէս կը թուէր որ ոչինչ կրնար հաշտեցնել երկու նախագահները որոնք նոյն, Պաաս կուսակցութեան հզօր դէմքերն էին ու շրջանային գերիշխանութեան մրցակցութեան լըծուած:

Եգիպտական թերթի մը Սատտամ -- Ասատ հանդիպումին մասին լուրէն ի վեր քաղաքական դէտեր փոփոխութիւններ կը նշմարեն քաղաքական հորիզոնին վրայ: Իրաք որ Ծոցի պատերազմէն ի վեր մեկուսացած է, հասկնալի է որ ընդառաջէ բարեկամական ամէն մերձեցումի: Թէեւ ՄԱԿ-ի նոր որոշումով որ Պաղտատ պիտի կրնար սննդեղէնի փոխարէն քարիւղ վաճառել, մեկուսացումը չափով մը թեթեւցած է: Առկէ դուրս ի՞նչ պատճառ կրնայ նախագահ Ասատը մղել որպէս գործընկեր ընտրելու իր թշնամին եւ մրցակիցը:

Այդ պատճառներէն առաջինը մեկուսացումի օրէ օր չեչտուող զգացումն է որ կը տիրէ Սուրիոյ, ինչպէս էր Իրաքի պարագան: Իսրայէլի որպէս վարչապետ Նեթանիահուի ընտրութեամբ Դամասկոս գիտէր թէ այդ երկրին հետ երկարատեւ բանակցութիւններ պէտք է վարէր, հասկցնելու համար թէ Գոլանի բարձունքի խնդրին մէջ զիջում պիտի չընեն: Այդ բարձունքը Սուրիա կորսնցուցած է 1967-ին եւ միշտ կ՚ուզէ վերստին ձեռք ձգել: Ասատ հասկցած է թէ այդ բանակցութիւններէն յուսալիք մեծ բան չունի: Ցաւելեալ, ան սաստիկ զայրացած էր Միացեալ -- Նահանգներու Արտաքին նախարարին իր հասցէին կատարած յայտարարութեան երբ այս վերջինս ըսած էր ապրիլեան իր շփումներուն շրջանին թէ Սուրիոյ նախագահը շատ զգուշութեամբ գործող էր, ճկուն չէր եւ մեծ հաւատք չէր ներշնչէր: Ասատ այդքանէն կռահած էր որ բանակցելու իր փափաքը վարձատրութիւն պիտի չունենար: Միացեալ -- Նահանգներու աչքին Սուրիա միշտ մէկն էր այն երկիրներէն որոնք նեցուկ կը կանգնէին միջազգային ահաբեկչութեան եւ միշտ կրնային հակիլ Լիբիոյ, Իրաքի, Սուտանի եւ միջազգային պատիժներ կրած արաբական այլ երկիրներու կողմը:

Ինչ կը վերաբերի Իրաքի հետ մերձեցումի մը, ատոր մէջ հաւանօրէն լուրջ դեր ունի Թուրքիան որուն հետ թէ՛ Սուրիա, թէ՛ Իրաք կնճռոտ յարաբերութիւններ ունին: Կայ ջուրի հարցը. կայ նաեւ Թրքական զինեալ ուժերու Սուրիոյ եւ Իրաքի սահմանէն ներթափանցելու հաւանականութիւնը, ՓՔՔ-ի մարտիկները հալածելու նպատակով: Արաբական երկիրները չեն մարսած ալ Թուրքիա -- Իսրայէլ զինուորական համաձայնագիրը: Ան կը նկատուի Միացեալ -- Նահանգներու եւ շրջանի ոչ արաբ այս երկու երկիրներուն միջեւ կազմուած դաշինք մը որուն նպատակն է շրջանին տիրապետութիւնը ձեռք ձգել:

Ասատ -- Հիւսէյն հանդիպումը կ՚ըսուի որ տեղի ունեցած է Տէր էլ Զօրի մէջ եւ 90 վայրկեան տեւած: Առաջինը աւելի ծանրացած է ուժգին յարձակումի մը վախին վրայ: Իսկ Ս. Հիւսէյն, կ՚ըսուի թէ շեշտած է արաբական զօրակցութեան կարեւորութիւնը:

Այս չշուկները աւելի թափ առած են երբ Մայիսին արաբ խորհրդարանականներու Դամասկոսի ժողովին Իրաքեան պաշտօնական պատուիրակութիւն մըն ալ ներկայ գտնուած է, ինչ որ հազուադէպ երեւոյթ է. Իսկ Իրաքեան կիսապաշտօնական թերթի մը քօղարկուած կոչը Սուրիոյ եւ Իրաքի միջեւ մերձեցումի նոր շրջանի մը բացումին, բոլորովին հաստատած է կասկածները:

Միւս կողմէ Սուտանի Խորհրդարանի նախագահն ալ վերջերս ջերմօրէն արտայայտուած է իր երկրին կողմէ Սուրիոյ տրուելիք նեցուկին մասին: Սուտան Ծոցի պատերազմէն ի վեր քիչ երկիրներէն եղած է որոնք բացէ ի բաց զօրակցութիւն յայտնած են Իրաքի:

Այս բոլորը կը մղեն քաղաքական արաբ վերլուծողներ խօսելու քառամաս դաշինքի մը մասին որ ռազմավարական նոր խմբաւորումներ պիտի յայտնաբերէ Միջին -- Արեւելքի մէջ: Եգիպտոսի նախագահը յոյսը կորսնցուցած չէ որ կը յաջողի համոզել Սուրիան մաս կազմելու համախոհութեան մը, տեղ գրաւելով Եգիպտոսի, Յորդանանի, ՊԱԿ-ի եւ հաւանաբար Սաուտի Արաբիոյ հետ: Այնպէս կը թուի որ Սուրիա պիտի չարունակէ առանձին յառաջանալ ժամանակ մը եւս եթէ չվճռէ իր ճակատագիրը կապել Իրաքի: Նեթանիահուի նշանակումով անկարելի չէ որ Սուրիա տեղ գրաւէ արաբական խմբաւորումի մը մէջ որ իրեն ճամբայ ընտրէ խիստ վարդապետ մը:

ՔԱՂՀԱՆ

...իսեթէն Հունգարիոյ Կերլա քաղաքը, ...անստան, Պուլկարիա մինչեւ Գահի... ...էի Հելիոպոլիս արուարձանին դպրոցը, ...վարդապետը ըսաւ որ այսօր կը շարու... ...ակէն բաց մնալ Վիէննայի Մխիթար... ...աններու պատկանող 3 վարժարան՝ Պոլ... ...յ Փանկալթիի վարժարանը հիմնուած ...25-ին, Պէյրութի Համբիէ վարժարանը ...ացուած 1937-ին եւ վերջին տասնամեակ... ...երուն սաեղծուած Ամերիկայի մէջ, Գա... ...լիֆորնիա, Լա Քրէշէնթայի վարժարանը:

...Իսկ Միաբանութեան այժմու կազմը կը ...կազմէ 6 միաբաններ, գլխաւորութեամբ ...Աբբահայր Պօղոս Վրդ. Գոճանեանի ...ընտրուած 1992-ին, յաջորդելով Գրիգո... ...ր Վրդ. Մանեանի, վախճանած 1994-ին: ...Միաբանոցը կը պատրաստուէին չորս ժա... ...ռանգաւորներ:

* * *

...773-էն ի վեր Վիէննայի Մխիթարեան հայրերը իրենց երկարամեայ վաստակով, երախտաշատ աշխատանքով, կրթական առաքելութեամբ, իրենց կոչումին ամբողջական գիտակցութեամբ հարստացուցին մեր ազգային գանձարանը: Սակայն, վաղը նոյնքան կարեւոր է: Ի՞նչպէս ապահովել ապագան այսօրուան համրանքով: Գէորգ Վրդ. Աբգարեան կ՚ըսէ՝ «Մենք յոբելեան առանց աղմուկի եւ թմբուկի կ՚աշխատինք եւ կ՚ապահովենք առաւելագոյնը, Վաղը երիտասարդներ կը շարունակեն»: Վարդապետը լաւատես է: Բայց վանքին այսօրուան արտաքին նայուածքը տժգունած եւ տխուր է, հոգին ցուրտ է: Ճիշդ է որ միշտ բուռ մը եղած են Մխիթարեանները: Սակայն ամէն ժամանակաշրջան ունի իր խրոխտութիւնը: Մաղթենք որ վաղը նոր օր մը ըլլայ, Մխիթարի Տունը ամբողջական ըլլայ եւ ամբողջանայ նոր միաբաններով:

ԿԱՐՕ ՅՈՎՍԷՓԵԱՆ

ՀԱՄԲՈՅՐԸ

ՀԱՄԱՍՏԵՂ

...ԳՈՅՆԵՐՈՒ պէտք չկայ եւ ոչ ալ պաս...՝ Կարօ Մարտուպին դէմքը նկարելու ...մար:

...առնենք բաւական խոշոր կաւի կտոր ...կուտանք դդումի ձեւ, աշունի լայն ...երով դդումներու նման. առաջին ...գամ կը շինենք ականջները, թթենիի ...տերեւներու մեծութիւնով, վերին մասերը ...քիչ ծռած. կը շինենք աչքերը, «կովու ...աչք» խաղողի պտուղներու չափով, ուր ...տարածութին արտ, երկինք, արեւ, ...նաեւ եկեղեցիի աջ կողմի դասը դրուած ...ու խունկի ծուխերով սեւցած Ս. Յարու...թեան նկարը. կը շինենք արծուեքիթ մը, ...բաւական խոշոր, յետոյ փոքրիկ քարայ...րի նման բերան՝ կէս մասով թափթըփուն պեխերուն տակ ծածկուած. մենք ...անոր երեսը չենք յղկեր. գլխուն ու ճա...կատին ձախ կողմին վրայ կը ձգենք, 95-ի ...ջարդերէն մնացած վէրքի հետք մը ճեղքըուած: Այդ բոլորէն յետոյ մեր էն դժուար ...գործը ճակատին վրայ կնճիռներ շարելն ...ու դէմքին վրայ զանազան գծեր ձգելն ...է. որովհետեւ ճակատին վրայ չգիտես, թէ հերկուած արտի նման քանի՞ կնճիռներ պիտի շարուին, երեսի գծերը ի՞նչ չափով պիտի փոթփոթին, երբ ան տեսնէ, որ էքնօ Մարկոսին կինը, Վարդիկը, եկեղեցիին մէջ խաչը համբուրելու կը մօտենայ:

Այդ օրն ալ, Կարօ Մարտուպ, եկեղեցիէն դուրս կ՚ելլէր աղօթքի կտոր մը բերնին մէջ եւ թաղէքէ գլխարկին շուրջ արախչին կապելով ու ականջներուն կէս մասը արախչին տակ ժիր ծածկելով: Բահ, ի՛նչ տեսնէ, էքնօ Մարկոսին կինը, պասմայով շալվար ու կապերով կօշիկ հագած, ԹԸԳԸԲ ԹԸԳԸԲ եկեղեցիի ճամբէն տուն կ՚երթար, այնպէս կը քալէր, կ՚ըսես քարերուն վրայէն Ս. Սարգիսի նժոյգն էր կ՚անցնէր:

- Հա՛ էդ էր պակաս. պասմայով շալվար, քաղքենի կօշիկ, ինչո՞ւ չէ, վաղն ալ շալվարին վրայ թո՛ղ չանչուլ շարէ: Աստուած վկայ, որ էսպէս երթայ՝ էս գեղը կը փլի, կը փլի, - կը խօսէր Կարօ Մարտուպ ինքնիրեն:

Գիւղին մէջ ո՞վ էր տեսեր պասմայով շալվար, կապերով կօշիկ. Գիւղացի կիներ իրենց գործած կտաւներով կը շինէին իրենց շալվարները ու կօշիկն ալ գեղին կօշկակարը կը կարէր, գիւղին ճամբաներէն ու հերկուած արտերուն մէջէն քալելու յարմար կօշիկներ. Գիւղին մեծ ու պզտիկ, աչքերնին բացեր այդպէս տեսեր էին:

- Քա կնիկ, էսօր էքնոյենց Մարկոսին կնկան պիչիմը տեսնայիր, - խօսեցաւ Կարօ Մարտուպ իր կնոջ:

- Տեսեր եմ, արի՛ մարդ, տեսե՛ր, - խօսեցաւ Նունիկ օճախին վրայի կերակուրի խշիկն անցընելով: - Էսօր աղբիւրին ճամբան տեսայ: Տահա էդպէս որ երթայ՝ աչքերուն սեւրմէ ըլլ պիտ քաշէ: Ինչո՞ւ չընէ, Նաճար Գրիգորը թող սաղ կենայ:

- Քա կնիկ, Նաճար Գրիգորին ի՛նչ:

- Դուն ալ աշխըրքէն պէ խապար, ինչե՛ր կը խօսին, գեղի մը բերանն ծամոն է դարձեր:

- Ինչո՞ւ, ի՛նչ կայ, կնիկ:

- Ի՛նչ տըլլի. Նաճար Գրիգորը գիշեր ցորեկ Մարկոսին տունէն դուրս չելլեր: Վարդիկին գօնտռան, պասմայով շալվարը Նաճար Գրիգորն է բերեր քաղքէն: Ես ինչ գիտեմ, մեղքերնին վիզերնին:

- Ալ ինչո՞ւ կրակ չտեղայ էս աշխըրքին վրայ, կնիկ, -- խօսեցաւ Կարօ Մարտուպ աչքերը խոշոր բանալով: -- Էս ի՛նչ օրեւրու մնացինք: Գեղացին աղօթք թող ընէ դժմշու էն լէն ճակտին, չէնը էս գեղը Սոդոմ Գոմոր է, Սոդոմ Գոմոր: Մարկոսը չըսե՞ր, թէ «քա կնիկ, էս շալվարը քեզի ուսկի՞ց»:

- Էրիկն ինչ ըսէ. էրկան իւղաբը կնկան ձեռքն է, ուզած տեղը կը կապէ: Էրիկն ալ Վարդիկը տէր խուր ու խուրպան կ՚ըլլի: Անցեալ օր խնամի Մարանը կը պատմէր, որ կալ ու կուտի ատեն, չեճերը չափելու ատեն, աղա, խաս աղա, չայնա ու գզիր թօխուեր էին էքնոյենց կալը կը չափէին: Էդ կուտ ու կրակ ատեն էս Մարկոսը քաղաք կ՚երթայ որ կնկան փորթուգալ բերէ. գլուխը կը ցաւի եղեր՝ կընիկը փորթուգալ է ուզեր: Որ աղբրտօք բաժնուեցան՝ գեղ մի գեղով Մարկոսը մեղադրեցին:

- Կնիկ, ես մարդ էնոր կ՚ըսեմ, որ քթին տակ բուսած պեխերին արժէքը գիտնայ: Մարկոսին պեխերէն մէյմէկ չանձագ կը կախուի: Պեխերէ՞ն ըլ չամչնար, կնկան իւղաբը, որ իր գլխին փաթթես ու ինքնիր հալին ձգես, Աստուած մի արասցէ, աշխարհը մրեղ մրեղ կ՚ընէ: Մինակ էքնոյենց տունը չէ, կնիկ. Թադոյենց տունը մրեղողն ըլ կնիկ էր, Բալուըցոնց տուն վերան ընողն ըլ էն պզտիկ հարսն էր. ալ ո՞ր մէկը ըսեմ:

- Էդ կողմէն մեր Մարուշին բախտը լաւ է, - խօսեցաւ Նունիկ:

- Հէլպէթ լաւ է. Ես Մուրատ Ակոյի տղուն աղջիկ չէի նշաներ, եթէ հօր ու մօր զաւկի մէկ հատիկը չըլլար: Մեր աղջիկը, վաղը, Մուրատենց տունը որ երթայ, ներոջ ու տագերոջ ցաւ չունի քաշելիք. ինչ է նը կեսուր մը ու կեսրար մը ունի: Էտկից զատ ես կինէ ամէն հալով աղջիկ տուող չէի. Մուրատ Ակօն քանի՛ տուն մարդ խրկեց զիս համոզելու, որ տղան մեր Մարուշին նշանէ: Դուն ըլ գիտես, որ տէրտէրն եկաւ մերժեցի. խոճապաշին եկաւ, ըսի, որ «բարի եկար հազար բարի, փախաթ էդ մասին մի խօսիր. աղջիկս տահա պզտիկ է»: Ալ ո՞վ ըսեմ, մինչեւ որ գնաց Զօփուրենց Սարգիսը դտաւ: Էդ բոլոր խօսքերը ականջս չէին թրջեր: Օր մը Մարխոնին երթած ատենս տեսայ, որ էս Մուրատը վար կ՚ընէր: Իրիկունը եզներս ճամբու դրի ու գացի Մուրատին վարը տեսայ: Աֆերիմ տղայ, խաթերը էնքան մանր ու խորունկ ձգեր, կ՚ըսես մրճան է շարեր: Հա, էն օրէն միտքս դրի, որ ալ չմերժեմ: Նունիկ, Աստծու աչքը Մուրատի վրան ըլլայ, էնպէ՛ս վար մը կ՚ընէ, տեսնելու բան է, տեսնելու:

(Շար. 1)

Գ. Հրայր Շիրվանեան,
Տէր եւ Տիկին Աշոտ Շիրվանեան,
Գ. Ռուբէն Շիրվանեան,
Գ. Րաֆֆի Շիրվանեան
ցաւով կը ծանուցանեն իրենց հօր եւ մեծ - հօր՝

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՇԻՐՎԱՆԵԱՆԻ

մահը որ պատահեցաւ Օգոստոս 18-ին։

Յուղարկաւորութիւնը կը կատարուի Չորեքշաբթի, Օգոստոս 21, ժամը 10-ին Իսի-լի Սուրբ Մարիամ Աստուածածին Եկեղեցին

6, avenue Bourgain

ուրկէ մարմինը կը փոխադրուի Գլամարի ինթէրգոմիւնալ գերեզմանատունը ամփոփուելու համար ընտանեկան դամբարանը։

Որեւէ մահազդ դրկուած չըլլալով, կը խնդրուի ներկայս իբրեւ այդ նկատել։

Ոչ ծաղիկ, ոչ ծաղկեպսակ։

Փոխան ծաղիկի նուէրներ բարեսիրական հաստատութեանց։

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

CBAF - Section St Jérôme / Djavo Chant

Sortie

MUSEE DOBREE / NANTES

Exposition

Arménie

Les Trésors du patrimoine archéologique arménien des origines au IV siècle

Vendredi 6 Septembre à 22 h
place de la Rotonde Dikran Tekeian
Saint Jérôme

Départ de Nantes le Samedi soir

PAF de transport et visite musée
350 F environ

pour tous renseignements
et réservations :
tél.: 91 70 00 32 et 91 61 10 82

Ի ՅԻՇԱՏԱԿ

ՄԱՐՍԷՅԼ. - Իր քրոջ՝ Փերուզ Կիրակոսեանի մահուան Բ. տարելիցին եւ ընտանիքին հին եւ նոր ննջեցեալներուն անմոռանալի յիշատակին Տիկին Թ. Կիրակոսեան 500 Ֆր. կը նուիրէ «Յառաջ»ին։

-ՎԵՐԱՄՈՒՏ-

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՄԻՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

Լիոնի Հայկազեան Միօրեայ Վարժարանի վերամուտն է Չորեքշաբթի, Հոկտեմբեր 2-ին. Առաւօտեան ժամը 9-ին։

Դասաւանդութիւնները տեղի կ'ունենան Չորեքշաբթի, առաւօտեան ժամը 9-էն 12, կէսօրէ վերջ ժամը 14-էն 16։

Աշակերտները կրնան օգտուիլ կէսօրուան ճաշէն. իսկ երթեւեկի սպասարկութիւն մը կարելի է նախատեսել ծնողքներու հետ համաձայնելով։

Յաւելեալ տեղեկութեան եւ արձանագրութեան համար դիմել Եկեղեցւոյ Դիւանատունը։

«ՅԱՌԱՋ»ի ընթացիկ ազդերու սակագինը

Մահազդ	700	(844,20)
Հոգեհանգիստ	600	(723,60)
Շնորհակալիք	600	(723,60)
Հարսնիք--Նշանտուք	600	(723,60)
Ծնունդ	600	(723,60)

Բոլոր ազդերու սակերուն վրայ, հարկ է աւելցնել 20,60% Թէ.Վէ.Ա. (տե'ս. փակագծի մէջ ընդհ. գումարը)։

Այս գիները կը վերաբերին մէկ անգամ հրատարակելի ազդերու, ՄԻՆՉԵՒ ՄԷԿ ՔԱՌՈՐԴ ՍԻՒՆԱԿ (25 տող) մահազդներու պարագային եւ 1/8-րդ (12--13 տող) մնացեալին։

Առեւտրական եւ այլ ծանուցումներու համար, դիմել Թերթին Վարչութեան։

ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐ
ՍԻՐՏ ՄՐՏԻ

-- ԳՐԱԿԱՆ ԷՋԵՐ, ՑՕԴՈՒԱԾՆԵՐ, ՆԿԱՐՆԵՐ --

Ներածական՝ ԳՐ. ՊԸԼՏԵԱՆ

290 էջ, Մատենաշար « Յ Ա Ռ Ա Ջ »

Գին՝ 150 Ֆր., Թղթատարի ծախքով՝ 175 Ֆր.

Դիմել՝ «Յառաջ» կամ Հրանտ-Սամուէլ Գրատուն
(51, rue Monsieur-Le-Prince, 75006 Paris)

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Ի նպաստ «ՀԱՅԱՍՏԱՆ» Հիմնադրամին ԿԻՐԱԿԻ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 29, ԺԱՄԸ 15-ԻՆ, Իսի լէ Մուլինօ։

***

Իսիի Հայ Առաքելական Եկեղեցւոյ Մատաղօրհնութիւնը եւ շինութեան 21-րդ տարեդարձը՝
ԿԻՐԱԿԻ, ՆՈՅԵՄԲԵՐ 10-ԻՆ

Հ. Բ. Ը. Մ.

ԾԱՆՈՒՑԱԳԻՐ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ

Հայկ Բարեգործական Ընդհ. Միութեան («Միութիւն») Կեդր. Վարչական Ժողովը ներկայիս կը ծանուցանէ Միութեան բոլոր իրաւասու անդամներուն թէ Միութեան 79-րդ Ընդհանուր Ժողովը պիտի գումարուի 1996, Շաբաթ, Նոյեմբեր 16, առաւօտեան ժամը 10-ին, Հ.Բ.Ը.Մ.ի Կեդրոնին մէջ 2495 E. Mountain St., Փասատինա, Գալիֆորնիա, ԱՄՆ.։

Սոյնը 79-րդ Ընդհանուր Ժողովին գումարման մասին տրուող միակ ծանուցագիրն է։ Հետեւաբար, Միութեան իրաւասու անդամներէն կը խնդրենք որ անձնապէս ներկայ գտնուին Ժողովին, վերոյիշեալ թուականին եւ վայրը, եւ կամ ամէնէն ուշը մինչեւ 1996, Հոկտեմբեր 15 իրենց փոխանորդագրերը, - Հիմնական Կանոնագրի տրամադրութեանց համաձայն գործադրուած եւ վաւերացուած, - յանձնեն Կեդրոնական Վարչական Ժողովի ատենադպիրին, հետեւեալ հասցէով. -

Armenian General Benevolent Union
Central Board of Directors
31 West 52nd Street
New York, N.Y. 10019-6118.

ԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳ

1. -- Ներկայացում եւ վաւերացում 1994 եւ 1995 տարեշրջաններու Միութեան ընդհանուր բարոյական տեղեկագրին։
2. -- Ներկայացում եւ վաւերացում 1994 եւ 1995 տարեշրջաններու Միութեան ընդհանուր նիւթական տեղկագրին։
3. -- Ընտրութիւն Միութեան Կեդրոնական Վարչական Ժողովի անդամներու։
4. -- Ընտրութիւն Հաշուեքննիչ Յանձնախումբի անդամի մը։
5. -- Նկատառում եւ գործադրում վերոնշեալներուն հետ առընչուող որեւէ հարցի, ինչպէս նաեւ Ժողովին ուշադրութեան բերուող եւ անոր աշխատանքներու ընթացքին ըստ պատշաճի արծարծուող հարցերու։
6. -- Քննարկում Ընդհանուր Ժողովի առաջարկներու եւ բանաձեւերու։

Ի Դիմաց
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

ԼՈՒԻԶ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՍԻՄՈՆ
Նախագահ

ՓԵՐՃ ՍԵԴՐԱԿԵԱՆ
Ատենադպիր

1954 —— 1996

PÈLERINAGE ANNUEL
42ème Anniversaire
ST-GRÉGOIRE à TALLARD

1954 —— 1996

Une messe sera célébrée selon le rite de l'Eglise Apostolique Arménienne

ՏԱՐԵԿԱՆ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ԹԱԼԱՐԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ

Dimanche 15 Septembre

sous l'égide du Conseil Diocèsain de l'Eglise Apostolique Arménienne du Midi de la France et le concours de l'Association Culturelle des Arméniens de Gap et des Hautes Alpes
Sous la Présidence de
MGR LAGRANGE, évêque de Gap, et de **MGR DARON GEREJIAN, Vicaire Général des Arméniens du Sud de la France,**
le Rév. Père VARTAVAR KASPARIAN célébrera la messe à 10 heures 30, en présence du Clergé de Tallard et de ses environs.
La messe sera chantée par la Chorale de l'Eglise
Serpotz Tatéos-Bartoughiméos

à 13 heures Un repas fraternel réunira les pèlerins dans la Salle Polyvalente de Tallard, en présence des autorités religieuses et civiles.

Des autocars, suivant le nombre des inscrits, seront mis à la disposition, pour des personnes qui ne peuvent se rendre par leurs propres moyens.

Départ à 7 heures précises

Pour tous renseignements et réservations s'adresser :

— **MARSEILLE** - Cathédrale Arménienne du Prado, Tél. : 91 77 84 70.

— **SAINT-ANTOINE** - Eglise Saint Tatéos Tél. : 91 65 56 75
M. Tashan Tél. : 91 65 54 45.

— **BEAUMONT** - Eglise Saint Grégoire L'Illuminateur, Tél. : 91 93 13 50.

— **CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE** - Tél. :91 93 30 08.

— **TOULON - ABRIS CLUB** - Tél. : 94 27 10 51.

— **Pour toutes autres régions - Ass. Culturelle des Arméniens de Gap** - Tél. : 92 51 71 80 (heures de repas) 92 51 00 87.

Prix du Trajet de Marseille	
Aller-retour seul	100 Frs
Repas seul	120 Frs
Aller-Retour et repas compris	220 Frs

Pour la vente d'objets demander l'autorisation à l'Association de Gap.

8 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1996

ՄԻՒՌՈՆՕՐՀՆԷՔ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԷՋ

Յայտնի է մեր ժողովուրդին, թէ յառաջիկայ 8 Սեպտեմբերին (1996) Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ՝ Նորին Սուրբ Օծութիւն ՏԷՐ ՏԷՐ ԳԱՐԵԳԻՆ Ա. Ծայրագոյն Պատրիարք -- Կաթողիկոս Ամենայն Հայոց իր անդրանիկ Միւռոնօրհնութիւնը պիտի կատարէ։

«Միւռոնի Օրհնութիւնը ողջ Հայ ժողովուրդին համար հոգեկից առիթ է եւ միջոց, մեր ժողովուրդի Քրիստոնէական և Ազգային կեանքի վերանորոգութեան եւ զարգացման համար»։

Առ այդ, սրտագին կոչ կ'ընենք Ֆրանսայի եւ ամբողջ Արեւմտեան Եւրոպայի հոգեւոր մեր զաւակներուն, խուռներամ բազմութեամբ Ուխտի երթալ Սուրբ Էջմիածին ու Շնորհօք վերազարդարուիլ՝ Սուրբ Միւռոնի բացառիկ այս Օրհնութեան ներկայ գտնուելով։

Այս նպատակաւ, Սեպտեմբեր 5-էն 12-ին՝ մէկ շաբաթուան՝ դէպի Հայաստան Ուխտագնացութիւն կազմակերպուած է։

SABERATOURS-ը մեր կողմէ լիազօրուած է ապահովել ճամբորդական բոլոր գործառնութիւններն -- վիզա, օդանաւ, պանդոկ, պտոյտներ, ապահովագրութիւն եւ սնունդ։

Անհրաժեշտ է անյապաղ փութով, մինչեւ 31 Յուլիս ներառեալ, արձանագրուիլ յիշեալ Ուխտագնացութեան, կանխելու համար տեղ ապահովելու յետագայի խճողումը։

ԴԻՒԱՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ
ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ

Արձանագրուելու համար դիմել. --
SABERATOURS
19, rue St-Roch, 75001 PARIS
Tél. : 42. 96. 10. 10 — Fax : 42. 96. 18. 77.

Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 PARIS
SIRET: 51027317 A R. C. Paris
Commission paritaire: N° 55935

ՀԻՆԳՇԱԲԹԻ
ՕԳՈՍՏՈՍ 22
JEUDI
22 AOUT
1996

LE NUMERO : 5,00 F.

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1925-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE-FONDE EN 1925
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 47. 70. 86. 60 — TELEX : HARATCH 280 868 F
— FAX : 48. 00. 06. 70 —
C.C.P. PARIS 15069-82 E

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 1.100 Ֆ. - Վեցամսեայ : 560 Ֆ.
Արտասահման : Տար. 1.400 Ֆ. (ամէնօրեայ առաքում)
1.250 Ֆ. (շաբաթական առաքում) - Հատը : 5,00 Ֆ.

...րդ. ՏԱՐԻ - ԹԻՒ 18.922 — Fondateur SCHAVARCH MISSAKIAN — 72e ANNEE — N° 18.922

ՕՐՈՒԱՆ ՀԱՐՑԵՐ

ՋՕՐ. ԼԵԲԷԴԻ ...ՋԷՋԻՆԱԿԱՆ ԳՐԱՒԱՐԿԸ

...րոզնիի մէջ հրադադարի համաձայ...նութիւնը կ'ուշանայ, չեշտելով կողմե...ու փոխադարձ անվստահութիւնը : Ռուս...ստանի իշխանութեան հզօր նոր դէմք ...րավար Լեբէդի միջամտութիւնն ալ ...է առ այժմ ակնկալուած արդիւնքը ...սաւ : Միւս կողմէ, երկրին ծայրագոյն ...րեւելեան շրջանին մէջ հանքագործնե... գործադուլը անդամալուծած է այդ ...րամասը որ մեծ մասնակցութիւն ու...ած էր Ելցինի յաղթանակին : Գործա...ը այլ վայրեր ալ տարածուելու մի...մ ցոյց կուտայ :

...յս շրջանակին մէջ Ելցինի նախագա...թեան Բ. շրջանին հանդիսաւոր բա...մը որ մեծաշուք ըլլալու կոչուած էր, ...ղուեցաւ նուազագոյնին : Հազիւ 18 ...րկեան տեւեց ան Համագումարներու ...լատին մէջ ու ռուս ժողովուրդը տե... թէ իր նախագահը այդ պաշտօնը ...րելու ի վիճակի չէր : Սակայն մարդ չի ...տեր թէ ի՛նչ է բուն պատճառը 65 ...րեկան այդ անձնաւորութեան այդ աս...ման տկարութեան : Ինչպէս խորհրդա... շրջանին, նախագահին առողջական ...կութիւնը Թապու նիւթ մըն է ռուս ...մուլին համար :

...յս պայմաններուն մէջ Չեչէնիոյ հար... կարգադրելի առաջին կնճիռն է Մոս...այի համար : Չեչէն զօրքերը արդէն ...մաթիւ պարտութիւններ պատճառե... իրենց հակառակորդին որ Աֆղանիս...նի մէջ իսկ այդքան ծանր ձախողու... կրած չէր : Ռուս հանրային կարծի... ուշադրութեամբ կը հետեւի դէպքերու ...ացումին : Կը ճանչնայ չէչէն պա...զուլները, նոյնիսկ դրաւներ կը դնէ ...նց յաջողութեան վրայ : Իսկ իր պա...սխանատուներէն միայն Լեբէդն է որ ...չարունակէ վարկ վայելել բազմու...թիւններու մօտ : Կրեմլինի հզօրագոյն ...մը կը նկատուի ան . Ազգ . պաշտպա...թեան ու ապահովութեան համակար...ին զանազան աստիճաններուն վրայ կը ...տեղէ իր մարդիկը : Նախագահը անոր ...անձնած է Չեչէնիոյ Թղթածրարը :

...ուղայեւի յաջորդը՝ Իանդարբիեւ լե...ական օրաթերթին տրուած հարցազրոյ... մը ընթացքին Կրեմլինի մէջ ռուս նա...գահին ու անոր աշխատակազմին հետ ...կիս 27-ի հանդիպումին մանրամաս...թիւնները յայտնած է . կ'ըսէ թէ տպա...ւէ էր անոնց ամբարտաւան կեցուած... բայց յատկապէս միջակութիւնը : Ան ...ւմ յայտնած է որ օգնած է Ելցինի ...ողութեան : Երկրորդ անգամ մը եւս ...ղի չգալու համար խորհրդականներու ...ուկ խումբ մը կազմած է եւ անոր ...նագահութիւնը յանձնած Ելցինի Թիւ ...կ թշնամիին՝ Ռուսլան Խասբուլադովի : ...նորովի բանակցութիւններ կը պահան... , բայց ռուս նոր խմբակի մը հետ :

...յս պայմաններուն մէջ Լեբէդ յարմա...գոյն անձը կը նկատուի . անոր վայե...ած վարքին մէջ գլխաւոր տեղը ունի ...ողովիոյ քաղաքացիական պատերազ...ին վերջ տալու յաջողութիւնը : Այսու...անդերձ, Չէչէնիան ծանրակշիռ գրա...արկ մըն է : Եթէ յաջողի չէչէն անկա...խականներուն հետ համաձայնութեան ...գր մը գտնել, պիտի վերածուի ազգա...յին հերոսի ու եւրին ձգել Ելցինի յաջոր...դութեան թեկնածու իր բոլոր մրցակից...ները :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՍԷՆ ՊԵՐՆԱՐ Եկեղեցւոյ «առանց թուղթի» Աֆրիկեցիներու հարցը քաղաքական բնոյթ առաւ այլեւս եւ կառավարութիւնն ալ կը մնայ անճրկած ու անել կացութեան մատնուած : Իր վճռական դիրքը, կասած օրէնքին գործադրութեան (զոր, ի դէպ, չգործադրեց ալ) եւ որեւէ կարգադրութեան ճգնժումը պատճառ եղան որ միացեալ ձախ մը կազմուի (10 կուսակցութիւն եւ շարժում ու 12 սենդիքա) եւ աջն ալ - մեծամասնութիւնը - պառակտուած պատկեր մը պարզէ : Օգոստոս 21 հայցադուլ ընող 10-էն մէկը հիւանդանոց փոխադրուեցաւ, բայց կեանքը վտանգուած չէր : Հասարակաց նամակով մը Հանրապետութեան նախագահին, 10 կուսակցութիւնները նկատել կուտան որ առանց թուղթի այդ բազմութիւնը ծանրակշիռ վիճակի մէջ է եւ կը դիմեն նախագահին որ միջամտէ կառավարութեան մօտ որպէսզի բանակցութիւններու ձեռնարկէ : Ստորագրողներու մէջ են՝ Լ. Ժոսփէն, Ռ. Հիւ, Ժ. Փ. Շըվէնըման, Ա. Քրիվին եւայլն, եւայլն :

ԳՐՈԶՆԻԻ բնակչութեան պարզած պատկերը աւելի քան ողբերգական է : Հարիւրաւորներ, տուն - տեղ ձգած, ճամբաները ինկած, կը ջանան ապաստան մը գտնել քանի անմիջական կը նկատուի ռուսական բուռն ումբակոծութիւն մը : Միւս կողմէ, Ելցինի առողջութեան մասին միշտ լուրեր կը շրջին : Կ'ըսուի թէ սրտի գործողութեան պիտի ենթարկուի եւ հիւանդանոցն է, մինչ Լեբէդ կը յայտարարէ թէ հրապարակուած հրովարտակները չեն կրեր Ելցինի հարազատ ստորագրութիւնը, այլ՝ կեղծուած են : Լեբէդ կրկին Գրոզնի գացած է եւ այս այցելութիւնը վճռական բնոյթ պէտք է ունենայ :

ՏԱՂՍՏԱՆԻ մայրաքաղաքին՝ Մախաչկալայի մէջ ռմբափորձ մը գործուած է Օգոստոս 20-ին, որուն հետեւանքով սպաննուած են Ելմտական նախարարը՝ Համիդով եւ երեք ուրիշ անձեր : Կ'ըսուի թէ մահափորձը մեծ խնամքով պատրաստուած էր հրապարակէն քշելու համար այդ փորձառու եւ շատ ժողովրդավար գործարարը ,

ՖՐԱՆՍԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ սկըսած է արդէն յետքայլ ընել տուրքերու զեղչերու այն հրապուրիչ լուրերու մասին զորս տուած էր 1997-ի համար : Արդէն կը ճշդուի թէ այդ նուազումները շատ աւելի քիչ պիտի ըլլան քան նախատեսուածը... : Ի մօտոյ կրնան բնաւ ալ չըլլալ եւ 1998-ի ընտրութիւններէն ետք ալ, պարզապէս նոր յաւելումներ կրել... :

ՄԵԾՆ - ԲՐԻՏԱՆԻՈՅ թագուհին կը խորհի հիմնական բարեփոխումներ կատարել երկրին միապետութեան մէջ : Հինգ նիւթեր կը շօշափուին : Առաջինը կը վերաբերի գահին յաջորդութեան (նոյն իրաւունքները կիներուն եւ այրերուն), ջնջում այն օրէնքին որ կ'արգիլէ գահաժառանգին կաթողիկէի մը հետ ամուսնանալ, որուն հետեւանքն այն կ'ըլլայ որ թագաւորը կը դադրի Անկլիքան Եկեղեցւոյ պետն ըլլալէ : Կրնայ ջնջուիլ նաեւ արքունիքին նիւթական ծախքերը ապահովելու դրութիւնը, որուն փոխարէն արքունիքին կը վերադարձուին իրեն պատկանող կալուածները (1760-էն ի վեր անոնց եկամուտները 440 միլիոն Ֆրանք Խորհրդարանը կը գանձէր) : Նման փոփոխութիւններ «յեղափոխական» կը նըկատուին կոչկոռ կապած դրութեան մը մէջ, բայց կը բացատրուի անով որ եկիղապէտ Բ. գայրացած է այլեւս իր ընտանիքին գայթակղութիւններէն եւ ճար մը կը փնտռէ :

ԱՆԴՐԱՆԻԿԻ ԱՃԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՋՕՐ. ԱՆԴՐԱՆԻԿ «ՀԱՄԱԶԳԱՅԻՆ» ՄԻՈՒԹԵԱՆ «ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ»

«Ազգ» օրաթերթը Օգոստոս 13-ի թիւին մէջ տեղ կուտայ «Նոյեան տապան» գործակալութենէն առնուած լուրի մը ուրկէ կը յայտնուի որ փորձ կ'ըլլայ այժմէականացնելու զօրավար Անդրանիկի աճիւններուն Երեւան փոխադրութեան նիւթը :

Մտքերու մէջ թարմ է տակաւին որ 1990-ին բաւական պատեհապաշտութիւն բուրող նախաձեռնութեամբ մը առաջին փորձ մը եղած էր Զօրավարին աճիւնը Փէռ - Լաշէզէն Երեւան տանելու, որպէս հայրենասիրական գերագոյն արարք : Սակայն, նման գործի մը համար շատ մակերեսային մօտեցում մատնող այդ փորձը բարեբախտաբար ձախողած էր . անոր հեղինակներուն առաւելագոյն ձեռքբերումը եղած էր Ռուսաստի օդակայանին պաշտօնեաներուն զարմանքի ու ծիծաղի փակցրել մը նուիրել Երեւանէն բերուած դագաղով որուն մէջ քննիչները յայտնաբերած էին լաւաշ, պանիր ու չիչերով գինի... ,

«Ազգ»ի վերոնշեալ լրատուութիւնը իր խորագրով կ'ըսէ . «Յաղթահարւում են Զօրավար Անդրանիկի աճիւնը Հայաստան տեղափոխելու վերջին արգելքները» : Ակնարկելէ ետք 1990-ի փորձին ձախողելուն, կը յայտնուի թէ «Զօրավար Անդրանիկ Հայոց Համազգային Միութիւն»ը այսօր կրկին կը փորձէ լուծել աճիւնի տեղափոխման հարցը եւ թէ նախագահ Նորայր Մուշեղեանի խօսքերով «ներկայումս վերացուած են աճիւնի տեղափոխման բոլոր խոչընդոտները» :

Փարիզ նստած, ոչ կրնայինք ստուգել նախաձեռնարկ այս միութեան «համազգային» բնոյթը, ոչ ալ խոչընդոտներու եւ անոնց «վերացուած» ըլլալու պարագաները : Բայց ստուգեցինք այն որ մեր կարելիութեան սահմանին մէջ էր . ան բաւարար է «արժանի» հաւատքը ընծայելու կատարուած տեղեկատուութեան : Ն. Մուշեղեան հաւաստի ըլլալու ճիգին մէջ դեր մըն ալ կը յատկացնէ Փարիզի առաջնորդ Գիւտ Արքեպիսկոպոսին որ «հաւաստիացրել է որ Ֆրանսիայում այդ հարցի կապակցութեամբ արգելքներ չեն լինի» :

Ահա, ա՛յս հաւաստիքը ստուգելու համար երբ դիմեցինք Փարիզի Հայոց առաջնորդին, ստացանք հերքում - պատասխան մը (տե՛ս՝ քովի սիւնակը) : Ան բաւական է յստակօրէն տեսնելու թէ ո՛ւր կրնայ հասնիլ զգացական - հայրենասիրական լարեր շահագործելու մղումը :

Անդրանիկի աճիւնին տեղափոխումի նիւթը այդ կարգի բաներէ շատ աւելի լուրջ ու ցուցաբերուած փութկոտութենէն հազարապատիկ աւելի խորք ունեցող հարց է : Այնքան որ «համազգային» մականիշով մը հրապարակ իջած որեւէ միութիւն չի կրնար յաւակնիլ անոր տնօրինումին : Տրուած տեղեկութեան վերջին մասին մէջ կայ ուրախալի կէտ մը . կ'ըսուի թէ նոյն միութիւնը «վերջերս դիմել է ՀՀ նախագահին, սակայն առ այսօր որեւէ պատասխան չի ստացել» :

Գոնէ նախագահին իմաստուն վերապահութիւնը սթափեցնող ազդակ մը եղած ըլլար Ն. Մուշեղեանի եւ անոր համախոհներուն, եթէ չէին գիտցած դաս առնել 1990-ի իրենց ձախողութենէն :

ՀԵՐՔՈՒՄ

«Ազգ» օրաթերթը 1996 Օգոստոս 13-ի թիւին մէջ (Երեւան, Օգոստոս 12) «Նոյեան Տապան» աղբիւրով կը գրէ . «Յաղթահարւում են Զօրավար Անդրանիկի աճիւնը Հայաստան տեղափոխելու վերջին արգելքները» ;

Յօդուածը՝ «Զօրավար Անդրանիկ»ի աճիւնին Փարիզէն Հայաստան փոխադրելու նախաձեռնութեան վերաբերեալ՝ պատմականը կ'ընէ 1990-ին ստեղծուած օրինական դժուարութեան ու այդ առթիւ մեր դատապարտութեան :

Այսպէսով, «յօդուածագիր»ը կը փորձէ այժմէականացնել խնդիրը ու զայն այնպէս կը ներկայացնէ, թէ այսօր փոխադրութեան բոլոր դժուարութիւնները կը թուին յաղթահարուած ըլլալ եւ թէ «Արեւմտեան Եւրոպայի Հայրապետական Պատուիրակ եւ Փարիզի առաջնորդ Գիւտ Սրբազանը հաւաստիացրել է, որ Ֆրանսիայում այդ հարցի կապակցութեամբ արգելքներ չեն լինի» :

Ներկայիս կը յայտարարենք, թէ մենք, 1990-ի Դատավարութենէն ի վեր, ո՛չ մէկ ատեն այս առընչութեամբ խօսակցութիւն ունեցած ենք ո՛չ ոքի հետ եւ ո՛չ մէկ յայտարարութիւն ըրած ենք այս խնդրոյն վերաբերմամբ :

Այս առթիւ, խստիւ կ'ազդարարենք՝ ըսելով թէ ո՛չ ոք իրաւունք ունի մեր անունով որեւէ յայտարարութիւն ընելու : Եթէ հարկ ըլլայ խնդրի մը շուրջ հաստատում կամ հաղորդում մը ընել, անձնապէս կը կատարենք զայն հանդամանօրէն :

Քիչ մը լրջութիւն հարկաւոր է ունենալ՝ պատասխանատու ձեռնարկներու նկատմամբ եւ պէտք է զգուշանալ ընթերցողը շփոթի առաջնորդող արտայայտութիւններէ :

Աւելորդ չենք նկատեր այս առթիւ կըրկին անգամ հաստատել, թէ մենք կը յարգենք Ֆրանսական Արդարադատութեան տուած վճիռը, ու Անդրանիկի աճիւնին փոխադրութեան պարագային՝ մենք հետամուտ կը մնանք գործադրութեան՝ վճիռով արտայայտուած տրամադրութիւններուն :

ԳԻՒՏ ԱՐՔ. ՆԱԳԳԱՇԵԱՆ
Կաթողիկոսական Պատուիրակ Եւրոպայի
Առաջնորդ Հայոց Փարիզի

Փարիզ
Օգոստոս 20, 1996

«ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Օգոստոս 19 / 21)

ԱԹՈՄԱԿԱՅԱՆ

Մեծամօրի ատոմակայանին մէջ տեղի կ'ունենան ծրագրուած նորոգութիւններ : Ներկայիս կը նորոգուի ատոմային վառելանիւթը ու կ'ընթանան զանազան մասերու թէքնիք ստուգումներն ու հարկաւոր նորոգութիւնները :

ՆԱԽԱԳԱՀԸ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԷՋ

Նախագահ Լ. Տէր - Պետրոսեան այցելած է Գեղարքունիքի մարզին բոլոր նախկին շրջանները . Գաւառ, Մարտունի, Վարդենիս, Կրասնոսելսկ, Սեւան : Հանդիպում ունեցած է ղեկավարներու, ձեռնարկութիւններու տնօրէններու, կրթական ու առողջապահական հիմնարկներու ներկայացուցիչներու եւ հարիւրաւոր մարդոց հետ :

(Շար. ը Կարդալ Դ. էջ)

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ՝

ՊԱՆՔ ՕԹՕՄԱՆԻ ԳՐԱՒՈՒՄԷՆ ԸԼՏԸԶԻ ՄԱՀԱՓՈՐՁԸ

(1905 ՅՈՒԼԻՍ 21)

Գրեց՝ Ա. ՊԷՅԼԵՐԵԱՆ

Յառաջիկայ Օգոստոս 26-ին կը լրանայ Պանք Օթօմանի դէպքին 100-ամեակը, իսկ քանի մը օր առաջ Յուլիս 21-ին լրացաւ պատմութեան մէջ «Ըլտըզի ռմպայն» անունով ծանօթ Հ. Յ. Դաշնակցութեան կազմակերպած ահաբեկչական յանդուգն արարքին 91-ամեակը: Տարակոյս չկայ թէ իրենց պատրաստուած եղանակով եւ նամանաւանդ ծանրակշիռ հետեւանքներով ահաբեկչական այս զոյգ արարքները նոյնիսկ կրնան բաղդատուիլ մեր ժամանակներու ամէնէն զգայացունց նկատուած ահաբեկչական շարժումներուն հետ:

Մենք, երկու տարիներ առաջ, Պանք Օթօմանի գրաւման 98-ամեակին առթիւ «Յառաջ»ի մէջ ընդարձակ յօդուած մը հրատարակած էինք (1): Հետեւաբար, այս գրութիւնը կարելի է նկատել նախորդին շարունակութիւնը:

***

Պանք Օթօմանի գրաւումի յանդուգն արարքը Պոլսոյ մէջ առնուազն 6000-է աւելի զոհեր տուած եւ շուրջ 30.000 Հայերու ալ Պոլսէն դէպի դրացի երկիրները փախուստին պատճառ եղած էր: Գործնական գետնի վրայ ի՞նչ դրական հետեւանք ունեցաւ այդ յանդուգն արարքը: Համաշխարհային մամուլը 1894-ի տարեվերջէն սկսեալ հայկական կոտորածներու լուրերը մերթ ընդ մերթ արդէն կը հրատարակէր, Իսկ երբ 1895-ի աշնան մեծ ոճրագործութիւններու քննիչ յանձնաժողովին պատրաստած տեղեկագիրը որ Սասունի կոտորածին բոլոր ներքին ծալքերը կը քօղազերծէր, անգլիական կապոյտ գիրքերուն մէջ երեւցաւ եւ «Համիտիէ» զինեալ աւազակախումբերուն կատարած ոճիրները հրապարակուեցան, այլեւս բնաւ կասկած չմնաց «Կարմիր Սուլթան»ին հայաջինջ քաղաքականութեան ծրագրին մասին: Սակայն եւ այնպէս, Ֆրանսայի մէջ, հայկական կոտորածներու լուրերը միշտ նոյն արձագանգը չգտան: Ի բաց առեալ Գլէմանսոյի «Լա Ժիւսթիս»ը, Հանրի Ռոշֆորի «Լ'Էնթրանզիժան»ը, Լուսար Տրիւմոնի «Լա Լիպր Փարոլ»ը եւ քանի մը ուրիշ թերթեր, Փարիզի օրաթերթերը մեծամասնութեամբ, որոնց կարգին նոյնիսկ «Լը Թան», «Ժուռնալ տէ Տէպա» եւ «Լը Կօլուա»յի նման մեծ համբաւ վայելող թերթեր, ըստ կարգ մը հաւաստի վաւերագրերու, Ապտիւլ -- Համիտի առատաձեռնութիւնէն շլացած, տարիներով մինչեւ Ըլտըզի բռնակալին անկումը, հայկական ջարդերու լուրերը իրենց ընթերցողներէն եթէ ոչ ծածկել, առնուազն իբր հասարակ չարագործութիւններ ցոյց տալ փորձեցին: Օրուան Մէլին -- Հանօթոյի կառավարութիւնը Ֆրանսայի Թուրքիոյ մէջ ունեցած ընդարձակ տնտեսական ներդրումներուն եւ առեւտրական շահերուն չվնասելու համար նոյն քաղաքական ուղեգիծը որդեգրած էր: Հանօթօ նոյնիսկ հայկական հարցի ամէնէն հրատապ մէկ շրջանին, չվարանեցաւ քանի մը անանուն յօդուածներով Ապտիւլ - Համիտի կոտորածներու քաղաքականութիւնը արդարացնելու: Սակայն երբ Պանք Օթօմանի գրաւումին յաջորդեցին Պոլսոյ մէջ դիւանագիտական բոլոր մարմիններուն ներկայութեան լայնատարած հայկական ջարդերը, կանխաւ պատրաստուած եւ մոլեռանդ մահմետական խուժանին բաշխուած բիրերով, այլեւս ոչ ոք համարձակեցաւ Ըլտըզի բռնակալին պաշտպանի դերը ստանձնել: Այսուհանդերձ, Հ. Յ. Դաշնակցութեան ակնկալած վեց մեծ տէրութիւններու զինուորական միջամտութիւնը երբեք խնդրոյ առարկայ չեղաւ:

Ապտիւլ - Համիտ մեկուսացած, գէթ միջոցի մը համար, Հայոց մէջ տիրող դժգոհութիւնը հարթելու եւ անդորրութիւնը վերահաստատելու համար փոքր զիջում մը ընել փորձեց ու պատրիարքական ընտրութեան արտօնութիւն տուաւ:

Իզմիրլեան պատրիարք (1896) Օգոստոսի սկիզբը հրաժարած եւ իրեն տեղ առժամեայ տեղապահ նշանակուած էր իր Թրքասիրական զգացումներով ծանօթ Պրուսայի առաջնորդ Բարթողիմէոս Արք. Չամիչեան, Տեղապահ սրբազանին Ապտիւլ - Համիտի եասիրութիւնը չոյող սարկամիտ ուղերձը Պոլսոյ մէջ թէ ամէնուրեք խիստ յոռի տպաւորութիւն թողած եւ բովանդակ հայ ժողովուրդին ազգային արժանապատուութիւնը վիրաւորած էր: Հետեւաբար, երբ Նոյեմբերին (1896) պատրիարքական ընտրութիւններուն Օրմանեան իբր թեկնածու ներկայացաւ, քուէներու ստուար մեծամասնութեամբ ընտրուեցաւ: Այնքան ազգասէր նոյնքան խոհեմ, չափաւոր եւ հեռատես, Օրմանեանի ընտրութիւնը Թրքահայ բոլոր շրջանակներու կողմէ լաւ ընդունելութեան արժանացաւ:

Ապտիւլ - Համիտ մինչ հաւանեցաւ պատրիարքական ընտրութիւններուն, միւս կողմէ Արտաքին Գործոց նախարարութեան վաղեմի խորհրդական Յարութիւն Փաշա Տատեանի թելադրութեան անսալով ուզեց Հ. Յ. Դաշնակցութեան Ժընեւի կեդրոնին հետ բանակցութեան ձեռնարկել: Հ. Յ. Դաշնակցութեան սոյն յանդուգն ահաբեկչական ձեռնարկը խորապէս տպաւորած էր մահմետական ազգայնականները որոնք համաշխարհային հանրային կարծիքին առջեւ իրենց արժանապատուութիւնը խիստ նուաստացած կը զգային: Նոյնիսկ Փարիզ լոյս տեսնող Ահմէտ Ռըզա պէյի Մէշվէրէթ խորագիրը կրող շաբաթաթերթին մէջ Երիտթուրքերը խոստովանեցան թէ Պոլսոյ մէջ կատարուած կոտորածները Օսմանեան իշխանութեան կողմէ կանխամտածուած ծրագիր մըն էին: Հետեւաբար, Ապտիւլ - Համիտ նախ դաշնակցութեան հետ բանակցութեան ձեռնարկելով կ'ուզէր երկրին մէջ անդորրութիւնը վերահաստատել ու Արեւմուտքի առջեւ իր կորսնցուցած վարկն ու վստահութիւնը ձեռք ձգել: Ցետոյ, մահմետական հպատակներուն մէջ հետզհետէ ծաւալող դժգոհութեան վերջ տալ որ ի վերջոյ կրնար մինչեւ յեղափոխութիւն առաջնորդել երկիրը: Իսկ յեղափոխութիւն մը կրնար վերջանալ նոյնիսկ իր գահընկեցութեամբ: Արդարեւ, մահմետականներու յարաճուն դժգոհութիւնը Երիտթուրքերու կոմիտէի հեղինակութեան զօրացումին միայն կը նպաստէր:

Հ. Յ. Դաշնակցութեան հետ բանակցութիւնները նախ Յարութիւն Փաշա Տատեանի տղուն՝ Տիրան պէյի վստահուեցան. ան Ժընեւի մէջ կուսակցութեան պարագլուխներուն հետ տեսնուեցաւ: Յետոյ նոյն գործը շարունակեց Տատեանի եղբօրորդին՝ Տրդատ պէյ: Ապտիւլ - Համիտ կը խոստանար Արեւմտահայաստանի գաւառներուն մէջ բարենորոգումներ կատարել, բայց իբր սուլթան եւ վեհապետ չընդունեցաւ Հ. Յ. Դաշնակցութեան կողմէ իրմէ պահանջուած երաշխիքը տալ: Իսկ Դաշնակցութիւնը որ այլեւս սին խոստումներով չէր ուզեր օրօրուիլ, այս պատճառաւ պահանջեց (2), երեք ամսուան ընթացքին.

1 -- Թուրքիայէն արտագաղթած բոլոր Հայերուն արտօնել իրենց հայրենիքը վերադառնալ առանց ոեւէ հետապնդումի ենթարկուելու վախ ունենալու:

2 -- Ազատ արձակել բոլոր քաղաքական բանտարկեալները:

3 -- Ջարդերու ժամանակ արտագաղթող բոլոր Հայոց բռնագրաւուած կալուածները կրկին իրենց տիրոջ վերադարձնել:

Մինչ այս բանակցութիւնները գաղտնի կերպով կը շարունակուէին, Եւրոպայի Երիտթուրքերու «Միութիւն եւ յառաջդիմութիւն Կոմիտէ»ի առաջնորդները խորապէս ազդուած հայկական կազմակերպութիւններու խիզախ եւ անձնազոհ ձեռնարկներէն, ուզեցին անոնց մօտենալ: Արդարեւ, երբ հայկական կոմիտէները Ըլտըզի բռնապետին դէմ բացայայտ պայքար կը մղէին, իրենք՝ Երիտթուրքերը, իրենց սահմանափակ տպաքանակի տէր պարբերաթերթերով (3), որոնք Եւրոպա կամ Եգիպտոս կը հրատարակուէին, յեղափոխութեան կոչեր միայն կ'ուղղէին Թուրքիոյ մահմետականներուն: Ըստ կարգ մը տուեալներու հայ եւ Թուրք վտարանդի կոմիտէներու առաջին հանդիպումն ու բանակցութիւնը 1896-ի Դեկտեմբերին տեղի ունեցաւ ուր խնդրոյ առարկայ եղաւ գործակցութեան եւ ահաբեկչութեան դաշտ ընել Պոլիսը, օսմանահպատակ ժողովուրդները յեղափոխութեան մղելու համար:

Մինչ Դաշնակցութիւնը Ապտիւլ - Համիտի բանագնացներուն հետ կը բանակցէր, «Միութիւն եւ Յառաջդիմութիւն Կոմիտէ»ին հետ յարաբերութիւնները սերտացուց նկատելով թէ սուլթանը զիջումի պարտադրելու համար իր միջոցները անբաւարար էին: Հասարակաց ցանկութիւններու իրականացման համար անջատ գործունէութեան վերջ տալ ու միասին գործել երկու կոմիտէներու համար լաւագոյն միջոց նկատուեցաւ Օսմանեան կայսրութեան մէջ Սահմանադրական վարչաձեւը վերահաստատելու համար: Ապտիւլ - Համիտի հետ Դաշնակցութեան բանակցութիւնները հետզհետէ անելի մատնուեցան, երբ 1897-ին Յունաստանի հետ պատերազմը ի նպաստ Թուրքիոյ վերջացաւ: Դաշնակցութիւնը քանի մը ահաբեկչական փորձեր ալ ըրաւ Պոլսոյ մէջ, բայց անոնց մեծ չափանիշի որոնք որեւէ հետեւանք չունեցան Ըլտըզի տանտէրին վրայ: Իսկ 1898-ի Հոկտեմբերին Գերմանիոյ կայսրին եւ կայսրուհիին իրենց շքախումբով Պոլիս, Երուսաղէմ եւ Դամասկոս այցելութենէն յետոյ ուր Վիլհելմ Բ. իր նշանաւոր ճառը արտասանելով ինքզինք 200 միլիոնէ աւելի մահմետականներու պաշտպան եւ դաշնակիցը հռչակեց, Ապտիւլ - Համիտ Օսմանեան պետութեան ամբողջականութիւնը այլեւս երաշխաւորուած համարելով կրկին իր բռնատիրական միջոցներուն վերադարձաւ: 1899-ի Մարտին, Դաշնակցութեան եւ Սուլթանի բանագնացներուն միջեւ երկուքուկէս տարիներէ ի վեր տեւող գաղտնի բանակցութիւնները լրիւ խզուեցան:

(Շար. 1)

(1) -- Տե՛ս «Յառաջ», 1994, Օգոստոս 26, 27 եւ 28-ի թիւերը:

(2) -- Տե՛ս Միքայէլ Վարանդեան, «Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն», Փարիզ, 1932, հատ. Ա. էջ 198:

(3) -- Մէշվէրէթ՝ Փարիզի, Օսմանլը՝ Ժընեւի եւ Շուրայը Ումմէթ Գահիրէի մէջ լոյս տեսան:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՐՋԱՊՏՈՅՏԸ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

Ծանօթ է որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շրջապտոյտ մը կատարեց Հարաւային Ամերիկա Յուլիս 31-էն Օգոստոս 15 եւ Մայր Աթոռ վերադարձաւ Օգոստոս 16-ին: Այս շրջապտոյտի ընթացքին իրեն կ'ընկերանար Գիւտ Արք. Նագգաշեան: Ստորեւ, ամփոփ ձեւով կուտանք այս այցելութեան գլխաւոր հանգրուանները: Կարճ թղթակցութիւն մը տուած էինք Օգոստոս 20-ի մեր թիւով,

ՊՐԱԶԻԼ

Կաթողիկոսը, Օգոստոս 4-ին պատարագած է Ս. Գէորգ Եկեղեցւոյ մէջ առընթերակայութեամբ Գիւտ եւ Գիսակ Եպիսկոպոսներու: Նոյն իրիկունը ողջերթի ճաշ մը տրուած է «Մաքսուտ Փլազա» պանդոկի սրահին մէջ, ուր ներկայ եղած են եկեղեցական թէ աշխարհական բարձրաստիճան անձնաւորութիւններ:

ՈՒՐՈՒԿՈՒԷՅ

Կաթողիկոսը, Օգոստոս 5-ին, մեկնած է Պրազիլէն եւ անցած Ուրուկուէյի մայրաքաղաքը՝ Մոնթէվիտէօ, ուր մնաց միայն մէկ օր: Աղօթք եւ քարոզ տեղի ունեցան Ներսէս Շնորհալի Եկեղեցւոյ մէջ: Օգոստոս 6-ին ծաղկեպսակի զետեղում տեղի ունեցած է Անկախութեան հրապարակը, ապա Գարեգին Ա. այցելած է քաղաքապետարանը, հայկական վարժարաններ ու ժամը 17-ին ընդունուած է Հանրապետութեան նախագահին կողմէ: Նախատեսուած ծրագրէն դուրս Կաթողիկոսը նոյն իրիկունը այցելած է նաեւ Հ.Օ.Մ.-ի խնամակալութիւնը վայելող տարեցներու հանգստեան տունը: Հուսկ, իրեն ի պատիւ ճաշ մը տրուած է Ներսէսեան վարժարանի սրահին մէջ:

ԱՐԺԱՆԹԻՆ

Յաջորդ օրը, Օգոստոս 7-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսը անցած է Արժանթին: Հոծ բազմութեան մը ներկայութեան, գոհաբանական աղօթք եւ քարոզ կատարուած են Պուէնոս - Այրէսի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ, ուր ողջոյնի խօսքը արտասանած է թեմին առաջնորդը՝ Գիսակ Արք.:

Պուէնոս - Այրէսի մէջ, Կաթողիկոսը ունեցած է բազմաթիւ եւ բազմատեսակ հանդիպումներ եւ տեսակցութիւններ: Օգոստոս 7-ին յաջորդաբար յիշենք՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Կրթական Հաստատութեան աշակերտութիւնը, Հայ Աւետարանականներու ներկայացուցիչները, մամուլը, «Պօղոս Արզումանեան» հիմնարկութեան ընդունելութիւնը: Օգոստոս 8-ին, Գարեգին Ա. տեսակցութիւն մը ունեցած է Կաթողիկէ Եկեղեցւոյ առաջնորդ՝ կարդինալ Կուարաչինոյի հետ, Ներկայ եղած են նաեւ Քոյր Եկեղեցիներու ներկայացուցիչներ: Ողջոյնի եւ աղօթքի խօսքեր արտասանուած են եւ այս էքիւմենիք աղօթքը վերջ գտած է Գարեգին Ա.ի եւ ծիրանաւոր Կուարաչինոյի «Պահպանիչ»ով, հայերէն եւ սպաներէն:

Կաթողիկոսը, ապա, այցելած է Հ. Բ. Ը. Մ.-ի կեդրոնը, հանդիպած «Պերճուհի Խմիրեան», «Մարի Մանուկեան», «Սըրբուհի Էկէշեան» վարժարաններու աշակերտութեան: Հանդիպումներու աւարտին ճաշ մը տրուած է Կաթողիկոսին ի պատիւ: Շարունակելով իր այցելութիւնները, Գարեգին Ա. նոյն օրը գացած է Հ.Օ.Մ.-ի Հանգստեան Տունը:

Օգոստոս 9-ին, Կաթողիկոսը անցած է Գորտոպա, ուր եւս ունեցած է զանազան հանդիպումներ,

Օդակայանէն առաջնորդուած է Սուրբ Գէորգ Եկեղեցին, ուր նաեւ տեղի ունեցած է Գոհաբանական աղօթք եւ քարոզ: Կէսօրէ յետոյ, այցելած է Նահանգապետարան, որմէ ետք, պանդոկը մամուլի ասուլիս մը տեղի ունեցած է, պետական հեռատեսիլի, տեղական թէ հայ մամուլի (ձայնասփիւռի եւ հեռատեսիլի) հետ:

Կաթողիկոսը այցելած է Հ. Բ. Ը. Մ.-ի կեդրոնը, Հ. Յ. Դ. «Անդրանիկ» ակումբը, ուր ամփոփուած է Արամ Երկանեանի աճիւնը, որու շիրիմին առջեւ, Գարեգին Ա. հոգւոց մը արտասանած է:

Իրիկունը հանդիսութիւն մը տեղի ունեցած է Ս. Գէորգ Եկեղեցւոյ կից՝ Գալըրճեան սրահը:

Օգոստոս 10-ին, Գարեգին Ա. այցելած է Կաթողիկէ Եկեղեցիին առաջնորդարանը, ապա, տեղի ունեցած է ողջերթի ճաշ մը եւ մատաղի օրհնութիւն: Ճաշի ընթացքին, Հայաստանի դեսպանը Վահան Տէր - Ղեւոնդեան Հայաստանի անձնագրեր յանձնած է Եղեռնէն վերապրած երկու Հայերու,

Կաթողիկոսը վերադարձած է Պուէնոս - Այրէս եւ նոյն իրիկունը այցելած հայկական Քաունթի Քլըպը ուր ճաշ մը տրուած է իրեն ի պատիւ:

Օգոստոս 12, Երկուշաբթի օր, առաւօտեան ժամը 10-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսը ընդունուած է Արժանթինի նախագահին՝ Գարլոս Մենէմի կողմէ: Իրեն ընկերացած են դեսպան Վահան Տէր - Ղեւոնդեան, Գիսակ, Տաթեւ եւ Գիւտ Եպիսկոպոսները եւ Կեդր. Վարչութեան ատենապետ Խաչատուր Քարամեան: Տեղի ունեցած է սիրալիր խօսակցութիւն մը: Գարեգին Ա. Նախագահին փոխանցած է Լեւոն Տէր - Պետրոսեանի ողջոյնները, ու նաեւ Ս. Գրիգոր Լուսաւորիչի շքանշանով պարգեւատրած Նախագահը ի գնահատութիւն հայ ժողովուրդին հանդէպ ցուցաբերած իր բարեկամական վերաբերումին:

Այս հանդիպումէն ետք, Գարեգին Ա. եւ իր շքախումբը այցելած են Գերագոյն դատարան: Աւելի վերջ, Կաթողիկոսը ընդունուած է Արտաքին եւ Կրօնից Նախարարութեան կողմէ:

ԲԻԶԱՆԴԱԿԱՆ ՏԱՃԱՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱՒԱՐԿ

Թուրքիոյ կրօնամէտ իշխանութիւնը Այա Սոֆիան աղօթատեղիի վերածելու իր յամառութեամբ բուռն վէճերու պատճառ է Թուրք հանրային կարծիքին մէջ: Առով ...ադրութիւնը կը գրաւէ նաեւ արեւ...մտեաններու: Խնդրոյ առարկայ տաճա...ն բացումը 537-ին կատարած է Յուստի...նոս կայսրը: Յետոյ 1204-ին թալան...ած է, իսկ 1453-ին Պոլսոյ գրաւումով ...զկիթի վերածուած: Վերջապէս հինգ ...ար ետք Մուսթաֆա Քէմալ անոր տուած ...թանգարանի հանգամանք: Այա Սոֆիա...ի պատմութեան մէջ արձանագրուած է ...արապետ Սինանի անունն ալ, ան ...րցուցած ըլլալով կառոյցը որ փլուզ...ման վտանգի տակ կը գտնուէր:

1980 Սեպտեմբերի զինուորական պետա...ան հարուածի շրջանին եկեղեցիին կից ...ած բաժին մը կրօնամոլ տարրերուն յանձ...ուած է, մինչ գլխաւոր շէնքը մնացած ...պէս թանգարան. այդ շրջանին փոխ-...արչապետ էր Ն. Էրպաքան: Ան այսօր ...երին վարչապետն է: Անոր գալուստով ...բորբոքուած է վէճը: Իսլամական ...րջանակները բնական կը նկատեն ամ...ող տաճարին մզկիթի վերածումը: Պա...ած կը ներկայացուի որ Սուլթան Մէհ...թի յաղթանակին այս խորհրդանշանը ...ծ յայտարարուի, Չէ՞ որ անոր հո...ակաները իրենք իրենց ձեռքով ...ները յանձնած են Սուլթանին: ...ահ կուսակցութեան կիներու յանձ...ումբի նախագահն ալ երաշխիք կու...ր հաւատացեալները պիտի յարգեն ...ին յարգարանքը եւ պատմական յի...ակները:

Այս պահանջը կը մտահոգէ թէ՛ երկրին ...րէ»ները որոնք փարած են քեմալական ...րենրգումներուն, թէ Թուրքիոյ քր...տոնեաները որոնք գրեթէ աննշան ...ամասնութիւն մը կը կազմեն, առա...ն գծի վրայ ունենալով շուրջ 70 հա...րնոց Հայ գաղութը:

...րիստոնեաներու համար տաճարին ...զկիթի վերածումը պիտի հակասէ Աթա...ուրքի պարտադրած քրիստոնեայ - մահ...տական հաշտութեան, որ կ'արգիլէ եր...ւ համայնքներէն մէկուն գերիշխանու...իւնը: Եթէ փոփոխութիւնը կատարուի, ...մետական աշխարհը առիկա պիտի ...ուէ Թուրքիոյ մէկ յաղթանակը. իսկ ...րքիա պիտի դառնայ հաւատացեալնե...ւ ըեկավարը: Այդ պարագային, Թուրք ...մականները որոնք երբեմն «Նոր Օս...ցիներ» կը կոչուին, կրնան պահանջել ...ւ խալիֆայութիւնը:

...նցեալ տարի այս նպատակին համար հանրագրութիւն մը բացուած է, հաւաք...ուած է հարիւր հազարաւոր ստորագրու...թիւն: Եթէ որոշումն ալ տրուի, առիկա պիտի նշանակէ թէ քրիստոնէութիւնը իր տեղը չունի այլեւս Թուրքիոյ մէջ:

Թուրքիա մզկիթի այլ հարց մըն ալ ունի: Ներկայի Մշակոյթի Նախարարութիւնը վաւերացուցած է Թաքսիմի հրապարակին վրայ մզկիթի մը շինութեան գաղափարը: Այս ծրագիրն ալ տասնամեակներէ ի վեր կը հակադրէ իսլամական...ները ու քեմալականները: Առաջինները կը պատճառաբանեն թէ նոյն թաղին մէջ կան 25 եկեղեցիներ, երեք սինակոկներ եւ միայն երկու մզկիթներ: Առիկա ամօթալի է: Խնդիրը հոն է որ լաիքներն ալ այդ նոյն վայրը քեմալականութեան բերդը կը նկատեն: Արդարեւ Պէյօղլուի այդ հրապարակին կեդրոնը տեղ գըրաւած է Մ. Քէմալի հերոսական արձանը. իսկ հրապարակին կ'իշխէ յունական Սուրբ Երրորդութիւն տաճարը: Ըստ այնմ, ինչպէս պիտի ըլլար Պաալիլի հրապարակէն վեր խոյացող մզկիթի մը պարագան:

Վիճայարոյց այս երկու խնդրին մէջ ալ իսլամական շարքայիններուն խօսակիցները աւելի քեմալականներն են քան քրիստոնեաները որոնք հայկական կոտորածներէ եւ Սեւրի դաշնագրէն ի վեր կը խուսափին ներկայութիւն մատնելէ:

Ռեֆահի յաղթանակը եւ անոր պարագլուխ Էրպաքանի վարչապետութիւնը լաիքները գետեղած է պաշտպանողական դիրքի վրայ: Առ այժմ իսլամական ղեկավարը կը ջանայ համաձայնութեան եզրեր գտնել անոնց հետ, յուսալով առկաւին վարանոտ ընտրողներ սիրաշահիլ եւ յարմար պահուն բաւարար քուէ ունենալ կառավարութեան մէջ իսկական մեծամասնութիւն կազմելու համար:

Ուշագրաւ է որ Այա Սոֆիայի աղօթարանի վերածումին ընդդիմացող իսլամականներ ալ կան. խմբագիր մը ըսելով հանդերձ թէ պիտի ուզէր հոն աղօթել, կ'աւելցնէ թէ սակայն առիկա քաղու մը ստանձնել պիտի նշանակէր: Եւ ժողովրդավարութեան մը մէջ կարելի չէ առիկա:

Քեմալական յեղաշրջումներէն 70 տարի ետք Թուրքիա աւելի քան որեւէ ատեն հարցադրումի կ'ենթարկէ ինքզինք: Աթաթիւրք երկրին պարտադրած էր ինքնութիւն մը որուն տակ շատ Թուրքեր հանգիստ չեն զգար իրենք զիրենք: Էրպաքանի լուծումը կրօնական այլընտրանքն է: Տակաւին վերջնականապէս որոշ չէ որ երկուքէն ո՛ր մէկը վերջնական յաղթականը կ'ըլլայ:

ՔԱՂՀԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ

ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐՈՒ ՀԱՍՈՒԵՏՈՒՈՒԹԻՒՆ

Նախագահական ընտրութեան երկու թեկնածուներ՝ Լ. Տէր - Պետրոսեան եւ «Արցախ -- Հայաստան» կազմակերպութեան կողմէ առաջադրուած Լենսեր Աղալովեան հրապարակած են վերջին տարուան իրենց եկամուտները: Առաջինը ստացած է 484 հազար 526 դրամ աշխատավարձ. առոր 9528 դրամը փոխանցած է «Հայաստան» հիմնադրամին: 23 հազար 220 դրամի եկամուտ մըն ալ ունեցած է որպէս Մատենադարանի գիտաշխատող. այդ գումարն ալ ամբողջութեամբ տուած է «Գթութիւն» բարեսիրական միութեան: Իսկ Լ. Աղալովեան որպէս ակադեմական եւ մեխանիկի հիմնարկութեան տնօրէն ստացած է 261 հազար 561 դրամ, նաեւ 660 տոլար՝ Պէրքլիի համալսարանին հետ կատարուած գիտական հետազօտութեան փոխարէն:

Մնացեալներէն Պարոյր Հայրիկեանի համար այդ գումարը եղած է 240 հազար դրամ. առոր 10 հազարը Ազգային ժողովէն ստացածն է, 120 հազարը իր ձայնապնակներու վաճառքին հասոյթը եւ մնացեալը գոյացած է անձնական նուիրատուութիւններէ:

Դեմոկրատական կուսակցութեան թեկնածու Արամ Սարգսեան 30 հազար դրամ աշխատավարձք ստացած է որպէս կուսակցապետ եւ «Ազդարար» թերթի խմբագիր: 600 հազար ռուբլի ալ ստացած է Մոսկուայի մէկ հրատարակչութենէն, 75 գերմանական մառք գերմանական հիմնադրամէ մը եւ 750 տոլար Սերպիոյ սոսիալիստական կուսակցութեան համագումարին ունեցած զեկուցումներուն փոխարէն:

***

ՇԻՐԱԿԻ ՑԱՒԵՐԸ

Աղէտի գօտին՝ Շիրակի մարզին մէջ երկրաշարժէն ութ տարի ետքն ալ գլխաւոր հարց կը մնայ բնակարաններու շինարարութիւնը: Աշոցքի, Ամասիայի, Արթիկի գիւղերուն մէջ եթէ լուծուած է խնդիրը, Ախուրեան, Գիւմրի քաղաքներուն մէջ նոյնը չէ պարագան: Մարզկեդրոնի բնակչութեան երկու երրորդը տուն չունի. շուրջ չորս հազար ընտանիք կ'ապրի առժամեայ կացարաններու մէջ: Գոհացնելու համար պահանջքը պէտք է 850 հազար քառակուսի մեթր բնակարան կառուցուի: Այս տարի գործածութեան յանձնուած տարածքը պիտի ըլլայ 90 հազար քառակուսի մեթր, ինչ որ նախորդ տարուընէ 25 հազար աւելի է: Ներկայիս կը քաջալերուի սեփական միջոցներով եղած շինարարութիւնը:

***

ԵՐԱԶԻ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆ

Շուկայ հանուած են «Երազ» ինքնաշարժներու ձեւափոխուած տարատեսակները: Այս տարուան արտադրութեան 120 Երազէն 60-ը ծախուած է Ռուսաստանի եւ Վրաստանի: Արտադրուած են նաեւ նոյն մակնիշով բեռնատարներ. անոնց 50 հատը պիտի ղրկուի Ուզբեկստան:

***

ՀԱՅԱՍՏԱՆ -- ԻՐԱՆ ԵԼԵԿՏՐԱԼԱՐ

Ուժանիւթի նախարարութեան տուեալներով սկսած է Հայաստան - Իրան բարձր ուժգնութեամբ ելեկտրահաղորդման գիծին շինութիւնը: Ան մօտ 40 քիլոմեթր երկարութիւն պիտի ունենայ Հայաստանի մէջ: Կը նախատեսուի աշխատանքը աւարտել մինչեւ տարեվերջ:

***

ՕՏԱՐ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ԿԸ ԲԱԶՄԱՆԱՆ

Հայաստանի տնտեսութեան կայունացման միտումները մեծապէս կը նպաստեն օտարերկրեայ ներդրումներու յաւելումին: 1995-ին այդ կարգի ներդրումներու 353 ձեռնարկութիւն հիմնուած է, իսկ այս տարուան առաջին վեց ամսուան ընթացքին 563, որոնց 340-ը համատեղ են: Համատեղ ձեռնարկութիւններ ստեղծըւած են 20 երկրի հետ, գլխաւորաբար Միացեալ - Նահանգներու, Իրանի, Ռուսաստանի:

***

ՆՈՐ ՈՒԺԵՐ ԲԱՆԱԿԻՆ

Օգոստոս 14-ին Պաշտպանութեան նախարարութեան սպաներու որակաւորման կեդրոնին մէջ տեղի ունեցած է բարձրագոյն ակադեմիայի առաջին շրջանաւարտներուն վկայականի հանդէսը: Հայրենիքին ծառայելու կամքը հաստատող այդ վկայականներուն երիտասարդ տէրերը մաս կը կազմեն ազգ. բանակին բարձրաստիճան սպաներու շարքին:

ՀԱՄԲՈՅՐԸ

ՀԱՄԱՍՏԵՂ

...երէկ կնիկ առանձին կը խօսէին: Կինը ...կողմէն կերակուրի խոնջան կը շըր...., Մարուշն ալ, կովը կթած, սթիլով ...ուն փրփրոտ կաթը սանդուխներէն ...կը հանէր, երբ դռնէն լսուեցաւ Մու...Ակոյի ձայնը:

...Խնամի:

Մարուշ կաթը պղնձէ խոշոր աման մը ...լեցուց ու կաթին պէս առատ իր մէջ ...դեցաւ կարօտը նշանածին: Մանաւանդ ...րօտի աւելի յորդ ջերմութիւն մը կը ...ր, երբ կը տեսնէր Մուրատի հայրը ...մ մայրը, երբ կը տեսնէր Մուրատենց ...ը, տանիքին հաւը, եւ կամ կ'անցնէր ...Մուրատենց պաղչին քովէն: Այդ բոլորին ...մէջ Մուրատէն բան մը կը գտնար: Մուրա...ենց ծառին մէջ նշանածին հասակը կը ...տեսնէր ու զով տերեւներուն մէջ անոր ...ոնցը պահուած կ'ենթադրէր:

Այդ բոլորը խոշոր լռութեան մը մէջ կը ...կատարուէր, -- լռութիւն մը, որ հեռահե...ռէ կը մեծնար ու կը դառնար երկնքի չափ ...լայն ու անպարագիծ: Ու այդ լռութեան ...մէջ էր, որ Մարուշ օրէ օր հասակ կը ...նետէր, կուրծքը կը լայննար, երեսը վարդի ...կարմրութիւն կ'առնէր, աչքերուն ու թարթիչներուն գոյնն աւելի կը սեւնար: Մարուշը, Մուրատի հետ նշանուելէն ի վեր, շակէ շիտակ նշանածին երեսը տեսած չէր. Մուրատ իրենց դռնէն անցած չէր: Է՛հ ինչ պիտ ըսեն: Գիւղին մէջ հազար լեզու կայ. պիտի խօսին, որ Մուրատ ու Մարուշ աչք ունք կ'ընեն իրարու: Էհ, որ հայրն իմանա՞յ...

Մարուշ մէկ անգամ միայն աղբիւրի ճամբան հանդիպած էր Մուրատին. երեսի գոյնը վարդի բոցի պէս բռնկած էր յանկարծ. աչքերը վար առած՝ ու բոլորովին շփոթած՝ քայլերն աւելի արագ առած էր: Է՛հ, ի՛նչ բախտաւորութիւն, որ ոտքը քարին չզարնուեցաւ եւ ուսէն չինկաւ ջուրին կուժը նոփ - նոր ու կարմիր:

Մարուշ ներս մտաւ, տան կօշիկները կարգի դրաւ, ճրագը լուսեց ու մօտեցաւ նշանածին հօր ձեռքը համբուրեց:

- Հա, Մուրատին ըսի, որ վաղը երթայ Հողդարը ցանէ, կը խօսէր Մուրատ Ակօն:

Երակներու պէս Մարուշի մէջ կը տարածուէր մանրամասն քարտէսը բովանդակ դաշտին. բացուեցաւ բլուրը, ուրկէ գիւղացիք սպիտակ հող կը բերէին. շոշի թէք ծառը քըջուոր. ճամբան, ուրկէ կ'անցնէր իր նշանածը իր երկու եզներով:

- Անցեալ օր տեսայ՝ Մուրատ շէնք շըրնորհք սերմ կը նետէր: Էնոր տարիքին սերմ ցանել ի՛նչ գիտէինք, - կը խօսէր Կարօ Մարսուպ:

Մարուշի մէջ աւելի կ'ընդարձակուէին դաշտը, արեւածաղիկները, երկինքն ու եզները: Այդ բոլորին մէջ Մուրատ, գոգնոյը կապած, սերմ կը նետէր լայն ու արձակ թեւերով: Ա՛խ, ինչքա՛ն գեղեցիկ էր անոր հասակը իր սերմի գոգնոցով. դորշ ճնճղուկներ արեւածաղիկներէն վար կ'իջնէին, աճապարանքով սերմի հատիկներ կը վերցնէին ու նորէն կը թառէին: Մաքրուշ որքան կը բաղձար՝ եզնիկ եղեղ հէքեաթի որբին պէս ըլլար գորշ թռչուն մը, արեւածաղիկներէն վար իջնէր, Մուրատի նետած մէկ հունտը վերցնէր ու թառէր Մուրատի գլխուն վրայ, գայն բարկացնէր ու այդպէս շարունակ ելլէր ու իջնէր. յետոյ թեւերը վար առնէր ու դառնար Մարուշը: Այն ատեն Մուրատ, մէկ ձեռքով սերմի գոգնոցը բռնած, միւսով Մարուշը պիտի գրկէր ու պիտի համբուրուէին...

Մարուշ շատ կը սիրէր որ իր սերմնացան նշանածին մասին խօսէին: Վաղը, երբ կարգուէր, անոր սերմի գոգնոց պիտի կարէր, սերմի գոգնոցին վրայ սերմեր վերցնող ճնճղկայ նաշխ պիտի բանէր: Է՛հ, ի՛նչ ճնճղուկ. կ'ըսես փայտէ շինուած ըլլար, կտուցը բռնած ցորենի քիստ մը, գլուխը անծեղի էր նման, ոտքերը փայտէ, թեւերն ալ կարծես մէյմէկ տախտակէ թիակներ ըլլային փակցուած:

- Մարուշ, աղջիկս, խնամի Ակոյին գինի մի բեր, - խօսեցաւ Նունիկ:

- Նունիկ, ինծի ըսիր գինին թթուեր է, - վրայ տուաւ Կարօ Մարսուպ:

- Էդ գինին խնամի Ակոյին համար իմ պահեր:

- Քա կնիկ, ես կ'ըսէի՝ ծերութեանս ատեն, Նունիկ ինծի տաշ հող պիտի տանէ: Խնամի ունեցար չունեցար, գիս երեսէ ձգեցիր. է՛խ, է՛խ, է՛խ, - խնդաց Կարօ Մարսուպ կատակ մը փորձելով:

Մայրը նկատեց որ Մարուշը անմիջապէս չհասաւ գինիին:

Մարուշը իր երազանքներուն մէջ էր տակաւին. սերմի գոգնոցը դեռ չըլրացուցած, գոգնոցին վրայի ցորենի քիստերը չնաշխած, առեղ թելը վրան գոգնոցը Մուրատի հասա մէջքին կը փորձէր թեւերը լայն բացած: Ինչպէս չլսեց, չէ՞ որ մայրը խնամուն համար գինի ուզեց: Մօր խօսքերը յետոյ միայն պղտոր ջուրի նըման իր մէջ պարզուեցան եւ ուշ մնացողի մը պէս ցատքեց իր տեղէն:

- Ա՛խ, Աստուած իմ, ի՞նչ է պատահեր այս աղջկան: Անցեալ օր ալ Մուրատի մայրը երբ եկած էր, ճրագը լուսած պահուն քիչ մնաց որ ճրագը ճրագդիլէն վար ձգէր, - ինք՛ իր մէջ նկատեց մայրը:

Մարուշ բերաւ դդումով գինին ու նորէն զբաղեցաւ ճրագին մօտ իր հօր ելէկին կոճակները կարելով:

Կարօ Մարսուպ ոչինչ նկատեց. լեցուց թասին մէջ գինին ու շրթներուն մօտ տանելով ըսաւ.

- Ինչպէս էսպէս, խնամին պիտի գայ, որ խնամուն սէպապով մենք ալ գինի խմենք. էս խնամին ինչ շուտ սիրուն եղաւ. էխ, էխ, էխ, դէ՛հ բարի եկար, Աստուած խնլլին ընէ:

Կարօ Մարսուպ լեցուց երկրորդ թասը ու երկարեց խնամուն:

- Ձեզ ողջութիւն, Աստուած Մուրատին ու Մարուշին շնորհն աւելցնէ:

Մուրատ Ակոն խմելէ յետոյ՝ գինիով թրջուած պեխերը ծծեց ու աւելցուց.

- Դէ՛հ, ալ աշունը եկաւ, վաղը մէկալ օր այդեկումն ալ կ'անցնի: Ես կ'ըսեմ հիմակուց հարսնիքի պատրաստութիւն տեսնեմ: Փառք Աստծոյ, էս տարի ձեռքս կէյնիշ է. կ'երեւի Մարուշի բախտն է: Հըմ հըմը, 110 չէրէկ ցորեն վերցուցինք կալէն: Հաշիւ ըրէ, խնամի, - շարունակեց, ձեռքին եաեւի մասով պեխերին թացութիւնը սրբելով: - Հաշիւ ըրէ, մինակ Մարխոնիէն 40 չէրէկ ցորեն եկաւ. ես ինծի գիտեմ է՛դ արտէն էդքան ցորեն հանած չէինք: Հեղ մը տեսնայիր, խնամի, էդ արտը փրփրեր դուրս կը թափէր, հասկերն էնպէս ծանր, գլուխնին էնպէս ցած, կ'ըսես մեղնէ աղէկներ, հիւրի փէրիներ հարսնիք են բռներ:

(Շար. 2)

(Շար. Ա. էջէն)

ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐՈՒ ԱՓՍՈՍԱՆՔԸ

Նախագահական վեց թեկնածուներ համդէս եկած են յայտարարութեամբ մը ուր ափսոսանք կը յայտնեն որ Հ. Յ. Դ.-ի թեկնածուն արգելափակուած է եւ կարելիութիւն չունի մասնակցելու ընտրութեան։

Հ. Յ. Դ.-ի ներկայացուցիչ Ռուբէն Յակոբեան յայտնած է թէ կուսակցութեան կողմէ թեկնածու առաջադրուած է Վահան Յովհաննիսեան, բայց ոչ մէկ փաստաթուղթ ներկայացուած է ընտրական յանձնաժողովին։

* * *

ՄԱՐԶԱԿԱՆ

Աւարտած է թէնիսի պետական ախոյեաններուն ախոյենութիւնը։ Յաղթանակած են Դաւիթ Բաբայեան եւ Նայիրա Սանթրոսեան։ Մրցաշարքին մասնակցած են 32 մարզիկ - մարզկուհիներ։ Ներկայիս թէնիսի հայաստանցի մարզիկները կը պատրաստուին ամսուան վերջաւորութեան Լիբանանի, իսկ Սեպտեմբերին Սուրիոյ եւ Թուրքիոյ մրցաշարքերուն։

* * *

ՍԵՒԱՆԸ ՕՐԱԿԱՐԳԻ ՆԻՒԹ

Սեւանի խնդիրներուն նուիրուած միջազգային խորհրդակցութիւն մը տեղի կ'ունենայ Հոկտեմբերին. կը մասնակցին համաշխարհային դրամատունը, նախարարութիւններ, գերատեսչութիւններ։ Յատուկ ծրագիր կը ներկայացնէ Գեղարքունիքի մարզպետարանը։ Ծրագրով կը նախատեսուի ջուրի մակարդակը 3 մեթր բարձրացնել, ինչ որ կարելի պիտի ըլլայ Որոտանի ջուրերը լիճ փոխադրող ջրատարով եւ Եղվարդի ջրամբարին կառուցումով։ Երկու ծրագիրները շուրջ 110 միլիոն տոլարի յատկացում կը պահանջեն։ Արփա - Սեւան ջրատարին գործածութենէն ի վեր լիճին մակարդակը բարձրացած է 1 մեթր 80 սմ.։

* * *

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԻ ԿԵԴՐՈՆ

Հիմնադրուած է Սահմանադրական իրաւունքի կեդրոն որուն կազմին մէջ նըպատակ կայ վեց սփիւռքահայ ներկայացուցիչ ալ ընդգրկելու. անոնցմէ մէկն է Գալիֆորնիոյ նախկին նահանգապետ Ճորճ Տէօքմէճեանը։ Կեդրոնի Խորհուրդին նախագահ ընտրուած է Սահմանադըրական դատարանի նախագահ Գագիկ Յարութիւնեան։ Իսկ Վերահսկիչ Յանձնաժողովի նախագահ ընտրուած է Խոսրով Յարութիւնեան։

ԾՆՆԴԵԱՆ

ՄԿՐՏՈՒԹԵԱՆ

ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ

ԵՐԿԼԵԶՈՒ

ՁԵՐ ՀՐԱՒԷՐՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

ԴԻՄԵՑԷ՛Ք «ՅԱՌԱՋ»Ի ՏՊԱՐԱՆԸ

ԽՆԱՄՈՒԱԾ ԱՇԽԱՏԱՆՔ,
ԱՐԱԳ ՅԱՆՁՆՈՒՄ

Տեղւոյն վրայ ճոխ ճաշակ

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

Փարիզի եւ Շրջակայից Կրօնական Ընկերակցութեան Ներկայացուցչական ժողովը, Վարչական Խորհուրդն ու Մայր Տաճարի Հոգաբարձութիւնը կը ծանուցանեն, թէ՝ Կիրակի, Սեպտեմբեր 1-ին Փարիզի Ս. Յովհաննէս - Մկրտիչ Մայր Տաճարին մէջ, Հոգեհանգիստ կը կատարուի։

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան եւ Հայ Եկեղեցւոյ Ազգային բարերար՝

ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

համար, անոր մահուան քառասունքին առիթով։

Կը հրաւիրուի մեր ժողովուրդը ներկայ գտնուիլ Հոգեհանգստեան պատարագին, երախտագէտ ըլլալով աղօթել հանգուցեալի հոգւոյն համար եւ նորոգուիլ անոր երկրային կեանքի օրինակով։

CROIX BLEUE
DES ARMENIENS
DE FRANCE

CBAF - Section St Jérôme / Djavo Chant

Sortie
MUSEE DOBREE / NANTES
Exposition

Arménie

Les Trésors du patrimoine archéologique arménien des origines au IV siècle

Vendredi 6 Septembre à 22 h
place de la Rotonde Dikran Tekeian
Saint Jérôme
Départ de Nantes le Samedi soir

PAF de transport et visite musée
350 F environ

pour tous renseignements
et réservations :
tél.: 91 70 00 32 et 91 61 10 82

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Մայր ՀՄՄ.--ի 75-ամեակի եւ
Ֆրանսայի ՀՄՄ.--ի Մարտիկ
մասնաճիւղին 10-ամեակի
ճաշ -- պարահանդէսը
Հոկտեմբեր 12-ին
Orée du Bois (Porte Maillot)

ՔԱՌԱՍՈՒՆՔԻ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Հ.Բ.Ը.Մ.-ի Ֆրանսայի Շրջանակային Վարչութիւնն ու Փարիզ - Իլ տը Ֆրանսի Տեղական Յանձնաժողովը կը ծանուցանեն թէ Կիրակի, Սեպտեմբեր 1-ին, Փարիզի Ս. Յովհ. - Մկրտիչ Մայր Տաճարին մէջ

Հոգեհանգստեան Պաշտօն

կը կատարուի յաւարտ պատարագի։

Հ. Բ. Ը. Մ.-ի ցկեանս նախագահ եւ ազգային անզուգական բարերար, Հայաստանի Հանրապետութեան Ազգային հերոս, Ս. Գրիգոր Լուսաւորիչի Խաչին Դափնեկիր՝

ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

հոգւոյն պայծառացման համար, անոր մահուան քառասունքին առիթով։

RENTREE 1996

Où inscrire votre enfant ? Pensez à

L'ECOLE PRIVEE HAMASKAINE

ENSEIGNEMENT BILINGUE ARMENIEN - FRANÇAIS
DE LA MATERNELLE A LA TERMINALE
PRIMAIRE et COLLEGE
sous contrat

Classes à petits effectifs
Suivi des études personnalisé pour chaque élève
Avantage de présenter l'arménien en LV1 et en spécialité (coefficient 7ou8)

INSCRIPTIONS
à compter du 12 août, sur rendez-vous

Adresse
185, chemin des Sables Jaunes
13012 Marseille

Tél. : 91 93 75 25
Fax : 91 88 22 65

MAISON DE LA CULTURE
ARMENIENNE D'ALFORTVILLE
ԱԼՖՈՐՎԻԼԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՏՈՒՆ

1976-1996
M.C.A. 20ème

En Octobre prochain, la M.C.A. d'Alfortville fêtera le 20ème anniversaire de l'INAUGURATION DE SA STRUCTURE.

AU PROGRAMME :

vendredi 11 octobre à 19h
Salle des Fêtes
SOIREE D'OUVERTURE DES MANIFESTATIONS

samedi 12 octobre à 10h
EMISSION RADIO «Cartes sur table»
AYP FM 99.5

samedi 12 octobre à 20h45
Salle des Fêtes
SOIREE ARTISTIQUE ARMENIENNE
Musique traditionnelle
Danse -- Voix

dimanche 13 octobre à 11h
Eglise Apostolique Arménienne
MESSE DE REQUIEM
à la mémoire des Fondateurs disparus

mercredi 16 octobre à 10h15
EMISSION RADIO
«Que sont les anciens élèves devenus? Cours et Parcours»
AYP FM 99.5

vendredi 18 octobre à 20h45
Salle des Fêtes
SOIREE THEATRE ARMENIEN

samedi 19 octobre à 20h
Salle des Fêtes
DINER SPECTACLE

Programme détaillé ultérieurement

Pour tous renseignements : M.C.A.
9, rue de Madrid, 94140 Alfortville
Tél.: 43 76 55 89 Fax: 43 78 66 64

8 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1996

ՄԻՒՌՈՆՕՐՀՆԷՔ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԷՋ

Յայտնի է մեր ժողովուրդին, թէ յառաջիկայ 8 Սեպտեմբերին (1996) Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ՝ Նորին Սուրբ Օծութիւն ՏԷՐ ՏԷՐ ԳԱՐԵԳԻՆ Ա. Ծայրագոյն Պատրիարք -- Կաթողիկոս Ամենայն Հայոց իր անդրանիկ Միռոնօրհնութիւնը պիտի կատարէ։

«Միւռոնի Օրհնութիւնը ողջ Հայ ժողովուրդին համար հոգեկից առիթ է եւ միջոց, մեր ժողովուրդի Քրիստոնէական և Ազգային կեանքի վերանորոգութեան եւ զարգացման համար»։

Առ այդ, սրտագին կոչ կ'ընենք Ֆրանսայի եւ ամբողջ Արեւմտեան Եւրոպայի հոգեւոր մեր զաւակներուն, խումբերամ բազմութեամբ Ուխտի երթալ Սուրբ Էջմիածին ու Շնորհօք վերազարդարուիլ՝ Սուրբ Միւռոնի բացառիկ այս Օրհնութեան ներկայ գտնուելով։

Այս նպատակաւ, Սեպտեմբեր 5-էն 12-ին՝ մէկ շաբաթուան՝ դէպի Հայաստան Ուխտագնացութիւն կազմակերպուած է։

SABERATOURS-ը մեր կողմէ լիազօրուած է ապահովել ճամբորդական բոլոր կործառնութիւններն -- վիզա, օդանաւ, պանդոկ, պտոյտներ, ապահովագրութիւն եւ սնունդ։

Անհրաժեշտ է անյապաղ փութով, մինչեւ 31 Յուլիս ներառեալ, արձանագրուիլ յիշեալ Ուխտագնացութեան, կանխելու համար տեղ ապահովելու յետագայի խճողումը։

ԴԻՒԱՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ
ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ

Արձանագրուելու համար դիմել. --
S A B E R A T O U R S
19, rue St-Roch, 75001 PARIS
Tél. : 42. 96. 10. 10 — Fax : 42. 96. 18. 77.

Imprimé sur les presses du Journal «HARATCH» 83, rue d'Hauteville, 75010 Paris
Commission Paritaire : N° 55935 SIRET : 51027317 A R.C. Paris

ՈՒՐԲԱԹ
ՕԳՈՍՏՈՍ 23
VENDREDI
23 AOUT
1996

LE NUMERO : 5,00 F.

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1925-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE-FONDE EN 1925
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 47. 70. 86. 60 — TELEX : HARATCH 280 868 F
— FAX : 48. 00. 06. 70 —
C.C.P. PARIS 15069-82 E

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 1·100 Ֆ. - Վեցամսեայ : 560 Ֆ.
Արտասահման : Տար. 1·400 Ֆ. (ամէնօրեայ առաքում)
1·250 Ֆ. (շաբաթական առաքում) - Հատը : 5,00 Ֆ.

...ՐԴ ՏԱՐԻ - ԹԻՒ 18·923 Fondateur SCHAVARCH MISSAKIAN 72e ANNEE — N° 18.923

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

...ԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ա-... ճկուն բնոյթ մը տուաւ, Օգոստոս ...-ին, իր քաղաքականութեան «առանց ...ութի» Ափրիկեցիներուն հանդէպ: Ար-...ներ, Ա. Ժիւփէ որ արձակուրդէն հապ-...կերպով վերադարձաւ, նախարարաց ...ժողով մը գումարեց եւ որոշեց Պե-...թեան Խորհուրդին դիմել վերաքննե-... համար Փասքուա օրէնքները, որոնց ...ան վրայ կը մերժուի կանոնաւորել ...Ափրիկեցիներու վիճակը: Նոյն օրը, ...Լ. Տըպրէ ընդունեցաւ այդ Ափրիկե-...երու բանբերը, որ գոհ չմնաց տեսակ-...թենէն: Ներքին նախարարը կրկին շեշ-... թէ օրէնքը չի կրնար չգործադրուիլ, ... խոստացաւ աւելի մարդկային մօ-...ցում մը ցուցաբերել: Ժ. Լ. Տըպրէ ...թէ չի կրնար կանոնաւորել վիճակը ...ոնց որոնց ապաստանի իրաւունքը մեր-...ած է, ոչ ալ ամուրիներուն, բայց ... պարագաները պիտի քննուին առան-... առանձին, Ասոր պիտի ընկերանայ ... Պետութեան Խորհուրդին վճիռը վե-...նայումէ վերջ օրէնքին: Միւս նոյն ..., 4000 - 5000 հոգի զօրակցութեան ... մը ըրին Ռեփուպլիքէն Սէն - Պերնար ...եցին, գլխաւորութեամբ Մարթին ..., Լ. Շվարցընպերկի, Ռ. Հիւի, ... Քրիվինի, Մարինա Վլատիի եւայլն, ...։

...Ւծի մէջ (Պելժիա) Օգոստոս 22-ին ... կ'ունենար յուղարկաւորութիւնը ... երկու աղջնակներուն որոնք տար-... մը սեռային եւ այլ չարչարանքներէ ..., անօթութենէ մեռած էին եւ թաղ-... Մարք Տիւթրուի պարտէզը: Շուրջ ... հազար հոգի կը մասնակցէին յուղար-...ութեան, բազմաթիւ հաստատու-...ներ փակ կը մնային, ազգային բը-... տալով այս ահաւոր ոճրագործութեան: ... ընտանիքները խնդրած էին որ ...ուորը՝ Ալպէր Բ. ներկայացուցիչ ..., որովհետեւ ոչ մէկ պատասխան ... էր, երբ, ճարահատ այդ ընտանիք-...ը նամակով իրեն դիմած էին որպէսզի ... աղջնակները փնտռելու: Պելժիոյ ...դարադատութիւնը մեծ մեղաւորը կը ... այս ամբողջին, քանի կը պար-... որ 1993-էն ի վեր Մարք Տիւթրու ... մտահոգիչ տեղեկատուութեանց ...րկայ եղած էր: Հետաքննիչի կայանը ...պարակած է ոստիկանական տեղեկա-... մը որմէ կը պարզուի որ այդ թուա-...էն ի վեր, ծանօթ էր որ Տիւթրու իր ...ները կարգի դրած էր մանուկներ ...ելու համար:

...ԵԲԷԴ ապահովութիւն տուաւ Օգոս-... 21-ին որ համաձայնութիւն մը գո-...ած է անկախապաշտներուն հետ, եր-... ժամուան խօսակցութիւններէ ետք եւ ...դադար մը թոյլ պիտի տայ որ նախա-...ուած ռուսական յարձակումը Գրոզ-... վրայ տեղի չունենայ: Ազատ արձակ-...ած են ֆրանսացի եւ բրիտանացի եր-... անձերը, անդամ՝ Անօթութեան դէմ ...ակերպութեան որ առեւանգուած էին ... օր առաջ:

...ՈՐՍԻՔԱՅԻ ԷՖ - ԷԼ - ԷՆ - ՍԷ - պատ-...ական ցանցի օրինաւոր ցուցափեղկը նը-...աուող՝ Ա. Գունդոլթայի ազգային ...ուղարը՝ Ֆ. Սանթոնի խմբագրա-... մը կը յայտարարէ թէ վերջ կը դնէ ...դադարին եւ կը վերսկսին պայքարը, ...որովհետեւ Ա. Ժիւփէ խաբած է զիրենք

ԵՐԵՒԱՆ — ՀԵՌԱՏԻՊ — ՓԱՐԻԶ

«ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Օգոստոս 21 / 22)

ՀԱՆՐԱԿԱՌՔԻ ԱՐԿԱԾ

Օգոստոս 20-ին, ժամը 18-ի շուրջ Գար-գար գիւղին մօտ արկած մը ունեցած է Վանաձորէն մեկնած հանրակառքը. ութ ճամբորդներ մահացած, աւելի քան 30 ալ վիրաւորուած են: Սկսած է արկածի պատճառներուն հետաքննութիւնը: Կառավարութիւնը ցաւակցութիւն յայտնած է արկածեալներուն եւ զոհերու պարագաներուն:

***

ԲՆԱԿԱՐԱՆԻ ՇԻՆՈՒԹԻՒՆ

ՄԱԿի Գաղթականներու բաժինին եւ Գերմանիոյ կառավարութեան միջոցներով կառուցուած 800 բնակարան գործածութեան պիտի յանձնուի: Գիւմրիի, Եղէգնաձորի, Ջարենցաւանի, Սիսիանի, Աշտարակի, Նայիրիի, Մեծամօրի եւ այլ վայրերու մէջ կառուցուած այդ շէնքերը պատրաստ կ'ըլլան մինչեւ Նոյեմբեր: Նախապատուութիւնը կը տրուի պանդոկներու, հանրակացարաններու, հանգստեան տուներու մէջ ապրողներու: Ըստ Գաղթականներու հարցերու վարչութեան, երկրին մէջ տակաւին 14·900 անտուն ընտանիք կայ:

***

ՃԱՏՐԱԿԻ ԱԽՈՅԵՆՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

Երեւանի ճատրակի յառաջիկայ 32-րդ ախոյենութեան ներկայ կ'ըլլան Կ. Գասպարովէ ու Ա. Գարբովէ զատ այլ միջազգային վարպետներ. անոնցմէ են Ռուսաստանէն Վլ. Կրամնիկ, Հնդկաստանէն Վ. Անանտ, Պուլկարիայէն Վ. Թոփալով, Ուկրանիայէն Վ. Իվանչուք:

եւ զսպումի խիստ միջոցներ կը պատրաստէ վերամուտին համար, ինչ որ կրնայ անոր անկումին ալ պատճառ ըլլալ:

ԻՐԱՆԻ նախկին նախագահ Պանի Սատր որ ապաստանեալի կեանք մը կը վարէ Ֆրանսա, Օգոստոս 22-ին, բացառիկ պաշտպանութեամբ Պէրլին գացած է, վկայելու համար Թեհրանի իշխանութիւններուն դէմ, զորս պատասխանատու կը նկատէ իրանցի չորս Քիւրտերու դէմ ոճրափորձին, որու հեղինակներուն դատավարութիւնը տեղի կ'ունենայ:

ԳԱՆԱ (հարաւային Լիբանան) որ անցեալ Ապրիլին խորայէլեան սաստիկ ռմբակոծութեան մը թիրախը եղաւ Հեզպոլլահի ուժերու ներկայութեան պատճառաւ, զբօսաշրջիկութեան վայր մը դարձած է, ինչ որ ըսել կուտայ Շէյխ Նաիմ Քասըմի (Հեզպոլլահի թիւ 2-ը)՝ «Շնորհիւ ռմբակոծութեան նահատակներուն, մեր ժողովրդականութիւնը հսկայ չափերով աւելցաւ»: Բազմաթիւ խանութներ ալ յուշանուէրներ կը ծախեն ռմբակոծութիւնը ոգեկոչող:

ԳԱՆՆԻ (Քօթ տ'Ազիւր) ոստիկանութիւնը ձերբակալած է Արաբական Իշխանապետութեանց մէկ իշխանը որ գողցուած Ֆերարի կառք մը կը վարէր Գրուազէթին վրայ, մեծ հպարտութեամբ: Կառքը գնած էր Ապու Տհապիի մէկ կառա-

ԹՈՒՐՔ ՄԱՄՈՒԼ

Ի՛ՆՉ ԿԸ ԳՐԷՐ ԷՆՎԷՐ 1921 ԻՆ

Թուրք մամուլը աճիւններու փոխադրութենէն ետքն ալ կը շարունակէ տեղ տալ Էնվէրի առընչուած գրութիւններու: Քիչ բացառութեամբ իրար կրկնող այդ էջերէն ուշագրաւ է Օգոստոս 21-ի «Հիւրրիյէթ»ի մէջ Մուրատ Պարտաքչըի ստորագրածը: Լրագրողին կարծիքով Էնվէրի մասին ամէնէն ճիշդ դատումը այն է որ անոր անձն ու գործը պէտք է դատել իր ժամանակին չափանիշերով եւ թէ ան յարգած է այդ ժամանակին պարտաւորութիւնները:

Գրութեան մեծ մասը յատկացուած է Էնվէրի կողմէ 1921-ի գարնան Մ. Քէմալի ուղղուած նամակի մը մասերուն: Առաւել հետաքրքրական են այն տողերը որոնք անառարկելի փաստը կուտան Մ. Քէմալի եւ իր գաղափարակիցներուն համայնավարամէտ ձեւանալուն եւ Ռուսերէն առնուած ոսկիին, զէնքերուն:

Ան կը գրէ. ... «Քեազըմ Գարապէքիր փաշան եւ դուք համայնավարութիւնը ընդունիլ ձեւացուցած էիք: Անգարայէն ստացած նամակներէս ու Գ. Միջազգայնականին մասնակցող պատուիրակներէ տեղեկացայ թէ Ջէրքէզ Էթհէմի ու կարգ մը այլ ընկերներու հետ Անգարայի մէջ հիմնած էք Համայնավար կուսակցութիւնը: Գիտնալով հանդերձ թէ համայնավարութիւնը ճիշդ ուղի մը չէ, ոչ ալ կարելի մեր ընկերային եւ տնտեսական կացութեան համար, շրջապատին դէմ ծիծաղելի կացութեան չմատնուելու համար ըսի թէ գոնէ համայնավար ձեւացած մեր ընկերները պէտք է յարատեւեն այդ ուղղութեամբ»:

... «Անգարայի պատուիրակները Ռուսերէն 200 հազար հրացան եւայլն ուզեցին: Անդրադառնալով որ Ռուսերը որոնց վիճակը տեսած էի լեհական ճակատին վրայ, չեն կրնար այդ պահանջը գոհացընել ու հարցը կը ձգձգուի, ըսի թէ կ'ընդունէինք ինչ որ տային ու ջանացի կարելի դարձնել կարգադրութիւնը: Այդպէսով, որոշ քանակութեամբ ոսկեդրամ եւ 15 հազար հրացան եւայլն առնուեցաւ»:

Նամակին մնացեալ մասին մէջ Էնվէր դառնութիւն կը յայտնէ որ Մ. Քէմալ ու շրջապատը զինք թշնամի ու մրցակից կը նկատեն: Կը շեշտէ որ իրեն միակ տենչը «երկրին ու իսլամականութեան փրկութիւնն է»: Այս մասին մէջ հետաքրքրական եւ յատկապէս ուսանելի են Երիտասարդ Թուրքերու գլխաւոր մէկ դէմքին կողմէ գրի առնուած այն տողերը ուր ան կ'ամփոփէ իր խէջը. «... Ես միակ իտէալ մը պիտի հետապնդեմ. ատիկա մահմետականները շարժման մղել է ճակատելու համար Եւրոպայի իրէշներուն դէմ որոնք կը ճնշեն իսլամականութիւնը»:

Եւ ըսել որ ամբողջ Եւրոպան մթագնող կայսրութեան հորիզոնէն որպէս բարձրացող արեւ ողջունած էր այդ խմբակը. այն խոր համոզումով որ Երիտթուրքերը նոր մարդիկ էին, նոր գաղափարականի տէր, փանած՝ ազգ, կրօնական մոլեռանդութեան նեղմտութիւնը...:

տունէն եւ հետը բերած էր Գանն ուր արձակուրդը կ'անցընէր:

«ՍԵՊՈՐԿԱՅԻ ԺՈՐԺԻՕ Ա. իշխանը» իր պետութեան անկախութիւնը հռչակած է Օգոստոս 20-ին: Այդ «պետութիւնը»՝ Փատնիա 14 քառակուսի քիլոմեթր տարածութիւն ունի եւ 362 բնակիչ: Մոնաքոյէն կէս ժամ հեռաւորութեան վրայ է, Իտալիոյ հիւսիս - արեւմուտքը:

ԿԱՐՍԸ ԿՐՆԱ՞Յ ԿԱՄՈՒՐՋԸ ԹԵԼԱԴՐԵԼ ԱՆԳԱՐԱՅԻ

Կարսէն թրքական պատուիրակութեան մը Գիւմրի այցելութիւնը ու ծրագրուած յետագայ քայլերը լուրջ ակնկալութիւններ կը ներշնչէին երկու երկիրներու սահմանային անցքին բացումին մասին: Կարսի առեւտրական - արդիւնաբերական պալատի նախագահ Մ. Եըլմազի որ նաեւ պատուիրակութիւնը կը գլխաւորէր, հետ կատարուած հարցազրոյց մը («Հայաստանի Հանրապետութիւն» Օգոստոս 13) քիչ մը եւս կը լուսաբանէ նիւթը: Պատասխանելով Մուրատ Բոջոլեանի, ան կ'ըսէ թէ աւելի քան 100 հազար ստորագրութիւն հաւաքուած է ժողովուրդէն, իշխանութեան ցոյց տալու համար թէ որքան մեծ է սահմանը բանալու փափաքը: Թուրք գործի մարդը ատիկա ընտրողներու ճնշումը կը նկատէ ընտրեալներուն վրայ, իրենց սեփական շահերը պաշտպանելու պահանջով, կ'աւելցնէ թէ «ինչ կը վերաբերի արդիւնքներուն, զանոնք կը տեսնենք հաւանաբար մօտ ապագային»: Կ'ըսէ թէ իրենց վերադարձին Կարսէն ընտրուած չորս երեսփոխանները կը ներկայացնեն սահմանը բանալու տեղացիներու պահանջը, որպէսզի անոնք միջնորդեն վարչապետին, փոխ - վարչապետին ու Հանրապետութեան նախագահին մօտ: Մ. Եըլմազ համոզում կը յայտնէ թէ «հարցին դրական լուծման համար հողը արդէն նախապատրաստուած է»:

Պատասխանելով Հայաստան - Թուրքիա յարաբերութիւններու մէջ Ազրբէջանի գործօնին մասին հարցումի մը, կ'ըսէ. «իմ կարծիքով, Հայաստանի եւ Ազրբէջանի յարաբերութիւնները պէտք չէ երբեք ազդեն Հայաստան - Թուրքիա յարաբերութիւններուն: վերջին հաշուով, մեր խնդիրը ոչ թէ քաղաքական, այլ տնտեսական է: Մանաւանդ որ մեր երկիրներուն միջեւ քաղաքական խնդիրներ չկան»: Կը շեշտէ տակաւին թէ ինք ու պատուիրակութեան մէկ անդամը ազրբէջանական ծագում ունին, ինչպէս Կարսի բնակչութեան զգալի մասը, բայց ատիկա արգելք չէ Հայաստանի հետ ընդհանուր յարաբերութիւններ մշակելու, զարգացնելու ցանկութեան:

Մ. Եըլմազ կը խօսի տնտեսականէն զատ նաեւ զբօսաշրջութեան հեռանկարներու մասին: Ապա աւելի ծաւալուն գետնի վրայ, կը փափաքի որ շրջանային գործակցութիւն ստեղծուի Արեւելեան Թուրքիոյ, Հայաստանի, Ազրբէջանի, Արեւմրտեան Վրաստանի միջեւ:

Զրոյցին աւարտին Թուրք գործի մարդը կը յայտնէ թէ յոյս ունի երկու շաբաթէն կրկին Հայաստան վերադառնալու եւ բերելու լաւ լուրեր:

Ցայտնապէս, մեծ մասով ազրբէջանական ծագումի տէր Կարսի բնակչութիւնը երկրին քաղաքական շատ մը դէմքերէն աւելի հասունութեամբ կը գնահատէ քաղաքական ու տնտեսական գործօնները, անոնց կարեւորութիւնը, եւայլն: Եւ նաեւ կը դիմէ գործնական քայլերու, աւելի քան 100 հազար ստորագրութեամբ հանրագրութիւն մը հասցնելով մինչեւ Հանրապետութեան նախագահին: Պէտք է սպասել Մ. Եըլմազի լաւ լուրերով Օգոստոսի վերջաւորութեան Հայաստան վերադարձին, որքան ալ տարօրինակ թուի դերերու այս դրեթէ յանկարծական շրջումը: Չէ՞ որ սահմանադռին բացումը կենսական կարեւորութիւն կը ներկայացնէր շրջափակուած Հայաստանին համար: Եթէ խնդրոյ առարկայ ջանքերը արդիւնք տան, Հայաստան - Թուրքիա առնուազն շրջանային տնտեսութեան աշխուժացումը պտուղը պիտի ըլլայ առաւելաբար Կարսի թուրքեւազրբէջանական ծագումներու տէր բնակչութեան վճռականութեան...:

Ա. ԹՈԹՈՅԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ՝
ՊԱՆՔ ՕԹՕՄԱՆԻ ԳՐԱՒՈՒՄԷՆ ԵԸԼՏԸԶԻ ՄԱՀԱՓՈՐՁԸ
(1905 ՅՈՒԼԻՍ 21)

Գրեց՝ Ա. ՊԷՅԼԷՐԵԱՆ

Սուլթանը երբ Դաշնակցութեան հետ կապ հաստատելու հետամուտ եղած էր, միաժամանակ պալատի լրտեսապետ եւ իր կաթնեղբայր Ահմէտ Ճէլալէտտին Փաշային պաշտօն տուած էր որպէսզի Եւրոպայի մէջ, դրամի եւ պաշտօնի խոստումով, Երիտթուրք առաջնորդները համոզէ Պոլիս վերադառնալու: Աբտիւլ-Համիտ այսպէսով կը յուսար «Միութիւն եւ Յառաջդիմութիւն Կոմիտէ»ի խափանարար գործունէութեան վերջ տալ: Սուլթանին բանագնացը Փարիզ եւ Ժընեւ այցելեց: Ան յաջողեցաւ քանի մը Երիտթուրքերու վերադարձը ապահովել, բայց Հայոց մօտ իր դիմումները անհետեւանք մնացին:

Մինչ Աբտիւլ-Համիտ զանազան միջոցներով Եւրոպա գտնուող ընդդիմադիր Թուրք եւ Հայ Կոմիտէները կը ջանար պառակտել եւ կազմալուծել, հայ ժողովուրդին իր դարաւոր հայրենիքին մէջ օրհասական կացութիւնը հետզհետէ միջազգային հանրային կարծիքին աւելի ուշադրութեան առարկայ կ'ըլլար: Յատկապէս Ֆրանսայի մէջ երեւելի դէմքեր՝ մտաւորականներ, քաղաքական անձեր ու լրագրողներ հայկական դատին անխոնջ պաշտպանները հանդիսացան: Այս խմբակին մաս կազմեցին Գլէմանսօ, Անաթոլ Ֆրանս, Ժորէս, Տընի Գօշէն, Ալպէր Վանտալ, Վիքթոր Պէրար, կոմս Ալպէր տը Մէօն, Փիէռ Գիյառ եւ դեռ ուրիշներ որոնք իրենց բանախօսութիւններով, գրութիւններով կամ Ֆրանսայի Ազգային Ժողովի բեմէն իրենց միջամտութիւններով ձաղկեցին Մէլին -- Հանօթոյի կառավարութիւնը որ իր լռութեամբ արիւնարբու Սուլթանին կառավարութեան պաշտպան կը կանգնէր (4): Հայկական դատի պաշտպան խմբակի ջահակիր Գլէմանսօ կը գրէր՝ «...Կարելի՞ է որ Փարիզէն հազիւ հինգ օրուան հեռաւորութեան վրայ (երկրի մը մէջ), քսաներորդ դարու բակիքին այսքան վայրագութիւններ գործուին անպատիժ կերպով» (5):

Հայկական դատին հաւաքոյթներուն ոչ թէ միայն Փարիզ գտնուող առեւտրական կամ հայ ուսանողներէ ոմանք, ինչպէս՝ Արշակ Չօպանեան, Պօղոս Գօլօլեան, Արփիար Արփիարեան, Մանուկ Աբեղեան, Նազարբեկեան, Լեւոն Բաշալեան եւայլն կանոնաւորաբար կը մասնակցէին, այլ նաեւ Երիտթուրք Կոմիտէի անդամներ կամ Թուրք եւ Հրեայ ուսանողներ: Այս ուսանողներու շարքին յիշենք մանաւանդ Նազըմ (6), Ռէֆիք Նէվզատ, Ալի Սաիպ որոնք բժշկական վարժարանի ուսանողներ են եւ յետագային գործօն դերեր պիտի ստանձնեն Երիտթուրք քաղաքական կոմիտէներու մէջ:

Հայ եւ Թուրք կազմակերպութիւններու յարաբերութիւններու մօտեցումը ի վերջոյ յանգեցաւ առաջին մեծ հաւաքական ժողովին որ 1902 տարուան Փետրուարին իշխան Սապահէտտինի (7) նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ: Սոյն ժողովին, հայկական եւ թրքական կազմակերպութիւններէն զատ, ներկայ գտնուեցան նաեւ յունական, մակեդոնական, ալպանական, հրէական, քրտական կոմիտէներու պատուիրակներ: «Միութիւն եւ Յառաջդիմութիւն Կոմիտէ»ի ներկայացուցիչ Ահմէտ Ռըզա Աբտիւլ -- Համիտը գահընկէց ընելու առաջարկին հակառակեցաւ, մինչ բոլոր միւսները Սահմանադրութեան վերահռչակման համար ուրիշ միջոց չէին տեսներ: Այս պատճառաւ թէեւ ժողովը ձախողեցաւ, բայց սկըզբունքով որոշուեցաւ Օսմանեան տէրութեան հպատակ ժողովուրդներու հասարակաց շահերու պաշտպանութեան համար գործակցիլ:

Եթէ Եւրոպայի մէջ հայասէր շարժումին հանդէպ Թուրք մտաւորականներուն հետաքրքրութիւնը շատ բնական է, քանի որ այդ շարժումը կրնար նոյնիսկ Օսմանեան կայսրութեան Փոքր Ասիոյ մէջ ամբողջականութեան սպառնալ, ինքնավար Հայաստանի վարչաձեւ մը սուլթանին պարտադրելով, բոլորովին այլ էին անշուշտ Հրեաներու հետաքրքրութեան պատճառները: Կ'արժէ որ քանի մը տողով Հրեաներուն քաղաքականութեան ներքին ծալքերը ամփոփենք:

Նախորդ դարու 90-ական թուականներու կէսէն սկսեալ երբ հայկական հարցը հրատապ փուլի մը մէջ մտաւ ու մեծ տէրութիւններու Միջին - Արեւելքի քաղաքականութեան կռուախնձոր եղաւ, սիոնիստ գաղափարաբանութեան հիմնադիրը Թէոտոր Հէրցլ ուզեց այս կացութենէն օգտուիլ: 1896-ի Պանք օթօմանի գըրաւման նախօրեակին Պոլիս այցելեց: Ան փափաքեցաւ Աբտիւլ - Համիտի հետ սակարկել: Եթէ Սուլթանը Հրեաներուն Պաղեստին ներգաղթը արտօնէր, Եւրոպայի դրամատէր Հրեաները Օսմանեան պետութեան դրամական վարկ պիտի տրամադրէին եւ միւս կողմէ ինք ալ արեւմտեան մամուլի մէջ Թուրքիոյ ի նպաստ քարոզչական յօդուածներ գրել տալով հայկական ջարդերուն պատճառաւ Թուրքիոյ վնասուած վարկը պիտի բարձրացնէր: Աբտիւլ - Համիտ Հէրցլի վերոյիշեալ առաջարկները մերժեց ու լուր ղրկեց ըսելով թէ «Եթէ Հրեաները Պաղեստին գան, օր մըն ալ հրէական խնդիր մը կրնայ ունենալ» (8):

Աբտիւլ - Համիտի ժխտական պատասխանը չվհատեցուց ոչ Հէրցլը եւ ոչ ալ Թուրքիոյ Հրեաները: Երիտթուրքերու շարժումը երբ հետզհետէ զօրացաւ, Թըրքահպատակ Հրեաներ իբր նախանձախնդիր երկրին քաոսային վիճակի բարելաւման, Երիտթուրք շարժումին միացան: Ասոնց ամէնէն երեւելի դէմքերն են Էմմանուէլ Գարասօ, Նայիմ Մազլիահ, Ալպէր Ֆուա. երեքն ալ իրաւաբան: Աւելորդ չըլլար նաեւ յիշեցնել թէ Գարասօ ազատ - որմնադիրներու շրջանակին մէջ ծանօթ դէմք մըն էր: Իբր գերյարգելի մեծ վարպետ Իտալիոյ մեծ Արեւելքի Սելանիկի «Մակեդոնիա Ռիզօրթա» ազատ - որմնադիրներու օթեակին, Թալէաթին, Միտհաթ Շիւքրիւ-ին եւ Ռահմի պէյին (յետագային Իզմիրի կուսակալ) անդամակցութեան կնքահայր եղաւ: Այսուհետեւ, Երիտթուրքերու գաղտնի ժողովները մասոններու օթեակին մէջ տեղի կ'ունենային որոնք օտարներու վերապահուած առանձնաշնորհումներով զինուած, անհպելի էին: Ինչպէս վերեւ ըսինք, մենք ուզեցինք մի միայն քանի մը տողի մէջ ամփոփել Հրեաներուն հայկական հարցին հանդէպ ցոյց տուած հետաքրքրութեան իսկական դրդապատճառները: Արդեօք, տարակո՞յս կայ թէ Փոքր Ասիոյ արեւելեան նահանգներու սքաքու fուօ_ի ոեւէ փոփոխութիւն Պաղեստինի քաղաքական կացութեան վրայ դրական կամ ժխտական ոեւէ հետեւանք չէր կրնար ունենալ: Այս մեկնակէտէն՝ Հրեայ ժողովուրդի առաջնորդները ոչ թէ միայն անցեալին, այլ նաեւ մեր օրերուն, Փոքր Ասիոյ մէջ տեղի ունեցած դէպքերու զարգացումին (9) նոյն ուշադրութեամբ կը հետեւին:

* * *

Օսմանահպատակ այլազան ժողովուրդներու ազատագրութեան միակ արգելքը սուլթան Աբտիւլ - Համիտն էր որ այնուհետեւ Գերմանիոյ պաշտպանութիւնը վայելելով, միւս մեծ տէրութիւններու բարեկամական բոլոր թելադրութիւնները կը մերժէր իմանալ: Այս անտանելի կացութեան մէջ ամէնէն դժնդակ վիճակ ունեցողը Արեւմտահայաստանի գաւառներու հայ ժողովուրդն էր: Օր չէր անցներ որ Մուշի, Սասունի, Բաղէշի, Սղերդի կամ Էրզրումի գիւղերէն քրտական Համիտիէ հեծելազունդերու ասպատակութեան լուրերը Պոլսոյ Պատրիարքարանը չհասնէին, Սասունի մէջ տեղացի հայ բընակչութիւնը չուզեր չարունակաբար Պոլսոյ Պատրիարքարանէն օգնութիւն աղերսել: Անոնք ինքնապաշտպանութեան կը դիմեն եւ քիւրտ աւազակախումբերը կորուստներ տալով կը նահանջեն: Աբտիւլ - Համիտ ինքնապաշտպանութեան դիմող Սասունցիները «ըմբոստ»ներ կ'որակէ: Անգլիա, Ֆրանսա եւ Ռուսաստան Էրզրումի, Բաղէշի եւ Վանի իրենց փոխ - հիւպատոսները Սասուն կ'ուղարկեն, տեղւոյն վրայ քննութիւն կատարելու համար: Շրջանի Օսմանեան իշխանութիւնները փոխանակ քրտական յարձակումներու դէմ անզէն բնակիչները պաշտպանելու, կամ անոնց կը միանան, կամ չէզոք դիրք բռնելով նախայարձակները կը քաջալերեն: Ֆրանսայի Վանի փոխ - հիւպատոս Ռուպէն երբ Մուշ կը հասնի, քաղաքը ահ ու դողի մէջ կը գտնէ: Ստորեւ ամփոփ կերպով կուտանք այն հեռագիրը զոր Պոլսոյ դեսպանատան կ'ուղարկէ դարասկիզբին հայկական գաւառներու տխուր մէկ պատկերը ներկայացնելով.

«Տանս մէջ 200 փախստական գաղթականներով երեք օրէ ի վեր պաշարուած եմ եւ առանց հացի: Իշխանութիւնները ոչինչ կ'ուզեն ընել: Կրնա՞մ քիչ մը հաց բաշխել գաղթականներուն: Ի պահանջեալ հարկին, որքա՞ն կրնամ ծախսել»:

Եթէ հիւպատոսը դեսպան Գոնսթանի կը հարցնէ թէ «կրնա՞մ հաց բաշխել գաղթականներուն», այս վերջինին ընթացքը ալ աւելի հետաքրքրական եւ գայթակղեցուցիչ է: Գոնսթան որ Գամպօնի յաջորդած է, Բ. Դրան հաճելի ըլլալու համար կ'ըսուի թէ անձնական հաշիւներ ունի... փոխանակ ուղղակի հիւպատոսին պատասխանելու, հեռագիրը Փարիզ Տէլգասէին կ'ուղարկէ որպէսզի արտօնութիւնը կեդրոնէն գայ մինչ այդ սովահար եւ սարսափած գաղթականները ահ ու դողի մէջ կը սպասեն:

Գաւառներու այս ողբալի վիճակին անշուշտ Հ. Յ. Դաշնակցութիւնը տեղեակ էր: Դաշնակցութեան հիմնադիր անդամներէն Քրիստափոր Միքայէլեան ինք յղացաւ Եըլտըզի բռնակալը իր որջին մէջ մահափորձի ենթարկելու գաղափարը: 1994 տարուան Յունուարին Սոֆիայի մէջ տեղի կ'ունենայ համագումար մը ուր Հ. Յ. Դաշնակցութեան առաջնորդ դէմքերը ներկայ կ'ըլլան: Քրիստափոր իր ծրագրին մասին տեղեկութիւններ կը հաղորդէ: Սուլթան Աբտիւլ - Համիտ, կանոնաւորաբար, ամէն Ուրբաթ Եըլտըզի պալատին ընդարձակ պարտէզին մէջ գտնուող մզկիթը աղօթքի կ'երթայ: Թէեւ պալատի եւ մզկիթին միջեւ եղած հեռաւորութիւնը քանի մը հարիւր մեթր է, բայց սուլթանը այդ փոքր ճամբորդութիւնը միշտ կառքով կ'ընէ: Կառքը մըզկիթէն մօտ հարիւր մեթր հեռաւորութեան վրայ միշտ նոյն տեղը կը սպասէ: Սէլամլըք-ի արարողութենէն յետոյ Աբտիւլ - Համիտ դէպի կառք կ'ուղղուի ու կը վերադառնայ պալատ: Ուրեմն, կը բաւէր Ուրբաթ օր մը, մզկիթէն ելլելին, դէպի կառք յառաջացած պահուն ուժանակով լեցուն կառքով մը զայն մահափորձի ենթարկել եւ իր հետեւորդներով միասին օդահան ընել օտար դիւանագէտներուն եւ ներկաներուն աչքին առջեւ: Այսքան յանդուգն ծրագրի մը յաջողութեան համար անհրաժեշտ էր Եըլտըզի մզկիթին սէլամլըք-ի արարողութիւններուն բոլոր մանրամասնութիւնները ուսումնասիրել: Դաշնակցութեան Կոմիտէն Քրիստափորին ծրագիրը կ'ընդունի: Մեծ ծրագրին յաջողութեան համար Քրիստափոր իբր գերմանացի հրեայ, Սամուէլ Ֆայն անունը կրող կեղծ անցագրով մը նախ Պոլիս կ'այցելէ: Տեղւոյն վրայ սէլամլըք-ի արարողութիւններուն կը հետեւի: Կը հաստատէ որ մզկիթէն ելլելէ յետոյ մինչեւ իր կառքը սուլթանը մէկ վայրկեան եւ 42 երկվայրկեանէն կ'երթայ հետիոտն: Ուրեմն, ուժանակ փոխադրող կառքը Սուլթանին կառքին եւ մզկիթին միջեւ պիտի սպասէ եւ ռմբատէրը անցած միջոցին պայթուցիկը պայթելով օդահան պիտի ընէ թէ Սուլթանը եւ թէ իր հետեւորդները:

(Շար. 2)

---

(4) -- Նախորդ դարու վերջին Ֆրանսայի մէջ հայասէր շարժումի պատմութեան համար մանրամասն տեսնել Edmond Khayadjian, *Archag Tchobanian et le mouvement arménophile en France*, Marseille, CNDP, 1986.

(5) -- Տե՛ս Ժ. Պ. Տիւրօսէլ, «Գլէմանսօ», Փարիզ, 1988, էջ 822:

(6) -- Այս անձը յետագային հայկական ցեղասպանութեան հեղինակներէն ծանօթ տոքթոր Նազըմն է: Բնիկ Սելանիկցի ու ծագումով հրեայ (*տէօնմէ*), թէեւ Երիտթուրքերու դատավարութեան մահուան դատապարտուեցաւ բայց անպատիժ մընաց: 1926-ին Մուսթաֆա Քէմալի դէմ դաւադրութեան յանցանքով կախաղան բարձրացաւ:

(7) -- Իշխան Սապահէտտին «Անթանթ Լիպէրալ» Կոմիտէի հիմնադիրն էր:

(8) - Հէրցլի յուշերը խիստ հետաքրքրական տեղեկութիւններ կուտան այդ շրջանին մասին:

(9) -- Բոլորին ծանօթ է որ Արեւմտահայաստանի գաւառները այսօր քրտական պահանջներուն մաս կը կազմեն:

ԳՐԱԿԱՆ ԱՌՕՐԵԱՅ

ՀԱՆԴԻՊՈՒՄ-ԶՐՈՅՑ՝ ԲԱՆԱՍՏԵՂԾ, ՔՆՆԱԴԱՏ ԳՐԻԳՈՐ ՊԸԼՏԵԱՆԻ ՀԵՏ

Ուրբաթ, 1996, Օգոստոս 2, երեկոյեան ժամը 9-ին, Համազգայինի Լեւոն Շանթ Մշակութային Կեդրոնին մէջ տեղի ունեցաւ հանդիպում - զրոյց՝ բանաստեղծ, քննադատ Գրիգոր Պըլտեանի հետ, որ Համազգայինի Կեդր. Վարչութեան հրաւէրով եկած էր Լիբանան, դասախօսութիւններու ճամբով մասնակցելու Համազգայինի Համազգութային Բ. Համախմբումին:

Առիթը յարմար նկատելով, Համազգայինի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը նախաձեռնած էր վերոյիշեալ հանդիպում-զրոյցին, առիթ ընծայելով նոր սերունդին՝ ծանօթանալու Գրիգոր Պըլտեան մարդուն, բանաստեղծին, քննադատին:

Երեկոյթին բացման խօսքը կատարեց բանաստեղծուհի Շուշիկ Տասնապետեան, որ ողջոյնի սրտաբուխ արտայայտութիւններէ ետք համառօտ կերպով ներկայացուց Գրիգոր Պըլտեանի գրականութեան յատկանշական կողմերը՝ իբրեւ նորարար բանաստեղծ, եւրոպական մշակոյթին քաջածանօթ քննադատ, նաեւ իբրեւ դասախօս՝ Սորպոնի Համալսարանի Արեւելեան լեզուներու բաժինին, թուելով ցարդ անոր հրատարակած բանաստեղծական, գրադատական գործերը:

Ապա խօսք առաւ նախկին պէյրութահայ, այժմ փարիզաբնակ Գրիգոր Պըլտեան, որ շեշտը դրաւ սփիւռքահայ գրականութիւնը աշխուժացնելու, ներկայի իր լճացած վիճակէն դուրս բերելու հրամայականի վրայ, միաժամանակ թելադրելով պատուհանները լայն բանալ միջազգային գրականութեան առջեւ եւ թարգմանութեան ճամբով պատուաստել մեր գրականութիւնը՝ եւրոպական գրական «կրթանք»ներու հիման վրայ, որպէսզի յաջողինք մեր «գաւառական» գրականութիւնը վերածել տիեզերական գրականութեան ու ստեղծել մեր նորօրեայ գրականութեան լեզուն, այնպէս՝ ինչպէս յաջողեցան ստեղծել Յ. Օշական, Փարիզի տղաքը եւայլն:

Գրիգոր Պըլտեան յատուկ նշանակութեամբ շեշտեց սփիւռքահայ գրականութեան կարեւորութիւնը, զայն նկատելով ուրոյն երեւոյթ՝ բաղդատած սպանական, գերմանական եւ այլ երկիրներու գրակա-

...ութեանց, որոնք թէեւ ունին նաեւ իրենց ...սփիւռքի գրականութիւնը՝ մշակուած ...երկրէն դուրս գտնուող գրողներու կողմէ, բայց այդ գրականութիւնները չունին ...սփիւռքահայ գրականութեան պարտադ...րութիւնը, որովհետեւ դատապարտուած ...են ապրելու՝ գրողին մահով կամ անոր ...երկիր վերադարձով, մինչդեռ մեր գրա...կանութիւնը մնայուն վիճակ մըն է, որ ...աւելի քան 80 տարիէ ի վեր կը շարու...նակուի եւ բոլոր տուեալները ունի շա...րունակուելու:

Շարունակելով, Գրիգոր Պըլտեան ներ...կայացուց նաեւ սփիւռքահայ գրականու...թեան ներկայ վիճակը, որ տակաւին կը ...շարունակէ դուրս ազգային իր դիմագիծը, ...եւ, հետեւաբար, չի յաջողիր ամբողջա...կանօրէն արտայայտել Սփիւռքահայուն ...զգացումները, որոնք այսօր աւելի տխե...ղծական են ու համամարդկային, Սփիւռ...քահայութեան կեանքին պայմաններուն ...բերումով:

Սփիւռքահայ գրականութեան այսօր...ուան ճգնած վիճակին պատճառները ...թուելով, ան տուաւ հետեւեալ հիմնաւո...րումները.

Ա. - Սփիւռքահայ Ա. սերունդի չիջու...մը՝ մօտաւորապէս 1970-ականներուն:
Բ. - Գրողներու թիւի նուազում:
Գ. - Գրական հանդէսներու նուազում:
Դ. - Գրական խմբակներու չգոյութիւն:

Գրիգոր Պըլտեան անդրադարձաւ նաեւ ...սփիւռքահայ վէպին եւ բանաստեղծու...թեան, իբրեւ քննադատ ներկայացնելով ...անձնական ըմբռնումները, թէ՝ ըս...փիւռքահայ վէպը չափազանց հետաքրքր...ական եւ ուրոյն նուաճում մըն է, ...եւ այսօր չունինք մեծ թիւով վէպեր, ...կայ ձգտումը՝ ներկայի մեր դըժ...ուարութիւնները վէպով նուաճելու (Վ. ...ական նախաձեռնած է բազմահատոր ...վէպ), եւ թէ՝ վէպը կը նկատեմ ընկե...րութիւն, որովհետեւ անիկա կը յաջողի ...ներկայանել այդ ժամանակաշրջանի հա...յ գրականութեան լեզուն. Բանաստեղծու...թեան պարագային, աշխարհի բոլոր ծա...գերուն ամէն օր նոր բանաստեղծներ կը ...կին թէեւ, բայց քիչեր կը յաջողին ու...րոյն լեզուի եւ ոճի արտայայտիչը դառ...նալ:

Իբրեւ քննադատ, Գրիգոր Պըլտեան ...գիրները հաղորդ դարձուց եւրոպական ...քննադատութեան ժամանակակից նուա...ճումներուն, շեշտելով, որ գրաքննադա...տութիւնը այսօր այլեւս չի նշանակեր ...գրական երկի դատում, այլ՝ մտածում ...ստեղծող աշխատանք, որ ստեղծած է ...իր յատուկ «կրթանք»ները (տիսիփլին) ...իբրեւ գրական ճիւղ մեծապէս կ'օգ...տէ անոնցմէ: Խորացնելով բացատրու...թիւնը, ան շեշտեց անհրաժեշտութիւնը ...սփիւռքահայ գրականութիւնն ալ նման «կրթանք»ներով հարստացնելու, եթէ կ'ուզենք նոր, ժամանակակից գրականութիւն ստեղծել, որուն մեկնակէտը պէտք է ըլլայ վերանորոգել մեր անցեալի աւանդութիւնները, այսինքն՝ նորոգել մեր աւանդական գրականութեան ընթերցումը:

Գրական նոր յղացք մը նուաճելու կարեւորութիւնը շեշտելով, Գրիգոր Պըլտեան վեր առաւ անհրաժեշտութիւնը՝ գրական մտածողութիւն զարգացնելու, որ կ'ենթադրէ տոհմիկէն անդին անցնիլ եւ հաղորդակցիլ համաշխարհային գրականութեան. միաժամանակ նուաճելով նաեւ մտածական ազատութիւն, հեռու՝ գաղափարախօսութիւններէ, որոնք կը կաշկանդեն գրիչն ու գրողը:

Խօսելով գրականութեան նորագոյն տաղնապներուն մասին, քննադատը զարգացուց այն միտքը, որ գրականութիւնը պէտք է ամէն գնով անջատել լրագրութենէն («Մեհեան» գրական հանդէսի հաւատոյ հանգանակին Դ. կէտը յիշելով), որովհետեւ գրականութիւնը սոսկական տեղեկութենէն անդին բան մըն է, անիկա արուեստ է, լեզու եւ ոճ, եւ գրողին հիմնական մտասեւեռումներէն մէկը պէտք է ըլլայ ինքնուրոյն լեզուի ստեղծումը. բան մը, որ նորագոյն գրականութեան հարցերէն մէկն է:

Իբրեւ լուծում այս հարցերուն, ան առաջադրեց ձեռնարկել թարգմանական գրականութեան, որ մեծապէս կը նպաստէ լեզուամտածողութեան եւ գաղափարներու հարստացման, ժամանակակից կշռոյթով կը պատուաստէ մեր լեզուն եւ լայն հորիզոններու բացուելու հնարաւորութիւն կ'ընձեռէ: Քննադատը նաեւ շեշտեց կարեւորութիւնը գրասէրներու եւ գրողներու միջեւ յաճախակի հանդիպումներուն, որոնք փոխադարձ ազդեցութիւններու, մտային հաղորդակցութեանց եւ գաղափարներու փոխանակման անհրաժեշտ խթաններն են:

Հանդիպումի աւարտին, ներկաներուն առիթ տրուեցաւ հարցադրումներու ճամբով արտայայտելու զիրենք մտահոգող հարցերը: Թէեւ սակաւաթիւ էին ներկաները, բայց չինէչ էր հանդիպում գըրոյցը, որուն առաւելաբար ներկայ էին երիտասարդներ, գրականութեան սէրով ջերմացած երիտասարդներ, բան մը, որ կարելի է յուսալի երեւոյթ նկատել, յա'տկապէս Համազգայինի նախաձեռնելիք յետագայ ծրագիրներուն համար, ուր կ'ակնկալենք, որ սփիւռքահայ գրականութիւնը ունենայ նաեւ իրեն արժանի տեղը:

«Ազդակ»
Օգոստոս 8

ՀԱՅԱՍՏԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ ՈՒ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Ազգային հարցի եւ ցեղասպանութեան ուսումնասիրման կեդրոնին տնօրէնը՝ Լեւոն Մկրտչեան յայտնած է թէ սկսած են վերաքննել ու նորովի ծրագրել ցեղասպանութեան մասին գիտական աշխատանքները: Կեդրոնը կը համակարգէ եւ կը հրատարակէ ուսումնասիրութիւններ, Հայաստանի ու արտասահմանի մէջ գիտական - քարոզչական աշխատանք կը տանի նաեւ պատուէրներ կուտայ գիտական տարբեր հաստատութիւններու: Արդէն հրատարակուած է «Հայոց ցեղասպանութեան պատճառներ եւ դասեր» եռահատորը ուր կ'ըսուի թէ լուսաբանուած են մինչեւ այսօր չուսումնասիրուած հարցեր:

Կեդրոնին ներկայի ծրագիրները կը ներփակեն հետեւեալ նիւթերը. չէրքէզական գործօնը, ռուս պատմագրութիւնը ցեղասպանութեան մասին, եւայլն: Հայաստանի ազգային գրադարանի հետ համաձայնութիւն գոյացած է Հայկական հարցին ամբողջական մատենագիտութիւնը կազմելու եւ հրատարակելու: Ըստ Լ. Մկրտչեանի, գլխաւոր նպատակն է մէկ - երկու տարիէն կազմակերպել միջազգային գիտաժողով մը ուր կը համակարգըւին ցեղասպանութեան պատմութեան հարցերը եւ յղացքները:

***

ՎԱՐԴԳԷՍ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ 64-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻՒ

Օգոստոս 9-ին ընտանեկան պարագաները նշած են գրող, հանրային գործիչ, երեսփոխան Վ. Պետրոսեանի 64-րդ տարեդարձը: Այս առթիւ այժմէականացած է երկու տարի առաջ (1994 Ապրիլ 15) կատարուած անոր սպանութիւնը եւ մարդասպանին մինչեւ այսօր գտնուած չըլլալու պարագան. Անոր կինը այցելելով «Ազգ»ի խմբագրատունը, դժգոհութիւն յայտնած է պաշտօնական դիրքերու անտարբերութեան հանդէպ, ըսելով. «Ոչինչ չի արուել յետմահու պետականօրէն յարգանքի տուրք մատուցելու գրողի յիշատակի համար: Միայն զանազան որոշումներ են կայացուել որ մնացել են թղթի վրայ: Ի հարկէ, հասկանում եմ վ. Պետրոսեանը մեր կառավարութեան միակ հոգսը չէ, սակայն այդպիսի անտարբերութիւնը մտահոգուելու առիթ է տալիս»:

Սոնա Պետրոսեան նամակ մը յանձնած է խմբագրութեան ուր կ'ըսէ. «...Շատ բաներ որ կարող էին կանխուել գոնէ յետոյ, ընդհակառակն, աւելի խճճուել ու բարդացել են: Ոչինչ չեն կարողացել անել բացելու համար այն թնճուկը որ ստեղծել են արդէն իրենք: Ես պատասխանատու եմ իմ իւրաքանչիւր բառի համար»:

***

ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

Էրեբունի արգելոցը 89 հեկտար տարածութեամբ ամենափոքրն է Հայաստանի. այսուհանդերձ, հոն կ'աճին ամէնէն հետաքրքրական բոյսերը, Գլխաւորը վայրի ցորենն է իր աւելի քան 100 տարատեսակներով: Կան տասնեակ մը բոյսեր որոնք մտած են «Կարմիր գիրք»: Վայրը հարուստ է նաեւ դեղաբոյսերով, ինչպէս՝ ծնեբեկը, փշոտ կապարը:

ՊԱՐԳԵՒ - ՄՐՑԱՆԱԿ ՓՐՈՖ. ՏԱՏՐԵԱՆԻՆ

ՄՈՍԿՈՒԱ.- Ռուս եւ Հայ ձեռնարկներու կեդրոնը իր տնօրէն՝ դոքթոր Արկադի Վարդանեանի միջոցաւ կը յայտարարէ, որ որոշած է վարձատրել փրոֆ. Վահագն Տատրեանը 5000 տոլարի իր «Մեծ մրցանակ» պարգեւով հայ պատմաբանին Հայկական Ցեղասպանութեան Պատմութիւնը մակդիրով վերջերս հրատարակած գործին բացառիկ արժէքին համար: Կեդրոնին ստեղծած դատաւորներու յատուկ կազմը իր այս ընտրանքը ըրած է հիմնուելով Մոսկուայի եւ Ս. Պետերսբուրգի մէջ պաշտօնավարող ռուս պատմագէտներու կշռադատումներուն վրայ: Կարդալէ յետոյ վերոյիշեալ գիրքը այս մասնագէտները միահամուռ վեր հանած են այս գործին մէջ ցուցաբերուած պրպըտումներու ընդարձակ տարողութիւնը եւ պատմագիտական վերլուծումներու մակարդակը: Դրամական պարգեւին կցուած մրցանակագիրը յատկապէս կը նշէ, որ գիրքը «աչքառու է իր գիտական խորաթափանց քննարկումներով, ինչպէս եւ վաւերագիրներու մեծ հոյլի մը օգտագործումով»:

Նկատի առնելով ռուսական ակադեմական շրջանակներու այս բարձր գնահատականը ինչպէս եւ այս հսկայ հատորին հիմնական արժէքը, Ռուս - Հայ Ձեռնարկներու կեդրոնը որոշեց ստանձնել տար ռուսերէնի թարգմանութեան եւ Մոսկուայի մէջ յետագայ հրատարակութեան ծախքերը, նպատակ ունենալով գիրքին տարածումը՝ Ռուսիոյ, ինչպէս եւ նախկին Խորհրդային Միութեան ռուսախօս ակադեմական շրջանակներու մէջ:

ՀԱՄԲՈՅՐԸ

ՀԱՄԱՍՏԵՂ

...դաշտի ոգիներ հարսնիք կը բռնեն այն ...ողուած ցորենին վրայ, ուր կ'ուզեն ա...տութիւն ձգել: Գիշերը, չգիտես ո՞ր ...մուն, դհոլ կը զարնեն, զուռնա կը ...են, պար կը պարեն, ձիարշաւ կը խա...ն: Ահա թէ ինչո՞ւ ցորենի հասկերը ի...նց գլուխնին կը ծռեն ու մէկի տեղ հա...ր կը բերեն:

...Մարուշ հեռուէն կը լսէր դհոլի ձայնը: ...էկ թիզ հասակով, երկար մօրուսով ճի...եր, փէրիներ հարսնիք են բռներ Մու...րատի ցանած ցորենի վրայ: Փեսան Մու...րատն էր ու հարսը Մարուշ: Ջէր կրնար ...ոնել. նոր երազանքներու ջերմութիւնով ...կը բռնկէր Մարուշ ու պսակին մէջ իր ...ձեռքը Մուրատի ձեռքին կ'երկարէր - այն ...ձեռքին, որ արտին մէջ մաճն էր սեղմեր ...ու սերմ էր նետեր: Մարուշ շատ ուշ ...նկատեց, որ ճրագին լոյսը կարմրեցաւ, ...ու փեթակներուն տակէն ստուերներ ելան ...հարսնիք ընող փէրիներուն պէս: Մայրը ...մի քանի անգամ աղջկան նայեցաւ. Մա...րուշ, գլուխը ծռած ասեղ կը զարնէր ու ճրագին քիթը առնելու համար շատ ուշ հասաւ:

- Ի՞նչ է պատահեր էս մեր աղջկան, - մայրը կը նեղուէր կը խօսէր ինքնիրեն:

- Արտօրնալու պէտք չունիս, խնամի. տահա ատեն շատ կայ հարսնիքին. այդեկութքն ալ ներս կ'առնենք, Աստուած ողորմած է: Իմնակին, խնամի, Իմնակին, - խօսեցաւ Կարօ Մարուսպ:

- Հա, Իմնակին, էդ լաւ ըսիր, խնամի, -- վրայ տուաւ Մուրատ Ակօն սեղանէն գինու գաւաթը վերցնելով: -- Խելքին թող ըլլի, Իմնակին թող ըլլի:

Եւ գաւաթը շրթներուն մօտեցնելով աւելցուց. --

- Փառք Աստուծոյ, դուրսը մէկ փարա պարտք չունիմ:

Գաւաթը առանց խմելու նորէն սեղանին վրայ դնելով շարունակեց.

- Խնամի, ալ մենք մեզի ենք, մէջերնիս օտար մարդ չկայ. հալերնիս վախտերնիս հիմա շատ լաւ է. հարսնիք ընելէ վերջ ձեռքս տահա եզա մը փարա կը մնայ: Հիմակուց հիմա եզա պէտք չունիմ. եզներս կենճ են,

Գինու գաւաթը նորէն վերցնելով. --

- Ըսել է՝ Իմնակին, հա՞:

- Հա, հա, Իմնակին, բամպակներն ալ ներս կ'առնենք:

- Էս տարի, որ տէրը ողջ պահեց, եօթը կարաս գինի պիտ լեցնեմ: Էնպէս հարսնիք մը ընեմ, որ գեղ մի գեղով ափ ի բերան մնան:

Մուրատ Ակօն կը պատրաստուէր ելլել, ու շտկուեցաւ կօշիկները հագնելու:

- Ըսել է, էդպէս, Իմնակին.

Կարօ Մարուպ ալ պահ մը դուրս ելաւ ու շտկուեցաւ Ջէթ քարը, ուր ճաշէն յետոյ մօտի դրացիները կը հաւաքուէին կը խօսէին գիւղի անցուդարձէն, հինէն ու նորէն: Կը խօսէին, թէ վարի կամուրջը ո՞ր թուականին շինուեցաւ, թէ էն առաջ աղբիւրը եկեղեցին մօտ կը վազէր, հա ճիշդ էն ծառին քով, որ հիմա մեծ քար մը կայ. թէ Մղտեսի Օվանին տունը օճախ է, ահա թէ ինչու էնոնց գոմէշները կը լուսնոտին ու կը դիւահարին. թէ տիրացու Մուսեխին ձայնը վարժապետին ձայնէն շատ բարձր կ'ելլէ:

- Որ էսպէս երթայ, էս գեղը պիտ փլի: Վախտին էզէ, իշխան, մեծն ու պզտիկ կար գեղին մէջ, խեր պէրէքէթ կար, - խօսեցաւ Կարօ Մարուպ:

- Ի՞նչ կայ, Մարուպ:

- Տահա ի՞նչ ըլլի: Էսօր էնպէս բաներ տեսայ, էնպէս բաներ լսեցի: Ինչպէս ըսի, էուէնջ խէր պէրէքէթ կար: Քանի մը չէրէկ ցորեն կը ցանէինք, կալին լերայ չափ չեճ կը վերցնէինք: Պարաքն ի՞նչ է, չկար: Թաղաւորին կուտայինք, աղային կուտայինք, եկեղեցիին կուտայինք, նորէն փեթակ ամպար ցորենով կը լենար: Հաշիւ ըրէ Թօրկանց տունը քառսուն հոգի սեղան կը նստէին. Վախտին ար նամուս կար, ամէն մարդ իր նամուսին տէրն էր:

- Ախր ի՞նչ է եղեր, Մարուպ, - ձայն տուաւ Աբգար Թումասը:

- Ըսել է, տահա չհասկցա՞ք, - վրայ տուաւ Սրապ Ղուկաս, Կարօ Մարուպի խօսքերը հասկնալ կարծելով:

- Ալաֆրանկա, ալաֆրանկա, - շարունակեց Կարօ Մարուպ, - հը ըլ ամչնար, իրիկուն առտու ժամ կուգայ խաչհամբուրի կը մօտենայ: Ծահիլ կնիկ բասծդ մինչեւ քթին ծէրը կը ծածկէ լաչակով: Խարը մինչեւ ճակատին կէսը բաց է: Կ'ըսես մէյտան է, մէյտան: Ալ ի՛նչ ըսեմ՝ պասմայով շալվար, կապերով գօնտռայ...

- Ես բան չհասկցայ, - ձայն տուաւ Աբեւիկ Ղուկաս:

- Ծօ ալ ի՛նչ ըսէ. լոս որ ըսէ՝ լուսնկայ հասկցիր:

- Էս օր ես ալ տեսայ, Մարուպ: Էդ ի՛նչ կէտիչ է, էդ հարսին էրածը չմնաց. էքնոյենց չէն տունը տակն ու վրայ ըրաւ: Ես ի՛նչ գիտեմ, ելաւ ձէնձնեց, թէ տէքրը իրեն ծուռ աչքով կը նայի, - վկայեց Ջիչօ Գիրգորը:

- Էդ կնկան երեսէն կ'ելլէ, Գրիգոր. երես մը ունի, կ'ըսես մեռոն չէ տեսեր, - ձայն տուաւ ուրիշ մը:

- Հիմա ալ ուզածին պէս կ'երկննայ կը կարճնայ, - մէջ ինկաւ Մլքոն: - Էն օրը, որ Մարկոս Ջրտուքի կ'երթայ, էն օրը, որ քաղաք բամպակ կը տանէ, մութն ու լուսուն մարդը քըրդ ներս կը մտնայ, ի՛նչ ըսեմ, աչքովս տեսայ:

- Ի՛նչ, մա՞րդ կը սիրէ, - ձայն տուաւ ուրիշ մը:

- Հա հա, էրիկն ալ գիտէ, կ'ըսեն: Կինէ, կնիկը տէի խենթ կ'ըլլի...

- Զըլլի, որ ... աղբիրին դիմացինը...

- Հա, հա գիտցածդ է...

- Ես ձեզի բան մը ըսեմ: Ես բան չհասկցայ, - նորէն ձայն տուաւ Աբեւիկ Ղուկաս:

- Ջեմ հասկնար, թէ ինչո՞ւ կը ցանէք. իշտէ Նաճար Գիրգորն է: Գեղ մի գեղով գիտէ:

- Հիմա Նաճար Գիրգորը Մարկոսին կնիկը կը սիրէ. էդպէ՞ս. ա՞, հա՛ս...կը՛...ցա՛յ:

(Շար. 3)

Պ. Ժան Պետոյեան,
Տիկին Զարմուհի - Ժանին Թորոսեան,
Տէր եւ Տիկին Սիմոն եւ Սեւան Յարութիւնեան եւ զաւակը՝ Վռամ,
Տիկին Զեփիւռ Փանիկեան,
Տէր եւ Տիկին Հրայր Թորոսեան եւ զաւակները,
ինչպէս նաեւ՝ Մատթէոսեան, Քէօսէեան, Տէրտէրեան, Փանիկեան, Մինասեան, Փալան, Ձէրչեան, Տէր - Սահակեան, Կեյկէլեան, Քէօշկերեան ընտանիքները եւ բոլոր պարագաները
ցաւով կը ծանուցանեն իրենց մօր, մեծմօր, նանիին, տալոջ, հօրաքրոջ, մօրաքրոջ, ազգականին եւ խնամիին՝

ՏԻԿԻՆ ՏԻՐՈՒՀԻ ՊԵՏՈՅԵԱՆԻ

(Ծնեալ՝ Միխալեան, Պարտիզակցի)

մահը որ պատահեցաւ Օգոստոս 20-ին, 92 տարեկանին:

Յուղարկաւորութիւնը կը կատարուի, Շաբաթ, Օգոստոս 24, ժամը 16·30-ին

Eglise de Bangor
Belle-Ile-en-Mer

եւ մարմինը կը փոխադրուի տեղւոյն գերեզմանատունը:

Որեւէ մահազդ ղրկուած չըլլալով, կը խնդրուի ներկայս իբրեւ այդ նկատել:

«ՅԱՌԱՋ». – Մեր ցաւակցութիւնները Տիկին Ժանին - Վիգէն Թորոսեանի եւ զաւկին:

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

CBAF - Section St Jérôme / Djavo Chant

Sortie

MUSEE DOBREE / NANTES

Exposition

Arménie

Les Trésors du patrimoine archéologique arménien des origines au IV siècle

Vendredi 6 Septembre à 22 h
place de la Rotonde Dikran Tekeian
Saint Jérôme

Départ de Nantes le Samedi soir

PAF de transport et visite musée 350 F environ

pour tous renseignements et réservations :

tél.: 91 70 00 32 et 91 61 10 82

«ՅԱՌԱՋ»Ի ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

71ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻՒ

ՄԱՐՍԷՅԼ. - Իվէթ եւ Ժիրայր Շալճեան 500 Ֆր.:

-ՎԵՐԱՄՈՒՏ-

ՇԱՒԻԼԻ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ ԵՐԿՕՐԵԱՅ ԴՊՐՈՑ

Շաւիլի Եկեղեցւոյ հովանաւորութիւնը վայելող երկօրեայ հայերէն լեզուի ու կրօնագիտութեան դպրոցի վերամուտի թուականն է Սեպտեմբեր 11, Չորեքշաբթի, առաւօտեան ժամը 10-ին:

Դասաւանդութիւնները տեղի կ'ունենան Եկեղեցւոյ կից Սարգիս Պալապանեան սրահին մէջ, հետեւեալ յայտագրով ու ժամանակացոյցով. -

- Չորեքշաբթի, ժամը 10 - 12. հայերէն լեզու եւ կրօնագիտութիւն, փոքր տարիքի աշակերտներու համար:
- Չորեքշաբթի, ժամը 14 - 16. հայերէն լեզու եւ կրօնագիտութիւն, պատանի տարիքի աշակերտներու համար:
- Ուրբաթ երեկոյ ժամը 18·30 - 21. հայերէն լեզու, չափահաս տարիքի աշակերտներու համար:

Յաւելեալ մանրամասնութեանց համար, դիմել դպրոցի ուսուցչին՝ Պր. Մեսրոպ Ադամեանին:

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՄԻՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

Լիոնի Հայկազեան Միօրեայ Վարժարանի վերամուտն է Չորեքշաբթի, Հոկտեմբեր 2-ին, Առաւօտեան ժամը 9-ին:

Դասաւանդութիւնները տեղի կ'ունենան Չորեքշաբթի, առաւօտեան ժամը 9-էն 12, կէսօրէ վերջ ժամը 14-էն 16:

Աշակերտները կրնան օգտուիլ կէսօրուան ճաշէն. իսկ երթեւեկի սպասարկութիւն մը կարելի է նախատեսել ծնողքներու հետ համաձայնելով:

Յաւելեալ տեղեկութեան եւ արձանագրութեան համար դիմել Եկեղեցւոյ Դիւանատունը:

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 PARIS
SIRET: 51027317 A R. C. Paris
Commission paritaire: N° 55935

à l'occasion de la
BENEDICTION DE L'HUILE SAINTE
A ETCHMIADZINE
célébrée
par SA SAINTETE KAREKINE Ier
CATHOLICOS DE TOUS LES ARMENIENS

LE DIMANCHE 8 SEPTEMBRE 1996

Pèlerinage en Arménie

DU 5 AU 12 SEPTEMBRE
(Transport aérien + Hôtel + Excursions)

RENSEIGNEMENTS ET INSCRIPTIONS

SABERATOURS	SEVAN VOYAGES
31, rue d'Argenteuil 75001 PARIS	48, cours de la Liberté 69003 LYON
Tél. : (1) 42 61 51 13	Tél. : 78 60 13 66
Fax : (1) 42 61 94 53	Fax : 78 60 92 26

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

Փարիզի եւ Շրջակայից Կրօնական Ընկերակցութեան Ներկայացուցչական Ժողովը, Վարչական Խորհուրդն ու Մայր Տաճարի Հոգաբարձութիւնը կը ծանուցանեն, թէ՝ Կիրակի, Սեպտեմբեր 1-ին Փարիզի Ս. Յովհաննէս - Մկրտիչ Մայր Տաճարին մէջ, Հոգեհանգիստ կը կատարուի:

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան եւ Հայ Եկեղեցւոյ Ազգային բարերար՝

ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

համար, անոր մահուան քառասունքին առիթով:

Կը հրաւիրուի մեր ժողովուրդը ներկայ գտնուիլ Հոգեհանգստեան պատարագին, երախտագէտ զգացումով աղօթել հանգուցեալի հոգւոյն համար եւ նորոգուիլ անոր երկրային կեանքի օրինակով:

UGAB . . . UGAB . . . UGAB . . . UGAB

«UGAB - 90»

A l'occasion de la célébration de son 90ème anniversaire. l'UGAB organise un grand

Gala de Bienfaisance

au profit des *TABLES DE L'UGAB*, en Arménie

le Vendredi 18 Octobre à 20 heures

au Pavillon Dauphine _ 75016 Paris

P.A.F. : 750 Frs

Rens. : 45 20 03 18 / 42 27 12 26.

UGAB . . . UGAB . . . UGAB . . . UGAB

SABERATOURS SEVAN VOYAGES SABERATOURS SEVAN VOYAGES SABERATOURS SEVAN VOYAGES

PARIS · EREVAN · PARIS
VOLS HEBDOMADAIRES

- ASSISTANCE À L'AÉROPORT
- ORGANISATION D'ACCUEIL ET DE TRANSFERT
- RÉSERVATION D'HÔTEL
- LOCATION DE VOITURE AVEC CHAUFFEUR
- EXCURSIONS GUIDÉES
- VOYAGES ORGANISÉS EN GROUPE

PRIX PARIS-EREVAN-PARIS A PARTIR DE 3700F
RENSEIGNEMENTS ET RÉSERVATIONS SUR SIMPLE APPEL

PARIS · EREVAN
VOL CARGO MENSUEL

SABERATOURS
31, RUE D'ARGENTEUIL - 75001 PARIS
TEL 42 61 51 13 - FAX 42 61 94 53

SEVAN VOYAGES
48, COURS DE LA LIBERTÉ - 69003 LYON
TEL 78 60 13 66 - FAX 78 60 92 26

EREVAN
37, RUE HANRABEDOUTIAN - EREVAN 10
TEL 52 85 48 - FAX 52 54 48

EN COLLABORATION AVEC
ARMENIAN AIRLINES

STUDIO VICKEN PARIS

ՔԱՌԱՍՈՒՆՔԻ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Հ.Բ.Ը.Մ.-ի Ֆրանսայի Շրջանակային Վարչութիւնն ու Փարիզ - Իլ տը Ֆրանսի Տեղական Յանձնաժողովը կը ծանուցանեն թէ Կիրակի, Սեպտեմբեր 1-ին, Փարիզի Ս. Յովհ. - Մկրտիչ Մայր Տաճարին մէջ

Հոգեհանգստեան Պաշտօն

կը կատարուի յաւարտ պատարագի:

Հ. Բ. Ը. Մ.-ի ցկեանս նախագահ եւ ազգային անզուգական բարերար, Հայաստանի Հանրապետութեան Ազգային հերոս, Ս. Գրիգոր Լուսաւորիչի Խաչին Դափնեկիր՝

ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

հոգւոյն պայծառացման համար, անոր մահուան քառասունքին առիթով:

1954 — 1996

PÈLERINAGE ANNUEL
42ème Anniversaire
ST-GRÉGOIRE à TALLARD

1954 — 1996

Une messe sera célébrée selon le rite de l'Eglise Apostolique Arménienne

ՏԱՐԵԿԱՆ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ԹԱԼԱՐԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ

Dimanche 15 Septembre

sous l'égide du Conseil Diocésain de l'Eglise Apostolique Arménienne du Midi de la France et le concours de l'Association Culturelle des Arméniens de Gap et des Hautes Alpes

Sous la Présidence de **MGR LAGRANGE, évêque de Gap,** et de **MGR DARON GEREJIAN, Vicaire Général des Arméniens du Sud de la France,**

le Rév. Père VARTAVAR KASPARIAN célébrera la messe à 10 heures 30, en présence du Clergé de Tallard et de ses environs.

La messe sera chantée par la Chorale de l'Eglise **Serpotz Tatéos-Bartoughiméos**

à 13 heures Un repas fraternel réunira les pèlerins dans la Salle Polyvalente de Tallard, en présence des autorités religieuses et civiles.

Des autocars, suivant le nombre des inscrits, seront mis à la disposition, pour des personnes qui ne peuvent se rendre par leurs propres moyens.

Départ à 7 heures précises

Pour tous renseignements et réservations s'adresser :

— **MARSEILLE** - Cathédrale Arménienne du Prado, Tél. : 91 77 84 70.
— **SAINT-ANTOINE** - Eglise Saint Tatéos Tél. : 91 65 56 75 M. Tashan Tél. : 91 65 54 45.
— **BEAUMONT** - Eglise Saint Grégoire L'Illuminateur, Tél. : 91 93 13 50.
— **CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE** - Tél. :91 93 30 08.
— **TOULON - ABRIS CLUB** - Tél. : 94 27 10 51.
— **Pour toutes autres régions - Ass. Culturelle des Arméniens de Gap** - Tél. : 92 51 71 80 (heures de repas) 92 51 00 87.

Prix du Trajet de Marseille	
Aller-retour seul	100 Frs
Repas seul	120 Frs
Aller-Retour et repas compris	220 Frs

Pour la vente d'objets demander l'autorisation à l'Association de Gap.

ՇԱԲԱԹ - ԿԻՐԱԿԻ
ՕԳՈՍՏՈՍ 24-25
SAMEDI - DIMANCHE
24-25 AOUT
1996

LE NUMERO : 5,00 F.

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1925-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE-FONDE EN 1925
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 47. 70. 86. 60 — TELEX : HARATCH 280 868 F
— FAX : 48. 00. 06. 70 —
C.C.P. PARIS 15069-82 E

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 1.100 Ֆ. - Վեցամսեայ : 560 Ֆ.
Արտասահման : Տար. 1.400 Ֆ. (ամէնօրեայ առաքում)
1.250 Ֆ. (շաբաթական առաքում) - Հատը : 5,00 Ֆ.

…ՐԴ ՏԱՐԻ - ԹԻՒ 18.924 — Fondateur SCHAVARCH MISSAKIAN — 72e ANNEE — N° 18.924

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՕԳՈՍՏՈՍ 23-ԻՆ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՊԵՑ ՍԷՆ-ՊԵՐՆԱՐ ԵԿԵՂԵՑԻՆ

…ւրբաթ առտու, Օգոստոս 23-ին, ժամը …0-ին է որ ապահովութեան ուժերը կը …լամտէին, պարպելու համար Սէն-…նար Եկեղեցին, ուր 300 Ափրիկեցիներ …ապաստանած են Յունիսէն ի վեր եւ ա-…նցմէ տասը կը շարունակեն հացադուլը …ւր եւ թէյ կը խմեն եւ կենսանիւթ ալ …ը գործածեն): Բախումներ պատահե-…ան, երբ ոստիկանական ուժերը փորձե-…ին Եկեղեցի մտնել եւ Ափրիկեցիներու …րավիգ անձեր շղթայ մը կազմած ջանա-…ին արգելք հանդիսանալ: Գիտինը պատ-…ած են տրոցկիստ Քրիվին եւ փրոֆ. Լ. …վարցնպերկ, որոնք նաեւ հեռացուած են: …վերջոյ, ոստիկանները Եկեղեցւոյ դուռը …արտակելով ներս մտած են: Բախումներ …պատահած են ինչ որ անխուսափելի էր, …այց, ծանր միջադէպեր տեղի չեն ունե-…ած: Հացադուլ ընողներ զանազան հիւան-…անոցներ փոխադրուած են, իսկ միւս-…երը Վէնսէնի վարչական կեդրոնը:

…ինչո՞ւ այս միջամտութիւնը եւ ան ալ …նչպիսի օր մը, երբ կը կարծուէր թէ …րդադրութեան մը ճամբան գտնուած …Արդարեւ, նախորդ օրը, Պետութեան …րհուրդը կուտար իր տեսակէտը: Ան …հշդէ որ կանոնաւորման որեւէ իրա-…ունք չկայ: Շահագրգռուածները ոչ մէկ …րաւունք ունին Ֆրանսա մնալու: Զիրենք …ամանագլուխ վերադարձնելու վերա-…բող հրամանագրերը պէտք է գոր-…ադրուին: Ալէն Ժիւփէ զոհունակու-…թեամբ կ'արձագանգէր այս որոշումին, …աւելցնելով սակայն թէ իւրաքանչիւր պա-…արագայ առանձին քննութեան պիտի ար-…ժանանայ, բայց, ամբողջական կարգադ-…րութիւն պիտի չըլլայ: Ասիկա քայլ մը …կը նկատուէր կառավարութեան կողմէ …ւ միջամտողներ կը յուսային ելք մը …ունել: Ափրիկեցիներուն մէկ մասը կ'ու-…զէր վերջ տալ շարժումին, ուրիշ ծայրա-…հեղներ կը յայտարարէին թէ մինչեւ ծայ-…րը պիտի երթան, Այս պայմաններու մէջ …որ Ուրբաթ վաղ առաւօտեան ոստիկա-…նութիւնը կը միջամտէր:

Այս (յապաղած) միջամտութիւնը մեծ …յուզում կը պատճառէր ամէն կողմ, …որովհետեւ կառավարութեան դիրքորոշ-…ման ձգձգումը պատճառ եղաւ որ հարցը …քաղաքական բնոյթ առնէ եւ ընդդիմու-…թիւնն ալ, պարզ է, կացութիւնը օգտա-…գործէ: Շատ հաւանաբար, եթէ առաջին …օրերէն կատարուէր այս պարպումը ոչինչ …կը պատահէր, քանի ամիսներէ ի վեր …հարիւրաւորներ «ՍԱՆ ՓԱՓԻԷ» օգնաւերով …համբու կը դրուին, իրենց երկիրը կը …ղրկուին եւ ոչ ոք ձայն հանած է մինչեւ …այսօր, ոչ իսկ Շվարցընպերկներ կամ …Կայօներ:

Այսօր, կառավարութիւնը, կրնայ քըն-…նադատուիլ չատերու կողմէ, նոյնիսկ իր …մեծամասնութեան մաս կազմող տարրե-…րու, որովհետեւ իր վճռակամութիւնը գոր-…ծադրեց ամէնէն ձախորդ օրը եւ հետե-…ւանքն ալ, միայն ձախաւեր գործի մը …բնոյթը կ'առնէ:

Այս միջամտութիւնը անմիջապէս դա-

ԵՐԵՒԱՆ — ՀԵՌԱՏԻՊ — ՓԱՐԻԶ

«ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Օգոստոս 22 / 23)

ՆԱԽԱԳԱՀ ԼԵՒՈՆ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԻ ՆԻՍՏԻՆ

Օգոստոս 21-ին Լ. Տէր-Պետրոսեան ներկայ գտնուած է Ընտրական կեդրոնին նիստին ու խօսք ուղղած կուսակցապետերու, հանրային կազմակերպութիւններու ղեկավարներուն: Շնորհակալութիւն յայտնած է իրեն ցոյց տրուած վստահութեան: Ապա ընտրական կեդրոնի ղեկավար Բաբգէն Արարքցեան պարզաբանած է կազմակերպչական հարցեր:

***

ՏՆԱՇԷՆ ՍԻՍԻԱՆՑԻՆԵՐԸ

Երրորդ տարին ըլլալով սիսիանցի շինարարներ կ'աշխատին ԼՂՀ Մարտակերտի շրջանի Ճանիթաղ գիւղը որ Ազրպէջանցիներու կողմէ փլատակի վերածուած էր: Այսօր վերակառուցուած են 130 տուներ եւ ներկայիս մեծ թափով առաջ կը տարուի միջնակարգ դպրոցի շինութիւնը: Շէնքը պատրաստ կ'ըլլայ վերամուտին:

***

ՆՈՒԷՐՆԵՐ ԳԵՐՄԱՆԻԱՅԷՆ

Արտակարգ իրավիճակներու վարչութեան քաղաքական պաշտպանութեան գործամասը ստացած է նոր կառքերու և սարքաւորումներու: Օգս. 20-ին Գերմանիայէն հասած են 12 «Մէրսէտէս»ներ, համազգեստներ, փրկարար աշխատանքներու գործիքներ, պահեստի կտորներ, եւայլն, որոնց ընդհանուր արժէքը 2.5 միլիոն տոլար է: Բոլորը նուիրած է Գերմանիոյ Աղէտի Թէքնիք օգնութեան տեսչութիւնը: Գերմանական որոշ կազմակերպութիւններու կողմէ նուիրուած բժշկական սարքաւորումներ ալ հասած են Առողջապահութեան Նախարարութեան:

***

ՎԱՐԿԱՔԱՐՏԵՐՈՒ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆ

«Միտլէնտ Արմէնիա» եւ «Վիզա ինթ.» վարկաքարտերով կարելի է դրամ գանձել նոյն դրամատան ինքնաշխատ գործիքէն; Նախատեսուած է որ «Միտլէնտ Արմէնիա» դրամատունը մինչեւ տարեվերջ հրապարակ հանէ իր քարտերը:

***

Հ.Բ.Ը.Մ.-Ը ԳԻՒՄՐԻԻ ՄԷՋ

Հ. Բ. Ը. Մ.-ը Գիւմրիի մէջ օգնած է երկրաշարժէն վնասուած կարգ մը շէնքերու նորոգութեան: Նորոգուած է Անկախութեան հրապարակին վրայի վարչական շէնքը ու արուեստի ակադեմիայի վերածուած: Քաղաքին մայրուղիներէն մէկուն վրայ որ անուանուած է Ալեք Մանուկեան, զետեղուած է բարերարին հարթաքանդակը:

***

ՄԱՆԿԱԿԱՆ ԹՈՔԱԽՏԻ ԱՃ

Կը նկատուի մանկական թոքախտի համեմատական աճ մը, քանի որ 1992-ին եղած են 31 պարագաներ, իսկ այդ թիւը 1995-ին բարձրացած է 47-ի: Առողջապահութեան Նախարարութեան այդ ճիւղին մասնագէտ փրոֆէսէօր Էլէնա Ստամպոլցեան ըսած է թէ ատիկա առնչուած է բնակչութեան ընկերա-տնտեսական պայմաններուն, թերի սննդառութեան, բնակարաններու անկանոն ջեռուցման: Ան ըսած է նաեւ թէ նորածիններու եւ դպրոցականներու պատուաստումը որոշակի դեր կը խաղայ ծանր պարագաներու կանխարգիլումին մէջ:

***

ՂՐԻՄԻ ՏԱՐԱԳՐՈՒԹԵԱՆ 52-ԱՄԵԱԿԸ

Սիմֆերոպոլի կայարանը ուրկէ ճիշդ 52 տարի առաջ սկիզբ առած է Հայերու, Յոյներու, Պուլկարներու տարագրութիւնը դէպի Սիպերիա եւ Ուրալեան շրջան, յուշահաւաք մը տեղի ունեցած է, տարագրուած ժողովուրդներու յուշաքարին մօտ:

Ղրիմահայերու «Մասեաց աղաւնի» թերթը այդ առթիւ հրապարակած է Ստալինի ստորագրած «խիստ գաղտնի» որոշումը յիշեալ ժողովուրդներուն տարագրութեան մասին, Թերթը տեղ տուած է նաեւ Բերիայի այն զեկուցագրին որով ան Ստալինի յայտնած է թէ տեղափոխումը աւարտած է: Այդ զեկուցագրին համաձայն Ղրիմէն աքսորուած են 9621 Հայեր:

տապարտուեցաւ ընկերվարականներու բանբերին և այլ ընկերվարականներու կողմէ, նաեւ շատ ու շատ ուրիշներու որոնք քաղաքականութեան հետ կապ ալ չունին: Ընդհանուր ձեւով, բացի ԷՌ-ՓԷ-ԷՌ-էն, Ֆիլիփ տը Վիլիէէն եւ կողմնակիցներէն, այս բիրտ միջամտութիւնը պաշտպանող չկայ, որքան ալ տրամաբանական թուի որ Եկեղեցւոյ այդ գրաւումը չէր կրնար յաւիտեանս շարունակուիլ եւ թէ իրաւական երկրի մը մէջ օրէնքը կը գործադրըւի: Բայց, ինչպէս ըսինք, կառավարութեան յապաղած դիրքորոշումը չէր կրնար այլ հետեւանք ունենալ:

***

Ժամը 10-ին, Եկեղեցին պարպուած էր, բայց, եկեղեցւոյ առջեւ եւ շուրջ բաւական լուրջ բախումներ կը պատահէին Ափրիկեցիներու զօրավիգ համակիրներու եւ ապահովութեան ուժերու միջեւ: Արտասուաբեր ձեռնառումբեր եւ մահակներ կը գործածուէին ոստիկաններու կողմէ, 60 հոգի ձերբակալուած էր, որոնց մէջ՝ Էմմանիւէլ Պէար, ասոնցմէ 6-ը դիպահ կը մնային:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԵԼՑԻՆ մէջտեղ ելաւ Օգոստոս 22-ին եւ բաւական առողջ կը թուէր անոնց որոնք զինք տեսած էին հեռատեսիլէն: Ռուսաստանի նախագահը կ'ընդունէր Տիկին Տատիանա Դմիտրիեվա որ, ի մօտոյ, Առողջապահութեան նախարար պէտք է նշանակուի: Ելցին յայտարարած կ'ըլլայ նաեւ որ ամբողջովին գոհ չէ Լեբէդի չեչենեան գործունէութենէն եւ ըսած կ'ըլլայ. - «Պէտք է յիշել որ տեւականօրէն խոստացաւ որ պիտի լուծէ Չէչէնիոյ հարցը եթէ անոր տէրն ըլլար: Այսօր՝ տէրն է, դժբախտաբար դեռ ոչ մէկ արդիւնք կը տեսնուի»: Լեբէդ, սակայն, յաջողութիւն մը արձանագրած է քանի Ռուսերը հյարձակեցան Գրոզնիի վրայ եւ համաձայնութիւն մըն ալ ստորագրուեցաւ ան-

(Շար.ը կարդալ Դ. էջ)

ՄԱՄՈՒԼ

«LA VIE» (22-28 Août)

EN ARMENIE, LA MUSIQUE DE L'ESPOIR

ARMENIE: L'HYMNE A LA LIBERTE

Յօդուածագիրը՝ Մարիան Տիւպերթրէ մաս կը կազմէր լրագրողներու այն խումբին որ, շնորհիւ վերապատուելի Սամուէլ Սահակեանի նախաձեռնութեան, մէկ շաբթուան այցելութիւն մը կատարեց Հայաստան (ոմանց համար՝ նաեւ Արցախ) Ապրիլի վերջ: Անոնք իրենց առաջին տպաւորութիւնները պարզեցին Մայիս 5-ին, կլոր սեղանի մը շուրջ, ապա նաեւ արտայայտուեցան իրենց թերթերուն մէջ: Այդ այցելութեան կը վերաբերի կաթողիկէ շաբաթաթերթին նոր լոյս ընծայած թղթակցութիւնը, ճոխացած լուսանկարներով (Լորիս Ճգնաւորեան, Օհան Տուրեան, նուագախումբերը):

Լրագրողուհին մեծ գովեստով կը խօսի Լորիս Ճգնաւորեանի մասին որ, սեւ տարիներու ընթացքին. - «Թոյլ տուած է երկրին որ յոյսը պահէ: Ջերմօրէն սիրուած ժողովուրդէն, որու համար լքած է իր կինն ու միջազգային մայէսթրոյի իր ոսկեզօծ կեանքը»:

Յօդուածը առաւելաբար կը վերաբերի Հայաստանի երաժշտական կեանքին եւ Լ. Ճգնաւորեանի կենսագրական գիծերուն: Չի ծածկեր որ, «մտաւորական շըրջանակներու մէջ, լաւ կը հնչէ ծաղրել «Այաթոլլահ Ճգնաւորեանի» նախնական, ամբոխավար հայրենասիրութիւնը եւ նոյն եռանդով, իր երաժշտական գործը: Բայց, ոչ ոք կ'ուրանայ քաջութիւնը մարդու մը, որ առաջինը, բարձրացնել տուաւ եռագոյնը եւ նուագել Ազգային Փառերգը նախքան կարմիր զինուորականներու վերադարձը իրենց զօրանոցները: Ոչ ոք կ'ուրանայ որ, իր հետքերով, Հայաստանի փոքրիկ ժողովուրդը դասական նուագահանդէսներու ճամբան գտած է: անոնք, դեռ երէկ, միայն ափ մը առանձնաշնորհեալները կը հետաքրքրէին»:

Առանց ուրանալու, Լ. Ճգնաւորեանի բերած նպաստը Հայաստանի ժողովուրդին սեւ օրերուն, առնուազն չափազանցուած է անոր վերագրել ժողովուրդի մը ճաշակը դասական երաժշտութեան հանդէպ: Իրմէ առաջ ալ, Սպենդիարեանի օփերան ծայրէ ծայր կը լեցուէր եւ այն օրերուն, միայն երաժշտասէր մղումներէ տարուած:

Երկար յօդուածը կը շարունակուի միակ նիւթ ունենալով Լ. Ճգնաւորեանը: Կարճ ակնարկ մը կայ Օհան Տուրեանի մասին, որու համար կը գրէ. - «Արուեստագէտ մըն է, մեծ արուեստագէտ մը եւ միայն արուեստագէտ մը»: Ան կ'ըսէ արդէն. - «Քաղաքականութիւնը կը թողում անոնց որոնք կրնան անով զբաղիլ: Կ'ուզեմ օգնել ժողովուրդիս հո՛ն ուր իրեն կրնամ առաւելագոյնը բերել եւ ամէնէն թանկագինը զոր ունիմ՝ երաժշտութեան սէրն է»:

Լրագրողուհին կ'անդրադառնայ նաեւ Օ. Տուրեանի կտրած ճամբուն, Երուսաղէմէն Փարիզ, ապա՝ Երեւան, Մարսէյլ, հուսկ՝ կրկին Երեւան:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ՝
ՊԱՆՔ ՕԹՈՄԱՆԻ ԳՐԱՒՈՒՄԷՆ ԵԼԴԸԶԻ ՄԱՀԱՓՈՐՁԸ
(1905 ՅՈՒԼԻՍ 21)

Գրեց՝ Ա. ՊԷՅԼԷՐԵԱՆ

Կառքի պատրաստութեան, 4 ձիերու հայթայթումին եւ այլ հարցերու համար Քրիստափոր բազմաթիւ գործակիցներ կը ճարէ, Պոլսոյ, Վիէննայի եւ թէ Պուլկարիոյ մէջ:

Դաշնակցական ծանօթ առաջնորդ դէմքերէն Միքայէլ Վարանդեան սապէս կը ներկայացնէ Քրիստափորի այդ պատմական օրերու գործունէութիւնը: «Սամուէլ Ֆայն անունով իբր Գերմանացի հրեայ Քրիստափոր Սօֆիա - Ֆիլիպէ - Պոլիս - Թիֆլիսի միջեւ բազմաթիւ ճամբորդութիւններ կատարեց: Սամուէլ Ֆայնի ծրագրին մասնակցեցան, կը գրէ, Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան հեղինակը ... ընկերներ ամէն ազգէ եւ դասակարգէ, Առնավուտգիւղցի վռամշապուհը, պելժիացի անիշխանական Ժօրիսը, կէս - յունածին Սիլվիօ - Ռիչչին, գերմանածին Սօֆի Ռիպսը եւ ուրիշ արկածասէր անհատներ, կին ու տղամարդ, ամէն դիրքի ու պարապմունքի տէր, կոզմոպոլիտ շրջան մը, հաւաքուած՝ Թուրքիոյ, Կովկասի, Եւրոպայի այլ եւ այլ անկիւններէ» (10): Թէ Քրիստափորի օտար գործակիցները որքա՞ն անկեղծօրէն հայկական դատին հանդէպ համակրութիւն ունէին, ատիկա բոլորովին այլ հարց է որուն աւելի յետոյ պիտի անդրադառնանք:

Երբ ռումբին ուժգնութեան տարողութիւնը չափելու համար փորձ կատարելու անհրաժեշտութիւնը զգացուեցաւ, Քրիստափոր Միքայէլեան ուզեց անձամբ լատանձնել: 1905 Մարտ 17-ին, Սօֆիայի մօտ Վիտօշ լեռի հովիտը կատարուեցաւ այդ փորձը: Քրիստափոր եւ Վռամշապուհ Քէնտիրեան դիրենք հեռուէն դիտող իրենց ընկերներու աչքին առջեւ գաղափարի ճամբուն վրայ փորձի ընթացքին նահատակուեցան: Ռումբին ուժգնութիւնը հաստատուած էր, բայց մեծ ծրագրին հեղինակն ալ մահացած էր: Մահափորձին հեղինակին կորուստը թէեւ միջոց մը Դաշնակցութիւնը վհատեցուց, բայց աւելի քան տարի մը պատրաստութիւններ տեսնելէ յետոյ կարելի չէր այլեւս հրաժարիլ: Քրիստափորի յաջորդեց պուլկարահպատակ 22-ամեայ Քրիս Ֆէնէրճեան որ յունարէնէ զատ գիտէր նաեւ բաւական իտալերէն, ռուսերէն եւ գերմաներէն: Քրիս Ֆէնէրճեան բազմաթիւ անցագրերով ճանչցուած էր, Մերթ Քէօսէ Արիսթիտի, մերթ Սիլվիօ Ռիչի, մերթ Ռեփիս կամ Գարլօ: Պոլսոյ մէջ գլխաւոր դերըստանձնողը եղաւ ուրեմն Քրիս, որ երիտասարդ գերմանուհի Ռուպինայի հետ կառքին Վիէննայէն Պոլիս փոխադրութեան գործով զբաղեցաւ: Պոլսոյ մէջ գործօն դեր ունեցաւ նաեւ պելժիացի Էտուար Ժօրիս անունով Սինկէր ընկերութեան Պոլսոյ մասնաճիւղի պաշտօնեայ մը: 1876-ին Անվէրս ծնած, Ժօրիս «անիշխանական» մըն էր եւ 1901-էն ի վեր Պոլիս կ'ապրէր: Ամուսնացած էր իրմէ չորս տարու մեծ պելժիացի կնոջ մը հետ եւ Բերա կը բնակէր: Քրիս դեռ ունեցաւ բազմաթիւ գործակիցներ որոնցմէ ոմանք գիտակցաբար, ոմանք ալ անգիտակցաբար «մեծ ծրագրի» գործադրութեան իրենց մասնակցութիւնը բերին, ինչպէս ձիերը ճարելու, հայ «կառապան» Զարեհին կառքը քշել սորվեցնելու եւ այլն: Վերջապէս 1905 Յուլիս 21, Ուրբաթ օրը որոշուեցաւ մահափորձը կատարել: Սուլթանին Ելտըզի պալատէն մզկիթ երթէն յետոյ, Սիլվիօ Ռիչի, այլ անուամբ՝ Քրիս Ֆէնէրճեան Ռուպինայի հետ կառքով Ելտըզի պալատի հիւրերու դռնէն պարտէզ կը մտնէ: Կառքը ներս կ'ուղղուի կանգ կ'առնէ այն վայրը ուրկէ Ապտիւլ - Համիտ աղօթքէն յետոյ պարտաւորուած հետիոտն պիտի անցնի իր անձնական կառքը երթալու համար: Պահակները Սիլվիօ Ռիչին եւ Ռուպինան կը տեսնեն, բայց օտար զբօսաշրջիկներ կը կարծեն ու ուշադրութիւն չեն ըներ:

Ապտիւլ - Համիտ ըստ սովորութեան Սէլամլըքի արարողութենէն յետոյ երբ դէպի կառքը պիտի երթայ, մզկիթին դրան առաջ Շէյխ - իւլ - իսլամ Ճէմալէտտին էֆէնտին կը տեսնէ եւ հետը քիչ մը երկար խօսակցութեան մը կը բռնուի: Այդ մէկ - երկու վայրկեանի յապաղումը, որ երբեք չէր նախատեսուած, մահափորձէն անվնաս ազատելուն պատճառ կ'ըլլայ: Դաշնակցութեան պատրաստած կառքը իր անձնազոհ «կառապան» Զարեհին եւ շուրջը գտնուող բազմաթիւ կառքերու, զինուորներու եւ ներկաներու հետ ահագին աղմուկով օդահան կ'ըլլայ: Ռումբին պատճառած արտակարգ աղմուկը Պոլսէն մինչեւ 10 քիլոմեթր հեռաւորութեան վրայ գտնուող արուարձաններէն իսկ լսելի կ'ըլլայ: Այդ մահափորձին զոհ գացող անձերուն թիւը 26, իսկ վիրաւորները 45 հոգի կը հաշուուին: Սպաննուած ձիերուն թիւը 70-ի կը հասնի: Այս բոլորը տեղի կ'ունենան Ապտիւլ -- Համիտի եւ բազմաթիւ օտար դիւանագէտներու, զբօսաշրջիկներու եւ տեղացի ժողովուրդին ներկայութեան:

Սուլթանը թէեւ կատարեալ պաղարիւնութեամբ կառքը մտնելով Ելտըզի պալատը կը վերադառնայ, բայց խիստ մոլեգնած կը հրամայէ անպայման մահափորձին հեղինակները գտնել: Մահափորձին կազմակերպիչներուն ինքնութիւնը ճշդելու պարտականութիւնը, Ապտիւլ - Համիտ վստահեցաւ Նէճիպ փաշա Մէլհամէի եւ մօլլա Սիւլէյմանի: Նախ կարծուեցաւ թէ մահափորձը Մակեդոնացիներու գործն էր: Վերջապէս, մօտաւորապէս ամիս մը յետոյ կառքին քաուչուէ անիւներուն պատրաստութեան եղանակէն եւ զանազան հարցաքննութիւններէ յետոյ պելժ Ժօրիսին հետքը կը գտնուի եւ ան կը ձերբակալուի: Ժօրիսի տան մէջ գտնուած չէքէ մը որ ուղղուած էր իշխիրաքնակ դաշնակցական Տիգրան Նալպանտեան անուն երիտասարդին, ամէն բան երեւան կ'ելլէ: Այս վերջինը ամէն բան կը խոստովանի. բայց Քրիս Ֆէնէրճեան, Ռուպինա եւ առաջին դեր ունեցող միւս դերակատարները շատոնց արդէն փախուստ տըւած են:

Մինչեւ հոս ոչինչ կայ արտակարգ, այդքա՞ն յանդուգն մահափորձի մը հետեւանքներուն պատճառաւ: Բազմաթիւ ձերբակալութիւններ տեղի կ'ունենան որոնց կարգին նաեւ Ժօրիս: Ժօրիս ամէն բան կը խոստովանի բայց ըստ Ապտիւլ - Համիտի Ա. քարտուղար Թահսին փաշայի յուշերուն, իր ընկերներուն բուն անունները իբր թէ չի յայտներ: Վարանդեան որ Թահսին փաշայի յուշերը իբր աղբիւր կը յիշէ, մեծ համարումով կ'արտայայտուի պելժ Ժօրիսի մասին զայն նկատելով «Հայ դատին նուիրեալ համակիր մը»: Բայց Վարանդեան չէ՞ ուզած, թէ ոչ Թահսին փաշայի յուշերը ինք անձամբ չէ կարդացած կամ չէ տեսած թէ ի՞նչ եղաւ եւ ինչպէ՞ս վերջացաւ Ժօրիսի դատավարութիւնը: Ժօրիս մահուան կը դատապարտուի իբր առաջին կարգի մեղսակից: Բայց, դիւեր մը Պելժիայէն ուղղակի Ելտըզի պալատը խիստ սպառնական հեռաձայն մը Ապտիւլ - Համիտը կը ստիպէ որ մահապատիժը բանտարկութեան վերածէ: Ասոր կը յաջորդեն ամերիկեան, անգլիական եւ ֆրանսական կառավարութիւններուն կողմէ ազդու միջամտութիւններ ի նպաստ այդ «աննշան» կարծուած անիշխանական Ժօրիսին: Ի վերջոյ 1908-ի սկիզբը սուլթան Ապտիւլ - Համիտ կը հաւանի ներման արժանացնել այդ «Հայ դատին համակիր» պելժ երիտասարդը: Ժօրիս արեւելեան ճեպընթացի վակօն - լիի առաջին կարգով ուրախ - զըւարթ Եւրոպա կը մեկնի: Ըստ Թահսին փաշայի վկայութեան, Ժօրիս սուլթանէն 500 Թրքական ոսկի (11) կը ստանայ իբր ճամբու ծախք եւ մինչեւ անոր գահընկէցութիւնը, Եւրոպայի մէջ որպէս Ելտըզի բռնապետին հաւատարիմ գաղտնի գործակալներէն մին, «գնահատելի» ծառայութիւններ կը կատարէ:

*
**

Ո՞վ էր իսկութեան մէջ Ժօրիս: Յստակ է թէ եթէ ան զօրաւոր կապեր չունենար կարգ մը օտար միջազգային կազմակերպութիւններու հետ, երեք մեծ տէրութիւնները սուլթանին դէմ կատարուած մահափորձին մէջ մեղսակցութիւնը հաստատուած մէկու մը համար իրար պիտի չանցնէին: Եթէ մեծ պետութիւնները այդ միջամտութիւնը կատարեցին, կը նշանակէ թէ Ժօրիսի պաշտպան կազմակերպութիւնը անոնց վրայ խիստ ազդեցիկ ճնշում բանեցուցած էր:

Հայկական կոմիտէները իրենց յանդուգն գործունէութեամբ եւ մեծ զոհողութիւններու գնով տարակոյս չկայ թէ սուլթանին գահընկէցութեան մէջ մեծ դեր ունեցան: Եթէ Օսմանեան Սահմանադրութեան վերահաստատման համար հայ ժողովուրդը իր արեան գնով սերմերը ցանեց, բերքը քաղողները եղան Երիտթուրքերն ու մանաւանդ Հրեաները որոնք յաճախ դրամի ուժով նոյնիսկ Թուրք մամուլը ծախու առին (12) իրենց ծրագիրներուն յաջողութեան ծառայեցուցին:

(Գ. եւ վերջին մաս)

---

(10) -- Տե՛ս Մ. Վարանդեան, Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, փարիզ, 1932, հրտ. Ա. էջ 437:

(11) -- Այդ թուականներուն մէկ օսմանեան ոսկին հաւասար էր 23 ոսկի փրանքի:

(12) -- Կ'արժէ տեսնել Esther Benbassa, *Une Diaspora sépharade en transition*, Paris, Editions du Cerf, 1993, խորագիրը կրող հատորը:

ԲԱՐԻ ԵԿԱՐ

Աղջամուղջը տակաւին կը տիրէ անսալարկ ճամբուն վրայ: Առտուան մշուշը ծուէն - ծուէն կը փաթթուի դժուարօրէն ճամբուն ծայրը բուսած թուփերուն:

Ճամբան, ցեխ ու փայտէ անիւներու ակօսներ: Դադրած կեանքի քարտէզն է կարծես: Կնճռոտ պատմութիւն մը անցեալէն: Հողին մէջ փորուած բաւիղ մը:

Օձագալար ճամբան է, որ լուսաբացին հետ կ'արթննայ, կեանք կ'առնէ, ճամբորդներուն ոտքերուն տակ:

Առաջին արթնցողը կառք մըն է: Իր հին յօդերէ կը ցնցուի, երբ ձին կը քաշէ զինք եւ ճռինչովը կը լեցնէ անձայն միջոցը:

Մէջը երկու մարդ կայ: Առջեւը կառապանն է եւ ետեւը, յարդերուն վրայ, զինուորական համազգեստով երիտասարդ մը: Երկուքն ալ լուռ են եւ մտասոյզ:

Զինուորին բերնէն ծխախոտ մը կախուած է: Մոխիրը երկնցաւ, ուր որ է չըրթունքները պիտի այրէ: Վերարկուին օձիկը տնկած՝ կը ծածկէ վտիտ վիզը:

Գլուխը դրած է պարկի մը վրայ, ցընցումներէն կը խաղայ տակը: Երկինքը կը դիտէ:

Աջ ձեռքը կուրծքին վրայ է կարմրցած վիրակապերուն մէջ: Ձախը կը կախուի կառքէն դուրս:

Պատերազմը անցաւ: Վէրքեր: Քաղաքներ ու մարդիկ հաշմանդամ մնացին:

Ճամբուն սկիզբը կառապանը պատմեց իր գիւղին մասին, Պատերազմը դառնութեան իր կնիքով կնքած է ամէն դուռ ու երդիկ: Լաց ու կոծ է ամէնուր:

Ընկերներէն ո՞վ ողջ մնաց: Քանինե՞րու ոսկորները կը լուայ անձրեւը դաշտերուն մէջ:

Ինքը բախտաւոր է: Ձեռքը կապուած ու մէկ ոտքով, հարիւրաւոր մահեր աչքերուն մէջ:

Ինքը բախտաւոր է: Տուն, կին մը եւ երկու զաւակ կը սպասեն իրեն. անոնք ալ բախտաւոր են:

. . . .

Դուրսը լուսաւորուեցաւ: Հեռուէն կը տեսնուին գիւղի ծուխերը, Թռչունները ճռուողել սկսան:

Գիւղը մտած ատեն կը յիշէ ծանօթ պատկերներ: Փոխուած է: Առաջուան տուները քիչցան: Բակերը ամայի են ու լռութիւնը կը տիրէ շուրջը: Հոս - հոն սեւեր հագած կին մը դոյլերով ջուր կը տանի: Բոպիկ մանչեր, հետաքրքրուած, դուռնէն դուրս իրենց գլուխը կը հանեն: Էրիկ մարդու շունչ չկայ:

Իր տունին կը մօտենայ: Բակը դատարկ է, ոչ մէկ կենդանի, շունն անգամ չկայ տախտակէ խցիկին մէջ:

Անթացուպին կռթնելով կը մտնէ ու կ'արձանանայ: Կը նայի շուրջը:

Խոհանոցին օճախը շատոնց պաղ է: Սարդոստայնը պատած է ամաններուն վրայ: Ճզմուած սիրտով կ'երթայ դուռը բանալու: Ներսէն տեսարանը տարբեր է: Անկողինին վրայ բարձերը շարուած են կանոնաւոր: Կ'երեւնայ որ փոքր առնող կայ. ներսի կահ-կարասին մաքուր է: Տանջուած հոգիին մէջ յոյսի նշոյլ մը կը ծագի: Ո՞վ է այդ անտես խնամատարը:

Անշարժ եւ անգիտակից կը կենայ սենեակին մէջտեղը: Երազուն չի լսեր թեթեւ քայլերը որ ետեւէն կը մօտենան: Մէկը կը բռնէ թեւը:

- Եկա՞ր հոգիս: Եկա՞ր:

Սեւեր հագած երիտասարդ կին մը, թաց աչքերով կը փարի իր կուրծքին: Կը նային իրարու իբր թէ առաջին անգամ: Ձեռքերուն մատները կ'ագուցուին: Խօսք չկայ: Համբոյր չկայ:

Ազատելով ձեռքերը, կինը փութին կը մօտենայ ու մաքուր կտորէն կտոր մը հաց կը հանէ:

- Կե՛ր: Անօթի կ'ըլլաս ... Մենք քաշուեցանք այստեղէն: Լեռները կը բնակինք: Որ եկար հիմա, մենք ալ կրնանք իջնել հոս: Վախ չկայ:

Բարի եկար ... հոգի՛ս:

ԵԶՐԱՍ ՔՀՆՑ. ՊՈԿՏԱՆ

«ԱՔՍՈՐԵԱԼ ԳՐՈՂ ՄԸ ՊԻՏԻ ՉԸԼԼԱՄ» Կ'ԸՍԷ ՔԻՒՐՏ ՎԻՊԱԳԻՐ ԵԱՇԱՐ ՔԵՄԱԼ

Որքան իր գրական արտադրութեամբ, նոյնքան եւ քաղաքական իր կեցուածքով թրքական եւ միջազգային հանրային կարծիքին մէջ մնայուն տեղ ունեցող դէմք է քիւրտ վիպագիր Ե. Քէմալ: Վերջերս հացադուլի դիմած քիւրտ բանտարկեալներու մօտ իր միջնորդութեամբ ան անգամ մը եւս ուշադրութիւնները իր վրայ կեդրոնացուց:

Օգոստոս 18-ի «Միլլիյէթ»ին մէջ անոր հետ կատարուած հարցազրոյց մը լոյս տեսած է ուր Ե. Քէմալ կը յայտնուի որպէս ուրախութեան եւ լոյսին երգիչը: Խօսելով աքսորի մէջ ստեղծագործելու երեւոյթին մասին, կ'ըսէ. «Մտածեցի թէ աքսորեալ գրագէ՞տ մըն էի: Ոչ, աքսորեալ գրագէտ մը չէի կրնար ըլլալ: Չուքուրօվացի էի, երկար տարիներ Պոլիս ապրած էի եւ հոն ինքզինքս աքսորեալ չէի նկատեր: Շուէտի մէջ ալ աքսորեալ չէի: Նոյնիսկ եթէ ցմահ Շուէտի մէջ ապրէի, դարձեալ աքսորեալ պիտի նկատէի զիս: Ուր որ կ'երթայի, երկիրներ ինծի հետ կուգային: Չուքուրօվայի մասին գրեցի Պոլսոյ մէջ, Պոլսոյ մասին ալ Սթոքհոլմի մէջ: Միշտ կրնամ աքսորուիլ, բայց երբեք չեմ կրնար աքսորեալ գրող մը ըլլալ»:

Խօսելով Թուրք պետութիւններու ճնշումի քաղաքականութեան մասին, կ'ըսէ թէ ներկայի պետութեան մէջ շատ մը պետութիւններ իրարու ընդելուզուած ըլլալով հանդերձ 70 տարիէ ի վեր երբեմն մեղմանալով, երբեմն սաստկանալով կը շարունակուի ճնշումի քաղաքականութիւնը: Այդպէս էր Օսմանեան կայսրութեան պարագան. հանրապետութիւնն ալ եթէ ոչ նոյն չափով, ճնշումի կարգերու վրայ հիմնուած էր:

Քրտական հարցը եւ ժողովրդավարութիւնը անբաժանելի են: Եթէ ժողովրդավարութիւնը պիտի իրականութիւն դառնայ, անպայման քրտական հարցին

...պէտի առընչուի։ Պատերազմով լուծում կարելի չէ։

Ե. Քէմալ կը մերժէ ընդունիլ թէ մօ...տէն միջամուխ է քաղաքականութեան... ինք միայն թշուառներու, կեղեքուածնե...րու, պատերազմին դէմ եղողներու, խա...ղաղասէրներու կողքին է։

Պատասխանելով այն պնդումներուն թէ ...Նոպէլեան գրական մրցանակին արժանա...նալու համար են իր ըմբոստացումները, ...չատական հետապնդումներու տեղի տը... ...ող վարմունքը, կ'ըսէ. «Ըսի - բսաւնեըր ...են հետաքրքրեր զիս։ Նոպէլեանը աշ...խարհի մեծագոյն մրցանակն է։ Շատ մը ...գրագէտներ կ'ուզեն արժանանալ անոր։ ...միակ գրողը չեմ որ թեկնածու նկատ...ուած է այդ մրցանակին ու չէ կրցած զայն ...ունենալ։ Հսկայ Տոլստոյը 11 տարի ...թեկնածու եղած է ու չէ ունեցած։ Կրա...համ կրին սպասած է 36 տարի։ Թուումը ...մերց չունի։ Եթէ ես չունենամ մրցանա...կը, աշխա՞րհի կը կործանի։ Ընթերցողներ ...կը մերժե՞ն կարդալ հատորներս ըսելով ...թէ Նոպէլ մը ա՛նգամ չեմ կրցած ստա...նալ»։

Զրոյցին վերջին մասին մէջ Ե. Քէմալ ...իր խօսի գ...ելու արարքին մասին։ Կ'ըսէ ...թէ մեծ հաճոյք կը պատճառէ իրեն գրելը։ ...կը սիրէ աշխարհը, մարդիկը կրկին ...ստեղծել։ Ամէնէն աւելի հաճոյք կը զգայ ...երազելէ։ Օրերով, ամիսներով ոչինչ կը ...չէ. միայն կ'երազէ։ Շատ քաղցր, երա...զութիւն պարգեւող բան է ատիկա։ Եթէ ...մարդը ընաւ գրի չառնէր, ամբողջ կեան...քին տեւողութեան կրնար երազել։ Այդ ...պատճառը որ իր վէպերը տարիներ ամ...բողջ կը կրէ մտքին մէջ։ Բայց անդամ ...երբ գրէ, աւարտէ, մեծ, շատ մեծ ու...րախութիւն կը զգայ։

«Ինչո՞ւ կը գրէք» հարցումը կը զար...մացնէ ու կը ջղայնացնէ զինքը, կ'ըսէ թէ ...մեծ - մեծ բաներ ըսելէ կը խուսափի։ ...կը գրէ, այդքան։ Ինք ուրախութեան ...գրելն երգիչ վիպագիրն է։ Չի սիրեր յո...ռետես գրողները։ Կ'ուզէ որ իր ընթեր...ցողները խաղաղասէր ըլլան, իրարու եւ ...ազատութեան յարգանք ունենան։ Կ'ուզէ որ ...մարդ իր նմանը չկեղեքէ, մարդ մարդու ...արժանապատուութիւնը չվիրաւորէ, նոյն...պէս մրջիւնի մը չվնասէ, մարդիկ իրար ...սիրեն ու բոլորին համար ծաղիկ մը ...պահէն... Այս թուումէն ետք հարց կու...տայ. «չա՞տ բան է ուզածս»։

ՔԱՂՀԱՆ

ՄԱՄԼՈՅ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՑԱՆՁՆԱՌՈՒ Է ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ ՎԵՐԱԾԵԼՈՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳԵՐԱԶԱՆՑ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՄԸ

ԿԼԻՆՏԷՅԼ, Գալիֆորնիա, Օգոստոս 12, Հ. Բ. Ը. Մ. Մելգոնեան Կրթական Հաստատութեան հիմնադրութեան 70-ամեակին նուիրուած երեքօրեայ տօնախմբութիւնը գլեց անցաւ սովորական դարձած սանուց տարեկան հանդիպումը։ Արդարեւ, աւելի քան 300 նախկին սաներ իրարու քով գալով Լոս - Անճըլըսի մէջ, որոշում տուին գործօն մասնակցութեամբ ապահովել գոյատեւումը մայր հաստատութեան, որ Հ. Բ. Ը. Մ.-ի առաջին եւ հնագոյն դպրոցն է Սփիւռքի տարածքին, հիմնուած 1926-ին՝ իշխանական նուիրատուութեամբ ճարտարարուեստագէտներ Գրիգոր եւ Կարապետ Մելգոնեան եղբայրներու։ Անոնք իրենց նիւթական ժառանգութիւնը կտակած էին Հ. Բ. Ը. Մ.-ի, որպէսզի կտակին զգալի մասը յատկացուէր Եղեռնէն վերապրած սերունդներու պահպանումին ու կրթութեան։

Յուլիս 5 - 7 Universal Hilton պանդոկին մէջ Մ.Կ.Հ. Գալիֆորնիոյ Սանուց Միութիւնը կազմակերպած էր աննախընթաց վերահանդիպում մը։

Ընդհանուր հաւաքին, որ տեղի ունեցաւ Յուլիս 7-ին, մասնակիցները միաձայնութեամբ համաձայնեցան իրենց նիւթական ներդրումներով \$1·000·000 հանգանակել մինչեւ 1997։ Հաւաքի ընթացքին ընտրուեցաւ Գործադիր Յանձնախումբ մը, որ լիազօրուեցաւ պատրաստել յստակ նախագիծ մը՝ ի կատար ածելու համար հաւաքին որոշումները։ Պր. Պենոն Սեւանին վստահուեցաւ Յանձնախումբը ղեկավարելու պաշտօնը, որպէսզի գործադրէ սոյն հաւաքին ցանկութիւնները, միաժամանակ ըլլայ կապը Յանձնախումբին ու Հ. Բ. Ը. Մ. Կեդրոնական Վարչական Ժողովին միջեւ։ Սոյն Վարչութիւնն է որ կը ղեկավարէ Մ.Հ.Կ. իր հիմնադրութենէն ի վեր։

Պր. Պենոն Սեւան կը հաւատայ թէ վերահանդիպման ատեն նախկին սաներու կողմէ արտայայտուած յանձնառութիւնը կարեւոր անկիւնադարձ մըն է Սանուցի գործունէութեան մէջ։ «Ժամանակն է որ նախկին սաները դադրին միայն քննադատելէ, այլ ցոյց տան իրենց յանձնառութիւնը՝ շօշափելի ու գործնապաշտ արարքներով սատարելու Մելգոնեան Կրթական Հաստատութեան՝ Հ. Բ. Ը. Մ.-ի միջոցաւ», կը գրէ Պ. Սեւոն Հ. Բ. Ը. Մ.-ի նախագահուհի Լուիզ Մանուկեան Սիմոնին։

Այլ որոշումներու կարգին՝ Յուլիս 7-ի բաց հաւաքը բարձր գնահատեց Հ. Բ. Ը. Մ.-ի նպատակը՝ Մ.Կ.Հ. վերածելու ուսումնական գերազանց հաստատութեան մը։

Վերջին քանի մը տարիներուն, Մ.Կ.Հ.ի կացութիւնը մօտէն հետազօտելու նպատակով, Կիպրոս ղրկուած են քանի մը քննիչներ։ Բաց աստի, փոխուած է հոգաբարձական կազմը, վերանայուած է ուսումնական ծրագիրն ու վերարժեւորման ենթարկուած է ուսուցչակազմը։ Ընթացիկ տարուայ Յուլիսին Կեդրոնական Վարչական Ժողովը տնօրէն նշանակած է Անի Լաչինեանը, որ Հ. Բ. Ը. Մ.-ի Դարուհի Յակոբեան Աղջկանց Վարժարանի շրջանաւարտուհի մըն է եւ մասնագիտացած է կրթա-դաստիարակչական ասպարէզին մէջ։

Երեքօրեայ վերահանդիպումին ներկայ էին կիպրահայ տարբեր սերունդի կարեւոր թիւով շրջանաւարտներ, որոնց միացած էին նաեւ տասնեակներով այլ սաներ աշխարհի տարբեր երկիրներէն, մինչեւ Հոնկ - Քոնկէն ու Աւստրալիայէն։ Բացառիկ ճաշկերոյթ - պարահանդէսին կը մասնակցէին աւելի քան հինգ հարիւր ներկաներ, որոնց համար հաճելի անակնկալ մը եղաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա.ի անակնկալ այցելութիւնը։ Վեհափառը իր խօսքին մէջ ըսաւ. «Մելգոնեանը ո՛չ միայն կը պատկանի Հ. Բ. Ը. Մ.-ին, այլեւ համայն հայութեան՝ ի սփիւռս աշխարհի»։ Ան դիմելով խանդավառ ներկաներուն շարունակեց. «Ես կը հաւատամ թէ ո՛չ մէկ զոհողութիւն պէտք է զլացուի այս Հաստատութեան սատար կենալու եւ զօրացնելու ճիգին մէջ»։

Հ. Բ. Ը. Մ., Մ.Կ.Հ. Գործադիր Յանձնախումբի միւս անդամներն են Հերմինէ Մահսերէճեան, Հերմինէ Սահակեան, Վարուժան Հայրապետեան, Գէորգ Մանուկեան, Միքայէլ Նահապետ եւ Զօհրապ Շամմասեան։

ԳԱՂՈՒԹԷ ԳԱՂՈՒԹ

ՄՈՆՐԷԱԼԻ Սետըր Պիչ Փարքի մէջ, Օգոստոս 11-ին դաշտահանդէս մը տեղի ունեցած է կազմակերպութեամբ Համազգայինի։ Հայկական տոհմիկ երգեր, զանազան խաղեր եւ անակնկալներ ջերմ մթնոլորտ մը ստեղծած են։

***

ԹՈՐՈՆԹՈՅԻ Հայ Կեդրոնի սրահին մէջ, Օգոստոս 9-ին ազգային - յեղափոխական երգերու փառատօն մը տեղի ունեցած է կազմակերպութեամբ Գանատայի Հ. Յ. Դ. Երիտասարդական Միութեան տեղւոյն Սիմոն Զաւարեան մասնաճիւղին։ Այս նպատակաւ Մոնրէալէն հրաւիրուած էր յեղափոխական երգերու ծանօթ մեներգիչ՝ Ճորճ Թիւթիւնճեան, նաեւ՝ Յարութ Չէնեան։

***

ՊՈՒՐՃ - ՀԱՄՈՒՏԻ Ազգային գերեզմանատան մէջ, Լիզպոնի հինգ երիտասարդ նահատակներուն շիրիմին շուրջ հսկում մը տեղի ունեցած է Յուլիս 26-ին։ Անոնց յիշատակը ոգեկոչած են Վարդան Թաշճեան եւ Դալար Տիգիճեան։

***

ՊԷՅՐՈՒԹԻ Ամերիկեան համալսարանէն 1995 - 1996 տարեշրջանին վկայուած են 33 հայ ուսանողներ, զանազան մասնագիտութեանց մէջ։

ՉՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ՁԵՌԱԳԻՐՆԵՐԸ ՉԵՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՒԻՐ

ՀԱՄԲՈՅՐԸ

ՀԱՄԱՍՏԵՂ

...իմ ատենս, էգս իշխան կը բռնէին էդ ...տակ կնիկը ու սէլին վրայ նստեցուցած ...ին չորս կողմը կը դարձնէին, - խօսե...ցաւ Կարօ Մարսուպ։ Մեռելին ետեւ խօ...սիլ լաւ բան չէ, փախած եղած բան է։ ...Ձիւխտ Գօզոյին մօրը (հեռու ձեր օճա...խէն) լէշեկը գլխէն հանեցին, գլխիբայ ...էին վրայ նստեցուցին։

...Ողորմած հոգի մէրս կը պատմէր, որ ...ուղեցոնց տունը լաւ զուռնայ փչող ...կ մի կուզայ, ամա ինչ մշակ, մէկ ...էկնոց ճրաւը մէկ ձեռքով կը վերցնէ...էր։ Ձիւխտին մեծ մէրը, էդ մշակին ...ումս փչելուն ու ուժին է վառէր, - ...այ տուաւ Սրապ Ղուկաս։

...խոնք իմ օրով եղած բաներ են, - շա...րունակեց Կարօ Մարսուպ։ - Ես շատ բան ...էմ յիշեր. մինակ կը յիշեմ, որ էդ կնիկը ...էլին վրայ երեսի վրայ ինկեր, մազերու...կը երեսը ծածկեր կուլար. սէլը քաշողը ...Գօզոյենց երկու գոմէշներն էին։ Հիմա ...ր ինչուն պէտք...

...Աղբիւրին ճամբէն մէկը կուգար։ Քաղ...աքէն ձեւէն ճանչցան։ Նաճար Գիրգորն էր։

- Ըսէլ է՝ էսօր Մարխոնին կը վարէիր, ...Ղուկաս, - անմիջապէս մէջ ինկաւ Կըլկըլ ...Սրուբ ու փոխեց խօսակցութիւնը։

...Անցեալ շաբթու անձրեւը բաւական ...թրջեր էր գետինները։ Եզներուն վըրայ ալ հալ չմնաց։

- Բարեւ ձեզ։

Նաճար Գիրգորն էր։

Կարօ Մարսուպ բարեւը չառաւ. ճակատին կնճիռները աւելի փոթփոթեցան։

- Նաճար, վաղը էդ արօրը բերեմ, չինէ։

- Ի՛նչ է եղեր, - խօսեցաւ Նաճար Գիրգոր անոնց չորքին նստելով։

Նաճար Գիրգոր նստաւ թէ չէ՝ Կարօ Մարսուպ ոտքի ելաւ ու տուն քալեց առանց նոյնիսկ «գիշեր բարի» ըսելու։

Կարօ Մարսուպ եթէ չզսպէր ինքզինք, Նաճարին երեսն ի վեր պիտի պոռար.

- Ծօ Նաճար, երես ըսածդ գոմշու կաշի չէ։ Ձես ըլ ամէնար մարդու չորքին կը նստիս ու մարդ տէլի խօսք կը խօսիս։

Բայց քթին տակէն բաներ մը մըթմըթալով տուն գնաց։

***

Կէսօր էր։ Մարուշ լաթեր կը փռէր իրենց տանիքին վրայ երկնցուած ձողերուն վրայ։ Լաթեր փռուած էին նաեւ Մուրատենց տանիքը։ Անոնց տանիքի ձողերուն վրայ, չորցնելու համար, թելերու վրայ շարք շարք կախուած էին պատիճան, խող կէս մասով, կարմրած, նաեւ դդումներ, աչուըի խոշոր ու ոսկեգոյն դդումներ, տանիքին վրայ կարգով շարուած։ Աքաղաղն ալ լայն կատարով, բուխերիկին վրայ կեցած, կարմիր թեւերը կը թափթափէր ու կը կանչէր գիլ ու արծաթէ ձայնով։ Աքաղաղները կը կանչէին զանազան կողմերէն, սակայն Մարուշին այնպէս թուեցաւ, թէ Մուրատենց աքաղաղին ձայնը ամբողջ գեղն էր բռնէր։ Փռուած լաթերուն մէջէն Մարուշ Մուրատենց տանիքը կը նայէր։ Ու այդ բոլորին մէջ Մուրատէն մաս մը կը գտնէր։ Մարուշ տանիքին վրայ կը դանդաղէր ու արեւին ծռող արեւածաղիկի մը պէս երեսը Մուրատենց տանիքին կողմն էր միշտ. այնքա՜ն մեծ էր անոր կարօտն ու սէրը։ Իսկ եթէ Մուրատ յանկարծ տանիք ելլէր...

- Աղջի Մարուշ, - պոռաց մայրը վարէն։

Մարուշ սանդուխներէն վար իջաւ՝ Մուրատենց տանիքին պատկերը ասեղնագործուած նկարի նման իր մէջ պահած, մանաւանդ աքաղաղը, որ կը թափթափէր ու գիլ ձայնը կը ձգէր։ Ի՜նչ անոյշ կուգար անոր ձայնը։ Անտարակոյս անոր մէջ Մուրատի ձայնէն խաղ մը կար։ Մարուշ շատ ջերմ կերպով կը զգար այդ բոլորը. այնքա՜ն մեծ էր անոր կարօտն ու սէրը։

- Աղջի, էսքան ատեն ի՞նչ կ'ընես տանիքը։ Երեք սըհաթ է հօրդ հացը ծրարեր քեզի կը սպասեմ։ Հայտէ, լաչակդ չոկէ, հօրդ հաց տար։

Մարուշ իր հօրը հաց կը տանէր ու կը քալէր փշատներուն տակէն, շուք արեւով կէտկիտուած ճամբայէն, երբ փափուքի պէս լսեց իր անունը։

Մարուշ ետեւ նայեցաւ, քայլերն աւելի արագացուց։ Մարդ չկար։ Թերեւս Մուրատենց տանիքէն անցնող ու փշատներուն մէջ մտնող հովն էր, որ միշտ ետեւէն կուգար։

Միջօրէի անթափանց լռութիւն մը կար։ Հերկուած արտերէն կը լսուէր մրջիւններու չըչըոց։ Արագիլ մը, շատ բարձրերը ելած, միջօրէի բոլորակը կը դառնար ու լայն թեւերուն ստուերները Մարուշի եղէգնեայ հասակին շուրջ կը պտուտէր։ Շատ հեռուն, կէս կապոյտ ու կէս լերան պաստառին վրայ, հազիւ կ'երեւէր Կարօ Մարսուպը, որ կը ժպտար իր երկու եզներով, կ'ըսես ամպի փոքրիկ կտոր մը չուարուն վար իջած էր։

- Մարո՛ւշ, Մարուշ, - նորէն լսուեցաւ, այս անգամ աւելի մօտ. կարծես միջօրէի լռութեան մէջ դաշտերու ոգին էր, որ ձայն կը ձգէր թէ՛ մօտ եւ թէ՛ հեռու։

Որքա՜ն նման էր Մուրատի ձայնին։ Պատրա՞նք էր արդեօք։

- Կեցի՛ր, Մարո՛ւշ։

Մարուշի սիրտը դփրտաց եկեղեցիին գմբէթին վրայ թառող աղաւնեակի մը պէս։ Իր նշանածին, Մուրատին ձայնն էր։ Ցեղոյ փշատներու խիտ ցանկապատէն անդին կը լսուէր ոտքի խշրտուկ։ Մարուշ աչքերը վեր առաւ։ Մուրատն էր, որ խիտ ցանկապատէն ճամբայ կը կտրէր իր մօտ գալու համար։

Մարուշ չփոթեցաւ, ոտքը գետնէն կտրեցաւ, օդին մէջ ըլլալ կարծեց։

Երկուքն ալ լուռ կեցան պահ մը. չէին կրնար խօսիլ։ Սակայն երկուքին մէջ կը շարժկըլտար կեանքը այնպէս, ինչպէս միջօրէի բարկ լռութեան ներքեւ տարածուող արտը ցանուած, որուն սերմերը կ'արգասաւորին, կը պայթին արեւով, միշտ լուռ ու անհանդիստ։

- Մարո՛ւշ, - խօսեցաւ Մուրատ։

Խօսած պահուն Մուրատ չճանչցաւ իր ձայնը, կարծես իր մէջ թաքնուած տարբեր անձնաւորութիւն մը ըլլար եւ կամ յաղթ ծառ մը ըլլար, որ հովերու բերանով լեզու ելած էր։

- Մարո՛ւշ, եզներս հողզար ձգեցի, ճամբադ պահեցի։

- Մուրա՛տ, մարդ կը տեսնէ, ա՛խ, Աստուած իմ։

Մուրատ իր թեւերուն մէջ առած էր Մարուշն ու պինդ կը սեղմէր կրծքին։

- Չէ, չէ, Մուրատ, ամօթ է, գնա, գնա, մարդ կը տեսնէ, ա՛խ Աստուած իմ, հայրս, Մուրատ, հայրս...

Մարուշի լաչակին ձեւն աւրուած էր. գլուխը ետ ետ կը բռնէր, «չէ, չէ» կ'ըսէր ու միեւնոյն ատեն կը յանձնուէր Մուրատի ժիր թեւերուն...

Հը՜շշ. աղմուկ մը։ Ոչինչ, այծ մըն էր, որ ցանկապատին քով դդումի լայն տերեւները կը կրծէր փոչտալով. ոսկեգոյն դդումն ալ իր ճաղատ գլուխը կ'երեւցընէր գաղտուկ ու կարծես կը ծիծաղէր լայն լայն։ Վերը արագիլը կը դառնար տակաւին, Աւետարանի երկու էջերու պէս թեւերը լայն բացած, եւ կ'օրհնէր առաջին երկար տեւող համբոյրը դեռ նոր նըշանուած զոյգ սիրողներուն։ Անոնք իրարու մէջ լուծուող երկու ամպի կտորներ ըլլային կարծես. չէին զգար հողն իրենց ոտքերուն ներքեւ, կ'ըսես հողն իր մէջը ճուկ տուած էր. այնքա՜ն ուժգին էր ու ծանր անոնց համբոյրն առաջին։

(Շար. 4)

«ՅԱՌԱՋ»Ի ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

71ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻՒ

Տէր եւ Տիկին Ստեփան Ստեփանեան 5000 Ֆր.:

Տէր եւ Տիկին Կարպիս Ջրբաշեան 1000 ֆրանք,

Սիրելի Արլէն Փափազեանի յիշատակին:

***

ՄԱՐՍԷՅԼ. --

Տէր եւ Տիկին Ալպէռ Պօղոսեան 1000 ֆրանք:

Տէր եւ Տիկին Կարօ Միլտոնեան 300 ֆրանք:

Տէր եւ Տիկին Կարապետ Տէրտէրեան 200 Ֆր.:

ՓՈԽԱՆ ԾԱՂԿԵՓՍԱԿԻ

Յարութիւն Շիրվանեանի մահուան առթիւ փոխան ծաղիկի Տէր եւ Տիկին Աբրահամ Թոբիկեան 300 Ֆր. կը նուիրեն «Յառաջ»ին:

(Շար. Ա. էջէն)

կախաքաշտներուն հետ: Շատ յայտնի չէ թէ ի՛նչ է այդ համաձայնութիւնը, զանազան վարկածներ կան, բայց, ստոյգ բան չկայ: Օգոստոս 23-ին, գոնէ, Լերեդ ժամանակ չահած էր:

ԻՐԱՔԵԱՆ ՔԻՒՐՏԻՍՏԱՆԻ մէջ աւելի քան 100 մեռեալ կայ վերջին բախումներու հետեւանքով: Պարզանիի կուսակցութիւնը (Քիւրտիստանի Դեմոկրատ Կուսակցութիւն) կոչ ըրած է Իրաքի Քիւրտերու պաշտպանութիւնը ստանձնած Արեւմտեաններուն որ միջամտեն վերջ դընելու համար կռիւներուն եւ Պարսկաստանի միջամուխ ըլլալուն:

ՖՐԱՆՍԱՅԻ մէջ, կօշիկի ճարտարարուեստը ամէնէն աւելի տագնապալի շըրջանի մէջ է եւ մեծ անուններ, յաջորդաբար, սնանկութեան դուռն են ու գանգուածային պաշտօնազրկումներու կը դիմեն: Վերջին օրերուն, պարագան էր զուիցերացի Պալիի որ կ'ուզէ դադրեցնել Ֆրանսայի իր գործունէութիւնը (աշխատավարձքը սուղ կը գտնէ) եւ Պաթայի: Հազարաւոր նոր անգործներ կ'աւելնան:

ԼՈՆԿ ԱՅԼԱՆՏԻ (Նիւ - Եորք) վրայ օդանաւին ջախջախման պատճառը աճաբեկչական արարք մը ըլլալը այլեւս հաստատուած է ըստ ամերիկեան աղբիւրներու (Սի - էն - էն, Նիւ - Եորք Թայմզ) Աւելի քան ամիս մըն է կատարուած քըննութիւնները այդ եզրակացութեան յանգած են, ռումբի փշուրներ գտնուած ըլլալով:

UGAB . . . UGAB . . . UGAB . . . UGAB

«UGAB - 90»

A l'occasion de la célébration de son 90ème anniversaire, l'UGAB organise un grand

Gala de Bienfaisance

au profit des *TABLES DE L'UGAB*, en Arménie

le Vendredi 18 Octobre à 20 heures

au Pavillon Dauphine _ 75016 Paris

P.A.F. : 750 Frs

Rens. : 45 20 03 18 / 42 27 12 26.

UGAB . . . UGAB . . . UGAB . . . UGAB

ՄԱՐՍԷՅԼԻ ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

40-օրեայ Հոգեհանգիստ
Ազգային Բարերար՝

ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

Կիրակի, Սեպտեմբեր 1, առաւօտեան ժամը 10-ին, Մարսէյլի Սրբոց Թարգմանչաց Մայր Եկեղեցւոյ մէջ կը մատուցուի պատարագ:

Կը պատարագէ՝

ԶԱՏԻԿ ՎՐԴ. ԱՒԵՏԻՔԵԱՆ
Հոգեւոր Հովիւ

Յաւուր պատշաճի կը քարոզէ եւ յաւարտ պատարագի հոգեհանգստեան պաշտօնին կը նախագահէ՝

ՏԱՐՕՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՃԷՐԷՃԵԱՆ
Առաջնորդական Տեղապահ եւ
կաթողիկոսական Պատուիրակի
փոխանորդ
Հարաւային Ֆրանսայի Հայոց Թեմի

ԼՐԱՏՈՒ

«Հող եւ Մշակոյթ»

կազմակերպութեան
«Մեր դարուն նկարները»
- 1915 / 16 Հայերու ցեղասպանութիւնը - կը ցուցադրուին Պէրլին, Օգոստոս 26-էն Հոկտեմբեր 4:

Այս ցուցահանդէսը մեծ յաջողութիւն արձանագրեց առաջին առթիւ Փարիզ (Տէֆանսի Արշը, 1995 Հոկտեմբերին) եւ այժմ կը ներկայացուի Պէրլին. -

Saal des Hauses des Demokratie
Friedrichstrasse 165,
10117 Berlin
U-Banhof Französische strasse

Բացումը կը կատարուի Օգոստոս 26-ին ժամը 20-ին: Յաջորդական շրջանին ալ զանազան դասախօսութիւններ տեղի կ'ունենան:

-ՎԵՐԱՄՈՒՏ-

ՇԱՒԻԼԻ
ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ
ԵՐԿՕՐԵԱՅ ԴՊՐՈՑ

Շաւիլի Եկեղեցւոյ հովանաւորութիւնը վայելող երկօրեայ հայերէն լեզուի ու կրօնագիտութեան դպրոցի վերամուտի թուականն է Սեպտեմբեր 11, Չորեքշաբթի, առաւօտեան ժամը 10-ին:

Դասաւանդութիւնները տեղի կ'ունենան Եկեղեցւոյ կից Սարգիս Պալապանեան սրահին մէջ, հետեւեալ յայտագրով ու ժամանակացոյցով. -

- Չորեքշաբթի, ժամը 10 - 12. հայերէն լեզու եւ կրօնագիտութիւն, փոքր տարիքի աշակերտներու համար:

- Չորեքշաբթի, ժամը 14 - 16. հայերէն լեզու եւ կրօնագիտութիւն, պատանի տարիքի աշակերտներու համար:

- Ուրբաթ երեկոյ ժամը 18.30 - 21. հայերէն լեզու, չափահաս տարիքի աշակերտներու համար:

Յաւելեալ մանրամասնութեանց համար, դիմել դպրոցի ուսուցչին՝ Պր. Մեսրոպ Ադամեանին:

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՄԻՕՐԵԱՅ
ՎԱՐԺԱՐԱՆ

Լիոնի Հայկազեան Միօրեայ Վարժարանի վերամուտն է Չորեքշաբթի, Հոկտեմբեր 2-ին, Առաւօտեան ժամը 9-ին:

Դասաւանդութիւնները տեղի կ'ունենան Չորեքշաբթի, առաւօտեան ժամը 9-էն 12, կէսօրէ վերջ ժամը 14-էն 16:

Աշակերտները կրնան օգտուիլ կէսօրուան ճաշէն. իսկ երթեւեկի սպասարկութիւն մը կարելի է նախատեսել ծնողքներու հետ համաձայնելով:

Յաւելեալ տեղեկութեան եւ արձանագրութեան համար դիմել Եկեղեցւոյ Դիւանատունը:

Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 PARIS
SIRET: 51027317 A R C Paris
Commission paritaire: N° 55935

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

Փարիզի եւ Շրջակայից Կրօնական Ընկերակցութեան Ներկայացուցչական Ժողովը, Վարչական Խորհուրդն ու Մայր Տաճարի Հոգաբարձութիւնը կը ծանուցանեն, թէ՝ Կիրակի, Սեպտեմբեր 1-ին Փարիզի Ս. Յովհաննէս - Մկրտիչ Մայր Տաճարին մէջ, Հոգեհանգիստ կը կատարուի:

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան եւ Հայ Եկեղեցւոյ Ազգային բարերար՝

ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

համար, անոր մահուան քառասունքին առիթով:

Կը հրաւիրուի մեր ժողովուրդը ներկայ գտնուիլ Հոգեհանգստեան պատարագին, երախտագէտ զգացումով աղօթել հանգուցեալի հոգւոյն համար եւ նորոգուիլ անոր երկրային կեանքի օրինակով:

CROIX BLEUE
DES ARMENIENS
DE FRANCE

CBAF - Section St Jérôme / Djavo Chant

Sortie
MUSEE DOBREE / NANTES
Exposition

Arménie

Les Trésors du patrimoine archéologique arménien des origines au IV siècle

Vendredi 6 Septembre à 22 h
place de la Rotonde Dikran Tekeian
Saint Jérôme

Départ de Nantes le Samedi soir

PAF de transport et visite musée
350 F environ

pour tous renseignements
et réservations :
tél.: 91 70 00 32 et 91 61 10 82

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Շաբաթ, Կիրակի
Դեկտեմբեր 14 / 15

5EME GRANDE
BRADERIE DE NOEL

«Շէն -- Ֆրանս»

«ՅԱՌԱՋ»ի
ընթացիկ ազդերու
սակագինը

Մահազդ	700	(844,20)
Հոգեհանգիստ	600	(723,60)
Շնորհակալիք	600	(723,60)
Հարսնիք--Նշանտուք	600	(723,60)
Ծնունդ	600	(723,60)

Բոլոր ազդերու սակերուն վրայ, հարկ է աւելցնել 20,60% Թէ.Վէ.Ա. (տե՛ս. փակագծի մէջ ընդհ. գումարը):

Այս գինները կը վերաբերին մէկ անգամ հրատարակելի ազդերու, ՄԻՆՉԵՒ ՄԷԿ ՔԱՌՈՐԴ ՍԻՒՆԱԿ (25 տող) մահազդներու պարագային եւ 1/8-րդ (12-13 տող) մնացեալին:

Առեւտրական եւ այլ ծանուցումներու համար, դիմել Թերթին Վարչութեան:

ՔԱՌԱՍՈՒՆՔԻ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Հ.Բ.Ը.Մ.-ի Ֆրանսայի Շրջանակային Վարչութիւնն ու Փարիզ - Իլ տը Ֆրանսի Տեղական Յանձնաժողովը կը ծանուցանեն թէ Կիրակի, Սեպտեմբեր 1-ին, Փարիզի Ս. Յովհ. - Մկրտիչ Մայր Տաճարին մէջ

Հոգեհանգստեան Պաշտօն

կը կատարուի յաւարտ պատարագի:

Հ. Բ. Ը. Մ.-ի ցկեանս նախագահ եւ ազգային անզուգական բարերար, Հայաստանի Հանրապետութեան Ազգային հերոս, Ս. Գրիգոր Լուսաւորիչի Խաչին Դափնեկիր՝

ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

հոգւոյն պայծառացման համար, անոր մահուան քառասունքին առիթով:

Հ.Բ.Ը.Մ.-ի Մարսէյլի Տեղական վարչութիւնը կը ծանուցանէ թէ՝ Կիրակի, Սեպտեմբեր 1-ին, Մարսէյլի Սրբոց Թարգմանչաց Մայր Եկեղեցւոյ մէջ

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՕՆ

կը կատարուի յաւարտ պատարագի:

Հ.Բ.Ը.Մ.-ի ցկեանս նախագահ, ազգային անգերազանցելի բարերար, Հայաստանի Հանրապետութեան ազգային հերոս, Ս. Գրիգոր Լուսաւորիչի Խաչին դափնեկիր՝

ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

մահուան քառասունքին առիթով:

Հ. Բ. Ը. Մ.

ԾԱՆՈՒՑԱԳԻՐ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ

Հայկ Բարեգործական Ընդհ. Միութեան («Միութիւն») Կեդր. Վարչական Ժողովը ներկայիւս կը ծանուցանէ Միութեան բոլոր իրաւասու անդամներուն թէ Միութեան 79-րդ Ընդհանուր Ժողովը պիտի գումարուի 1996, Շաբաթ, Նոյեմբեր 16, առաւօտեան ժամը 10-ին, Հ.Բ.Ը.Մ.-ի Կեդրոնին մէջ 2495 E. Mountain St., Փասատինա, Գալիֆորնիա, ԱՄՆ.:

Սոյնը 79-րդ Ընդհանուր Ժողովին գումարման մասին տրուող միակ ծանուցագիրն է: Հետեւաբար, Միութեան իրաւասու անդամներէն կը խնդրենք որ անձնապէս ներկայ գտնուին Ժողովին, վերոյիշեալ թուականին եւ վայրը, եւ կամ ամէնէն ուշը մինչեւ 1996, Հոկտեմբեր 15 իրենց փոխանորդագրերը, - Հիմնական Կանոնագրի տրամադրութեանց համաձայն գործադրուած եւ վաւերացուած, - յանձնեն Կեդրոնական Վարչական Ժողովի ատենադպիրին, հետեւեալ հասցէով. -

Armenian General Benevolent Union
Central Board of Directors
31 West 52nd Street
New York, N.Y. 10019-6118.

ԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳ

1. -- Ներկայացում եւ վաւերացում 1994 եւ 1995 տարեշրջաններու Միութեան ընդհանուր բարոյական տեղեկագրին:

2. -- Ներկայացում եւ վաւերացում 1994 եւ 1995 տարեշրջաններու Միութեան ընդհանուր նիւթական տեղկագրին:

3. -- Ընտրութիւն Միութեան Կեդրոնական Վարչական Ժողովի անդամներու:

4. -- Ընտրութիւն Հաշուեքննիչ Յանձնախումբի անդամի մը:

5. -- Նկատառում եւ գործադրում վերոնշեալներուն հետ առընչուող որեւէ հարցի, ինչպէս նաեւ Ժողովին ուշադրութեան բերուող եւ անոր աշխատանքներու ընթացքին ըստ պատշաճի արծարծուող հարցերու:

6. -- Քննարկում Ընդհանուր Ժողովի առաջարկներու եւ բանաձեւերու:

ի Դիմաց
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

ԼՈՒԻԶ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՍԻՄՈՆ
Նախագահ

ՊԵՐՃ ՍԵԴՐԱԿԵԱՆ
Ատենադպիր

ԵՐԵՔՇԱԲԹԻ
ՕԳՈՍՏՈՍ 27
MARDI
27 AOUT
1996

LE NUMERO : 5,00 F.

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1925-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE-FONDE EN 1925
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 47. 70. 86. 60 — TELEX : HARATCH 280 868 F
— FAX : 48. 00. 06. 70 —
C.C.P. PARIS 15069-82 E

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 1.100 Ֆ. – Վեցամսեայ : 560 Ֆ.
Արտասահման : Տար. 1.400 Ֆ. (ամէնօրեայ առաքում)
1.250 Ֆ. (շաբաթական առաքում) – Հատը : 5,00 Ֆ.

...րդ ՏԱՐԻ - ԹԻՒ 18.925 Fondateur SCHAVARCH MISSAKIAN 72e ANNEE — N° 18.925

ԵՐԵՒԱՆ ՀԵՌԱՏԻՊ ՓԱՐԻԶ

«ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Օգոստոս 23 / 26)

ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ

Օգոստոս 22-ին Կեդրոնական ընտրական ...յանձնախումբը քննարկած է հաւաքուած ...ստորագրութիւններու վաւերականութիւ... Անվաւեր նկատուած ստորագրութիւն... ...ու թիւը որոշիչ ազդեցութիւն չէ ու...ած 7 թեկնածուներէ 6-ին պաշտօնա... արձանագրութեան վրայ : Անոնք են ...Բաղալեան, Ա. Սարգսեան, Լ. Տէր - ...րոսեան, Վ. Մանուկեան, Պ. Հայ...եան, Լ. Աղալովեան : Ինչ կը վերաբե... Ա. Մանուչարեանի պարագային, ի... անոր թեկնածութեան քուէարկած ...յանձնախումբի եօթը անդամները, իսկ ...ը հինգը ; Հինգ հոգի ալ ձեռնպահ ...ցած են : Հետեւաբար Ա. Մանուչար...ն եւս արձանագրուած է որպէս եօթ...րորդ թեկնածու :

***

ՀԱՅ ԳԵՐԻՆԵՐ ԱՏՐՊԷՅՃԱՆԻ ՄԷՋ

ԼՂՀ ռազմիկներու, պատանդներու եւ ...յայտ կորսուածներու յանձնաժողովը ...յտնած է թէ Ատրպէյճանի Գոպուստան ...անին մէջ ուր կը գտնուի ռազմագերի...ու եւ պատանդներու ճամբարը, եօթը ...քաղաքացիներ կան : Անոնք են Լա... Կիրակոսեան, Իրինա Խաչատրեան, ...էն Ներսիսեան, Արթուր Հայրապետ..., Մանուէլ Գէորգեան, Արմէն Պօղո..., Արմէն Բաբաջանեան : Այս մասին ...յած է նաեւ միջազգային Կարմիր ...ը :

***

ԽՈՐԷՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՃԻՒՆԸ ԿԸ ՓՈԽԱԴՐՈՒԻ

Սեպտեմբեր 7-ին եկեղեցական յատուկ ...փորով Ս. Գայեանէի բակէն Մայր տա...րի բակը կը տեղափոխուի Խորէն Մու...արէկեան Կաթողիկոսին աճիւնը : Ան ...ը եղած է 1938-ի վարչակարգի բռնու...եան երբ մերժած է իշխանութիւններուն ...ձնել եկեղեցւոյ արժէքները : Նախ ...ղուած է Ս. Գայեանէի շրջապատին ...ւք մէկ անկիւնը, յետոյ Գէորգ Զ. ...թողիկոսը 1941-ին անոր աճիւնը փո...դրած է մուտքին մօտ, իսկ Վազգէն ... տապանաքար դրած է շիրիմին վրայ :

***

ԼՐԱԳՐՈՂՆԵՐՈՒ ԸՆՏՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

Նախագահական ընտրութեան Կեդրոնա...կան յանձնաժողովը որոշած է չսահմանա...փակել ընտրութեան հետեւելու համար ...ի մօտ արձանագրուելիք լրագրողներու ...թիւը : Այս վերջինները իրաւունք ունին ...տեսնելու ընտրական բոլոր փաստաթուղ...թերը, ձայնագրելու, տեսագրելու եւ այլ ...միջոցներով արձանագրելու ընտրական ...գործընթացը : Լրագրողը պէտք չհետա...պնդուի այդ գործընթացին վերաբերեալ ...իր անձնական արժեւորումին եւ վերլու...ծումին համար, բայց յանձնաժողովներու ...որոշումները, քուէարկութեան արդիւնք...ները աղաւաղելու իրաւունք չունի :

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

«ԱՌԱՆՑ ԹՈՒՂԹԻ» ԱՓՐԻԿԵՑԻՆԵՐԸ, ՋԱԽԱՒԵՐ ԳՈՐԾԵՐ ԵՒ ՇԻՐԱՔԻ ՎՃՌԱԿԱՄՈՒԹԻՒՆԸ

Սէն - Պեռնար Եկեղեցւոյ բիրտ պարպումէն ետք, չարաթավերջին բաւական իրարանցում տիրեց ամէն կողմ եւ պարզուեցաւ նաեւ որ իշխանութիւնները շփոթ վիճակի մէջ են եւ «առանց թուղթի» Ափրիկեցիներու դէմ եղած կարգադրութիւններն ալ ոչ յստակ են, ոչ ալ, յաճախ, օրինական ; Օգոստոս 24-ին, օդանաւ մը մեկնեցաւ դէպի Մալի, ուր տեղ գտած էին 57 Ափրիկեցիներ որոնց 4-ը՝ Սէն - Պեռնար Եկեղեցիէն : Մնացեալները, մեծ մասամբ, ազատ արձակուեցան դատական վճիռով, որովհետեւ ամէն մէկուն համդէպ պատրաստուած թղթածրարները խոցելի կէտեր ունէին իրաւական գետնի վրայ : Օգոստոս 26-ին, ասոնց մեծ մասը ապաստան գտած էր Վէնսէնի գարթուշըրին (Արիան Մնուշքինի թատրոնը) : Կարգ մը պարագաներ պիտի կանոնաւորուին, բայց եւ այնպէս, պարզուած պատկերը ցոյց տուաւ կառավարութեան ձախաւեր քաղաքականութիւնը, երբ դատարանն իսկ չի կրնար ընթացք տալ դատական հետապնդումներու այն պատճառաւ որ իրաւական թերիները բազմաթիւ են : «Առանց Թուղթի» Ափրիկեցիներու փաստաբաններն ալ, որոնց կարգին՝ մէթր Ժերար Զոլաքեան, զարմացած են ի տես այդ տարրական անկանոնութիւններուն : Օգոստոս 26-ին հացադուլ ընող տասը Ափրիկեցիները վերջ տուին իրենց շարժումին : Ամէն պարագայի մէջ, ամէն կողմ, ցոյցերը կը բազմանան կառավարութեան դէմ, նոյնիսկ դէպի Մալի գացող օդանաւին ճամբուն վրայ (Տաքար) եւ ժամանումին վայրը՝ Պամաքօ (Մալի) ուր անձնակազմերը մերժած են իրենց աշխատանքը կատարել եւ հարկ եղած է բանակին օգնութեան դիմել : Որքան ալ բացայայտ ըլլայ, որ կառավարութիւնը ընտրական մտահոգութիւններէ տարուած, կ'ուզէ ձեռք անցընել Լը Փէնի ձայները, կարելի չէ ըմբռնել թէ ինչո՞ւ ստեղծեց այս կացութիւնը, երբ Ցունուարէն ի վեր, լռելեայն կրցած էր իրենց երկիրը վերադարձնել հազարաւորներ, առանց ցոյցերու տեղի տալու : Յայտնի է որ մնացեալներու 2/3-ը առնուազն կանոնաւոր թուղթերու պիտի տիրանայ եւ այս ամբողջը ծառայած պիտի ըլլայ ճիշդ հակառակ նպատակին, այսինքն կառավարութեան դէմ հոսանք մը ստեղծելու : Հաշիւները սխալ ելան :

***

Ժ. Գ. Կօտէն հարցազրոյցով մը «Ֆիկարօ»ի (Օգոստոս 26) ընդունելով հանդերձ թէ փաքուա օրէնքները պատասխանատու չեն ստեղծուած այս դժուարութիւններուն, կ'ըսէ թէ անոնք երկու տարի առաջ պատրաստուած են եւ անհրաժեշտ է, հաւանաբար, որ աւելի ճկուն եւ յստակ դառնան կարգ մը մարդասիրական պարագաներու առեն : Քաղաքի եւ Համարկումի նախարարը կը պաշտպանէ անշուտ կառավարութեան քաղաքականութիւնը :

***

Պրեկանսոնի մէջ ուր Շիրաք իր արձակուրդը կ'անցընէր, շաբաթավերջին «աշխատանքի հանդիպում» մը ունեցաւ Ժիւփէի հետ եւ Օգոստոս 25-ին կարճ ասուլիս մը տուաւ քանի մը լրագրողներու : Այս առթիւ, շեշտեց թէ կառավարութիւնը իր քաղաքականութիւնը պիտի չփոխէ ինչ կը վերաբերի գաղթողներուն : Նախագահը կ'ըսէ. - «Գաղթի նկատմամբ շատ մեծ վճռակամութեան ընտրութիւն մը կատարած ենք, նաեւ մեծ յանձնառութիւն ունինք ամէնէն աղքատ երկիրներու բարգաւաճման համար : Ոեւէ մէկէն աւելի անզգայ չեմ եւ կը մերժեմ ոեւէ մէկուն որ ինքզինք ինձմէ աւելի զգայուն նկատէ : Պէտք չմասնակցիմ գործունէութեան անոնց՝ որոնք անպատասխանատուութենէ մղուած օտարատեացութեան եւ ցեղապաշտութեան զարկ կուտան մեր երկրին մէջ» :

***

Փարիզի Ազատագրման տարեդարձին առթիւ (Օգոստոս 25), քաղաքապետարանին առջեւ տեղի ունեցած հանդիսութիւնը խանգարուեցաւ ցուցարարներու կողմէ, ի պաշտպանութիւն առանց Թուղթի Ափրիկեցիներուն :

***

Օտար մամուլն ալ լայն տեղ կուտայ այս հարցին եւ յաճախ առաջին էջն իսկ կը տրամադրէ, ինչպէս, «Ինթէրնէշընըլ Հերըլտ Թրիպիւն»ը որ նկար մը կը հրատարակէ ուր ոստիկանական բռնութիւնը կը յայտնաբերուի. բրիտանական թերթերն ալ («Տէյլի Թելեկրաֆ», «Ինտէփէնտընթ», «Թայմզ») թղթակցութիւններով կ'արձագանգեն, «Ֆայնանշըլ Թայմզ» իր առաջին էջը կը յատկացնէ եւ գրեթէ բոլոր նկարներուն գլխաւոր տեղը կը դրուէ դերասանուհին՝ Էմմանիւէլ Պէար : Սպանացիք, Իտալացիք, Գերմանացիք ալ կ'անդրադառնան ; Մատրիտի «Էլ Փայիս»ը խմբագրականով մը կը բացատրէ որ Ֆրանսա ինչպէս Սպանիան ապաստանի համաշխարհային հողեր չեն : «Տի Վելթ» եւ «Ֆրանքֆուրթըր Ցայթունգ» լայն տեղ կուտան, մինչ «Զուտոյչէ Ցայթունգ» ազդանշան մը կը տեսնէ ուղղուած բոլոր գաղթողներուն :

Զուիցերացիք, հաւանաբար, ամէնէն իմաստուն մօտեցումը ցոյց կուտան, յայտնելով թէ մետիաները շատ աղմուկ կը հանեն այս հարցին շուրջ, անտեսելով աշխարհի մնացեալ հոգերը :

Ճիշդ է որ, այս վերամուտի օրերուն մանաւանդ, Ֆրանսա շատ աւելի ծանր հոգեր ունի :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԹՈՒՐՔԻԱ խիստ հսկողութեան ենթակայ է Դրամական Միջազգային Հիմնադրամին (ԷՖ - ԷՄ - Ի) կողմէ. այս վերջինը շատ դժգոհ է երկրին տնտեսական վիճակէն որու դարման չի փորձեր գտնել կառավարութիւնը : Օգոստոս 22-ին, Ուոլ Սթրիթ Ճըրնըլ կը յայտնէր թէ ԷՖ - ԷՄ - Ի-ն կը պատրաստուի յանդիմանելու Թուրքիան տնտեսական իր պէշ գործունէութեան համար : Թերթին համաձայն, ճնշում պիտի բանեցնէ Թուրքիոյ վրայ, որպէսզի կարգ մը բարենորոգումներ կիրարկէ : Պէտք է որ առաջքն առնէ դրամահոսքին եւ դրամագլուխներու փախուստին : Թուրքիոյ տրուած վերջին վարկը 700 միլիոն տոլար էր եւ վերջ գտած է անցեալ Փետրուարին : Աւելի ծանրակշիռ կը նկատուի այն իրողութիւնը որ Թուրքիոյ յարաբերութիւնները արեւմտեան երկիրներուն հետ վատթարացած են Ռեֆահի իշխանութեան գլուխ գալէն ի վեր : Անգարայի մէջ, սակայն, արեւմտեան պատասխանատու անձ մը կը խորհի թէ պէտք չէ շատ ողբերգական բնոյթ տալ այս ամբողջին, որովհետեւ տնտեսական գլխաւոր պաշտօնները Թ. Չիլլէրի համակիրներուն յանձնուած են : Չի մոռցուիր թէեւ որ Էրպաքան խիստ կերպով քննադատած էր ԷՖ - ԷՄ - Ի-ն եւ նոյնիսկ խոստացած ջնջել բոլոր համաձայնագրերը եւ պահանջած էր իսլամական տարադրամ մը դնել շրջագայութեան մէջ : Սեւ կէտ մըն է նաեւ առեւտրական գետնի վրայ բացը, որ աւելի ծանրացած է Մաքսային Միութեան անդամակցութենէն ի վեր : Անգարայի բացը 41,4 միլիառ տոլարէն, 1994-ին, 57,3 միլիառ տոլարի հասած է 1995-ին :

ԻՐԱՔԻ քրտական երկու գլխաւոր շարժումները՝ Թալապանիի Քիւրտիստանի Հայրենասիրական Միութիւնը եւ Պարզանիի Քիւրտիստանի Դեմոկրատ Կուսակցութիւնը համաձայնագիր մը ստորագրած են Օգոստոս 23-ին Միացեալ - Նահանգներու ճնշումին տակ : Թալապանիի կուսակցութեան մէկ նախկին «երեսփոխանը» քրտական «Խորհրդարանին» զարմացած էր որ մինչ «Թուրքիա, Իրան, Իրաք եւ Սուրիա ծրագրեր կը պատրաստեն բնաջնջելու համար քրտական շարժումը, Թալապանի եւ Պարզանի կը կռուին այս կամ այն բլուրին կամ հովիտին հակակշռին համար» : Վերջերս, Օմար Խօճալան ի(ՓՔՔ-ի պարագլուխին եղբայրը) մասնակցութիւնը Պարզանիի կուսակցութեան յիսնամեակի հանդիսութեանց բուռն հակազդեցութեան տեղի տուած է Չիլլէրի մօտ որ յայտարարած է. - «Ով որ իր ճակատագիրը կը կապէ ահաբեկիչի մը ճակատագրին պէտք է սպասէ անոր հետեւանքները» : Մնաց որ Իրաքի կառավարութիւնն ալ բացէ ի բաց իր կողմնակցութիւնը յայտնած է Պարզանիի դատին : Օգոստոս 26-ի լուրերուն համաձայն, ստորագրուած հրադադարը չի գործադրուիր եւ հոս - հոն եղբայրասպան կռիւները կը շարունակուին ; Հիւսիսային Իրաք, Էրպէլի մէջ, Պարզանիի կուսակցական պատասխանատուները կը պնդեն որ որեւէ հրադադար չեն ընդունիր ցորչափ Ուաշինկթըն չդատապարտէ Թալապանիի կուսակցութեան գործունէութիւնը :

ՊԵԼԺԻՈՅ մէջ, մանկամոլութեան (փետոֆիլի) հետաքննութիւնը կը շարունակուի նոյն թափով եւ շաբաթավերջին երեք ձերբակալութիւններ կատարուեցան : Ասոնցմէ մէկը կը վերաբերի Շարլըռուայի դատական ոստիկանութեան մէկ քննիչին, ինչ որ կը հաստատէ այն վարկածը թէ գլխաւոր ամբաստանեալը՝ Տիւթրու բարձր պաշտօնատարներու պաշտպանութիւնը վայելած է : Այս երեք ձերբակալուածները կառքերու գողութեան ցանց մը ունէին որ ուղղակի կապուած է մանկամոլութեան հարցին :

ԳՈՐՍԻՔԱՅԻ մէջ, ռմբափորձերը չեն դադրիր, բոլորն ալ թիրախ ունին պետական շէնքեր : Զոհ չկայ, բայց նիւթական վնասները շատ են :

ՄԱՅՐ ԹԵՐԵԶԱ, 86 տարեկան, Գալգիւթայի հիւանդանոցը փոխադրուած է

(Շար.ը կարդալ Դ. էջ)

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

«ԳԱՐՈՒՆ»Ի ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ ՎԱՀԷ ՕՇԱԿԱՆԻ ՀԵՏ

- Վաղուց շրջանառութեան մէջ է դասական բնորոշումը. Հայերը գրի, գրականութեան ժողովուրդ են։ Մեր գրերը ստեղծուել են հինգերորդ դարում, համաշխարհային գրականութեան ոսկէ պատուանդանին ցայսօր ոչ մի հայ հեղինակ չի գրաւել իր անունը - համաստեղութեան մէջ։ Հինգհազարամեայ պատմութիւն ունեցող ազգի համար նման փաստերը արդեո՞ք չեն ակնարկում նրա ստեղծագործ ոգու չյայտնաբերուած բարդոյթայնութեան մասին···

բով։ Դրանից ծագում - գոյատեւման համար ինչպիսի՞ ակունքներ են անհրաժեշտ։ Կա՞ն կայացած հեղինակներ, որ խիստ ինքնուրոյն են իրենց կերտածի ողջ պարունակութեամբ, չեն «յաղթահարւում» այլոց մշակած գրական լանդշաֆտին։

- Գրականութեան մը ազգայնութեան համար ամենագլխաւորը այնքան կարեւոր է, որքան ինքնուրոյնն ու ակամայ։ Գլխաւոր ամենագլխաւորը գրականութեան ազգային, բարոյական եւ զգացական նկարագիրն է։ Մարդկայնական բնոյթ մը, գեղեցիկի, ճշմարիտի եւ բարիին պաշտամունքը կը յատկանշէ մեր մեծագոյն դէմքերուն երկերը։ Այս կեցուածքը կ'ենթադրէ նաեւ հաւատքը մարդկային բընոյթին բարութեան վրայ, ինչպէս եւ քրիստոնէական կրօնի եւ եկեղեցւոյ վըրայ։ Բովն ի վեր այս տիրական աւանդութեան, մեր մէջ կայ հայ ժողովուրդը աշխարհէն անջատ զգալու - կէթոյական մտայնութիւնն է այս - հոգեվիճակը, որ ծնունդ տուած է անցեալապաշտութեան եւ հերոսապաշտական կեցուածքին։ Վերջապէս, ընտանիքի, հողի եւ հայ հոգիի ու ժողովուրդի բարոյական արժէքները գերադաս եւ մշտակայ աւանդոյթները հանդիսացած են մեր արուեստագէտներուն։

Այս աւանդութեանց ակունքները պէտք է փնտռել մեր լեզուին, մեր կրօնական զգացումին եւ մեր հողին, հայրենիքին եւ ժողովուրդին սիրոյն մէջ։ Մէկ խօսքով, մեր պատմական փորձառութեան, մեր ազգին կեանքին մէջ։

Ինչ կը վերաբերի «ինքնուրոյն» գրագէտներուն, որոնք ըմբոստացած են աւանդութեանց դէմ, նախ՝ քիչ է անոնց թիւը։ Կարելի է ըսել թէ բոլոր անոնք որոնք հայերէնը լքած եւ օտար լեզուով գրած են։ Միտքս կուգան Ջաւէն - Լեւոն Սիւրմէլեան, Շահան Շահնուր, ինչ - ինչ գործերը Կոստան Զարեանին, Հուրի Իփէքեանին, Գրիգոր Պըլտեանին եւ ուրիշներուն։ Առանձին խումբ մըն են 19-րդ դարուն արեւմտահայ հեղինակները, որոնք հայատառ թրքերէն գրեցին - Վարդան Փաշա, Միսաք Գոչունեան, Լիոնքէ եւ շատ ուրիշներ։

Կան նաեւ 1950-ական թուականներուն Պոլսոյ մէջ հրապարակ իջած «առարկայական խորհրդապաշտները» - Զահրատ (Զարեհ Եալտըզճեան), Զարեհ Խրախունի, Անդան Եօզէր եւ այլք - որոնք հարիւր տարուան գրական ու քնարական բանաստեղծութեան նոր երակ մը կը բանային՝ բացարձակ խզումի մը ձգտելով։

Վերջապէս, կայ պարզան փարիզաբընակ բանաստեղծ Գրիգոր Պըլտեանի, որուն քերթողութիւնը բոլորովին նոր եւ ինքնատիպ նկարագիր մը ունի, խզուած մեր դասական եւ արդիական ոճէն։ Նորոգումի, արդիականացումի շարժում մըն է այս որ ցարդ մի քանի հոգիի վրայ մեծ ազդեցութիւն գործած է - Շուշիկ Տասնապետեան, Արթիւր Անդրանիկեան (Հայաստանէն) եւ ուրիշներ։ Կ'արժէ յիշել նաեւ 1980-ական թուականներու Պէյրութի մէջ հրապարակ իջած «Սէր» հանդէսի տղաքը (Մհեր, Հրազդան եւ ուրիշներ) որոնք անհարեկչական գրականութիւն մը ուզեցին մէջտեղ հանել, խզելով բոլոր կապերը - լեզուական, ընկերային, քաղաքական, բարոյական, ոճային, գեղագիտական - զիրենք կանխող սերունդին հետ։

- Ժողովուրդի մշակոյթին հնութիւնը չեմ կարծեր թէ որեւէ կապ ունի անոր հեղինակներուն միջազգային ճանաչման հետ։ Այս ճանաչման բազմաթիւ այլ ազդակներ կը միջամտեն - ժողովուրդին թիւը, պատմական դէպքերու ընթացքը, քաղաքակրթական հոսանքներու ցանցը, լեզուին տարածքը, մշակութային ընտանիքները եւայլն։ Այս ընտանիքներէն - օրինակ՝ միջերկրականեան, արեւելեան, եւրոպական, արաբական, արեւմտեան եւրոպական, սկանտինաւեան եւ այլն - եւ ոչ մէկուն մաս կազմած ենք մենք, ոչ իսկ կովկասեան։ Հայ ստեղծագործ ոգին բարդոյթայնութիւնը մեր մեծագոյն առաւելութիւնը եղած է եւ տուած է մեր ինքնատիպ ճարտարապետութիւնը, մանրանկարչութիւնը, ձեռներէցութիւնը, լեզուական առաքինութիւնը։ Եթէ այս կալուածներուն մէջ հայ ստեղծագործ ոգին միջազգային չափերով տիրական դէմք չէ արտադրած (հաւանաբար Գրիգոր Նարեկացին միակ բացառութիւնն է), ատոր ոչ մէկ արդարացում կամ բացատրութիւն կարելի է առաջարկել։ Յոյսը դնենք ապագային վրայ···

- Տեսանելի է, որ ընդհանուր կոչում ունենալով հանդերձ, տարբեր են իւրաքանչիւր ազգային գրականութեան ներքին բովանդակութիւնն ու նրա հետամըտած նպատակակէտերը։ Հայ գրականութիւնը, ըստ Ձեզ, Պր. Օշական, ինչպիսի՞ նպատակակէտերով է տիպականանում։

- Հայ գրականութիւնը, մաս կազմելով հայ մշակոյթին, այն վերջինին նպատակակէտերէն տարբեր ձգտում չէր կրնար ունենալ։ Արդ, հայ մշակոյթին հիմնական յատկանիշներէն է անոր ստորադասումը ազգային գոյապայքարի հրամայականէն։ Մեր արուեստագէտները յստակ որոշումներ կամ ընտրութիւններ դտած են, որոնցմէ գլխաւորն է արուեստը դնել ժողովուրդի ծառայութեան, յանուն անոր լուսաւորութեան, դաստիարակութեան, ֆիզիքական վերապրումին, եւ անիկա՝ յատկապէս գրականութեան պարագային։ Այս որոշումը արուեստագէտները իրենք տուած են ազատօրէն եւ վճարած են ատոր գինը։

Այս նպատակակէտը իր ժխտական հետեւանքներով - զարտուղի, այլամերժ եւ ինքնատիպ մտածումի արտայայտութեան դժուարութիւնը, նորարարութեան հանրային արգելքները, օտար ազդեցութեանց հանդէպ մերժողական կեցուածքը եւ այլն - մեր հետն է տակաւին։ Մէկ արմատական լուծում կը թուի ըլլալ արուեստագէտներու յեղափոխութիւնը՝ հայ միտքը ազատագրել հայ ժողովուրդին սպասարկելու հրամայականէն։ Միտք բռնածը պէտք է ազատ ըլլայ որեւէ արտաքին պարտաւորութենէ, որպէսզի կարենայ լիովին աշխատիլ։ Ուրիշ լուծում՝ մերժել որեւէ նպատակակէտ արուեստի կալուածէն ներս։ Արուեստը միայն ճշմարտութեան կրնայ ձգտիլ ու ծառայել։

- Ժամանակակից հայ գրականութիւնը ի՞նչ անխտանիշներով է անհանգստացնում Ձեզ։ Ո՞րն է նրա ամենաառողջ ջիղը։

- Առաջին մտահոգիչ երեւոյթը, ըՍփիւռք թէ Հայաստան, գրական արտադրութեանց քիչ քանակն է։ Ընթերցողներու պակասը յաճախ կը յուսալքէ գրողը որ կը հրաժարի ձեռագիրը հրատարակելէ, որ ինքնին մեծածախս ձեռնարկ է Սփիւռքի մէջ։ Զուտ գրական շաբաթաթերթի մը չգոյութիւնը նոյնքան մտահոգիչ է։ Մեծ պակաս մըն է մեր մէջ գրականութեան մասին գրականութիւնը, իր ամենալայն առումով, այսինքն՝ բանասիրութիւն, գրական քննադատութիւն, գեղագիտութիւն, մատենագիտութիւն եւ այլն։ Վատառողջ երեւոյթ է ժողովուրդի մշակոյթի եւ ընտրանիի կամ բարձր մշակոյթի միջեւ տակաւ լայնցող անջրպետը։ Գրականութիւնը շատ կ'ազդուի այս վիճակէն որու հետեւանքով հայ մտքին մէկ մեծ մասը գործնապաշտ, օգտապաշտ ու զանգուածային ցածորակ նպատակներու կը ծառայէ։

Առողջ ջիղ կը նկատեմ սփիւռքահայ գրականութեան գրական գգայնութիւնը, ստեղծագործ երեւակայութիւնը, մէկ խօսքով, որակը։ Թէ Արեւմուտքի մէջ հայ արուեստը հայերէն ու անգլերէն լեզուներով, բարձրագոյն չափանիշներով կը գործէ ու կը մրցի նոյնիսկ բոլոր համեմատութիւններ յարգելով աշխարհի հետ՝ գլխ կը խանդավառէ։

- Ներքին հակադրութիւն նկատո՞ւմ էք, արդեօք, Սփիւռքում եւ Հայրենիքում ստեղծուող գրականութիւնների միջեւ։ Լեզուից ու ոգուց բացի. Ձեր համոզմամբ, կա՞ն եւս զօրեղ գործօններ, որ հայրենական ու սփիւռքեան գրականութիւնները պահում են նոյն՝ հայկական ոլորտում։

Ես «հակադրութիւն» բառը շատ ուժեղ կը գտնեմ, հակառակ որ իմ շատ մը պաշտօնակիցներս աւելի զօրաւոր բառ իսկ պիտի գործածէին···։ Կը նախընտրեմ «տարբերութիւն» բառը։ Շեշտօրէն գրական - զգայնութեան ու չափանիշի, լեզուի ապրումի, արուեստի էութեան ըմբռնումի, արուեստագէտի կոչումի եւ արուեստի փիլիսոփայութեան մէջ հսկայական տարբերութիւններ եղած են անցեալէն ու կան նաեւ ներկայիս Սփիւռքի եւ Հայաստանի միջեւ։ Ես կը խորհիմ թէ այդ տարբերութիւնները ժամանակի ընթացքին կը վերնան երբ Հայաստանի մտաւորականութիւնը բացուի արեւմտեան աշխարհի բոլոր չարիքներուն ու բարիքներուն, եւ վերաքննութեան ենթարկէ իր դասական «սրբութիւնները»։ Այս քաջութեան եւ խելքի հարց է կարծես, եւ պատճառ չկայ որ այդ արժանիքները պակսին իրենց։ Հայաստան, այսօր կան երիտասարդ, դժգոհ, պրպտող եւ յանդուգն տաղանդներ որոնք մեծ յոյսեր կը ներշնչեն ինծի։

Դրական գործօններ անշուշտ կան, որոնք մեր երկու գրական ճիւղերը մէկ բունի կը կապեն։ Հայերէն լեզուն անոնցմէ է ու չէ, նոյն ատեն։ Մէկ է մեր լեզուն անշուշտ, բայց տարբեր են զայն ապրելու, զգալու եւ գործածելու ձեւերը մեր ու ձեր միջեւ։ Ի՞նչ կը վերաբերի «ոգիին» հոն ալ շեշտ տարբերութիւններ կան մեզ զանազանող իրարմէ։ Մեր մօտ հայկականութեան ոգին էապէս գեղարուեստական քաթէկորի մըն է, երեւակայածին, ստեղծագործումին մէջ իրականացնող եւ այժմէականացող։ Այդ ոգիին բաղադրիչ տարրերէն ազգայնականութիւնը (եւ ոչ այնքան ազգայինը) եւ կրօնական զգայնութիւնը շատ աւելի մեծ դեր կը խաղայ մեր մօտ, քան ձեր մօտ։ Նոյն նկատողութիւնը կրնամ ընել սիրոյ ու սէրի ներգործութեան մասին արեւմտահայու մէջ։

«Հայկական ոլորտին» մէջ մեզ երկուքս պահող գլխաւոր գործօնը մեր պատմական փորձառութիւնն է, մեր անցեալն ու հաւաքական յիշողութիւնը, որուն արդի սահմանումներէն մին Հայ Դատ կը կոչուի։ Այս ուղղութեամբ մեր քաղաքական կուսակցութիւնները, յատկապէս Սփիւռքի մէջ, մեծ դեր կը կատարեն եւ աւելի կենսական կը դառնան հիմա որ Հայաստանը քաղաքական անկախութեան հասած է ու տակաւ պիտի մտնէ ժողովրդավարութեան գործընթացին մէջ։

Կը խորհիմ թէ «հայկական ոլորտ» կոչուածը անփոփոխ յղացք մը չէ, մանաւանդ բազմամշակոյթ, բազմալեզու ըՍփիւռքահայերուն համար, եւ կը վախնամ թէ ժամանակի ընթացքին մեր երկու գրական ճիւղերու եւ ժողովուրդներու համար ատոր իմաստը զարտուղի փոփոխութիւններ կրէ։ Ո՞ւր կը յանգի «հայկական ոլորտը» 2050 կամ 2100 թուականներուն - Աստուած գիտէ։ Բայց ներկայիս կան հայ ոգի մը եւ ազգային գիտակցութիւն մը որ մեր երկու գրականութիւնները կը պահեն աւանդութեան եւ հայկականութեան հոսանքին մէջ։

- Համաչափութիւն պահպանւում է մեր գրականութեան «սեռային» զարգացման համակարգում։ Խնդրում եմ հակիրճ բնութագրէք արդի հայ քերթողութիւնը, արձակը, թատերգութիւնը։

- Ցաւալի է որ անցումի շրջան մը կը բոլորէ մեր գրականութիւնը իր երկու ճիւղերով։ Սփիւռքի բանաստեղծութիւնը երկու գլխաւոր երակներով կը մշակուի - ազգային ու քնարերգական՝ Միջին - Արեւելքի մէջ եւ արդիական՝ Արեւմուտքի մէջ։ Պոլսոյ բանաստեղծները միջին ճամբայ մը ընտրած են, մշակելով նոր քնարերգութիւն մը, ուր ազգային տարրը լոկ հայերէն լեզուին գործածութեան մէջ կ'արտայայտուի, եւ արդիականութիւնը՝ ընկերային «քրիթիք»ի մէջ։ Պէյրութի մէջ Աբրահամ Ալիքեանի հզօր շունչը նոր ուժ տուած է ազգային ու զուտ բանաստեղծական սեռին, հակազդելու չափ վարիզեան քերթողներու գեղարդիականութեան։ Արդիականութեան յաջող փորձեր են Շուշիկ Տասնապետեանի քերթուածները։ Լոս - Անճըլըս, Մոնրէալ գլոյշ բայց առողջ արդիականութիւն մը կը զարգանայ։ Սփիւռքի ամէնէն մշակուած ինքնատիպ եւ ժամանակին հետ ընթացող բանաստեղծական ու մտածողական ձայնը կը մնայ փարիզցի Գրիգոր Պըլտեանը։

Արձակը նոյն թափով չէ կրցած աճիլ, հակառակ որ Միացեալ - Նահանգներու անգլիագիր հայ գրագէտները օրուան ամերիկեան հոսանքին մէջն են, ներկայիս արձակը, յատկապէս վէպը, նոր, ինքնատիպ թափ մը առած է (Վահէ Պէրպէրեան, Իշխան Ճինպաշեան) Լոս - Անճըլըսի մէջ։ Պէյրութի գրագէտները, սակայն, կը մնան պատմուածքի ծիրին մէջ։

Թատերական գրականութիւնը ուշագրաւ ներկայութիւն մը չէ եղած անցեալին ու չէ այսօր։ Տեղ տեղ զուտ մտաւորական թատրոն մը կը մշակուի որ աւելի մօտ է պատմուածքի քան իսկական թատրոնին։

Իր ամբողջութեան մէջ առնուած, ըՍփիւռքի գրականութիւնը առողջ հունի մէջ է, գրագէտները բարձր կրթութեան տէր եւ հայկական մշակոյթի ոգիին հաւզօրդ մտաւորականներ են, եւ ապագայի նկատմամբ ամէն յոյս արտօնելի է։

Հայաստանի կացութեան մասին շատ բան չեմ կրնար ըսել՝ ճշգրիտ տեղեկութեան բացակայութեան։

- Ըստ ձեզ, իր ո՞ր տեսակներով ու յատկանիշներով կարող է ժամանակակից մեր գրականութիւնը առաջնակարգ հնչողութիւն եւ ընդունելութիւն ստանալ համաշխարհային գրական բեմահարթակում։ Սպասո՞ւմ է, արդեօք, հայ գրականութեան մի նոր «ոսկէ դար»։

- Մեր ժողովուրդին գրական տիրական ջիղը բանաստեղծութիւնը եղած է ու այդպէս ալ կը մնայ։ Միակ թեման որ կրնար մեր գրականութիւնը համաշխարհային գնահատանքի արժանացնել, եղած է Մեծ Եղեռնը որ սակայն ցարդ գրական տիրական ոչ մէկ երկ տուած է։ Միայն Յակոբ Օշական կրնար հասնիլ այդ բարձրագոյն իրագործման, բայց մահը արգիլեց, ու «Մնացորդաց»ը չկրցաւ Եղեռնը ընդգրկել։ Այս հաստատումը չի բացառեր որ ապագային հայ ստեղծագործական երեւակայութիւնը այդ ահաւոր ողբերգութիւնը չնուաճէ բարձր արուեստով։

Սակայն մեր քերթողութիւնը, ի Հայաստան եւ ի Սփիւռս, ամէն հնարաւորութիւն ունի համաշխարհային գրական անդաստանի մէջ ընդունուելու, պայմանաւ որ ան թարգմանուի անգլերէնի կամ ֆըրանսերէնի։ Այս կապակցութեամբ, Հայաստանի կառավարութիւնը ի վիճակի է կարեւոր դեր խաղալու, շնորհիւ Խնէսքոյի։

Չեմ կարծեր թէ Սփիւռքի մէջ գրական նոր Ոսկեդարու մը նշանները կան ներկայիս, սակայն բացառելու չէ կարելիու-

...թիւնը: Թէ, կրթութիւն, նիւթական հը-
...նարաւորութիւններ, տաղանդ, նախըն-
...թաց, միջավայր - ամէն ինչ կայ: Ինչ
...կը կապելու է Հայաստանի - որ հոգե-
...կան եւ ընկերային ծանր խմորում-
...ներ կ'ապրի ներկայիս - կ'անդրադառնամ:
...ց կողմն, մեր ժողովուրդին Թաքուն
...կարողութիւնները անսպառ են, եւ տըր-
...ուած քիչ մը անդորրութիւն, բարգա-
...ցում եւ մշակութային կեանքի ազատ
...պայմաններ, 10 - 15 տարիէն մենք կըր-
...նանք նոր վերածնունդ մը ողջունել, Թէ՛
...Հայաստան եւ Թէ Սփիւռք:

...Ձեր գնահատանքը Յակոբ Օշականի
...ին: Նա ի՞նչ տեղաւորւում է «հսկայ
...դրաստ» որակման մէջ: Յ. Օշականի
...կան - օփերային ձայնի ո՞ր ելեւէջ-
...ներն են առանձնապէս ներգործում եւ ար-
...ժանի «ձայնագրելու», պահպանելու՝ ի
...նպաստ մեր ստեղծագործ եւ ընթերցող սե-
...րունդների:

– Յակոբ Օշականի «հսկայ դրաստ»
...մը որակումը միակողմանի դատում
...ն է եւ միայն հին օրերու, մարքսիստ
...քննադատներու սահմանափակ տեսակէտ-
...ը կը յաւերժացնէ: Յակոբ Օշական
...հայ գրականութեան մեծագոյն վիպա-
...սաններէն է եւ իր գրադատական վաստակը
...մը լոկ իր վիպասանի հան-
...ճարին, տեսակ մը երկրորդական մակար-
...դակի իրագործում մը: Օշականի արուես-
...տի կեդրոնական առանցքը մարդկա-
...յին բարքերու նուաճումն է, բարքեր,
...որ անհամար սերունդներու ընթաց-
...քին կրկնուելով, ծիսական բնոյթ մը
...ած են եւ այսօր կը խտացնեն համա-
...մարդկային փորձառութեան էութի՛ւնէն
...մը, անոր ճշմարտութեան մէկ երե-
...սը: Այս բարքերը սակայն արտաքին կեր-
...պարանքն են աւելի խորունկ ու դաժան
...իրականութիւններու – անհատական եւ ան-
...դրանձնային մղումներ արիւնի, ժառանգա-
...կանութեան, սերմի, ոճրային բնազդնե-
...րու, - որոնք կը ղեկավարեն անհատներու
...ու հաւաքականութիւններու կեանքը: Հայ
...գիւղն ու գիւղը, Թրքութիւնն ու
...թուրք քաղաքը պարզապէս բեմն են այս
...համամարդկային տրամին:

...Նոյն նկատողութիւնն ունիմ Օշականի
...գրադատական գործին մասին, մինչ հայ
...ժողովուրդին բուն պատկերը, անոր առա-
...քինութիւններն ու հոգին «Համապատկեր
...Արեւմտահայ գրականութեան» տասը հա-
...տորներուն մէջ է որ կը սեւեռուին: Օշա-
...կանի գրադատական ծաւալուն գործը
...յ կրում մըն է անոր «Համապատկեր»-
...ին վրայ ու կը վերլուծէ Սփիւռքի
...կանութիւնը որպէս ժառանգորդը հայ
...ին ու գրական գիտակցութեան: Օշա-
...նոյն նպատակներով կը հակի Արեւե-
...լահայ գրականութեան վրայ եւս, հոն
...փնտռելով ու վերլուծելով հայ հոգին
...կանչող երեւոյթները:

...Ինչ կը վերաբերի Օշականեան հանրա-
...մեթոտին, ատիկա գրելակերպէ աւելի
...կան մեթոտ ու բովանդակութիւն է:
...ու ձեւի բացարձակ խտացումը,
...ու նոյնացումը կարելի կը դարձը-
...որ ոճը վերածուի իմաստի ու մաս
...խորքին: Այսպէս է որ Օշականի
...կերպը լեզու ըլլալէ անդին ու ա-
...մեթոտի եւ գործօն բնազդներու
...կը նոյնանայ իր գրելու մեթոտին
...:

...ստեղծագործ միտքը Օշականի
...ուն ու կեանքէն կ'առնէ այն իմաս-
...տը թէ սանձարձակ երեւակայու-
...թիւն, լեզուական, ցուցամոլութիւն եւ
...թիւն, նկարագրապաշտ ճգտում-
...ներ, քարոյախօսական եւ օգտապաշտ
...ումներ, արհեստավարժութեան եւ
...մէջ սայթաքումները արդելք
...գրագէտը իրականութիւնէն վեր ու
...կոչուող ճշմարտութեան մօտե-
...:

...Օշական ապրեցաւ երբեւ վիպային հե-
...մը, այնպէս որ իր կեանքին ճշմար-
...թիւնը իր վէպերուն, անոնց հերոսնե-
...մէջ փնտռելու է եւ ոչ թէ իր կեն-
...թեան մէջ: Այդ է գինը որ ան
...հասնելու համար մեծ վիպասանի
...բարձրութեան:

ՀՐԱՆՏ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ

...Սանկանակերտ

...«Հարան»
...Յուլիս 1996

ԴԺՈՒԱՐ ՍԱՀՄԱՆՈՒՄ ՄԸ՝

Ո՞Վ Է ՀԱՅ, Ո՞Վ ՉԷ ՀԱՅ

Ըստ սովորութեան, այս անգամ ալ, Աթլանթայի Ողիմպիականին, հայ մկրտեցինք բոլոր «եան»երը, քիչ շատ յաջող մարզիկներ. նոյնիսկ՝ քանի մը «ոչ-եան»եր ալ:

Այս առթիւ մտաբերեցինք պատահար մը՝ որուն զոհը եղած ենք անձնապէս: Կը յիշենք՝ 1960, Հռոմ: Ողիմպիականի յայտագիրը ի ձեռին, կը փնտռէինք Հայեր՝ մասնակից պետութիւններու խումբերուն մէջ:

Գտանք «եան» մը Իրանի կազմին մէջ: Ըմբիշ մը: Գացինք մարզադաշտ, ծանօթանալու մօտէն մեր ազգակիցին հետ: Մօտեցանք Իրանի խումբին: Հարցուցինք թէ իրենցմէ որն էր այդ «եան»ը: Ցոյց տուին մեզի սեւամորթ մը... Այդ առթիւ էր որ գիտցանք թէ Պարսիկներու մէջ «եան» վերջաւորութեամբ մականուններ եղած են միշտ եւ կան:

***

Այդ անախորժ յուսախաբութենէն ետք, քաջութիւնը չունեցանք մօտենալ փորձելու Կառի Թուլեանի:

Կառի Թուլեան Միացեալ - Նահանգներու խումբին մարզիկներէն մէկն էր Հռոմ: Շահած է Ջրացատքի (երեք մեթր) առաջնութիւնը եւ շահած է երկրորդ մըրցանակ աշտարակացատքի մէջ:

Տեսանք վերջերս մեր մամուլին մէջ որ Թուլեան անցած է Ողիմպիականներու հայ ախոյեաններու ցուցակին վրայ: Թուլեան Հա՞յ: Կրնայ ըլլալ... Տեսանք զինքը քիչ մը հեռուէն, բարձրէն, մըրցումներուն ընթացքին: Խարտեաշ, փառաւոր մարմինով երիտասարդ մը, անկլեւսաքսոն մարզիկի տիպար:

***

Պէ՞տք է հայ նկատել Անտրէ Ագասին որ, Աթլանթայի մէջ շահեցաւ թէնիսի ոսկի մրցանակ: Լսած է՞ք, կարդացած է՞ք օր մը որ այս Ամերիկացին - անկասկած տոլարով քանի մը անգամ միլիոնատէր՝ շնորհիւ թէնիսի - իր հայութեան մասին որեւէ ակնարկութիւն ըրած ըլլայ: Մենք՝ ոչ:

Նոյն հարցումը կրնանք ընել, նոյն պատասխանով, Մակտալէնա Մալէեւայի մասին: Պուլկարական կազմին մէջ, այս օրիորդը, նախորդ Ողիմպիականին, Պարսելոնա շահած էր ոսկի մետալ: Աթլանթայի մէջ չկրցաւ անցնիլ ութերորդ աւարտականէն անդին:

Չենք մոռնար նաեւ յիշելու Քրիսթոֆ Գալֆայեանը: Մականունը Անատոլու եւ Պոլիս կը հոտի: Շատ ենք կարդացած ֆրանսական մամուլին մէջ Գալֆայեանի մասին, լողի ախոյեան: Երբեք չենք հանդիպած որեւէ ակնարկութեան հայութեան հետ իր ունեցած կապին:

Քրիսթոֆ Գալֆայեան, ազատ լողի մէջ, տէրն է Ֆրանսայի մրցանիշին՝ 22,39 երկվայրկեան: Տասնեակ մը տարիներէ ի վեր, Ֆրանսայի լաւագոյն մարզիկը կը նկատուի այս հեռաւորութեան վրայ: Աթլանթայի մէջ, յաջող ելոյթ մը չունեցաւ:

***

Եթէ կան հետաքրքրուողներ, ճշդենք.

● Ամերիկացի Անտրէ Ագասի զաւակն է իրանահայ կափամարտիկի մը: Մայրը՝ Ամերիկուհի սպանական ծագումով:

● Պուլկարուհի Մակտալէնա Մալէեւա աղջիկն է Ցուլիանէ Պէրպէրեանի՝ ամուսնացած, առենին երկրին մէջ հռչակ ունեցող մարզիկի մը, Մալէեւի հետ:

Մակտալէնա 21 տարեկան է միայն եւ ունի անկասկած իր առջեւ քանի մը տարիներու ասպարէզ թէնիսի աշխարհին մէջ, բարձր մակարդակի վրայ, ինչպէս ունեցած են իր երկու քոյրերը: Այս վերջինները, այլեւս, չեն մրցիր: Նշենք նաեւ որ Ցուլիանէ Պէրպէրեան, ան ալ, փայլած է, ժամանակին, թէնիսի մարզաձեւին մէջ, եղած է Պուլկարիոյ ախոյեան եւ շահած է նոյնիսկ մրցաշարք մը Անգարայի մէջ, միջ-պալքանեան խաղերու ընթացքին:

● Քրիսթոֆ Գալֆայեան ծնած է 1969 Մայիս 26-ին Ալպէրվիլ, Սավուայի մէջ: Լողալ սկսած է վեց տարեկանին: Մայրը Սավուացի է, Իւժինէն, Ալպէրվիլի մօտ: Քրիսթոֆ՝ հայ, ուրեմն, հօրը կողմէ, ծնած Ֆրանսա, Ալէս:

***

Պէ՞տք է ներառնել այս բարձր կարգի մարզիկները հայ մարզաշխարհին մէջ: Ծիծաղելի կ'ըլլայ այդ: Մեր կարծիքով հայ է, կէս կամ ամբողջովին հայ, ան՝ որ բացայայտօրէն կը յայտնէ իր կապերը հայութեան հետ, եթէ նոյնիսկ անունով «եան» մը չէ:

Օրինակ մը՝ Եուրի Ճորքայէֆ: Աստղ ֆութպոլի Ֆրանսայի Ազգային խումբին, ներկայիս պայմանագրուած Միլանոյի «Ինթէր» ակումբին հետ, այս բարձր կարգի խաղացողը առիթ չի փախցներ յիշելու, մամուլի ներկայացուցիչներուն առջեւ, հայ ընտանեկան մթնոլորտը՝ ուր անցուցած է իր մանկութիւնը, մեծ հօրը, Կարոյի (Օհանեան) եւ մօրը, Մարիի հըսկողութեան տակ: Հայրը, Ժան Ճորքայէֆ, ան ալ առենին Ֆրանսայի Ազգային կազմին մնայուն անդամ, ծնունդով Գալմուկ է, սերած մոնկոլեան ցեղէ մը:

***

Կը կարծենք որ Սփիւռքի մէջ, Արեւելք կամ Արեւմուտք, անտեղի է եւ ծիծաղելի հպարտանալ այս կամ այն ասպարէզի մը մէջ դիրք բռնած «եան»երով՝ որոնց միտքէն իսկ չանցնիր մօտենալ հայ համայնքներու կամ հրապարակել իրենց մէկ կապը հայութեան հետ:

Կան, բարեբախտաբար, երկրագունտին վրայ, բաւական թիւով արժէքաւոր անձեր, արուեստի ու գիտութեան մարդիկ, կամ գործատէրեր, մարզիկներ ալ, որոնք՝ երբ առիթ ըլլայ, չեն մոռնար յիշելու իրենց հայութիւնը, հեռաւոր կամ մօտաւոր իրենց հայկական ծագումը: Գոհանանք անոնցմով:

Իսկ հայացնել աշխարհի բոլոր «եան»երը մեզի շատ հեռուները կը տանի: Ջինաստանի մէջ շատ են «եան»ով վերջացող անուններ, մականուններ: Զուիցերիոյ լեռնային մէկ շրջանին մէջ, գիւղերը, կան՝ Դուրեաններ: Արդեօ՞ք զարմիկներն են մեր տարաբախտ բանաստեղծին...

ՎԱՂԻՆԱԿ ՄԻՍՔՃԵԱՆ

ԹՐՔԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ԿՐՕՆԱՄԷՏ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Թուրքիոյ մէջ վճռական վերջին խօսքը բանակին կը պատկանի. այս իրողութեան նորագոյն փաստն է 29 սպաներու եւ ենթասպաներու արտաքսումի որոշումը զոր բանակին պատասխանատուներուն հետ ըստորագրած է նաեւ վարչապետ Էրպաքան: Արտաքսուողներու 13-ին յանցանքը եղած է «կրօնական քարոզչութիւնը»: Էրպաքան չէր կրնար այլ կերպ շարժիլ, քան իր նախորդները որոնք թէեւ լաիք դէմքեր էին ու կրօնամոլ մը արտաքսել վրդովում չէր պատճառեր իրենց:

Զինուորական Գերագոյն Խորհուրդի նիստը ուր Էրպաքան առաջին անգամ գըրաւեց նախագահի աթոռը, ամբողջ երկրին տուաւ տեսականօրէն անհաշտելի երկու գաղափարականներու հանդիպումին պատկերը: Առաջինը Էրպաքանի մարմնաւորած թրքական իսլամականութիւնն էր, երկրորդը Մ. Քէմալէ ժառանգուած լաիքութիւնը: Այդ հանդիպումը թրքական զօրավարներուն առիթ մը եղաւ կառավարութեան պետին պատգամելու թէ իրենք կը հանդուրժեն իր ներկայութեան եթէ չփորձէ ներթափանցել բանակէն ներս, ինչպէս ըրաւ հանրային սպասարկութեան ոլորտին: Անոնք հասկցուցին թէ պէտք չէր խաղալ զինուորական բարձրաստիճան շարքերուն հետ:

Թուրք բանակը բաղկացած է 800 հազար հոգիէ. դժուար է որ նման զանգըւած մը ժամանակակից գաղափարականներէ չտարուի: Սակայն հսկողութիւնը կատարեալ է հոն ու ամէն կարգի շեղում կը պատժուի արտաքսումով:

Կրօնասիրութիւնը յանցանք չի նկատուիր. ոչ ալ կրօնական եղբայրակցութեան մը պատկանելիութիւնը, բայց արգիլուած է նորակոչներուն վրայ ճնշում բանեցնել կրօնական ուղղութեամբ: Արգիլուած է նաեւ մաս կազմել կամ յաճախել կրօնական ապօրինի խմբաւորումներ:

Կրօնամոլի մը ղեկավարութեամբ կազմուած կառավարութիւնը զինուորական պետական հարուածներու հեռանկարի մը յիշատակը կ'արծարծէ յաճախ: Սակայն լաւատեղեակներու կարծիքով ներկայիս շատ հաւանական չէ ատիկա, քանի որ Էրպաքան գոնէ առ այժմ չարդարացուց իր պաշտօնավարութենէն թելադրուած վախերը. գիտէ թէ ուր է այն սահմանագիծը որմէ անդին պէտք չէ անցնի:

Բանակն ալ միշտ զգոյշ է: Գիտակից է թէ իր կողմէ միջամտութիւն մը 1960-ի կամ 1980-ի նախընթացներուն չափ դիւրին պիտի չըլլայ: Ցետոյ, ի վերջոյ, աւելի հանգիստ է հակել երկրին ապահովութեան, քէմալական գաղափարականին յարգանքին ու չզբաղիլ տնտեսական, ընկերային, կրթական, ոստիկանութեան հարցերով:

Պէտք է ըսել որ նոր ընտրութիւններ մեծ հաւանականութեամբ պիտի աւելցընեն Էրպաքանի տրուած քուէները: Ատոր անուղղակի նպաստած է նոյնինքն բանակն ալ իր կարգ մը սխալներով ու վերջին կառավարութիւնը իր մութ գործերով:

ՔԱՂ.ՀԱՆ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ՀԱՅԿ. ԿԵԱՆՔԸ ԳԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՄԷՋ

ԱԹԼԱՆԹԱՅԻ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐՈՒ ՈՂԻՄՊԻԱԿԱՆԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՀԱՅ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ ԼՈՍ -- ԱՆՃԸԼԸՍԻ ՄԷՋ

Օգոստոս 7-ին Լոս - Անճըլըս ժամանած են Հայաստանէն հաշմանդամ հինգ մարզիկները, որոնք կը մասնակցէին Աթլանթայի մէջ Օգոստոս 12 - 25 տեղի ունեցող Ողիմպիական խաղերուն: Հայ մարզիկները Օգոստոս 9-ին հիւրընկալուած են Եունիվէրսըլ Սթիւտիոյի մէջ, ապա այցելած են գաղութին զանազան հիմնարկները, որոնց կարգին՝ Կլէնտէյլի Սուրբ Աստուածածին Եկեղեցին: Երիտասարդները մաս կը կազմեն «Փիւնիկ»ին, որ կազմուած է երկրաշարժէն ետք, հաշմանդամ երիտասարդութեան, ֆիզիքական, հոգեկան եւ ընկերային պահանջքներուն գոհացում տալու համար: «Փիւնիկ»ի ամառնային ճամբարները, ուր կը յաճախեն 2100 երիտասարդներ, ոչ միայն ապաքինումի նպատակին ծառայած են, այլեւ պատրաստած են համաշխարհային մակարդակի մարզիկներ:

Աթլանթայի Ողիմպիական խաղերուն մասնակցող Հայաստանի խումբը կը բաղկանայ Սպիտակէն 17-ամեայ չորս նաւարկողներէ՝ Կարուշ Դանիէլեան, Սղասիք Նազարեան, Արմէն Մարտիրոսեան, Հայկ Արզարեան, եւ ծանրաբարձութեան ախոյեանէ մը՝ 38-ամեայ Գագիկ Գասպարեան:

ԼՐԱՏՈՒ

ԱՐՑԱԽ

ԾՆՈՒՆԴՆԵՐՈՒ ՅԱՒԵԼՈՒՄ

«ԼՂ Հանրապետութիւն» օրաթերթը Օգոստոս 6-ի թիւով կը տեղեկացնէ թէ 1996-ի եօթը ամսուան ընթացքին Ստեփանակերտի մէջ արձանագրուած է 472 ծնունդ, 177 ամուսնութիւն, 37 ամուսնալուծում եւ 255 մահ: Ծնունդներու թիւը նախորդ տարուանէն 46 աւելի է, ամուսնութիւններու թիւը 36 աւելի: Ամուսնալուծումները նուազած են 10-ով:

Ի ՅԻՇԱՏԱԿ

Յարութիւն Շիրվանեանի յիշատակին. -

Տէր եւ Տիկին Ժագ Ալլավերտեան 300 փրանք կը նուիրեն «Յառաջ»ին։

Նոյն առթիւ, Պ. Նազարէթ Պչտիկեան 100 փրանք կը նուիրէ «Յառաջ»ին։

Նոյն տխուր առթիւ, Տիկին Արմենուհի Գեւոնեան 100 Ֆր. կը նուիրէ «Յառաջ»ին։

(Շար. Ա. էջէն)

եւ վիճակը ծանր կը նկատուի։ Ծահճախտէ (փալիւտիզմ) կը տառապի, բայց սրտի եւ Թոքերու տկարութիւնը կը մտահոգէ բժիշկները։

ՉէՉՆԻԱՅ կացութիւնը անորոշ կը մնար Օգոստոս 26-ին։ Լեբէդ Մոսկուա վերադարձած էր խորհրդակցելու համար Չերնոմիրդինի, Պրիմակովի եւ Միխայլովի (Ազգութեանց Նախարար) հետ։ Անհրաժեշտ կը նկատէ ուսումնասիրել տալ Չէչէններու նոր առաջարկները միջազգային իրաւունքի եւ Կրեմլինի փորձագէտներու կողմէ։ Տեղւոյն վրայ, ռուս զինուորները մէկ մղձաւանջ ունին՝ ժամ առաջ տուն վերադառնալ։

ՖՈՒԹՊՈԼ

Վալանսի Հայ Մարզկանը 0 - 2 պարտուեցաւ Թուլուզէն, այս վերջինոյն դաշտին վրայ։ Բ. դասակարգի գլուխն է միշտ Փերփինեան 10 կէտով։ Վալանս 20-րդ է 3 կէտով, 22-րդ եւ վերջինն է Շառլըվիլ։

-ՎԵՐԱՄՈՒՏ-

ՇԱՒԻԼԻ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ ԵՐԿՕՐԵԱՅ ԴՊՐՈՑ

Շաւիլի Եկեղեցւոյ հովանաւորութիւնը վայելող երկօրեայ հայերէն լեզուի ու կրօնագիտութեան դպրոցի վերամուտի թուականն է Սեպտեմբեր 11, Չորեքշաբթի, առաւօտեան ժամը 10-ին։

Դասաւանդութիւնները տեղի կ՚ունենան Եկեղեցւոյ կից Սարգիս Պալապանեան սրահին մէջ, հետեւեալ յայտագրով ու ժամանակացոյցով. -

- Չորեքշաբթի, ժամը 10 - 12. հայերէն լեզու եւ կրօնագիտութիւն, փոքր տարիքի աշակերտներու համար։
- Չորեքշաբթի, ժամը 14 - 16. հայերէն լեզու եւ կրօնագիտութիւն, պատանի տարիքի աշակերտներու համար։
- Ուրբաթ երեկոյ ժամը 18.30 - 21. հայերէն լեզու, չափահաս տարիքի աշակերտներու համար։

Յաւելեալ մանրամասնութեանց համար, դիմել դպրոցի ուսուցչին՝ Պր. Մեսրոպ Ադամեանին։

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՄԻՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

Լիոնի Հայկազեան Միօրեայ Վարժարանի վերամուտն է Չորեքշաբթի, Հոկտեմբեր 2-ին, Առաւօտեան ժամը 9-ին։

Դասաւանդութիւնները տեղի կ՚ունենան Չորեքշաբթի, առաւօտեան ժամը 9-էն 12, կէսօրէ վերջ ժամը 14-էն 16։

Աշակերտները կրնան օգտուիլ կէսօրուան ճաշէն. իսկ երթեւեկի սպասարկութիւն մը կարելի է նախատեսել ծնողքներու հետ համաձայնելով։

Յաւելեալ տեղեկութեան եւ արձանագրութեան համար դիմել Եկեղեցւոյ Դիւանատունը։

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 Paris
Siret: 51027317 A R. C. Paris
Commission paritaire: N° 55935

ՄԱՐՍԷՅԼԻ ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

40-օրեայ Հոգեհանգիստ
Ազգային Բարերար՝

ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

Կիրակի, Սեպտեմբեր 1, առաւօտեան ժամը 10-ին, Մարսէյլի Սրբոց Թարգմանչաց Մայր Եկեղեցւոյ մէջ կը մատուցուի պատարագ։

Կը պատարագէ՝
ԶԱՏԻԿ ՎՐԴ. ԱՒԵՏԻՔԵԱՆ
Հոգեւոր Հովիւ

Յաւուր պատշաճի կը քարոզէ եւ յաւարտ պատարագի հոգեհանգստեան պաշտօնին կը նախագահէ՝
ՏԱՐՕՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՃԸՐԸՃԵԱՆ
Առաջնորդական Տեղապահ եւ
կաթողիկոսական Պատուիրակի
փոխանորդ
Հարաւային Ֆրանսայի Հայոց Թեմի

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Մայր ՀՄՄ.-ի 75-ամեակի եւ
Ֆրանսայի ՀՄՄ.-ի Մարտիկ
մասնաճիւղին 10-ամեակի
ճաշ -- պարահանդէսը
Հոկտեմբեր 12-ին
Orée du Bois (Porte Maillot)

***

Ի նպաստ «ՀԱՅԱՍՏԱՆ» Հիմնադրամին ԿԻՐԱԿԻ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 29, ԺԱՄԸ 15-ԻՆ, Իսի լէ Մուլինօ։

***

Իսիի Հայ Առաքելական Եկեղեցւոյ Մատաղօրհնութիւնը եւ շինութեան 21-րդ տարեդարձը՝
ԿԻՐԱԿԻ, ՆՈՅԵՄԲԵՐ 10-ԻՆ

***

Սիփան - Կոմիտաս երգչախումբի վարչութիւնը կը խնդրէ նկատի առնել իր յառաջիկայ համերգը որ տեղի պիտի ունենայ Շաբաթ, Նոյեմբեր 30-ին, Փարիզ, Opéra Comique — Salle Favart-ի մէջ։

Յայտագիրը յատկացուած է Կանաչեանի եւ Ափրիկեանի գործերուն։

ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

«ՅԱՌԱՋ» ՄԱՏԵՆԱՇԱՐ

ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ՕՐԵՐ ԵՒ ԺԱՄԵՐ	100 Ֆր.

ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐ

ՆԱՀԱՆՋԸ ԱՌԱՆՑ ԵՐԳԻ	80 Ֆր.
ԲԱՑ ՏՈՄԱՐԸ	75 Ֆր.
ԿՐԱԿԸ ԿՈՂՔԻՍ	75 Ֆր.
ՍԻՐՏ ՍՐՏԻ	150 Ֆր.

ՀՐԱՆՏ ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԵՐ	80 Ֆր.

ԽԱՉԻԿ ԹԷՕԼԷՕԼԵԱՆ

ՍՓԻՒՌՔԻ ՄԷՋ	75 Ֆր.

ԵՒ

«ՅԱՌԱՋ - 50»
(Ծաղկաքաղ 50-ամեայ հաւաքածոյէն) 120 Ֆր.

Դիմել «ՅԱՌԱՋ»ի։

Թղթատարի ծախք՝ 25 Ֆր., հատոր գլուխ։

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

Փարիզի եւ Շրջակայից Կրօնական Ընկերակցութեան Ներկայացուցչական Ժողովը, Վարչական Խորհուրդն ու Մայր Տաճարի Հոգաբարձութիւնը կը ծանուցանեն, թէ՝ Կիրակի, Սեպտեմբեր 1-ին Փարիզի Ս. Յովհաննէս - Մկրտիչ Մայր Տաճարին մէջ, Հոգեհանգիստ կը կատարուի։

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան եւ Հայ Եկեղեցւոյ Ազգային բարերար՝

ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

համար, անոր մահուան քառասունքին առիթով։

Կը հրաւիրուի մեր ժողովուրդը ներկայ գտնուիլ Հոգեհանգստեան պատարագին, երախտագէտ զգացումով աղօթել հանգուցեալի հոգւոյն համար եւ նորոգուիլ անոր երկրային կեանքի օրինակով։

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

CBAF - Section St Jérôme / Djavo Chant

Sortie
MUSEE DOBREE / NANTES

Exposition

Arménie

Les Trésors du patrimoine archéologique arménien des origines au IV siècle

Vendredi 6 Septembre à 22 h
place de la Rotonde Dikran Tekeian
Saint Jérôme
Départ de Nantes le Samedi soir

PAF de transport et visite musée
350 F environ

pour tous renseignements
et réservations :
tél.: 91 70 00 32 et 91 61 10 82

ՔԱՌԱՍՈՒՆՔԻ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Հ.Բ.Ը.Մ.-ի Ֆրանսայի Շրջանակային Վարչութիւնն ու Փարիզ - Իլ տը Ֆրանսի Տեղական Յանձնաժողովը կը ծանուցանեն թէ Կիրակի, Սեպտեմբեր 1-ին, Փարիզի Ս. Յովհ. - Մկրտիչ Մայր Տաճարին մէջ
Հոգեհանգստեան Պաշտօն
կը կատարուի յաւարտ պատարագի։

Հ. Բ. Ը. Մ.-ի ցկեանս նախագահ եւ ազգային անզուգական բարերար, Հայաստանի Հանրապետութեան Ազգային հերոս, Ս. Գրիգոր Լուսաւորիչի Խաչին Դափնեկիր՝

ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

հոգւոյն պայծառացման համար, անոր մահուան քառասունքին առիթով։

Հ.Բ.Ը.Մ.-ի Մարսէյլի Տեղական վարչութիւնը կը ծանուցանէ թէ՝ Կիրակի, Սեպտեմբեր 1-ին, Մարսէյլի Սրբոց Թարգմանչաց Մայր Եկեղեցւոյ մէջ
ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՕՆ
կը կատարուի յաւարտ պատարագի։

Հ.Բ.Ը.Մ.-ի ցկեանս նախագահ, ազգային անփոխարինելի բարերար, Հայաստանի Հանրապետութեան ազգային հերոս, Ս. Գրիգոր Լուսաւորիչի Խաչին դափնեկիր՝

ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

մահուան քառասունքին առիթով։

MAISON DE LA CULTURE
ARMENIENNE D'ALFORTVILLE
ԱԼՖՈՐՎԻԼԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՏՈՒՆ

1976-1996
M.C.A. 20ème

En Octobre prochain,
la M.C.A. d'Alfortville fêtera
le 20ème anniversaire
de l'INAUGURATION
DE SA STRUCTURE.

AU PROGRAMME :

vendredi 11 octobre à 19h
Salle des Fêtes
SOIREE D'OUVERTURE DES MANIFESTATIONS

samedi 12 octobre à 10h
EMISSION RADIO «Cartes sur table»
AYP FM 99.5

samedi 12 octobre à 20h45
Salle des Fêtes
SOIREE ARTISTIQUE ARMENIENNE
Musique traditionnelle
Danse -- Voix

dimanche 13 octobre à 11h
Eglise Apostolique Arménienne
MESSE DE REQUIEM
à la mémoire des Fondateurs disparus

mercredi 16 octobre à 10h15
EMISSION RADIO
«Que sont les anciens élèves devenus? Cours et Parcours»
AYP FM 99.5

vendredi 18 octobre à 20h45
Salle des Fêtes
SOIREE THEATRE ARMENIEN

samedi 19 octobre à 20h
Salle des Fêtes
DINER SPECTACLE

Programme détaillé ultérieurement

Pour tous renseignements : M.C.A.
9, rue de Madrid, 94140 Alfortville
Tél.: 43 76 55 89 Fax: 43 78 66 64

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Շաբաթ, կիրակի
Դեկտեմբեր 14 / 15

5EME GRANDE BRADERIE DE NOEL

«Շէն -- Ֆրանս»

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
ՕԳՈՍՏՈՍ 28
MERCREDI
28 AOUT
1996

LE NUMERO : 5,00 F.

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1925-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE-FONDE EN 1925
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 47. 70. 86. 60 — TELEX : HARATCH 280 868 F
— FAX : 48. 00. 06. 70 —
C.C.P. PARIS 15069-82 E

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 1.100 Ֆ. - Վեցամսեայ : 560 Ֆ.
Արտասահման : Տար. 1.400 Ֆ. (ամէնօրեայ առաքում)
1.250 Ֆ. (շաբաթական առաքում) - Հատը : 5,00 Ֆ.

72րդ ՏԱՐԻ - ԹԻՒ 18.926 Fondateur SCHAVARCH MISSAKIAN 72e ANNEE — N° 18.926

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՍԹՈՔՀՈԼՄԻ մէջ, Օգոստոս 27-ին կը բացուէր վեհաժողով մը օրակարգ ունենալով մանուկներու սեռային շահագործումին դէմ պայքարը: Կը մասնակցին 126 կառավարութիւններու պատուիրակներ եւ 50 ոչ – կառավարական կազմակերպութեանց ներկայացուցիչներ: Առաջին անգամն է որ նման ժողով մը կը գումարուի, բայց, հարցը աւելի քան հրատապ է, քանի որ ամբաստանեալն է՝ սեռային զբօսաշրջիկութիւնը: Մանուկներու այս շահագործումը մեծ համեմատութիւններու հասած է Ասիոյ եւ Ափրիկէի որոշ երկիրներու մէջ, հարկ է սակայն չանտեսել որ, յաճախորդները մեծամասնութեամբ Եւրոպացի են: Տրուած թիւերը իսկապէս սահմռկեցուցիչ են: Այսպէս, Հնդկաստանի մէջ 300-էն 400 հազար կը նկատուին պոռնկութեան յանձնուած մանուկները, Թայլանտի մէջ 200-էն 400 հազար երախաներ որոնք 16 տարեկան ալ չկան հասարակաց տուներու մէջ «կ'աշխատին»: Պրազիլ 500 հազար մանուկներ ունի փողոցները ձգուած որոնք իրենց ապրուստը կ'ապահովեն պոռնկութեամբ, Գոլոմպիայի, վերջին եօթը տարիներու ընթացքին 8-էն 13 տարեկան պոռնիկ աղջիկներու թիւը հինգով բազմապատկուած է, Միացեալ – Նահանգներու մէջ ալ 90 հազարէն 300 հազար անչափահասներ պոռնկութեան յանձնուած են եւ երկիրը մանկամոլ պոռնկութեան ամէնէն մեծ շուկան կը նկատուի (500 հազար յաճախորդ): Ֆրանսայի մէջ, մինիթէլը կը վճարէ ծանուցումի մանուկները պոռնկութեան մղելու համար: Այս ամբողջը ցանցերու եկամուտ կ'ապահովէ վիտէօներու արտադրիչներուն եւ կաւատներուն (փրոքսէնէթ): Թէ ի՞նչ դարման պիտի կարենայ գտնել այս ժողովը, ի՞նչ միջոցներու կարելի պիտի ըլլայ դիմել յաջորդող օրերը, թերեւս լուսաբանեն: Ֆրանսական պատուիրակութիւնը կը գըլխաւորէ մարդասիրական հարցերու ենթանախարարը՝ Կզաւիէ Էմմանիւէլլի:

ՓԱՐԻԶԻ ՄԷՋ, Օգոստոս 26-ին, կօշիկի ծանօթ Պայի ձեռնարկութեան աւելի քան 1000 աշխատաւորներ ցոյց մը կատարին բողոքելու համար փակումի սպառնալիքին դէմ: Թափօրը ցերեկին Վարչապետարանին առջեւ հասած էր եւ ցուցարարները Ժիւփէի դէմ լոզունգներով իրենց վրդովումը կը յայտնէին:

ՉԷՉԷՆԻԱ մինչ լուծում կը փնտռէ եւ անկախապաշտները վճռած են ազատիլ ռուսական հովանաւորութենէն: Լեբէդ վերցաւ հանդիպիլ Ելցինի որ - կրկին - հանգստանալու մեկնած էր: Պիտի գոհանայ Չերնոմիրդինի հետ տեսնուելով: Անջատողական ուժերու հրամանատարը՝ Իսա[illegible]իրով կը նախատեսէ. - «երեսփոխանական եւ նախագահական ընտրութիւններ կը կազմակերպենք երկու ամիսէն, Սեպտեմբեր 1-էն սկսեալ, կարգադրելու համար իշխանութեան օրինաւորութեան հարցը: Այդ քուէներէն ծնած կառավարութիւնը կրնայ, անկէ ետք, անկախութեան շուրջ հանրաքուէ մը կազմակերպել, վեց ամիսէն, մէկ կամ երկու տարիէն»: Այս առաջարկներն են զորս Լեբէդ պարտի փոխանցել Մոսկուայի պատասխանատուներուն:

ՊԵԼՃԻՔԱՅԻ մէջ, տասներորդ անձ մըն ալ ձերբակալուած է Մ. Տիւթրուի մանկամոլ գործունէութեան քննութեան ծիրին մէջ:

ՀԱՅԱՍՏԱՆ

ՖՐԱՆՍԱՅԻ ԵՐԵՒԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ ՖՐԱՆՔԵՒՀԱՅ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

«Նոյան տապան» լրատու գործակալութեան թղթակիցին հարցումներուն պատասխանելով Ֆրանսայի Երեւանի դեսպան Միշէլ Լըկրա խօսած է երկու երկիրներու տնտեսական յետագայ համագործակցութեան մասին: Գլխաւոր մարզը բնականաբար ուժանիւթինն է ուր ամէնէն կարեւորը քարիւղի փոխադրութեան հարցն է: Կան ենթակառուցուածքի դաշտեր, ինչպէս օդակայանի ապահովութեան համակարգը, կամուրջներու, երկաթուղիներու շինութիւնը, նորոգութիւնը, եւայլն:

Ինչ կը վերաբերի առեւտրական ոլորտին, դեսպանը հայկական շուկային կարողականութիւնը կարեւոր կը նկատէ Ֆրանսայի համար, ըսելով թէ ֆրանսական թէքնոլոժիին փոխարէն կարելի է արտածել գիւղատնտեսութեան արտադրութիւն:

Ներդրումներու մարզին մէջ Մ. Լըկրա կարեւոր նկատած է Ֆրանսայի 40 միլիոնի վարկը որուն 4.5 միլիոնը պիտի յատկացուի «Թոմսոն» ձեռնարկութեան կողմէ Երեւանի օդակայանին թռիչքներուն համար ապահովութեան համակարգ ստեղծելու գործին: Նոյն վարկէն մաս մըն ալ կը գործածուի ատոմակայանին չոր թափօններուն մթերման նպատակով: Ֆրանսայի դեսպանը յիշեցուցած է որ Եւրոպայի Միութեան կողմէ Հայաստանի կատարուող օժանդակութեան 20%-ն ալ կ'ապահովէ իր երկիրը: Այս բոլորը իրաւունք կուտան եզրակացնելու թէ Ֆրանսա բաւական կարեւոր ներդրում կ'ընէ Հայաստանի մէջ:

⁂

ՀԱՅ ՀԱՄԱՅՆԱՎԱՐՆԵՐՈՒ ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ՖԻՏԷԼ ԳԱՍԹՐՈՅԻ 70-ԱՄԵԱԿԻՆ

Գուպայի ղեկավար Ֆ. Գասթրոյի 70-ամեակին առթիւ Հայաստանի Համայնա-

(Շար.ը կարդալ Դ. էջ)

ՊԵՐՆԱՐ ԹԱՓԻ, կանխելով տրուելիք անխուսափելի որոշումը, հրաժարեցաւ Ազգային Ժողովի երեսփոխանի իր հանգամանքէն: Կը մնայ սակայն Եւրոպական Խորհրդարանի անդամ, որու շնորհիւ ամսական 70 հազար ֆրանք կը ստանայ: Անկէ զատ, այս օրերուն, իր մասին կը խօսուի առաւելաբար որպէս շարժանկարի նոր «աստղ» մը: Գլխաւոր դերասանն է Լըլուշի նոր ժապաւէնին՝ «Այր, կին գործելակերպ»: Այս դերին համար աշխատավարձք պիտի չառնէ (որովհետեւ գումարը կը գրաւուի պարտքերուն հաշւոյն) այլ մասնակցութիւն մը պիտի գանձէ տոմսերուն վաճառքին վրայ 2 Ֆր. 80 տոմս գլուխ 35 հազարորդէն ետք: Կարգադրութիւնը վերապահուած է, ընդհանրապէս, մեծ դերասաններու: Կրկին, օրուան վըտէթն է եւ բազմաթիւ հարցազրոյցներ կուտայ ուր կը բացատրէ թէ անցեալին մարքսիստ էր եւ այսօր՝ Աստուծոյ կը հաւատայ:

ՄԱՐՍԷՅԼԻ հիւսիսային շրջանը, մանաւանդ Կառտան աննախընթաց փոթորիկի ենթարկուած է Օգոստոս 26-ի գիշերը, կայծակ, տեղատարափ անձրեւներ աւեր գործած են: 90-ամեայ կին մը յանկարծամահ եղած է Սիմիան, հաւանաբար վախէն, երբ կայծակը ինկած է տունին վրայ:

ՀԻՆ ԿՈԿՈՐԴԻԼՈՍՆԵՐՈՒՆ ՆՈՐ ԱՐՑՈՒՆՔՆԵՐԸ ԿԱՄ՝ ԻՆՉԻ՛ ԿՐՆԱՅ ԾԱՌԱՅԵԼ ՊԱՏՈՒԱՆԴԱՆԻ ՄԸ ՔԱՆԴՈՒՄԸ

ԱՐՓԻ ԹՈԹՈՅԵԱՆ

Պատկան իշխանութիւնները որոշած են քանդել Երեւանի Հանրապետութեան հրապարակին աւելի քան 5 տարիէ ի վեր պարապ մնացած պատուանդանը. անոր վրայ խորհրդային շրջանին կանգնած էր Լենինի արձանը որ վար առնուեցաւ 1991 Ապրիլ 15-ին: Այդ թուականէն ի վեր պարբերական առաջարկներ եղան պատուանդանին վրայ նոր օրերու խորհրդանշան մը զետեղելու, բայց մէկը միւսէն աւելի անհեթեթ ծրագիրներէն ոչ մէկը լուրջ նկատառման արժանացաւ արդարօրէն. ու պատուանդանը շարունակեց իշխել հրապարակին իր նախընտրելի պարապութեամբ:

Շուրջ յիսուն տարի գերագոյնը խորհրդանշած արձանէն մնացած պատուանդանին ներկայի պարապութիւնը անհանդուրժութեան գլխաւոր պատճառը եղաւ հաւանաբար պատասխանատուներու, որոնք ի վերջոյ որոշեցին վերցնել այդ մնացորդն ալ:

Ու փրթաւ փոթորիկը:

Բոլոր անոնք որոնք նախագահական ընտրութեան այս շրջանին քննադատութեան ոչ մէկ «դրամագլուխ» անտես կ'առնեն, գանձ մը յայտնաբերածի փութկոտութեամբ ինկան պարապ պատուանդանին վրայ: Դժգոհութեան, դատապարտումի արտայայտութիւնները իրարու յաջորդեցին, մինչ գլխաւոր թիրախ ունենալով ներկայի իշխանութիւնը, գլխաւորութեամբ Լ. Տէր - Պետրոսեանի: Անոնց ուղղուած մեղադրանքներու մէջ պատուանդանին քանդումը կ'որակուի «թրքավայել», «վանդալիզմ», իսկ հրահանգողները՝ «արկածախնդիր», «քանդարար», «քրէական յանցագործ», եւլն.:

Այս առիթով նախագահ Լ. Տէր - Պետրոսեանի դէմ մաղձ թափելու արշաւին մէջ յատուկ տեղ մը կը գրաւէ Ս. Կապուտիկեան: Ան որ երբեք դէպի անկախութիւն միահամուռ երթին դէմ գրիչ չարժած էր «մոլորած» հօտը խոհեմութեան հրաւիրելու գրեթէ մայրական մտահոգութեամբ, այսօր ալ հրապարակ կուգայ արժէքներու պահպանութեան սրբազան ու պատկերազարդ դիրքէ մը:

Սեւ լաչակով, խոր երկիւղածութեամբ եկեղեցին մոմ վառելու սրտցաւ պահու մը իր լուսանկարը տեղ գտած է «Հայաստանի Կոմունիստ»ին Օգոստոս 9-ի թիւին առաջին էջը: Լուսանկարին տակ տրուած են մեղադրական իր տողերը, ուղղուած՝ Լ. Տէր - Պետրոսեանի: «Ամենայն Հայոց բանաստեղծուհին» կ'ըսէ թէ նոյնիսկ եթէ ներկայի նախագահին թեկնածութիւնը պաշտպանող «մտաւորականութեան բարձրագոյն էշելոնի 13 «առաքեալ»ների շարքին մղձաւանջային թիւրիմացութեամբ մը» յայտնուած ըլլար ի՛ր անունն ալ, ինք ընտրաթերթիկէն անվարան կը ջնջէր Լ. Տէր-Պետրոսեանի անունը, միայն այն պատճառով որ «նրա գիտութեամբ հայկական հողի վրայ կատարուեց վանդալիզմի այս գործողութիւնը»:

Ճիշդ է որ քանդելու արարքը յաճախ ժխտական տպաւորութիւն կը գործէ: Ինչ կը վերաբերի խնդրոյ առարկայ պատուանդանին, հաւանօրէն, անկախ նոյնիսկ պատեհապաշտ մերձեցումներէ, դիւրին չէ միանշանակ վճիռ արձակել: Կոթողը արուեստի տեսակէտէ արժէք մը կը ներկայացնէ՞ր. վրայի արձանէն ու անով խորհրդանշուած իմաստէն պարպուած այդ գոյութիւնը իսկապէ՞ս աւելորդ էր: Հարցեր որոնք կրնան վիճելի ըլլալ, արժեւորման տարբեր դատումներու տեղի տալ: Այս ուղղութեամբ հետաքրքրական են նոյն թերթին մէջ «Պատմական յուշարձաններու պահպանութեան ընկերութեան» նախագահ Վարագդատ Յարութիւնեանի կոչը եւ «Հրապարակի զարդը» գրութիւնը: Առաջինը ուղղուած է նախագահին որպէսզի դադրեցնէ քանդումը ու մասնագէտներ հրաւիրէ խորհրդակցելու համար պատուանդանին նոր բովանդակութիւն մը տալու հարցին մասին: Իսկ գրութեան մէջ շեշտելով պատուանդանին արուեստի արժէքը, հակիրճ պատմականը կ'ընէ անոր շինութեան (1938). կ'ըսէ նաեւ որ 1991-ին Լենինի արձանը վար առնուելէ ետք իր գլխաւորած Ընկերութիւնը դիմած է օրուան վարչապետ Վ. Մանուկեանի, խնդրելով որ ժամանակ տան պատուանդանը եւս քանդելէ առաջ, որպէսզի անոր «պսակման համար նոր լուծում մը» գտնուի: Յայտնապէս, անցնող հինգ տարին բաւարար չէ եղած այդ լուծումը գտնելու որ Վ. Յարութիւնեանի գրութեան մէջ ո՛չ կատարուած առաջարկ -- ծրագրի մը, ոչ ալ անոր մերժումին մասին խօսք կայ: Հաւանաբար, արձանը վար առնելու օրէն ի վեր պատուանդանին մասին յիշեցնողը եղած է անոր քանդումը:

Ազգային արժէքներու պահպանութեան դիմակով յայտնուած այս նախանձախնդիր, փափկազգած կեցուածքը Ս. Կապուտիկեանի վերջնագրին զուգահեռ արտայայտութիւն մը գտած է նոյն էջին այն տողերուն մէջ ուր կ'ըսուի. «փաստորէն, Լ. Տէր - Պետրոսեան իր այդ անհիմ վարմունքով քանդող յուշարձանի աւերակների տակ թաղեց վերստին նախագահ դառնալու իր շանսը»...:

Եթէ նոյնիսկ ընդունելի ըլլայ պատուանդանին վերագրուած արուեստի գործի արժէքի մը պարագան, տեղին չէ՞ անոր քանդումին հանդէպ այս աստիճան գայթակղած Կապուտիկեանի եւ միւսներուն հարց տալ թէ ո՞ւր պահուած էր ազգային արժէքներու իրենց ներկայի փափկազգածութիւնը երբ 70 տարի երկրին տարածքին քանդուեցան ոչ թէ պարզ պատուանդան մը, այլ նախ՝ մարդկային կեանքեր – ամէնէ՛ն արժանաւորներէն – ապա ամբողջ ժողովուրդի մը մտքին, ճաշակին, աչքի լոյսին ու բազուկին արդասիք այնքա՛ն կոթողներ: Զարենցը, Բակունցը, Զ. Եսայեանը, աւելի ուշ Սեւակը եւ բոլոր, բոլոր միւսները, քանդուած եկեղեցիները, վանքերը, խաչքարերը, Մեսրոպեան այլանդակուած ուղղագրութիւնը, աղաւաղուած մեր պատմութիւնը պատուանդան մը չէի՞ն արժեր:

Ո՞ւր էր կապուտիկեաններու արժանապատուութիւնը, ազգային արժէքներու գիտակցութիւնը, վանդալիզմէն խորշանքը որ տասնամեակներու աւերումը իւղի պէս կլլելէ ետք այսօր կը գայթակղի պարապ պատուանդանի մը քանդումէն, ազգակործանի դիրքին վրայ զետեղելով անոր պատասխանատուները:

Եւ տակաւ՝ մոռնալու ատեն որ նախանձախնդրութիւն, քննադատութիւն, ազգասիրութիւն բաներ են որոնք հաւաստի ըլլալու համար չափաւորութեան, տրամաբանութեան եւ մանաւա՛նդ անկեղծութեան պէտք ունին...:

ՅՈՒՇԵՐ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԽՈՆԱՐՀ ՀԵՐՈՍԻ ՄԸ, ԻՐ ՊԶՏԻԿ ԼՈՒՍԱՐԱՐԻՆ ԵՒ ԱՅՆ ՕՐԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ

Վերջերս Պէյրութի հին օրերուս յուշերուս յաճախանքին տակ կ'ապրիմ եւ չեմ գիտեր՝ մղուած ներքին ինչ բանէ մը, կ'ուզեմ գրել, խօսիլ, պատմել, վկայել իմ մանուկ կեանքին եւ անոր վրայ իրենց կնիքը դնող մարդոց վրայ: Սկսե՛ր էի գրել դասընկերի մը՝ Նոնոյին մասին, անկէ դարձայ տնօրէնիս, ու հիմա հեռուներէն ինծի կուգայ մէկը, որ ո՛չ դասընկեր էր, ո՛չ ուսուցիչ, ո՛չ ալ տնօրէն. բայց մէկը, որ դուցէ կեանքիս ամէնէն մեծ ուսուցիչը եղաւ - Ս. Նշան Եկեղեցւոյ լուսարարը, Պր. Հայրապետը: Եւ արդարեւ, յետադարձ հայեացքի մը մէջէն, կը տեսնեմ զինք իբրեւ անկրկնելի ուսուցիչ, որ ինծի սորվեցուց ժամանակին յարգը գիտնալ, ամէն ինչ ժամանակին ընել, գործդ նուիրումով կատարել, սէր դնել աշխատանքիդ մէջ եւ գոհ ըլլալ իրագործումներով: Քիչ բաներ չեն տունը սորվիլը, բայց Պր. Հայրապետը ինծի եւ շա՛տ շատերու սորվեցուց այս բաները, որոնք, եթէ դասընթացքի անուն եւ հանգամանք պիտի ստանային Ամերիկայի համալսարաններուն մէջ, պիտի կոչուէին work ethics, liturgical theology, human relationships, etiquette 101, եւն., եւն.:

Եւ այս բոլորը եղան՝ տարիներու վրայ երկարող ժամանակի մը մէջ, օձանքի մը մէջ, ուր կը խառնուէին Հայոց դպրոցը, եկեղեցին, ակումբը, նոր արմատներ նետող հայ կեանքը՝ արաբական միջավայրին մէջ հայկական հաւաքական կեանք եւ ապրում ստեղծելու տենչին մէջ: Եւ ափսո՛ս, ի՞նչ եղաւ այդ հաւաքական կեանքը, ըսենք, որ Ս. Նշանին էր: Ո՞ւր են անոնք՝ այդ տարիներու Ս. Նշանցիները: Աշխարհի համատարած քարտէս մը պէտք է, որ տեղաւորենք զանոնք Սիւնիէն Հայաստան, Արաբական Ծոցի երկիրներէն մինչեւ իրենց մայրաքաղաքը՝ Պէյրութ եւ Ս. Նշան, եւ ապա, անկէ անդին, կանոնաւոր ոստումներով, Միջին - Արեւելքի երկիրներէն մինչեւ հեռաւոր Ամերիկաները եւ այդ Ամերիկաներէն ալ անդին՝ Լատին Ամերիկան ու Չիլին: Եթէ բոլորս Պէյրութ մնայինք՝ ինչ պիտի ըլլայինք ու ի՞նչ պիտի ըլլար Պէյրութը, չեմ գիտեր: Իրողութիւնը այն է, որ հաւատարիմ եւ Պէյրութ մնացած Ս. Նշանցիներու փաղանգին դիմաց՝ հեռաւոր հորիզոններէ - երբեմն իրարու բարեւ կուտան աշխարհով մէկ ցրուած Ս. Նշանցիները, կը հանդիպին ալ երբեմն իրարու, կը վերյիշեն հին օրերը, որոնք մի՛շտ ալ քաղցր են եւ անոյշ, եւ այս հոգեկան հանդիպումները կը վերջանան այդ օրուան ստեղծուած երգերու կտորներով եւ կամ այս կամ այն ուսուցչին կամ տնօրէնին վերագրուող դրուագով մը:

Այսպէս՝ «եկաւ, եկաւ...»ը սարսափի աղաղակ մըն էր՝ երբ տնօրէնը կուգար իր գաւազանով. ահա՛ Պր. Յովհաննէսը, որ մասնաւոր կերպով կ'անցնէր ճի՛շդ մեր առջեւէն, որպէսզի մենք, բոլորս, որ նստած էինք պատերուն տակ, ստիպուած ոտքի ելլէինք. յետոյ կուգային ածականները - «Ժիլիսը եկաւ», «Թավիլը եկաւ», եւ յանկարծ երգ մը՝ խումբ մը մեծերէ, որոնք իրենց վարժութիւնը կատարած են բօսքային մէջ, դպրաց դասի պտոյտներուն, դէպի Այն Սաֆա կամ Ագունիէ երթին պահուն --

«պիտի տամ, պիտի չտամ, պիտի տամ,
պիտի տամ, պիտի չտամ, պիտի տամ...
Պապ էտրիսի երկայնքին
կարճ օրիորդներ շատ կային
իրենց նազանի ու նոխ մարմիններով
Դէմքը շատ սիրուն էր նման կոլխոզի (sic!)
աչքերն էին շատ ամօթխածիկ
ժպտեց յուսածին
եկուր վար արա, էլ կա՛րօ՛
պիտի տամ, պիտի չտամ, պիտի տամ...»

(Ժան Խանճեանի ստեղծագործութիւն, կ'երգուի Էլպայօ երգի կշռոյթով):

Այսպէս էր կեանքը եւ երջանիկ էինք. ես ալ երջանիկ էի, այսինքն՝ ըսելու ձեւ մը էր: Ամէն կերպով կ'ապրէի շրջապատիս մէջ ուր նուիրապետութիւն կար, կարգ կանոն կար: Դպրոցին մէջ՝ դասարանէ դասարան յարգանք, դպրաց դասի մէջ՝ մեծ դպիրները կուգային, յետոյ պզտիկ դպիրները, յետոյ լուսարարը եւ իր inner circle-ը, այն տղաքը՝ որոնք կապուեր էին եկեղեցիին, եղեր էին Հայրապետին զինուորները, մեռելական թափօրներուն խաչակիրները, մոմակիրները, շարական երգող նոր օրերու եղերամայրերը (այսինքն եղերատղաքը): Աղջիկները չէին մասնակցեր թափօրին եւ մենք ալ շատ լալիք երգեր չունէինք - «Աշխարհ Ամենայն», «Ճանապարհ», «Ուստի Բուրելով», «Մերձեցայ ես ի դուռն»..., եւ սրտառուչ սաղմոս մը՝ «Սիրեցի զի լուիցէ Տէր զձայն աղօթից իմոց»ը եւ անոր վերջին պոռթկումը՝ «Ո՛ Տէր, փրկեա զանձն իմ...»:

(Հիմա՝ այս երկու տողերուն պատիւը Ամերիկայի մէջ կերպով մը կը փրկեն Տ. Թորգոմն ու Տ. Մուշեղը):

Ո՞ւր էինք, ուր հասանք: Եթէ Պր. Տարօնեանը ըլլար, առիթէն պիտի օգտուէր, մեզմէ մէկը գրատախտակին առջեւ հանէր եւ գրել տալ «retournons à nos moutons» եւ սկսէր իր գայլի աւետարանը կարդալ՝ բացատրելու համար այս նախադասութեան մակերեսային իմաստը եւ նաեւ, թէ ինչո՞ւ եւ ինչ պարագաներու մէջ կրնայինք գործածել այդ պատկերը:

Մենք ալ դառնանք, ուրեմն, մեր ոչխարներուն, պահ մըն ալ գոհ թողլով Պր. Տարօնեանը, որ երջանիկ էր, որ գէթ մէկ ֆրանսերէն ոճ իւրացուցած ենք. (a beau mentir qui vient de loin!) Ուրեմն կ'ուզեմ սկսիլ այն օրուընէ՝ երբ մեծ եղբայրս սկսաւ գիս դպրաց դասի փորձերուն պահել, Չորեքշաբթի եւ Շաբաթ կէսօրները, չորրորդ պահէն յետոյ, Ս. Նշան Եկեղեցւոյ մէջ: Այդպէս էր կարգը. այդ երկու օրերուն դասերը քիչ էին եւ Պր. Լիւքսը - մեղայ, մեղայ, նորէն սկսայ սլքտալ յուշերու քաւիղին մէջ, մեր դպրապետը, քիլիսցի մեր մասնագէտ երաժիշտը, անմազ, բայց շքեղ կերպով փայլուն գլուխ ունէր, կը հաւաքէր տղայ դպիրները, եկեղեցւոյ նստարաններուն վերջին երեք շարքերուն եւ կը սորվեցնէր այդ շաբթուան պատշաճները: Հիմա, գիտէք, ամէն Կիրակի առաւօտ, պատարագի սկիզբի մէկ թափօրի երգ մը կայ, որ բոլոր եկեղեցիներուն մէջ մեքենաբար կ'երգուի «բարեխօսութեամբ...»: Մամաս պիտի ըսէր՝ «Նունիկը նախշ մը գիտէ»: Բայց Ս. Նշան այդպէս չէր եւ ատոր համար ալ, մեր դպրապետը, Պր. Յակոբ Տէր Խորէնեանը, կը սորվեցնէր տ'յդ Կիրակիին պատշաճ թափօրի շարականը՝ «Ի խաչանիշ փայտէն», «Կանանցն Կանխելով», «Տեսիլ Փայլակնաձեւ» եւ կամ ալ իմ սիրածը ու առաջին սորված շարականները՝

«Թագաւոր զօրով քո յաշխարհի...
մտեր ի քաղաքն Երուսաղէմ...»
եւ
«Լուսով Աստուածութեան քո
Քրիստոս»ը:

Ալ չեմ կրկներ միւս շարականներն ու երգերը:

Այդ բոլորը դպիրները կը սորվէին, ես ալ, մէկ - երկու մանկապարտէզի փոքրիկներու հետ, բանկալի կողքին, աթոռակներու վրայ նստած, կը սպասէինք որ փորձը վերջանար եւ տուն երթայինք՝ ճաշելու համար: Մեր ճաշերը պահքի եւ լուացքի այդ օրերուն, կամ ոսպէ փիլաւ ըլլալու էին (մուճճետէրէի անուանեալ՝ զոր անցեալ օր Փարիզի «Նուրա»յի մօտ տեսայ իր փառքի կատարին՝ 250 կրամը 12 Ֆրանքի) եւ կամ ճերմակ Ֆասուլիա (քիպար Պոլսեցիները վրան կ'աւելցնէին կանաչ քերեվիզը եւ այդ կ'ըլլար... փի՛զ):

Բայց ինչե՛ր ինչե՛ր պիտի չտայի ես այսօր՝ դառնալու համար այդ բարի եւ քաղցր օրերուն, երբ հաճոյք էր եղբօրդ սպասելը եւ միասին տուն դառնալը՝ Ս. Նշանի զառիվարէն Պուրճ եւ Ռիվոլիի շրջանէն ալ Փոռ-ի զառիվարը: Անշուշտ լուռ ալ չէինք քալեր. մեծ եղբայրս մեծ յոյսեր ալ կը սնուցանէր իմ վրայ, եւ կը փորձէր երկու բան - երկար բառեր սորվեցնել եւ արտաբերել տալ, եւ երկձայն երգեր երգել: Առաջինին մէջ կարծեմ իր յոյսերը ի դերեւ չէի հաներ. հիմա ալ անխափան կը հնչեմ ... «յամին ութը - տասներորդի Նաբուգոդոնոսրայ արքայի», եւ կամ միւսը՝ որ կ'ամչնամ լման երգելու՝ իքիտի քոտօ պարապապիքի, սբանիօլա, մանճաթօ մաքարօնի ... բաթալօնի:

Բայց ինչ տառապանք էր Յովհաննէսին՝ երբ կը փորձէր հետս երկձայն երգ մը երգել. օրինակ կը սկսէր ... «լուսընեակ գիշեր, մոլորուել եմ...»: Կ'ուզէր որ ես երգը երգէի, իմ թեմփօյով, յետոյ ալ ինք միջամտէր՝ ուր որ ուզէր եւ այնպէս մը ընել, որ երկուքս տարբեր բառեր երգէինք եւ մելոտի մը ստեղծուէր: Յովհաննէսը չարաչար կը ձախողէր որովհետեւ՝ երբոր ի՛նք սկսէր երգել, ես իմ բաժինս մոռցած՝ կը սկսէի իրեն հետ, կանոնաւոր միաձայն երգել, երկձայնը ինչի՞ս էր պէտք: Ահա այդպէս, Յովհաննէս ձախողեցաւ, յետագային՝ Դպրեվանքի մէջ երաժշտութեան ուսուցիչս ալ ձախողեցաւ ինծմէ երգիչ կամ երաժիշտ հանելու ճիգին մէջ, Սահակ Արքեպիսկոպոսը յուսահատեցաւ ինծմէ, եւ եթէ Փիտէճեան Վարդապետի բարի տրամադրութիւնը չըլլար՝ մենք (ես, եւ թող ներէ ընկերս, Կորիւն Սրբազանը) շուտով դուրս դրուած պիտի ըլլայինք Դպրեվանքէն, մեր երաժշտական երգերուն չնորհիւ (անշնորհքութեան աղագաւ): Թէեւ, ըսեմ, Վարդգէսը (Կորիւն Սրբազանի աւազանի անունը) առաւօտները լաւ կը տրամադրուէր եւ եթէ ոստիկանական միջամտութիւն չհասնէր - հսկիչներու մէջէն - փոխանակ պատրաստուելու եւ եկեղեցի հասնելու, կը գեղգեղէր «Սոսկում Ահաւոր»ը, «Դրօշի Երգ»ը, «Վարդգէսի Երգը», եւայլն, եւայլն:

Եւ այսպէս էր, որ սկսաւ մուտքս Հայ Եկեղեցիէն ներս, յիսուն տարի առաջ (արդէ՛ն) եւ որ եղած է իմ տունս, ակումբս, Հ. Մ. Ը. Մ.-ս, հայրենիքս, աշխարհս: Հայ Եկեղեցւոյ պարունակին մէջ ապրեցայ ու ուրիշ հորիզոններու չնայեցայ, ուրիշ սէրեր չունեցայ, ուրիշ ասպարէզներու եւ կոչումներու խաղին տակ չինկայ. ուզեցի, եղայ եւ մնացի հայ հոգեւորական: Թէ ի՞նչ ըրի ու ի՞նչ եղայ՝ Աստուած է դատաւորը: Կը սիրեմ յիշել մեր մեծերէն մէկուն խօսքը. «Տէ՛ր տեսցէ եւ հատուսցէ»: Ու հիմա ալ նոյն երջանկութեամբ կը ծառայեմ՝ թերեւս կեանքի եւ աշխատանքի լայնադոյն կարկինի մը շրջագծին մէջ, բայց նոյն յաւակնութեամբ, եւ մէկ ազգ, մէկ եկեղեցի լոզունգը ինծի համար երբեք լոզունգ չէ, այլ կեանք է, կեանքի ոճ է, ապրելու եւ զգալու ձեւ մըն է: Այդ հաւատարմութեամբ ալ պիտի մեռնիմ:

Երբ աչքերս բացի, Ս. Նշանի առաջնորդն էր Խադ Սրբազանը եւ կային երեք քահանաներ. Տ. Վահան Քահանայ Դեղաբարեան, Տ. Յարութիւն Քահանայ Կէպէնլեան, Տ. Յուսիկ Քահանայ Այանեան, առաջին շրջանէն շատ յիշողութիւններ չունիմ, միայն կը յիշեմ Կիւրեղ Պատրիարքի թաղումը եւ Տէր Վահանին թաղումը: Որքան կը յիշեմ՝ Տ. Վահանին թաղման աւելի մարդ կար: Կիւրեղ Պատրիարքը զարիպ էր. Երուսաղէմէն եկեր էր բուժուելու եւ Պէյրութի մէջ ալ վախճաներ էր. եւ ահա կը յիշեմ իր բաց դագաղը, զոր կը հանէին եկեղեցիէն դուրս: Նոյնը ըրին Տէր Վահանին, բայց այս անգամ երկու զէնք ունէի ինքզինքս պաշտպանելու: Նախորդ գիշերը, երբ ահուվախի մէջ էի, մայրս սորվեցուց աստնկ օրերու համար աղօթք մը, «Պահապան Ամենայնի»ն: Եւ հիմա ալ, հաւատարմօրէն, ես գիս Քրիստոսի աջին պահպանութեան կը յանձնեմ ամէն գիշեր, «Պահապան Ամենայնի»ն ըսելով, մէյ մըն ալ յիշելով Զարեհ Կաթողիկոսն ու հայրս: Յետոյ կրնամ հանդարտօրէն Մորփէոսին թեւերը իյնալ: Միւսը՝ հեռու մնալու թեքնիքն էր. կրցածիս չափ հեռու մնացի դագաղէն եւ միայն Ս. Նշանի բակի պատի վրայէն դիտեցի յուղարկաւորներու թափօրը, որ բաց վիճակի մէջ, դէպի Ֆրըն Շըպէք կը տանէր լրիւ զգեստաւորուած Տէր Վահանը...: Այո, այո, Զօքաք Ըլ Պլաթէն մինչեւ Ազրէի, յետոյ Ռիատ Ֆրանս, Միխոն լայիք, եւ Ֆրըն Շըպէք: Այն ատեն Պէյրութը մերն էր:

Եւ այսպէս, տակաւ մերուեցայ Ս. Նշանի շրջապատին մէջ:

(Շար. 1)

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿԻ ԱՒՏՈՎԹԱՐԸ ՄԱՀԱՓՈՐՁ ԷՐ, ԹԷ ՊԱՏԱՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Թւում է, Պարոյր Սեւակի մահուան 25-ամեակը, որ լրացաւ Յունիսի 17-ին, աննկատ չպէտք է անցնէր: Բանաստեղծի երկրպագուները սովորական դարձած յուշ-երեկոներից առաջ յոբելեանական տարելիցը կը նշանաւորէին նրա ստեղծուածային մահուան ուսումնասիրութեանը նոր էջ աւելացնելով: Սակայն, ինչպէս ցոյց տուեցին մեր փնտռտուքները, մահուան 20-ամեակի կապակցութեամբ ձեռնարկուած առաջին անյաջող փորձերից յետոյ, թերեւս յուսահատութիւնից, կրկին մոռացութեան են տուել:

Բայց եւ այնպէս, բոլորի ուղեղում ամուր նստած է «պարզ աւտովթարի» կասկածը: Դրանում մէկ անգամ եւս համոզուեցինք այս նիւթը պատրաստելիս, երբ յօղուածի բովանդակութեամբ հետաքրքրուողները կրկին վերյիշում էին 1971 թ. Յունիսի 17-ը, բուռն ոգեւորութեամբ քննարկում պատահարի իրենց իմացած տարբերակները, վերջում միանշանակ յանգելով մէկ եզրակացութեան՝ Պ. Սեւակի աւտովթարը կազմակերպուած մահափորձ էր նրա դէմ: Նման եզրայանգումն ամրապնդուեց եւս մէկ կարեւորագոյն հանգամանքով, երբ Սեւակի ճակատագրով հետաքրքրուողների դիմումներին իրաւական ատեաններից պաշտօնապէս պատասխանեցին, թէ նրա մահուան կապակցութեամբ յարուցուած քրէական գործը, որը կարճուել էր հետաքննութիւնից ընդամէնը 9 ամիս յետոյ, այրուել է 91 թ.: Իբրեւ արդարացում նշուել է, որ օրէնքով սահմանուած 15 տարին լրանալուց յետոյ Սեւակի գործը 4 տարի էլ աւել է պահպանուել: Կասկածներն էլ աւելի են խորանում, երբ յայտնի է դառնում, որ Արարատի հիւանդանոցում, ուր վթարից անմիջապէս յետոյ տեղափոխուել են բանաստեղծն ու նրա կինը, պահպանուած ողջ արխիւից բացակայում են միայն 71 թ. Յունիսի բժշկական գործերը: Նոյն պատասխանը տրւում է առողջապահութեան նախարարութիւնից: Անատոմիկում եւս յայտնում են, թէ դիահերձման եզրակացութիւնը ոչնչացուել է նկուղում ջրի տակ մնալով: ՀԿԿ-ի լուծարուելուց յետոյ նոյն ձեւով նրա արխիւից անհետանում են Պարոյր Սեւակին վերաբերող նիւթերը, որը «յատուկ թղթապանակ» էր կոչւում:

Նախ այն մասին, թէ Պ. Սեւակի մահուան կապակցութեամբ յարուցուած քրէական գործը կարճուելու ենթակա՞յ էր, այն էլ այսպիսի պարզունակ ձեւակերպումով՝ աւտովթարի պատճառը ճանապարհատրանսպորտային կանոնների խախտումն էր, որը տեղի է ունեցել Սեւակի հարբածութեան մեղքով եւ գործը կարճւում է վթար կատարող անձի մահուան պատճառով: Քանի որ քրէական գործն այլեւս չկայ եւ մեզ յայտնի չէ, թէ աւտովթարի հետաքննութեան նպատակով կազմաւորուած օպերատիւ խումբ

...րը ինչքննչական գործողութիւններ է ...կատարել, մեր հետաքօտութիւնը սկսեցինք դէպքին առընչուած անձանց լսելով: Այդ առումով կարեւորում ենք վերին այդ ժամանակուայ ՆԳ բաժնի ...ննիչ ժորա Խաչատրեանի յիշողութիւնները, որն աշխատանքի բերումով առաջինն է առընչուել դժբախտ պատահարին, կատարելով տեղազննութիւնը եւ աւտոմեքենայի զննութիւնը, ինչպէս նաեւ դէպքին առընչուած անձանց հարցաքննութիւնները:

«Այդ օրը հերթապահ քննիչը ես էի: ...րուայ երկրորդ կէսն էր, որոշակի ժամը չեմ յիշում, բաժնում հաղորդում ըստացուեց, որ վթարի է ենթարկուել Պապ...յր Սեւակը եւ մահացել է:

Աւտովթարը տեղի էր ունեցել Ներկա...խ Սեւակաւան գիւղով անցնող ճանապարհահատուածում: Այն ժամանակ այդ ճանապարհահատուածը նեղ էր եւ գոգաւոր, այն հաշուարկով, որ ճանապարհի ...ակերեսից ջրերը հոսեն դէպի եզրային ...ուները: Ըստ եղած հետքերի, Սեւակն ...ր «ԳԱԶ-21» աւտոմեքենայով Սովետաշէնից Երեւան է գնալիս եղել: Ճանապարհի աջ եզրին բաւականին խորը ջրատարն էր՝ աւազոտ եզրով: Մեքենայի ...րժման ուղղութեամբ անընդմէջ վայ...ջէք է: Նկատելի էր այդ ջրատարի ճանապարհին հատող եզրով աւտոմեքենա...ի մէկ կողմի անուադողերի հետքը, որից ...թաղրւում է, որ մեքենան 55 մեթր ան...ել է այդ կողմի անիւները երթեւեկելի ...ասից դուրս վիճակում: Հետքի վեր...ում աւտոմեքենան կտրուկ ձախ է թեք...ել եւ դուրս եկել երթեւեկելի մաս ու ...ուել այդտեղ: Գլորուել է մի քանի ...ում, ապա դուրս եկել ճանապարհի ...ի կողմը, որտեղ հարթ է, եւ մնացել անիւների վրայ:

...նելով այն հանգամանքից, որ ջրա...րի եզրին եղած անուահետքերի եր...ւնքով աւազին նկատելի էր թափուած ...ղուկի հետք (ջուր չէր կարող լինել, ...որովհետեւ անմիջապէս կը չորանար), ...թաղրւում էր, որ կտրուել է աջակողմ...եան սխտեմի ռետինէ խողովակը, վարորդը ղեկավարել չի կարողացել: Աւտոմեքենան տեղում էր եւ զննուել է ար...տաքինից: Մեքենայի վրայ հարուածի ...տքեր չեն եղել, եղել է միայն ասֆալ...ի հետ շփման հետքը: Արգելակման սխտեմի վիճակը պէտք էր ստուգել մեքենան բարձրացնելու եւ ամբողջ մեխա...իզմը ստուգելու միջոցով: Դա կարող ...արուել միայն յետագայում: Տեղազննութիւնը եւ աւտոմեքենայի զննութիւնն իմ կողմից կատարւում էր պետ...աստեսուչ Անուշաւան Մալխասեանի ...րդարադատութեան նախարարութեան ...ադ փորձագէտ Զաւէն Քէօչկարեանի ...ասնակցութեամբ: Դէպքի վայր էին եկել դատախազի տեղակալ Հայկազ Շահենեանը եւ այլ ղեկավար անձինք:

...Դեռեւս Արարատ քաղաքի հիւանդանոցում իմացել էի, որ տուժողներին հիւանդանոց են հասցրել Սանկտ Պետերբուրգի երկրաբանական արշաւախմբի աշխատողները, որոնք եկել էին Սովետաշէնից վերեւ գտնուող իրենց հետախուզական տեղամասում: ՀՀ դատախազի տեղակալ Հայկազ Շահենեանը յանձնարարեց հարցաքննել նրանց: Երկրաբանների ասելով իրենք Սեւակի մեքենային հանդիպակաց են շարժուել: 250-300 մեթր հեռաւորութիւնից (որքանով յիշում եմ) տեսել են հանդիպակաց եկող աւտոմեքենան, որը անկանոն շարժումով մտել է ջրատարը, ապա կտրուկ ձախ է դուրս եկել եւ շրջուել ճանապարհի վրայ: Երկրաբանները պնդում են, որ այդ պահին ճանապարհի երկու ուղղութիւններով այլ աւտոմեքենայ չի եղել: Իրենք վթարի ենթարկուած մեքենային մօտեցել են առաջինը, ապա եկել է ինքնաթափ մի աւտոմեքենայ, փորձել են կանգնեցնել՝ տուժողներին օգնութիւն ցոյց տալու համար, չի կանգնել: Գրել են նրա համարանիշը, իսկ տուժողներին իրենք են տեղափոխել հիւանդանոց: Նրանց մօտից վերադարձել ենք կէսգիշերին, հիւանդանոց այլեւս չենք մտել, Սեւակի երեխաներին չեմ տեսել եւ չեմ լսել, նկատի ունենալով, որ քնած են»:

Փոխարէնը Սեւակի 13 տարեկան որդուն՝ Արմէն Ղազարեանին, հարցաքննել է Վեդիի պետաւտոտեսչութեան մայորը՝ դէպքից 3-4 ժամ յետոյ, հիւանդանոցում: Նոյն թուականի Նոյեմբերին անյայտ մի անձի ձեռքով արձանագրութիւնը հասցուել է Նիւ-Եորք եւ տպագրուել: Ահա այն. «Պապան չուզեց կանչել վարորդին, որովհետեւ հինգշաբթի օրը նրա հնձի օրն էր: Պապան գարաժից «Վոլգա»ն դուրս հանեց եւ ուրախացաւ, որ հանճարեղ է դուրս հանել, որ անպայման ինքը առանձին մեզ Երեւան պիտի տանէր:

Պապան լուռ էր ու հանգիստ էր երեւում: Հեշտութեամբ անցանք ոլորապտոյտ ճանապարհներից: Ամայի էր: Առաջից մի բեռնատար աւտո ճամբի մէջտեղից էր գնում: Պապան մօտեցաւ ազդանշան տուեց, որպէսզի ճանապարհ տայ: Բեռնատարը շարունակեց մէջտեղից գնալ: Պապան ջղայնացաւ, աւելի երկար ազդանշան տուեց, վերջապէս բեռնատար աւտոն թեքուեց աջ: Պապան շատ արագ կողքով անցաւ, թեքուեց աջ եւ ետ նայելով բեռնատարի գիւղացի վարորդին՝ ցուցամատը թափ տալով հայհոյեց: Պապան դեռ չէր գտել իր բաց ճանապարհը, երբ բեռնատարը մի քիչ ձախ թեքուեց մօտենալով մեզ, կարծես պապային վախեցնելու համար: Պապան մեքենան անմիջապէս աջից դէպի ձախ թեքեց եւ աջ կողմից մեքենան բարձրացաւ: Պապան ձեռքը երկարեց, որ բռնի: Մեքենան շուռ եկաւ եւ ցնցումով խփուեց գետնին...»:

(Մնացեալը յաջորդով)

ՍԱՌԱ ՊԵՏՐՈՍԵԱՆ

«Ազգ», Յուլիս 26

Հ.Բ.Ը.Մ.-Ի ԿԱՐԵՒՈՐ ՆՊԱՍՏԸ ԳԻՒՄՐԻԻ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

Լիոնի արուարձաններէն, Էքիւլիի «Լոբան Մուրկէ» վարժարանը, ամբողջական նորոգութեան, եւ այլ յարմարութիւններ ունենալու համար, նախարարութեան կողմէ որոշուած էր փլցնել եւ նորը շինել եւ ներքին սարքաւորումներն ալ՝ հաւանաբար ծախել...

Այս լուրին կողմէն, երբ տեղեակ կ'ըլլան Տէր եւ Տիկին Մօրիս եւ Մատլէն Պասմաճեան, անմիջապէս կը դիմեն դպրոցին տնօրէն՝ Տիկին Վոհըլ-ին եւ երկար բացատրութիւններէ ու բանակցութիւններէ ետք՝ կը յաջողին դպրոցին ամբողջ սարքաւորումը, Գիւմրիի, Մարթէն Փաշայեանի տնօրէնութեամբ աշխատող դըպրոցին նուէր ստանալ...

Այս յաջողութեան անմիջապէս կը յաջորդէ երկու մեծ պահանջք եւ հարցականներ:

Առաջին մեծագո՞յնը ... 25-է աւելի դասարաններու, հսկայ ճաշարանի, խոհանոցի եւ տեսչարաններու կահ-կարասիները եւ կազմածները, հազիւ մի քանի օրուան կարճ ժամանակին մէջ ինչպէ՞ս կարելի պիտի ըլլար խնամքով քակել եւ դուրս հանել շէնքէն, ուր արդէն պիւլտոզերներու ընկերութիւնը կազմ ու պատրաստ կը սպասէր քանդելու պատերը...

Երկրորդը, ո՞վ գտնել եւ ի՞նչ ձեւով կարգին հասցնել Հայաստան...

Տիկին Մատլէն, որ ատենադպիրն է Հ.Բ.Ը.Մ.-ի Լիոնի մասնաճիւղին եւ միեւնոյն ատեն տինամիք պատասխանատուն երիտասարդացին, երբ կը տեսնէ թէ՝ Լիոնի գաղութին «մասնագէտներէն» օգնութեան ոչ մէկ յոյս կայ ... առանց ժամանակ կորսնցնելու, կը հաւաքէ Հ.Բ.Ը.Մ.-ի Լիոնի երիտասարդները (շուրջ 15 հոգի) եւ Պր. Պերնար Պասմաճեանն ալ երեք բանուորներու օգնութեամբ եւ բացառիկ արագութեամբ, ամբողջ կարասիները եւ կազմածները կը քակեն եւ կը լեցնեն քոնթըյներներու մէջ, պատրաստ ղրկելու ... բայց ի՞նչպէս...

Առաքումը յաջողցնելու համար, օգնութեան կոչ մը կ'ընեն Ժէ-Ի-Ա-ին եւ որուն նախագահը՝ Պ. Մանուէլ Տէյիրմէնճեան, անձամբ կուգայ Փարիզէն եւ հիացած շուրջ 5 միլիոն Ֆրանք արժող այս նուէրին, անմիջապէս յանձն կ'առնէ անոր առաքումը...

Այսօր, դրեթէ նոր այդ կազմածները, արդէն հասած պէտք է ըլլան Գիւմրի:

Չեմ գիտեր, սակէ աւելի ի՞նչ օգտակար նուէր կրնայ ըլլալ հայ դպրոցին եւ մեր պարագաներուն:

Մատլէնին, Մօրիսին, Մանուէլին, Պերնարին, Լիոնի Հ.Բ.Ը.Մ.-ի նախագահ Ժագ Էքմէքճեանին եւ բոլոր երիտասարդներուն վարձքը կատար:

Ա. ՔԷՇԻՇԵԱՆ

ԹՈՒՐՔ ԿԻՆԸ ԿՐՕՆԱՄԷՏ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՕՐՈՎ

Էրպաքանի կրօնամէտ կառավարութեան կազմութենէն ի վեր արդիական ու կրօնամէտ տարրերու հակադրումը շեշտըւած է յատկապէս կիներու աշխարհին մէջ: Այդ հակադրումը ծայր առած էր այն օրէն երբ Պոլսոյ, Անգարայի եւ այլ մեծ քաղաքներու քաղաքապետները եղած էին Էրպաքանի կուսակցութեան պատկանողներ:

Այսօր կառավարութեան մասնակից է Չիլլէրի Արդար Ուղին, ինչ որ թոյլ չի տար որ Էրպաքան արձակ-համարձակ նախաձեռնէ զուրանական բարեփոխումներու որոնց անհամբեր կը սպասեն իր հետեւորդները: Թէեւ կիներու շրջանակը կրնայ որպէս փորձի դաշտ մը ծառայել, քանի որ անոնց հանդէպ աւելի լայնախութիւն կայ լաիք կուսակցութիւններու կողմէ:

Այս հաւանականութիւնը որոշ վախ մը կը պատճառէ կնոջական շրջանակներու: Նախկին դեսպանի մը աղջիկը բախած է շարժավարին մերժումին երբ փորձած է թաքսի մը մտնել. մօրուսաւոր շարժավարը բաւականաչափ ծածկուած չէ նկատած մանկամարդուհին, հետեւաբար անարժան՝ իր կառքը մտնելու:

Այսուհանդերձ Թուրքիան տարբեր է Ալժերիայէն, Սաուտի Արաբիայէն եւ Իրանէն ուր հագուստ-կապուստի խստագոյն պարտադրանքներ կան. Թէեւ Թըրքական ընկերութիւնն ալ խոր փոփոխութիւններու մէջ է: Բարձր պաշտօնատարի մը աղջիկը յայտնած է քէմալական իր հօրը թէ որոշած է ծածկուիլ: Միւս կողմէ «կիներու յատուկ» հանրային պարտէզի մը մէջ երբ յիսուննոց մէկու մը գաղափարը հարցուցած են թէ բոլոր Թրքուհիները պէ՞տք է լաչակ կրեն, ան պատասխանած է որ այդ ուղղութեամբ իր առաջարկին մանկամարդ աղջիկը պատասխանած է վճռական «ոչ»ով մը:

Բարօրութեան կուսակցութեան կիներու յանձնախումբին նախագահուհին կը փափաքի որ աշխատող կիներու հագուստ-կապուստին մասին կանոններ, օրէնքներ մշակուին: Իր կարծիքով մարդկային իրաւանց չեն համապատասխաներ այն արգելքները որոնք կը կիրարկուին լաչակաւոր կիներու, ինչպէս՝ անոնք չեն կըրնար կառավարութեան մէջ պաշտօն ունենալ, դատի մը որպէս պաշտպան ներկայանալ դատարանին առջեւ, եւայլն:

Բոլորովին այլ դիրքի վրայ է Անգարայի Միջին արեւելեան թէքնիք համալսարանի դասախօս կին մը որ կ'ըսէ թէ առ այժմ կառավարութիւնը նպատակ չունի շարիան պարտադրելու, բայց ընկերութեան պահպանողականները կը քաջալերուին որպէսզի ստեղծուի միջավայր մը ուր իսլամական օրէնքը դիւրաւ ընդունուի: Վտանգը այն է որ լաիքները հետզհետէ պաշտպանողական դիրքերու կ'անցնին, մինչդեռ ատիկա մինչեւ հիմա երկրին պետականօրէն ընդունուած ապրելու ձեւն էր:

Հակասութեան առօրեային հետեւանքներէն է Անգարայի մէկ թաղապետ որ միայն կիներու համար հիւանդանոց մը կը կառուցանէ ու քաղաքին 30 հանրային պարտէզներէն մէկուն վրայ արձանագրութիւն մը զետեղել տուած է թէ այրերու մուտքը արգիլուած է:

Որքան ալ լաիքներու համար անընդունելի ըլլան կրօնամոլներու նման քայլերը, մեծ մասը այն կարծիքը ունի թէ լուրջ բողոքի ձեռնարկելու բաւարար պատճառներ չկան եւ ի վերջոյ կառավարութիւնն ալ օրինաւորապէս ընտրուած կազմ է:

Կիներու մեծ մասը զայրոյթ ունի նախկին վարչապետ Թ. Չիլլէրի հանդէպ որ իրենց քուէները առնելէ ետք դաշնակցեցաւ Էրպաքանի հետ, ծածկելու համար ապօրինի եկամուտներու իր ծանրակշիռ հարցը ու փրկուելու համար դատական հետապնդումէ:

ՔԱՂՀԱՆ

ՀԱՄԲՈՅՐԸ

ՀԱՄԱՍՏԵՂ

...կրօ Մարսուպ եզներուն դադար տը...ծ, եզներուն ականջները կը շփէր, վի...րուն տակ կը քերէր, հացի կը սպա...: Նկատեց, որ Թադոյենց պաշէին քո...ն մէկը կուգար վար: Մարուշ արեւա...ղկներուն մօտեցաւ բոլորակ ամպի ...որ մը իր գլխուն վերեւ, այնպէս, ինչ...պէս եկեղեցիի դասը դրուած Ս. Կոյսին ...կերին վրայ կար: Մարուշ երբ Կարուպենց արտին մօտեցաւ, Կարօ Մարսուպ ...անչեց: Իր աղջիկն էր:

- Աղջի, էդ մէրդ ինչո՞ւ չեկաւ ու քեզ ...ղրկեց:

- Մայրս տունը գործ ունէր. ըսաւ՝ է...սոր հացը դուն տար, - պատասխանեց Մարուշ վարանոտ:

...ծքերը կը դողային ակամայ, երեսը ...կարմրած ու հովէն քշուած վարդի մը ...երեւոյթն ունէր. Հասակը կը նմանէր ա...բեւածաղկի մը, որ արեւմուտքէն յետոյ ...վար կ'առնէ իր գլուխը: Մարուշ, ինքզինք ...պահելու համար, աչքերը վար առաւ ...ու խիլկնադէմի, տուներներուն պէս իր ...կոպերուն տակ առաւ ձեւն արագիլին, որ դեռ բոլորակ կը դառնար ու կը ցածնար հետզհետէ:

Կարօ Մարսուպ ինքն իր մէջ բարկացաւ իր կնոջ, որ հարսուն աղջիկ, նշանուած աղջիկ մինակ դաշտ ղրկած է: Նշանուած աղջիկ մը առանձինն դաշտ ղրկել լաւ բան չէ:

- Գնա, էդ մեր բամպկին վարի կոլէին մէջի դդումը փրցուր, տուն տար. էսօր տեսայ բաւական ժըրեր է:

Մարուշ կանգնած էր դեռ. հօրը խօսքերը իր ականջին մժեղի ձայնի մը պէս անորոշ կուգային. Վարանոտ, կ'ըսես հաշիշ ծխած ըլլար: Մուրատի քրտինքին հոտը իր մէջ այնքա՛ն բարկ էր դեռ: Երազ չէր, համբուրուեցան անոնք: Կարծես համբոյրին վրայէն ամբողջ դար մը էր անցեր: Ախ ի՛նչ լաւ էր Մուրատի քըրտինքին հոտը ... Ցետոյ բազուկները, ամբողջ դաշտ մը իր թեւերուն մէջ առնող լեռնաշղթայի մը պէս գրկեց այնքա՛ն պինդ ու տաքուկ:

- Մարո՛ւշ, քեզի կ'ըսեմ, ի՞նչ է, հիւա՞նդ ես, ի՛նչ պաղը թօթված սարբինայի պէս կեցեր ես:

- Դդումը ո՞ր կոլէին մէջ է, - հարցուց Մարուշ:

- Վարի կոլէին, վարի կոլէին, - պոռաց Կարօ Մարսուպ, - ըսել է՝ չլսեցի՞ր. Մարուքենց արտին կողմը:

- Մարո՛ւշ, - ետեւէն պոռաց Կարօ Մարսուպ, - տուն որ երթաս՝ էդ թեւերուդ չավանները կը հանես: Ի՞նչ է, հարսնի՞ք է թէ զատիկ: Էդ տեսակ ճիլլ պիլլ բաները ամօթ բաներ են: Էդ լաչակդ աղէկ չակէ:

Մարուշ երբ դաշտէն տուն վերադարձաւ, հոգին խռով էր այնպէս, ինչպէս երբ խաղաղ լճակին վրայէն փոթորիկը կ'անցնի: Մօր խօսքերուն շատ կարճ կը պատասխանէր. դէմքին, լաչակին ու մազերուն վրայ անփութութիւն մը կար: Լաթերը վար առնելու պատրուակով մի քանի անգամ տանիք ելաւ ու շատ ուշ վար իջաւ:

- Աղջի Մարո՛ւշ, - կը ձայնէր մայրը վարէն:

Ա՛խ Աստուած իմ, ինչո՞ւ իր մօր ձայնը եւ հօր երեւոյթը դժոխքի պէս կուգային իրեն: Մի քանի անգամ Մարուշ իր գրպանի կլոր ու փոքրիկ հայելին նայեցաւ: Դէմքին վրայ թեթեւ տժգունութիւն մը կար: Ո՞ր աղջիկը առաջին անգամ համբուրուէր ու չէր տժգունէր:

- Աղջի՛, եկո՛ւր հաւերուն կուտ ձգէ, օճախը շտկէ. հիմա հայրդ ուր է, ուր չէ կուգայ: Ի՞նչ է, երեսդ ինչո՞ւ ծուռ է: Հայրդ բարկացե՞ր է. հա՞:

Մարուշ չպատասխանեց: Մտքէն իսկ չէր անցըներ իր հօր բարկութիւնը. այդ ատեն միայն յիշեց, որ հայրը իր թեւի չավաններուն համար դիտողութիւն ըրած էր: Մարուշ հանեց չավանները ու գնաց հաւերուն կուտ ձգելու: Տեսաւ՝ հաւերուն մէկը պակաս էր ու ճո՛ւ ճո՛ւ կանչելէն նորէն տանիք ելաւ: Մարուշ որքա՛ն կը սիրէր տանիք ելլել, տունին առաստաղը, առարկաները կը ճնշէին վրան: Երբ տանիք ելլէր, սրտին մէջ կը լայննար դաշտի հորիզոնը բովանդակ: Մարուշ տանիքէն կը տեսնէր Հողդարը, հա, ճիշդ այն ամպերուն տակ, ուր Մուրատ վար կ'ընէր այսօր: Արագիլի այն բոյնին քով փշերու ճամբան էր. կարծես այդ տեսակ ճամբայ գոյութիւն չունենար, երբեք քալած չըլլար այդ ճամբէն: Փշերու ճամբան երկնքի վրայ գծուած ճամբայի երեւոյթ ունէր: Ցետոյ Մուրատենց պաշան, տանիքը, տանիքին դդումներն ու կոկոտացող աքաղաղը...

(Տար. 6)

«ՅԱՌԱՋ»Ի ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

71ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻՒ

ՓԱՐԻԶ. – Համակիր մը՝ 2000 Ֆր.։

ՆԷՕՅԻ. – Տէր եւ Տիկին Սերժօ Պէրպէրեան 1500 Ֆր.։

Ի ՅԻՇԱՏԱԿ

Յարութիւն Շիրվանեանի յիշատակին «Յառաջ»ի բարգաւաճման կը նուիրեն. -

Տէր եւ Տիկին Ժիրայր Դատաւորեան 500 Ֆր.։

***

ՄԱՐՍԷՅԼ. -
Հայկ Մարգարեանի յիշատակին, Պր. Պետիկ Մարգարեան 200 Ֆր. կը նուիրէ «Յառաջ»ին։

(Շար. Ա. էջէն)

վար կուսակցութեան կեդր. կոմիտէն շնորհաւորական հեռագիր մը ղրկած է։ Հոն ըսուած է որ հայ համայնավարները վստահ են թէ «ժողովուրդին ծոցէն ծնած Զիւգանովի համայնավարները կը շարունակեն իրենց յաղթական երթը այն կղզիին վրայ ուր կը տիրէ արդարութիւն, հաւասարութիւն, օրինականութիւն, եղբայրութիւն»։ Հեռագրին աւարտին Հայաստանի համայնավարները իրենց եղբայրական ողջոյնները կը յղեն «Երկիր մոլորակի քաղաքացի, աննկուն յեղափոխական Ֆ. Կասթրոյի, մաղթելով անոր երկաթեայ առողջութիւն եւ երկար կեանք»։

***

ՆՈՐ ԹԵՐԹ՝
«ԽԱՉՄԵՐՈՒԿ»

Օգոստոս 16-ին առաջին թիւը լոյս տեսած է Ընկերային ապահովութեան նախարարութեան երկշաբաթաթերթ «Խաչմերուկ»ին։ Գլխաւոր խմբագիրն է Շչորս Դաւթեան, տպաքանակը՝ 3000։ Առաջին թիւին մէջ ընթերցողներու խօսք ուղղելով Ընկերային ապահովութեան նախարարը Ռաֆայէլ Բագոյեան կը մաղթէ որ թերթը օղակ մը ըլլայ ընթերցողներու եւ իր նախարարութեան միջեւ, մատնանշելով յատկապէս այն տուեալը թէ 650 հազար թոշակառու եւ 300 հազար գաղթական կայ երկրին մէջ։ Նոյն թիւին մէջ թերթին առաջին թիւը ողջունած են, արուեստագէտներ՝ Հ. Մաթեւոսեան, Պ. Զէյթունցեան, Ֆ. Դովլաթեան, Ս. Սարգըսեան։

«Խաչմերուկ»ը ութ փոքրածաւալ էջով է, կ'արժէ 50 դրամ։

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Տիկին Արշալոյս Միւթէվէլեան, Տէր եւ Տիկին Միշէլ եւ Վիրժինի Միհրան եւ զաւակները, Պր. Ժագ Միւթէվէլեան եւ զաւակները կը ծանուցանեն թէ յաւարտ պատարագի հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի, Կիրակի, Սեպտեմբեր 1, Փարիզի Ս. Յովհաննէս - Մկրտիչ Եկեղեցին իրենց ամուսնոյն, հօր եւ մեծ - հօր՝

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԻՒԹԷՎԷԼԵԱՆԻ

մահուան քառասունքին առթիւ։

Ի գիտութիւն ողբացեալին յիշատակը յարգողներուն։

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

«Դպրոցասէր Տիկնանց Վարժարան»ի խնամակալութիւնը շնորհակալութիւն կը յայտնէ հետեւեալ յարգելի նուիրատուներուն. -

Տիկին Ալիս Գոլար 500, Տէր եւ Տիկին Սանոյեան 500 Ֆր. Պր. Շահպազեանի մահուան առիթով, Կեդրոնականի Սանուց Միութիւն 5000, Տէր եւ Տիկին Սարոյեան 300, Պր. Անդրանիկ Քիւրտօղլեան 500, Տէր եւ Տիկին Մանուկ Քիւրտօղլեան 200, Պր. Գեղամ Թորոսեան 1000 ֆրանք Օննիկ Պայրամեանի մահուան առիթով։ Որբերու Օգնութեան Մարմին 4000 Ֆր., Տէր եւ Տիկին Գույումճու, Տէր եւ Տիկին Կարապետեան, Տէր եւ Տիկին Կորիզեան, Տէր եւ Տիկին Ռոլան Մարկոսեան, Օր. Այտա Ջահրճեան, Պր. Ալպան Ջահրճեան 1000-ական Ֆր., Տէր եւ Տիկին Արսէն Տիրքէլէսեան 5000 Ֆր., Տէր եւ Տիկին Արման Ջահրճեան, Տէր եւ Տիկին Ժէսէր, Տիկին Կոնքէսէր, Օր. Թալին Տիւրման, Տէր եւ Տիկին Թոփճեան, Տէր եւ Տիկին Օննիկ Աւետիսեան 1000-ական Ֆր., Տէր եւ Տիկին Կարապետեան 200 Ֆր.։

Օ. Պայրամեանի յիշատակին՝ Պր. Ժագ Պայրամեան 300, Տէր եւ Տիկին Պալճեան 300, Տէր եւ Տիկին Պորզաքեան 250 Ֆր., Տիկին Էլիզ Վրթանէսեան 250 Ֆր.։

UGAB . . . UGAB . . . UGAB . . . UGAB

«UGAB - 90»

A l'occasion de la célébration de son 90ème anniversaire. l'UGAB organise un grand

Gala de Bienfaisance

au profit des TABLES DE L'UGAB, en Arménie

le Vendredi 18 Octobre à 20 heures

au Pavillon Dauphine _ 75016 Paris

P.A.F. : 750 Frs

Rens. : 45 20 03 18 / 42 27 12 26.

UGAB . . . UGAB . . . UGAB . . . UGAB

Armenian Airlines

REPRESENTATION GENERALE POUR L'EUROPE
19, RUE St. ROCH — 75001 PARIS

NOTE D'INFORMATION

Au mois de Septembre 1996, notre compagnie opérera, sous réserve d'approbation gouvernementale, cinq vols suplémentaires à destination de Erevan.

Dates	:	Les lundis 2, 9, 16, 23 et 30 septembre		
Horaires	:	Erevan Paris	R3 4041	12H00 14H45
	:	Paris Erevan	R3 4042	17H00 / 23H30
Type d'avion	:	Tupolev 154		

Pour vos réservations ou toutes autres informations, n'hésitez pas à nous contacter

Tél (1) 42 96 10 10

Fax (1) 42 96 18 77

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

Փարիզի եւ Շրջակայից Կրօնական Ընկերակցութեան Ներկայացուցչական Ժողովը, Վարչական Խորհուրդն ու Մայր Տաճարի Հոգաբարձութիւնը կը ծանուցանեն, թէ՝ Կիրակի, Սեպտեմբեր 1-ին Փարիզի Ս. Յովհաննէս - Մկրտիչ Մայր Տաճարին մէջ, Հոգեհանգիստ կը կատարուի։

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան եւ Հայ Եկեղեցւոյ Ազգային բարերար՝

ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

համար, անոր մահուան քառասունքին առիթով։

Կը հրաւիրուի մեր ժողովուրդը ներկայ գտնուիլ Հոգեհանգստեան պատարագին, երախտագէտ զգացումով աղօթել հանգուցեալի հոգւոյն համար եւ նորոգուիլ անոր երկրային կեանքի օրինակով։

ՄԱՐՍԷՅԼԻ ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

40-օրեայ Հոգեհանգիստ
Ազգային Բարերար՝

ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

Կիրակի, Սեպտեմբեր 1, առաւօտեան ժամը 10-ին, Մարսէյլի Սրբոց Թարգմանչաց Մայր Եկեղեցւոյ մէջ կը մատուցուի պատարագ։

Կը պատարագէ՝

ԶԱՏԻԿ ՎՐԴ. ԱՒԵՏԻՔԵԱՆ
Հոգեւոր Հովիւ

Յաւուր պատշաճի կը քարոզէ եւ յաւարտ պատարագի հոգեհանգստեան պաշտօնին կը նախագահէ՝

ՏԱՐՕՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՃԷՐԷՃԵԱՆ
Առաջնորդական Տեղապահ եւ
կաթողիկոսական Պատուիրակի
փոխանորդ
Հարաւային Ֆրանսայի Հայոց Թեմի

«ՅԱՌԱՋ»ի ընթացիկ ազդերու սակագինը

Մահազդ	700	(844,20)
Հոգեհանգիստ	600	(723,60)
Շնորհակալիք	600	(723,60)
Հարսնիք--Նշանտուք	600	(723,60)
Ծնունդ	600	(723,60)

Բոլոր ազդերու սակերուն վրայ, հարկ է աւելցնել 20,60% Թէ.Վէ.Ա. (տե՛ս. փակագծի մէջ ընդհ. գումարը)։

Այս գիները կը վերաբերին մէկ անգամ հրատարակելի ազդերու, ՄԻՆՉԵՒ ՄԷԿ ՔԱՌՈՐԴ ՍԻՒՆԱԿ (25 տող) մահազդներու պարագային եւ 1/8-րդ (12--13 տող) մնացեալին։

Առեւտրական եւ այլ ծանուցումներու համար, դիմել թերթին վարչութեան։

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Մայր ՀՄՄ.--ի 75-ամեակի եւ
Ֆրանսայի ՀՄՄ.--ի Մարտիկ
մասնաճիւղին 10-ամեակի
ճաշ -- պարահանդէսը
Հոկտեմբեր 12-ին
Orée du Bois (Porte Maillot)

***

Ի նպաստ «ՀԱՅԱՍՏԱՆ» Հիմնադրամին ԿԻՐԱԿԻ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 29, ԺԱՄԸ 15-ԻՆ, Իսի լէ Մուլինօ։

***

Իսիի Հայ Առաքելական Եկեղեցւոյ Մատաղօրհնութիւնը եւ շինութեան 21-րդ տարեդարձը՝

ԿԻՐԱԿԻ, ՆՈՅԵՄԲԵՐ 10-ԻՆ

ՔԱՌԱՍՈՒՆՔԻ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Հ.Բ.Ը.Մ.-ի Ֆրանսայի Շրջանակային Վարչութիւնն ու Փարիզ - Իլ տը Ֆրանսի Տեղական Յանձնաժողովը կը ծանուցանեն թէ Կիրակի, Սեպտեմբեր 1-ին, Փարիզի Ս. Յովհ. - Մկրտիչ Մայր Տաճարին մէջ
Հոգեհանգստեան Պաշտօն
կը կատարուի յաւարտ պատարագի։

Հ. Բ. Ը. Մ.-ի ցկեանս նախագահ եւ ազգային անզուգական բարերար, Հայաստանի Հանրապետութեան Ազգային հերոս, Ս. Գրիգոր Լուսաւորիչի Խաչին Դափնեկիր՝

ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

հոգւոյն պայծառացման համար, անոր մահուան քառասունքին առիթով։

Հ.Բ.Ը.Մ.-ի Մարսէյլի Տեղական վարչութիւնը կը ծանուցանէ թէ՝ Կիրակի, Սեպտեմբեր 1-ին, Մարսէյլի Սրբոց Թարգմանչաց Մայր Եկեղեցւոյ մէջ
ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՕՆ
կը կատարուի յաւարտ պատարագի։

Հ.Բ.Ը.Մ.-ի ցկեանս նախագահ, ազգային անգերազանցելի բարերար, Հայաստանի Հանրապետութեան ազգային հերոս, Ս. Գրիգոր Լուսաւորիչի Խաչին դափնեկիր՝

ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

մահուան քառասունքին առիթով։

-ՎԵՐԱՄՈՒՏ-

ARNOUVILLE

La Croix Bleue des Arméniens de France, section ASTRIG d'Arnouville lès Gonesse / Gonesse / Sarcelles / Villiers le Bel, informe que l'inscription aux cours d'arménien et de danse aura lieu le samedi 7 septembre à partir de 14h30 à la salle Léo Lagrange à Arnouville.

ՇԱՒԻԼԻ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ ԵՐԿՕՐԵԱՅ ԴՊՐՈՑ

Շաւիլի Եկեղեցւոյ հովանաւորութիւնը վայելող երկօրեայ հայերէն լեզուի ու կրօնագիտութեան դպրոցի վերամուտի թուականն է Սեպտեմբեր 11, Չորեքշաբթի, առաւօտեան ժամը 10-ին։

Դասաւանդութիւնները տեղի կ'ունենան Եկեղեցւոյ կից Սարգիս Պալապանեան սրահին մէջ, հետեւեալ յայտագրով ու ժամանակացոյցով. -

- Չորեքշաբթի, ժամը 10 - 12. հայերէն լեզու եւ կրօնագիտութիւն, փոքր տարիքի աշակերտներու համար։
- Չորեքշաբթի, ժամը 14 - 16. հայերէն լեզու եւ կրօնագիտութիւն, պատանի տարիքի աշակերտներու համար։
- Ուրբաթ երեկոյ ժամը 18.30 - 21. հայերէն լեզու, չափահաս տարիքի աշակերտներու համար։

Յաւելեալ մանրամասնութեանց համար, դիմել դպրոցի ուսուցչին՝ Պր. Մեսրոպ Ադամեանին։

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՄԻՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

Լիոնի Հայկազեան Միօրեայ Վարժարանի վերամուտն է Չորեքշաբթի, Հոկտեմբեր 2-ին, Առաւօտեան ժամը 9-ին։

Դասաւանդութիւնները տեղի կ'ունենան Չորեքշաբթի, առաւօտեան ժամը 9-էն 12, կէսօրէ վերջ ժամը 14-էն 16։

Աշակերտները կրնան օգտուիլ կէսօրուան ճաշէն. իսկ երթեւեկի սպասարկութիւն մը կարելի է նախատեսել ծնողներու հետ համաձայնելով։

Յաւելեալ տեղեկութեան եւ արձանագրութեան համար դիմել Եկեղեցւոյ Դիւանատունը։

Imprimé sur les presses du Journal «HARATCH» 83, rue d'Hauteville, 75010 Paris
Commission Paritaire : N° 55935 SIRET : 51027317 A R.C. Paris

ՀԻՆԳՇԱԲԹԻ
ՕԳՈՍՏՈՍ 29
JEUDI
29 AOUT
1996

LE NUMERO : 5,00 F.

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1925-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE-FONDE EN 1925
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 47. 70. 86. 60 — TELEX : HARATCH 280 868 F
— FAX : 48. 00. 06. 70 —
C.C.P. PARIS 15069-82 E

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 1.100 Ֆ. – Վեցամսեայ : 560 Ֆ.
Արտասահման : Տար. 1.400 Ֆ. (ամէնօրեայ առաքում)
1.250 Ֆ. (շաբաթական առաքում) – Հատը : 5,00 Ֆ.

72րդ ՏԱՐԻ - ԹԻՒ 18.927 — Fondateur SCHAVARCH MISSAKIAN — 72e ANNEE — N° 18.927

ՀԱՅԿԱԿԱՆ ՊՈԼԻՍԸ ԻՐ ՀՈԳԵՐՈՎ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ ԿԱՐԳԱԴՐՈՒԱԾ, ԲԱՅՑ ԿԱՆ ԱՅԼ ՀԱՐՑԵՐ

Օգոստոս 19-ին, հաղորդուած է որ Կրթական Տնօրէնութիւնը գրաւոր հրահանգ մը ղրկած է Կեդրոնական վարժարանին, պահանջելով որ այս վերամուտին նոր արձանագրութիւն չկատարուի: Ըստ Կրթական Տնօրէնութեան վարժարանը պէտքէն աւելի աշակերտ ունի եւ որպէսզի յառաջիկայ տարիներուն աշակերտութեան թիւը իջնէ ընդունելի մակարդակի, նոր աշակերտ պէտք չէ ընդունուի: Այս առթիւ, «Մարմարա» (Օգոստոս 19) գրել կուտայ որ վերջին շրջանին անտեսի աղմուկ բարձրացած էր, մէկ կողմէ վարժարանի տնօրէնութեան եւ ուսուցիչներուն եւ միւս կողմէ հիմնադրին եւ խնամակալութեան միջեւ: Տարակարծութիւնները կը վերաբերէին այն կէտին թէ խնամակալութիւնը հարկ եղածը չըներ, սեղմումները չէզոքացնելու համար, մինչ խնամակալութիւնը կ'ըսէր թէ այս տարի ալ անցեալ տարուան չափ աշակերտ պիտի արձանագրուի:

Բարեբախտաբար, Կեդրոնական վարժարանի հիմնադիր Պր. Կարլոս Պալեանի եւ տնօրէնուհի՝ Սիլվա Գուլեանի դիմումը եւ բողոքը Կրթական Տնօրէնութեան մօտ արդիւնք տուած են: Պր. Պալըմեան երկու յաջորդական այցելութիւններով բացատրած է թէ նման որոշում մը կը նշանակէր փակել Կեդրոնական վարժարանը, որովհետեւ յառաջիկայ վեց տարիներուն շրջանաւարտ չիտար Կեդրոնականի մէջ: Կրթական տնօրէնութիւնը տրամաբանական գտած է այս առարկութիւնը եւ քիչ ետք որոշումը ջնջած ու արտօնած է, այս տարի, 6-րդ դասարանին 39 նոր աշակերտ արձանագրել:

Նոյն գլխացաւը ունի, սակայն, Սահակեան վարժարանը որու բուսած է, քննութիւններու ժամանակ, որ «սթանտարներու կանոնագրութեան» համաձայն ան առաւելն 390 աշակերտ կրնայ ունենալ, մինչդեռ աշակերտներու թիւը աւելի բարձր է: Այս սեղմումները կը վերաբերէին հայկ. բոլոր դպրոցներուն եւ աշխատանքի լծուած է գլխաւորաբար Պատրիարքարանի Խորհրդակցական Մարմնի անդամներէն՝ Մելքոն Գարաքէօսէ որ Նօթըր Տոլ (Չիչլի) կուսակցութեան սերքերէն ներս դիմումներ ըրած է, բացատրելով թէ Կրթական տնօրէնութեան որոշումը ներհակ է Հայկական վարժարաններու կառոյցին: Արդարեւ, կարգ մը վարժարաններ տեղ ունենալով հանդերձ աշակերտ չեն կրնար ընդունիլ, մինչ ուրիշներ չեն կրնար իրենց դասարանները ընդարձակել գոհացում տալու համար նեց թիւով դիմումներու եւ թէ այդ չափանիշներու կանոնագրութիւնը պէտք չէ գործադրուի հայկական վարժարաններուն համար:

Օգոստոս 28-ին, եղած դիմումներուն սպասուած դրական պատասխանը դեռ չէր հասած, ինչպէս կրցանք հաստատել հեռաձայնային խօսակցութեամբ:

ԳՈՂՈՒԹԻՒՆ ՖԷՐԻԳԻՒՂԻ ԲԱՆԿԱԼԻ ՇԷՆՔԻՆ ՄԷՋ

Շաբաթ, Օգոստոս 17-ի գիշերը կողոպուտ մը գործուած է Ֆէրիգիւղի Եկեղեցւոյ բանկալի եւ քահանայից սենեակին շէնքին մէջ, մինչ Եկեղեցւոյ եւ վարժարանին մէջ շատ կարեւոր նորոգութիւններ կը կատարուին: Գողութիւնը մեծ վնաս չէ բերած, նախ գողցուած են քանի մը պատառաքաղներ, դգալներ, բայց, գողերը անցած են վարի յարկը եւ բացած մոմերու երեք դրամարկղները, ուր երեք շաբաթ է կարեւոր գումար մը խուաքուած էր:

Փորձած են նաեւ խորտակել ընդհ. քարտուղարին դրամարկղը, ուր եւս աւելի կարեւոր գումար մը կար նորոգութեան աշխատանքներուն համար, բայց, բարեբախտաբար չեն յաջողած:

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԻՍՐԱՅԷԼԻ կառավարութիւնը նոր զարկ կուտայ գաղութներու հաստատման Այսրյորդանանի մէջ, ուր 906 բնակարաններու շինութիւնը որոշեց: Ասոնք պիտի տրամադրուին այն Հրեաներուն որոնք քուէ տուին Նեթանիահուի: Միւս կողմէ, կացութիւնը շատ լարուած է Երուսաղէմ, ուր Օգոստոս 27-ին, հիմնայատակ քանդուած է շինութեան մէջ գտնուող շէնք մը (մահմետական թաղամասը) որ հաշմանդամներու կեդրոն մը եւ անկելանոց մը պիտի ըլլար:

ՊԵԼԺԻԱՅԻ ՄԱՆԿԱՄՈԼ ոճրագործին՝ Մարք Տիւթրուի նոր յայտնութիւններուն հիման վրայ, Օգոստոս 27-էն ոստիկանութիւնը, շուներով, նոր հետազօտութիւններու ձեռնարկած է հինգ անհետացած աղջնակներու դիակները գտնելու համար: Տիւթրուի խոստովանութիւններուն լուրը տուած էր Պրիւքսէլի «Լը Սուար» օրաթերթը, հաստատած էր ձայնասփիւռը, բայց, մասամբ հերքած է Նէօշաթոյի դատախազը, մանաւանդ բոլորովին ուրացած է որ քննիչները տեղեակ ըլլան գուհերու ինքնութեան: Թերթը երկու անուններ տուած էր, անունները այն պարմանուհիներուն որոնց համար կը կարծուէր թէ ողջ են եւ Չեխիա ղրկուած պոռնկութեան համար:

ԹՈՒՐՔԻՈՅ քարիւղի պետական ընկերութիւնը համաձայնութիւն կը ստորագրէ Ռուսաստանի Կազպրոմին հետ կազատարի մը կառուցումին համար որ պիտի արժէ 1.1 միլիառ տոլար: 1160 քիլոմեթր երկարութեամբ կազատարը տարեկան 16 միլիառ խորանարդ մեթր կազ պիտի փոխադրէ Ռուսաստանէն: Շինութիւնը պիտի սկսի 1997-ին:

ԷՍԿԻՇԷՀԻՐԻ բանտը այցելած է չարչարանքի կանխումի Եւրոպական Կոմիտէի մէկ պատուիրակութիւնը, Օգոստոսի ընթացքին: Ծանօթ է որ այդ բանտը խնդրոյ առարկայ եղաւ վերջերս եւ բանտարկեալներ հացադուլի դիմեցին (12-ը մեռան) բողոքելու համար տիրող պայմաններուն դէմ (բանտը՝ «դագաղը» մըկըրտուած է): Պատուիրակութեան տեղեկագիրը գաղտնի բնոյթ պիտի կրէ եւ փոխանցուի Թուրքիոյ կառավարութեան: Բայց, Կոմիտէն զեկոյցով մը կը բողոքէ թրքական մամուլի այն լուրերուն դէմ, ըստ որոնց նպաստաւոր կարծիք յայտնած ըլլայ:

ԹՈՒՐՔԸ ՈՐ Կ'ՈՒԶԷՐ ՀԱՇՏՈՒԻԼ ԻՐ ԱՆՑԵԱԼԻՆ ՀԵՏ

Էնվէր փաշային աճիւններուն փոխադրութեան նիւթը կը շարունակէ արձագանգներ ունենալ Թուրք մամուլին մէջ, թէեւ աւելի ցանցառօրէն: Այդ փոխադրութիւնը հերոսի մը հայրենադարձը նըկատող մեծամասնութեան մը քով երեւան եկան աւելի քննադատական մօտեցումներ ալ. ասոնք սակայն սահմանափակուեցան Էնվէրի համաթրքական նկրտումներով ու Սարըղամիշի մէջ 90 հազար զինուորներու մահուան պատասխանատուութեամբ: Ոչ իսկ տող մը գրուեցաւ այն մասին թէ Էնվէր կազմակերպիչներէն էր Հայերու ցեղասպանութեան: Եւ ըսել որ աճիւններու փոխադրութիւնը ներկայացուեցաւ որպէս քայլ մը որով Թուրքիա «կը հաշտուէր իր անցեալին հետ»...:

Էնվէրի աճիւններուն փոխադրութեան առթիւ գրի առնուած էջերուն նորագոյնը տեղ գտած է «Միլլիյէթ»ի Օգոստոս 27-ի թիւին մէջ. յատուկ հետաքրքրութիւն կը ներկայացնէ ան անով որ հեղինակը կը կոչուի Թանէր Աքչամ: Ան այն մտաւորականն էր որ գրեթէ միահամուռ զըլացումի տպաւորութիւն պատճառեց «Թուրք ազգային ինքնութիւնը եւ Հայկական հարցը» հատորով ուր Թուրք իրականութեան մէջ նախընթացը կը ըստեղծէր «Ցեղասպանութիւն» կոչելով 1915-ի պատահարները: Իր մէջ, ամբողջ 80 տարի փնտռուածը՝ մեղաւորի պատասխանատուութեան գիտակից Թուրքը գտած ըլլալու առնուազն գոհունակութիւնը ունեցան շատ շատեր: Ան որպէս այդ հրաւիրուեցաւ նաեւ Եղեռնի 80-ամեակին երեւանեան գիտաժողովին որ կը վայելէր պետական բարձրագոյն մակարդակի հովանաւորութիւն: Անոր մասնակցութեան մասին պաշտօնական լրատուութենէն, մամուլի արձագանգներէ գատ յետագային շրջեցան նաեւ զըլացականութեամբ բաւական հարուստ լուրեր. ըսուեցաւ թէ ան այցելած է Ծիծեռնակաբերդի Եղեռնի յուշարձանը, գացած է Էջմիածին, հոն մոմ վառած, գրեթէ արցունքոտ աչքերով ոգեկոչած 1915-ի մեր 1.5 միլիոն զոհերը, եւայլն, եւայլն: Ինչպէս ծանօթ է, հայկական փիւռին վըլպականութիւնը մեծ ատաղձի անհրաժեշտութիւն չունի պոռթկալու եւ իր կարօտներուն հետքերով յառաջանալու համար դէպի իրը կարծած նպատակակէտեր:

Էնվէրի աճիւնին փոխադրութեան նիւթով գրի առնուած էջի մը տակ նման անձի մը ստորագրութիւնը ի յառաջագունէ բնական է որ վերջապէս Հայկական հարցին մասին եւս տողեր կարդալու սպասումը ներշնչէ: Սակայն անգամ մը եւս սպասումը ի դերեւ կ'ելլէ, քանի որ Թ. Աքչամի շատ չափաւոր դժգոհութիւնը մեկնակէտ ունի միայն Էնվէր - Մ. Քէմալ հակադրութեան մասին վճարկումի մը բացակայութիւնը Թուրք հանրային կարծիքին մէջ: Ու այդքան: Քննադատուածը միայն համաթրքական անոր ցնորային նպատակներն են որուն արձագանգները կը նշմարէ Թ. Աքչամ այսօրուան Թրքական քաղաքականութեան մէջ եւս: Կը դժգոհի որ Թուրք իշխանութիւնները կը չարժին առանց մտածելու եւ տոփկապատճառ կ'ըլլայ որ Թուրքիա սխալ ըմբռնողութիւն գործէ դրացի երկիրներու եւ աշխարհին վրայ: Ու ան որ նկատուած էր իր անցեալին հետ հաշտուելու պատրաստ Թուրք մը, երբ յարմարագոյն առիթը կը ներկայանայ առոր գործնական փաստը տալու, կը լռէ:

Հաւանաբար ան ալ հասկցած է որ սիրաշահ խօսքեր ու քանի մը կաթիլ արցունք լայնօրէն կը բաւեն մեր ակնկալութիւնը բաւարարելու:

***

Էնվէրի մասին ընթերցողի մը հետաքըրքրական նամակը հրատարակած է «Հիւրրիյէթ» Օգոստոս 28-ի թիւով: Զուիցերիայէն ղրկուած այդ տողերուն մէջ Նամակագիր Թուրքը կ'ըսէ. - «Էնվէր փաշա մեր պատմութեան մէջ իրեն վերագրուած դրականներէն աւելի, ամէնէն ճախորդ մէկ օրինակն է Օսմանեան ժառանգութեան որուն մինչեւ վերջերս պարտքը կը վճարենք»: Նամակագիրը կը յիշեցնէ թէ Թուրքիոյ ներկայի վարիչները մոռցած են Էնվէրի պատճառած վնասները, բայց գլխաւորաբար Հայերը մոռցած չեն: Ապա կ'ըսէ թէ մինչեւ 1895 Աբտիւլհամիտի շատ մը նախարարներն ու փաշաները Հայեր էին, յետոյ 1915-ին սկսաւ հայկական ողբերգութիւնը, Թալաաթի, Ճէմալի եւ Էնվէրի մեղսակցութեամբ: «Մենք, կը գրէ Մուրատ Թահիր, որպէս Թուրքիոյ հանրապետութեան սերունդը, մինչեւ այսօր կը վճարենք փոխարժէքը այն խայտառակութեան որ երեք փաշաներու կողմէ գործուեցաւ 1912 - 1918 տարիներուն»:

Նամակին մէջ քանի մը տողնոց մէջբերում մըն ալ կատարուած է Նազըմ Հիքմէթի տողերէն ուր կ'ակնարկուի հայկական ողբերգութեան:

ԵՐԵՒԱՆԻ ՀԵՌԱՏԻՊ ՓՈՐՁ

«ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Օգոստոս 27 / 28)

ԵՐԿՈՒ ԻՐԱՆՑԻՆԵՐ ՍՊԱՆՆՈՒԱԾ

Օգոստոս 24-ին, Շաբաթ երեկոյեան Երեւանի Հանրապետութեան հրապարակին շատրուաններուն մօտ երկու Իրանցիներ սպաննուած են: Ներկաները նշմարած են որ դէպքին վայրէն խոյս կուտայ զինուորական համազգեստով մէկը որ ունէր խորհրդային զինուորական աստղով գօտի մը: Տեղւոյն վրայ գտնուած պարկուճները կը պատկանին «Մակարով» ատրճանակի մը: Սպաննուողները Հայաստանի մէջ կը զբաղէին առեւտուրով: Մէկը գործունէութիւն ունեցած է Թիֆլիսի մէջ ու մէկ շաբաթէ ի վեր հասած Երեւան, միւսը մէկուկէս տարիէ ի վեր աշխատած է հոն: Առաջինը մահացած է անմիջապէս, երկրորդը՝ հիւանդանոց փոխադրուելէ ետք:

***

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԻՋԻՆ ԽԱՒԸ ԿԸ ՁԵՒԱՒՈՐՈՒԻ

Բարեփոխումներու առաջին տարիներուն հայաստանեան ընկերութեան մէջ նկատելի էր բեւեռացումի երեւոյթ մը. ներկայիս կը ձեւաւորուի միջին խաւ մը: Ատոր ապացոյց կը տրուի այն երեւոյթը որ երկրին մէջ աւելի քան 10 հազար առանձնատուներու շինարարութիւն կը կատարուի, ամէն մէկը 200 քառակուսի մեթր միջին տարածքով: Վիճակագրական տուեալներով, Շաբաթ եւ Կիրակի օրերը

(Շար.ը կարդալ Դ. էջ)

ՅՈՒՇԵՐ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԽՈՆԱՐՀ ՀԵՐՈՍԻ ՄԸ, ԻՐ ՊԶՏԻԿ ԼՈՒՍԱՐԱՐԻՆ ԵՒ ԱՅՆ ՕՐԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ

Քահանաներուն հետ խնդիր չէի ունենար։ Բոլորին օգնող էի, բոլորին հասնող էի (ու երբ մայրս դժգոհէր՝ կ՚ըսէր իրաւամբ, «էլ էյիսը, էվ տէլիսը»)։ Թէեւ դպրապետն ու լուսարարը գլխ կը շահագործէին երբեմն, բայց հոգս չէր։ Օրինակ՝ իմ դպրական պաշտօններուս վրայ աւելցած էր դպրապետին տան մսի հայթայթումը։ Ամէնը մէյ մը դպրապետը պիտի երթար Փարաօնի տան դիմացի հայ մսագործներուն (մէկը ապրաց էր) չիյ-քէօֆթէի միս ապահովէր, եւ ինծի հետ ուղարկէր իր կնոջ, Հրեաներու Թաղի մուտքի իրենց տունը։ Հայրապետն ալ իր փոքրիկ աղջիկը, Ռիթան կը վստահէր ինծի, որ տուն հասցնէի Քանթարի փողոցին ծայրը։ Ինչո՞ւ, չեմ գիտեր. դպրոցին մէջ իր մեծ քոյրը կար, Պայծառիկը. ան ինչո՞ւ չէր տաներ, չէի կրնար հարցում հարցնել. կ՚ամչնայի։

Քահանաներուն հետ նոյնպէս լաւ էի. կարծեմ կը սիրէին նուիրումս. Տէր Յարութիւնը մեր տան տանեցն էր, մեր կացութեան տեղեակ էր, եւ երբեմն ալ մեծ եղբայրս հետը կը պտըտցնէր Ծնունդին եւ Զատկին, տնօրհնէքին կոկիկ գումար մը ապահովելու համար մեր ընտանիքին։ Օր մըն ալ տեսաւ, որ ժողովուրդը կա՛մ հրապուրուած Յովհաննէսի ձայնէն, եւ կամ վարմունքէն, սպասուածէն աւելի դրամ սկսաւ տալ «տիրացու»ին։ Եւ տարի մըն ալ Տէր - Յարութիւնը վերցուց այդ սովորութիւնը, եւ այլեւս իր որդին կը պտըտցնէր իր հետ, համապատասխան բամբասանքի եւ ածականներու ալ արժանանալով նաեւ։ Միւս քահանան Տէր Ցուսիկն էր, երկարահասակ, վսեմ, բայց մեզի՝ ճի՛շդ այն Ցուսիկ կաթողիկոսին նման, որ օր մը մերժեր էր հաղորդութիւն տալ Արշակ Թագաւորին եւ եկեղեցիէն դուրս վռնտեր էր զայն։ Բայց Տէր Ցուսիկը մօտիկ էր ինծի, քանի երկու թոռնիկներ ունէր, որոնք ընկերներս էին, Արամ ու Հրայրը, որոնք հիմա կարծեմ Աւստրալիա են։ Տ. Վահանէն յետոյ եկաւ Տ. Խորէնը, Էշրէֆիէէն։ Սկիզբը կարծեցինք որ Զ. դասարանի պատի վրայի Վարդանանց պատկերի Ղեւոնդ Երէցն էր, որ պատկերէն լուռ - մնջիկ վար իջեր էր ու եկեղեցի մտեր։ Մեր Տէր Խորէնը այնքա՜ն կը նմանէր Վարդանանց «Տէր Ղեւոնդին», չէ՛, չէ՛, «Ղեւոնդ Երէցին» - ճաղատ գլուխ, առատ եւ ճեփ - ճերմակ մօրուք եւ հայրենասէրի սիրտ։ Յետոյ լսեցինք որ, իրաւ ալ, Ամերիկայէն եկեր էր, կամաւոր եղեր էր, Արարայի կռուին մասնակցեր էր եւ յետոյ մնացեր էր Պէյրութ, քահանայացեր էր եւ սիրուեր էր բոլորէն։ Մենք շատ կը սիրէինք զինք, մանաւանդ երբ, Թաղումներէն յետոյ, կը փախէր ամբոխէն, եւ կ՚երթար գերեզմանատան հարաւ արեւմուտքը, ուր պատի մը տակ թաղուած էր իր դեռատի տարիքին մեռած աղջիկը՝ անունը Շաքէ։ Այսչափ միայն գիտէին Շաքէին մասին։ Եւ Տէր Խորէնին մարդկայնութիւնը աւելի սիրելի կը դարձնէր զայն մեզի։

Ս. Նշանի նուիրապետութեան մէջ, քահանաներէն, Հայրապետէն, մեծերու պատասխանատու Զօհրապէն անդին, կային երկու հեղինակութիւններ՝ միջին պատասխանատուութիւններով -- հարուստ սարկաւագը՝ Յակոբ Բագրատունին եւ աղքատ սարկաւագը՝ Սարգիսը։ Մեծագոյն հեղինակութիւնը անշուշտ, Սրբազանն էր։ Մեր աչքերը որ բացինք, ինչպէս ըսի, առաջնորդը Խադ Սրբազանն էր. պատկառելի մօրուք մը եւ ճաղատ գլուխ մը։ Ան սակայն հօրեղբայրն էր Յակոբ եղբօրս դասընկեր Յակոբին եւ որ ամէն բանի մէջ մեղսակից էր տասջին Յակոբին։ Այս ալ պատճառ կ՚ըլլար որ Սրբազանը իջնէր իր պատուանդանէն եւ դառնար մեզի պէս մէկը, այնինքն մէկը՝ որուն վրայ ճոքեր կարելի էր պատմել եւ որքա՜ն աւելի կուտար Սրբազանը, որ տղաքը ձեռք առնէին զինք։ Ամէնէն ժողովրդականը եւ սթանտարտը, անշուշտ, հետեւեալն էր. հաշուել, թէ տուեալ քարոզի մը մէջ Սրբազանը քանի՞ անգամ պիտի ըսէր՝ «ինչպէս ըսի՛»։ Համեղը այն կ՚ըլլար՝ երբ Սրբազանը, բան մը չըսած՝ քարոզը կը սկսէր այսպէս. «սիրելի հաւատացեալներ, ինչպէս ըսի՛ ...» ու գաղտնի հոհոոցը կը սկսէր։ Յետոյ հաշիւը կը պահուէր 1–9–15 ... թէ քանի՞ անգամ ինչպէս ըսի՛ ըսաւ Սրբազանը օրը եւ հանգամանքները գիտէին եւ քիչ ալ չէր պատահեր, որ տան մէջ, մեր Յակոբը կամ Սրբազանին Յակոբը, երկար փայտ մը առած ձեռքերնին իբրեւ առաջնորդական գաւազան, կը սկսէին քարոզի ... «ինչպէս ըսի՛ ··· Յիսուս Քրիստոս երկու թաւուխ գողցաւ···։ Ցուդա՛ն՝ մատնե՛ց անոր··· վերջը յաջորդի»։

Խադ Սրբազանը շատ չդիմացաւ ու Անթիլիաս գնաց։ Իրեն յաջորդեց Դուան Եպիսկոպոսը, Խորէն Սրբազանը։ Գեղադէմ մարդ էր, Խադ Սրբազանին մօրուքին ո՛չ խտութիւնը, ո՛չ սպիտակութիւնը ունէր, բայց գլխուն վրայ առատ մազեր կային, գանգուր - գանգուր եւ ալիք - ալիք։ Առաջին Աւագ Ուրբաթ օրը, երբ Յիսուսի գերեզմանին առջեւ ծունկի եկաւ եւ վեղարը վար առաւ՝ սքանչելի պատկեր մը ստեղծուեցաւ ու հիմա, ամէն տարի երբ Մոնրէալի Ս. Յակոբ Եկեղեցւոյ մէջ Յիսուսի Թաղման կարգը կը կատարեմ, կը յիշեմ Խորէն Սրբազանի այդ ծունկի գալը եւ գլուխը դմդմեցնելէն ծանր «Սուրբ Աստուած»ը երգելը։

Խորէն Սրբազան սակայն շատ մը նորութիւններ բերաւ, որոնք հաճելի չեղան էքթապլիշմընթին եւ յատկապէս Հայրապետին, Ս. Նշանի լուսարարին։ Այսպէս՝ Սրբազանը արգիլեց որ Յիսուսի գերեզմանը դուրս հանենք եւ ճաղերը շլկած երիտասարդներ պտըտցնեն զայն եկեղեցւոյ շուրջը եւ առիթ տան, որ հաւատացեալներ փորձեն գերեզմանին տակէն անցնիլ, Վերջերս՝ ես արտօնեցի որ այդ սովորութիւնը շարունակուի Մոնրէալի մէջ եւ ամէն Աւագ Ուրբաթ օր, ես զարմացած աչքերով կը դիտեմ, թէ ինչպէ՞ս մեծ ու պզտիկ, յատկապէս Մոնրէալի մեր եկեղեցիէն հեռու մեծցած տղաք ու աղջիկներ ալ աէրօպաթի շարժումներով կը փորձեն անցնիլ գերեզմանին տակէն, անշուշտ դպրապետ Յակոբին եւ սարկաւագապետ Գրիգոր Նուպարեանի քօրեկրաֆիով։

Մի՛ւս նորութիւնը որ Խորէն Սրբազան մտցուց՝ աւելի ծանր եկաւ։ Առաջ, ով որ տղայ էր, 3 տարեկանէն մինչեւ Պր. Բագրատունին, Պր. Խոզեանը, բոլորն ալ կարգով խորան կ՚ելլէին եւ առիթ կ՚ունենային որ աջ ոտքերնին լուացուի։ Հիմա այս սրբազանը եկաւ եւ օրէնք դրաւ, որ միայն 12 հոգի խորան պիտի բարձրանան։ Այդքան։ Կրնա՞ք երեւակայել թէ ինչքան դժգոհութիւն ստեղծուեցաւ ... Դժգոհ էր մանաւանդ Պր. Հայրապետը, որ կերպով մը ոտնձգութիւն կը նկատէր ասիկա՝ իր կալուածին մէջ։ Չէ՞ որ Աւագ Շաբթուան օրերուն Ս. Նշանի տէրն ու տիրականը ինք էր։ Բայց համակերպեցաւ եւ այդ օրերու դրութիւնն ալ մնաց նոյնը, սկսելով Ղազարու շաբաթէն։ Այդ շաբթուան Չորեքշաբթի եւ Շաբաթ օրերը նուիրուած էին ջահերու մաքրութեան։ Կ՚իջեցնէինք մեծ - փոքր կանթեղները, կը շարէինք մանկապարտէզի ջուր խմելու դուռին երկայնքին եւ Պր. Հայրապետին ցուցմունքով՝ կը սկսէինք մաքրել ջահերը, բուրվառները, խնկամանները, արծաթեայ սպասները՝ ճաճանչ, քշոց, ձեռաց խաչ։ Բայց հիմնական պէս չէին այդ մաքրութեան փորձերը։ Հիմա՝ արծաթեղէնը կը ձգեն հեղուկի մը մէջ, կէս ժամ մը կը մնայ ու դուրս կը հանես։ Եթէ աւելի խնամքոտ կ՚ուզես ըլլալ, խորհուրդ կը հարցնես թիֆընի արծաթեղէն ունեցողներէն եւ ճերմակ հիւթով մը կ՚օծես արծաթը եւ կը շփես, ու շո՛ւփ՝ փայլուն արծաթը կը փայլի։ Մեր ատեն տարբեր էր, Հայրապետը պէտք էր որ մոխիր հաւաքէր, լեմոնի կճեպ հաւաքէր, նեղ մնալուն՝ նոր լեմոն գնէր եւ մոխիրը թրջէր լեմոնով եւ շփե՛լ ու շփե՛լ, մինչեւ որ արծաթեղէնները հասնին ցանկալի եւ հնարաւոր փայլքի։ Մեծ բրոպլէմ էր բեմի 12 կանթեղները եւ տեղը դնել՝ նոյն կարգով։ Բայց նաեւ մեծագոյն պատիւը անորն էր, որ կը փայլեցնէր Սուրբ Միւռոնի աղաւնին։ Գեղեցիկ, գեղեցիկ թռչուն մըն էր, ո՛չ Անթիլիասը ունի, ո՛չ ալ Ս. Էջմիածինը ունի Ս. Նշանի աղաւնիին նման գեղեցիկ անօթ մը։ Եթէ չեմ սխալիր՝ Գարաճանի Ս. Աստուածածին Եկեղեցիէն բերուած էր եւ Պր. Հայրապետ նախանձայուզութեամբ կը պահէր այդ։ Նախանձայուզութիւն։ Գտա՛յ բառը, որ կրնայ մէկ անգամէն ներկայացնել Պր. Հայրապետը։ Հիմա քիչ մը պատմեմ այս արտակարգ ուսուցչիս մասին - Պուրսացի՞ էր, թէ Տիգրանակերտցի, լաւ չեմ յիշեր. մանուկ տարիքիս հայրենակցական այս զգայնութիւնը չէի մշակած։ Կերպով մը Պէյրութ հաստատուած էր, եւ 1930-ական թուականներէն Ս. Նշանի լուսարարն էր։ Շատեր եկան, գացին, շատեր եկան, գործեցին ու անցան՝ Հայրապետը մնաց։ Շատեր եկան, փորձեցին Հայրապետը անցընել՝ իրենք անցան, Հայրապետը մնաց։ Հայրապետը առանձին institution մըն էր, բարոյական հեղինակութիւն մըն էր, քահանաներուն կը բարկանար, սրբազաններուն ալ կը բարկանար. ինք էր, որ ծանօթ էր Հայ Եկեղեցւոյ կանոնին, ծէսին, աւանդութեանց։ Բոլոր շարականներն ալ գիտէր, թէեւ կասկած մը ունիմ, որ բոլորն ալ նոյն ձայնով կ՚երգէր, բայց գիտէր թէ ո՛ր շարականը ո՞ւր է, ո՛ր մեղեդին ո՞ւր է, ո՛ր մեսեդին ո՞ւր է։ Անվարժ մէկը երկա՜ր պիտի չարչարուէր՝ գտնելու համար «Դու մանուկ բարձրելոյն»ը (Ս. Յովհաննու Կարապետի տօնին), Պր. Հայրապետը արդէն իսկ բացած է էջը եւ արդէն սկսած է երգել։ Այսպէս էր Պր. Հայրապետը եւ հաւանաբար Պօղոս Առաքեալ զինք նկատի ունէր՝ երբ կ՚ըսէր. - «պաշտօնս իմ փառաւոր առնեմ» (Հռոմ, ԺԱ. 15)։

Ահա այսպէս, Պր. Հայրապետի շուքին տակ կը շարունակէի ծիսական դասերս։ Իրմէ սորվեցայ գոյներու ներդաշնակութեան հարցը (հիմա՝ color coordination կ՚ըսեն, interior decorator կը բերեն, չեմ գիտեր ինչ)։ Մեզի համար Ծնունդը սպիտակ էր, խորանի վարագոյրը՝ մութ կապոյտ, մէջտեղը դեղին խաչ։ Մեծ պահքին սեւ վարագոյրը կ՚իջնէր, ջահերը սեւ կը հագնէին, ամէն բան կը սեւնար, գիրքերը կապոյտ շապիկ կը հագնէին, սեւ խաչերով զարդարուած։ Այս սեւերուն աբօթէօզը կը հասնէր խաւարման գիշերին, երբ Յիսուսի պատկերին ջահի մէկ մոմը՝ Յուդայի մոմը սեւ կը ներկուէր եւ Պր. Բագրատունին իր կապոյտ շապիկին վրայ ձախ ուսէն կը կախէր յատուկ սեւ ուրար մը, մէջը ճերմակ դափնիի տերեւներու պէս բան մը։ Եկեղեցին ուրի՛շ սեւ օր մըն ալ ունէր՝ Ապրիլ 24-ը։ Այդ օր՝ Ս. Նշանի ատեանի չորս սիւներուն սեւ գոգնոց կը հագուեցնէր Պր. Հայրապետը, մէջտեղը կը դնէր catafalque-ի պէս բան մը՝ սեւ կտաւներով, չորս հատ ալ յատուկ աշտանակ, ուրկէ խունկը առաւօտէն կը մխար ժամեր շարունակ։ Սարսափելին՝ սեւ քաթաֆալքին առջեւ զետեղուած գանկ մըն էր։ Կ՚ըսէին՝ Տէր Զօրէնն է։ Ո՞վ, ո՞վ էր արդեօք այդ գանկին մարմինը, միսին ու ուղեղին տէրը։ Աստուած գիտէ եւ մեղք ալ էր, որ առանձին էր։ Անթիլիասի մատրան մէջ գանկերը, ձեռքի եւ ոտքի ոսկորները միասին էին, ընկեր էին ալ իրարու. Ս. Նշանի գանկը անգամ մը եւս որբ էր եւ պատիժ ալ ունէր, քանի ամէն տարի անգամ մը իր որբութիւնը աշխարհին պիտի հռչակուէր, թէեւ ամէնէն համբուրելի պատճառներով։

Պր. Հայրապետը հաւատարմօրէն կը պահպանէր իր կարգն ու կանոնը։ Ամէն տօնի յատուկ ծիսական առարկաները նոյն կանոնաւորութեամբ բեմ կը հանէր։ Եթէ Ծնունդին վարագոյրը կապոյտ էր, Ծաղկազարդինը՝ ճերմակ տանթելներով զարդարուած վարագոյրն էր. Զատկին մէջտեղ կուգար ճերմակ սաթինէ ատլաս վարագոյրը. վարը մէկ մեթր դաշտի մը մէջ՝ ուզածիդ չափ մետաղեայ, աստղեր, իսկ կեդրոնը՝ Յարուցեալ Քրիստոսը կը ցրուէր հռոմայեցի երեք զինուորները՝ իրենց կարմիր գլխարկներով։ Աստուածածնին վարագոյրը տարբեր անուշութիւն մը ունէր, հիմա որ կը յիշեմ՝ գինեգոյն կերպասը թաֆթա մուարէ էր, իսկ կեդրոնին կողմնակի հանգչած խաչ մը ոսկոյգներու մէջ։ Այսպէս էր, որ Պր. Հայրապետը մեզի սիրել կուտար ծէսը, եկեղեցւոյ գոյներու ներդաշնակութիւնը, տօներու յատուկ գոյները։ Ո՞վ օրինակ, հիմա, կը մտածէ Աւագ Հինգշաբթի օր խորանի սեղանին աստիճանները լման սպիտակ ընել, մէջտեղը՝ կապոյտ խաչ մը ձգել ժապաւէնով, յետոյ՝ Տիրամօր նկարին տեղ բացառաբար դնել վերջին ընթրիքի տեսարանը։ Ո՞վ Վարդավառի թափօրին վարդի ջուր կը սրսկէ հաւատացեալներուն վրայ, ո՞վ Գիւտ Խաչի տօնին, «Հարց»ի Գ. տունը, «ուստի բուրելով խնկոց»ը որ երգուի՝ քահանային ձեռքը խունկ եւ ռեհան կուտայ որպէսզի դասը խնկարկէ ... Ո՞վ, ամէն Աստուածածնի Մեռելոցի օրը, Գարաճանի Ս. Աստուածածին Եկեղեցէն Սուրբ Նշանին յանձնուած (ըստ երեւոյթին պայմանով մը) եպիսկոպոսական արծաթեայ թագը, աւետարանը եւ հռչակաւոր միւռոնի աղաւնին պիտի զետեղէ բեմին վրայ, ի յիշատակ մոռցուած հայրենիքին եւ մեր կորսուած հողերուն։ Հիմա որքա՜ն կը խօսինք մեր պահանջատիրութեան մասին եւ սակայն կը հաւատամ, որ Պր. Հայրապետը ի՛ր ձեւով, իր ոճով իր պահանջատիրութիւնը կը վերբերէր, եթէ նոյնիսկ Պր. Վահէ Օշականը հեռաւոր Սիտնիի իր վանքէն այդ կոչէ «տիրացուական հայրենասիրութիւն»...

Բայց Պր. Հայրապետ օր մըն ալ սխալ մը փախցուց։ Տիկին մը զոյգ մը ձեռագործ նուիրեր էր, զոյգ մըն ալ հողաթափ։ Երբ, «Տէր Ողորմեա»էն առաջ, Տէր Յարութիւն Քահանայ կը կարդար նուիրատուին անունը, Պր. Հայրապետ ինծի տուաւ նուէրները, որ ես ալ, զոյգ ընդ Տէր Յարութիւնի յայտարարութեան՝ վեր բարձրացնէի եւ ի տես մարդկան ցոյց տայի նոր ձեռագործը եւ նոր զոյգ մը հողաթափերը։ Սրբազանը բարկացաւ այս տեղլալութեան ձեւին, եւ ես ալ կորսնցուցի auction house-երու յատուկ արարքի մը վայելքը։

Վերջին յիշատակ մըն ալ Ս. Նշանի օրերէն։ Այլեւս յստակ էր, որ կ՚ուզէի վարդապետ ըլլալ, ո՛ւր որ ըլլայ։ Տակաւին էջմիածնական - անթիլիասական կոչումները չկային՝ գաղութը ալ չկար։ Եւ ինչպէս գիտեն շատերը, Երուսաղէմէն ամէն տարի վարդապետ մը կուգար եւ Լիբանանէն ժառանգաւոր սաներ կ՚արձանագրէր Երուսաղէմի համար։ Ըստ երեւոյթին՝ որոշեր էի Երուսաղէմ երթալ։ Աւելի ճիշդ պիտի ըլլայ այստեղ արտագրել իմ օրագրութենէս համապատասխան էջերը (ընթերցողները թող չսխալին, ես երբեք այնքան տիսիփլին չեմ ունեցած որ օրագիր պահեմ. սակայն 1953 -- 1955 տարիներուն պարբերական օրագրութիւններ ունիմ, որոնք իմ ստանդական կեանքին պէս ալ թափառած են Լիբանանէն Սուրիա, Իրան, Ամերիկա ... եւ ինծի համար սիրելի էջեր են, որոնց վրայ երբեմն կը հակիմ՝ մանուկ Հրայրին ապրումները կարդալու համար)։

Ուրեմն verbatim, ինչպէս զարգացածները կ՚ըսեն, կ՚արտագրեմ այդ բաժինը։

«1958, Օգոստոս 4

Այս օրը իմ կեանքիս անկիւնադարձը պիտի կազմէր եթէ...

Առաւօտուն, Ազգային Առաջնորդարան գացի նոյն րոպէին Պր. Հայրապետը դուրս ելաւ,

- Ծօ՛, Հրայր, ի՞նչ, վարդապե՞տ պիտի ըլլաս...

- Հա՛, միտք ունիմ։

Ապա, միասին գացինք ներս։

- Հէ՛յ, Հայրապետ, ո՞ւր կը տանիս մեր Հրայրը հը՞... - ըսաւ Խորէն Եպիսկոպոս, ապա խօսքը ինծի յառելով - Է՛, Հրայր, մի երթար հա՛, քեզի Անթիլիաս պիտի տանիմ, չըլլա՛յ որ երթաս։

Յետոյ Հայր Զաւէնին դառնալով, ըսաւ.

- «Ձեզի կը ներկայացնեմ մեր դպիրներուն շէֆը եւ մեր պզտիկ լուսարարը···։

«Հարկ եղած ատենը եկեղեցին իրեն կը թողում, ան կրնայ կառավարել» - վրայ բերաւ Պր. Հայրապետը։

Կը մեկնիմ։

Բոլորովին յուզեալ կը վերադառնամ տուն։ Հիւրերուն վերջին օրն է։

Ընտանեկան ճոխ սեղանի շուրջ խմբուած ենք։

- «Հրա՛յր», - կ՚ըսէ Տիկին Լուսօն, «կա՛մ մեծ ուրախութիւն մը ունիս եւ կամ ալ մեծ տխրութիւն մը, որովհետեւ ախորժակդ տեղը չէ»։

Ես ոչինչ կը գտնեմ պատասխանելու։

Յուսախաբութիւն յուսախաբութեանց։

Բոլորը ընդդիմացան ու արգիլեցին զիս։

Ու կեանքիս այս էջն ալ փակուեցաւ»։

(Շար. 2)

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿԻ ԱՒՏՕՎԹԱՐԸ ՄԱՀԱՓՈ՞ՐՁ ԷՐ, ԹԷ ՊԱՏԱՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ

(Բ. եւ վերջին մաս)

Մեր խորին համոզմունքով՝ տալա-ուածը քննիչների կողմից խմբագրուած պմունքի տեքստն է: Նման մտածե-ակերպի հիմք են տալիս հարցաքննու-թեանը ներկայ գտնուած այլ անձանց վը-կայութիւնները: Դրանցից առանձնա-ում է Պարոյր Սեւակի ազգականուհու՝ Նարիկ Սայադեանի պատմածը, որը հօր տ միասին Արմէն Ղազարեանին հանդի-պել է հիւանդանոցում ու հարցափորձ ա-ել: «Արմէնը ասաց, Հրաչ քեռի, երկու ագլու տուփ տուր, պատմեմ ոնց եղաւ: պա աւելացրեց՝ գիւղում, դուրս գա-լուց առաջ հայրիկը չգիտեմ ում հետ ր խօսում հեռախօսով, որից յետոյ շատ արկացած էր: Նա վարորդին կանչել , բայց սա հրաժարուել, չէր եկել: (Պ. ակին միշտ սպասարկում էր Արմէն ա-նով մի երիտասարդ վարորդ): Յե-յ պապան որոշեց, որ ինքը պէտք է քին նստի, ասելով՝ հերն անիծած, ինչ ում է թող լինի, ես էլ ղեկին պիտի եմ: Երբ հասանք ճանապարհի այն ին, որտեղ հատւում էր եկող մեծ ապարհին՝ մի բեռնատար աւտոմե-յ էր կանգնած, դեռ չհասած սրան՝ նատարը շարժուեց: Հէնց սկզբից, ից դուրս գալուց սկսած հայրիկն ում էր առաջ անցնել բեռնատարից, յց սա փակում էր ճանապարհը: Այդ ն խաղը ամբողջ ճանապարհին կրկ-ւեց: Բեռնատարը երբեմն լայն ճա-պարհ էր թողնում, իսկ երբ հայրիկը ում էր անցնել, բեռնատարը դարձ-յ միանգամից փակում էր ճանապար-, ղեկը թեքելով մեր մեքենայի կողմը: վարորդը սեւ-սեւ մազերով, պեխեր ու-եցող տղայ էր, բեռնատարի համարը պրտնեց, չյիշելով թէ թերից որն է առ, որը յետ: Վերջին երկու նախա-դասութիւնները Արմէնը ասաց միլիցիա-յի երկու աշխատակիցների ներկայու-թեամբ: Նրանցից մէկը ասաց. "Տղայ ն, այստեղ ինչ որ ասացիր, այլեւս ոչ տեղ չասես, որովհետեւ կարող է այդ վարորդն իմանայ, որ տեղեկութիւն ու-նէք իրենից եւ հետքերը կորցնի": Դրա-նից յետոյ մեզ դուրս հանեցին եւ սկսե-ցին Արմէնին խօսեցնել առանց վկաների ներկայութեան»:

դէպ մէկ այլ իրաւաբանի տեսակէ-տով, ճանապարհին եղել է ոչ թէ մէկ՝ երկու բեռնատար՝ իրար հանդիպա-ց, որոնք երկու կողմից փակել են Պ. Սեւակի մեքենայի ճանապարհը, նրան ստիպելով գլորուել ճանապարհից:

Այդ մասին թռուցիկ ակնարկել է Զ. Քէօշկարեանը իր փորձագիտական եզրակացութեան մէջ՝ «...կենտրոնախոյս ուժերի ազդեցութեան տակ դէպի աջ երկու անգամ շրջուելով տեղի է ունեցել վթարը»: Երկու մեքենայի վարորդներն էլ եղել են Ադրբեջանցիներ, որոնցից մէկն՝ ընդհանրապէս «մոռացութեան» է տրուել: Վկայութիւններ կան այն մասին, որ վթարից կէս ժամ առաջ դադարեցուել է Արագածան - Եղէգնաձոր ճանապարհի երթեւեկը երկու ծայրից ու Քարքին (այժմ՝ Տիգրանաշէն) ու Սեւականը եզերող խճուղում յայտնուել է միայնակ բեռնատար աւտոմեքենան, որի մասին պատմել է 13-ամեայ Արմէնը:

Այժմ այն մասին, թէ ուտեղից է ծագել վթարի ադրբեջանական տարբերակը: Թէեւ տարբեր անձանց դիմումներին ՀՀ ԱԱՊՎ-ից պաշտօնապէս յայտնել են, որ իրենց արխիւում Պարոյր Սեւակի մասին ոչ մի փաստաթուղթ չի եղել եւ չկայ, սակայն ոչ ոք չի կասկածում, որ ՊԱԿ-ում գոնէ պէտք է հաւաքուած լինեն «Եղիցի լոյսի» առիթով գրուած մատնագրերը: Գրքի 25 հազար օրինակը հէնց այնպէս չէր երեք տարի կալանքի տակ գտնւում:

ԱՄՆ-ում ապաստանած ՊԱԿ-ի երկար տարիների աշխատակիցներից Մարտիրոս Վարդանեանը 90 թ. Գալիֆորնիայում հրատարակած «Գիրք արեան եւ մաքառման» պատումի մէջ ներկայացնում է Հայաստանի Անվտանգութեան նախագահի տեղակալ եւ հակահետախուզութեան բաժնի վարիչ, գեներալ Թելման Մելքումովի յուշերը. «Մոսկուան յամառօրէն ճնշում էր բանեցնում, որ շապ կարգով լռեցուի այդ "Անլռելի Զանգակատունը": Մեզ թելադրւում էր 37 թուականի մարդկանց լռեցնելու մեթոդների գործադրութիւնը...»: Պ. Սեւակը լռեցնելու գործը Թ. Մելքումովին է յանձնարարւում, «լռեցնելու» ծրագիր է մշակւում եւ դրւում կենտկոմի առաջին քարտուղարի սեղանին: Ա. Քոչինեանը վաւերացնում է այն: ՊԱԿ-ի երկու աշխատակիցների յանձնարարւում է իրականացնել ծրագիրը, սակայն օպերացիան իրագործելիս ճանաչում են բանաստեղծին եւ որոշում ձախողել կառավարութեան հրահանգը՝ անցնելով պետական սահմանը: Միւսները հրաժարւում են կատարել ՊԱԿ-ի հրահանգը, որից յետոյ Մոսկուան մեկուսացնում է Թ. Մելքումովին եւ գործը վերցնում իր վրայ: Դրանից յետոյ ՀԿԿ-ի առաջին քարտուղարը եւ ՊԱԿ-ի Հայաստանի նախագահը օգնութիւն են խնդրում Ադրբեջանի Անվտանգութեան կոմիտէի հակահետախուզութեան բաժնից: Բաժնի վարիչ Հիւսէյն Ահմէտովը յանձն է առնում օպերացիայի իրականացումը:

Պարոյր Սեւակի՝ աւտովթարի ժամանակ հարբած լինելու տարբերակը մէջտեղ է բերել ՀՀ ՆԳՆ-ի քննչական վարչութեան նախկին աւագ քննիչ Գէորգ Ռոստոմեանը, որի վարոյթում գտնուել է գործը եւ որն էլ կարճել է այն: Սեւակի մահուան 20-ամեակի օրերին, Հայ գրողների միութեան նամակին գրած պատասխանում (92 թ.) յայտնել է, թէ պատահարը տեղի է ունեցել բանաստեղծի մեղքով, որովհետեւ վերջինս հարբած է վարել աւտոմեքենան: «Վթարի ենթարկուած մեքենայի ներսը լի էր ալկոհոլի, ետ տուած ստամոքսի գարշահոտով» ասել է նա: «Ամենայն պատասխանատուութեամբ պնդում եմ, որ նման հետքեր մեքենայում չեն եղել, որքան յիշում եմ. եղել են ուղեղանիւթի մնացուկներ» յայտնեց մեքենայի զննութիւնը կատարած քննիչը՝ Ժորա Խաչատրեանը: Սեւակի մայրն ասել է՝ տնից դուրս գալիս նա մի բաժակ թէյ խմեց, հրաժարուելով օղուց: Փորձագէտը նման բան չի արձանագրել, իսկ դատախազի տեղակալ Հայկազ Շահինեանը ասել է. «Եթէ այդպիսի բան լինէր, ես չէի կարող անգամ այսօր դա չյիշել»: Անատոմիկից պատասխանել են, որ արեան քննութիւնը ժխտել է ալկոհոլի առկայութիւնը նրա օրգանիզմում:

Մեծ կասկած է առաջացրել Պ. Սեւակի ձախ քունքին բացուած խոռոչը, որի վրայ կառուցուել է հետեւեալ տարբերակը՝ մինչեւ աւտովթարը հրազէնով կրակել են քունքին եւ մեքենան շրջուելու պահին Պարոյրն արդէն կենդանի չի եղել: Այս վարկածը տարածուել է աւտովթարից անմիջապէս յետոյ: Ժորա Խաչատրեանի բացատրութիւնը այս է. «Գլուխը հարուածել էր մեքենայի առջեւի ձախ կողմի նիկելեայ յենակին, որից էլ ստացել էր վնասուածքը»: Նոյնը յայտնել էր Արարատի հիւանդանոցի վիրահատական բաժնի վարիչ Աշոտ Գըրիգորեանը, միաժամանակ շեշտելով, որ Պարոյրը գանկի հիմքի լաւ արտայայտուած կոտրուածք ունէր: Սակայն փորձագէտը նիկելապատ ձողի վերաբերեալ ոչ մի նշում չի արել իր եզրակացութիւնում, իսկ դիահերձող բժշկի յիշողութիւնից ի սպառ «ջնջուել է», թէ ինչից է վրայ հասել Պարոյր Սեւակի մահը: Խօսւում է նաեւ այն մասին, որ փորձագէտ Զ. Քէօշկարեանը ուսումնասիրողների հակափաստարկներից նեղուելով, բացագանչել է՝ ախր ես չեմ կարող, իրաւունք չունեմ ամէն ինչ ասել: Փոխարէնը յուշել է Սեւակին արտաշիրիմում անել:

Ինչպէս է մահացու հարուած ստացել Պարոյր Սեւակը. հարցին փորձագէտը պատասխանում է. «Մ-21»ի առաջին նըստատեղում, վարորդի նստատեղի կողքին, յատակի վրայ առկայ է առատ թափուած արեան հետք, որն ընդգրկում է ամբողջ ոտնատեղը: Վերոյիշեալի առկայութիւնը հիմք է տալիս պնդելու, որ «Մ-21»ը վարող Սեւակը Նելլիի առաջին դռնից դուրս ընկնելու պահին, հաւանական է, նրան բռնելու նպատակով թեքուել է կնոջ կողմը, եւ այդ վիճակում «Մ-21»ի յետագայ շրջուելու պրոցէսում փակուող-բացուող աջ առաջին դուռը նրան մահացու հարուած է հասցրել: Այլ կերպ հազուադէպ է լինում, որ ղեկին նստողը «Մ-21»ի 1-2 պտոյտ շրջուելու պրոցէսում նման ձեւով իր դիրքը փոխի եւ նման վնասուածքներ ստանայ»:

Այստեղ շարադրուածն ամբողջը չէ, կան նաեւ այլ ականատեսների վկայութիւններ, որոնք վրայ են հասել վթարից անմիջապէս յետոյ, սակայն մեր շարադրանքի մէջ եղած հակասութիւններն էլ բաւարար են պնդելու, որ գործը կարճելը ճիշդ չէր: Քննիչները կասկածի տեղիք չտալու համար պարտաւոր էին շարունակել հետաքննութիւնը եւ լսել բոլորին: Լիարժէք փորձաքննութիւն պէտք է կատարուէր աւտոմեքենայի տեխնիկական վիճակը պարզելու համար, ինչպէս նշում է Ժ. Խաչատրեանը: «Յաջորդ օրը պէտք է կազմակերպուէր դատաբժշկական փորձաքննութեանը անդկացումը, ասում է Ժ. Խաչատրեանը: Առաւօտեան զբաղուած էի այդ հարցերով, եկաւ Հանրապետութեան ՆԳ քննչական վարչութեան քննիչներից մէկը եւ ասաց, որ վարչութեան պետի յանձնարարութեամբ եկել է վերցնելու Պարոյր Սեւակի մահուան վերաբերեալ գործը: Քրէական գործը ես նրան եմ յանձնել: Ուսումնասիրողները հակուած են ենթադրելու, որ քրէական գործը ինձնից վերցուել է ինչ-ինչ հանգամանքներ թաքցնելու համար: Նման տեսակէտի հետ չեմ կարող համաձայնուել, քանի որ քրէական գործը համարուել է յատուկ կարեւորութեան, որի ընթացքի մասին պարբերաբար պէտք է զեկուցուէր Հանրապետութեան ղեկավարութեանը: Այդ գործը շրջանային քննիչի մօտ թողնելը կը նշանակէր, որ այն դասուել է սովորական դէպքերի շարքին: Այլ հարց է, թէ յետագայում ինչ են պարզել, ինչ չեն պարզել, ինչ-որ բան թաքցրել են կամ չեն թաքցրել»:

Բոլորին հետաքրքրողը այս է՝ ի՞նչ քննչական գործողութիւններ են կատարել, որոնք յանգեցրել են գործը կարճելուն: Պատասխանը գտնելը շատ դըժուար է, գրեթէ անհնարին, այն պարզ պատճառով, որ չկայ գործի հիմքը՝ այրուած է: Մինչդեռ բոլոր այս հրապարակումները հերքելու եւ կասկածների տեղ չթողնելու համար, գոնէ իբրեւ պատմութիւն, պարտաւոր էին պահպանել ոչ միայն Սեւակի քրէական գործը, այլեւ բժշկական նիւթերը, ՀԿԿ-ի արխիւային նիւթերը, նաեւ աւտոմեքենան, որը շատ վաղուց վաճառուել է՝ թանգարան յանձնելու փոխարէն:

ՍԱՌԱ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ՀԱՄԲՈՅՐԸ

ՀԱՄԱՍՏԵՂ

Աղջի՛, Մարուշ:

Ջուխտոտն հաւը չկայ, մայր, չորս կողմ նայիմ. կ'երեւայ թեզմիշ է եղեր:

Զահար Ղարիպ Ջիւչոյի հաւերուն մէջ Մեր բախտէն է, ինչ ընենք. կուտը կ'ուտէ, կ'երթայ Ջիւչոյի տունը ածէ:

Բախտը ի՛նչ ընէ. Կարօ Մարսուպին ը Ղարիպ Ջիւչոյի աքաղաղին հետ էր : Ի՛նչ լաւ, որ Կարօ Մարսուպ այդ ը նկատած չէր, եթէ ոչ հաւին վիզը մէկ հարուածով կը կտրէր:

Ճո՛ւ ճո՛ւ ճո՛ւ, - Մարուշ ձայնն ա-լի բարձր ձգեց եւ Ղարիպ Ջիւչոյի տան ն անցաւ:

Իր ձայնը կարծես աւելի փոխուած ու կուգար: Կարծես իր ձայնին հետ դեռ նոր կը մտերմանար: Դեռ նոր կը մը-տերմանար իր երեսին, աչքերուն, վար-ին հետ. ահա թէ ինչու Մարուշ յաճախ ու կլոր հայելին կը նայէր: Քանի կը տարածուէր Մուրատի քրտինքի հոտը իր մարմնոյն մէջ, այնքա՛ն անհանգիստ կը զգար, այնքան կը հեռանար իր տունէն: Մուրատի քրտինքին հոտը, բոլորակ հրդեհի մը պէս, Մարուշի ամբողջ մարմինն էր բռներ:

- Աղջի Մարո՛ւշ, - նորէն սրռաց մայրը, - ախ Աստուա՛ծ իմ, ի՛նչ է եղեր էս աղջկան:

- Եկայ, մայր եկայ:

Ի՛նչ խաս են Մուրատենց տանիքին դըդումներուն գոյները. ոսկեգոյն դդումներու շարքին կար նաեւ կապտորակ դդում մը: Մարուշին այնպէս թուեցաւ, թէ տարիներ առաջ տեսած էր այդ կապոյտին նմանող ուրիշ կապոյտ մը. կապոյտ մը քրտինքի հոտին հետ խառնուած:

- Աղջի Մարո՛ւշ, արեւը մարը մտնելու մէկ թիզ մնաց, Մարո՛ւշ:

- Եկայ, մայր, եկայ:

Երեկոյեան Կարօ Մարսուպ երբ տուն վերադարձաւ, կինը խօսեցաւ անոր:

- Արիմարդ, էդ աղջիկը որ տուն եկաւ, քէնկոտ էր. կ'երեւայ՝ հերսոտեր ես:

- Հէլպէթ կը հերսոտիմ. բանի գործի տեէն, չաւաները թեւէն պակաս չեն: Ի՞նչ է, հարսնի՞ք է թէ գատիկ:

- Ի՞նչ կ'ըլլի, արիմարդ, նշանուած աղջկայ հաւաս է:

- Հա, հա, նշանուած աղջիկ ըսելով, էսօր չաւաները թող թեւէն չհանէ, վաղն ալ նշանածը դրան վրայէն կ'անցնի տէ՛ թո՛ղ փարչն առնէ աղբիւր վազէ:

Կինը այլեւս չխօսեցաւ: Կարօ Մարսուպ վրան - գլուխը թօթվեց, կնճռած ճակատով չոկուեցաւ եկեղեցի:

Մարուշ աղբիւրէն վերադարձաւ, ներսը դուրսը աւլեց եւ միեւնոյն ատեն քրտինքի հոտին խառնուած կապոյտը փնտռեց: Հա, գտաւ: Այդ օր Մուրատ կապոյտ ելէկ էր հագեր: Փշերու ճամբուն վրայ Մուրատ հէքեաթի հերոսի մը պէս մօտեցաւ, Մարուշն ալ այնքան շուարեցաւ, որ չգիտցաւ, թէ ի՞նչն էր կապոյտ՝ երկի՞նքը թէ Մուրատի ելէկը...

Երեկոյ մը, եկեղեցիէն վերջ, ժամուորները տուն քալած էին: Ժամկոչն ալ, եկեղեցիին խոշոր բանալին գօտիին մէջ, ուսին վրայ ծռած, տուն կը վերադառնար: Եկեղեցիի ճամբուն վրայ երկու պառաւներ, քիթ քթի տուած, կը խօսէին տակաւին:

- Ախր կը խօսին, Հռոփ, ես ինչ գիտեմ, - քթախոտին տուփը երկարելով:

- Ջահար, Կարօ Մարսուպն ալ կ'ըսէ՝ ես աղջիկ ունիմ,

- Մարուշէն ո՛վ ուժիչ կ'ընէր, մէրս քուրս. սուրբի պէս աղջիկ էր:

- Մի ըսեր, Զարդա՛ր, խելօք կատուն է գողցեր ժամուն մոմը: Հիմակու աղջիկները, - քթախոտը քթածակերէն վեր խըռացնելով, - հիմակու աղջիկները պոյ մը դետնին վրայ են, պոյ մը դետնին տակ:

- Տեսնող կայ եղեր, Հռո՛փ, էնպէս գըրկուեր են, որ մէջերնին հով չանցնիր եղեր:

- Թո՛ւ, սէր է եկեր սոխնոցերը: Ես ինչ գիտեմ, մէրս քուրս, տարի մը նշանուած մնացի՝ նշանածիս երեսը չտեսայ: Հիմակուայ աղջիկները չեն ըլ պարտկուիր: Աստուած օձախ պուճախէ հեռու ընէ, աղջկայ ու տղի տէր ենք:

Եկեղեցի ու բարտի հեղհեղէ մութով կը ծրարուէին: Երկու պառաւներ տակաւին կը խօսէին, յաճախ իրարու քթախոտ կը հրամցնէին ու իրարու բերնէ խօսքեր կը կտրէին: Շատ ուշ ատեն բաժնուեցան, խօսքերնին դեռ լրացուցած չէին:

Զարդար պառաւը, երբ Սուդիկենց տան քովէն անցաւ, տեսաւ, որ դրան վրայ նստեր էր խաթուն մաման:

- Ողորմի Աստուած:

- Ողորմի հոգուդ, Զարդա՛ր, ինչո՞ւ էսօր ուշ մնացեր ես:

- Մարկոսենց Հռոփին հետ խօսքի բռնուեցանք: Միտքս ինկաւ, որ տահա կովը չեմ կթեր: Խեղճ հայվանը հիմա աչքհայոց եղաւ:

- Լսեցի՝ տղադ կը նշանես, Զարդա՛ր:

- Է՜հ, ո՞ւր է տղամարդու աղջիկ մը, որ ըլլի... Հիմակու աղջիկները մինչեւ էրնանցը տունը երթալու չափ սապր չունին: Լսեցի՞ր Կարօ Մարսուպին աղջկան չնորհքը:

- Ի՞նչ կայ, Զարդար:

- Գեղին բերանն է ինկեր, դուն ալ բանէ լուր չունիս: Երէկ նշանուեցան, էսօր ճամբուն վրայ շախշախ լէյլի կը խաղան. փշերու ճամբուն վրայ պաչպչուկի ձէնը եայլան է բռներ: Երթամ, մէրս քուրս, երթամ կովս կթեմ:

- Ո՞վ է տեսեր, Զարդար...

(Շար. 7)

«ՅԱՌԱՋ»Ի ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ
ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

71ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻՒ

ՊԱՆԷՕ. - Տիկին Վ. Շիրինեան 1000 ֆրանք։

ՓՈԽԱՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ

Տիկին Տիրուհի Պետոյեանի մահուան առթիւ, Տէր եւ Տիկին Խաչիկ եւ Վարդենի Խանթեմուրեան 300 Ֆր. կը նուիրեն «Յառաջ»ին, փոխան ծաղիկի։

(Շար. Ա. էջէն)

Սեւան հանգստանալու կ'երթան շուրջ 120 հազար հոգի։ 1996-ին գրեթէ կրկնապատկուած է առողջարանային քաղաքներ – Հրազդան, Դիլիջան, Ջերմուկ, Սեւան, եւայլն – արձակուրդի գացողներու թիւը։ Այդ շրջաններուն մէջ հանգստեան տուներու օրական կեցութիւնը կ'արժէ 2500 – 6000 դրամ։ Ատկէ կը հետեւցուի որ այդ կարելիութենէն օգտուողները միջին խաւի պատկանողներ են, քանի որ աղքատները այնքան վճարունակ չեն, իսկ հարուստները կը նախընտրեն արտասահմանեան հանգստավայրեր։

***

ԼԵՒՈՆ ՏԷՐ - ՊԵՏՐՈՍԵԱՆ ՍԻՒՆԻՔԻ ՄԷՋ

Նախագահ Լեւոն Տէր - Պետրոսեան Օգոստոս 24-ին այցելած է Սիւնիքի մարզը ուր առաջին կայքը եղած է զինուորական պանթէոնը։ Ապա Սիսիանի մշակոյթի պալատին մէջ հանդիպում ունեցած է հանրութեան հետ, խօսած նոր պետութեան առաջին դժուարին շրջանին մասին։ Գորիսի մէջ նախագահը դիմաւորուած է ժողովրդական խանդավառ ցոյցերով։ Ապա Օգոստոս 25-ին Լ. Տէր - Պետրոսեան անցած է Մեղրի։

***

ԱՊՕՐԻՆԻ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԵԱՆ ՎԱԽՃԱՆԸ

Հայաստանի երկու քաղաքացիներ Յ. Ղազարեան եւ Յ. Սիմոնեան 1992 Հոկտեմբերին առանց մուտքի արտօնագրի Թուրքիայէն մտած են Իրաք ուր ձերբակալուած են եւ հինգ տարուան բանտարկութեան դատապարտուած։ Երկուքը Հայաստանի իշխանութիւններուն յանձնելու ջանքերը վճռական փուլի մտած են նախագահ Լեւոն Տէր - Պետրոսեանի միջամտութեամբ. ան յատուկ ուղերձով դիմած է Իրաքի նախագահ Սատտամ Հիւսէյնին որ ընդառաջած է եւ այդպէսով հարցը դրական լուծում ստացած։ Իրաքի Ռուսաստանի դեսպանատան պաշտօնակիցներ Օգոստոս 20-ին Իրան – Իրաք սահմանագծին վրայ երկու Հայերը յանձնած են Իրանի Հայաստանի դեսպանատան պաշտօնատարներուն որոնց ընկերակցութեամբ հասած են Հայաստան։

***

ՈՍԿԻԻ ՆՈՐ ՀԱՆՔԵՐ

Ոսկիի նոր հանքեր յայտնաբերուած են Լոռիի մարզին մէջ։ Պրպտումները կը շարունակուին ու միայն անոնց աւարտէն ետք կարելի կ'ըլլայ վերջնական արժեւորում մը ընել։ Ցոյս կը ներշնչէ նաեւ Ապարանի մօտերը գտնուած այլ հանքավայր մը։

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Շաբաթ, Կիրակի
Դեկտեմբեր 14 / 15

5EME GRANDE BRADERIE DE NOEL

«Շէն -- Ֆրանս»

-ՎԵՐԱՄՈՒՏ-

ARNOUVILLE

La Croix Bleue des Arméniens de France, section ASTRIG d'Arnouville lès Gonesse / Gonesse / Sarcelles / Villiers le Bel, informe que l'inscription aux cours d'arménien et de danse aura lieu le samedi 7 septembre à partir de 14h30 à la salle Léo Lagrange à Arnouville.

ՇԱՒԻԼԻ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ ԵՐԿՕՐԵԱՅ ԴՊՐՈՑ

Շաւիլի Եկեղեցւոյ հովանաւորութիւնը վայելող երկօրեայ հայերէն լեզուի ու կրօնագիտութեան դպրոցի վերամուտի թուականն է Սեպտեմբեր 11, Չորեքշաբթի, առաւօտեան ժամը 10-ին։

Դասաւանդութիւնները տեղի կ'ունենան Եկեղեցւոյ կից Սարգիս Պալապանեան սրահին մէջ, հետեւեալ յայտագրով ու ժամանակացոյցով. -

- Չորեքշաբթի, ժամը 10 - 12. հայերէն լեզու եւ կրօնագիտութիւն, փոքր տարիքի աշակերտներու համար։
- Չորեքշաբթի, ժամը 14 - 16. հայերէն լեզու եւ կրօնագիտութիւն, պատանի տարիքի աշակերտներու համար։
- Ուրբաթ երեկոյ ժամը 18.30 - 21. հայերէն լեզու, չափահաս տարիքի աշակերտներու համար։

Ցաւելեալ մանրամասնութեանց համար, դիմել դպրոցի ուսուցչին՝ Պր. Մեսրոպ Աղամեանին։

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՄԻՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

Լիոնի Հայկազեան Միօրեայ Վարժարանի վերամուտն է Չորեքշաբթի, Հոկտեմբեր 2-ին, Առաւօտեան ժամը 9-ին։

Դասաւանդութիւնները տեղի կ'ունենան Չորեքշաբթի, առաւօտեան ժամը 9-էն 12, կէսօրէ վերջ ժամը 14-էն 16։

Աշակերտները կրնան օգտուիլ կէսօրուան ճաշէն. իսկ երթեւեկի սպասարկութիւն մը կարելի է նախատեսել ծնողքներու հետ համաձայնելով։

Ցաւելեալ տեղեկութեան եւ արձանագրութեան համար դիմել Եկեղեցւոյ Դիւանատունը։

«ՅԱՌԱՋ»ի ընթացիկ պզերու սակագինը

Մահազդ	700	(844,20)
Հոգեհանգիստ	600	(723,60)
Շնորհակալիք	600	(723,60)
Հարսնիք--Նշանտուք	600	(723,60)
Ծնունդ	600	(723,60)

Բոլոր ազդերու սակերուն վրայ, հարկ է աւելցնել 20,60% Թէ.Վէ.Ա. (տե՛ս. փակագծի մէջ ընդհ. գումարը)։

Այս գիները կը վերաբերին մէկ անգամ հրատարակելի ազդերու, ՄԻՆՉԵՒ ՄԷԿ ՔԱՌՈՐԴ ՍԻՒՆԱԿ (25 տող) մահազդներու պարագային եւ 1/8-րդ (12--13 տող) մնացեալին։

Առեւտրական եւ այլ ծանուցումներու համար, դիմել Թերթին Վարչութեան։

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Սիփան - Կոմիտաս երգչախումբի վարչութիւնը կը խնդրէ նկատի առնել իր յառաջիկայ համերգը որ տեղի պիտի ունենայ Շաբաթ, Նոյեմբեր 30-ին, Փարիզ, Opéra Comique — Salle Favart-ի մէջ։

Ցայտագիրը յատկացուած է Կանաչեանի եւ Ափրիկեանի գործերուն։

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

Փարիզի եւ Շրջակայից Կրօնական Ընկերակցութեան Ներկայացուցչական Ժողովը, Վարչական Խորհուրդն ու Մայր Տաճարի Հոգաբարձութիւնը կը ծանուցանեն, թէ՝ Կիրակի, Սեպտեմբեր 1-ին Փարիզի Ս. Յովհաննէս - Մկրտիչ Մայր Տաճարին մէջ, Հոգեհանգիստ կը կատարուի։

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան եւ Հայ Եկեղեցւոյ Ազգային բարերար՝

ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

համար, անոր մահուան քառասունքին առիթով։

Կը հրաւիրուի մեր ժողովուրդը ներկայ գտնուիլ Հոգեհանգստեան պատարագին, երախտագէտ զգացումով աղօթել հանգուցեալի հոգւոյն համար եւ նորոգուիլ անոր երկրային կեանքի օրինակով։

ՄԱՐՍԷՅԼԻ
ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

40-օրեայ Հոգեհանգիստ
Ազգային Բարերար՝

ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

Կիրակի, Սեպտեմբեր 1, առաւօտեան ժամը 10-ին, Մարսէյլի Սրբոց Թարգմանչաց Մայր Եկեղեցւոյ մէջ կը մատուցուի պատարագ։

Կը պատարագէ՝
ԶԱՏԻԿ ՎՐԴ. ԱԻԵՏԻՔԵԱՆ
Հոգեւոր Հովիւ

Ցաւուր պատշաճի կը քարոզէ եւ յաւարտ պատարագի հոգեհանգստեան պաշտօնին կը նախագահէ՝
ՏԱՐՕՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՃԷՐԷՃԵԱՆ
Առաջնորդական Տեղապահ եւ
Կաթողիկոսական Պատուիրակի
փոխանորդ
Հարաւային Ֆրանսայի Հայոց Թեմի

UGAB . . . UGAB . . . UGAB . . . UGAB

«UGAB - 90»

A l'occasion de la célébration de son 90ème anniversaire. l'UGAB organise un grand

Gala de Bienfaisance

au profit des *TABLES DE L'UGAB*, en Arménie

le Vendredi 18 Octobre à 20 heures

au Pavillon Dauphine _ 75016 Paris

P.A.F. : 750 Frs

Rens. : 45 20 03 18 / 42 27 12 26.

UGAB . . . UGAB . . . UGAB . . . UGAB

ՔԱՌԱՍՈՒՆՔԻ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Հ.Բ.Ը.Մ.-ի Ֆրանսայի Շրջանակային Վարչութիւնն ու Փարիզ - Իլ տը Ֆրանսի Տեղական Յանձնաժողովը կը ծանուցանեն թէ Կիրակի, Սեպտեմբեր 1-ին, Փարիզի Ս. Յովհ. - Մկրտիչ Մայր Տաճարին մէջ
Հոգեհանգստեան Պաշտօն
կը կատարուի յաւարտ պատարագի։

Հ. Բ. Ը. Մ.-ի ցկեանս նախագահ եւ ազգային անզուգական բարերար, Հայաստանի Հանրապետութեան Ազգային հերոս, Ս. Գրիգոր Լուսաւորիչի Խաչին Դափնեկիր՝

ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

հոգւոյն պայծառացման համար, անոր մահուան քառասունքին առիթով։

Հ.Բ.Ը.Մ.-ի Մարսէյլի Տեղական վարչութիւնը կը ծանուցանէ թէ՝ Կիրակի, Սեպտեմբեր 1-ին, Մարսէյլի Սրբոց Թարգմանչաց Մայր Եկեղեցւոյ մէջ
ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՕՆ
կը կատարուի յաւարտ պատարագի։

Հ.Բ.Ը.Մ.-ի ցկեանս նախագահ, ազգային անգերազանցելի բարերար, Հայաստանի Հանրապետութեան ազգային հերոս, Ս. Գրիգոր Լուսաւորիչի Խաչին դափնեկիր՝

ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

մահուան քառասունքին առիթով։

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

CBAF - Section St Jérôme / Djavo Chant

Sortie
MUSEE DOBREE / NANTES
Exposition

Arménie

Les Trésors du patrimoine archéologique arménien des origines au IV siècle

Vendredi 6 Septembre à 22 h place de la Rotonde Dikran Tekeian Saint Jérôme

Départ de Nantes le Samedi soir

PAF de transport et visite musée 350 F environ

pour tous renseignements et réservations :
tél.: 91 70 00 32 et 91 61 10 82

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 Paris
Siret: 51027317 A R. C. Paris
Commission paritaire: N° 55935

Armenian Airlines

REPRESENTATION GENERALE POUR L'EUROPE
19, RUE St. ROCH — 75001 PARIS

NOTE D'INFORMATION

Au mois de Septembre 1996, notre compagnie opérera, sous réserve d'approbation gouvernementale, cinq vols suplémentaires à destination de Erevan.

Dates	:	Les lundis 2, 9, 16, 23 et 30 septembre		
Horaires	:	Erevan Paris	R3 4041	12H00 14H45
	:	Paris Erevan	R3 4042	17H00 / 23H30
Type d'avion	:	Tupolev 154		

Pour vos réservations ou toutes autres informations, n'hésitez pas à nous contacter
Tél (1) 42 96 10 10
Fax (1) 42 96 18 77

ՈՒՐԲԱԹ
ՕԳՈՍՏՈՍ 30
VENDREDI
30 AOUT
1996

LE NUMERO : 5,00 F.

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1925-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE-FONDE EN 1925
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL : 47. 70. 86. 60 — TELEX : HARATCH 280 868 F
— FAX : 48. 00. 06. 70 —
C.C.P. PARIS 15069-82 E

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 1.100 Ֆ. – Վեցամսեայ : 560 Ֆ.
Արտասահման : Տար. 1.400 Ֆ. (ամէնօրեայ առաքում)
1.250 Ֆ. (շաբաթական առաքում) – Հատը : 5,00 Ֆ.

...ՐԴ ՏԱՐԻ - ԹԻՒ 18.928

Fondateur SCHAVARCH MISSAKIAN

72e ANNEE — N° 18.928

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

...ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՇԻՐԱՔ ԵՒ ԺԻՒՓԷ, Օգոստոս 28-ին, ...նացին համոզել հանրային կարծիքը որ ...մէն ինչ այնքան գէշ չըն՚թանար: Շիրաք ...վամաւոր լաւատեսութիւն» մը կը քարո... որ, ըստ իրեն, եռանդի եւ նուաճումի ...րամադրութեան կ՚առաջնորդէ: Իր նա...խարարապետը նուազ լաւատես է, գի...ակից է որ մթնոլորտը լարուած է, դըժ...ուարութիւնները բազմաթիւ եւ ուրքան ալ ...է զարկ տալ սպառումի, տիրող տագ...պը թոյլ չի տար: Սենտիքաները ար...ն կազմուպատրաստ են ոչ միայն ցոյցե... համար, այլեւ, ինչ որ աւելի մտահոգիչ ...գործադուլներու: Ասոնց առաջինը կը ...երբերի կրթական մարզին: Դեռ կայ ...րութիւն, ուր Գոնդոլթան նոյնիսկ ա...պստամբութեան կոչ կ՚ընէ իր թերթին ...: Աւելի չարթու ալ նախատեսած էր ...իւփէի անկումը զօրաւոր հարցին ...պակցութեամբ:

ՓԱՐԻԶԻ ՄԷՋ, Օգոստոս 28-ին, նոր ցոյց ...էր եղաւ առանց թուղթի Աֆրիկեցիներու ...նպաստ: Ըստ ոստիկանութեան 11 հա...զար էր ցուցարարներու թիւը եւ 15 հա...զար ըստ կազմակերպիչներուն: Տողան...ցեցին Ռեփիւպլիքի Հրապարակէն Ստա...լինկրատ, մինչ նոյն ժամուն (19.15) ...կէօլի զինուորական օդակայանէն նոր ...թռիչք օդանաւ մը կը մեկնէր Աֆրիկե...ցիներ վերադարձնելով իրենց երկիրը: ...կառավարութիւն կը պարզուէր որ թիւրիմա...ցութիւններ ալ պատահած են եւ օդանաւ ...դրուած են անձեր որոնք պէտք չէ ...տաքսուէին: Սկիզբէն, կառավարու...թիւնը միայն ձախաւեր գործունէութիւն ...ցոյց կուտայ եւ կը յաջողի լայնածա...ւալ շարժում մը ստեղծել իրեն դէմ: Օ...գոստոս 28-ի ցոյցին կը մասնակցէին Ալէն ...Քրիվին (Յեղափոխական Համայնավար ...), Տոմինիք Վուանէ (Կանաչ), Գաբ...րիէլ Թասքա, Մարթին Օպրի (Ընկերվա...րական), Ժ. Կայօ, Լ. Շվարցընպերկ, ...Մարինա Վլատի, Միու-Միու եւայլն, եւ...այլն: Ցոյցեր եղան նաեւ Մարսէյլ (2000 ...հոգի), Պորտօ, Լիլ, Փուաթիէ, Սթրազ...պուրկ, Կրընոպլ, Թուլոն:

ԱՆԳԱՐԱՅԻ ՄԷՋ, Օգոստոս 27-ին ստո...րագրուած է զինուորական թէքնոլոժիի ...պաշտպանութեան մարզին վերաբերող ...համագործակցութեան նախատեսուած համա...ձայնագիրը Թուրքիոյ եւ Իսրայէլի միջեւ: ...Ստորագրողները եղած են Իսրայէլի ...պաշտպանութեան նախարարութեան ընդ...հանուր տնօրէնը՝ Իվրի եւ Թուրքիոյ նոյն ...նախարարութեան ենթանախարարը՝ զօ...րավար Թունճէր Գըլընճ: Ասիկա երկրորդ ...համաձայնութիւնն է երկու երկիրնե...րու միջեւ, տարւոյն սկիզբէն ի վեր: ...Փետրուարին ստորագրուած համաձայ...նագիրը կը վերաբերէր խօսակցելու օդա...չուներու մարզումին թրքական օդային ...տարածութեան մէջ: Անգամ մը եւս Իրան ...եւ արաբական այլ երկիրներ, որոնց կար...գին Սուրիա կը բողոքեն այս գործակ...ցութեան դէմ, ամբաստանելով Թուր...քիան որ Իսրայէլցիներու շահերուն կը ...ծառայէ ի վնաս Արաբներուն:

ԱՐԱՖԱԹ ընդհանուր գործադուլի կոչ ...ըրաւ, Հինգշաբթի, Օգոստոս 29-ի համար ...եւ Ուրբաթ օրուան աղօթքին համար ալ, ...հրաւիրեց բոլոր մահմետական հաւա...տացեալները, պաղեստինցի կամ ոչ, որ ...Երուսաղէմ երթան, մզկիթներու հրապա...րակը: Արաֆաթ «պատերազմական յայ... տարարութիւն» որակեց Նեթանիահուի որոշումը, նոր գաղութներ հաստատելու Այսորդորդանան: Այս ազդարարութիւններով, Արաֆաթ Ինթիֆատայի (Քարամարտ) վերսկսումի սպառնալիքն է զոր կ՚ընէ: Աղօթքին հրաւէրով ալ, կը մղէ իր ժողովուրդը որ խորտակէ Իսրայէլեան շրջափակումը. արդարեւ, բացի 30 հազար աշխատաւորներէ, Պաղեստինցիք չեն կրնար Երուսաղէմ մուտք գործել: Նեթանիահու հակադդեց եւ հաղորդեց որ հրեայ Պետութիւնը «խստութեամբ պիտի հակադդէ բիրտ ուժի որեւէ դրդումի»: Կը թելադրէ Արաֆաթին «որ խուսափի այնպիսի խօսքերէ որոնք չեն օժանդակեր դիւանագիտական գործընթացի յառաջընթացին»: Կը թուի որ, երբ Նեթանիահու նոր գաղութներ կ՚ուզէ հաստատել գրաւեալ հողերու վրայ, օժանդակած կ՚ըլլայ այդ գործընթացին:

ՍԹՈՔՀՈԼՄԻ ՄԷՋ, երկար բանակցութիւններէ ետք, կարելի եղած է հասարակաց գործունէութեան մը ծրագրին շուրջ համաձայնիլ, պայքարելու համար մանուկներու սեռային շահագործման դէմ: Յայտարարութիւնը կ՚ըսէ որ անհրաժեշտ է «պաշտպանել մանուկները, զանոնք զոհեր նկատել եւ չպատժել անոնց կիրարկելով պոռնկութեան կամ գաղթի դէմ օրէնքները»: Պելժիոյ Արտաքին նախարարը յայտարարած է թէ խորապէս ցնցուած է ի տես այդ մանուկներու անմեղութեան, բռնաբարուած եւ սպաննուած սեռային ապականած բարքերէ եւ շահու հրապոյրէն: Ընդունուած բանաձեւը իրաւական ոչ մէկ արժէք ունի, բայց տեսակ մը բարոյական յանձնառութիւն է պայքարելու համար մանուկներու շահագործման դէմ, գործունէութեան ծրագրով մը որ պէտք է կիրարկուի մինչեւ 2000 թուականը: Պետութիւնները յանձնառու են նաեւ կանխելու, տեղեկացնելու, դաստիարակելու մանուկները, ընտանիքները, հանրային կարծիքը: Այլ խօսքով, ըստ փաստաթուղթին չարաշրջութեան մարմնին նախագահին՝ «Պէտք է նախապատուութիւն տալ ազգային եւ միջազգային գործունէութեան մանուկներու սեռային շահագործման դէմ, արշաւանքներ տանիլ, զօրակոչի ենթարկել բոլոր ճիւղերը որոնք կրնան դեր մը խաղալ, օրէնքներ մշակել եւ գոյութիւն ունեցող օրէնքներն ալ յարմարցնել այս

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԱՅ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ

Կիրակի, Սեպտեմբեր 1-ին, տեղի կ՚ունենայ Լիբանանի երեսփոխանական ընտրութիւններուն երկրորդ փուլը: Հայկական երեք կուսակցութիւնները՝ Հ.Յ.Դ., Ռ.Ա.Կ., Ս.Դ.Հ. և Հայ Բարեգործական Ընդհանուր Միութիւն համաձայնած են թեկնածուներու անուններու շուրջ: Թեկնածուներ որոնք կը ներկայանան վարչապետ Ռաֆիք Հարիրիի ցանկին վրայ:

Այդ անուններն են.

Մէթր Խաչիկ Պապիկեան (Հայ առաքելական), Յակոբ Տէմիրճեան (Հայ առաքելական), Տոքթոր Եղիկ Ճէրէճեան (Հայ առաքելական), Մէթր Յակոբ Զուխատարեան (Հայ կաթողիկէ) եւ Աբրահամ Տէտէեան (Աւետարանական):

Ինչպէս ծանօթ է, Օգս. 18-ին կ՚ընտրուէր արդէն առաջին Հայ երեսփոխան մը յանձին՝ Տոքթոր Սեպուհ Յովնանեանի: Վերոյիշեալներէն ետք, Հայերը ունին նաեւ մէկ աթոռ իրաւունք (Այնճար - Զահլէի շրջան): Այդ ընտրութիւնն ալ տեղի կ՚ունենայ Սեպտեմբեր 15-ին:

ԵՐԵՒԱՆ ՀԵՌԱՏԻՊ ՓԱՐԻԶ

«ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Օգոստոս 28 / 29)

ԱՇՈՒՆԸ ՀՈՒՆՁՔԻ ՇՐՋԱՆ Է

Նախատեսուած էր որ այս տարի 290 հազար թոն կ՚ըլլայ հացահատիկի բերքը. սակայն բերքահաւաքի ընթացքը ցոյց կուտայ որ ան կը հասնի 300 - 310 հազար թոնի, անցեալ տարուան 262 հազարի փոխարէն: Հացահատիկի ցանք կատարուած է շուրջ 120 հազար հեկտար տարածութեան վրայ:

***

200 հազար թոնով բարձր ցուցանիշի զգաստ կը նկատուի խաղողի բերքն ալ: Աշխատանք կը տարուի քաղուած խաղողը մթերելու եւ վերամշակելու յարմարագոյն ձեւով:

***

ՎԵՐԱՄՈՒՏԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Ուսումնական նոր տարուան պատրաստուելու նպատակով դպրոցներու վերանորոգման համար նախատեսուած 1.3 միլիառ դրամէն 300 հազարը ծախսուած է. նորոգուած դպրոցներէն 12-ը Երեւան կը գտնուին: Այս վերամուտին կը սկսին գործել ամերիկացի բարերարներու կողմէ կառուցուած Ստեփանաւանի եւ Համաշխարհային դրամատան միջոցով շինուած Սպիտակի դպրոցները: Իսկ Գիւմրիի Փրբանսական վարժարանը իր սաները կ՚ընդունի տարեվերջին:

***

ՎԼ. ՅԱԿՈԲԵԱՆ
ՃԱՏՐԱԿԻ ԱԽՈՅԵԱՆ

Ճատրակի Հայաստանի ախոյեան Վլադիմիր Յակոբեան շահած է Պէրլինի մըր-

(Շար.ը կարդալ Դ. էջ)

(Շար.ը կարդալ Դ. էջ)

հարցին որպէսզի խակապէս գործադրելի ըլլան»:

ՌՈՒՍԵՐԸ ԵՒ ՉԷՉԷՆՆԵՐԸ կը քաշուին Գրոզնիէն, 2 կողմերն ալ «յաղթանակ»ի մասին խօսելով: Չէչէնները «Ալլահ աքպար» կը պոռան, աւելցնելով՝ «կը մեկնինք բայց՝ յաղթական»: Չէչէն մարտիկները պէտք է ընկերանան քաշուող ռուս զինուորներուն որպէսզի միջադէպ չպատահի: Ըստ ստորագրուած համաձայնագրին, մինչեւ Կիրակի (Սեպտեմբեր 1) երկու կողմերն ալ պէտք է քաղաքը պարպեն:

ԹՈՒՐՔԻՈՅ վարչապետը՝ Ն. Էրպաքան կ՚ուզէ տնտեսական յարաբերութիւններ վերահաստատել Լիբիոյ հետ: Այս յարաբերութիւնները խզուած էին որովհետեւ Լիբիա մեծ պարտքեր ունի թրքական հաստատութիւններու նկատմամբ, տարիներէ ի վեր: Կը կարծուի որ Էրպաքանի այս քայլն ալ (Իրանէն ետք) դժգոհ պիտի ձգէ Ուաշինկթընը, բայց կը թուի որ Թուրք վարչապետը շատ մտահոգ չէ այդ առընչութեամբ:

ՕՐՈՒԱՆ ՀԱՐՑԵՐ

ԹՈՒՐՔԻԱ - ԻՐԱՆ ՄԵՐՁԵՑՈՒՄԻՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՐՁԱԳԱՆԳՆԵՐԸ

Լոնտոնի «Թայմզ» օրաթերթը անդրադառնալով Թուրքիոյ վարչապետին Օգոստոս 10 - 12-ի Իրան այցելութեան ու մանաւանդ երկու երկիրներուն միջեւ 23 միլիառ տոլարնոց կազի համաձայնագրին ստորագրութեան, կը թելադրէ որ Արեւմուտքը խոհեմութիւնը ունենայ հապճեպ հակազդեցութիւններ ցոյց չտալու, քանի որ Թուրքիա ՕԹԱՆ-ի կարեւոր անդամներէն մէկն է: Այդ համաձայնագրին ստորագրութիւնը որոշ ձեւով մարտահրաւէր մըն է Ուաշինկթընի որ Ամաթօ կոչուած օրէնքով որոշ պատժամիջոցներ կը նախատեսէ այն ձեռնարկութիւններուն որոնք 40 միլիոն տոլարէն աւելի արժող ներդրումներ կ՚ընեն Թեհրանի քարիւղի մարզին: Այս մարտահրաւէրին բնոյթը աւելի կը շեշտուի եթէ նկատի առնուի որ Միացեալ-Նահանգներ գրեթէ Իրանի պատերազմ հռչակելու դիրքին վրայ կը գտնուին:

Ճիշդ է որ Էրպաքանի այս քայլը անտարբեր նկատել ալ դժուար է: Ան միշտ յայտնած էր թէ կ՚ուզէ մահմետական իր դրացիներուն հետ յարաբերութիւնները սերտացնել: Ասիկա վախ ներշնչած էր Արեւմուտքցիներուն որ Անգարա կրնայ կրկին դառնալ դէպի Օսմանեան կայսրութեան արեւելեան շրջանները կազմող երկիրները եւ անփութութեան մատնել Արեւմուտքի իր դաշնակիցները. սակայն Էրպաքան հակառակ ՕԹԱՆ-ի հանդէպ իր յայտնի մերժողական կեցուածքին, գիտցաւ վարպետ ճապկումով մը նաեւ երկարաձգել դաշնակից ուժերու հիւսիս-արեւելեան Անատոլուի զինուորական կայանին գործունէութեան պայմանաժամը: Այդ խարիսխը բազմազգ ուժերու կարելիութիւն կուտայ հսկակշռի տակ պահելու Իրաքի հիւսիսային մասը: Ան հակառակ նախապէս ինք ալ դէմ արտայայտուած ըլլալուն Անգարա - Թել Աւիւ զինուորական համաձայնութեան, տեղի չտուաւ զայն չեղեալ նկատելու պնդումներուն:

«Թայմզ»ի յօդուածագրին տեսակէտը այն է որ Թուրքիա ծանր վնաս կրեց Իրաքի պարտադրուած շրջափակումէն եւ Արեւմուտքը վնասը հատուցանելու խոստումները չյարգեց: Կայ նաեւ շուկայի հարց մը: Թուրքիոյ հարաւային դրացիները եւ միջին ասիական երկիրները արտածումի շատ հմայիչ շուկաներ են Թուրքիոյ համար եւ որոնք կ՚ուզեն թրքական ապրանք ներածել, հակառակն ըլլալով Եւրոպայի Միութեան որ միշտ կը բախի Յունաստանի խոչընդոտումներուն:

Անգլիական թերթը դիտել կուտայ որ իր կամքը թելադրելու փորձով Թուրքիոյ ու ջանալով արդէն ըլլալ մահմետական անցեալը վերադանելու անոր քայլերուն, Արեւմուտքը վտանգաւոր ընթացք մը ցոյց կուտայ: Ցատկապէս Միացեալ - Նահանգները պէտք է խոհեմութեամբ վարուին կազի համաձայնագրի հարցին մէջ, որովհետեւ աշխարհաքաղաքական նման կարեւորութիւն ներկայացնող դաշնակիցի մը հետ յարաբերութիւններու խանգարում մը կրնայ վտանգել ՕԹԱՆ-ի ներքին կառոյցը: Այսուհանդերձ, Արեւմուտքը կրնայ ազդարարութիւն մը ուղղել Էրպաքանի, ըսելով որ Իրանի եւ նաեւ Իրաքի շատ սերտ մօտեցում մը վանող պիտակ մը կ՚ըլլայ ներդրումներու արեւմուտքցի տէրերուն. իսկ անոնց գլխցած գումարները Թուրքիա կրնայ անպայման ձեռք չձգել նոր կազատարէն:

ՅՈՒՇԵՐ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԽՈՆԱՐՀ ՀԵՐՈՍԻ ՄԸ, ԻՐ ՊԶՏԻԿ ԼՈՒՍԱՐԱՐԻՆ ԵՒ ԱՅՆ ՕՐԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ

Ես ալ զարմա՛յ իմ բուժինս – Ս. Նշանի դասերս, դպրաց դասի փոքրերու պատասխանատուութիւնս, հանդէսներու կազմակերպումը՝ եւայլն, եւայլն: Ասոր վրայ նոր գործեր ալ աւելցան, - զրուցարանի կազմակերպումը՝ ի հանդէս Պր. Տարօնեանին, [illegible] ... իմ կողմէ: Ցետոյ Բաբգէն Սիւնի պատանեկան [illegible]

Մեր կեանքը ցնցող րոպէներ ալ կային այդ օրերուն: [illegible] 1947 Օգոստոսին: Կը յիշեմ՝ Հայկազեան [illegible] 7 - 8 [illegible] 44 տարեկանին: [illegible]

Աւելի յետոյ, [illegible] պէտք ունեցէք կը կոչէք՝ Պր. Պարաքերին Հ. Հայրապետը, մեր երգչախումբը կը ստեղծուէր կը հնչէր. Ըստ հնդկահայերու ըմպանական վիճակին ատարին, երկու դասարանի վրայ, երգեցողութեան կը դէմ, բառերը եւ ընթերցումը: Ամէնէն հանդէսները էւր ... [illegible] ... ալ հաւաքներու պարագային դպրերուն թիւը կ'աւելնար, ըստ կամս: Մենք, Ս. Նշանցիներս, Պուրճ Համուտցիներուն պէս ծաղիկ չէինք բռներ: Իբրեւ թէ կ'երգէինք կամ ալ Պր. Դպրապետին եւ Պր. Սարգիսին բեկբեկուն ձայներուն հետ թեմ կը բռնէինք, երբոր անոնք անտարբեր, յոգնած, պաղ գոյներով կ'երգէին «Ճանապարհ»ը, որ արդէն Մեծ Պահքին ալ չէինք սիրեր: Մենք կ'երգէինք «Աշխարհ Ամենայն»ը, մէյ մըն ալ «Անկանիմք Առաջի Քո Տէր»ը: Համեստ տըղոցս համար արհամարհելի գումար չէր մէկ ոսկին զոր կը ստանայինք իբրեւ մեր բաժին պատուագինը: Եղած են դէպքեր, երբ մէկի տեղ երկու ոսկի ստացեր էինք, իսկ եղակի մնացեր էր Ալֆա հաստատութեան տնօրէն Նշան Տէմիրճեանի մահը, որովհետեւ այդ օր մեզմէ ամէն մէկուն համար տուեր էին երեք ոսկի: Կրնա՞ք երեւակայել ի՛նչ եկամուտ էր ատիկա, երբ լման ֆելեֆիլ մը կ'արժէր 25 ղրուշ: Անցեալները, Փարիզի մէջ, ընթրիքի մըն էինք նստած Նշան Տէմիրճեանի ընտանիքին հետ եւ առաջին անգամուան համար կը հանդիպէի Տիկին Նազելի Տէմիրճեանին, քիչ մնաց պիտի յայտնէի այդ երեք ոսկիին մասին, ամչցայ:

Ուրիշ մահ մը սակայն, այդ տարիներուն խորապէս ցնցեց զիս, եւ իմ ընկերներէն շատերուն տուաւ առաջին զգացումը մահուան մօտիկութեան եւ անմիջականութեան: Ատկէ առաջ՝ մահը մեզի համար ազգային թաղում էր - Ազրալեան, Շանթ կամ նշանաւոր Հայոց թաղում էր - Գասպար Իփէկեան, Նշան Տէմիրճեան: Յետոյ՝ մահը անծանօթ դէմք մըն էր, զոր կը տեսնէինք իբրեւ փոքրիկ դպիրներ՝ երբ տաներէց քահանային եւ Պր. Հայրապետին հետ կ'երթայինք այս կամ այն տունը եւ կը տեսնէինք հանգուցեալ մայրիկ մը՝ երբեմն թաշկինակով կզակն ու գլուխը կապուած: Այս մահերը չէին ցուցներ մեզ, քիչ մը կը վախցնէին. այդքա՛ն: Բայց 1953-ին, մեր ընկերներէն մէկը մեռաւ: Օրը գամուած է մտքիս մէջ: Յունիս 16: Արդեօք ամավերջի քննութեանց արդիւնքնե՞րը յայտարարուած էին եւ Վազգէնը, որովհետեւ դարձեալ դասարանը պիտի կրկնէր, հօրմէն ծե՞ծ էր կերած ու տունէն հեռացած, Պէյրութի անձնասպաններու սիրական վայրը Ռաուշէ գացած եւ այնտեղէն ինքզինք ջուրը նետած: Երբեք պիտի չգիտնանք: Բայց բոլորս ողբացինք Վազգէն Պօղոսեանի մահը: 16 տարեկան էր. մեզի բաղդատած՝ հսկայ էր, կաշմբուռն բառը կարծես ստեղծուած էր իրեն համար: Մեզմէ մէկ - երկու դասարան վեր էր եւ, բոլոր հսկաներուն նման, փափուկ սիրտ ունէր: Մայրը երբեք չեմ յիշեր, բայց հայրը՝ կաղ մարդ մը, որ գաւազանին յենած կը քալէր, սիրելի տպաւորութիւն չէր թողուր մեր վրայ: Գիտէինք որ շատ կը ծեծէր Վազգէնը, Կ'ապրէին Արլըքէնի դարձուածքի դիմացը, աստիճաններէն վեր, մէկ յարկանի շէնքի մը բակին մէջ, իրենց եւ ալ՝ Տէր Խորէնին բնակարանն էր:

Վազգէն ամբողջ ֆիզիքական ուժ էր եւ դասերը սորվելու տաղտուկը կը խնայէր ինքն իրեն: Մարզանքի օրերուն՝ Վազգէն վազքի ընթացքին տարբերային թափ մը կը ստանար եւ ոչինչ կրնար զինք ետ կեցնել արագասոյր վազքէ մը: Շատեր կը յիշեն այն օրը՝ երբ Վազգէն, Ս. Նշանի ճաշարանի պատէն՝ եկեղեցւոյ արեւելքը, ձիթենիներուն սրտը ետ - դարձ վազք մը ունէր. այնքան ցնցեց այդ պատը, որ գըբեթէ փուլ եկաւ եւ մեզի տուաւ ճաշակը, թէ ինչե՛ր կրնային ըսել հայ թագաւորները՝ Հռոմի մէջ, երբ ձիերու եւ առիւծներու հետ մրցումի կ'ելլէին: Վազգէն մեր հերոսն էր:

Յունիսեան տաք օր մըն էր, երբ իր մահուան լուրը առինք. լացինք բոլորս: Եւ սորվեցանք նաեւ, որ անձնասպանին համար եկեղեցական թաղում չի կատարուիր: Եւ այդպէս էր որ, Շաբաթ օր մը, կէսօրէ յետոյ, Ֆրըն Շըպէքի գերեզմանատան մէջ հաւաքուած էինք հարիւրեակ մը պատանիներ - դասարանցիներ, դպրոցակիցներ, հետաքրքիրներ: Հայրն ալ, կը յիշեմ, նորաբաց գերեզմանին առջեւ, մի՛շտ իր գաւազանով, բայց կարծես փըշրուած հոգիով եւ արցունքոտ աչքերով: Հոն էր Վազգէնը, վերջապէս խաղաղած, վերջապէս պարտուած: Ու հիմա կը յիշեմ այն երգերը, որոնք աղօթքի ու շարականի փոխարէն երգեցինք: Ո՞վ էր ընտրած այդ տրտում ու սրտաճմլիկ երգերը: Արդեօք Պր. Կարօ Ալեքսանեանը, Յակոբ Պօղոսեանի բարեկամ, քաղաքթըր աշխատող այդ քաղցր մարդը, որ մեզի սորվեցուցած էր «Հայրենիք» եւ «Յուսաբեր» կարդալ ժողովրդային Տան մուտքին, աջ կողմի նեղ սենեակին մէջ. բայց ի՛նչ տարբերութիւն ... մեր պատանի թոքերէն կը բարձրանար Ջիւանիին երգը... «բարի, գեղեցիկ, առաքինի ընկերը մարդու...»: Վազգէնը բարի էր եւ գեղեցիկ: Հապա մի՞ւս երգը, որ կարծես իրեն համար էր գրուած ... «Ազուլիսցի քաջ պատանի, մահուանդ լուրը ո՞վ թող տանի...»

Ո՞ւրտեղացի էր Վազգէնը, ուրտեղէ՞ն էին իր հայրն ու մայրը, երբեք պիտի չգիտնամ: Բայց այդ պահուն՝ Ազուլիսցի էր ան, քաջ պատանի էր ան եւ անդոհանք մը կը պատէր մեզ, թէ իր մահուան լուրը ո՞վ պիտի պատմէր...: Եւ հիմա, ամէն անգամ որ այս երգը երգուի Ամերիկայի մեր սրահներուն մէջ, պարային կշռոյթով եւ ճազի համով, ընդվզում մը կ'աճի մէջս, հոգիս կը բողոքէ յեղափոխական այս երգի բռնաբարումին ի լուր: Պարերգ չէ ան, Վազգէնին երգն է, Ազուլիսցի քաջ պատանիին մահուան շարականն էր այդ:

Այսպէս անցաւ իմ համեստ մանկութիւնս Ս. Նշանի շրջապատին մէջ, ուր աւելի համեստ ականատես մը եղայ՝ քան աշխոյժ դերակատար մը եւ ուր սորվեցայ եկեղեցւոյ սէրը, կազմակերպութեան արժէքը, Հայ ըլլալու պարզ հպարտութիւնը: Եւ օր մըն ալ գացի Անթիլիաս: 1957-ի Հոկտեմբեր 11-ին մտայ Դպրեվանք եւ կ'երեւի, շուտով փայլեցայ լուսարարական իմ գիտութեամբս եւ փորձառութեամբս: Այն ատեն վանքին մէջ ալ աղուոր սովորութիւն մը ունէինք: Ամէն մէկ աշակերտ պաշտօն մը կը ստանձնէր, ըստ իր կարողութեան, ըստ իր հետաքրքրութեան, կամ ալ՝ տեղ մը լեցնելու համար: Մէկը կ'ըլլար դեղատան պատասխանատու, ուրիշ մը զանգակահար, ուրիշ մը գրենական պիտոյից պատասխանատու, տեսչարանի սրճեփ, ուսուցչարանի սըրճեփ, ննջարանի հսկիչ, եւայլն, եւայլն: Առաջին եռամսեակին չեմ յիշեր ինչ պաշտօն տուեր էին ինծի: Բայց 1958 Յունուարին սկիզբը, կ'երեւի Արտաւազդ Սրբազանը յաջողած էր տեսնել իմ forté-ս եւ զիս կոչեցին լուսարարի պաշտօնին: Լաւ էր: Փոխանակ միշտ Պիքֆայա մնալու, Անթիլիաս պիտի երթայի - գայի, տօնական օրերուն խորան շտկէի, աւագ շաբթուան ընթացքին, Ս. Նշանի մէջ սորվածներս գործի դնէի, աւելի աղուոր գերեզման շինէի Յիսուսի համար: Աշտանակներ, անոյշ խունկ, սպիտակ դաստառակ, խաչի բռնիչ, եւայլն, եւայլն: Ոգեւին գործի լծուեր էի եւ կանճարանէն Մայր Տաճար մազոգի պէս կը բանէի՝ ամէն բան պատրաստ ընելու մղումով,

Բակին մէջն եմ. Մայր տաճարի դռնէն քանի մը քայլ անդին յանկարծ ձայն մը կը լսեմ. «Հրա՛յր»: Կը դառնամ: Ի՛նքն է: Զարեհ Վեհափառը: Ինք չի գիտեր, որ իրեն համար 1956-ին կռուեր եմ, ցոյցերու մասնակցեր եմ, ընտրութեան օրը ժամը չորսին Ս. Նշանէն Լիպոյին հետ հեւ ի հեւ վանք հասեր եմ, զինք պաշտեր եմ իբրեւ Կաթողիկոս. ինք չի գիտեր. Բայց հիմա զիս կը ճանչնա՛յ ... անունս գիտէ, ինծի Հրայր կանչեց:

Մօտեցայ, լսեցի եւ կատարեցի իր պատգամը, Տարիներու պատրաստութիւնս, իբրեւ պզտիկ լուսարար, արդիւնք տուեր էր. խոնարհ հերոսը՝ որ Ս. Նշանի լուսարարն էր, Պր. Հայրապետը իր դասերը լա՛ւ էր տուեր ինծի: Եւ հիմա, Զարեհ Կաթողիկոս այդ պզտիկ լուսարարին թելադրութիւններ կ'ընէր Աւագ Ուրբաթ օրուան ծիսական կարգադրութեանց համար:

Հինգ տարիներ յետոյ Զարեհ Վեհափառ վախճանեցաւ ու երկնքի մէջ է հիմա: Երանի այն օրուան, երբ, մեղա՛յ, Տէր, յաւակնութեանս համար, երկնքի մէջ տեղ մը, Վեհափառը զիս պիտի տեսնէ ու կանչէ՝ «Հրա՛յր» կամ ալ գուցէ «Հայր Մեսրոպ!», երկնքի մէջ ալ երջանկայիշներէն մին պիտի ըլլամ ես:

Գալով խոնարհ հերոսին, Պր. Հայրապետին՝ ան ալ մեզմէ շատերուն պէս Ամերիկա եկաւ: Չէր կրնար չգալ, ընտանիքը այստեղ էր փոխադրուած. ատեն մը Նիւ - Եորք ապրեցաւ, յետոյ ալ Լոս Անճըլըս գնաց: Օր մըն ալ լուր առինք, որ մահացեր էր:

Վարձքդ կատար, սիրելի ուսուցիչ:

Հայրապետ չէր բառին կաթողիկոսական չքեղ իմաստով, բայց մեզմէ շատերուն համար եղաւ հայր, եղաւ պետ, եղաւ մեր անմոռանալի հայրապետը, Ս. Նշանի Պր. Հայրապետը:

(Շար. 3 եւ վերջ)

1996 Յուլիս 31

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱՐՁԱԳԱՆԳՆԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖՈՒԹՊՈԼԷՆ

1996 տարին կարեւոր տեղ մը պիտի գըրաւէ ֆութպոլի համաշխարհային պատմութեան մէջ:

Ցիշենք՝ իր իսկ հողին վրայ, իր բազմահազար, աղմկող համակիրներուն առջեւ, անգլիական խումբը չկրցաւ, Եւրոպայի ախոյենութեան ընթացքին վերագտնել գերակշիռ դիրք մը՝ որ իրն էր քանի մը տասնեակ տարիներ առաջ: Անգլիա պարտուեցաւ իր իսկ հնարած մարզաձեւին մէջ:

Գերմանացիներն են որ պարտադրեցին իրենց տիրապետութիւնը անգամ մը եւս եւ ցոյց տուին որ, եթէ իրենց խումբը երբեմն տկար ելոյթներ կ'ունենայ, իրենք գիտեն սակայն միշտ պատրաստուիլ որոշ նպատակի մը համար եւ կը հասնին իրենց նպատակին՝ յաղթանակի: Վերջին յիսնամեակին ընթացքին, Գերմանիա եղած է աշխարհի ախոյեան երեք անգամներ եւ երեք՝ Եւրոպայի ախոյեան:

***

Ուրիշ նշելի արդիւնք մը 1996-ի համար: Աթլանթայի Ողիմպիականին, ափրիկեան երկիր մըն էր որ շահեցաւ ոսկի մրցանակը, աւարտականին Նիժէրիա յաղթեց Արժանթինի՝ 3 - 2: Անսպասելի յաղթանակ մը Արժանթինի վրայ որ երկար տարիներու համբաւ ունի ֆութպոլի աշխարհին մէջ:

Ճշդենք՝ Ողիմպիականի մրցաշարքը վերապահուած է մինչեւ 23 տարեկան խաղացողներու. արտօնուած է ներառնել միայն երեք աւելի տարիքոտներ: Ինչ որ ալ ըլլայ, Նիժերիոյ յաջողութիւնը փաստ է ափրիկեան մարզիկներու յառաջդիմութեանը: Ճիշդ է որ, սեւամորթ լաւագոյն խաղացողները պայմանագրուած են եւրոպական ակումբներու հետ, եւ անոնց մէջն է որ կը կատարելագործեն ու ֆութպոլի մարզաձեւին կը յարմարցնեն իրենց բնատուր ձիրքերը՝ ճկունութիւն, արագութիւն:

Անցեալ մրցաշրջանին նշելի դէպք մը նաեւ Ֆրանսահայերու համար. Հայաստանի Ազգային, ներկայացուցչական խումբը, Ֆրանսայի համապատասխան կազմին դէմ, ծիծաղելի չեղաւ (2 - 0):

***

Նոր մրցաշրջանի մը մէջ մտած ենք արդէն՝ 1996 - 1997: Եւրոպայի մէջ ակումբային ազգային ախոյենական խաղերը վերսկսած են:

Ասոնցմէ դուրս 1997-ը հետաքրքրաշարժ պիտի ըլլայ, որովհետեւ, յառաջիկայ շաբաթներու ընթացքին, օրակարգի վրայ պիտի ըլլան աշխարհի ախոյենութեան ի հաշիւ զտողական մրցումները, ազգային խումբերու միջեւ:

Ծանօթ է որ այս մրցաշարքին աւարտական շրջանը տեղի պիտի ունենայ 1998-ին Ֆրանսայի մէջ: Այս առթիւ, մասնաւոր, հսկայ տարողութեամբ մարզավայր մը շինուելու վրայ է Փարիզի մօտ:

Որովհետեւ Ֆրանսան է որ կը կազմակերպէ աշխարհի ախոյենութեան աւարտականը, իր խումբը զերծ է զտումներու մասնակցելու պարտադրանքէն: Կը մնէ ուղղակի 32 երկիրներու շարքին մէջ, որոնք պիտի պայքարին աւարտական հանգըրուանին, ի խնդիր աշխարհի ախոյեանի տիտղոսին:

Ասիկա անշուշտ առաւելութիւն մըն է, բայց ունի նաեւ իր վտանգաւոր կողմը: Ինչո՞ւ: Երբ իր ապագայ մրցակիցները, որակուելու համար աւարտականին, պայքար պիտի մղեն խիստ, յաճախ հաւասար մրցումներու մէջ եւ պիտի փարժուին դժուար հանդիպումներու, ֆրանսական խումբը պիտի կատարէ միայն բարեկամական մրցումներ. ասոնք սակայն, որքան ալ լուրջ ըլլան, չեն կրնար ունենալ ախոյենական խաղի մը տարողութիւնը, ուժգնութիւնը եւ չեն կրնար լաւագոյն կերպով սատարել խումբին դիմադրական ու յարձակողական կարողութիւններու մարզումին: Այդ պայմաններու տակ է որ Էմէ Ժաքէ, Ազգային կազմին պատասխանատու մարզիչը, պիտի ջանայ լաւ զատել եւ պատրաստել խաղացողները 1998-ի վճռական ժամադրութեան:

Այս առթիւ, Ֆրանսայի Ֆութպոլի Դաշնակցութիւնը պայմանագրուած է արդէն չորս մը օտար ազգային խումբերու հետ բարեկամական մրցումներու համար: Այդ չորսին մէջն է Թուրքիան: Հայաստանէն յետոյ՝ Թուրքիա...

Մրցման դաշտ նախատեսուած է Փարիզի Փարք - տէ - Փրէնսը, Հոկտեմբեր 9-ին: Անկէց առաջ, Ֆրանսա մրցած պիտի ըլլայ Օգոստոս 31-ին, Մեքսիքոյի հետ, նոյնպէս Փարիզի մէջ:

***

Բնականաբար, Հայաստան ալ կը մասնակցի աշխարհի ախոյենութեան զտողա.

...կան հանգրուանին: Պիտի պայքարի Թիւ 9 խմբակին մէջ՝ ուր կան «մեծեր»․ կայ մանաւանդ՝ Գերմանիան: Առաջին մրցումը՝ Հայաստան – Փորթուկալ՝ յայտագրուած Օգոստոս 31-ի Շաբաթ օրուան համար, Երեւանի մէջ: Խմբակին միւս մրցակիցները՝ Ալպանիա, Իրլանտա, Ուկրանիա:

Ցիշենք որ 172 ազգերու ներկայացուցչական կազմերը ճամբայ ելած են աւարտականին հասնելու յոյսերով:

Աւարտական հանգրուանը, Ֆրանսայի մէջ ուրեմն, 1998-ին (Յունիս 10 -- Յուլիս 12), մրցակցութեան մէջ պիտի դնէ 32 խումբեր: 32, առաջին անգամ ըլլալով, նախապէս 24 էր միայն:

Նկատի ունենալով Հայաստանի գլխաւոր մրցակիցներուն համբաւը Ֆութպոլի աշխարհին մէջ, դժուար է երեւակայել որ 32-էն մէկը ըլլայ հայկականը:

Վստահօրէն հասնելու համար հոն, պէտք է հանդիսանալ առաջին խմբակին մէջ, երթ ու դարձ մրցումներէ յետոյ: Այս գօտական հանգրուանին երկրորդ դասուողներն ալ կրնան յուսալ: Անոնց համար նախատեսուած է գօտական երկրորդ փուլ մը: Ի վերջոյ եւրոպական 15 խումբեր, ներառեալ Ֆրանսան, պիտի ընդունուին աւարտականին մէջ: Միւս երկրամասերուն բաժինները՝ Ափրիկէ 5, Ասիա 3, Կեդրոնական Ամերիկա 3, Հարաւային Ամերիկա 5, Ովկէանիա 1: Գումար՝ 32:

***

Զտողական մրցումները որոնք սկսած են արդէն զանազան երկրամասերու վրայ, անկասկած դժուար պիտի ըլլան, վտանգաւոր՝ շատերու համար: Հաւանական է որ ... երկիրներէն միայն Պրեքանի մը երկիրներ՝ որոնք համբաւած են ֆութպոլի պատմութեան մէջ, ... մնան աւարտականէն: Վտանգի տակ ... Զուիտ, Հոլանտա, Աւստրիա, մանաւանդ Անգլիա կամ Իտալիա՝ որոնք կը ...ունուին նոյն խմբակին մէջ:

Հարաւային Ամերիկայէն, ֆութպոլի ...արպետներու երկիրներէն, միայն Պրազիլեան վստահ է ներկայ ըլլալու Փարիզ, 1998-ին, քանի որ, իբրեւ տիտղոսակիր, ...րծ է գօտական մրցումներէ անցնելու ...խապայմաններէն: Յիշենք 1994-ին, Միացեալ Նահանգներու մէջ, Պրազիլի հասած առաջնութիւնը չորրորդ անգամ ըլլալով: Աւարտականին, կը յաղթէր Իտալիոյ, հաւասար խաղէ մը վերջ (0 - 0), ...պատ հարուածներու (փէնալթի) յաջողութեամբ՝ 4 - 3:

Աշխարհի ախոյենութիւնը, Ազգային խումբերու միջեւ, հիմնուած է 1930-ին Միջազգային Դաշնակցութեան այն ատենուան նախագահ ֆրանսացի՝ Ժիւլ Ռիմէի նախաձեռնութեամբ․ տեղի կ'ունենայ 4 տարին անգամ մը: Ընդհատուեցաւ պատերազմի տարիներուն: Ցառաջիկայինը, 1998-ին, 16-րդ մրցաշարքը պիտի ըլլայ: Յաղթած են՝ Պրազիլիա 4 անգամ, Իտալիա 3, Գերմանիա 3, Ուրուկուայ 2, Արժանթին 2 եւ Անգլիա 1 անգամ միայն: Ֆրանսան՝ բնաւ: Թերեւս՝ 1998-ին...

ՎԱՂԻՆԱԿ ՄԻՍՔՃԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ

ԳԻՒՂԱՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Երեւան այցելած է Գիւղատնտեսութեան զարգացման միջազգային Հիմնադրամի պատուիրակութիւնը, նպատակ ունենալով որոշ մարզերու մէջ գիւղատնտեսական բարեփոխումներու աջակցութեան ծրագիր պատրաստել: Ծրագիրը պիտի ներառնէ անասնապահութիւնը, բուսաբանութիւնը, ոռոգման համակարգերը, եւայլն:

***

ՍՊԱՆԴԻԱՐԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 125-ԱՄԵԱԿ

Ալ. Սպանդիարեանի ծննդեան 125-ամեակին նուիրուած է Եալթայի հայկ. եկեղեցիին մէջ Ուկրանիոյ առաջնորդական տեղապահ Նաթան Ծ. Վրդ. Յովհաննիսեանի մատուցած պատարագը: Երգահանին յիշատակին Ղրիմի մէջ կազմակերպած են մշակոյթի օրեր:

***

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԹԱՆԳԱՐԱՆ

Վեց տարուան անցեալ ունի Ճարտարապետութեան Ազգային Թանգարանը ուր այդ ժամանակի ընթացքին 80 հազարէ աւելի նիւթ հաւաքուած է: «Հայաստանի ճարտարապետութեան» ցուցահանդէսով հանդիսաւոր բացումը կատարուած է անոր ցուցասրահին: Ցուցադրուած են նաեւ միլանահայ բարերար Հրանտ Բամպակեանի նուիրած նիւթերը:

***

ԱՍԱԼԱ-ՅԻ ՆԱԽԿԻՆ ԱՆԴԱՄ ՄԸ ՍՊԱՆՆՈՒԱԾ

Օգոստոս 9-ին Երեւանի մէջ սպաննուած է ԱՍԱԼԱյի նախկին անդամ Աբրահամ Խամիսեան որ մէկուկէս տարի առաջ հաստատուած է Հայաստան ու հոն ամուսնացած: Անյայտ անձեր կրակած են իրեն երբ ան իջած է տան բակը: Մահացած է հիւանդանոցին մէջ, ըսելէ ետք թէ չէր ճանչնար կրակողները:

***

ՍՕՍԻՆԵՐՈՒ ՊՈՒՐԱԿԸ

Կովկասի ամենախոշոր սօսիի բնական պուրակը կը գտնուի Կապանի մէջ: Հոն կ'աճին քանի մը հազար սօսիներ որոնցմէ շատերը 200 - 250 տարեկան են, ունին 30 - 35 մեթր բարձրութիւն եւ երեք մեթր տրամագիծ: Պուրակը քարանձաւներով, լեռնային գետերով, կիրճերով, համեմատաբար մեղմ կլիմայով յարմար միջոց է երկրորդական փուաշխարհի մը պահպանումին: Հոն կ'աճին կովկասեան արմաւենին, սովորական նռնենին, եւայլն: Հարուստ է կենդանական աշխարհն ալ. հոն կ'ապրին արջու, այծի, աղուէսի, նապաստակի եւ թռչուններու տասնեակ տեսակներ:

– ԳԱՂՈՒԹԷ ԳԱՂՈՒԹ –

ՊԷՅՐՈՒԹԻ մէջ, Օգոստոս 11-ին յետ տարիներու անողոք հիւանդութեան, իր մահկանացուն կնքած է Յակոբ Իսկէնտէրեան, 66 տարեկանին: Վերջացնելէ ետք իր նախնական եւ երկրորդական ուսումը Պէյրութ, Յակոբ Իսկէնտէրեան համալսարանական շրջանը կատարած էր Պելժիա, ապա՝ հայագիտութիւն Վենետիկի Մխիթարեան Հայրերու մօտ: Լիբանան վերադարձին զանազան պաշտօններ վարած է կրթական մարզին մէջ: Եղած է տնօրէն Ս. Նշան միջնակարգ վարժարանին, ընդհանուր քննիչ ուսումնական խորհուրդին կապուած վարժարաններու, Սուրէն Խանամիրեան վարժարանի տնօրէն, գործօն անդամ Համազգայինի: Յուղարկաւորութիւնը կատարուած է Օգոստոս 13-ին Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ եւ մարմինը ամփոփուած Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

***

ԿԻՊՐՈՍԻ Թրոտոսի լեռներու Փլաթանիա գըոսավայրին մէջ, Յուլիս 29-ին տօնուած է Խանասորի արշաւանքի 99-րդ տարեդարձը եւ միաժամանակ ոգեկոչուած է Լիզպոնի հինգերու նահատակութեան 13-րդ տարելիցը: Յայտագիրը սկըսած է գործադրուիլ ցերեկին Վահան Մահտեսեանի բացման խօսքով: Հ. Յ. Դ. ԿԵՄ -ի կողմէ խօսք առած է Վիգէն Թելլալեան, օրուան գլխաւոր բանախօսը եղած է Գէորգ Մահտեսեան, իսկ փակման խօսքը ըրած է Հայաստանի նախկին Արտաքին Նախարար՝ Րաֆֆի Յովհաննիսեան: Գործադրուած է գեղարուեստական յայտագիր մը եւ խմբական երգերով ըստեղծուած է խանդավառ մթնոլորտ մը:

***

ԼՈՆՏՈՆԻ մէջ, Յուլիս 11-ին, իր մահկանացուն կնքած է Յակոբ Փալամուտեան: Ողբացեալը, բնիկ ատանացի, գաղթած էր Կիպրոս, ուր յաճախած է Մելգոնեան վարժարանը որ բացուած էր 1926-ին: Զայն աւարտելէ ետք 1931-ին, Մելգոնեանի մէջ որպէս ուսուցիչ պաշտօնավարած է մինչեւ 1935 եւ այդ տարիներուն Օ. Գուլանի եւ Լեւոն Արգարեանի հետ, հիմը դրած է Կիպրոսի 7-րդ արիական խումբին: 1965-էն, ընտանիքով կը հաստատուէր Լոնտոն ուր եւս հանրային գործունէութիւն ունեցած է: Անդամ եղած է եկեղեցական Խորհուրդին, ատենապետ Ս. Պետրոս Եկեղեցւոյ հոգաբարձութեան, փոխ - ատենապետ Լոնտոնի Հայ Մշակութային Միութեան եւ հիմնադիրներէն՝ Հայ Արուեստագէտներու Միութեան: Վազգէն Կաթողիկոս զինք վարձատրած էր Ներսէս Շնորհալի շքանշանով:

***

ԱԹԷՆՔԻ մէջ, Օգոստոս 10-ին, հանդիպում մը տեղի ունեցած է Արցախի Հանրապետութեան Նախագահ՝ Ռոպէր Քոչարեանի եւ Յունաստանի Հ. Յ. Դ. պատասխանատու մարմնոյ ընկերներուն միջեւ: Խօսակցութիւնները նիւթ ունեցած են Արցախի եւ Հայաստանի ներկայ իրավիճակը, Հ. Յ. Դ. -- Արցախ յարաբերութիւնները: Հանդիպման աւարտին Հ. Յ. Դ.-ի պատասխանատուները 50 հազար տոլարի գումար մը յանձնած են Ռ. Քոչարեանի, որպէս օժանդակութիւն Արցախի պետութեան հզօրացման եւ յանձնառու եղած են ապագային եւս բարոյապէս եւ նիւթապէս զօրավիգ կանգնելու Արցախին: Նախագահը, Օգոստոս 12-ին վերադարձած է Ստեփանակերտ:

***

ԹԵՀՐԱՆԻ Հայոց Թեմական Խորհուրդը կը հաղորդէ որ Անգլիոյ Գէմպրիճի Միջազգային Կենսագրական Կեդրոնը 1995 - 1996 թուականներու համար «տարուան մարդ» ընտրած է Թեհրանի թեմի առաջնորդը՝ Արտակ Արք. Մանուկեան:

***

ԹՈՐՈՆԹՈՅԻ Հայ Կեդրոնի Համազգայինի Յ. Մանուկեան գրադարանի սրահին մէջ, Օգոստոս 13-ին, տեղի ունեցած է Հայ Կեդրոնի երէցներու -- ընկերակցութեան կազմակերպած բժշկական -- առողջապահական դասախօսութիւնը: Բացման խօսքը արտասանած է վարչութեան ատենապետուհի Ռազմուհի Շահինեան: Օրուան դասախօսն էր տոքթոր Կարպիս Մերձանեան որու նիւթը եղած է «Առողջապահական գիտելիքներ»: Խօսք առած է նաեւ Հ. Յ. Դ. Սողոմոն Թէհլիրեան Կոմիտէի ներկայացուցիչ՝ Յակոբ Ճամպազեան: Դասախօսութեան աւարտին հիւրասիրութիւն մը տեղի ունեցած է:

ՀԱՄԲՈՅՐԸ

ՀԱՄԱՍՏԵՂ

Յաջորդ երեկոյ Կարօ Մարսուպ, եկեղեցիի կոչնակներէն դուրս կ'ելլէր՝ աղօթքի կատարումներ տակաւին շրթներուն ... ։ Ժամուորներ կը դանդաղէին ճամբան, իրարու վիճակը կը հարցնէին, սերմի, վարի, ջրտուքի մասին զրոյցներ կը փոխանակէին: Կարօ Մարսուպ արախչիի ...յրը ծալքին մէջ կը տեղաւորէր, երբ ...սաւ էքնոյենց հարսը, Վարդերը, որ ...օրուելէն կը քալէր: Այս անգամ երկուքի հիւսած հաստ մազերուն ծայրը կախած էր Պօյմադ: Կարօ Մարսուպ ա՛լ ...ցաւ համբերել, մանաւանդ էնպէս կը ...օրուէր, որ ետեւ ձգած վարսերը մէկ ...ալ կը զարնուէին մէկ ձախ:

- Շօրօրա, խանը՛մ հարս: Էդ քի՛չ է, ...չ տաշա շօրօրա, - վերջապէս խօսեցաւ Կարօ Մարսուպ, ինքզինք չկարենալ զըսպելով:

Հարս Վարդեր ետեւ նայեցաւ: Խօսքի տակ մնացող չէր, ի՛նչ հոգ, թէ ժամուորներ լսէին զինք:

- Քեզի ի՞նչ, խըռֆա՛ծ, - պոռաց զիլ ձայնով:

- Անամօթին բանը նայէ, հապա որո՞ւ ի՛նչ:

Կարօ Մարսուպին ձեռքերը ոտքերը ըսկըսան դողդղալ, աչքերն աւելի լայն բացուեցան:

- Քեզի համար Աւետարանի մօտենալ հարամ է, հարամ: Ես էդ տէրտէրին ի՛նչ ըսեմ որ...

Ժամուորները հաւաքուեցան:

- Դուն գնա, աղջկանդ փէշերուն տէր եղիր: Քեզի ի՛նչ իմ շօրօրալս: Հեղ մը ականջդ ետեւ ըրէ, թէ աղջկանդ վրայ ի՞նչ կը խօսին:

- Թըդ թըդ. հիմա որ հասնիմ՝ էդ լեզուդ քօքէն կը քաշեմ. անամօթի բանը նայէ:

- Է՛հ, դուն ի՛նչ գիտես, խըռֆա՛ծ: Աղջկանդ լաչակը ծառին գլուխն է ելեր: Գեղ մի գեղով գիտեն: Փէշերուն ճամբուն վրայ նշանածին հետ պաչպչուկին ձէնը գեղն է բռներ:

Կարօ Մարսուպ բոլորովին գունատեցաւ. ինքնիրմէն ելած՝ խենթի պէս կ'ուզէր հասնէր Վարդերին ու լեզուն տեղէն հանէր, եթէ դրացի Մարգարը վրայ չհասնէր:

- Դուն քեզի եկ, դրացի՛. կնկայ հետ չափուիլը լաւ բան չէ: Եկ երթանք, կնկայ հետ կռիւ ընելը ամօթ բան է:

- Մարգա՛ր, Կարօ Մարսուպը նամուսով ապրող մարդ է: Էդպէս անամօթին բերանը իյնալը ինծի համար մեռնիլ է, մեռնի՛լ:

Ժամուորները ափ ի բերան մնացին: Ո՞վ հարսն էր, որ լեզու պիտի թրջէր Կարօ Մարսուպին դէմ:

- Կ'ըսեն՝ երեսը եօթը ջրով են լուացեր. էդ լաչակին հի՞չ Աւետրնի հով չդիպաւ, - կը խօսէին կիներն ու Վարդերը կը մեղադրէին:

- Ո՞վ գիտէ, Աստուած ո՞ր արդարին երեսը կը նայի, որ էս գեղի գլխին քարէ կարկուտ չի մաղեր: Լսեցի՞ր ի՛նչ ըսաւ Կարօ Մարսուպի աղջկան մասին: Իրեն հալը չի նայիր որ էշիկը Նաճար Գրիգորն է մաչեցուցեր, - մէջ ինկաւ ուրիշ մը:

- Ի՛նչ մեղքս պահեմ, լեզուս վրայ չերթար, որ ըսեմ: Կարօ Մարսուպին աղջկան մասին ըսածը իրաւ է, իրաւ: Տեսնողներ կան, - վրայ տուաւ ուրիշ մը:

Կարօ Մարսուպ դրացի Մարգարին հետ տուն կը քալէր, ծեծուած աքաղաղի մը պէս չոնչլոտ: Անամօթ կնկան խօսքերը կ'ըսեն իր արիւնը ցամքեցուցին յանկարծ ու կեանքը քառսուն տարիով կարճեցուցին:

Նունիկ պաճին, խոնջան չոկած, անհամբեր իր էրկան կը սպասէր Մարուշն ալ, կիսապատին քով կեցած, հեռուի մթնշաղ դաշտերը կը դիտէր: Այդպէս, աչքերը յառած: Ախ, ի՛նչ լաւ էր մթընշաղը լուռ: Ինչքան կը բաղձար, որ մթութեան պէս անկողին մը ըլլար, խորունկ ու թաւշային, եւ թաղուէր, թաղուէր այդ թաւշային խորունկութեանը մէջ. այնքա՛ն յոգնած ու անհանգիստ կը զգար: Համբոյրէն ասդին դողցուկ մը կար վըրան, մարմինն ամբողջ կը կրկնձկտար ու աջ յօնքին վերջացած տեղը, վերջակէտներու նման, երկու փոքրիկ բշտիկներ դուրս եկած էին:

Կարօ Մարսուպ ներս մտաւ թէ չէ.

- Պէ մարդ, չէ՞ս ըսեր, թէ կերակուրի ատեն է, էսքան ատեն ի՛նչ կ'ընեն դըրսները:

Կարօ Մարսուպ լուռ նստաւ իր տեղը ու սկսաւ ծխամորճը քաշել:

Նունիկ զարմացած երեսը նայեցաւ: Ի՞նչ է պատահեր այս մարդուն. երեսը արժըգուներ, ժանիքը զարկեր, ուրկէ ձանձ մը իյնար քառսուն կտոր կ'ըլլար: Նունիկ ալ չհամարձակեցաւ խօսիլ: Էրիկը բարկացեր էր, շատ էր բարկացեր:

- Ախր ի՞նչ է պատահեր, - կը զարմանար Նունիկ:

Մարուշի սրտին մէջ, չգիտես ո՞ր տեղէն, արագ դիփրտուկ մը ինկաւ: Սիրտն իրեն կը կանչէր: Արդեօ՞ք ... Արդէն երեք օր էր, որ ինքզինք աւելի օտար ու յանցաւոր կը զգար, չակէ չկտակ ծնողքին երեսը չէր կրնար նայիլ: Մարուշի վրայ ինկաւ սրսփուկ մը:

(Շար. 8)

(Շար. Ա. էջէն)

ցաշարքին առաջին մրցանակը: Մասնակցող 488 խաղացողներէն որոնց 50-ը վարպետի տիտղոս ունեցողներ էին, Վ. Յակոբեան ռուս, վրացի եւ ուկրանացի խաղացողներուն նման կարելի 9 կէտէն 7·5 շահած է, վեց յաղթանակ եւ երեք հաւասարութեամբ աւարտելով իր խաղերը. ան ոչ մէկ պարտութիւն կրած է: Առաջին մրցանակը տրուած է հայ երիտասարդին, նկատի առնելով անոր լրացուցիչ ցուցանիշերը: 6·5-ական կէտով յաջող արդիւնք ձեռք ձգած են երեւանցի միւս վարպետներն ալ Արտաշէս Մինասեան, Աշոտ Անաստասեան եւ Արշակ Պետրոսեան:

⁂

ՊՐՈՆԶԷ ՄԵՏԱԼ Մ. ՊԷՐՊԷՐԵԱՆԻՆ

Թեհրանի մէջ տեղի ունեցած ազատ ոճի ըմբշամարտի մինչեւ 16 տարեկան պատանիներու աշխարհի առաջնութեան 51 քիլոկրամ խումբէն մասնակցած է Հայաստանէն Մարթէն Պէրպէրեան. ան կէս աւարտականին յաղթելով իրանցի հակառակորդին, արժանացած է պրոնզէ մետալի: 28 երկիրներու շարքին մէջ Հայաստանի հաւաքականը գրաւած է 9-րդ տեղը:

⁂

ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՌԻՋՈՒՆ ՓՆՏՌՈՒԱԾ ԱՊՐԱՆՔ

Սպառման շուկայի հետազօտութիւնները ցոյց կուտան որ Ռուսաստան, Ուկրանիա մեծ հետաքրքրութիւն ցոյց կուտան հայկական քառիչուին նկատմամբ, գլխաւորաբար արեւմտեան արտադրութեան չատ աւելի ցած անոր գինին պատճառով: Ներկայիս «Նայիրիտ»ի մէջ որակի բարելաւման աշխատանք կը տարուի, ինչ որ կարելի կ՚ընէ որ յառաջիկային հայկական քառիչուն մրցի արեւմտեան արտադրութեան հետ:

⁂

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ

Վիճակագրութեան վարչութեան տըւեալներով 1996-ի առաջին կիսամեակին երկիր մուտք գործած է 28·506 թոն ապրանք: Օգնութիւնը հասած է 24 երկիրներէ, ինչպէս Միացեալ - Նահանգներ, Ֆրանսա, Գերմանիա, Զուիցերիա, Դանիա, Անգլիա, Պելժիա, Յունաստան, եւայլն:

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

CBAF - Section St Jérôme / Djavo Chant

Sortie

MUSEE DOBREE / NANTES

Exposition

Arménie

Les Trésors du patrimoine archéologique arménien des origines au IV siècle

Vendredi 6 Septembre à 22 h
place de la Rotonde Dikran Tekeian
Saint Jérôme

Départ de Nantes le Samedi soir

PAF de transport et visite musée
350 F environ

pour tous renseignements
et réservations :
tél.: 91 70 00 32 et 91 61 10 82

Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 Paris
Siret: 51027317 A R. C. Paris
Commission paritaire: N° 55935

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

ՄԱՐՍԷՅԼ. - Օր. Գլեմանս Թիւթէլեան, Օր. Սեդա Թիւթէլեան, Տէր եւ Տիկին Քաջազուն Օհաննէսեան կը ծանուցանեն թէ հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի, Կիրակի, Սեպտեմբեր 8-ին, Սրբոց Թարգմանչաց Մայր Եկեղեցւոյ մէջ
339, avenue du Prado
իրենց մօր՝

ՏԻԿԻՆ ՍԱԹԵՆԻԿ ԹԻՒԹԷԼԵԱՆԻ

մահուան քառասունքին առթիւ:

Ի գիտութիւն ողբացեալին յիշատակը յարգողներուն:

LE CONSEIL D'ADMINISTRATION
DE L'ECOLE ARMENIENNE
D'ISSY-LES-MOULINEAUX

a le plaisir de vous informer de l'ouverture de

l'ECOLE TARKMANTCHATZ

LE LUNDI 16 SEPTEMBRE 1996

Inscription pour les deux premiers niveaux de maternelle auprès du secrétariat de l'Association pour la Construction et l'Administration de l'Ecole Arménienne d'Issy-les-Moulineaux au 46 44 62 16

MAISON DE LA CULTURE
ARMENIENNE D'ALFORTVILLE
ԱԼՖՈՐՎԻԼԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՏՈՒՆ

1976-1996
M.C.A. 20ème

En Octobre prochain,
la M.C.A. d'Alfortville fêtera
le 20ème anniversaire
de l'INAUGURATION
DE SA STRUCTURE.

AU PROGRAMME :

vendredi 11 octobre à 19h
Salle des Fêtes
SOIREE D'OUVERTURE
DES MANIFESTATIONS

samedi 12 octobre à 10h
EMISSION RADIO «Cartes sur table»
AYP FM 99.5

samedi 12 octobre à 20h45
Salle des Fêtes
SOIREE ARTISTIQUE ARMENIENNE
Musique traditionnelle
Danse – Voix

dimanche 13 octobre à 11h
Eglise Apostolique Arménienne
MESSE DE REQUIEM
à la mémoire des Fondateurs
disparus

mercredi 16 octobre à 10h15
EMISSION RADIO
«Que sont les anciens élèves
devenus? Cours et Parcours»
AYP FM 99.5

vendredi 18 octobre à 20h45
Salle des Fêtes
SOIREE THEATRE ARMENIEN

samedi 19 octobre à 20h
Salle des Fêtes
DINER SPECTACLE

Programme détaillé ultérieurement

Pour tous renseignements : M.C.A.
9, rue de Madrid, 94140 Alfortville
Tél.: 43 76 55 89 Fax: 43 78 66 64

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Մայր ՀՄՄ.-ի 75-ամեակի եւ
Ֆրանսայի ՀՄՄ.-ի Մարտիկ
մասնաճիւղին 10-ամեակի
ճաշ -- պարահանդէսը
Հոկտեմբեր 12-ին
Orée du Bois (Porte Maillot)

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Տիկին Արշալոյս Միւթէվէլեան, Տէր եւ Տիկին Միշէլ եւ Վիրժինի Միհրան եւ զաւակները, Պր. Ժագ Միւթէվէլեան եւ զաւակները կը ծանուցանեն թէ յաւարտ պատարագի հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի, Կիրակի, Սեպտեմբեր 1, Փարիզի Ս. Յովհաննէս - Մկրտիչ Եկեղեցին իրենց ամուսնոյն, հօր եւ մեծ - հօր՝

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԻՒԹԷՎԷԼԵԱՆԻ

մահուան քառասունքին առթիւ:

Ի գիտութիւն ողբացեալին յիշատակը յարգողներուն:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Մարսէյլի Ս. Թադէոս Եկեղեցին շնորհակալութեամբ ստացած է Տիկին Լուսաբեր Շիլոյեանի մահուան առթիւ:

Տէր եւ Տիկին Համբարձում Ազարեան, Տէր եւ Տիկին Ղազարոս Ասատրեան, Տէր եւ Տիկին Րաֆֆի Դարբինեան 100-ական ֆրանք, Այրի Տիկին Թորոսեան եւ զաւակները 200 Ֆր., Տէր եւ Տիկին Ներսէս Թորոսեան 100 Ֆր., Տէր եւ Տիկին Կիւլպէնկ Սարխօշլու եւ Տէր եւ Տիկին Թանկա - Ժանէթ Մուղամեան 200 Ֆր., Տիկին Մարի - Գլէր Թորոսեան 100 Ֆր., Պուք - Պէլ - Էրի եւ Էքսի Բարեկամներ 400 Ֆր., Պր. Ժագ Սոնիէ 200 Ֆր., Օհանեան ընտանիք 250 Ֆր., Օֆֆինիթօ ընտանիք 100 Ֆր., Մի Ոմն՝ 50 Ֆր.:

Ինչպէս նաեւ Հայաստանի Որբերուն համար. - Այրի Տիկին Թորոսեան եւ զաւակները 400 Ֆր., Օհանեան ընտանիք 250 Ֆր.:

Եւ Ազատագրութեան համար՝ Պուք - Պէլ - Էրի եւ Էքսի Բարեկամներ 400 Ֆր.:

SABERATOURS
SEVAN VOYAGES
SABERATOURS
SEVAN VOYAGES
SABERATOURS
SEVAN VOYAGES

PARIS·EREVAN·PARIS
VOLS HEBDOMADAIRES

- ASSISTANCE A L'AÉROPORT
- ORGANISATION D'ACCUEIL ET DE TRANSFERT
- RÉSERVATION D'HÔTEL
- LOCATION DE VOITURE AVEC CHAUFFEUR
- EXCURSIONS GUIDÉES
- VOYAGES ORGANISÉS EN GROUPE

PRIX
PARIS-EREVAN-PARIS
À PARTIR DE
3700F
RENSEIGNEMENTS ET RÉSERVATIONS SUR SIMPLE APPEL

PARIS·EREVAN
VOL CARGO MENSUEL

SABERATOURS
31, RUE D'ARGENTEUIL - 75001 PARIS
TEL 42 61 51 13 - FAX 42 61 94 53
SEVAN VOYAGES
48, COURS DE LA LIBERTÉ - 69003 LYON
TEL 78 60 13 66 - FAX 78 60 92 26
EREVAN
37, RUE HANRABEDOUTIAN - EREVAN 10
TEL 52 85 48 - FAX 52 54 48

EN COLLABORATION AVEC
ARMENIAN AIRLINES

STUDIO VICKEN PARIS 96

ՔԱՌԱՍՈՒՆՔԻ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Հ.Բ.Ը.Մ.-ի Ֆրանսայի Շրջանակային Վարչութիւնն ու Փարիզ - Իլ տը Ֆրանսի Տեղական Յանձնաժողովը կը ծանուցանեն թէ Կիրակի, Սեպտեմբեր 1-ին, Փարիզի Ս. Յովհ. - Մկրտիչ Մայր Տաճարին մէջ
Հոգեհանգստեան Պաշտօն
կը կատարուի յաւարտ պատարագի:

Հ. Բ. Ը. Մ.-ի ցկեանս նախագահ եւ ազգային անգուգական բարերար, Հայաստանի Հանրապետութեան Ազգային հերոս, Ս. Գրիգոր Լուսաւորիչի Խաչին Դափնեկիր՝

ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

հոգւոյն պայծառացման համար, անոր մահուան քառասունքին առիթով:

Հ.Բ.Ը.Մ.-ի Մարսէյլի Տեղական վարչութիւնը կը ծանուցանէ թէ՝ Կիրակի, Սեպտեմբեր 1-ին, Մարսէյլի Սրբոց Թարգմանչաց Մայր Եկեղեցւոյ մէջ
ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՕՆ
կը կատարուի յաւարտ պատարագի:

Հ.Բ.Ը.Մ.-ի ցկեանս նախագահ, ազգային անգերազանցելի բարերար, Հայաստանի Հանրապետութեան ազգային հերոս, Ս. Գրիգոր Լուսաւորիչի Խաչին դափնեկիր՝

ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

մահուան քառասունքին առիթով:

-ՎԵՐԱՄՈՒՏ-

ARNOUVILLE

La Croix Bleue des Arméniens de France, section ASTRIG d'Arnouville lès Gonesse / Gonesse / Sarcelles / Villiers le Bel, informe que l'inscription aux cours d'arménien et de danse aura lieu le samedi 7 septembre à partir de 14h30 à la salle Léo Lagrange à Arnouville.

ՇԱՒԻԼԻ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ ԵՐԿՕՐԵԱՅ ԴՊՐՈՑ

Շաւիլի Եկեղեցւոյ հովանաւորութիւնը վայելող երկօրեայ հայերէն լեզուի ու կրօնագիտութեան դպրոցի վերամուտի թուականն է Սեպտեմբեր 11, Չորեքշաբթի, առաւօտեան ժամը 10-ին:

Դասաւանդութիւնները տեղի կ՚ունենան Եկեղեցւոյ կից Սարգիս Պալապանեան սրահին մէջ, հետեւեալ յայտագրով ու ժամանակացոյցով. -

- Չորեքշաբթի, ժամը 10 - 12. հայերէն լեզու եւ կրօնագիտութիւն, փոքր տարիքի աշակերտներու համար:
- Չորեքշաբթի, ժամը 14 - 16. հայերէն լեզու եւ կրօնագիտութիւն, պատանի տարիքի աշակերտներու համար:
- Ուրբաթ երեկոյ ժամը 18·30 - 21. հայերէն լեզու, չափահաս տարիքի աշակերտներու համար:

Յաւելեալ մանրամասնութեանց համար, դիմել դպրոցի ուսուցչին՝ Պր. Մեսրոպ Ադամեանին:

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՄԻՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

Լիոնի Հայկազեան Միօրեայ Վարժարանի վերամուտն է Չորեքշաբթի, Հոկտեմբեր 2-ին, Առաւօտեան ժամը 9-ին:

Դասաւանդութիւնները տեղի կ՚ունենան Չորեքշաբթի, առաւօտեան ժամը 9-էն 12, կէսօրէ վերջ ժամը 14-էն 16:

Աշակերտները կրնան օգտուիլ կէսօրուան ճաշէն. իսկ երթեւեկի սպասարկութիւն մը կարելի է նախատեսել ծնողքներու հետ համաձայնելով:

Յաւելեալ տեղեկութեան եւ արձանագրութեան համար դիմել Եկեղեցւոյ Դիւանատունը: